ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

30 ԱՊՐԻԼԻ 2020Թ., № 9 (525)

...Հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ
«ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Ուխտագնացություն Սյունիք

ISSN 1829-3468

Հավատն առանց գործի մեռած է

«Աստվածամոր տուն» հիմնադրամը կյանքի է կոչվել 2019 թվականին՝ Երեւանում:
Հիմնադրամն իր շուրջն է համախմբում աշխարհիկ հայ քրիստոնյա հավատացյալներին, հատկապես՝ երիտասարդներին, ովքեր նույնպես ցանկանում են իրենց հավատն ապրել բարի գործեր կատարելով՝ ամեն օր, ամենուր, ինչպես գրված է Հակոբոս առաքյալի նամակում. «Հավատը՝ առանց գործերի, մեռած է»:
Հիմնադրամն աջակցում է կրթական, մշակութային, տեղեկատվական, բարեգործական եւ այլ ծրագրերի՝ այդպիսով մարդկանց հաղորդակից դարձնելով հայ եկեղեցու պատմությանը, ուսմունքին ու մշակույթին:
Հիմնադրամը բոլոր հայ քրիստոնյաների համար է: Տրամադրում է դրամաշնորհներ, աջակցում է ծրագրերի՝ իր գործունեության շրջանակներում, ինչպես նաեւ իրականացնում իր սեփական ծրագրերը:
Այդ ծրագրերն ի վերջո նպատակ ունեն պահպանելու հոգեւոր արժեքները եւ տարածելու մեր ժամանակներին բնորոշ ոգեղենությունը:
Մեր գրասենյակը գտնվում է Իսրայելյան 21 հասցեում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու հարեւանությամբ: Մեզ կարող եք դիմել կայքի հետադարձ կապի միջոցով (www.hhmg.org):

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մեր գոյության հազարամյա վկաները

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Առաջին անգամ ընթերցողին ենք ներկայացնում Սյունիքի մարզի քրիստոնեական սրբավայրերը՝ վանքեր, անապատներ, եկեղեցիներ, մատուռներ ու նաեւ պաշտամունքային այլ վայրեր: Դա ենթադրում է «Սյունյաց երկիր» թերթի մի քանի ստվարածավալ համարի հրատարակում:

«Ուխտագնացություն Սյունիք» վերտառությամբ այդ շարքը սկսում ենք Գորիսից՝ տարածաշրջանին նվիրելով թերթի սույն համարը: Աննախադեպ այդ նախաձեռնությունը գիտական, պատմական արժանահավատ տեղեկություններով կյանքի կոչելու համար 2019 թ. հուլիս ամսից սկսած ուխտագնացություն կատարեցինք Գորիսի տարածաշրջանի պաշտամունքային վայրեր:

Եղանք գրեթե բոլոր սրբավայրերում, որոնց միջոցով ամենազոր Աստծո շնորհքին են դարեր ի վեր փորձել հաղորդակցվել մեր հավատավոր նախնիները:

Ուխտագնացության ընթացքում մեզ չխանգարեցին դժվարությունները. որոշ սրբավայրեր այցելեցինք ոտքով, առանձին դեպքերում՝ ձիերի օգնությամբ, նաեւ ամենագնաց մեքենաներով:

Սրբավայրեր կատարած այցելություններից ստացած տպավորությունները զարմանալի էին ու անջնջելի:

Տեսանք մեր սրբավայրերը եւ վերստին համոզվեցինք, որ հայոց մեջ, իսկապես, առաջինը սյունեցիներն են ընդունել Աստծո խոսքը եւ հավատ ընծայել Սուրբ Ավետարանին, ինչը եւ վկայում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը: Ահա՝ *«Ամենից առաջ ինձ համար կարեւոր ու չափազանց անհրաժեշտ էր ցույց տալ հենց այս, թե հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք Սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս Սուրբ Առաքյալի միջոցով...»* (Սյունիքի պատմություն, Երեւան 1986, էջ 76):

Տարածաշրջանում չգտնվեց որեւէ բնակավայր (նաեւ ներկայումս անմարդաբնակ, վաղուց ավերված կամ օտարներով ինչ-որ ժամանակ վերաբնակեցված ու նորից լքված), որ ունեցած չլինի քրիստոնեական սրբավայր, ինչը երիցս վկայում է մեր երկրամասում դարեր շարունակ գոյատեւած հավատքի հաստատունության մասին:

Իսկապես, որքա՜ն մոլեռանդ համոզմունքով են մեր նախնիներն ընդունել քրիստոնեության գաղափարները: Եվ ափսոսանք ապրեցինք այն կարծրացած տեսակետի համար, թե իբր սյունեցիները հավատավոր ժողովուրդ չեն եղել:

Մեզ թվում է, թե սքանչելի Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցի աշակերտի, հայտնի երկում տեղ գտած որոշ մտքերն են դարերի ընթացքում սխալ ընկալվել եւ ոչ հիմնավոր եզրակացությունների, տարակույսների տեղիք տվել:

Ուստի եւ վերստին ու նորովի ընթերցեցինք Կորյուն վարդապետի խոսքերը. *«Ապա դրանից հետո ելավ սահմանակից Սյունական աշխարհը: Այնտեղ էլ աստվածասեր հնազանդությամբ ընդունեց նրան Սյունիքի իշխանը, որի անունը Վաղինակ էր: Մաշթոցն իր առաջադրած գործի համար շատ օգնություն գտավ նրանից, այնպես որ պտտեց, վերահասու եղավ Սյունիքի բոլոր կողմերում: Եվ սովորեցնելու համար մանուկներ ժողովեց, ավելի գազանամիտ, վայրենի, ձիվաղաբարո կողմերինը, եւ այնքան հոգ տարավ, դաստիարակի պես կրթեց, խրատեց, որ մինչեւ անգամ հենց այն վայրենիներից կարգեցին Սյունիքի եկեղեցու համար եպիսկոպոս-տեսուչ, որի անունն էր Անանիաս, մի սուրբ ու երեւելի եւ եկեղեցու ժառանգավորների*

Շարունակությունը՝ էջ 10

Շնորհակալություն՝ այս նախաձեռնության հեղինակներին եւ աշխատանքն իրականացնողներին

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԷՔՄԵՔՃՅԱՆ
«Աստվածամոր տուն» հիմնադրամի գործադիր տնօրեն

Պատմության եւ դարերի ընթացքում Սյունիք ասելիս՝ բոլորիս մոտ ակամա ուժ ու կորով, հայրենասիրություն եւ հայի տեսակի, արիության պոռթկում է առաջացել անգամ մարմնի մանրագույն բջիջների մակարդակում:
Սյունիք ասելիս՝ նաեւ Տաթեւի վանքի ու անթիվ, անհամար սրբավայրերի՝ եկեղեցիների, վանքերի ու անապատների պատկերներն են հառել մեր աչքի առջեւ:
«Աստվածամոր տուն» հիմնադրամի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այս ծրագիրը նախաձեռնողներին եւ աշխատանքներն իրականացնողներին՝ Գորիսի տարածաշրջանի բոլոր հասանելի եւ անմատչելի սրբավայրերի մասին նման բովանդակալից ու հետաքրքրական տեղեկատվություն հավաքելու եւ մատուցելու համար:
Վստահ եմ՝ շատերիս համար այս հրապարակման մեջ բազում բացահայտումներ կլինեն, եւ գուցե նաեւ Սյունյաց աշխարհին ավելի մոտիկից ու խորությամբ ծանոթանալու ցանկություն առաջանա:
Երբ հիշել ենք սյունեցուն, մտովի պատկերացրել ենք ազատագրական պայքար, Դավիթ Բեկ...
Այսօր պատեհ առիթն է բարձրաձայնելու, որ Սյունիքն իր լեռների նման հզոր ու անսասան է եղել ոչ միայն հայրենասիրությամբ, այլեւ քրիստոնեական հավատով:
Չէ՞ որ Սյունյաց աշխարհը հնուց հայտնի է եղել որպես ուխտատեղի՝ իր նշանավոր հոգեւոր կենտրոններով, համալսարանով, վարդապետարանով ու եկեղեցիներով:
Վստահ ենք, որ այս գեղեցիկ շարքը կօգնի վերականգնել ուխտագնացությունների նպատակով այնտեղ այցելելու հին ավանդույթը:
Մեր պապերից ստացած այս ժառանգությունն է, որ մեզ կանգուն կպահի հավիտյան: ■

ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

1897 թվականին Գորիսի Մելիք-Յուսեինյան իշխանական տոհմի ներկայացուցիչները նախաձեռնում են Գորիս քաղաքում հայկական եկեղեցու կառուցումը՝ Վարարակն գետի ձախ ափին: Կառուցման համար կազմակերպվում է հանգանակություն, որին մասնակցել է ողջ քաղաքը: Ըստ բանավոր վկայությունների՝ եկեղեցու կառուցումը ղեկավարել է իտալահայ ճարտարապետ: Եկեղեցին 1903 թվականին օծվել է Խրիմյան Հայրիկի կողմից, բացվել է 1904 թվականին, սակայն գմբեթ եւ խորան չի ունեցել: 1920 թվականին եկեղեցում կատարվել է Գարեգին Նժդեհի եւ Արուսյակ Մինասյանի պսակադրությունը: 1921 թ. փետրվարին 21-ին Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի է ունեցել նաեւ Գարեգին Նժդեհի Սպարապետ օծվելու հանդիսավոր արարողությունը:
Հատկանշական է, որ այդ զորավոր սրբավայրի հիմնադրումը նաեւ նախապատմություն ունի:
Ըստ ավանդության՝ Բարդուղիմեոս առաքյալը, Պարս-

կաստանից անցնելով Հայաստան, անցել է այս վայրով, եկեղեցու տեղում մի փոքրիկ վկայարան է կառուցել (նախկինում այդպիսի սովորություններ են եղել):
Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի ժամանակ, այստեղ կառուցվել է մի փոքրիկ մատուռ:
Նախկինում եկեղեցիներ կառուցվել են ո՛չ թե պատահական վայրերում կամ՝ ըստ հարմարավետության, այլ՝ 40 օր ծոմ են պահել, աղոթք են արել, որպեսզի Տեր Աստված ցույց տա, թե որտեղ կառուցեն տվյալ սրբավայրը, այսինքն՝ սրբավայրերը կառուցվել են Տիրոջ հայտնության շնորհիվ:
Պատահական չէ Խրիմյան Հայրիկի՝ Սուրբ Էջմիածնից գալն ու օծելը, Գարեգին Նժդեհի՝ հենց այս եկեղեցում Սպարապետ օծվելը, սա այն պարագայում, երբ Սպարապետը հաճախակի Տաթեւի վանքում էր մնում, պատահական չէր Սպարապետի ամուսնությունը հենց այս եկեղեցում:
Եկեղեցին գործել է մինչեւ 1926 թվականը: Փակվելուց հետո օգտագործվել է որպես հացամթերման պահեստ, այնուհետեւ՝ մինչեւ 1988 թվականը, եղել է երկրագիտական թանգարան: Վերաբացվել է 1989 թվականի դեկտեմբերին:

■



Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կառուցվել է 1897-1904 թվականներին, ներկայումս Հայ առաքելական եկեղեցու Այունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցի

Սյունյաց թեմը

1989 թ. ապրիլի 10-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված Գերագույն հոգեւոր խորհուրդը, նախագահությամբ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, հաստատեց եւ կյանքի կոչեց Սյունյաց պատմական թեմը՝ հոգեւոր կենտրոն ունենալով Սուրբ Տաթեւի վանքը:

Առաջին առաջնորդն էր Ասողիկ եպս. Արիստակեսյանը (1988-93):

1993-2010 թթ. Սյունյաց թեմի առաջնորդն էր Աբրահամ եպս. Մկրտչյանը:

2005թ. սեպտեմբերին Տեր Աբգար վրդ. Հովակիմյանը նշանակվում է Սյունիքի փոխառաջնորդ՝ ընդ իշխանությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանի:

2010-2011թթ. Սյունիքի փոխառաջնորդ է նշանակվում Տ. Զավեն աբեղա Յազիչյանը, ում օրոք Սյունիքը դառնում է առանձին թեմական միավոր, իսկ Հոգեշնորհ Հայր Սուրբը դառնում է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

2010թ. դեկտեմբերին Գարեգին Բ-ի կոնդակով Սյունյաց թեմից անջատվել է Վայոց ձորի թեմը (ընդգրկում է նույնանուն մարզը):

2010 թ. Վայոց ձորի թեմի առաջնորդի պաշտոնում ծառայության է կոչվել Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը՝ ազատվելով Սյունյաց թեմի առաջնորդի պաշտոնից: Սյունյաց թեմի Սյունիքի փոխառաջնորդ Տ. Զավեն աբեղա Յազիչյանը, ազատվելով իր պաշտոնից, նշանակվել է նույն թեմի առաջնորդական տեղապահ:

2011թ. հոկտեմբերի 20-ին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվել Տ. Մակար վրդ. Հակոբյանը:

■

Հայ Առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդարան

Սյունյաց թեմը վերակազմավորվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա Սարգիսյանի 1996 թ. մայիսի 30-ի կոնդակով: Առաջնորդանիստը՝ Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Ընդգրկում էր ՀՀ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերը:

Գարգելի Սամվել Ալեքսանյան

Սյունյաց թեմի անունից մեր խորագին շնորհակալությունն ենք հղում «Սյունյաց երկիր» թերթին՝ նախադեպը չունեցող համարի՝ «Ուխտագնացություն Սյունիք»-ի թողարկման համար: Հայ առաքելական սուրբ եկեղեցու եւ մեր ժողովրդի հավատավոր զավակների համար «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խմբի անխոնջ նվիրումը Սյունիքի մարզի սրբավայրերի նորովի ու հանգամանալից ներկայացմանն ու լուսաբանմանն ազգանվեր ու արդյունավոր գործունեություն է, որը երիցս օրինակելի է եւ արժանի Աստծո ողորմությանը:

ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱԿՈԲՅԱՆ
Առաջնորդական Տեղապահ

Ձեր տքնաջան աշխատանքով տիրախնամ թեմի մի շարք վանքերի, անապատների, եկեղեցիների, մատուռների եւ «սուրբ» ու «սրբավայր» հասկացություններին առնչվող բազմաթիվ այլ վայրերի ու կոթողների մասին հարուստ տեղեկության մեկտեղումն «Ուխտագնացություն Սյունիք»-ի ծավալուն համարում, հիրավի, առաքելություն է իր էությամբ եւ նպատակով: Ուստի նման բարի ծառայության մատուցման համար մեր սրտաբուխ ու բյուր բարեմաղթանքներն ենք հղում մարզի սրբավայրերի մասին տեղեկատուի կյանքի կոչման գործում:
Թող Աստված օրհնի «Սյունյաց երկիր» թերթը եւ նրան միշտ առաջնորդի դեպի հաջողություն իր ազգանվեր առաքելության ճանապարհին:
Օրհնությամբ՝

Մակար Վարդապետ Հակոբյան
Առաջնորդական Տեղապահ

Հոգեշնորհ Տ. Մակար վրդ. Հակոբյան

Ծնվել է 1979թ. հուլիսի 23-ին ք.Գյումրիում, քահանայի ընտանիքում:
1994-1997թթ. սովորել ու ավարտել է Շիրակի թեմի Հոգեւոր Ընծայարանը:
1997- 2003թթ. սովորել եւ ավարտել է Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանը:
2003թ. դեկտեմբերին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արք. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատությունը» թեմայով:
2004թ.մայիսի 2-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Գերաշնորհ Տեր Աբրահամ եպս. Մկրտչյանի:
2004թ. նշանակվել է Մայր Աթոռի մկրտարանում՝ տեսուչ:
2004 - 2005 թթ. ծառայել է Տավուշի թեմում՝ որպես Նոյեմբերյանի հոգեւոր հովիվ:
2005 -2006 թթ. ծառայել է Գոշավանքում՝ վանահայր:
2006 - 2011թթ. ծառայության է կոչվել Էջմիածնի Սուրբ Գայանե վանք՝ վանահայր:
2011թ. պաշտպանել է Վարդապետական թեզ՝ «Եկեղեցական կանոնները հայ կանոնական իրավունքի հուշարձաններում» թեմայով եւ ստացել վարդապետական աստիճան ու գավազան:
2011թ. հոկտեմբերի 20 -ից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, նշանակվել է Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ:

Բովանդակություն

Համարի հովանավորը՝ «Աստվածամոր տուն» հիմնադրամ 2

Խմբագրական՝ «Մեր գոյության հազարամյա վկաները» (Սամվել Ալեքսանյան)..... 3

Շնորհակալություն՝ այս նախաձեռնության հեղինակներին եւ աշխատանքն իրականացնողներին (Տիգրանուհի Էքմեքճյան)..... 4

Սյունյաց թեմի առաջնորդանիստ եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 4

Սյունյաց թեմը..... 6

Խոսք՝ «Սյունյաց երկրի» խմբագրին (Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյան) 7

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Մակար վրդ. Հակոբյան..... 7

Թե ինչպես Սյունիքում տարածվեցին արդար արեգակի հոգեղեն ճառագայթները (էջեր Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկից) 11

Սյունյաց եպիսկոպոսները առ 1886 թ. (ըստ Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» երկի) 16

Լրացուցիչ տեղեկություններ Սյունյաց եպիսկոպոսների մասին (ըստ Ռոբերտ Էջանանցու)..... 17

ԵՐԹՈՒՂԻ 1

Գորիս քաղաք. սրբավայր Բարդուղիմեոս առաքյալի օրերից 19

ԵՐԹՈՒՂԻ 2

Հին Գորիս-Վերիշեն 31

ԵՐԹՈՒՂԻ 3

Մեկ օր Քարահունջում. Օխտն օրորոցի լեգենդը 43

ԵՐԹՈՒՂԻ 4

Այցելություն Սյունյաց աշխարհի Բղեն գավառի սրբավայրեր, որոնց պսակը Նորավանքն է 47

ԵՐԹՈՒՂԻ 5

Այցելություն Սյունյաց մեծ անապատ, որ հայոց անապատական շարժման մայրաքաղաքն էր..... 57

ԵՐԹՈՒՂԻ 6

Քաշաթաղի երբեմնի կենտրոն Խանածախը, որտեղ գտնվում է Հայաստանի հրաշալիքներից մեկը՝ Անապատի ձորը 63

ԵՐԹՈՒՂԻ 7

Ուխտագնացություն Արամազդի երկնահաս լեռնագագաթ, որ նաեւ սրբավայր է 73

ԵՐԹՈՒՂԻ 8

Քարաշեն գյուղը, որ Օրբելյան պատմիչի հիշատակած Մրկաքարն է կամ Կարբինքը (վերին կամ ներքին)..... 78

ԵՐԹՈՒՂԻ 9

Հին Խոտ. ճարտարապետական սքանչելիք եւ սրբավայր 81

ԵՐԹՈՒՂԻ 10

Անհիշելի հին, բայց եւ հավերժող Շինուհայրի պաշտամունքային վայրերը..... 86

ԵՐԹՈՒՂԻ 11

Տանձատափի սրբավայրերը՝ Ցուրա վանքից կամ Ձորո վանքից մինչեւ Սարիվանց ու Սուրբ Մինաս, մինչեւ գերահրաշ տեղանք, որի երկնահաս լեռնագագաթից արքայազնուհի Շահանդուխտը ցած թռչեց նժույգով 93

ԵՐԹՈՒՂԻ 12

Չարենցը եւ Խրիմյան Հայրիկը եղել են Հարանց անապատում..... 100

ԵՐԹՈՒՂԻ 13

Ուխտագնացություն Քերթողահայր Մովսես Խորենացու ծննդավայր Խորեա գյուղ, որ հիմա Կորնիձոր է կոչվում..... 104

ԵՐԹՈՒՂԻ 14

Շահանդուխտ թագուհու ջանքով վերածնված Տեղ գյուղը, որի մերձակայքի Սռի եղցում է գտնվում Մովսես Խորենացու ենթադրյալ գերեզմանը 110

ԵՐԹՈՒՂԻ 15

Հարթաշենի տարածքի Ալիղուլիշեն (Ազատաշեն), Կյորու (Ձորաշեն) եւ Մաղանջուղ (Այգեձոր) լքյալ գյուղերի սրբավայրերը 119

ԵՐԹՈՒՂԻ 16

Մի քանի օր Խնձորեսկի սրբավայրերում 126

ԵՐԹՈՒՂԻ 17

Սյունյաց աշխարհի գրչության կենտրոն Խոզնավարի սրբավայրերը 135

ԵՐԹՈՒՂԻ 18

Վաղատուր գյուղի երկու եկեղեցին 139

ԵՐԹՈՒՂԻ 19

Հարժիսը, որ երկնամերձ ամպերի մոտ է, քրիստոնեական բազում սրբավայրեր ունի 142

ԵՐԹՈՒՂԻ 20

Տաթեւ գյուղը, որ հիշատակվում է դեռեւս Գահնամակում՝ «Տաթեյանք՝ իբրեւ բնակարան ավագաշուք տոհմի» 152

ԵՐԹՈՒՂԻ 21

Մալդաշ, որ հիմա Քաշունի է կոչվում. գյուղի դեռեւս բաբախող սիրտը՝ Սուրբ Սարգիս մատուռը 164

ԵՐԹՈՒՂԻ 22

Ահա եւ Տաթեւի մայր վանքում ենք, որ Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրն է 166

Տաթեւի վանքի տարածքի վիմական արձանագրություններից մի քանիսը (ըստ Սեդրակ Բարխուդարյանի, Դիվան հայ վիմագրության, 2-րդ պրակ, Երեւան 1960) 181

Տաթեւի գրատան ձեռագրերը (Օ. Ս. Եգանեան) 185

Տաթեւը գեղանկարներում 197

Սյունիքի մարզի քարտեզը 198

Բարդուղիմեոս Սուրբ առաքյալը, ով եկավ Սյունիք ... 199

Ամենայն հայոց կաթողիկոսներ Սյունիքից 200

Հայոց ազգային-եկեղեցական սրբերը Սյունիքից 201

Մեսրոպ Մաշտոց. ինքն է Սյունիքում ստեղծել առաջին դպրոցները՝ աջակցությամբ Վասակ Սյունու, ով որդին էր Անդոկի որդի Բաբիկի եւ մարզպանն էր Վրաց ու Հայոց աշխարհի 202

Սիսակ նահապետը՝ Հայկից սերված (ծնվել է մ.թ.ա. 2100 թ.) 203

Խոսք Սյունիքի եւ սյունեցիների մասին (հատված Ղեւոնդ Ալիշանի «Սիսական» երկից) 204

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝Ց:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:

(+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 24.5 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000:

Ստորագրված է տպագրության 20.04.2020 թ.:

3

համար հայրաբարո մարդ: Ապա Սյունյաց երկիրն էլ լցրեց վանականների դասերով:

Այն ժամանակ Աստված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ: Նա շատ նպաստեց Ավետարանի քարոզության գործին: Նա, ինչպես որդին հորը՝ հնազանդություն ցույց տալով եւ Ավետարանին վայել կերպով ծառայելով՝ մինչեւ վերջը գործադրում էր նրա հրամայածները» (Վարք Մաշտոցի, Երեւան 1962, էջ 109, աշխարհաբար թարգմանությունը՝ ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով եւ ծանոթագրություններով՝ Մանուկ Աբեղյանի):

Այդ խոսքերից, ընդհակառակը, համոզվում ենք, թե որպիսի հնազանդություն ցույց տվեց սյունեցին (իր իշխանների գլխավորությամբ), երբ քարոզում էին Ավետարանը: Դրա վկայությունն են նաեւ Աստծո տաճարները, որ երկրամասում կառուցվել են Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Սուրբ Սահակ Պարթեւ եւ Ներսես կաթողիկոսների նախաձեռնությամբ, ու այն վկայարանները, որ կառուցվել են Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի, ինչպես եւ Սուրբ Թադեի աշակերտների կողմից

Մեր շրջագայության ընթացքում տպավորվեցինք եկեղեցաշինության սյունիքյան դպրոցի անզուգական դրսեւորումներով:

Տպավորվեցինք խաչքարային արվեստի սքանչելի արտահայտություններով, որոնց կարելի է հանդիպել ամենուր:

* * *

Ի՞նչ նպատակ ունեինք Սյունյաց աշխարհի փառահեղ ու աստվածաբնակ սրբավայրեր այցելելով:

Մարդկանց հաղորդակից դարձնել այն սրբավայրերին, որոնք մեր նախնիները կառուցել են դարեր առաջ, որոնք էլ ուղեկցել են սյունեցիներին՝ բազում փորձություններով անցնելիս: Այնուհետեւ՝ մեր սրբավայրերը մաքրել դարերի փոշուց, վեր հանել մոռացության թանձր մշուշի միջից եւ դրանցից յուրաքանչյուրին դարձնել մեր նորօրյա ընթացքի մասնակիցն ու ուղեկիցը:

Մենք նաեւ գրավոր բազում սկզբնաղբյուրներ ուսումնասիրեցինք՝ Սյունիքի եկեղեցիներին առնչվող: Եվ ակնհայտ դարձավ, որ շատ դեպքերում անհամապատասխանություններ կան մատենագիտության եւ իրականության միջեւ: Ուստի եւ փորձեցինք յուրովի «գույքագրել-քարտեզագրել» այդ սրբավայրերը՝ դրանով իսկ կասեցնել հետագա աղավաղումները:

Եվ, իհարկե, դա յուրօրինակ ուխտագնացություն էր Սյունիքի հերոսական պատմության խորքերը՝ երկրամասի պատմությունը նոր վկայություններով (ինչպիսին մեր տաճարներն են, դրանց հետ կապված ավանդազրույցները) հարստացնելու անկեղծ ձգտումով:

Մեր այս ձեռնարկումը նաեւ նպատակ ուներ ստեղծել-կազմել-մշակել ինքնատիպ ուղեցույց բոլոր այն ուխտավորների համար, ովքեր կցանկանան երբեւէ այցելել Սյունիքի հոգեւոր կենտրոններ: Այդ է պատճառը, որ ամեն մի սրբավայրի մասին մեր հրապարակումը կատարելիս ձգտել ենք նաեւ ցույց տալ, թե ինչպես եւ որ ճանապարհով է առավել հարմար ուխտագնացություն կատարելը:

* * *

Այցելություններին նկատեցինք, որ ոչ հարթ ընթացք ունեցած մեր պատմական ճանապարհին ժամանակն իր անցանկալի հետքն է թողել դարեր առաջ շինված սրբավայրերի վրա:

Բայց եւ համոզվեցինք, որ հավատավորների ուխտագնացությունը վերականգնելով ու պարբերական դարձնելով՝ ժամանակի հետեւանքներն աստիճանաբար կվերանան, երբեմնի արահետներն ու ճանապարհներն անցանելի կդառնան:

Այնպես որ՝ Սյունյաց աշխարհում սպասում ենք ուխտավորներին, ովքեր ցանկություն կունենան հաղորդակցվել երկրամասի քրիստոնեական անկրկնելի սրբավայրերի հետ:

* * *

Նախօրինակը չունեցող այս նախաձեռնության առաջին քայլը (Գորիսի տարածաշրջանին նվիրված հատորյակը) կատարելու-հրատարակելու համար մեր երախտագիտությունն ենք հայտնում «Աստվածամոր տուն» հիմնադրամին (գործադիր տնօրեն՝ Տիգրանուհի Էքմեքճյան)՝ սույն ձեռնարկումը հովանավորելու, թերթի խմբագրակազմին քաջալերելու համար: Հենց այդ հիմնադրամից բխեց առաջարկությունը, որի իրականացմանն էլ լծվեցինք սիրով:

Մեր ուխտագնացության ամեն մի երթուղում մեզ ուղեկցողներ եղան տեղի բնակիչներից, որոնցից յուրաքանչյուրին, հիրավի, իր հայրենի բնօրրանի նվիրյալ պիտի համարել:

Նրանց մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում. առանց այդ նվիրյալների աջակցության մեր այցելություններն արդյունավետ չէին լինի, իսկ որոշ դեպքերում պարզապես անհնարին կդառնային. այդ մարդկանց անուններին ընթերցողը կհանդիպի համարի տարբեր էջերում:

* * *

Ու վերջում հետեւյալը կասենք՝ եթե երբեւէ ոչ ստույգ կամ ոչ արժանահավատ կամ թերի ու ոչ լիարժեք համարվեն մեր հաղորդած տեղեկությունները Սյունյաց աշխարհի սրբավայրերի մասին, ապա թող եկող սերունդները լրացնեն մեր թերին ու բացթողածը:

Եվ, իհարկե, փառք ու գոհություն Արարչին, որ հենց «Սյունյաց երկրին» վստահվեց մեզանում նախադեպը չունեցող այս ձեռնարկումի իրականացումը: ■

ՍԿԻԶԲ

Թե ինչպես Սյունիքում տարածվեցին արդար արեգակի հոգեղեն ճառագայթները

Էջեր Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկից

Ստեփանոս Օրբելյանի գեղանկարը (հեղինակ՝ Նվարդ Բալասանյան, կտավ յուղաներկ, 50x60 սմ, 2004 թ., պահվում է Գորիսի պետական համալսարանի պատմության եւ իրավագիտության ամբիոնի Ստեփանոս Օրբելյանի անվան կաբինետում)

ԾԱԳՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ. ԹԵ ՈՐՏԵՂԻՑ ՍԵՐՎԵՑ ՍԻՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԸ՝ ԱԴԱՄԻՑ ՀԵՏՈ

Աստվածապատվեր հրամանով կաշկանդված պրպտող ժամանակագիրների [համար] անվիճելի օրենքով, որ ասում է՝ «ձեզ չի վերաբերում իմանալ ժամերն ու ժամանակները, որ հայրը սահմանեց իր իշխանության մեջ», միայն հետագա [մարդկանց] անուններին ու ծննդաբանությանը հետամուտ կլինենք ստույգ շարադրանքով՝ մարդկության սկզբնավորումից մինչեւ Սիսական տոհմի նահապետության սկիզբը: Եվ սա նրա համար, որ չկարծես, թե այս տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով եւ կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնական ազնիվ տոհմից սկսած անհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության:

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ[10]...

Ունի տասներկու գավառ[12]. առաջինը, որի մեջ հենց [Սյունյաց] իշխանների եւ հայրապետների գահն է, Ծղուկ գավառն[13] է՝ անվանված Ծղուկ[14] գավառապետի [անունից]: Երկրորդը Վայոց ձորն[15] է, որ ընդհանուր աղետից, ողբ ու վայնասուններից կոչվեց Վայոց ձոր[16]: Երրորդը՝ Գեղարքունին, որ Հայկյան Գեղամի [անունից] կոչվեց Գեղարքունի[17]: Չորրորդը՝ Սոթք գավառը, որ մշտական բուքերի եւ ցրտաշունչ եղանակների պատճառով կոչվեց Սոթք[18]: Հինգերորդը՝ Աղահեճ գավառը[19], որ այժմ կոչվում է Քաշաթաղ եւ Խոժոռաբերդ: Վեցերորդը՝ Հաբանդ գավառը[20]: Յոթերորդը՝ Բաղք գավառը[21], որ այժմ կոչվում է Աձեն. դա Բաղակի [անունից այդպես] անվանվեց[22]: Ութերորդը՝ Կովսական գավառը[23], որն այժմ Գրիամ են կոչում: Իններորդը՝ Արեւիք գավառը[24]. որ այժմ կոչվում է Տաշտոն[25] եւ Մեղրի: Տասներորդը՝ Ձորք գավառը[26], որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը[27], եւ այժմ կոչվում է Կապան[28]: Տասնմեկերորդը՝ Երնջակ գավառը[29] եւ Գողթնը[30]: Տասներկուերորդը՝ Ճահուկ[31] գավառը, որը եւ Շահապոնք կոչվող ձորն է:

Ահա սրանք են Սյունիքի տասներկու գլխավոր գավառները: Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք: Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ եւ այլ գավառների են բաժանված:

Ծանոթագրություն

10. Հեղինակը գրում է «Ցուցմունք սահմանաց աշխարհիս Սիւնեաց...», բայց գլխի շարադրանքն սկսում է գավառների թվարկումով, որը առանց սահմանների ուղղակի նշման է պատկերացում տալիս՝ Սյունիքի պատմական տարածքի մասին: Սյունիքը Հայաստանի 9-րդ նահանգն էր՝ շատ նշանակալից իր տնտեսական, քաղաքական ու մշակութային դերով: Ըստ «Աշխարհացոյց»-ի նրա սահմաններն էին՝ արեւմտյան կողմից՝ Այրարատ եւ Վասպուրական նահանգները, հյուսիսից՝ Գուգարքը եւ Ուտիքը, արեւելքից՝ Արցախը, հարավից՝ Երասխ (Արաքս) գետը: Տե՛ս համապատասխան քարտեզը Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», (Երեւան, 1963) գրքում: Հիշենք նաեւ, որ «Աշխարհացոյց»-ի բնագրում ցույց է տրվում այդ «իններորդ աշխարհ»-ի տեղը Երասխ գետի եւ Արցախ աշխարհի միջեւ, Այրա-

ռատից արեւելք (ն. տ., էջ 109-110)։ Գրավել է 15237 քառակուսի կիլոմետր տարածություն (ն. տ., էջ 117), (էջ 70)։

12. Տպագիր բնագրում գլուխն սկսվում է այսպես, «Իսկ գաւառք ունի երկոտասան»։ Դա շարադրանքի ընդհատվածության տպավորություն է թողնում։ Պետք է ենթադրել, որ դրան նախորդել է մի հատված, որը բնագրից ինչ-ինչ պատճառներով դուրս է ընկել։ Չկա նաեւ N 6271 լավագույն ձեռագրում։ (էջ 70)։

13. Ս. Օրբելյանի հիշատակած՝ Սյունիքի այս 1-ին գավառը (Ծղուկը) ըստ «Աշխարհացոյց»-ի 7-րդն է։ Գրավել է 1950 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56, 109, 117)։ Նրան սահմանակից էին հյուսիսից՝ Արցախի Ծար գավառը, արեւմուտքից՝ Վայոց ձորը, նրանից ներքեւ՝ Ճահուկը, հարավից՝ Երնջակը եւ Արեւիքը, արեւելքից՝ Բաղքը, Հաբանդը եւ Աղահեճքը (տե՛ս Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 206)։

Ս. Օրբելյանն այս գավառն առաջին տեղում է հիշատակում՝ նկատի ունենալով նրա կատարած դերը որպես կրոնական եւ վարչական կենտրոնի ամբողջ նահանգի համար՝ նախ՝ իր տարածքի մեջ մտնող Շաղատ կենտրոնով (4-րդ դարի վերջերից մինչեւ 9-րդ դարի առաջին կեսը), ապա՝ Տաթեւով։ Իր կարեւոր դերի շնորհիվ գավառը հաճախ անվանվել է ամբողջ նահանգի անուններով՝ Սիսական կամ Սյունիք։ Այդ անունների արտացոլումն է այժմյան Սիսիան-ը։ Ներկայիս Սիսիանի շրջանի տարածքը համընկնում է պատմական Ծղուկի մի մասին։ 13-րդ դարից սկսած՝ Ծղուկ-Սյունիք-Սիսական գավառը հիշատակվում է նաեւ Որոտն անունով։ (էջ 70)։

14. Ծղուկ տեղանունը Ս. Օրբելյանը բխեցնում է համանուն գավառապետի անունից, որը հավանական չէ։ Ենթադրվում է, որ այն ունի էթնիկական ծագում (հմմտ. Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Երեւան, 1966, էջ 137, այլեւ՝ նույնի «Հայաստանի պատմական աշխարհագրություն», Երեւան, 1968, էջ 205)։ Ըստ նորագույն տվյալների՝ Ծղուկը գալիս է ուրարտական շրջանից։ 1975 թվականին Սիսիանի շրջանում հայտնաբերված սեպագիր արձանագրության մեջ (մ. թ. ա. 8-րդ դարի վերջերից կամ 7-րդ դարի սկզբներից) հիշատակված Ծուլուկու տեղանունը (Ծուլուկու երկիր) գիտնականների կարծիքով պատմական Ծղուկի անունն է (հմմտ. «Սովետական Հայաստան» օրաթերթ, 20 օգոստոսի 1975 թ., այլեւ՝ Ն. Վ Հարությունյանի «Արգիշտի 2-րդի նորահայտ սեպագիրը» հոդվածը. «Պատմա-բանասիրական հանդես», 1979, N 3, 101-102։

Н. Арутюнян, Топонимика Урарту. Ереван, 1985, стр. 236 (խմբագիր)։ Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե Ծղ, Ծաղ հիմքով տեղանունները կապված են եղել կրակի պաշտամունքի հետ, որպիսի անուններ շատ կան հատկապես Սյունիքում (Ս. Ումառյան, «Սյունիքը դիցարան», Երեւան, 1981, էջ 20)։ (էջ 70)։

15. Վայոց ձորը, որ Ս. Օրբելյանը դնում է 2-րդ տեղում, Ծղուկից հետո, «Աշխարհացոյց»-ում նշվում է որպես Սյունիքի 3-րդ գավառ։ Գրավում էր 2350 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 82, 109-110, 117)։ Նրան սահմանակից էին՝ արեւելքից՝ Ծղուկը եւ Արցախի Ծար գավառը, արեւմուտքից՝ Այրարատյան նահանգը, հյուսիսից՝ Գեղարքունիքը եւ Սոթքը, հարավից՝ Ճահուկը եւ Այրարատի Շարուր գավառը (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 212)։ Նրա տարածքը համընկնում է այժմյան Եղեգնաձորի եւ Վայոց ձորի շրջաններին։ Գավառը նշանավոր էր ոչ միայն նրանով, որ մյուս գավառների համեմատությամբ ամենաընդարձակն էր, այլեւ՝ որ ուներ տնտեսական, քաղաքական, մշակութային մեծ դեր։ Բավական է հիշել, որ նահանգի համար Ծղուկից հետո կրոնական ու վարչական կենտրոն է դառնում այս գավառը։ Գավառն ունի պատմական հուշարձանների արտակարգ հարստություն։ (էջ 70)։

16. Պատմիչը ուրիշների նման ժողովրդական ստուգաբանությամբ Վայոց ձորի անվանումը կապում է գավառում 8-րդ դարում տեղի ունեցած ահավոր երկրաշարժի ավերումների առաջ բերած ժողովրդական ողբ ու հառաչի, վայնասունների հետ։ Երկրաշարժին վերաբերող արձագանքները հասել են մինչեւ Ս. Օրբելյանի ժամանակները։ Նման բացատրության հանդիպում ենք, օրինակ, Ս. Օրբելյանին որոշ չափով ժամանակակից եւ իր աշխատությամբ նրան անմիջապես նախորդած պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 74), որտեղ պատմվում է, թե ինչպես գավառի Մոզ ավանի շրջանում քառասուն օր տեւած երկրաշարժերի հետեւանքով հիմնովին կործանվում է ավանը, 10 000 մարդ գետնի տակ է անցնում։ Դա մեծ սուգ է առաջ բերում։ Այստեղից էլ գավառն ստանում է իր անունը։ Այդ աղետի մասին ավելի պատկերավոր ձեւով պատմում է Ս. Օրբելյանը իր երկի ԼԱ գլխում եւ կրկնում Վայոց ձոր անվան հիշյալ բացատրությունը։ Այս պատմիչները, իհարկե, դեպքը ներկայացնում են ոչ իբրեւ ականատեսներ, այլ փոխ են առել իրենց նախորդած ժողովրդական զրույցներից։ Իրոք, 8-րդ դարի 1-ին կեսին տեղի է ունեցել այդ զարհուրելի դեպքը, սակայն գավառի անվան ծագումը չի կարելի կապել դրա հետ։ Բանն այն է, որ Վայոց ձոր-ը հիշատակվում է ավելի հին աղբյուրներում (Եղիշե, Խորենացի)։ Եվ հավանաբար եղել է 5-րդ դարից էլ շատ ավելի վաղ։ Հետագայում գիտնականները հիշյալ տեղանվան Վայոց բաղադրիչի վայ մասը բացատրել են կա՛մ դիցանուններով, կա՛մ ցեղանվամբ եւ այլն։ Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե այն գալիս է հնդեվրոպական uas արմատից՝ «արեւ» իմաստով (տե՛ս Ս. Ումառյան, նշվ. աշխ., էջ 50)։ (էջ 70)։

17. Գավառի անվան հնագույն ձեւն է Գեղաքունի, որը հետագայում ժողովրդական կրկնակի ստուգաբանությամբ դարձավ Գեղարքունի։ Պատմիչը երկու ձեւով էլ գործածում է։ Գավառն «Աշխարհացոյց»-ում նշվում է 4-րդը։ Բռնում էր 1735 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան՝ նշվ. աշխ., էջ 47, 109, 117)։ Ընդգրկում էր Աեւանա լճի ավազանի մեծագույն մասը՝ այժմյան Կամոյի, Մարտունու շրջանները եւ Սեւանի շրջանի որոշ մասը։ Հարեւան էր Այրարատին, Գուգարքին, Ուտիքին, Սոթքին եւ բուն Սյունիքին։ Հռչակված էր Գեղամա լճով եւ Սեւան կղզով։ Կղզու անունը հետագայում տարածվել է եւ լճի վրա։ Գավառի անունը ժողովրդական ավանդությամբ բխեցվել է Գեղամ նահապետի անունից, որը եւ որդեգրել է նաեւ Ս. Օրբելյանը։ Ըստ Մովսես Խորենացու՝ Գեղամը Հայկի տոհմից էր՝ Ամասիայի որդին. նա իր անունով է կոչել Գեղ լեռը, Գեղարքունի գավառ եւ Գեղամա ծովակը (Պատմութիւն Հայոց, 1-ին, ԺԲ)։ Իրականում այս անունները Գեղամի անունից չեն ծագում։ Հետա-

գայում ոմանք նրան վերագրել են տոտեմական (Ն. Մառ), ոմանք՝ էթնիկական (Ն. Ադոնց) ծագում: Պարզված է, որ Գեղարքունի անունը ուրարտական ծագում ունի, գալիս է Welikuni կամ Welikuhi անունից: Գեղ, Գեղամ անուններն էլ նրա Wel մասից են (տե՛ս Գ. Ա. Капанцян, Историко–лингвистические работы, Երեւան, 1975, հ. 2րդ, էջ 82): Վերջերս այն կարծիքն է հայտնվել, թե այդ տեղանունը պաշտամունքային ծագում ունի: «Նրա անվան հիմքը հնդեվրոպական է» (տեմ Ս. Ումառյան, նշվ. աշխ., էջ 43): (էջ 70):

18. Այս 4-րդ գավառը («Աշխարհացոյց»-ում՝ 5-րդը) մոտավորապես՝ համընկնում է այժմյան Վարդենիսի շրջանին: Նրա անունից մնացել է այժմյան Զոդ գյուղի անունը նույն շրջանում: Այս տեղանունը Ս. Օրբելյանը ներկայացնում է Սոթ(ք) ձեւով: Նրա բացատրությունից երեւում է, որ հայերենն ունեցել է սոթ բառ, որը պիտի նշանակեր «բուք, ցրտաշունչ քամի կամ ցուրտ եղանակ»: Դրա վրա հենվելով՝ Հ. Աճառյանը «Հայերէն արմատական բառարան»-ում (հ. 6-րդ, էջ 313) դնում է այդպիսի արմատ՝ «ուժեղ, մրրկաշունչ քամի» իմաստով: Ապա բարբառային բաժնում մատնացույց է անում «Սեւանա լճի վրա արեւելքից փչող ցուրտ քամի» իմաստի մասին: Վերջինս կարող էր ածանցյալ իմաստ լինել եւ ոչ հակառակը: Հայագիտության մեջ սովորաբար նշվում է, որ դա նույն տեղանունն է, որը ավելի հին աղբյուրներում հանդիպում է Ծաւդ (ք) , Ծաւդեայ (ք), Ծաւդէ(ք), Սաւդ(ք), Զաւդ (ք), Զաւդէ(ք) ձեւերով: Անունը գալիս է շատ վաղ ժամանակներից (հիշատակել են նաեւ հին հույն մատենագիրները) եւ ունի էթնիկական ծագում: Ըստ Ն. Ադոնցի՝ ունի էթնիկական ծագում (հմմտ. Н. Адонц «Армения в эпоху Юстиниана», Երեւան, 1971, էջ 423-424):

Վերջերս արտահայտվել է այն տեսակետը, թե Սոդքը (կամ Սոթքը եւ Ծավդեքը նույն չեն (տեմ Ս. Ումառյան, նշվ, աշխ., էջ 59-61): (էջ 70):

19. Բնագրում՝ Աղահէջ, «Աշխարհացոյց»-ում՝ Աղահէձ: Ըստ Ն. Ադոնցի՝ տեղանունը էթնիկական ծագում ունի (նշվ. աշխ, էջ 423), գալիս է լահիձ կովկասյան փոքր ժողովրդի անունից (նշվ. աշխ., էջ 424, ծան. 1): Գավառը գտնվում էր Աղուան կամ Աղավնո գետի (այժմ՝ Հագարի) վերին հոսանքի տարածքում: «Սյունիքի 6-րդ գավառը՝ 1402 քառակուսի կիլոմետր տարածությամբ համապատասխանում է Լաչինի շրջանին» (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երեւան, 1963, էջ 32): Ընկած էր Սյունիքի հյուսիս-արեւելյան մասում: Սահմանակից էր Արցախի Ծար եւ Սյունիքի Ծղուկ եւ Հաբանդ գավառներին (հմմտ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 265, այլեւ՝ Թ, Խ. Հակոբյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», էջ 212): Ըստ Օրբելյանի 5-րդ գավառն է եւ հետագայում կոչվել է նաեւ Քաշաթաղ եւ Խոժոռաբերդ: Դրանք միաժամանակ այնտեղ գտնվող բերդերի անուններ են: (էջ 70):

20. Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Հաբանդը Սյունիքի 8-րդ գավառն էր: Արեւելքից նրա սահմանը երիզվում էր Հագարի գետով, արեւմուտքից սահմանակից էր Ծղուկին, հյուսիսից՝ Աղահեձին, հարավից՝ երկու Բաղքին (Բաղք-Քաշունիքին եւ Բաղք-Աճանին) :

Գրավում էր 1325 քառակուսի կիլոմետր տարածություն (տեմ Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 61, 117): Նրա տարածքի մի մասը համընկնում է Գորիսի շրջանին: (էջ 70):

21. Ըստ «Աշխարհացոյց»-ի Սյունիքի 9-րդ գավառն էր (տեմ Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ,, էջ 100): Թե՛ «Աշխարհացոյց»-ում եւ թե՛ Ս. Օրբելյանի երկի այս գլխում Բաղքը հիշատակվում է նեղ առումով, որպես մի գավառ, քանի որ նրանից զատ հիշատակվում են եւ այնպիսի գավառներ (Զորք, Կովսական եւ այլն), որոնք մի ժամանակ ներառվել են Բաղաց աշխարհի մեջ: Բաղքը որպես գավառ նեղ առմամբ արեւմուտքից սահմանակից էր Ծղուկին, հարավ-արեւմուտքից՝ Զորքին, հյուսիսից՝ Հաբանդին, հարավից՝ Կովսականին, արեւելքից սահմանագծվում էր Հագարի գետի ստորին հոսանքով: 10-12-րդ դարերում հաճախ լայն առումով կոչվել է «Բաղաց աշխարհ» եւ ընդգրկել է նաեւ Զորք, Կովսական, գուցե եւ Արեւիք գավառները: Հետագայում անվանվել է նաեւ Բաղաձոր (հմմտ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 273): Սրանից բացի,

Ամենից առաջ ինձ համար կարեւոր ու չափազանց անհրաժեշտ էր ցույց տալ հենց այս, թե հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդեցվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով. եւ անտեղի չէ այժմ դա շարադրել:

եղել է նաեւ արեւելյան Բաղք: Գավառը սկզբնապես բռնել է 925 քառակուսի կիլոմետր տարածություն. համապատասխանում է Ղափանի շրջանի տարածքի հիմնական մասին (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 44): (էջ 70):

22. Բաղքի անունը պատմիչը բխեցնում է Բաղակի անունից: Հավանականը այն էթնիկական ծագումով բացատրելն է: Ըստ Ն. Ադոնցի՝ այն կապ ունի Բաղասական տեղանվան հետ եւ ծագում է բաղասնի-ք լեռնային ցեղի անունից (հմմտ. Н. Адонц, Նշվ. աշխ., էջ 423): Ճշմարտությանն ավելի մոտ է Գր. Ղափանցյանի բացատրությունը: Ըստ Գր. Ղափանցյանի՝ այն բխում է բալա էթնիկական անունից: Դրանից է նաեւ Բաղակ անունը՝ ակ ածանցով (Историко–лингвистические работы, Երեւան, 1975, հ. 2-րդ, էջ 126-127): Գիտության մեջ բալայերենը (պալայերենը) ճանաչվում է որպես հնդեւրոպական լեզու: Վերջերս Ս. Ումառյանը աշխատել է Բաղք անվան (եւ սրա հետ կապված այլ անունների) հիմքը բացատրել ըստ հնդեվրոպական այլ լեզուների որոշ տվյալների եւ գտնում է, որ Բաղքը, պիտի նշանակեր «բարձր, լեռնային երկիր» (տե՛ս նրա «Սյունիքը դիցարան», էջ 73): (էջ 70):

23. Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Կովսականը նշվում է վերջինը՝ 12-րդը:

Գրավում էր 625 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 60, 109, 117): «...Հիմնականում տարածված էր այժմյան Ծավ գետի ավազանում եւ Ողջի գետի աջակողմյան մի շարք վտակների (դրանք են՝ Բեխ, Վաչագան, Գեղանուշ եւ այլ գետակները) շրջաններում» (Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 201): Ըստ Ս. Տ. Երեմյանի՝ տարածքը համապատասխանում էր այժմյան Զանգելանի շրջանին (տե՛ս նշվ. աշխ., էջ 60): Ըստ առանձին տեղանունների (Բեխ եւ այլն) հիշատակության՝ գավառի մեջ մտել է նաեւ այժմյան Ղափանի շրջանի տարածքի մի որոշ մասը (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 104): Կովսական տեղանվան մասին Ս. Ումառյանը գրել է, թե ծագում է կոսերի ցեղանունից, որոնք նույն է համարում հարեւան Քաշունիքի քաշերի հետ («Սյունիքը դիցարան», էջ 85): (էջ 70):

24. Արեւիք գավառը հիմնականում ընդգրկում էր Մեղրի գետի ավազանը եւ տարածքով գրեթե համընկնում էր այժմյան Մեղրու շրջանին, արեւելյան կողմից մի փոքր ձգվում էր Կովսականի մեջ: Ավելի հնում մտել է Գողթնի մեջ, ապա ներառվել Սյունիքի կազմում: Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Սյունիքի 11-րդ գավառն էր, ուներ 625 քառակուսի կիլոմետր տարածության:

25.Մոսկովյան հրատարակության մեջ՝ Տաշտոն, փարիզյանում՝ Դաշտոն: Այժմ պահպանվել է Տաշտուն ձեւով: Սա իր շրջակայքով վարչական առանձին շրջան չէր, այլ կազմում էր գավառի մի մասը: Ընկած է Մեղրի գետի ակունքների շրջանում: (էջ 70):

26. Ձորքը Սյունիքի ամենափոքր գավառն էր. գրավում էր 525 քառակուսի կիլոմետր տարածություն: Ընկած էր այժմյան Ողջի (հնում՝ Կապան) գետի վերին հոսանքի շրջանում: Նահանգի ամենալեռնոտ մասն էր՝ ծածկված խիտ անտառներով եւ կտրտված ձորակներով ու ձորերով (այստեղից էլ Ձորք անունը, որ նշանակում է «ձորեր»): 11-րդ դարից սկսեց կոչվել Կապան, իսկ ավելի ուշ՝ նաեւ Բաղաբերդ: Կենտրոնական քաղաքն էր Կապանը, որից այժմ միայն ավերակների հետքեր են մնացել, այժմյան Ղափան քաղաքից դեպի հյուսիս-արեւմուտք: Կապան անունը ծագում է կապան հասարակ անունից, որ նշանակում է «կիրճ, նեղ անցք երկու լեռների միջեւ», այլեւ՝ «կիրճի նեղ մասում եղած ամուր դուռ»: Այդ իմաստը հենց պատշաճում է գավառի տեղանքին: Այդ անունը արտացոլում ունի Ղափան անվան մեջ, իսկ վերջինս արդյունք է հետագայի ժողովրդական ստուգաբանության՝ Կապան-Ղափան: Աղավաղումով կապվել է թուրքական ղափան բառի հետ՝ «մեծ կշեռք» նշանակությամբ: (էջ 70):

27. Հին Հայաստանի նշանավոր բերդերից մեկը՝ Ձորք գավառում:

Հայտնի է շատ հին ժամանակներից: Մինչեւ այժմ պահպանված են Բաղաբերդի ավերակները: Ողջի գետի եւ նրա ձախակողմյան Գիրաթաղ վտակի անկյունում, այժմյան Դավիթ բեկ ավանի մոտ, Ղափան քաղաքից դեպի հյուսիս, Քաջարան քաղաքից 17 կիլոմետր արեւելք (բերդի դիրքի, նրա ավերակների ներկա վիճակի բնութագրման, ինչպես նաեւ պատմության մասին տե՛ս Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», Երեւան, 1966, էջ 112-118): (էջ 70):

28. Տե՛ս ծան. 26: (էջ 70):

29. Երնջակ գավառը ((Աշխարհացույց)-ում հիշատակվում է որպես Սյունիքի 1-ին գավառը. ուներ 600 քառակուսի կիլոմետր տարածություն, ընկած էր Երնջակ գետի (այժմ՝ Ալինջա չայ) վերին հոսանքի շրջանում (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 51, 109, 117): Նրան սահմանակից էին արեւելքից՝ Գողթնը, արեւմուտքից՝ Ճահուկը եւ Նախիջեւանը, հյուսիսից՝ Ճահուկի մի մասը եւ Ծղուկը, հարավից՝ Երասխ (Արաքս) գետը (հմմտ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 348): Նրա պատմական տարածքն այժմ ընդգրկում է Նախիջեւանի Ջուլֆայի շրջանը (տե՛ս Ա. Այվազյան, «Նախիջեւանի պատմաճարտարապետական հուշարձանները», Երեւան, 1978, էջ 34): (էջ 70):

30. Գողթն (Գողթան) գավառը պատմական Հայաստանի հայտնի գավառներից մեկն էր: «Աշխարհացույց»-ում նշված է Վասպուրականի նահանգի կազմում որպես նրա 33-րդ գավառը: Բռնում էր 1375 քառակուսի կիլոմետր տարածություն, ընդգրկում էր այժմյան Նախիջեւանի Ապրակունիսի եւ Օրդուբադի շրջանները (տե՛ս Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի», էջ 48, 109, 117): Եղել է ժամանակ, երբ Գողթնը հաշվվել է Սյունիքի կազմում: Ս. Օրբելյանն այստեղ հիշատակում է Երնջակի հետ միասին: Գողթն տեղանվան ծագման վերաբերյալ մերժելով Կ. Շահնազարյանցի այն բացատրությունը, ըստ որի այս անունը (ինչպես եւ համանման ուրիշները) բխեցվում է գալլական էթնիկական անունից, այլեւ Ղ. Ալիշանի ստուգաբանությունը՝ Գորութ իշխանի անունից, Ս. Ումառյանը պնդում է, որ դա առաջացել է երբեմնի տեղաբնիկ կողթերի անունից (տե՛ս «Սյունիքը դիցարան», էջ 94): (էջ 70):

31. Ճահուկ գավառը «Աշխարհացույց»-ում հիշվում է 2-րդ տեղում: Ընկած էր Ճահուկ (այժմ՝ Ջահրի) եւ Շահապոնս (այժմ՝ Շահբուզ) գետերի հովիտների շրջանում: Գրավում էր 1130 քառակուսի կիլոմետր տարածություն (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 64, 109, 117): Նրա պատմական տարածքը համընկնում էր այժմյան Նախիջեւանի Շահբուզի ամբողջ շրջանին եւ Նախիջեւանի շրջանի մի մասին (հմմտ. Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 65): Ճահուկ (Ջահուկ) տեղանվան ծագումն անհայտ է: Ղ. Ալիշանը հիշեցնում է Ղազար կաթողիկոսի ստուգաբանությունը, ըստ որի անունը բխեցվում է հայերեն ճահ

«հարմար, պատշաճ, տեղին» բառից՝ «վասն պատուականութեան տեղեացն ճահ եւ ըմբոն, այսինքն գեղեցիկ հարկաւոր եւ կարի պատշաճ» (Սիսական, էջ 479): Ս. Ումառյանը, հայերեն ճահուկ բառից անջատելով ճահ մասը, որպես անվան հիմք, ներկայացնում է «ջոկ», «խումբ», «առանձին» իմաստներով եւ ենթադրաբար ավելացնում է. «Երեւի գավառանունը Նախիջեւանից անջատվելու կապակցությամբ է ստացել այդ անունը...» («Սյունիքը դիցարան», էջ 100): Հայերեն Ճահուկ բառը որպես հասարակ անուն ամբողջությամբ մի ժամանակ գործածվել է «խումբ», «ջոկ», «հոտ», եւ այլեւ «բանակատեղի» իմաստներով եւ ստուգաբանված չէ (հմմտ. Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը): Նման գավառ կար նաեւ Կորճեից նահանգում: (էջ 70):

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԶՐՈՒՅՑՆԵՐ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՍՈՒՐԲ ԱՌԱՔՅԱԼԻ՝ ՄԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀԸ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ...

Ամենից առաջ ինձ համար կարեւոր ու չափազանց անհրաժեշտ էր ցույց տալ հենց այս, թե հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդեցվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով. եւ անտեղի չէ այժմ դա շարադրել: Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատականով[99] եւ անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները, սկսում է քարոզել Որդվատ գյուղում[100], Արեւիք գավառում[101], Բաղքում[102] եւ Գողթնում[103]: Սրանք, ընդունելով Ավետարանի քարոզությունը, լուսավորվեցին ավազանի մկրտությամբ՝ Բարդուղիմեոս սուրբ առաքյալի շնորհիվ: Ապա սուրբ առաքյալը կառուցում է եկեղեցի Գողթնի արեւմտյան ծայրամասում, մի ժայռի վրա, իրենց կացարանի գրաված տեղում: Նրա անունը կոչեցին Տյառնընդառաջ եւ այնտեղ մեծամեծ հրաշքներ գործեցին: Քանի որ Որդվատ գյուղում վնասակար էր ջուրը, որ ամեն տարի ոռոգում էր բոլոր դաշտերն ու այգիները, աղոթեցին ու հանկարծակի խափանեցին այդ ջուրը, որի տեղը դեռ մինչեւ այսօր էլ երեւում է:

Գավառի իշխանն էր Շարը, որ ուներ որդի՝ Խոսրով, թոռ՝ Վահան եւ կին՝ Նշնա: [Բարդուղիմեոսը] նրանց համար վերակացու է նշանակում, որպեսզի նորից չմոլորվեն կռապաշտությամբ: Իր աշակերտներից մեկին՝ Կումսի անունով, ձեռնադրելով եպիսկոպոս ու նրան հանձնելով սուրբ հոգուն՝ ինքը գալիս է Վանանդ գյուղը[104]: Այնտեղ նրա աշակերտներից մեկը՝ Լուսիկ անունով, վախճանվեց, որին թաղեցին նույն տեղում ու գերեզմանի վրա շինեցին մի փոքրիկ մատուռ: Եվ մինչեւ այսօր [այնտեղ] կատարվում են մեծ հրաշքներ, բժշկություններ. գերեզմանի հողը կատաղիներին խիստ հնազանդության է բերում: Այնտեղ կար եւ մի կռատուն, այն էլ կործանեց եւ տեղում կառուցեց անշուք մի եկեղեցի ու կոչեց սուրբ Թովմայի անունով, որտեղ բազմաթիվ հրաշքներ են տեղի ունենում: Ապա սուրբ առաքյալը այնտեղից դուրս գալով գնաց Հայաստանի մայրաքաղաքը՝ Դվին: Այնուհետեւ վախճանվեց Կումսին, եւ տեղացի այն հավատացյալները չկամեցան առանց առաջնորդի մնալ, բայց ոչ մի տեղից ակնկալություն չունեին: Ապա իրենց առաջնորդ դարձրին մի օտարականի[105]՝ Բաբելաս անունով: Սրանից հետո քաջալերվելով սուրբ հոգուց՝ ուղարկեցին սուրբ Թադեի մոտ Մուշե անունով մի մարդու, որը չկարողացավ այնտեղից վերադառնալ: Եվ այսպես կրոնասերները մնացին առանց առաջնորդի՝ բնակվելով այս ու այնտեղ: Ոմանք, պատսպարվելով Դարու[106] լեռան վրա, իրենց կյանքն անցկացնում էին մենավորությամբ եւ երկար ժամանակ քարոզում էին շատերին՝ մինչեւ մեծ Լուսավորչի Հայաստան գալը եւ մեր ամբողջ Հայոց երկիրը լուսավորելը: Ապա սրանք գնացին ու իրենց առաջնորդ խնդրեցին, եւ [Լուսավորիչը] տվեց մի տարոնացի մարդու՝ Մովսես անունով[107]: Սրան հաջորդեց տարոնացի Սահակը, ապա՝ Ստեփանոսը, ապա՝ Զրվանդատը, ապա՝ Հովհաննեսը: Եվ այսպես կարգի են ընկնում՝ մեկը մյուսին փոխանորդելով մինչեւ այժմ: Բայց իմացի՛ր, որ գողթնեցիները Սյունիքից մեկուսացած չէին, այլ առաջ ժամանակ, երբ մեր Հայոց երկրում եպիսկոպոսներ նշանակված չէին եւ հավատացյալ չէին, սրանք տեսուչներ ունեին առանձին: Իսկ երբ սուրբ Գրիգորը լուսավորեց Հայաստանը եւ սահմանեց եպիսկոպոսների պաշտոնն ու աստիճանը, սրանց հանձնեց Սյունիքի եպիսկոպոսներին, որպեսզի հնազանդությամբ նրանց հրամանին ենթարկվեն: Սրա մասին վկայում են առաջին կաթողիկոսների շրջաբերական թղթերը, գավառների եկեղեցական հին հարկացուցակը, որը իր մեջ լրիվ ընդգրկում է նաեւ ամբողջ Գողթան գավառը: Նույնպես եւ Գողթան իշխանները ոչ թե ուրիշ տոհմից էին, այլ՝ նույն Սիսական ցեղից, ինչպես ցույց է տալիս Մովսես Խորենացին

Ծանոթագրություն

99. Երկրամաս Պարսկաստանի հյուսիսային մասում՝ ընկած Ուրմիա լճի եւ Կասպից ծովի միջեւ: Այժմյան իրանական Ադրբեջանն է: (էջ 76):

100. Այս տեղանունը մինչեւ մեր ժամանակները պահպանված է Օրդուբադ ձեւով, որն այժմ էլ կրում է համապատասխան բնակավայրը Նախիջեւանում: (էջ 76):

101. Տե՛ս ծան. 24: (էջ 76):

102. Տե՛ս ծան. 21: (էջ 76):

103. Տե՛ս ծան. 30: (էջ 76):

104. Գյուղ Երնջակ գավառում: (էջ 77):

105. Բնագրում գործածված է խուժիկ: Այս բառը մեր լեզվում իրանյան փոխառություն է եւ բուն նշանակում է «խուժաստանցի» (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», համապատասխան բառահոդվածը): Մ. Բրոսեն թարգմանել է etranger «օտարական» (ֆրանս. թարգմ., էջ 12): Սա հավանական է, որպես եւ թարգմանեցինք մենք: (էջ 77):

106. Փարիզյան հրատարակության մեջ այս լեռան անունը Գարու ձեւով է (ի լերինն Գարուայ), մոսկովյան հրատարակությունն ունի Դարու (Դարուայ): Բրոսեն իր ֆրանսերեն թարգմանության մեջ տվել է Daron ձեւով (անդ, էջ 12): Ալիշանը, հենվելով իր ժամանակի ձնշման, ինչպես եւ այլ վկայությունների վրա, ընդունել է Դարու ձեւը (տե՛ս «Սիսական», էջ 448): Ճիշտը վերջինս է, դա հաստատվում է նաեւ N 6271 լավագույն ձեռագրով, որն ունի Դարուայ (էջ 19 բ): Ուստի մենք արտահայտեցինք Դարու ձեւով: (էջ 77)

107. Ինչպես նկատել է Կ. Շահնազարյանը (փարիզյան հրատ., հ. 1-ին, էջ 318), սա հակասում է Օրբելյանի երկի Ե գլխում արված այն հիշատակությանը, թե Գրիգոր Լուսավորիչը Սյունիքին տալիս է առաջին եպիսկոպոսը Գրիգորիոս անունով, որը հիշվում է նաեւ պատմիչի երկի ՀԲ գլխում: Է գլխում եւս նշվում է, որ Սյունյաց եպիսկոպոսությունը սկզբնավորվել է Գրիգորից: (էջ 77):

■

Սյունյաց եպիսկոպոսները առ 1886թ.

Ըստ Ղեւոնդ Ալիշանի «Սիսականի», էջ 20–21

302 .....Մովսես Տարոնացի, թվում է՝ Ասորին
320 .....Գրիգորիս, 46 տարի՞
366 .....Մաշտոց, կարգված Ներսես Մեծից
.....Տիրոտ
.....Հովակիմ
..... *Քսանհինգ տարի թափուր*
415 .....Անանիա, կարգված Վասակից, 42
458 .....Նուն, 8
466 .....Գաղատ, 17
483 .....Մուշե, 36
519 .....Երիցակ, 1
520 .....Մակար, 20
547 .....Պետրոս, 10
556 .....Գիգան, 3
558 .....Վրթանես, 23
580 .....Գրիգոր, 15
595 .....Քրիստափոր, 10
605 .....Դավիթ, 27
631 .....Մաթուսաղա, 18՞
645–52.թափուր 8 տարի
652 .....Աբրահամ, 30
681 .....Հովսեփ, 19
700 .....Հովհան, 12՞
.....Մովսես, 7
720 .....Անանիա, 7
726 .....Հովհան, 9
736 .....Ստեփանոս Մեծ, 1
736 .....Հովսեփ, 13՞
749 .....Հովակիմ, 17
764 .....Սադովկ, 38
801 .....Հովհաննես, 2
803 .....Սողոմոն, 7

Նորավանք (Ամաղու Նորավանք), Հայ առաքելական եկեղեցու վանական համալիր, կառուցվել է 13–ից 14–րդ դարերում: Գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Ամաղու գյուղից 3 կմ հյուսիս–արեւելք:

808 .....Եղիա, 8
815 .....Թեոդորոս, 18
832 .....Գեւորգ, 8
839 .....Դավիթ, 17
856 .....Հովհաննես, 10
866 .....Սողոմոն, 17
882+918 – Հովհաննես, 38
918 .....Հակոբ, 41
958 .....Վահան, 6
963+992 – Աշոտ, 17՞
985 .....Հովհաննես, որդի Աշոտի, 8
993 .....Սամվել, 5
999 .....Հակոբ
.....Գրիգոր
1006 ....Հովհաննես, 50
1057 ....Գրիգոր, 58
1117+1143 Ստեփանոս, 27
1143.....Բարսեղ, 5
1149+1168 Գրիգոր, 20
1170+1216 Ստեփանոս, 46
1216+1251 Հովհաննես, 36

Նորավանքում
1216 ....Հովհաննես Կապանցի
.....Սարգիս, 20
.....Ստեփանոս, 12
.....Գրիգոր, 1
.....Սարգիս (1285), 24
1251+1290 – Հայրապետ, 40

1271 ....Սողոմոն Հայրապետի հետ., 20
.....Հովհաննես, 3
1286+1309 – Ստեփանոս Օրբելյան
.....Շմավոն
1310 ....Հովհաննես Օրբել
1329 ....Ստեփանոս Օրբել, որդի Ջալալի
1337 ....Սարգիս եւ Ներսես
1407 ....Առաքել, քրոջորդի
Գր.Տաթեւացու
1422 ....Ստեփանոս, որդի Օրբելյան Սմբատի
1464 ....Ստեփանոս մյուս, որդի Իվանեի՞ Որոտնեցու
.....Շմավոն ազատ տնից
1478 ....Հովհաննես
1483 ....Ստեփանոս, եղբորորդի Շմավոնի
1495-1522 Եղիշե Օրբելյան
1571 ....Առաքել
1576 ....Ստեփանոս
1611.....Ավետիք
1620-42 Մեսրոպ
.....+ 1651 Զաքարիա
.....+ 1652 Ներսես
1653 ....Ստեփանոս
.....+ 1673 Մեսրոպ
.....Սիմեոն Անգեղակոթցի
.....Հովհան Շաբանօղլի
Զաքարիա
Մարտիրոս Մեղրեցի
Հովասափ Աղուերծեցի
Առաքել Սադաղ-օղլի



Տաթեւի վանք: Գտնվում է Սյունիքի մարզի Տաթեւ գյուղի հարավում՝ Որոտան գետի աջափնյա եզերքին:

Կիրակոս Աղուերծեցի
Թոմաս
Ներսես
Աստվածատուր Մզմզգ-օղլի
Հովհաննես Տաթեւացի
Մինաս Շինաթաղեցի
Ղազար Բեխցի
Աբրահամ Աստապատցի+1777
Հովակիմ
1820+1830 Մարտիրոս Սյունեցի
1837+... Սիմեոն Ուստաքյոլյան Տաթեւացի
.....Թադեւոս Տեր-Դանիելյան
.....Հովհաննես Ասլանյանց
1886 ....Հովհաննես Վ.Ղալամյան
.....■

Լրացուցիչ տեղեկություններ

Ըստ Ռոբերտ Էջանանցու

1. 1652 Ներսէս: ԺԷ դարի հիշատակարանների Գ հատորի էջ 608-ում այս Ներսեսը հիշված է նաեւ 1654 թվականին:
2. ԺԷ դարի հիշատակարանների Գ հատորի էջ 949-ում 1660 թվականին Տաթեւի առաջնորդ է հիշված Յովհաննէսը, որն Ալիշանի ցանկում չկա:
3. «Բանբեր Մատենադարանի» – 12 հատորի 261 էջում 1684 թվականին Տաթեւի առաջնորդ է հիշված Հովհաննեսը: Նույնն է Հովհան Շաբանօղլու հետ...
4. Ղ.Ալիշանը թվական չի դրել Հովհան Շաբանօղլի գահակալին: «Հայ ժող. մտավոր մշակ. զար. պատմ.» աշխատության 2-րդ հատորի էջ 479-ում Հովհան Շաբանօղլին 1668 թվականին գահակալ էր: ...Հետաքրքիր է, որ Աղվանի (Խողվանի) գյուղում Շաբանյան տոհմ կա:
5. Առաքէլ Սատախ-օղլի գահակալին Ղ.Ալիշանը թվական չի հողել, սակայն դրել է 1673-1777թթ. միջակայքում: Ըստ Ս.Բարխուդարյանի՝ Ղափանի Հալիձորում 1711 թվակիր արձանագրություն է եղել՝ ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌԱՔԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍՏԱԹԷԻ ՎԱՆՈՒՑ: Ռ.Ճկ:(Դիվան, պրակ 2, էջ 141): Ենթադրում եմ, որ այս Առաքելը Սատախ-օղլին է: Սատախ հոր մականունն է, որ թարգմանաբար նշանակում է հավատարիմ: Անշուշտ, անվանի այր էր:
6. Ղ.Ալիշանի առբերած՝ Կիրակոս Աղուերձեցին հավաստված է Դավիթբեկյան Տեր-Ավետիքի պատումի մեջ, թերեւս 1722 թվականը գահակալման հավաստի թվական է:
7. Յովակիմ եպիսկոպոսը 1793թ. գահակալ էր, ըստ ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ Ա հատորի էջ 54-ի հիշատակարանի: Ղ.Ալիշանը նրան էլ անթվական է թողել: Արդ, ո՞ր եպիսկոպոսն է հուղարկավորել Դավիթ Բեկին ըստ Ե.Լալայանի:
8. Նույնի էջ 287-ում առկա է Ղազար Բեխցին:
9. 1820-1830 Մարտիրոս Սյունեցի: Գերեցին ի Թավրիզ ըստ հիշատակարանի:

■

Գորիսի տարածաշրջան



Գորիս քաղաքի մուտքն ազդարարող խորհրդանիշը, կառուցվել է 2001 թվականին՝ Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի կապակցությամբ:

ԵՐԹՈՒՂԻ 1

Գորիս քաղաք. սրբավայր Բարդուղիմեոս առաքյալի օրերից

Աստվածապատվեր հրամանով «Այունյաց երկիրը» 2019 թ. նոյեմբերի վերջին օրերին շարունակում էր ուխտագնացությունը Սյունիքի մարզում:

Երթական շրջայցը Գորիս քաղաքում էր:
Անշուշտ, բազում անգամ եղել էինք Գորիս քաղաքի սրբավայրերից ամեն մեկում: Բայց ստույգ շարադրանք ապահովելու համար կարեւոր համարեցինք վերստին այցելել այդ վայրեր:
Գորիս քաղաքում մեր ստեղծագործական խմբին ուղեկցում էին նախ՝ Լեւոն Սամվելի Հովսեփյանը, ապա՝ Խասան Հարությունյանն ու Վլադիկ Ղազարյանը:

Բարդուղիմեոս առաքյալ, հեղ. Matteo di Giovanni

Բարդուղիմեոս առաքյալի կառուցած վկայարանը

Կա ավանդազրույց, որի համաձայն՝ Բարդուղիմեոս առաքյալը փոքրիկ մի վկայարան է կառուցել այստեղ:

Դա այն վայրն է, որտեղ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին կառուցվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

Ըստ Ստեփանոս պատմիչի՝ *«...Բարդուղիմեոսը Պարսկաստանից վերադառնալիս իր աշակերտների հետ գալիս է Ատրպատական եւ անցնելով Երասխ գետը՝ մտնում է Սիսականի սահմանները...»:*

Արեւիքում, Բաղքում, Գողթնում իր առաքելությունն ավարտելուց հետո նա ուղեւորվեց Հայաստանի մայրաքաղաք Դվին:

Ամենայն հավանականությամբ՝ Հայոց մայրաքաղաք գնալիս Բարդուղիմեոս սուրբ առաքյալն անցել է Հաբանդ, ապա Ծղուկ գավառներով:

Զագեձորի վանքը, որ կառուցել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը

Այն, որ Գրիգոր Լուսավորիչը ներկայիս Գորիսում կառուցել է Աստծո տաճար, միայն ավանդազրույցը չի վկայում:

Մատենագիտական աղբյուրների հիման վրա այդ մասին վկայում է նաեւ Սերո Խանզադյանը. *«Մեր Գրիգոր Լուսավորիչն իր ձեռքով այստեղ վանք է կառուցել, որի ավերակը կա Վանքի տափում»:*

Բայց Սերո Խանզադյանը, թույլ տվեք ասել, սխալվում է, երբ այդ վանքը նույնացնում է Պետրոսկա վանքի հետ, քանզի որեւէ փաստարկ չի վկայակոչում:

Եվ, այդուհանդերձ, արձանագրենք՝ վանքը գտնվել է ներկայիս Գորիս քաղաքի 3-րդ հիմնական դպրոցից արեւմուտք ընկած բարձունքի վրա՝ երբեմնի ավտոձեռնարկության տարածքում:

Զագեձորի վանքի հետքերը

Ավագ սերնդի ներկայացուցիչները տեսել են եւ պատի հետքերը, եւ խաչքարեր:

Խնդրո առարկայի վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Երվանդ Լալայանը՝ *«Մի ավանդություն էլ ասում է, թե Նոր Գորիսից մի վերստ դեպի հյուսիս գտնվող վանքում երբեմն մի այնպիսի զանգ է եղել, որ ձայնը շատ հեռուն լսվելիս է եղել. ուստիեւ ժողովուրդը սովորել է ասել՝ «Զանգը զոռ», այսինքն՝ զանգը զորավոր, եւ իբր թե դրանից էլ առաջացել է Զանգեզուր անունը»:*

Երվանդ Լալայանը մեկ այլ առիթով կրկին անդրադառնում է այդ հարցին. *«Նոր Գորիսից դեպի հյուսիս, հազիվ մի վերստ հեռավորությամբ միեւնույն հովտում գտնվում է մի քարաշեն, գեղեցիկ վանքի ավերակ՝ քանդված պարսպով ու մի քանի խցերով:*

Մի քիչ ներքեւ վազելիս է եղել մի սառնորակ աղբյուր, որ այժմ Գ. Միրումյանի ծախսով տարված է Նոր Գորիս:

Ոչ մի արձանագրություն չկա բոլոր ավերակների վրա, միայն ավանդությունը պատմում է, թե երբեմն շատ հարուստ

Տարակարծություն կա վանքի անվանման եւ կառուցման ու գործունեության ժամանակի հարցերում... Ամենամեծ կռվանն այն է, որ Ստեփանոս պատմիչը, խոսելով Սյունիքի նշանավոր վանքերի մասին, Զագեձորի վանք անվամբ հիշատակություն չի արել:

վանք է եղել, ունեցել է բազմաթիվ հոտեր, որոնց տված կաթը խողովակներով հոսել է սարից մինչեւ վանքը:

Այստեղ է եղել եւ այն զորավոր (զոռ) զանգը, որ իր անունը տվել է գավառին»:

Հարցի վերաբերյալ կարեւոր է ճանաչված հնագետ Սեդրակ Բարխուդարյանի տեսակետը, որը շարադրված է «Դիվան հայ վիմագրության» գրքի 2-րդ պրակում (էջ 78-79):

Ահա՝ *«Ձագեձորի վանք-գտնվելիս է եղել Գորիսից արեւմուտք, դեպի Վերին Շեն տանող ճանապարհին մոտ, բարձրության վրա, այժմ միայն պատերի հետքերն են մնում բանջարանոցների մեջ»:*

Փաստորեն՝ Սեդրակ Բարխուդարյանը եւ տեղն է հստակեցնում, եւ անվանումը:

Անվանման հարցում նրա տեսակետը, ինչպես տեսնում ենք, տարբերվում է Սերո Խանզադյանի եւ Երվանդ Լալայանի տեսակետներից:

Վանքի տափի եկեղեցու (վանքի) խնդրին անդրադարձել է նաեւ նշանավոր գորիսեցի Գագիկ Հայրումյանը, ով տարիներ շարունակ հետեւողականորեն զբաղվում է Գորիս քաղաքի եւ Հին Գորիսի (Վերիշենի) պատմության ուսումնասիրությամբ:

Գագիկ Հայրումյանը 1950-ականներին իր տատի հետ մատաղի է գնացել Վանքի տափի սրբավայր:

Եվ հիշում է՝ *«Մատուռը, որ թաքնված է փարթամ բուսածածկի հետեւում, երեւաց միանգամից՝ 4-5 մետրի վրա: Գրում եմ ու հիմա էլ՝ վաթսունհինգ տարվա հիշողությունների մութ ու լույս կծիկում առկայծում է ավեր պատերով ու դրանց շուրջ թափված որմնանախշերով կարմրավուն քարի այդ հրաշք շինությունը, որը հավանաբար 3-4 մետր լայնություն եւ 5-6 մետր երկարություն ուներ:*

Տպավորիչն ամենուր պատից թափված քարերի քանդակներն էին ու ամռան արեւի շողերի մեջ նրանց գույները: Այդքան նուրբ վիմանախշեր ես տեսած չկայի: Ավերակների մեջ էլ կարելի էր պատկերացնել, թե ինչքան գեղեցիկ կառույց պետք է եղած լիներ այդ մատուռը, որի հյուսիսային կողմի սրբատաշ պատից 1-1,5 մետր բարձրություն էր մնացել, մյուս կողմերն ավելի ցածր էին, մուտքը հատակից քանդված պատի մի մասն էր, եւ արեւմտյան կողմին ծուռ հենված էր մետրաչափ խաչքար...»:

Լրջախոհ գիտնականի նախանձախնդրությամբ եւ պատասխանատվությամբ շարադրված այդ հետազոտության մեջ՝ նվիրված Հին Գորիս-Վերիշենի սրբավայրերին, Գագիկ Հայրումյանը, սակայն, հանգում է հետեւության՝ չվկայակոչելով որեւէ ապացույց:

Ահա՝ *«Եվ այն համոզմանն եմ, որ Վանքի տափի եկեղեցական համալիրը եկեղեցաշինության համար նպաստավոր՝ 17-րդ դարի շինություն է: Ափսոսանքով կարծիք եմ հայտնում նաեւ, եկեղեցին մի դար անգամ չի ապրել, ավերվել է նույն հարյուրամյակի վերջում կամ 18-րդ դարի առաջին կեսին՝ Գորիսի կոտորածի եւ ավերման հետեւանքով. Սինդուրու բնակավայրի եւ եկեղեցու կործանմանը զուգահեռ»:*

Տարակարծություն կա, ինչպես տեսնում ենք, վանքի անվանման եւ կառուցման ու գործունեության ժամանակի հարցերում:

Ամենամեծ կռվանն այն է, որ Ստեփանոս պատմիչը, խոսելով Սյունիքի նշանավոր վանքերի մասին, Ձագեձորի վանք անվամբ հիշատակություն չի արել:

Մինչդեռ մոռանում ենք Ստեփանոս պատմիչի՝ այդ առիթով ասված խոսքը: Նշելով Սյունյաց աշխարհում եղած վանքերի, եկեղեցական միաբանությունների եւ նրանց քանակի մասին, պատմիչն իր խոսքն այսպես է եզրափակում. *«Դրանք թվով երեսուն են: Բայց ուրիշ շատերն էլ կային, որոնք չթվեցինք»:*

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

Ասել է թե՝ Ստեփանոս պատմիչը Սյունիքի բոլոր վանքերն ու եկեղեցիները թվարկելու, ներկայացնելու խնդիր չի ունեցել:

Այդ ամենը հաշվի առնելով՝ մեզ համար առավել ընդունելի է նշանավոր հնագետ Սեդրակ Բարխուդարյանի տեսակետը, որ դա Ձագեձորի վանքն է:

Ընդունելի է նաեւ տեսակետը, որ

վանքը կառուցել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը:

* * *

Վերստին այցելելով Ձագեձորի վանքի տարածք՝ տեսանք վանքի պատերի վերջին մասունքը՝ մոտ մեկ խորանարդ մետր պատի մնացորդ:

Երախտապարտ գորիսեցիներն այդ նշխարն առել են ծածկի տակ, բարեկարգել շրջակայքը, նոր խաչքարեր կանգնեցրել:

Եվ ամենակարեւորը՝ հավատավոր գորիսեցիներից շատերը, ինչպես դարեր շարունակ, հիմա էլ՝ շաբաթ եւ կիրակի օրերին, այցելում են այդ սրբավայր, որի զորավոր զանգի ղողանջները դարերի խորքից լսվում են նաեւ մեր օրերում...

Այստեղ եկեղեցի է կառուցել նաեւ Գրիգոր Լուսավորչի թոռը՝ Գրիգորիսը

Գրիգորիսը Վրթանեսի որդին էր:

Նա շարունակել է պապի եւ հոր գործը:

Ըստ Սերո Խանզադյանի՝ *«...Գորիսում Գրիգորիսը (Գրիգոր Լուսավորչի թոռը) եկեղեցի է հիմնել եւ կոչել իր անունով՝ Գրի-Գորիս»:*

Սերո Խանզադյանի կարծիքով՝ *«Ժամանակի ընթացքում «Գրի» մասնիկը վերացել է, մնացել է Գորիս-ը:*



Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

... Այս իմ կարծիքը հաստատում է այն, որ մինչեւ վերջերս Գորիսում եղել է «Եկեղեցի Սուրբ Գրիգորիս» անունով:

Այս եկեղեցին հիշվում է 1667 թ. մի հիշատակարանում»:

Սերո Խանզադյանի սույն վկայակոչման մեջ, անշուշտ, վերապահությամբ ենք մոտենում այն տեսակետին, թե Գորիս տեղանունը ծագում է Գրիգորիս անվանումից. դա, թերեւս, կարող ենք համարել որպես Գորիս տեղանվան ստուգաբանության տարբերակներից մեկը:

Գրիգորիսի անունով եկեղեցու գոյության վարկածը հաստատում է նաեւ Գագիկ Հայրումյանը, երբ խոսում է

Գորիսի Տաթեւացու անունը կրող հրապարակի հյուսիս-արեւմտյան մասում է գտնվել Ռուսաց ժամը: Ըստ որոշ տեղեկությունների՝ եկեղեցին կոչվել է Սուրբ Նիկողայոս: Եկեղեցին կառուցված է եղել սպիտակ բազալտ քարից: Ըստ Ակսել Բակունցի՝ Ռուսաց ժամն ունեցել է ոսկեփայլ գմբեթ, որի վրա՝ խաչ:

Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշակոթողը (2010թ., քանդակագործ՝ Նարեկ Օրդյան, ճարտարապետ ու նախագծի հեղինակ՝ Սեւադա Զաքարյան):

Վերիշենի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու մասին: Ըստ Գ. Հայրումյանի՝ Սուրբ Հռիփսիմեն նաեւ Գրիգորիս է կոչվել (այդ մասին՝ Վերիշենի սրբավայրերի վերաբերյալ նրա հրապարակման մեջ, որ տեղ է գտել թերթի սույն համարում):

Ռուսաց ժամը

Գորիսը 1870 թ. քաղաք հռչակվելուց հետո քաղաքի կենտրոնում կառուցվեց Ռուսաց ժամը: Եկեղեցու կառուցումն ավարտվել է 1897 թվականին:

Ըստ որոշ տեղեկությունների՝ եկեղեցին կոչվել է Սուրբ Նիկողայոս: Եկեղեցին կառուցված է եղել սպիտակ բազալտ քարից: Ըստ Ակսել Բակունցի՝ Ռուսաց ժամն ունեցել է ոսկեփայլ գմբեթ, որի վրա՝ խաչ:

Քաղաքի ո՞ր մասում է գտնվել Ռուսաց ժամը: Ըստ Ակսել Բակունցի՝ քաղաքի «բուլվարը» եւ Ռուսաց ժամն իրար կողքի էին:

Սերո Խանզադյանը հաստատում է դա՝ ասելով, թե քաղաքի փոքրիկ «բուլվարը» գտնվում էր Ռուսաց ժամի եւ Յոլունց «պասաժի» արանքում:

Խասան Հարությունյանն ավելի ստույգ է ներկայացնում (մեզ ցույց տալով) Ռուսաց ժամի տեղը՝ զբոսայգու հարավային մուտքի եւ քաղաքապետարանի միջեւ ընկած տարածք:

Նա վկայում է նաեւ, որ եկեղեցու մերձակայքի աղբյուրը՝ Ջամ աղբյուրը պահպանվել է եկեղեցին քանդելուց հետո՝ երկար տարիներ, եւ ինքը տեսել է աղբյուրը: Մի շարք սկզբնաղբյուրներ վկայում են, որ եկեղեցին քանդվել է 1926-ին:

Ակսել Բակունցը տեսել է եկեղեցու քանդված վիճակը. «Ռուսաց ժամի տեղ կանաչ պարտեզ էր, որտեղ սպիտակին էին տալիս եկեղեցու տաշած քարերը»:

Ռուսաց ժամը քանդելու մասին տարեց գորիսեցիները հակասական պատմություններ են փոխանցել: Իբր կոմսոմոլներն են, ինչ-որ կոչերից ոգեւորված ու խելագարված, գրոհել ու քանդել:

Իսկ ովքեր փորձել են ընդդիմանալ՝ հայտարարվել են հակահեղափոխականներ ու ժողովրդի թշնամիներ:

Սուրբ Մարտիրոս վիմափոր եկեղեցի

Ռուսաց ժամի շուրջ զրույցներում ուշագրավ է Խասան Հարությունյանի մեկ այլ վկայություն եւս: 1960-ականներին երբեմնի Ռուսաց ժամի եւ զբոսայգու հարակից տարածքում շինարարական աշխատանքներ կատարելիս՝ զբոսայգու ընդլայնման-բարեկարգման ժամանակ, զբոսայգու ներկայիս մարզադաշտի հարավային տարածքին կից երեւան է եկել երկու տապանաքար:

Տապանաքարերից մեկը Արշակ Շիրինյանի գերեզմանաքարն է եղել, մյուսը՝ Վահան Խորենունը:

Արշակ Շիրինյանը (ծնվել է 1879 թ. Շինուհայրում) հայ ազգային - ազատագրական շարժման նշանավոր դեմքերից է:

Գերմանիայում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդը Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամ էր:

Ինքն էր, որ 1918 թ. Նախիջեւանի Բիստում հանդիպեց Զորավար Անդրանիկին եւ նրան՝ զորագնդի ու գաղթականների հետ միասին, հրավիրեց Գորիս:

Արշակ Շիրինյանը եւ Վահան Խորենին 1920-ի կեսերին գազանաբար սպանվեցին Գորիսի բանտում:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Այդ տաճարի կառուցման եւ նախապատմության մասին շարադրել ենք «Սյունյաց երկրի» սույն համարի 4-րդ եւ 5-րդ էջերում:

Ստորեւ՝ հավելյալ տեղեկատվություններ եկեղեցու գործունեության հաջորդ փուլի մասին:

Կառուցման հաջորդ փուլն իրականացվել է 1988-97 թվականներին, երբ կառուցվել են նաեւ գմբեթն ու սուրբ խորանը: Աշխատանքները նախաձեռնեց նախ՝ Համլետ Մկրտչյանը, ով Գորիսի քաղաքային իշխանության ղեկավարն էր: Այնուհետեւ՝ Սուրեն Խաչատրյանի եւ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանի ջանքերով եկեղեցին ձեռք բերեց իր վերջնական ու ամբողջական տեսքը:

1997-ի դեկտեմբերի 20-ին՝ ժողովրդական տոնախմբության վերածված օրը, հանդիսավոր պատարագով եւ օծման արարողությամբ վերաբացվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչը:

Խաչի օծման արարողությունը կատարեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն:

Եկեղեցու վերաբացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Սյունիքի մարզպետ Սուրեն Աբրահամյանը:

Առանց գմբեթի եկեղեցին ունեցել է 12 մ բարձրություն, իսկ գմբեթը կառուցելուց հետո՝ մինչեւ նրա գագաթը 25 մ 70 սմ է, խաչի հետ՝ 28 մ:

Խաչը, որ արեւելահայաց բրոնզապատ մետաղ է, պատրաստել է գորիսեցի մետաղագործ Ռազմիկ Դոլունցը (նախագծող՝ Սեւադա Զաքարյան):

Իսկ վարպետներ Վլադիմիր Սարգսյանը, Արամայիս Ճատունցը, Միհրան Թեւոսյանը, Արշակ Առաքելյանը, Սուրիկ Թելունցը, Ալբերտ Սահակյանը, Գարուն Իսախանյանը եւ Գարուն Քաթանյանը կառուցել են սուրբ սեղանը, թմբուկը եւ վեղարը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու իտալահայ ճարտարապետ Տիգրան Պողոսյանի մասին կարդացեք նաեւ սույն համարի՝ Կորնիձորի սրբավայրերին նվիրված հոդվածում:

Հին եկեղեցին

Կարմիր եկեղեցին

Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշակոթող-ուխտավայրը

Յուրօրինակ այս հուշակոթող-սրբավայրը հիմնվեց 2010-ին: Հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան, քանդակագործ՝ Նարեկ Օրդյան, ճարտարապետ ու նախագծի հեղինակ՝ Սեւադա Զաքարյան:

Սուրբ Գրիգոր Տաթեւացու հիշատակի նորովի հավերժացումը պատահական չէր: Մեր տարածաշրջանում առանձնակի հարգանքով ու պատկառանքով են հիշում Գրիգոր Տաթեւացուն:

«Երկրորդ լուսաւորիչ հայկազեան ազգի», ինչպես եւ «Ամենայն հայոց վարդապետ» հորջորջումների արժանացած Տաթեւացին ծնվել է 1346-ին, մահացել 1409-ին:

Մահացավ Տաթեւի վանքում եւ թաղվեց մեծ առաքյալների՝ Պողոսի եւ Պետրոսի տոնին ու նրանց դասակից եւ պատվակից եղավ:

Սուրբ Մարտիրոս

Կիսաժայռափոր մատուռ, գտնվում է Հին Գորիսից հյուսիս-արեւելք՝ բարձր լանջին: Մատուռի մոտ եւ նրա ներսում կան խաչքարեր, թեեւ անարձանագիր են, բայց 10-11-րդ դարերի (թվականը նշում է հնագետ Սեդրակ Բարխուդարյանը):

Սինդարայի եկեղեցին: Գորիսից 1,5–2 կմ հյուսիս գտնվող Սինդարա գյուղատեղիում է այդ եկեղեցին: 17–18–րդ դարերում կառուցված տաճարը հիմա էլ կիսավեր վիճակում է:

Կիսաժայռափոր մատուռի արեւմտյան մուտքի բարավորի վրա գրված է. *«ԵՍ ՂԱԶԱՆՉԻ ԾԱՏՈՒՐՍ ԵՒ ՄԻՆԱՍ ՇԻՆԵՑԱՔ ՍԲ ՄԱՐՏԻՐՈՍ, /ՃԻԼԱՎ Ս. ԹՎ.: ՌՃԾԲ»:*

Ըստ Սեդրակ Բարխուդարյանի՝ *«Արձանագրությունը վերաբերում է նորոգությանը. շենքն ավելի հին է, եւ կողքին կան 10–11–րդ դարերի անարձանագիր խաչքարեր»:*

Հին եկեղեցի

Թաղակապ, ուղղանկյուն հատակագծով կառույց է:

Շուրջը գերեզմանոց է: Վերականգնվել է 19–րդ դարում:

Տեղանքը Գորիս գյուղի արեւելյան սարալանջն է:

Եկեղեցու անվանումը չկարողացանք հայտնաբերել:

Ակսել Բակունցի հիշատակը հավերժացնող խաչքար

2004–ին է կանգնեցվել հրաշալի այդ խաչքարը:

Կանգնեցվել է Ակսել Բակունցի տուն–թանգարանի այգում:

Կառուցման նախաձեռնողն ու հովանավորը Սուրեն Խաչատրյանն է, հեղինակը՝ Սեւադա Զաքարյանը, քանդակագործը՝ Ռազմիկ Արզումանյանը:

Կարմիր եկեղեցի

Ծակերի ձորի շրթունքին գտնվող ժայռափոր եկեղեցին է, որի բեմի կողքին կա եղծված արձանագրություն:

Դա Գորիսի նշանավոր հոգեւոր կենտրոններից էր:

Ըստ Երվանդ Լալայանի՝ *«Մինչեւ այժմ էլ Կարմիր կիրակի օրը բազմաթիվ ուխտավորներ են գնում՝ գլխավորապես Հին եւ Նոր Գորիսներից:*

Սա գտնվում է ձորի աջ կողմում՝ գրեթե գագաթին:

Դաշտի վրա կամ մի փոքրիկ գերեզմանատուն, որտեղից մի նեղ կածան քերծի լանջերի վրայով իջնում է դեպի ձորը, ուր բացվում է մի փոքրիկ քարաշեն դուռ: Անցնելով այս դռնից, մտնում ենք 9.23 մետր երկարության, 4.97 մետր լայնության եւ 2.84 մետր բարձրության մի այրի մեջ, որի միայն ձորահայաց կողմը պատ է քաշած:

Հյուսիսային կողմում շինված է սեղանը, որի վրա դեռեւս կանգուն մնում է վեմքարը: Ինչպես երեւում է, տեղը անհարմար լինելով՝ հյուսիսային կողմում են զետեղել սեղանը:

Արեւմտյան կողմում՝ հողի մեջ փորված է ավազանը:

Սեղանի վրա կան բավական թվով կավե կանթեղներ, որոնցից միջինը շատ գեղեցիկ է»:

Դատելով Երվանդ Լալայանի հստակ նկարագրությունից՝ դա Ըղջիազի թաղամասի ժայռափոր եկեղեցին է (ի դեպ, Սերո Խանզադյանն ավելի ընդունելի է համարում Ըղջիազի տեղանվան այս ստուգաբանությունը՝ Իղձիազ (Խճավազ)):

Այդ վայրը նաեւ Խաչեր է կոչվել, ինչպես եւ հիմա:

Կարմիր եկեղեցի կարելի է գնալ Ըղջիազի թաղամասի գերեզմանատան աջ մասով կամ հանգուցյալ Սերժիկ Թանգունցի տնամերձով:

Ձորի պռնկից իջնում ենք աստիճաններով:

Նույն Սերժիկ Թանգունցի ջանքերով երբեմնի կածանի տեղում աստիճանավանդակներ են դրվել՝ զուգահեռ կառուցելով ցանկապատ:

Այնպես որ՝ Կարմիր եկեղեցի իջնելն այլեւս վտանգ չի ներկայացնում:

Մենք Կարմիր եկեղեցի այցելեցինք երկու անգամ:

Վառված մոմերի առատությունից եւ թարմ ոտնահետքերից կարելի էր հասկանալ, որ գորիսեցի հավատավորները, ինչպես դարեր շարունակ, հիմա եւս ուխտագնացություն են կատարում Կարմիր եկեղեցի:

Ակսել Բակունցի հիշատակը հավերժացնող խաչքար

Եկեղեցին այնպիսի վիճակում էր, ինչպես 130-140 տարի առաջ տեսել ու նկարագրել է Երվանդ Լալայանը:

Դե իսկ խաչքարերից յուրաքանչյուրն արվեստի յուրօրինակ նմուշ է:

Սինդարայի եկեղեցին

Գորիսից 1,5-2 կմ հյուսիս գտնվող Սինդարա գյուղատեղիում է այդ եկեղեցին: 17-18-րդ դարերում կառուցված տաճարը հիմա էլ կիսավեր վիճակում է:

Մերձակայքում գտնվող գերեզմանատանը կան անարձանագիր խաչքարեր, ինչպես եւ եղծված արձանագրություններով տապանաքարեր:

Երվանդ Լալայանն այսպես է հիշում. *«Զագեձորից փոքր-ինչ բարձր ձգում է մի ուրիշ հովիտ, որ կոչում է Սին-դարա:*

Այստեղ կայ մի քարաշէն, կամարակապ եկեղեցու աւերակ եւ բաւականաչափ «քարատակ»-ներ, մի քանիսը քերծերի, մյուսները հողի մեջ փորուած:

Ծերունիների ասելով՝ սա «Վերի Շէնի», այսինքն Հին Գորիսի ամառանոցն է եղել»:

Սինդարայի եկեղեցուն անդրադարձ է կատարվել եւ Սեդրակ Բարխուդարյանի «Դիվան հայ վիմագրության» 2-րդ պրակում, եւ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանում» (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան):

Սինդարա եկեղեցուն անդրադարձել է նաեւ Գագիկ Հայրումյանը. *«Կարծում եմ, որ Սինդուրու... եկեղեցին նույն ճակատագիրն է ունեցել, ինչ Վանքի տափի եկեղեցին, որ այն... կործանվել է դարձյալ մահմեդական քոչվոր ցեղերի հարձակումներից»:*

Ըստ Գագիկ Հայրումյանի՝ *«Այս եկեղեցու քահանան 18-րդ դարի առաջին կեսին եղել է Տեր-Բարսեղ Միրումյանը, որին փոխարինել է նրա որդին՝ Տեր-Դավիթ Միրումյանը:*

...Տեր-Դավիթ Միրումյանը եղել է Սինդուրու եկեղեցու վերջին քահանան»:

«Խաչեր»-ի մատուռը Սինդարայում, որ վերաշինվել ու ստացել է նոր անուն՝ Սուրբ Տրդատ

Ըստ Գագիկ Հայրումյանի՝ Սինդուրու եկեղեցու մոտ գոյություն է ունեցել նաեւ անանուն սրբավայր-քարակույտ:

Սյունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի պատմածով՝ մի անգամ նրան մի տարեց գորիսեցի ասել է, թե Սինդուրու ձորում ապրել է նաեւ բնիկ կյորեսեցիների Յուղումին տոհմը, որ Խաչատրյանների նախնիներն են:

Այդ ծերունու հորդորով էլ Սուրեն Խաչատրյանը (առանց ձեռք տալու եղած սրբավայրին) նրա կողքին 2005-ին կառուցել է մի մատուռ (նախագծի հեղինակ՝ Սեւադա Զաքարյան, քանդակագործ՝ Վարդան Խուրշուդյան):

Մատուռի հարավային պատին քանդակված է Օրբելյանների տան զինանշանը:

Նորակառույց մատուռն օծվել է Սուրբ Տրդատ անվամբ:

Մեր այցելության օրը մատուռում մի խումբ գորիսեցիներ մոմ էին վառում:

Իսկ մի երիտասարդ, ով նախօրեին երեխա էր ունեցել, եկել էր՝ հենց այդ սրբավայրում նշելու իր առաջնեկի ծնունդը...

Պարունի բաղի խաչը

Այս խաչը, ըստ Գագիկ Հայրումյանի, Սինդարա ձորում երբեմնի գոյություն ունեցած նավթաբազայի, «Ավանգարդ» տնտեսության բնակելի շենքերի տեղում կամ մերձակայքում է եղել:

Գագիկ Հայրումյանը հիմք է ընդունել Ստեփան Լիսիցյանի հետեւյալ հիշատակությունը՝ *«Գորիսի եւ Վերիշենի ճանապարհին՝ Ղուրուշա կոչվող տեղում, թաղված է մի ինչ-որ սուրբ մարդ, որի գերեզմանին ուխտի էին գալիս անխոս, մոմ վառում, քարերը համբուրում եւ նույնպես անխոս վերադառնում՝ երեսը միշտ նրան դարձրած, քայլելով ետ-ետ»* (Զանգեզուրի հայերը, էջ 297):

Պարունի բաղի խաչի տեղագրության հարցում մի փոքր այլ կարծիք կա Գորիսում, ինչպես ասացին Խասան Հարությունյանն ու Վլադիկ Ղազարյանը:

Պարունի բաղի խաչը, ըստ նրանց, այն խաչն է, որ գտնվում է քաղաքի Արցախյան խճուղու վրա՝ ճանապարհի աջ կողմում՝ բազմաբնակարան շենքերի եւ ավտոկայանի մերձակայքում:

Չի բացառվում, որ Ստեփան Լիսիցյանի վկայակոչած Ղուրուշա վայրը հենց դա է:

Մինչ օրս՝ շաբաթ եւ կիրակի օրերին, այնտեղ կարելի է

«Խաչեր»-ի Սուրբ Տրդատ մատուռը Սինդարայում

հանդիպել հավատավոր շատ գորիսեցիների՝ եւ մոմ վառելիս, եւ մատաղ անելիս:

Ծակերի ձորի եկեղեցին

Կարմիր եկեղեցուց փոքր-ինչ վերեւ՝ նույն ձորակում, փոքրիկ գետակի անմիջապես ափին է գտնվել քարաշեն այդ եկեղեցին:

19-րդ դարավերջին Երվանդ Լալայանը եկեղեցին տեսել է ավերակ վիճակում:

Դռան կամարակապ քարին գրված է եղել՝ *«Յիշատակ է սբ. եկեղեցիս Մելիք Օհանին եւ իւր ծնողացն Մելիք Բաղուն թվ. ՌՄԺԴ»:*

Դա վկայում է Երվանդ Լալայանը եւ հավելում՝ *«Սույն եկեղեցու հանդեպ գտնվող ժայռի գագաթին նկատելի են փորվածքներ: Ասում են, թե այստեղ ծառայելիս է եղել որպես բերդ»:*

Դատելով Սեդրակ Բարխուդարյանի դիտարկումներից, կարելի է ենթադրել, որ այս եկեղեցին կամ մատուռը նույնպես կրել է Սուրբ Մարտիրոս անունը:

Իսկ Խասան Հարությունյանը վկայում է, որ 30-40 տարի առաջ ինքը տեսել է ավերակված եկեղեցու պատերի դեռեւս կանգուն հատվածները: Եվ եկեղեցին, իբր, կոչվել է Կամի վանք:

Պարունի բաղի խաչը

Սեդրակ Բարխուդարյանի կարծիքով՝ այդ եկեղեցին կառուցվել է 1765-ին:

Մենք այդ եկեղեցու տարածքում առաջին անգամ եղանք 2010 թվականին՝ Գորիս քաղաքի 140-ամյակի առիթով «Այունյաց երկիր» թերթի հատուկ համար պատրաստելիս: Այդ ժամանակ մեր ուղեկիցն էր այլեւս լուսահոգի Գամառնիկ Ներսիսյանը (լույս իջնի նրա շիրմին):

Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա մենք տեսանք միայն եկեղեցու հիմքերը եւ մերձակայքում ցրված քարեր՝ որոշակիորեն մշակված:

Խասան Հարությունյանի վկայությամբ՝ եկեղեցու պատերի հետքերը վերացել են մի քանի տարի առաջ՝ ջրհեղեղի հետեւանքով:

Մելիքների եկեղեցին

Գորիս գյուղում գտնվող այդ եկեղեցին ավելի ճիշտ Մելիք-Յուսեինյանների տոհմային եկեղեցին է՝ գերեզմանով:

Եկեղեցու ներսում եւ բակում են հու-

Ծակերի ձորի եկեղեցին

Մելիքների եկեղեցին

Քարվանսարայի ձորափնյա եկեղեցին

ղարկավորված մելիքական այդ գերդաստանի ներկայացուցիչները:

Եկեղեցու բակում է թաղված Գորիս քաղաքի հիմնադիր Մանուչար բեկ Մելիք-Հյուսեինյանը:

Եկեղեցին շուտափույթ վերանորոգման կարիք ունի:

Քարվանսարայի ձորափնյա եկեղեցին

Գորիսի արեւմտյան հատվածից՝ Եռաբլրի սարահարթից մի ձոր է իջնում դեպի Թոզ կապ, այնտեղ Գորիս քաղաքի գործող գերեզմանատունն է, որտեղ հանգչում է նաեւ Ամենայն հայոց գուսան Աշոտը:

Ձորավերջին, ավելի ճիշտ՝ ձորի հարավ-արեւելյան բարձունքին է գտնվում կիսավեր այդ եկեղեցին:

Շրջակայքում թափված քարերից ու դեռեւս կանգուն խաչքարերից երեւում է, որ գորիսեցիների համար պաշտելի սրբավայր է եղել այդ եկեղեցին:

Եկեղեցու անվան, կառուցման եւ ժամանակի մասին տեղեկություններ չգտանք:

Եկեղեցին գտնվում է, ինչպես ասացինք, Թոզ կապի գործող գերեզմանատնից հյուսիս: Եվ գործող գերեզմանը մի քանի ամիս է, ինչ տարածվել է այդ եկեղեցու շուրջ:

Սուրբ Հռիփսիմե

Այն, ըստ մոտավոր հաշվարկների, թվագրվել է 17-րդ դարով: Սակայն վերջին շրջանում եկեղեցու հարավային մուտքի բարավորի վրա բացվել է մինչ այդ անհայտ մի արձանագրություն հետեւյալ բովանդակությամբ՝ *«ՅԻՇԱՏ(Ա)Կ Է ԵԿԵՂԵՑԻՍ ՊԱՂԸՐԻ ՄԵԼԻՔ ՕՀԱՆԻՆ ԹՎ(Ի)Ն ՌՄԻԵ»:*

Այս արձանագրությունից իմանում ենք, թե ում հիշատակին է կառուցվել այն, թե երբ է կառուցվել՝ 1776 թ.:

Եկեղեցու կառուցման հեղինակը եղել է Մելիք Օհանը:

Այն միանավ բազիլիկ կառույց է, ունի երկու մուտք՝ արեւմտյան եւ հարավային պատերի վրա, չորս պատուհանով:

Կառույցին՝ հյուսիսային կողմից, կցված է երկու սենյակ, որոնցից մեկի մուտքը եկեղեցու ներսից է: Այն ծառայել է որպես ավանդատուն:

Եկեղեցու պատերը շարված են անմշակ բազալտով:

Մուտքերի եւ լուսամուտների շրջանակները, պատերի անկյունային հատվածները եւ ներսի միակ որմնակամարը շարված են մշակված բազալտով:

Պեղումներից հայտնաբերված եկեղեցական կառույցի մի շարք մանրամասներ վկայում են վաղ շրջանում եկեղեցու գոյության մասին, որի տեղում էլ, ըստ էության, կառուցվել է նորը:

Եկեղեցու շարվածքի մեջ կան քարեր, որոնք, որոշ մասնագետների կարծիքով, թվագրվում են 7-8-րդ դարերով:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին ցարական շրջանում վերանորոգվել է, իսկ խորհրդային տարիներին վերածվել ակումբի:

2009-13 թթ. եկեղեցին վերականգնվել է «Երկիր եւ մշակույթ», «Վիեն-Գորիս» կազմակերպությունների ու Վիեն քաղաքի տրամադրած միջոցներով:

Նորաշեն խաչը Գորիսի արեւելյան դարպասում

Գորիս քաղաքի արեւելյան մուտքն ազդարարող հու-

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

շակոթողի տարածքում 2019-ին կանգնեցվեց պղնձակոփ խաչ, որը բարձր դիտանոցից նայում է դեպի Գորիս քաղաք:

Ձեռնարկման հեղինակը եւ հովանավորը Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանն էր:

Սուրբ աղբյուրը՝ Լաստի խութի ստորոտում

Դարերի խորքից եկող այդ սրբավայրը վերջին տարիներին նորոգվել է Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի նախաձեռնությամբ ու միջոցներով:

Նըհատակի լեռը

Ըստ ավանդության՝ այս լեռան ստորոտում է թաղված մի սուրբ նահատակ (բարբառով՝ նըհատակ):

Այդ մասին իմացել է նաեւ Ստեփան Լիսիցյանը՝ գրելով՝ *«Հին Գորիսի մոտ, գրեթե իրար դիմաց, գյուղը պարփակող ձորահովտի լանջերին երկու քարայրեր ամփոփում են նահատակներին:*

Մեկը կոչվում է պարզորեն՝ Նըհատակ, մյուսը՝ Սըփ Մըրտուրիս»:

Նըհատակից հյուսիս բարձրաբերձ լեռը նաեւ Ճգնավորի լեռ ենք անվանում:

Խաչի աղբյուրը

Հասարակ, փոքրիկ մատուռը գտնվում է Գորիս գյուղից արեւելք, բարձր ձորաբերանի գլխին՝ մի դարավոր ծառի տակ՝ աղբյուրի կողքին:

Մատուռի արեւելքում գտնվում է մի մեծ ժայռաբեկոր, որի արեւելյան երեսին գտնվում է այս վայրի հնագույն արձանագրությունը. *«...ՇԻՆԵՑԻ ՍՈՒՐԲՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԵՋ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԲԱՐԵԽՈՎՍ Ի ՔՍ/ԹՎ.:ՇԽ»:*

1091 թ. այս արձանագրությունը Ձագեձորի կամ Վարարակնի հովտի ամենահին վիմագիր արձանագրությունն է:

Նորաշեն խաչը

Այս սրբավայրի մասին բազում ավանդազրույցներ կան:

Կարծում ենք Ստեփան Լիսիցյանը Խաչի աղբյուրը շփոթել է Սուրբ Մարտիրոսի հետ եւ Սուրբ Խաչին առնչվող ավանդազրույցների մի մասը վերագրել Սուրբ Մարտիրոսին:

Ավանդազրույցներից մեկ-երկուսը՝ ստորեւ (ըստ Ստեփան Լիսիցյանի):

«Գորիսում պասի առաջին օրը գլխավորապես աղջիկներն ու հարսները, ինչպես նաեւ բոլոր հասակի կանայք, գնում էին ուխտ...Սուրբ Մարտիրոսի քարայր, որի գլխին բուսած էր մի հինավուրց կաղնի: Մի ժամանակ շուրջը բուսած է եղել մի ամբողջ պուրակ, որից մնացել է միայն մի այդպիսի ծառ, որի հաստ ճյուղերից մի քանիսը հեռու էին ուղղված: Ջահելները կապում էին նրա վրայից ճինջ, ճոնջի՝ ճլորթի եւ մինչեւ երեկո ճոճվում. դա էլ ուներ իր մագիկ իմաստը. աճեցնելու, բուսցնելու նպատակով նույն իմաստով կրկնվում էր նաեւ Վարդէվառին»:

«Կանաչ գիրակի օրը տեղի էին ունենում մատաղ, պարեր, ճիարշավ, մրցություններ, հրացանաձգություն՝ ճվի կամ այլ նշանի վրա, երբեմն քանդիրբազի խաղէր՝ լարախաղացություն»:

«Քիչ կաթ ունեցող մոր հիվանդությունը կարելի էր լվանալ՝ տանելով այդ կնոջը Սրբ Մըրտուրիսի քրատակից ոչ հեռու բխող աղբյուրի մոտ, լվանալ նրա ստինքները աղբյուրի ջրով եւ մոմ վառելով՝ ստանալ կաթի բնական առատությունը»:

Վերստին պնդում ենք՝ Ստեփան Լիսիցյանի նկարագրած այդ վայրն ավելի շատ համընկնում է Սուրբ Խաչի մերձակայքին, որտեղ մինչեւ հիմա պահպանվում են եւ աղբյուրը, եւ ծառը:

Հ.Գ. Ըստ Խասան Հարությունյանի եւ Վլադիկ Ղազարյանի՝ սրբատեղիներ են եղել նաեւ Խուռըհատում, Հյումբաթի ձորում, Կյուփեր կոչվող դաշտամասում, Արտաբանական հիվանդանոցի մոտակայքում ժամանակին կառուցված «Գամմա» գործարանի տեղում, «Ավանգարդ» տնտեսության անասնապահական համալիրի տարածքում (Գորիս-Երեւան ավտոմայրուղու սկզբնամասում), որոնք շինարարական աշխատանքների կամ հողերի մելիորացման հետեւանքով վերացվել ու անհետ կորել են:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սուրբ աղբյուր

Նըհատակի լեռ

Խաչի աղբյուր

ԵՐԹՈՒՂԻ 2

Հին Գորիս - Վերիշեն

ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Սյունիքի սրբավայրերի մասին խոսելիս կարեւոր է դրանք դիտարկել երկրամասի աշխարհագրաերկրաբանական յուրօրինակ կառուցվածքի, լեռնային բարդ ռելիեֆի, բնական սեղմ բազմագոտիականության եւ աշխարհաքաղաքական մեկուսի, անջատ զարգացումների համակարգում: Այդ առանձնահատկությունները տիպական եւ որոշիչ հետեւանքներ են ունեցել ինչպես բուն հավատի, պաշտամունք–առարկաների, այնպես էլ սրբավայրերի ձեւի ու բովանդակության վրա:

Անդրադառնալով հայ ժողովրդի կազմավորման գործընթացին, ներկայացնելով սկյութա-կիմերական զանգվածների Անդրկովկաս ներխուժման ժամանակները (7-6 դդ., մ.թ.ա.)՝ ազգագրագետ Ստ. Լիսիցյանը գալիս է եզրակացության, որ Ղարաբաղ-Սյունիք աշխարհում նախահնդեվրոպական էթնիկ տարրերի հայացումը կամ արմենիզացիան կատարվել է Հայկական լեռնաշխարհի այլ մասերից անկախ, եւ որ առավելապես սակերն են հաստատվել այս վայրերում: (Ստ. Լիսիցյան, «Զանգեզուրի հայերը», էջ 26, 29-30): Դրա գլխավոր պատճառն այն էր, որ Սյունիքը լինելով ծայրամասում, ունենալով բնական կառուցվածքի դժվարին պայմաններ, կլիմայական գոտիականության կարճ ինտերվալներ եւ վատ հաղորդակցություն, գրեթե կտրված է եղել երկրում կատարվող տնտեսական ու քաղաքական անցուդարձից, զարգացումներից:

Իշխանասար

Տարբեր դարերում եւ երկար ժամանակահատվածներով Սյունիքն ապրել է պետական կիսանկախ կարգավիճակ: Այդ դժվարությունների պատճառով է նաեւ, որ շատ նվաճողներ իրենց երթի ընթացքում, չդիմանալով աննախադեպ իրավիճակներին, արշավանքը կասեցրել են կիսաճանապարհին:

Ի՞նչ պաշտամունք են դավանել մեր նախնիները...

Եթե խոսքը վաղ նախնյաց է վերաբերում, ապա կարելի է ասել, որ Արեւելքի վարդապետությունների պետական դիցարանները ոչ ուղղակիորեն անցել են նաեւ հայկական հնագույն պետություններին: Իսկ ավելի ուշ, տնտեսական ու առեւտրական կապերի, նվաճողների կողմից պարտադրվող օրենքների, զանգվածային տեղահանումների քաղաքականության, քոչվոր ցեղերի տեղաշարժերի հետեւանքով իշխել է բազմաստվածությունը՝ արիադավանություն-հեթանոսությունը:

Արեւի դերն առանցքային համարելով հանդերձ, նախնյաց հավատամքը չի եղել արեւապաշտությունը: Արեւին հավասար նրանք կարեւորել են նաեւ բնության ուրիշ երեւույթներ, տիեզերքը, մյուս լուսատուները, ամպը, որոտը, կայծակը, քամին, ծառը, ժայռը, կրակը, ջուրը եւ այն ամենը, որի գոյությունը, զարգացումներն իրենց անհասկանալի ու խորհրդավոր են եղել, վախ, զարմանք, հիացմունք են պատճառել... Մեր նախնիները բնապաշտ են եղել: Սուրբ վերաբերմունքի արժանացել են բնության բոլոր երեւույթները եւ նրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր աստվածը՝ Անահիտ – լուսին եւ պտղաբերություն, Նարե – ջուր եւ մաքրություն, Վահագն – հուր եւ ջերմություն, Միհր – պատերազմ եւ խաղաղություն, Նանե – ողջախոհություն եւ ընտանիք, Վանատուր – պատիվ եւ հյուրընկալություն, Աստղիկ – սեր եւ գեղեցկություն...

Խոսելով ազդեցությունների մասին, կարեւոր է ընդգծել պատմագրության այն վկայությունը, որ հայկական, մեդական եւ պարսկական մշակույթները ձեւավորվել են առաջավորասիական նույն միջավայրում եւ մշտապես եղել են փոխադարձ կապի մեջ: Իրանի հզոր կուլտուր-քաղաքական ազդեցությամբ հայկական դիցարանի աստվածները համադրվել են իրանականի հետ: Հայկական աստվածներն ստացել են նոր անուններ եւ, ամենայն հավանականությամբ, ձեռք բերել նաեւ որոշ նոր հատկանիշներ:

Կարծում եմ նաեւ, որ անվան Իշխանասար տարբերակը շատ ավելի ուշ ժամանակների, գուցեեւ նախորդ դարի սկզբների արտահայտություն է, որի հնչեղ տարբերակն առաջացել է հենց բուն, հին անվան երկրորդ վանկը մտածված փոխելու հետեւանքով՝ Իշեխլա, Իշխլա սար – Իշխանա սար:

Հովսեփ Օրբելին քիչ այլ կերպ է ներկայացնում այս ազդեցությունը. *«...հին հայկական դիցաբանությունը պետք է լիներ իրանական եւ լավագույն դեպքում՝ հելլենական դիցաբանության սոսկ նմանակերպը»* (Հ. Օրբելի, «Հայագիտական հետազոտություններ», պր. 1, 1974):

Հայոց աստվածները եւս հաճախ հեղինակություն են եղել հարեւան երկրների դիցարաններում: Պատմագրության մեջ բազմաթիվ օրինակներով ներկայացվում է մասնավորապես Անահիտ աստվածուհու համբավն ու ազդեցությունը: Անահիտի մասին իբրեւ ռազմի աստվածուհու, գրված է Արմավիրի հունարեն արձանագրության մեջ, որտեղ ասված է, թե չկա որեւէ տեղ ավելի ռազմատենչ աստվածուհի: Գրիգոր Տաթեւացին գրում է, որ թագավորները զորություն էին խնդրում Անահիտից, իրենց թշնամիներին հաղթելու եւ երկիրը ղեկավարելու համար (Կ. Վ. Մելիք-Փաշայան. Անահիտ դիցուհու պաշտամունքը, Հայկ. ՍՍՌ՝ ԳԱ հր., Երեւան» 1963, 163 էջ): Պատմիչ Ագաթանգեղոսն էլ շեշտելով նրա մեծությունը, հմայքն ու կարողությունները, այսպես է բնութագրում. «Մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ...» (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, պր. 53):

Քրիստոնեության ընդունումից հետո եկեղեցու կողմից լայն պայքար է ծավալվել հեթանոսությունը եւ մեծ տարածում գտած աղանդավորական բազմապիսի շարժումներն արմատախիլ անելու ուղղությամբ: Հայաստանը բաժանված էր երկու տերությունների միջեւ: Բյուզանդական կայսրության ենթակայության գավառներում այդ պայքարը վերահսկվել է պետության օրենքներով. հաճախ դաժան բնույթ է ունեցել, որը տվել է որոշակի արդյունք: Այստեղ կարող էր սրբավայր դառնալ մի այր, մի քարակույտ, որը գտնվել է հենց եկեղեցու հարեւանությամբ:

Այդ սրբավայրերի մասին մեծ արձակագիր Ակսել Բակունցն իր «Կյորես» քրոնիկոնում գրել է. *«...Ոչինչ եկեղեցական չկար այդ ուխտավայրերում՝ ոչ գիր, ոչ խաչ: Քարափոր այրեր էին բարձր քերծերի լանջին եւ կամ խուլ ձորում խոխոջող մի աղբյուր եւ մի քարակույտ...»:*

«Կյորեսն ուներ այդպիսի ուխտավայրեր, մրոտած պատերով, հողե սեւ ծրագներով, օջախի քարերով, որը երբեմն տաքանում էր մատաղների կրակից, եւ երբ ծուխը բարձրանար, մի ծերունի նայում էր, թե քամին որ կողմն է քշում ծուխը: Այդ միամիտ ծերունին հավատում էր, թե ծուխը որ կողմ գնար, այն կողմի արտերն այդ տարի շատ բերք կտային... »:

ԻՇԽԱՆԱՍԱՐ ՄԵԾ

Մեծ Իշխանասար, Մեծ Իշեխլա, Մեծ Իշեխլի, Իշխլի Մեծ, Մեծ Ըշըխլի, Մեծ Իշիխլու, Մեծ Ըշըխլու, Քաչալ դաղ, Քաչալ սար, Քիլի-սալի (տեղանունների բառարան), Ֆարմաշ եւ Թարփանմազ (Ե.Լալայան), Սուրբ Հովհաննես, Սուրբ Ավանես, Սուրբ Օհանես, Սարի սուրբ Վանես, Սարի Սուրբ (3552 մ, Կապուտջուղից հետո Սյունիքի երկրորդ բարձր սարն է):

Լեռնազանգված Սյունիքի հրաբխային բարձրավանդակում: Բարձրությունը 3552 մ է: Վերին նեոգենի հրաբխային գոյացում է՝ կազմված հիմնականում դացիտային, անդեզիտա-դացիտային լավաներից: Հս-ում է գտնվում Փոքր Իշխանասարը (3456 մ): Հս-արմ-ում Ի. 2500-2700 մ բարձրության թամքոցով ձգվում է դեպի Ծղուկի լեռնազանգվածը: Գագաթնային մասում կա խառնարան: Արլ. եւ արմ. լանջերը զառիթափ են՝ մասնատված հովիտներով: Արլ. լանջին սառցադաշտային ծագման տաշտակաձեւ հովտում է գտնվում Սեւ լիճը: Ի-ում տիրապետում են սառնամանիքային հողմահարումը եւ ռելիեֆի սառցադաշտային ձեւերը (ՀՍՀ, հ.4, էջ՝ 376):

Անհիշելի ժամանակներից (մի քանի հազարամյակ), Ձագեձորի - Վարարակնի հովտում ապրող մեր նախնիների համար Մեծ սուրբը եղել է Իշեխլա, Իշիխլու լեռը կամ Մեծ Իշխանասարը: Խորհրդավոր ու անհասանելի այս լեռ-դիցարանում ապրող աստվածներն են ձեւավորել բարին ու չարը, ամպն ու արեւը, որոտն ու կայծակը, հեղեղն ու փոթորիկը, երաշտն ու կարկուտը, իր հովանու տակ ապրող մարդկանց կենցաղն ու ճակատագրերը: Հիմա էլ, եթե մարդիկ ուզում են իմանալ, թե ինչ եղանակ է սպասվում առաջիկա ժամերին կամ օրերին, նայում են Քաչալ սարի հեռուները. փետրավոր են մայրամուտի ամպերը..., մթնել է լեռան կատարը..., թուխպն իջել, նստել է Իշամեյդանում... Զարմանալին այն է, որ այստեղ ամպերը ոչ թե ձորերից են բարձրանում, այլ կարող են կուտակվել լեռան կատարին, հաշված րոպեների ընթացքում, դանդաղ, անարգել իջնել ցած, պատել սար ու ձոր, կարող են ահարկու որոտներով եւ խաչաձեւվող կայծակներով թրատել սեւ-մութ երկնակամարը եւ ահեղամռունչ հեղեղաբեր տեղատարափ սփռել ձորի վրա... Միշտ ամենազոր է եղել է Իշիխլուն ու ամենակարող...

Մինչ Մեծ սրբասարի պաշտամունքի մասին խոսելը, ուզում եմ որոշ դատողություններ ու ենթադրություններ անել սարի անվան ծագման շուրջ:

Արդեն խոսել ենք հայ ազգի ձեւավորման ժամանակների, Սյունյաց աշխարհի բարդ գոտիականության, կտրվածության, տարբեր ժողովուրդների դիցարանների հետ փոխազդեցության մասին: Հնարավորինս ծանոթանալով առկա սկզբնաղբյուրներին եւ մեկնություններին, համոզվել եմ, որ Իշիխլու անունը եւ անվան նմանատիպ տարբերակները ոչ մի կապ չունեն մեր հարեւան այլադավան ժողովուրդների եւ մասնավորապես՝ թուրքական լեզուների հետ, որ այն շատ հին՝ վաղնջական ծագում ունի...

Ո՞ր ցեղերն ու ցեղախմբերն են Սյունյաց բնակչության նախնիները... Հավանական եմ համարում, որ այստեղ բնակվող հաստատած ցեղախմբերի համար գլխավոր աստվածներից մեկը եղած լինի բաբելաասորական սիրո եւ պտղաբերության Իշտար աստվածուհին, որի անունից եւ պաշտամունքից էլ ծագած լինի Իշեխլա, Իշխլու, Իշեգլու սրբասարի անունը (Էշտար, Աշտար, կենտրոնական կանացի աստվածությունն է աքքադական դիցարանում: Վկայությունն ասում է, որ այն իր հերթին ծագել է աստար բառից, որ նախասեմական ժամանակներում տրվել է Վեներա մոլորակին՝ վաղորդյան աստղ կամ երեկոյան աստղ): Իշտարը նույնացվել էր Անահիտի հետ, նա նույնպես ունեցել է ռազմի աստծու ֆունկցիաներ, պատկերվել է նետ ու աղեղը մեջքին:

Բանասեր, արձակագիր, թարգմանիչ Սերգեյ Ումառյանը գրում է. *«Պատմական Սյունիքի տարածքում ապրող հին բնիկները բազմաստվածության ժամանակաշրջանում հայկականի հետ պաշտել են նաեւ շումերական, եգիպտական, խուռիական, խեթա-լուվիական, ասորա-բաբելական, իրանական աստվածներ, որոնց անունները մնացել են տեղանուններում»* (Ս.Ումառյան, Սյունիքը դիցարան, էջ 22): Վերծանելով պատմական Սյունիքի տեղանունները, եւ այդ առթիվ բազ-

մաթիվ հայ ու օտարազգի պատմիչների, հայագետների, պատմաբանների, գրականագետների, լեզվաբանների (Մ.Խորենացի, Ս.Օրբելյան, Մ.Աբեղյան, Հր.Աճառյան, Ն.Ադոնց, Գ. Ղափանցյան, Ա.Ղարիբյան, Ն.Մառ, Հ.Հյուբշման եւ այլն) տեսակետները, Ս.Ումառյանը նշում է, որ Սյունիք աշխարհի բոլոր գավառներում տեղանուններից ավելի քան 250-ը դիցաբանական եւ այլ կարգի պաշտամունքային անուններ են:

Գրականագետ Մ.Աբեղյանն այն կարծիքին է, որ *«Իրանցիների հետ միաժամանակ հայերը հարաբերությունների մեջ են մտել հարավում Միջագետքի եւ Ասորեստանի բնակիչների-արամեացիների հետ, որոնք քրիստոնյա դառնալուց հետո ասորի են կոչվել: Հայերը նրանց ավելի բարձր կուլտուրայի ազդեցությունն եւս կրել են...»:* (Մ.Աբեղյան, Երկերի ժողովածու, հ. Ա, էջ 28): Ավելին՝ ըստ Մ. Աբեղյանի՝ ասորեստանյան Իշտար աստվածուհու Անատաու մականունը, ինչպես նաեւ՝ հայոց հնագույն աստվածուհու՝ Նարիի (հետագայում՝ Ծովինար) եւ ավելի ուշ հռոմեական Դիանա աստվածուհիների անունները եւս կապված են Անահիտ անվան հետ:

Մովսես Խորենացու տեղեկությունների համաձայն՝ Աթենասը Հայաստանում նույնացվել է Նանեի հետ: Ենթադրվում է, որ նրա պաշտամունքը Հայաստան եւ իրանական աշխարհ է անցել Սիրիայից: Շումերա-աքքադական դիցաբանության մեջ նա սիրո, պտղաբերության եւ պատերազմի աստվածուհին է, իր հատկանիշներով նմանվում է Ինաննային եւ Իշտարին: Հնարավոր է համարվում, որ լինի վերջինիս

Ակներ (Բռուն)

երկրորդ անունը:

Այստեղ մեզ մի կարեւոր փաստ կամ գուցե զուգադիպություն եւս խորհելու տեղիք է տալիս: Խոսելով Ադոնիս - Աստարտե առասպելի մասին, Ն. Ադոնցը նախ նշում է, որ Իշտարը նույն Աստարտեն է (Աֆրոդիտեն), որից ծագել է մեր Աստղիկը, ապա գրում է. *«...ասել է թե՝ առասպելն հյուսվել է այնպիսի ժամանակ, երբ Իշտարի լծորդը համարվում էր ջրային մեծ աստվածը՝ Դակոնը կամ Օաննը»* (Ն.Ադոնց, Երկեր, հ.1, էջ 29):

Չանդրադառնալով Իշտար աստվածուհու ամուսիններին, այնուհանդերձ մենք գիտենք, որ Իշխանասար-Իշխալին կոչվել է նաեւ Սուրբ Հովհաննես, Սուրբ Օհանես... Այդ անունը կապ ունի՞ Ն. Ադոնցի նշած Իշտարի «լծորդ», ջրային մեծ աստված Օաննի հետ... Սրբասարի այս երկու անունը նույն հնադարում են ձեւավորվել...

Եթե հենց այդպես էլ եղած լինի, այնուհանդերձ, պետք է ընդունել, որ երկիրը քրիստոնյա դառնալուց հետո քարոզիչների համար արդեն կանաչ ճանապարհ է բացվել հեթանոսական աստված Օաննի փոխարեն կարգելու Քրիստոսի սիրելի աշակերտին, եկեղեցու երեք սյուներից մեկին՝ Հովհաննես առաքյալին...

Անվան հետ առնչվող մի այլ մեկնա-

Ժողովրդական բանահյուսության պատառիկներ՝ Սուրբ Օհանես սարին

ԳՅՈՒԼՈՒՄՆԵՐ

Քիշեր-ցիրեկ աչկս ճամփին,
Կսպասեմ իմ դարիբ յարին:
Սարի սուրբ Օհանես,
Բյալքա թա՝ մըն խաբա՞ն անես:

Ասում են թա՝ խեւ ես, պել ես,
Հինչ էլ ինես՝ տու իմ սերն ես:
Վենդավ կքինամ Սարի սուրբ Վանես,
Մինակ թա՝ կաս ինձ տանես:

Ակնին աղբյուրը պյացրու տեղ ա,
Ձյուրը դարման ու դեղ ա,
Դյուզի ճընհապան կեռ ու մեռ ա,
Տյախծուտը թաքուն սիրելու տեղ ա:

Վարդավառին հինչ կանեն.
Իյուրուր մըն լավ ճուր կանեն,
Սար կքինան, երգ կասեն,
Վիճակ հանեն՝ սեր կասեն:

Փարչը յոթ ճիրավ լցած ա,
Վիճակը միջին պահած ա:
Ամ՛ վարդավառ եկած ջահել՝
Քու բախտն ընդեղ կապած ա:

ԳԵԼԿԱՊԻ ԱՂՈԹՔ

(Երբ գելկապն արվում է դանակով)

բանություն եւս: Ձագեձորի խարամային կոնը մի բազմաձյուղ բարձրավանդակ է, որ դեպի արեւելք տարածվում է մի քանի կիլոմետր, իր մեջ է առնում Սեւ կամ Իշխանա լիճը, իսկ արեւմուտքում ձգվում է ավելի երկար՝ հր-արեւմուտք՝ Եռաբլրի բարձրավանդակը, մինչեւ Բարգուշատի ձորը եւ դեպի հս-արեւմուտք՝ Սիսիանի՝ Ծղուկի ողջ սարահարթը: Լեռնաշղթայի այս միջանկյալ ընդարձակ հարթությունը, որի վրա բարձրանում են Մեծ եւ Փոքր Իշխանասարեր-Իշխլաները՝ կոչվում է Իշամեյդան (Էշամեյդան):

Արտահայտությունը, անշուշտ, ոչ մի կապ չունի էշ, ավանակ կենդանու հետ: Այն պարզապես ասվում է իբրեւ Իշեխլա սարի մեյդան (մայդան, майдан): Իսկ Ստ. Մալխասյանը մայդանը բացատրում է այսպես՝ մեյդան, հրապարակ, հավաքատեղի, ասպարեզ շուկա, մրցավայր, հնագիտական՝ դամբարանաբլուր, որն արաբական փոխառություն է՝ maydan (Ստ. Մալխասյան, ՀԲԲ, հ3, էջ 315):

Կարծում եմ նաեւ, որ անվան Իշխանասար տարբերակը շատ ավելի ուշ ժամանակների, գուցե եւ նախորդ դարի սկզբների արտահայտություն է, որի հնչեղ տարբերակն առաջացել է հենց բուն, հին անվան երկրորդ վանկը մտածված փոխելու հետեւանքով՝ Իշեխլա, Իշխլա սար - Իշխանա սար:

Հիմա Իշեխլա մեծ սրբասարի պաշտամունքի մասին: Կարեւոր է վկայակոչել, որ խորհրդային հասարակարգում սոցիալիստական նոր տոների մեջ մենք գրեթե կորցրել կամ մոռացել էինք ազգային բազմաթիվ ծեսեր, եկեղեցական ու ժողովրդագրական տոնակատարություններ, ավանդական արարողակարգեր: Ցավալի է, բայց ճշմարտություն, որ ի տարբերություն հանրապետության մյուս շրջանների՝ դրանք ավելի արագ վերանում էին հենց Ձանգեզուրի տարածաշրջանում:

Ժողովրդական տոներից նախնական մտածողության բնորոշ սովորություններն իր մեջ առանձնապես խոշոր չափերով պահել է հենց Վարդավառը (Վըրթըվեր): Այն բոլոր ժամանակներում եղել է լեռների պաշտամունքին նվիրված տոն: Ցավալի է, որ վերջին տարիներին էլ, նորանկախ Հայաստանում մենք անցել ենք մի այլ ծայրահեղության՝ այն վեր ածել ենք ջրի տոնի կամ ջրցանոցիի:

Այս տոնի կարեւորագույն տարրերն էին լեռնային երթը, մատաղ-զոհաբերությունը, ջրի ցողումը, վարդը, վիճակ հանելը, խնձոր գլորելը, գյուլումներ երգելը եւ այլն: Այն քրիստոնեական ծիսակարգում համադրվել է Քրիստոսի Պայծառակերպությանը՝ Թաբոր լեռան վրա: Մեզանում ամեն ինչ պետք էր չեղած կամ լավագույն դեպքում մոռացված համարեինք, եթե հրաշքով գրված կամ պահպանված չլիներ 1931 թվականին ՀՍՍՀ պատմության պետական թանգարանի կողմից Ստ. Լիսիցյանի ղեկավարությամբ Ձանգեզուր մեկնած հայրենագիտական արշավախմբի կողմից գրառված մի պատկերավոր նկարագրություն, հայրենագիտական հրաշք մի գոհար, որ շքեղ գույներով ներկայացնում է Մեծ Իշխանասարում Վարդավառի մասսայական տոնակատարության պատկերը:

«Վարդավառի օրը, - գրում է Ստ. Լիսիցյանը արշավախմբի գիտական արդյունքները ներկայացնող իր «Ձանգեզուրի հայերը» գրքում, - *հավատացյալները մեծ բազմությամբ դիմում էին սրբազան լեռների գագաթներին գտնված սրբավայրերի այցելության: Այստեղ գտնվում էին հրաշագործ գերեզմաններ՝ որեւէ պարզ խաչքարով զարդարված կամ շատ նոր ժամանակներում շինված անարվեստ մատուռով հովանավորված: Բարձրանում էին Սարվարդի (Սալվարդի), Իշխանասարի (Իշիխլիի) սուրբ Օհաննեսը եւ մանավանդ Խուստուփի գագաթները...»* (էջ՝ 275):

Այնուհետեւ նկարագրելով տոնակատարության ընթացքն Իշխանասարում, ազգագրագետը գրում է.

«Մեծ Իշխանասարը՝ Մեծ Իշիխլին տեղացիներին հայտնի է նաեւ որպես Սըփ Օհանէսի սար: Նա ավելի մատչելի է հյուսիս-արեւելյան կողմից, որտեղ նրա ստորոտից ոչ հեռու կանաչ ափերի մեջ ծփում է Սեւ լճի՝ Կարագյոլի կապտավուն հայելին: Հին ժամանակ այժմյան Գորիսի վարչական շրջանի գրեթե բոլոր գյուղերից բազմաթիվ ուխտավորներ, որը ձիով կամ ջորիով, որը բոբիկ ոտով, անողորմաբար բզելով ծանր բարձած անասունը, ընտանիքի մեծ ու փոքրով շրջապատված՝ շտապում էին Վարդավառի տոնին սարը բարձրանալ: Իրենց բեռը ներքեւում՝ սարի ստորոտին թողնելով, նրանք մի քանի արահետներով շարան-շարան ձգվում էին սարն ի վեր դեպի գագաթը, որտեղ կոպիտ խաչքանդակներով զարդարված վիմաքարեր են կուտակված մի անհայտ գերեզմանի վրա: Այստեղ լուսեր՝ մոմեր վառելով՝ կպցնում էին քարերին, վառում էին կոպիտ կավե ծրագների բամբակե պատրույգները, բարեպաշ-

Յերի՛ կապուտ, յերի՛ կապուտ.
Էրկու ծերքավ, էրկու մանդավ
Տանակս անսաս փակվի,
Կյուլի ռեխը սարումը կապվի,
Սարի սուրբ՝ Վանեսն օգնական ինի,
Կորած դանան անվնաս ճարվի:*

* Կովը, հորթը, ոչխարը, ձին՝ նշվում է կոնկրետ:

Իշխանասարը Գուսան Աշոտի երգերում

Նազելուս հետ ելանք սարը, սարը ժպտաց, հրաշք էր,
Սարերի մեջ՝ Սրբասարը անզուգական դրախտ էր...
(«Սրբասար»)

Դու այնքան բարձր ես, մով սուրբ սար իմ,
Երկնքի հետ կխոսես քո շնչով սիրալի,
Ձեփյուռը տաղով է տուն մտնում շորորվում,
Սարերի սարն ես դու շափաղդ երկնային:
(«Սուրբ սար իմ»)

Էս գիշեր իմ երազին, ելա սարը Իշխանա,
Ինձ տարավ իմ մուրազ ձին, սրբավայրը իշխանա,
Ուխտավորներ են եկել սուրբ հավատի տենչանքով,
Ասես լեզու էր առել, էն խաչքարը իշխանա:
Մորս փեշը բռնեցի, խաչքարին մոմ վառեցի,
Ասաց,– որդի՛ս, սուրբ է սա,– խունկ վառեց, ես օծվեցի:
(«Մորս փեշը բռնեցի»)

տությամբ համբուրում էին քարերը եւ իրենց ջերմեռանդ աղոթքները դեպի արեւելք առաքելով՝ հայցում էին մուրազների կատարում: Այնուհետեւ իջնում էին սարից եւ լճից ոչ հեռու, մի տափարակ հրապարակի վրա, բերած մատաղացուն մորթում: Քահանաներն իրենց տիրացուների հետ մեկի մոտից մյուսի մոտ վազվզելով՝ իրենց հասանելիք ոչխարի կամ գառան բուրդն ու մորթին էին հավաքում: Շուրջը վխտում էին մանրավաճառներ, խնձորեսկցի աշուղներն այս եւ այն խմբին միանալով՝ իրենց երգի ու նվագի համար մեծարվում էին եւ իրենց վարձատրությունը ստանում» (նույն տեղը, էջ՝ 279-280):

Մեկնաբանելով նմանը չունեցող համաժողովրդական այս տոնախմբության էությունը՝ Ստ.Լիսիցյանը գրում է. *«Հազիվ թե կարելի լինի երկբայել, որ ոչ թե այստեղ իբր թե թաղված սուրբերի գերեզմաններն էին, որ գրավում էին ուխտավորներին, ինչպես եւ կասկածելի է նույնիսկ, թե այդ քարակույտերը թաղումների հետքեր են եւ ոչ թե ուշ ժամանակներում հավաքած քարերի կույտեր, այլ այդ գագաթները նվիրական էին քրիստոնեության նախորդող վաղեմի դարերից սկսած եւ շաղկապված էին արեւի պաշտամունքի հետ եւ ոչ մի կապ չունեին Քրիստոսի պայծառակերպության ավանդության հետ...»* (նույն տեղը, էջ՝ 275):

Սյունիքի Ակներ գյուղի վարչական ներկայացուցիչ Սպարտակ Մինասյանի պատմածով՝ Մեծ Իշխանասար լեռան լանջերին որեւէ սրբատեղի այժմ չկա, սարի կատարին 3-4 տարի առաջ Սիսիանի Իշխանասար գյուղի երիտասարդները տեղադրել են 1.5-2 մ բարձրությամբ մետաղե խաչ:

ԽԱՉԻՆ ՕՍ

Ստ.Լիսիցյանն իր վերը նշված հայտնի աշխատության մեջ Մեծ Իշխանասարում վարդավառի տոնակատարության պատկերավոր նկարագրությունը շարունակում է այսպես. *«Լավ քեֆ անելուց եւ կուշտ ուտելուց եւ պարելուց հետո բազմությունը երեկոյան դեմ վերադարձին ուղղվում էր դեպի Սըփ Կակօփի՝ Սուրբ Հակոբի խաչը, որը մի երկար քարատակ է եւ երկու կողմից երկու մուտք ունի: Այստեղ արդեն անհրաժեշտ էր մի մուտքով մտնել եւ մյուսից դուրս գալ միշտ միեւնույն ուղղությամբ»:* (Ստ.Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ՝ 280): Եվ ինչպես պատմում է մեծ հայրենագետը, դա արվում էր *«ապագա հնարավոր հիվանդությունից կամ անհաջողությունից պաշտպանվելու համար...»* (նույն տեղը, էջ 289):

Լուսանկարում՝ ակներցի Սալբունցների ընտանիքը մատաղացու գառ է տարել Խաչին օս սրբավայրը:

Խոսքն այստեղ Խաչին օս սրբավայրի մասին է, որը բոլոր ժամանակներում եղել է այս լեռնահովտի առավել հեղինակավոր աղոթատեղիներից մեկը: Կարեւոր է նշել, որ անցած դարի երկրորդ կեսին եւս այն դիտվում էր իբրեւ շատ այցելվող սրբավայր, բայց արդեն չէր պահվում նրա Սուրբ Հակոբի խաչ անունը: Սբ Հակոբ հայրապետը եկեղեցու հեղինակավոր եւ սիրված սրբերից է: Կատարած բազում հրաշքների շնորհիվ նրան կոչել են նաեւ «Սքանչելագործ»: Հակոբը թողել է պալատական ճոխ կյանքը՝ դարձել ճգնավոր: Տեսնելով, որ մարդկանցից շատերը թեպետ հավատքի են եկել, բայց թերահավատ են եւ կասկածում են Նոյյան տապանի գոյությանը, որոշել է բարձրանալ լեռը՝ տապանը տեսնել եւ մի մասնիկ բերել: Հակառակ անկոտրում կամքին՝ չի կարողացել հասնել Արարատի գագաթը եւ երկար տանջվելուց հետո նիրհել է: Երազում հրեշտակն այցելել է նրան եւ տապանից մի մասունք դրել գլխատակին: Ըստ ավանդության՝ սբ Հակոբի պառկած տեղում բուժիչ եւ հրաշագործ հատկություններ ունեցող սառնորակ աղբյուր է բխել... Նոյյան տապանի այդ մասունքը ցայսօր պահվում է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում: Հնարավոր է, որ հենց Ակների ջրերի ակունքների մոտ գտնվելու պատճառով է, որ այս սրբավայրը կոչվել է սբ Հակոբի անունով: Առաջ անցնենք եւ ջրերի պաշտամունքի մասին խոսելուց առաջ նշենք, որ սբ Հակոբի անունով այս ձորում՝ Վարարակնի արեւելյան ճյուղի վրա, կա մի ակնաղբյուր՝ Ակուփ աղբյուր (Հակոբ աղբյուր), որը եղել է ու կա Հին Գորիս-Վերիշեն գյուղի ջրամատակարարման գլխավոր ակունքներից մեկը:

Ինչպես ասացինք՝ Ստ. Լիսիցյանի կողմից նկարագրված Սուրբ Հակոբի խաչը ժողովրդի մեջ ավելի շատ հայտնի է Խաչին օս անունով: Այն հաճախ պարզապես կոչվում է նաեւ՝ խաչ, կամ՝ Ակնին ճիրին խաչը, կամ՝ Ակնին խաչը:

Նույն այս սրբավայրի մասին էլ Երվանդ Լալայանն այսպես է գրում. *«Վերի-Շէնից դեպի հյուսիս, մոտ 2 վերստ հեռու մի ձորակի մեջ բխում է մի սառնորակ աղբիւր: Սրա մոտ կան ահագին քերծեր, որոնցից ամենամեծի մեջ կան երեք մեծ «քարատակ», որոնցից երկուսը միմեանց հետ հաղորդակցում են արհեստական կերպով բացուած մի կլոր ծակով: Սրանց մոտ կայ եւ մի ուրիշ, փոքրիկ քարատակ, որ երկու նեղ անցք ունի: Սա սրբատեղի է համարւում, եւ թէպէտ ոչ մի խաչ, ոչ մի պատկեր չկայ, բայց եւ նոյնպես՝ ձէթի հին կանթեղներ են վայր ածած մեծ թվով, եւ ամբողջ*

քարատակը սեւացած է վառուած ձէթի ճրագների եւ մոմերի ծուխից: Դեռ այժմ էլ Գորիսից շատ ուխտաւորներ են գալիս այստեղ...» (Ե.Լալայան, Զանգեզուր, էջ 31):

Քարանձավախումբը, որի մեջ նաեւ սրբատեղին է, գտնվում է անմիջապես Իշխանասարի ստորոտում: Մեծ թեքություն ունեցող սարի դժվարին վերելքը սկսվում է սրբավայր-ժայռերից ընդամենը մի քանի մետր հեռվից, որի ձախ կողմի բարձունքում Ակներ աղբյուրի ակունքներն են: Իմ համոզմամբ հենց այստեղից էլ առաջ է եկել Խաչին օս անունը, իբրեւ մեծ Սրբասարի, մեծ խաչի օս /ուս/: Եթե սարը գլուխ լինի, ձորահովիտը՝ մարմին, գետի երկու վտակները՝ թեւեր, ապա սրբավայր ժայռը կլինի ուս: Եվ քանի որ Իշխանասար բարձրանալը միայն ամռանն է հնարավոր, եւ այն էլ՝ ոչ բոլորի համար, մարդիկ այցելելով սուրբ լեռ, հենց նրա ոտքերի տակ, նրա ծալվող ուսին մորթել են մատաղացուն եւ կատարել իրենց աղոթքը:

Վերիշենի Սբ Հռիփսիմե եկեղեցին (IV-V դարեր)

ՍԱԼԻ ՕՋԱԽ

Սալի օջախը Հին Գորիս-Վերին Շեն (Վերիշեն) գյուղին ամենամոտ սրբատեղին է, գտնվում է բնակավայրից 1-1.2 կմ հեռու, հս-արեւմտյան կողմի Չիման կոչվող մարգագետնային տարածքում, Մեծ աղբյուր ակունքի հարեւանությամբ՝ քիչ վերեւ: Այն 1.5-2 մ տրամագծով մի քարե քաշկառ էր եւ ուրիշ ոչինչ: 60 -70 -ական թվականներին ինչ-որ մեկն այստեղ մի փոքր, անշուք խաչքար է դրել (քարերի արանքում, առանց ամրացնելու): Այս սրբավայրում հիմնականում փոքր մատաղ են անում՝ աքլորներ:

80-ականների վերջին գյուղի մինուճար տղաների ուժերով այստեղ աղբյուր եւ ծածկով նստելատեղի՝ տաղավար է կառուցվել, որը չի պահպանվել:

ԳՅԱՎՈՒՐԻ ԲՆԵՐ

Արորդյան տներ, Աբորտի դալաղ, Գյավուրի բներ: Գտնվում է Զուգաքարի (Ղոշա քար) տարածքում, Պիծի խութից հարավ, Խաչին օսից արեւելք: Մի քանի տասնյակ հեկտարի վրա տարբեր մեծության քարակույտեր են եղել, որոնց մեջ գլխավորը՝ հսկա սալ քարեր: Նկատելի է եղել այդ քարե քաշկառների ըստ խմբերի տեղաբաշխումը: Պատմագրության եւ հնագիտության մեջ դրանք կոչվում են դոլմեն (քարե սեղան) եւ կուրգան (գերեզմանաբլուր, դամբարանաթումբ), որոնք մ.թ.ա. երրորդ հազարամյակի առաջին եւ երկրորդ հազարամյակի երկրորդ կեսերի մեգալիտյան դամբարանադաշտի թաղումներ են, պատկանում են միջին բրոնզեդարի դոլմենյան մշակույթին:

1959 թվականին այստեղ պեղումներ է կատարել ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պատմաբան Մորուս Հասրաթյանի ղեկավարած արշավախումբը: Զանգեզուրի հնագիտական արշավախմբի 1951 թ. աշխատանքների համառոտ հաշվետվության մեջ նշում է. *«...Ավելի մանրամասն ուսումնասիրվեց անցած տարի հայտնաբերված դոլմենների ու կուրգանների Գորիսի Վերին-շենի հսկա բնակավայրերը»* (ՀԱԱ. ֆ.1109, ց.1. գ. 247):

Մի այլ տեղ՝ «Սյունիքի բնակավայրերի պատմությունից» հոդվածում, մեծ գիտնականը գրում է. *«Չէի ասի, թե Զանգեզուրի (նաեւ Օշականի) բազմաքանակ դոլմենաձեւ բնակավայրերը, նույնաձեւ դամբարանները (Սիսիան-Շաքիի դիք քարերը՝ Ղոշունդաշ), (Ուզի եւ ամենախոշորը՝ Գորիս-Վերիշենի եւ շատ այլ վայրերի) եւ նման հուշարձանները լինեն սակ-սիսակների կուլտուրա: Դրանք ավելի հին բնակիչների, այսինքն մեծ մասամբ մի ծագում ունեցող առանձին տոհմերի, ապա ցեղային միության շինարարության արգասիք են, որոնցից, անշուշտ, օգտվել են շուրջ 2500-2700 տարիներ առաջ եկած եւ բնակված սակերը»* (Մ. Հասրաթյան, «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ», էջ՝ 126):

1970-ական թվականների սկզբին գյուղի խորհրդային տնտեսությունը (սովխոզը), շրջանային մելիորացիոն կայանի ծանր տեխնիկայի օգտագործմամբ, մելիորացրել, քարերից մաքրել է Գյավուրի բների տարածքի ողջ հողերը, որի հետեւանքով ամբողջությամբ ոչնչացվել է դամբարանադաշտը: Հսկա բլուրներով ժողովված բազալտե քարը մարդիկ տեղափոխել, օգտագործել են բնակարանային շինարարության մեջ:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ (Գրիգորիս) ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Որ Հին Գորիս-Վերիշենի սբ Հռիփսիմե եկեղեցին, իբրեւ քրիստոնեական խոշոր ուխտատեղի, գոյություն է ունեցել IV-V դարերից՝ վկայակոչվում է 1933, 1943, 1946 թվականներին ՀԽՍՀ Պատմահնագիտական հուշարձանների պահպանության կոմիտեի, 1955-ին՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտապետության գործերի վարչության, 1956թ.՝ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետության եւ շինարարության գործերի պետական կոմիտեի արշավախմբերի կողմից կատարված

ուսումնասիրություններով եւ անձնագրավորման արդյունքներով (Հայաստանի ազգային արխիվ, ֆ 1063, g1, գ 579, գ 1231):

Կա նաեւ հիմնարար կարծիք, որ այն ավելի հին ուխտատեղի է, որ ինչպես այդ ժամանակների եկեղեցիները, նույնպես կառուցվել է հեթանոսական մեհյանի տեղում: Եվ բուն եկեղեցին իր տեսակի մեջ, իբրեւ միանավ կառույց, ամենամեծն է Հայաստանում. արտաքին երկարությունը 27.3 մ է, սրահինը՝ 23.65 մ, լայնությունը որմնախորշերից՝ 5.65 մ, իսկ հենապատերից՝ 3.45 մ (չափագրությունը՝ Ժ.Միրումյանի):

Ցավով պետք է արձանագրել, որ 30-ական թվականներին իրականացված անձնագրավորման ժամանակ այս հոգեւոր կենտրոնից արդեն շատ բան մնացած չի եղել: Իրականում սբ Հռիփսիմեն եղել է վանական խոշոր համալիր՝ իր բազմաթիվ կառույցներով եւ բազմաճյուղ տնտեսությամբ, որը զբաղեցրել է ավելի քան 7.5 հա տարածք: Մենք չգիտենք, թե մինչեւ XX դարի սկիզբն ինչ վիճակով է սերունդներին հասել այս հոգեւոր կենտրոնը, քանի որ դրան նախորդող ժամանակաշրջանում եւ, մասնավորապես Գորիսի կոտորածի տարիներին, մեծ ավերածությունների են ենթարկվել ինչպես բնակավայրերը, այնպես էլ՝ եկեղեցական կառույցները: Բայց, որ այստեղ եղած հիմնական եւ օժանդակ կառույցներն ակտիվորեն քանդվել են անցած դարի 20-30-ական թվականներին, հայտնի է ու աններելի: Քանդված շինությունների սրբատաշ քարերով 1924-26 թվականներին կառուցվել է գյուղի դպրոցի շենքը, կոլեկտիվացման տարիներին ավերված շենքերի քարերով տարածքում կառուցվել է 4-5 տիպային անասնագոմ, սիլոսի երկու հոր, կոլտնտեսության դարբնոցն ու փայտամշակման արհեստանոցը, պահեստ: Տարածքի հարավային հատվածը զբաղեցրել է տնտեսության Փոքր այգին: Մնացած շինությունների մնացորդներն էլ վերացվել են 60-70-ականներին՝ անհատների կողմից սեփական հողատարածքների ընդլայնման հետեւանքով: Գյուղի կենտրոնական փողոցի աջ հատվածում գտնող տներն ու հողամասերը՝ նոր դպրոցի խաչմերուկից մինչեւ հին դպրոցի խաչմերուկը, տեղակայված են հին դամբարանադաշտի վրա, որը եւս եկեղեցական տարածք է եղել:

Սարերով ու ժայռերով շրջափակված, բազմագոտի լանդշաֆտով Սյունյաց «ընդարձակ» հարթավայրերից մեկում՝ Վարարակնի հովտում, մեր նախնիների կողմից կառուցված այս սրբավայրը չբացահայտված շատ գաղտնիքներ ունի: Նման մեծ հոգեւոր կենտրոնները սովորաբար լինում են խոշոր բնակավայրի հարեւանությամբ: Կոչվել է Ձագեձոր այդ գյուղավանը կամ բերդավանը, Գորայք... Գուցե տարբեր ժամանակներում՝ երկուսն էլ, ինչպես ենթադրվում է...

Պատմագրությունը, որում IV-V դարերը լուսաբանված են առավելագույնս, Սյունիքում մեկ այլ վանական համալիր կամ խոշոր եկեղեցի չի նշում: Գիտենք նաեւ, որ այս երկրամասի բնակավայրերի եկեղեցիները կառուցվել են հիմնականում միջնադարում:

Կարող ենք համոզիչ կարծիք հայտնել, որ քրիստոնեության տարածման ժամանակ Ձագեձորի կամ Գորու-Գորայքի սբ Հռիփսիմե (Գրիգորիս) վանական համալիրը եղել է Սյունյաց երկրի ազդեցիկ հոգեւոր կենտրոն:

Հիմա գլխավորը, ըստ պատմիչ Կորյունի, երբ հայոց գրերը ստեղծելուց առաջ Մեսրոպ Մաշտոցը եկավ Գողթն գավառ, պայքար ծավալեց հեթանոսության դեմ եւ երկրորդ անգամ այստեղ եկավ արդեն հայոց գրերը ստեղծելուց հետո, *«...դրանից հետո ելավ սահմանակից Սյունական աշխարհը... պտտեց, վերահասու եղավ Սյունիքի բոլոր կողմերում... Եվ սովորեցնելու համար մանուկներ ժողովեց, ավելի գազանամիտ, վայրենի, ճիվաղաբարո կողմերինը, եւ այնքան հոգ տարավ, դաստիարակի պես կրթեց, խրատեց...»* (Կորյուն «Վարք Մաշտոցի», ԵՀՀ, 2000թ., էջ 63):

Ծագում է հարց. որտե՞ղ, Սյունյաց աշխարհի ո՞ր եկեղեցում կամ վանական համալիրում է հանգրվանել եւ դպրոց բացել Մեսրոպ Մաշտոցը... Կարող ենք ենթադրել, որ մեծ լուսավորիչ, հայ գրության, հայագիր դպրոցի հիմնադիր, հայերենի առաջին ուսուցիչ, քրիստոնեության քարոզիչ, հայոց եկեղեցու վարդապետ Մեսրոպ Մաշտոցը յուր սյունիքյան գործունեությունը ծավալել է հենց այս վանական համալիրում ու տարածաշրջանի նշանավոր բնակավայրում՝ Ձագեձորում:

Եկեղեցու երկու մուտքի քարերի շարվածքից եւ վիմագիր արձանագրություններից երեւում է, որ այստեղ վերակառուցում է կատարվել մի քանի անգամ, վերջինը՝ 17-րդ դարում: Գիտենք նաեւ, որ բնակավայրը տարբեր ժամանակներում ասպատակվել է մահմեդական քոչվոր ցեղախմբերի կողմից, որ XVII-VVIII դարերում այստեղ ահավոր կոտորածներ են եղել, բնակավայրն անմարդաբնակ է դարձել: Հետո այլադավան բնակչություն է ապրել, փոխել են գյուղի անունն ու մեր հնակառույց եկեղեցին դարձրել են մզկիթ... Իսկ երբ վերադարձել են փախածներն ու քշել են այլադավաններին՝ սբ Հռիփսիմեն պղծված են համարել...

Հ.Գ. Աշխարհագրագետ Արամ Բաբայանի կարծիքով՝ Ձագաձորի (Վերիշենի) Սբ Հռիփսիմե եկեղեցին հիմքում եւ շրջակայքում ունի հեթանոսական տաճարին հատուկ կառուցվածքի բազմաթիվ տարրեր եւ մեհյանին յուրահատուկ նյութական մշակույթի հետքեր: Պահպանված անցքերով բազմաթիվ քարերի առկայությունը հուշում է, որ տաճարն իրոք կառուցվել է ավելի վաղ գոյություն ունեցած մեգալիթյան կառույցի հիմքերի վրա, կոնկրետ դեպքում՝ 4-րդ դարի սկզբին՝ հեթանոսական ԱՍՏՂԻ տաճարի տեղում (Ալբիրեո, Անգղի համաստեղություն): Եկեղեցու աշխարհագրական դիրքը, քարերի վրա առկա անցքերի տարբեր աստիճանի փորվածքները եւ այստեղ գտնված մի քարե աստղադիտական գործիք, աշխարհագետին հիմք են տալիս ենթադրելու, որ եկեղեցու եւ մեհյանի տարածքում եղել ու գործել է հնագույն աստղադիտարան:

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԿԱՄ ՆՈՐԱԿՆՈՒՔ (ՆԱՐԱԿՆՈՒՆՔ, ՆՈՐԱԿՈՒՆՔ) ԵԿԵՂԵՑԻ

Այս եկեղեցու մասին առաջին գրառումը հանդիպում ենք Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի 1840-ական թվականներին Հայաստանի տարբեր գավառներ, այդ թվում՝ Սյունիք կատարած ճամփորդությունը ներկայացնող նոթերի «Կորիս» ակնարկում. *«Լայնատարած գյուղ է, [տեղակայված] անհարթ ձորակում, մերձակա լեռներից բխող մի գետի ափին: Օդն ու ջուրն առողջարար են: Բնակիչները հայեր են՝ հարյուր հիսուն տուն: Ունեն անհարթ եւ կոփածո քարերով կառուցված [մի] սագաշեն եկեղեցի...»* (Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, էջ՝ 491):

XIX դարի 80-ական թվականների վերջին պատմագիր Լեոն, լինելով Սյունիքում, Բուն Գորիսի կամ Հին Գորիսի

Սուրբ Գեւորգ կամ Նորակնունք եկեղեցի

մասին գրում է. *«...Այս մի օրինավոր գյուղ է, մի հայկական գյուղ իր սեւ-սեւ տներով, աղբակույտերով, թմբի գլխին կանգնած է հին եկեղեցին, որ այժմ աչքից հեռացրած է...»:* (ԼԵՈ, երկ. ժող., հ.8, «Սովետական գրող» հր., Երեւան. 1985թ., էջ 59):

Իր հայտնի աշխատության մեջ այս եկեղեցու մասին չի մոռացել գրել նաեւ Ե.Լալայանը. *«Գյուղում կայ մի փոքրիկ, կիսով չափ քերծի մեջ փորուած եկեղեցի Նարակնունք (Նորակնունք) անունով, որի դռան կամարակալ քարի վրայ կայ հետեւյալ արձանագրութիւնը. «թ. ՌՀԷ (1628). Ես Նասիպ կանգնեցի սբ. եկեղեցիս ի փրկութիւն հոգւոյս»: Այս եկեղեցին այժմ էլ (1899) իբր աղոթատեղի է»* (Ե.Լալայան, Զանգեզուր, էջ 30-31):

Այս «կիսով չափ» հողի մեջ խրված, անարվեստ կառույցը վերագրվում է XVII դարին: Խոսելով այդ ժամանակի մասին, կարեւոր է նշել, որ դրան նախորդած շուրջ երեք հարյուրամյակ հայ ճարտարապետության համար անպտուղ դարեր են եղել: Հայ ժողովուրդը զուրկ է եղել պետականությունից՝ մոնղոլ-թաթարների (XIV դար), Կարա-կոյունլուների ու Ակ-կոյունլուների (XV դար) տիրապետության ժամանակն է եղել, որին հաջորդել են Հայաստանի երրորդ (1555) եւ չորրորդ (1639) բաժանումներ Օսմանյան կայսրության ու Սեֆյան Պարսկաստանի միջեւ: Միայն XVII դարի սկզբից Հայաստանում համեմատաբար նպաստավոր իրավիճակ է ստեղծվել երկրի վերականգնման եւ շինարարական գործունեության համար: Այս հարյուրամյակում են կառուցվել Սյունիքի եւ, մասնավորապես, Բուն Զանգեզուրի բնակավայրերի մի շարք հոգեւոր համալիր կառույցներ եւ եկեղեցիներ (Սյունյաց Մեծ անապատը՝ 1608-1613 թթ., Տաթեւի Մեծ անապատը եւ նրա սբ Աստվածածին եկեղեցին՝ 1663 թ., Խնձորեսկի սբ Հռիփսիմե եկեղեցին՝ 1665 թ., Քարահունջի սբ Հռիփսիմե եկեղեցին՝ 1675 թ., Շինուհայրի սբ Աստվածածին եկեղեցին՝ 1676 թ. եւ այլն): Ինչպես

Հակոբ քահանա Տեր-Մինասյան

վկայում է քարե արձանագրությունը, 1628-ին կառուցվել է նաեւ Բուն Գորիսի կամ Հին Գորիսի Նորակնունքը:

Այս փաստը չի նշանակում, որ կարող ենք խոսել խաղաղ ու ստեղծագործ կյանքի մասին: Չմոռանանք, որ Շահ Աբասի իշխանության տարիներն էին (1587-1629 թթ.): Կըզըլբաշ ցեղերի նոր տեղաշարժերի հետեւանքով Սյունիքը (Կապանի երկիրը) ենթարկվում էր Թավրիզի կամ Ազերբայջանի բեկլարբեկին: Այս վիլայեթներում իշխողների կամայականությունը սահման չուներ, իսկ հպատակները զրկված էին բոլոր իրավունքներից: Ղարաբաղում եւ Սյունիքում ալպիական ընդարձակ տարածությունների առկայությունը մեծ չափով նպաստել էր քոչվորության արագ տարածմանը: Դարավերջին իրանական իշխանությունների թուլացումն անկառավարելի էր դարձրել այստեղ թափառող ցեղերին, ամենուր հայատյացության քարոզ էր, մահ ու ավերածություն: Նման բազմաթիվ հարձակումների ենթարկված եւ կոտորածից փախած Բուն Գորիսի կամ Հին Գորիսի բնակչությունն էլ լքել էր իր բնակավայրը, ծվարել էր Շոր ջրի քարայրներում: Ինչպես արդեն ասել ենք, բնակավայրը հայաթափելուց, գյուղի անունը փոխելուց հետո, գլխավոր ու հին եկեղեցին՝ սբ Հռիփսիմեն, վերածվել էր մզկիթի: Դրա վկայությունն է նաեւ եկեղեցու ձեւափոխված արեւմտյան մուտքը: Մի քանի տասնամյակ հետո, երբ բնակիչները վերադարձել են իրենց բնակավայրը, հին եկեղեցին պղծված են համարել եւ հիմնական աղոթատեղի են դարձրել բնակավայրին ավելի մոտ եւ համեմատաբար ավելի ապահով փոքրիկ ու անշուք եկեղեցին՝ սբ Գեւորգը կամ Նորակնունքը:

Այդ ժամանակ ձորի բոլոր բնակավայրերի մելիքական նստավայրը եղել է Գորիս գյուղը: Մինչեւ 1899 թվականը ծնունդի, կնունքի, ամուսնության եւ մահվան գրանցումն ու ծիսակարգը կատարվել են միայն Գորիս գյուղի սբ Հռիփսիմե եկեղեցում: 1900-ից այդ արարողակարգերի կատարման թույլտվություն տրվել է նաեւ Հին Գորիսի սբ Գեւորգ եկեղեցուն:

1900-1906 թվականներին եկեղեցու քահանան եղել է Տեր-Ներսեսը, դպիրը՝ Սահակ Տեր-Մինասյանը: 1906 թվականից Հին Գորիսում է հանգրվանել կոտորածից փախած, Մինքենդ գյուղի հոգեւոր հովիվ Հակոբ Տեր-Մինասյանը, ով եւ դարձել է այս եկեղեցու քահանան: Դպիր-գործավարը եղել է Տեր-Գարե-

գինը: (Հակոբ քահանան եւ նրա որդին՝ գյուղի հեղկոմի նախագահ Մուշեղ Մինասյանը, սպանվել են 1921 թվականի հունիսի 25-ին՝ դաշնակների կողմից, կինը՝ Դիանան, ծանր վիրավորվել է):

Սբ Գեւորգ (Նորակնունք) եկեղեցու վերաբացումն ու օծումը 1994 թ. հուլիսին կատարել է Կանադայի Հայոց թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, ով եւ հոգացել է եկեղեցու վերանորոգման ծախսերը:

ՃՂԱԾ ՔԱՐ

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից ուսումնասիրված եւ 1960 թ. հրատարակած *«Դիվան հայ վիմագրության» արժեքավոր աշխատության II պրակում, կարդում ենք. «...Վերին Շենը նշանավոր է նրանով, որ նրա հյուսիսային սահմաններից են բխում Վարարակնի աղբյուրները; Այս աղբյուրների ջուրը 932 թ. Սյունյաց եպիսկոպոս Հակոբը գնել էր Սյունիքի իշխան Փիլիպէից 12 հազար դրամով եւ մի թանկարժեք քարով, ջրանցքով՝ Շնհերի եւ Հալիձորի հանդերով՝ հասցրել մինչեւ Տաթեւի վանքի կալվածքները՝ Որոտանի ձախ ափին, Սատանի կամուրջի գլխին, նախապես Ցաքուտ կոչված վայրը, որն այնուետեւ կոչվել է Վարդուտ»* (Ստ. Օրբելյան, 254-256):

«...1292 թ. Տաթեւի վանականներից Հովհաննեսը կրկին նորոգել է այն: Այդ արձանագրությունը փորագրված է մի մեծ ժայռաբեկորի վրա, որը գտնվում է ջրանցքի եւ լեռնաշղթայի եզրին, այն վայրում, որտեղից ջրանցքը շուռ է գալիս Ուչ թափաների հարթավայրը»:

«...Ժայռաբեկորի վրա հայերեն արձանագրությունից վեր, կա երկու տող արաբերենին նմանվող տառերով մի այլ արձանագրություն եւս: ...Գծագիրը եւ լուսանկարները մենք հանձնել ենք Լենինգրադի մասնագետներին, որոնց նախնական կարծիքն այն է, որ ուշ շրջանի-VII դ պահլավերեն է» («Դիվան հայ վիմագրության, Պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.,1960, էջ 75):

Ճղած քարի առեղծվածը կամ Տաթեւի վանքի, Ցաքուտի, Տերտերի առվի, Հակոբ եպիսկոպոսի առ Աստված աղոթքի եւ ժայռը երկու կես դառնալու հրաշքի մասին (Ավանդապատում, հատված)՝ ստորեւ:



...Հակոբ եպիսկոպոսը շինարարությունը սկսում է միանգամից մի քանի տասնյակ տեղամասերում: Ձագեձորի սարալանջերը, ողջ Եռագագաթի հարթությունը, Նորիքի, Խոտանանի, Շնհերի, Հալիքի դաշտերը, Որոտանի կիրճը վերածվում են մի անծայրածիր շինարարական հրապարակի: Իրենց հոգու փրկության համար վանքի համար կառուցվող ջրատարում սեփական մասնակցությունն ունենալու նպատակով կամովին աշխատելու են գալիս հարյուրավոր ու հազարավոր հայ քրիստոնյաներ: Փորվող ջրանցքի երկարությամբ մեծ քարավանի պես շղթայվում են կառուցողների վրանները, բանող անասունների գիշերելու համար փայտյա գերաններով արգելափակոցները, կավե խողովակների, քարի, ավազի, կրի, ուրիշ շինանյութերի բլուրները: Այսպես, բոլոր տեղամասերում մետր առ մետր ձգվում էր երանելի ջրատարը, եւ օրեր անց մի հատվածը միանում էր մյուսին: Ամեն ինչ արվում էր չարչարանքով ու մեծամեծ ծախսով, գործը առաջ էր գնում դանդաղ, բայց՝ նախանշած ընթացքով: Եվ ահա կառուցվող տեղամա-



Ճղած քարի բեկորը, որի վրա արձանագրություն է

Սեւ կամ Իշխանա լիճ

սերից մեկում՝ Ձագեձորի լեռնաբազուկի եզրին, այնտեղ՝ ուր Իշխանասարի փեշից ջրանցքը պետք է շրջվեր դեպի Եռագագաթի սարահարթը, ջրատարի ուղին արգելափակվում է, դեմ է առնում մի լերկ ապառաժի: Որոշվում է շրջանցել ժայռը, կտրել սարի կուրծքը, ամբողջությամբ հողից ազատել ժայռաբեկորը, եւ առուն ձգել նրա հետեւով: Մարդիկ քանդում են գիշեր ու զօր, բայց ինչքան փորում, խորանում, այնքան մեծանում էր ժայռը: Ելք չկար: Վանահայր Հակոբ եպիսկոպոսը խնդրի լուծումը միայն երկնքում է տեսնում: Նա պատարագ է մատուցում, դիմելով առ Աստված՝ նշում է, որ այդ գործը ձեռնարկվել է երկնավորից զորություն ստանալով, խնդրում է, որ մի ելք ցույց տա՝ անելանելի վիճակից դուրս գալու համար:

Անցնում են ժամեր: Մռայլ, սեւ ու գորշ ամպեր են իջնում Իշխանասարի գագաթից, կուտակվում են Ձագեձորի խարամի վրա: Իշիխլին մթնում է: Խառնվում են երկինքն ու երկիրը: Ահռելի որոտին հաջորդում է կժերից թափվող տեղատարափը: Ամպերի հուժկու բախումներից դողդողում է աշխարհը, եւ խավարը ստեպ-ստեպ լուսաճառագ է դառնում երկնքում իրար թրատող հզոր կայծակների կուրացնող լույսից: Լեռներն այդպես շանթահարվում են մի քանի ժամ, փոքր ջրերը մեծանում, անսանձ են դառնում, մարդ ու գազան սսկվում են թաքստոցներում...

Եվ առավոտյան, երբ ամենի համար եւ ամենուր առավոտը բացվում է խաղաղ ու լուսավոր, եւ շինականն իր գործին է գնում, մարդիկ տեսնում են գիշերը կատարված հրաշքը. նրանք «Տերտերի առվի» ճանապարհը փակող հսկա ժայռը տապալված են գտնում: Քարափին բազմած հսկա որձաքարը ճղված, երկու գրեթե հավասար մասերի բաժանված, ընկած է լինում ձորապռնկին... ժայռի մյուս կողմում թափված քարերը լինում են կտոր-կտոր՝ հազար կտոր: Վայրն այս մարդիկ կոչում են «Ճղած քար»:

Հակոբ եպիսկոպոսը հաջողությամբ ավարտում է ջրանցքի կառուցումը: Վարարակնի ջուրը Ձագեձորի լեռներից հասնում է Ցաքուտ, քարքարոտ ու փշալից վայրը վերափոխվում է վարդաստանի ու ծառաստանի, մի զարմանալի դրախտ է դառնում: *«...խիստ ընդարձակ ամբողջ վայրը զարդարեց թանձրախիտ ծառերով ու գեղեցկածյուղ որթատունկերով՝ միաբանության վայելքի եւ բոլոր կարոտյալների ու աղքատների կարիքների համար»* (Ստ.Օրբելյան, նույն տեղը, էջ՝ 226):

Նա հարթեցնել է տալիս նույն վայրում գտնվող գեղեցիկ բլրի գագաթը եւ կառուցում է գմբեթահարկ եկեղեցի, որը հատկապես աչքի էր ընկնում իր որմնանկարներով: Եվ ապա, մատենավորելով իր հիշատակի արձանագրությունը, գրում է «վերին օգնությամբ կառուցված» ջրանցքի պատմությունը, հաստատում է այդ ջրի վրա վանքի լրիվ իրավունքները եւ մյուսների համար՝ արգելքները:

Վարարակնի ջրանցքի մասին ստեղծվել է էլի մի վկայագիր՝ կառուցումից ավելի քան երեքուկես հարյուրամյակ հետո՝ 1294 թվականին: Այն Տաթեւի այդ ժամանակվա կառավարող եպիսկոպոս Հովհաննեսի կողմից ջրատարը վերանորոգելու մասին է: Հոգեւոր հովիվն իր կատարած գործի հիշատակարանը արդեն ոչ թե մատենագրել, այլ՝ վիմագիր արձանագրել է Ճղած քարի

երկու կես դարձած ժայռաբեկորներից մեկի հարթ ճակատին, որի մասին արդեն ասել ենք:

ՍԵՎ ԿԱՄ ԻՇԽԱՆԱ ԼՃԻ ԼԵԳԵՆԴԸ

Սեւ լիճ, Իշխանա լիճ, Իշխանա ծով, Ղարա գյոլ. լիճ Սյունիքի բարձրավանդակում՝ ՀՀ Սյունիքի մարզի եւ ԼՂՀ-ի սահմանագլխին, Գորիս քաղաքից հս-արմ., ծովի մակարդակից 2658 մ բարձր: Մակերեսը մոտ 2 կմ/քառ. (երկարությունը՝ 1,6 կմ, լայնությունը՝ 1,2 կմ, խորությունը՝ 9,3 մետր): Սեւ լճի մեջ ոչ մի գետ, առու, աղբյուր չի թափվում: Անհոսք քաղցրահամ լիճ է, սնվում է հատակից ելնող հոսքերից, մաքուր է, սառնորակ, աճեցվում է իշխան տեսակի ձուկ: Կա այն կարծիքը, որ ձագարաձեւ է, ունի նաեւ ներքին արտահոսք, լողանալու համար վտանգավոր է, կենտրոնում ձգելու հատկություն ունի: Ձմռանը սառցակալում է: Ամռանը նրա ափամերձ խոտառատ արոտներն օգտագործվում են անասնապահական տնտեսությունների կողմից: Լիճը Վարարակնի հովտի բոլոր ակունքների սնուցման աղբյուրն է:

Ասես երկնի լազուրից պոկվել է
մի պատառիկ,
Սուզվել է ու տեղ գտել մեր լեռներում
անառիկ...
Գուսան Աշոտ, «Իշխանա լիճ»
Դու ծովակն ես սրբոց սարի,
Քեզնով ցողվեց լույս հայուհին,
Մայր ասեմ քեզ աղբյուրների
Քեզնից կաթիլ թող չպակսի:
Գուսան Աշոտ, «Ծովակ Իշխանա»

«Նոր եւ հին Կորեսի մեջ (միջեւ) եւ սրան ավելի մոտ 4225 բարձր տեղում կա փոքրիկ ուխտատեղի մատուռ՝ մի աղջկա գերեզման: Ինչպես պատմում են, թե անհավատների բռնաբարությունից խուսափելու պատճառով բարձունքից գահավեժ իրեն նետել է Սեւ լիճը, որը լեռան գագաթին է, եւ ինչ-որ ոխ առնելու համար, կարծում է (պատմող) ռազմիկը, թե մնալով (մտնելով) այնտեղ (ջուրը) կբռնի նույն (տեղն) ընկնողներին եւ չի թողնի ազատվել, ելնել վեր, դուրս»: (Ղեւոնդ Ալիշան «Սիսական», Վենետիկ 1893, էջ՝ 262):

Հին ավանդապատումն ասում է, որ Ձագեձորում երկայնաբազուկ երեք եղբայրներ են ապրել, ովքեր տեր ու տիրականն են եղել այս ձորերի: Նրանցից ավագը ժառանգ չի ունեցել: Սրբի դռներ է գնացել, զոհեր է մատուցել աստծուն, բազմաթիվ բարեգործություններ է կատարել, որ իրեն ժառանգ տրվի: Եվ երբ արդեն բավական տարիքով է եղել, եկել է վաղուց սպասվող այդ ուրախությունը, եւ իշխանի կինը դուստր է ունցել: Շուտով նրանց դռանը հայտնվել է մի դերվիշ եւ իշխանից մի արծաթ է պահանջել, որ ասի դստեր ճակատագիրը: Զինվորները նրան քշել են երկրի սահմաններից դուրս: Հեռանալիս դերվիշն ասել է, որ իշխանադուստրը դժբախտ գեղեցկուհի է, դաժան ու անսովոր ճակատագիր է նրան տրված: Այս միտքն օր-օրի տանջել է հորը: Նա մտորումների մեջ է ընկել, հազար ու մի վարկած է մտածել եւ որոշել է՝ դստերը մեծացնել իբրեւ տղայի: Նրա մարդիկ նախ լուրեր են տարածել, թե իբր իշխանի կինն իրականում տղա է ունեցել, բայց աղջիկ է ասվել, որ աչքով չտան, որ օրորոցագողի ականջը չընկնի: Եվ, այնուհետեւ, իշխանն ու նրա մարդիկ սովորեցրել են աղջկան այն ամենը, որ հատուկ էր իսկական զինվորին: Պատանու շորերով այդ պարմանուհին շուտով դարձել է ճարպիկ հեծյալ, նիզակահար, թրամարտիկ, գորգի վրա գետնով է տվել ցանկացած հասակակից պատանու, լողացել, անցել է Իշխանա լիճը, մագլցել, բարձրացել է Պղնձաքարի ժայռափեշերով, հոր հետ որսի է գնացել Սյունյաց երկրի լեռներն ու Մթնաձորի անտառները:

Եվ օրերից մի օր ահավոր մրրիկը պատել է սար ու ձոր, Կարա-կոյունլու ցեղի Կարա-Մուհամմեդ խանի յաթաղանը կախվել է Սյունիքի վրա, ամենուր արյուն է հեղվել, եւ ահ ու սարսափ է տարածվել: Երկայնաբազուկ Մեծ իշխանի վրանները խփված են եղել Իշխանա լճի ամառանոցում: Լուսածեգին, երբ յայլավորը դեռ չէր հասցրել արթնանալ, բռնապետ հրոսակը գաղտագողի մոտեցել, շրջապատել, ավերել է ամառանոցը, գերել է իշխանին ու նրա մարդկանց: Վրաններից մեկում՝ մահճի մեջ քնած, նրանք գտել են իշխանի դստերը:

– Միայն խանի հարեմին է արժանի այս գեղեցկությունը, – ասել է ասկյարների յուզբաշին ու, պահելով թուրը գերված իշխանի կրծքին, ասել է, որ կազատի բոլորին՝ աղջկան տանելու պայմանով: Հայրը մերժել է: Ասկյարները դստեր աչքի առաջ սպանել են հորը, եւ ձեռքերն ու ոտքերը կապած աղջկան նետել են ձիու վրա: Յուզբաշին նստել, մտրակել է նժույգը՝ ժամ առաջ խանին հասցնելու այդ թանկարժեք ավարը:

Ճանապարհին կատարվել է անհավատալին: Աղջկան հաջողվել է ազատվել կապանքներից, յուզբաշու կողքից քաշել, հանել է նրա թուրը եւ հենց ձիու վրա նրան սրախողխող է արել: Գետնին նետելով արյունարբու գազանին, նա ցատկել է թամբին ու մտրակել նժույգը: Աղջկան հետապնդել են տասնյակ ու հարյուրավոր ասկյարներ: Փախչել նրանցից՝ անհնար է եղել: Աղջիկը հասել է Իշխանա լճին, ձին քշել է հենց ջրի մեջ եւ իրեն նետել է ալիքների վրա: Ջրի տակ անցնելով՝ քիչ հետո դուրս է եկել լճի կենտրոնում:

– Բռնել միայն կենդանի, – լսվել է հրամանը եւ հարյուրավոր զինվորներ թափվել են լիճը: Նրանք լողացել են դեպի աղջիկը, բայց դեռ լճի կենտրոն չհասած՝ կորել, անհետացել են: Կարծես ինչ- որ մի հրեշ ջրի տակ սպասել ու կուլ է տվել նրանց: Անցել են ժամեր, նորանոր խմբեր են մտել լիճը, եւ ոչ ոքի չի հաջողվել հասնել ջրի ալիքների հետ խաղացող աղջկան: Այսպես, մինչեւ ուշ գիշեր, լճի հրեշը կուլ է տվել զորքի մեծ մասը: Ասկյարների կատաղած զորապետը պահանջել է խարույկներ վառել լճի շուրջը եւ բռնել աղջկան, եթե գիշերը փորձի որեւէ տեղ դուրս գալ ջրից:

Լուսաբացին աղջիկը ջրի երեսին արդեն չի երեւացել: Հրոսակը հեռացել է նոր ոճիրներ գործելու: Մեկ-երկու օր հետո մարդիկ նկատել են ջրի վրա լողացող մի մարմին: Նրանք հանել են աղջկա դին, տարել մի բարձր տեղ թաղել, որ սովորական մահկանացուներից տարբերվի նրա գերեզմանը:

Ասում են, որ այդ ժամանակից ի վեր Իշխանա լիճը սրբավայր է դարձել ու ստացել իր երկրորդ անունը՝ Սեւ լիճ: Ասում են, որ Սեւ լճի հրեշն այսօր էլ կա, որ նա կուլ է տալիս ջուրը մտնող բոլոր չարերին, բարբարոսներին, անհավատներին:

ՍԱՆԴ ԱՂԲՅՈՒՐ, ՃՂԱՑԻՆ ՃԻՐԻ ԽԱՉ

Դարեր ի վեր եղել է գյուղի գլխավոր աղբյուրը, գտնվում է սբ Հռիփսիմե եկեղեցու հարեւանությամբ, գետի մյուս ափին: Աղբյուրից քիչ վերեւ՝ ձորակի բարձունքում (հետագայում՝ Ղահրամանյանների բանջարանոցում), եղել է մի սրբատեղի, քարակույտ քաշկառ, որը կապված էր ջրի, հնարավոր է հենց Սանդ աղբյուրի պաշտամունքի հետ:

■

ԵՐԹՈՒՂԻ 3

Մեկ օր Քարահունջում.
Օխտն օրորոցի լեգենդը

Անդրանիկ Բաղդասարյան երջանկահիշատակը դեռեւս 1998-ին է փորձել հավաքել իր հայրենի գյուղի հետ կապված տարեցների հուշերը, եւ արժեքավոր մի գրքույկ է ժառանգել ապրողներիս. հարգանք նրա հիշատակին:
Բայց մեր ստեղծագործական խումբը Քարահունջ գնաց՝ գյուղի սրբավայրերին ծանոթանալու առաքելությամբ:
Մեզ ուղեկցում էին գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Արմեն Մկրտչյանը եւ Վալերի Գալստյանը:

ՕԽՏՆ ՕՐՈՐՈՑԸ

Ըստ Անդրանիկ Բաղդասարյանի՝ «Գյուղի հյուսիսային մասում, հսկա ժայռերի տակ, ապրելիս է եղել նահապետական բազմանդամ մի ընտանիք: Նույն հարկի տակ սիրով ու հարգանքով ապրելիս են եղել ընտանիքի պատկառելի հայրը, մայրը, յոթ քույրեր, յոթ եղբայրներ, յոթ հարսներ՝ յոթ օրորոցով, թոռներ, ծոռներ, թվով՝ քառասուն հոգի:

Լինում է ահեղ երկրաշարժ: Տան վերեւում գտնվող լեռնաշարքից մի ժայռաբեկոր պոկվել, գլորվել ու իր տակն է առել բնակարանը: Այդ դեպքից հետո չարաբաստիկ ժայռաբեկորը կոչվել է «Օխտն օրորոց», ու սերնդեսերունդ պատմությունը հասել է մեզ:

... Ժայռաբեկորի տակից շինարարական աշխատանքների ընթացքում դուրս են գալիս կավե ամաններ, սափորներ, տնային գործածության այլ իրեր, որոնք գտնվում են դպրոցի հնագիտական թանգարանում: Հնածոների այդ շարքը հաստատում է այդ լեգենդի ստույգ լինելը:

«Օխտն օրորոց»-ն ունի պատմական նշանակություն, ժայռաբեկորի լայն ողորկ երեսի վրա փորված են հայերեն տառերով արձանագրություններ, արեւի



«Օխտն օրորոց»-ն ունի պատմական նշանակություն, ժայռաբեկորի լայն ողորկ երեսի վրա փորված են հայերեն տառերով արձանագրություններ, արեւի ժամացույց, մարդկանց, կենդանիների պատկերներ

Առաքել Ծատուրյանի շիրմաքարը

Բլրի գագաթին Հազարա փրկիչն է

ժամացույց, մարդկանց, կենդանիների պատկերներ:

1935 թ. այստեղ ժամանեց գիտական մի արշավախումբ եւ վերծանեց արձանագրությունները:

Պարզվեց՝ փորագրությունները վերաբերում են 14-րդ դարին:

Հայատառ արձանագրության բովանդակությունը հետեւյալն է՝ «Այս եկեղեցին շինեցի իմ եւ ծնողաց պատվին»:

Եկեղեցու հետքերն այժմ չկան...

Ժայռաբեկորի վերին ձախ կողմում փորագրված են ձիավորներ եւ... հետիոտն մարդկանց գծապատկերներ...

«Օխտն օրորոց»-ն իր մեջ շատ թաքնված գաղտնիքներ ունի եւ կարոտ է հիմնավոր գիտական վերծանման»:

Անդրանիկ Բաղդասարյանի ուշագրավ այս գրառումի հետ, անշուշտ, համաձայն ենք:

Սակայն չի կարելի չնկատել, որ ժայռաբեկորի վրա իծագրեր են, ինչպիսին տեսել ենք Սիսիանի տարածաշրջանի Ուղտասարում:

Հնարավոր է, որ այդ վայրում ուխտատեղի է շինվել 14-րդ դարում, բայց իծագրերը, անտարակույս, վեց-տասը հազար տարվա վաղեմություն ունեն:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ ՊԱՏՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Քարահունջի գլխավոր սրբավայրը, այնուամենայնիվ, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին է՝ կառուցված 1675 թ.:

Ճիշտ է ասված՝ գեղեցիկ կամարներ, սյուներ, բեմ, բեմի աջ եւ ձախ կողմերում՝ խցիկներ, օժանդակ այլ շինություններ, զանգակատուն՝ մեծ ու փոքր զանգերով:

Աբրահամ Կրետացի Հայոց կաթողիկոսը (1734-37 թթ.) «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից» աշխատության մեջ Սուրբ Հռիփսիմեի մասին այսպես է արտահայտվել՝ «...սրբատաշ քարերով շինված մի պատվական եկեղեցի»:

Ժամանակին Քարահունջն ըմբոստացել է Տաթեւի վանքի դեմ, որի համար գյուղը բանադրվել է: Այդ մասին իմանում ենք Աբրահամ Կրետացու վերոնշյալ աշխատությունից:

Նա նկարագրում է 1736 թ. մարտի 10-ին Մուղանի դաշտում Թահմազ Ղուլի խանին Իրանի շահ՝ Նադիր շահ անվամբ թագադրելու արարողությունը եւ դրան առնչվող անցուդարձը:

Կրետացին լինում է Խնձորեսկում, որից հետո՝ *«...Այստեղից գյուղացիները թանձր ձյան միջով, իրենք՝ զենքով ու հրացանով, մեզ ուղեկցեցին ու հասցրին Տաթեւի մեծ անապատը:*

Ճանապարհին մի ավեր գյուղ կար՝ Քարահունջ անվամբ, որը բանադրել էին Տաթեւի առաջնորդները. խնդրեցին՝ բանադրանքը հանել: Տեղի տալով նրանց ես արձակում տվեցի եւ օրհնեցի գյուղը»:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցու հետ կապված ավանդազրույցներ կան, որոնք ներկայացնում է Երվանդ Լալայանը:

Աբրահամ Կրետացի Հայոց կաթողիկոսը (1734–37 թթ.) «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից» աշխատության մեջ Սուրբ Հռիփսիմեի մասին այսպես է արտահայտվել՝ «...սրբատաշ քարերով շինված մի պատվական եկեղեցի»:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԲԱԿՈՒՄ Է ԱՌԱՔԵԼ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Նշանավոր բարեգործի եւ առեւտրաարդյունաբերողի կյանքին ու գործունեությանն անդրադարձել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Ստեփանյանը:

Ըստ Ալեքսանդր Շիրվանզադեի՝ *«Կար այդ ժամանակ հայրենասեր համարված մի հարուստ ծերունի՝ Առաքել Ծատուրյան անունով: Դա հետաքրքրական տիպ էր...Մի ժամանակ եղել էր խոհարար, հետո գնացել էր Պարսկաստան, պարապել էր վաճառականությամբ եւ, մի որոշ գումար ձեռք բերելով, վերադարձել էր Կովկաս:*

Հիշում եմ նրան դեռ յոթանասուն թվականներին, երբ Բաքվում սկսել էր պարապել նավթային արդյունաբերությամբ: Կարճահասակ մի մարդ էր՝ ծուռ ոտներով: Նա միշտ շրջում էր երկու թեյի պնակի չափ մեդալներ վզին քարշ արած, մեկը ոսկյա, մյուսը արծաթյա» («Կյանքի բովից»):

Առաքել ապերը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել իր հայրենի գյուղի հոգսերը:

Ինքն է Սուրբ Հռիփսիմեին զանգ նվիրել:

Նրա միջոցներով է 1893-ին կառուցվել Քարահունջի երկդասյա երկսեռ դպրոցի շինությունը:

Լավ հարաբերություններ է ունեցել Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ավանեցու հետ:

Եվ 1898 թ., երբ Հայրիկն Արցախից վերադարձել է Գորիս, ուղեւորվել է Քարահունջ գյուղ եւ իջեւանել Ծատուրյանի հայրական տանը, ապա այցելել նրա ծնողների շիրմին:

Առաքել Ծատուրյանը, սակայն, ինքնասպան է եղել 1903 թ. մայիսի 30-ին՝ Նոր-Բայազետի գավառի Արզականի իր կալվածքում:

Երախտապարտ քարահունջեցիք դիակը տեղափոխել են հայրենի գյուղ՝ Քարահունջ եւ ամփոփել եկեղեցու բակում:

Նրա շիրմաքարին մենք կարդացինք՝ «1830-1903 ԱՌԱՔԵԼ ԱՊԷՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՎԱՏՔ»:

ՀԱԶԱՐԱ ՓՐԿԻՉ

Ըստ Անդրանիկ Բաղդասարյանի՝ «Սրբավայր է: Գտնվում է գյուղից հարավ-արեւելք «Քաղալլար» հողամասի

բլրի գագաթին: Պահպանվել են մատուռի հետքեր, խաչքարեր:

Համաձայն մեզ հասած լեգենդների՝ մի ժամանակ այդտեղ հավաքվել են բազմաթիվ ուխտավորներ, մատաղ են արել, մի մեծ կաթսայի մեջ կերակուր եփել: Որտեղից-որտեղ մի թունավոր օձ պատահաբար ընկում է կաթսայի մեջ, թունավորում ճաշը:

Երբ ուխտավորները նստում են ճաշելու, իբր Աստծո հրամանով մի աղավնի իրեն նետում է կաթսայի մեջ: Ուխտավորները ճաշը օձի, թույնի եւ փրկիչ աղավնու հետ թափում են ու հազարավոր մարդկանց ազատում մահից: Այդ օրվանից էլ սրբավայրը կոչվել է Հազարա փրկիչ:

Մինչեւ այժմ այդտեղ հաճախում են բազմաթիվ ուխտավորներ»:

Հազարա փրկիչ ուխտավայր կարելի է այցելել Հարթաշեն գյուղով:

ԽԱՆՈՒՆ ՔՐԱՏԱԿԸ

Ըստ Անդրանիկ Բաղդասարյանի՝ «Գտնվում է Քարահունջից հարավ՝ երկու-երեք կմ հեռավորության վրա, Վարարակն գետի ձախ ափին: Այդտեղ փոքրիկ գյուղ է եղել:

Այժմ այդտեղ կան բազմաթիվ խաչքարեր»:

ԿԱԼԵՐ

Այս վայրը գտնվում է գյուղի դաշտում՝ մեկ կմ հեռավորության վրա:

Այդտեղ կա նաեւ սրբավայր՝ խաչքարերով, որը կոչվում է Սուրբ Հովհաննես (Սըրփըվանես): Այժմ էլ ուխտավորներ են այցելում այնտեղ, մոմ վառում, մատաղ անում:

ՊՌՇՆՈՒ ՏԱԿԸ, ՈՐ ՆԱԵՎ ՍՈՒՐԲ ԽԱՉ Է ԿՈՉՎԵԼ

Ներկայիս Քարահունջի կենտրոնում մինչեւ 1932 թ. կար հսկայական մի ծառ, որ կոչվում էր Պռշնի:

Ծառը համարվում էր «Սուրբ խաչ» եւ անձեռնմխելի էր:

Նույն տեղում հիմա մի նոր պռշնի է բարձրանում:

◈ ◈ ◈

Մեր այցի ավարտին բարձրացանք գյուղի արեւմտյան եզերք:

Այդտեղ է Շռանի ջրվեժը: Գարնանն այդ ժայռի պորտից փրփուր է գահավիժում (Սերո Խանզադյանի արտահայտությունն է):

Այդ տարածքը նույնպես ընկղմված է

Սուրբ Հովհաննեսի տարածքում

այգիների թանձրության մեջ:

Մեզ հրավիրեցին լեռան ծերպում գտնվող քարանձավ (քարատակ):

Հրայր Աբրահամյանի քարանձավն էր:

Քարանձավում վայելեցինք Քարահունջի անկրկնելի մրգերից պատրաստված մաճարը (բոլորովին նոր՝ եփը դեռ չավարտված գինի):

Հ.Գ. Քարահունջի տարածքում է գտնվում Գյավուրի բերդը, որի մասին առանձին խոսք ենք հրապարակել syunia-cyerkir.am կայքում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 4

Այցելություն Սյունյաց աշխարհի **Բղեն գավառի սրբավայրեր,** որոնց պսակը **Նորավանքն է**

Մեր ուխտագնացության հերթական հասցեն Բղեն գավառի սրբավայրերն էին: Մինչ այդ (մի քանի տարի առաջ) ծրագրել էինք «Սյունյաց երկրի» հատուկ համար նվիրել գավառի գլխավոր սրբավայրին՝ Նորավանքին: Եվ ճանաչված լուսանկարիչ Մելիք Բաղդասարյանի հետ լուսանկարչական ծավալուն աշխատանք էինք կատարել՝ աջակցությամբ գյուղի վարչական ղեկավար Օնիկ Ավագյանի: Հատուկ համարի թողարկումը, սակայն, հետաձգվեց: «Ուխտագնացություն Սյունիք» ծրագիրը հաճելի առիթ էր երիցս այցելելու Բղեն գավառի սրբավայրեր եւ նոր հայացք ձգելու դրանցից յուրաքանչյուրին: Այցը տեղի ունեցավ 2019 թ. դեկտեմբերի 21-ին՝ ուղեկցությամբ Բարձրավան գյուղի դպրոցի տնօրեն Էդիկ Հովհաննիսյանի:

Բղեն (Բղենո) գավառը

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» մեջ նշված գավառացանկում Բղեն գավառը տեղ չի գտել, ինչին բացատրություն է տվել ինքը՝ պատմիչը՝ ներկայացնելով Սյունիքի գավառները. *«Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք: Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ եւ այլ գավառների են բաժանված»* (նշված աշխ. էջ 70):

Այդուհանդերձ՝ Սյունյաց տան պատմիչն այդ գավառի զբաղեցրած տարածքի մասին որոշակի տեղեկություն է հաղորդել, որն անվիճելի պետք է լինի:

Դատելով պատմիչի հաղորդած տեղեկություններից՝ Բղեն (Բղեան) գավառը գտնվում է Տաթեւից դեպի հարավ-արեւելք ընկած տարածքում, Որոտան գետի աջ կողմում (այժմյան Բարձրավան գյուղի շրջակայքը):

Երբեմն Տաթեւն էլ մտել է Բղեն գավառի մեջ: Օրբելյանը կողմնորոշող մի փաստ էլ է բերում՝ խոսելով Նորավանքի կառուցման մասին՝ *«Ապա գալով Կատարի վանքի հակառակ կողմը...»* (նշված աշխ. էջ 221): Իսկ այդ վանքի

Բղեն գավառի գլխավոր բնակավայրը հիմա Բարձրավան գյուղն է

տեղադրման հարցը քննարկվել է նշված աշխատության ծանոթագրություններում (ծանոթագրություն 719) եւ Թ. Հակոբյանի «Սյունիքի թագավորությունը» աշխատության մեջ:

Եվ ուրեմն՝ ըստ ներկայումս իշխող կարծիքի՝ Բղեն (Բղենո) գավառը զբաղեցրել է Գորիսի տարածաշրջանի Բարձրավան գյուղի շրջակայքը (Որոտան գետի աջ ափը):

Այդ գավառում են գտնվել Նորավանքը, Բղենո բերդը: Բղեն գավառի աշխարհագրական դիրքի վերաբերյալ սխալ տեղեկություններ է հայտնել Ղեւոնդ Ալիշանը: Գավառի վերաբերյալ ոչ հստակ եւ իմիջիայլոց ձեւակերպումներ են տեղ գտել «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» 1-ին հատորում:

Սյունիքի պատմական աշխարհագրությանը փոքր-ինչ քաջատեղյակ մարդն անգամ կհաստատի, որ բառարանի ձեւակերպում-բացատրությունը որեւէ դարաշրջանի ու որեւէ քարտեզի վրա չի կարող տեղ գտնել. *«Հավանաբար կազմում էր Բաղք-Աձանանի եւ Ծղուկ-Այլախի սահմանամերձ շրջանը»*, ինչը տրամաբանության մեջ չի տեղավորվում:

Բղեն գավառի գլխավոր բնակավայրը հիմա Բարձրավան գյուղն է

Գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է 12-րդ դարից եւ անվանվել է Երիցաթումբ, Քյուրդիկ (վերջին անունը հավանաբար ծագում է Սյունյաց իշխան Քուրդոյից, ով երկրամասում իշխել է տասնութ տարի):

Ռուսական 10-վերստանոց քարտեզում Բարձրավան գյուղը նշված է այսպես՝ Ռեցաթումբ (Ռեսաթումբ), որը մեր խոսակցականում դարձել է Ռուսթումբ՝ տեղիք տալով արհեստածին մեկնաբանությունների:

Ըստ Սերո Խանզադյանի՝ գյուղը երիզող երեք բլրից է առաջացել Երիցաթումբ անունը: Ահա նրա խոսքը. *«Բարձրավանը հարթ տեղ է՝ խոր անդունդի եզրին: Տները նոր են՝*

«Էջմիածնի» կամ «Փղոսկրյա» կոչվող Ավետարան: Ընդօրինակել է Հովհաննես Գրիչը 989 թվականին, Բղենո-Նորավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցում՝ Ստեփանոս քահանայի պատվերով: Բնագիրը պարունակում է 35 x 28 սմ չափի 233 մագաղաթե թերթ (Մատենադարան, ձեռ. դ 2374): Բաղկացած է գեղեցիկ երկաթագրով գրված չորս Ավետարանից:

մանր, ցրված: 1931 թ. ապրիլի 28-ի մեծ երկրաշարժից գյուղը փլվել է: Ժայռերի վրայի շատ տներ նետվել են անդունդ: Գյուղը վերաշինել են, երիցաթումբ անունը Բարձրական դարձրել: Իզո՞ւր: Կարծել են, թե Երեց-քահանա անունից է, այնինչ երից-երեք զարմանալի կլոր ու կանաչ թումբ-բլուրներից է՝ Երեցաթումբ:

Այս գյուղի բնակիչները եկել են ձորի մյուս կողմի Շընհեր (Շինուհայր) գյուղից»: Գյուղը Բարձրական անունը ստացել է 1940-ին:

Սերո Խանզադյանին գյուղի տարեցները պատմել են, որ այս վայրում Ստեփանոս պատմիչի հիշատակած Քարոտան կամ Քարատնիք գյուղն է եղել նաեւ, որ ավերվել ու քարերի տակ է մնացել 1658-ի երկրաշարժի ժամանակ:

Ուխտագնացության առաջին կանգառը՝ Որոտան

Գորիսի տարածաշրջանի Որոտան գյուղն է: Սերո Խանզադյանի կարծիքով՝ Ստեփանոս Օրբելյանի վկայակոչած Շաթիթաղ գյուղն է: Հետագայում թուրք-ազերիները գյուղին տվել են Շահվերդի, Շահվերդլար, Շախվերդի Ուշագի, Շահվերդիլար եւ այլ անուններ:

Գյուղը գտնվում է Գորիս-Կապան ճանապարհին՝ Որոտան գետի աջ ափին, երբեմնի Շահվերդլարի կամրջի մոտ (կամուրջը կառուցվել է 19-րդ դարի վերջին քառորդում):

1940-ի վերջին գյուղն ապաբնակեցվել է, իսկ 1960-ականներին գյուղի տարածքում կառուցվել է Տաթեւիէկի ավանը (որոշ ազերիներ կրկին վերադարձել են այդտեղ եւ բնակվել մինչեւ 1989 թ.):

Թուրք-ազերիների բնակության տարիներին գյուղի հնամենի եկեղեցին ավերվել է, սակայն ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է նրա տեղը եւ այդ վայրի հանդեպ պատկառանքը: Ու այդ վայրում հիմա կամարակապ մի սրբատեղի է շինվել, որտեղ շաբաթ եւ կիրակի օրերին կարելի է տեսնել Որոտան գյուղի հավատավոր բնակիչներին:

Գյուղն արեւելքից երիզող բլրի վրա մի քանի տարի առաջ կանգնեցվել է երկաթե խաչ, որը գիշերները պարուրվում է լույսով:

Երկրորդ կանգառը՝ Մազրա գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

Որոտան գյուղի սրբավայրից հետո շարունակեցինք մեր ուխտագնացությունը: Գնացինք Գորիս-Կապան ավտոմայրուղով: Առջեւում Թասի լեռնանցքն էր:

43 ոլորան ունեցող այդ զառիվերի գրեթե վերջնամասում մի մեծ հարթություն կա, այդտեղ է գտնվել հայկական Թաս գյուղը: Գյուղի անվամբ էլ կոչվում է լեռնանցքը՝ Թասի լեռնանցք: Տարածքում կան անարձանագիր գերեզմանաքարեր:

Ըստ ավանդազրույցի՝ Թասի բնակիչները գյուղը լքել են այնտեղ շատ օձեր լինելու պատճառով: Լեռնանցքի վերջին ոլորանից անմիջապես հետո՝ ավտոմայրուղուց շրջվում ենք դեպի արեւելք: Եվ մոտ 2 կմ դաշտային ճանապարհ անցնելուց հետո հայտնվում ենք Մազրա գյուղի ավերակներում (չշփոթել Սիսիանի եւ Կապանի տարածաշրջանների համանուն գյուղերի հետ):

Ավերակված գյուղի կենտրոնում՝ բարձունքի վրա, Սուրբ Հռիփսիմե եկեղեցին է՝ կառուցված (ըստ բանավոր զրույցների) 17-րդ դարում:

Ըստ 1781 թ. հարկացուցակի՝ հայկական այդ գյուղը Տաթեւի վանքին տալիս էր 1600 դահեկան պտղի հարկ:

Մազրա գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Որոտան գյուղի մատուռը՝ կառուցված հին սրբավայրի տեղում

Գյուղը 19-րդ դարավերջին բնակեցվել է թուրք-ազերիներով: 1920-ականներին Հայաստան-Ադրբեջան սահմանների վերաձեւման հետեւանքով գյուղը հայտնվել է Ադրբեջանի Կուբաթլիի շրջանի վարչական տարածքում: Արցախյան պատերազմի տարիներին գյուղն ազատագրվել է:

Սուրբ Հռիփսիմեն կանգուն է: Սակայն ավերված է եկեղեցու բեմը, ջարդված են մերձակայքում գտնվող խաչքարերը:

Երրորդ կանգառը՝ Շուռնուխ, որտեղ երկաթե խաչ է կանգնեցվել

Մատենագիտության մեջ գյուղն անվանվում է նաեւ Շոռնոխո, Շոռնուխ, Շոռնուխա, Շորնուխո եւ այլն:

Գտնվում է Գորիս-Կապան ավտոմայրուղու վրա, անտառապատ, գեղատեսիլ լեռնալանջին:

Ադրբեջանցիներով բնակեցվել է 1930-ին՝ պատմական Շոռնոխո ավերակ գյուղի տեղում, որ մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղք-Քաշունիք գավառի մեջ, եւ նրա ավերման ժամանակը հայտնի չէ:

19-րդ դարավերջին այդտեղ ավերակներ կային, նաեւ եկեղեցու ավերակներ:

1989-ից գյուղում այլեւս ադրբեջանցիներ չկան: Գյուղը վերաբնակեցվել է հայերով:

Կենտրոնի փոքր բլրակի վրա վերջերս կանգնեցվել է երկաթե խաչ, որի լուսավորված վիճակը, գիշերային խավարի մեջ, երեւում է տարբեր կողմերից:

Չորրորդ կանգառը՝ Մաճ գյուղի եկեղեցի

Գյուղի ավերակները գտնվում են Բարձրավան գյուղից մոտ 6 կմ հարավ-արեւմուտք՝ Կապանի տարածաշրջանի Տանձավեր գյուղից 2-3 կմ հյուսիս-արեւելք, Կատար լեռան ստորոտում, անտառապատ ձորահովտում: Հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը՝ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Բաղք-Քաշունիք գավառում:

867 թ. Սյունիքի տեր Վասակ իշխանի դուստր Քուպղիդուխտն իր սեփական այս գյուղը՝ շրջակա հող ու ջրով, նվիրել է Տաթեւի վանքին:

Ըստ հին հարկացուցակի (13-րդ դար)՝ վանքին տալիս էր 7 միավոր հարկ: Պահպանվում են շինությունների ավերակները, գերեզմանատունը, եկեղեցին, որի անունը

Բարձրավանի գյուղամիջի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Դրվագներ Բղենո Նորավանքից

Պաշարաջրի Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

Պաշարաջրի Սուրբ Հռիփսիմե եկեղեցուց մի փոքր արեւելք գտնվող եռահարկ քարանձավը

չկարողացանք ճշտել: 1939 թվականից հետո գյուղը լքվել է: Մինչ այդ (19-րդ դարում) գյուղում ժամանակավորապես բնակվել են ազերի-թուրքեր, ովքեր գյուղից հեռացվել են 1918-20 թթ.:

Հինգերորդ կանգառը՝ Պաշարաջրի Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

Ավերակ Պաշարաջուր գյուղը նաեւ կոչվել է Բաշարաջուր, Բաշիրաջուր եւ այլն: Գտնվում է Բարձրավան գյուղից 2 կմ հյուսիս-արեւելք՝ անտառներով շրջապատված լեռնաբացատում, շրջակայքի նկատմամբ ունի իշխող դիրք:

20-րդ դարասկզբին գյուղը բնակեցվել է թուրք-ազերիներով, ովքեր 1949-53 թթ. տեղափոխվել են Ադրբեջան: Գյուղն այնուհետեւ դարձել է Բարձրավանի ձմեռանոց:

Կանգուն է գյուղի քառանկյունի եկեղեցին՝ հավանաբար կառուցված 17-18-րդ դարերում: Նշմարվում են տների հետքերը: Եկեղեցուց մի փոքր արեւելք եռահարկ քարանձավն է:

Եկեղեցու շրջակայքի տապանաքարերի վրա հանդիպեցինք բացառիկ նախշաքանդակների:

Սարավանդը, որտեղ գտնվում է Պաշարաջուրը, մատենագիտության մեջ հիշատակվում է «Պաշարաջրի սարավանդ» անվամբ:

Վեցերորդ կանգառը՝ Բարձրավանի գյուղամիջի Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

Ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ վերակառուցված է 19-րդ դարում. սրա կտուրին կանգնեցված է մի այլ տեղից վերցրած խաչքար՝ 14-րդ դարի արձանագրությամբ:

Այլ աղբյուրների վկայությամբ՝ գյուղամիջի եկեղեցին կառուցվել է 17-րդ դարում եւ վերակառուցվել 19-րդ դարում: Եկեղեցին կանգուն է:

Մեկ ուրիշ աղբյուրի համաձայն՝ Սուրբ Հռիփսիմեի բակում եղել է հազվադեպ տապանաքարերով գերեզմանատուն 11-րդ դարից, ինչը վկայում է այդտեղ հին բնակավայր լինելու մասին:

Սերո Խանզադյանն ավելի ստույգ է

Քրատակի Սուրբ Մինաս եկեղեցի, գտնվում է Բարձրավանից դեպի Որոտան իջնող ձորալանջին՝ մոտ 2 կմ գյուղից հեռու

արտահայտվում՝ *«Գյուղամիջի եկեղեցին կառուցված է 1866 թվին: Շինել են հնի հիմքերի վրա, պատերի մեջ խաչքարեր կան...»:*

Յոթերորդ կանգառ՝ Քրատակի Սուրբ Մինաս եկեղեցի

Գտնվում է Բարձրավանից դեպի Որոտան իջնող ձորալանջին՝ մոտ 2 կմ գյուղից հեռու: Շինված է կոփածո քարերով եւ թաղակապ է. միայն ներսից՝ բեմի կամարը սրբատաշ քարերով է շինված: Բակում կան մի քանի խաչքարեր (որոնցից մեկը՝ խոշոր) եւ ժայռաբեկորներ, որոնցից մի քանիսի վրա կան արձանագրություններ:

Բարձրավանցիները սրբավայրին նաեւ Քրըտակի եղցի են ասում: Սերո Խանզադյանն ընթերցել է որոշ արձանագրություններ. բեմի կամարին՝ ՉՀ. ՄՍ, որ 1321 թվականն է: Դրսում՝ մի քարի վրա՝ Թվ. ՉԺ (1261 թ.):

Հերթական կանգառը՝ Ծծախաչ կամ Կաթնաղբյուր

Քրատակի Սուրբ Մինաս եկեղեցուց մոտ 200 մետր արեւելք՝ լեռան լանջին է գտնվում ոչ սովորական անվամբ այդ ուխտատեղին: Էդիկ Հովհաննիսյանը մեզ ներկայացնում է՝ «Արտաքուստ մայրական կուրծք է»՝ անձեռակերտ, որից (մի քանի տեղից) հավերժորեն ջուր է ծորում:

Իսկ խա՞չը: Ըստ Էդիկ Հովհաննիսյանի՝ կա երկու վարկած. «մայրական կրծքի խորքում»՝ խաչքար է եղել, որ դարերի ընթացքում ծածկվել է հողով՝ թողնելով միայն հուշ:

Երկրորդ վարկածի համաձայն՝ մայրական կուրծքը սրբություն է՝ խաչին հավասարազոր, ինչի համար էլ ստացել է այդ անվանումը:

Ուխտավայրի արմատները, ըստ էության, ավելի խորն են եւ հասնում են մինչեւ հազարամյակների խորքեր: Ուխտավայրի հիմքում Արամազդի դուստր Անահիտի՝ պտղաբերության, արգասավորության, ծննդաբերության աստվածուհու պաշտամունքն է, որը հետագայում վերագրվել է Մարիամ աստվածամորը: Ուխտավայրի խորհրդավորությունը կարելի է հասկանալ՝ մեր դյուցազնավեպն ընթերցելով. Սանասարի ու Բաղդասարի մայրը հղիանում է ջրից, ինչը հանդիպում ենք «Սասնա ծռեր» էպոսի մի քանի պատումներում:

Քրատակի Սուրբ Մինաս եկեղեցուց մոտ 200 մետր արեւելք՝ լեռան լանջին է գտնվում Կաթնաղբյուր անվամբ ուխտատեղին

Էպոսում հիշատակվում է նաեւ Կաթնաղբյուրը, որի ջուրը խմում են եւ զորանում:

...Բարձրավանի Ծծախաչը կամ Կաթնաղբյուրը դարեր շարունակ իրեն է ձգել կանանց, ովքեր մայրանալու խնդիր են ունեցել, ովքեր նորածնին մայրական կաթով սնելու դժվարությունների են հանդիպել:

Չկայացած կանգառներ՝ մեզանից անկախ պատճառներով

Բղենո գավառի հարավային գյուղերի սրբավայրեր այցելելու մեր մտադրությունն անկատար մնաց. դրանց մերձակայքի անտառների մի մասը դեռեւս ականազերծված չէ, ինչի համար էլ ռիսկի չդիմեցինք:

Նոր Առաջաձորում, որքանով տեղյակ ենք, սրբավայրեր չկան: Դա Գորիս-Կապան խճուղուց աջ՝ անտառաշատ վայրում, լեռնալանջին գտնվող գյուղ է: Բնակիչները ժամանակին եկել էին Կապանի շրջանի Առաջաձոր գյուղից: Գյուղը լքվել է 1960-ականներին:

Աղբուլաղ. գտնվում է Որոտանի աջակողմյան վտակ Քաշունի գետից ձախ՝ անտառապատ լեռնալանջի վրա: 20-րդ դարասկզբին են ազերի-թուրքերը Կուբաթլիի տարածքից եկել այդ գյուղ: Աղբուլաղ է կոչվել գյուղից հյուսիս-արեւելք գտնվող համանուն աղբյուրի անունով:

Գյուղից մոտ 1 կմ հարավ-արեւելք Ալչալու (Շլորուտ) ավերակ գյուղատեղին է, որտեղ կան եկեղեցու ավերակներ (այդ Շլորուտը չպետք է շփոթել Կապանի տարածաշրջանի Շլորուտ ամրոցի եւ համանուն գյուղի հետ): Գյուղի մոտ է գտնվում Կալանը դար ամրոցը (գյուղից մոտ 3 կմ հարավ-արեւելք՝ մի լեռան գագաթին): Պահպանվել են անմշակ խոշոր քարերով շինված պարսպի եւ նրա բուրգերի ավերակները,

Բղենո Նորավանքը յուրահատուկ ճակատագիր է ունեցել: Դարեր շարունակ անհայտ էր վանքի տեղը, պատմիչներն անորոշ եւ իրարամերժ տեղեկություններ են հաղորդել դրա գտնվելու վայրի մասին: Եվ միայն 1932 թվականին եղավ Բղենո Նորավանքի վերահայտնությունը:

կրաշաղախ պատերով շինվածքներ: Ականատեսներն ամրոցի մերձակայքում բազմաթիվ խաչքարեր են տեսել:

Շամսուզ, որ կոչվում է նաեւ Շահար Մովսես, Շամսըզ, Շհար Մովսես: Գտնվում է Որոտան գետի աջակողմյան Քաշունի վտակի ձախ կողմում՝ լեռնալանջի վրա, որի հյուսիսային կողմն անտառապատ է: 1960-ականներին ապաբնակեցվել է: Ավանդության համաձայն՝ այդտեղ ինչ-որ ժամանակ քաղաք է եղել (շահար, շիար):

Ղուրդղուլաղ, որ կոչվում է նաեւ Գուրդ գուլաղ, Գուրթ կալա, Կուրթկուլաղ, Չիչակլու, Չիչակլու ղարա, Քյուրդ-ղալա...

Գտնվում է Որոտանի աջակողմյան Քաշունի վտակի ձախափնյա անտառապատ հովտում: Գյուղից 5-6 կմ հարավ-արեւելք՝ անտառի մեջ, կա կիսավեր եկեղեցի:

Եւ ահա Բղեն գավառի սրտում ենք՝ Նորավանքում

Գտնվում է Բարձրավանից դեպի արեւելք՝ 3-4 կմ հեռու, Գորիս-Կապան մայրուղուց՝ Բարձրավանի խաչմերուկից թեքվում ենք աջ (արեւմուտք): Գտնվում է լեռնային բազուկի ծայրին, երեք կողմը շրջապատված է խոր եւ անտառապատ ձորերով:

Այդ վայրը տեղացիները կոչում են Ջհաննամ դարասի-Դժոխաձոր:

* * *

Սյունյաց աշխարհի 48 վանքից այդ մեկը՝ Բղենո Նորավանքը, բացառիկ տեղ է զբաղեցնում ոչ միայն Սյունիքի, այլեւ հայոց աշխարհի սրբավայրերի շարքում:

Բղենո Նորավանքը, սակայն, յուրահատուկ ճակատագիր է ունեցել: Դարեր շարունակ անհայտ էր վանքի տեղը, պատմիչներն անորոշ եւ իրարամերժ տեղեկություններ են հաղորդել դրա գտնվելու վայրի մասին: Եվ միայն 1932 թվականին եղավ Բղենո Նորավանքի վերահայտնությունը:

Եվ այդ վերահայտնությունը, վերին պարգեւումով, եղավ հայոց մեծերից մեկի՝ Ակսել Բակունցի կողմից: Նա է իմանում վանքի տեղի մասին եւ տեղեկացնում հնագետ Սեդրակ Բարխուդարյանին, ինչից հետո՝ 1934-ին, հնագետը, գիտական արշավախմբի հետ, ուսումնասիրում եւ մանրամասն ներկ ա - յացնում է սրբավայր-հուշարձանախումբը:

Ակսել Բակունց

Բղենո Նորավանքն այն սրբավայրերից է, որի փառքը միայն անցյալին չէ, որ պատկանում է, այլ ավելի շատ ներկային ու ապագային: Եվ դա՝ շնորհիվ «Էջմիածնի ավետարանի» կամ «Փղոսկրե ավետարանի», որը եզակի կանթեղ է քրիստոնեական վարդապետությամբ հայոց տունը լուսավոր պահելու գործում, որը, հիրավի, Ավետարանների թագուհին է քրիստոնյա աշխարհում:

Ճակատագրի կամոք եւ դարեր շարունակ Ավետարանի գրչության վայրը սխալմամբ համարվել է Էջմիածինը՝ անտեսելով (չիմանալով) գրչության իրական վայրի անունը, որ Բղենո Նորավանքն է:

Հայ գրչության եւ մանրանկարչության այս հուշարձանն ընդօրինակել է Հովհաննես գրիչը՝ 989-ին, Բղենո Նորավանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցում, պատվիրատու՝ Ստեփանոս քահանա:

Ավետարանը ներկայումս գտնվում է Երեւանի Մեսրոպ

Գրիգոր Ա Սյունի կամ Գրիգոր Աշոտյան, Սյունիքի թագավոր (1051 - 1072):

Սմբատ Բ եւ Գրիգոր Ա թագավոր-եղբայրները զբաղվել են շինարարական աշխատանքներով: Աջակցել եւ օգնել են Տաթեւի վանքի, Վահանավանքի, Բղենո Նորավանքի եւ հոգեւոր-կրթական այլ կենտրոնների վերանորոգման աշխատանքներին:

Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռագիր N2374):

Բաղկացած է գեղեցիկ երկաթագրով գրված չորս ավետարանից:

Բացառիկ է Ավետարանի մանրանկարների դերը: «Էջմիածնի ավետարանի» ուսումնասիրությամբ զբաղվել են շատ գիտնականներ՝ Ա. Ուվարով, Վ. Ստասով, Ն. Կոնդակով, Յո. Ստրժիգովսկի, Գ. Վայցման, Ֆ. Մակլեր, Ս. Տեր-Ներսեսյան, Նիկողայոս Ադոնց եւ ուրիշներ:

* * *

Անկարելի է չհիշել վանքի երախտավորներից մի քանիսին ու հարյուրամյակների հեռվից չխոնարհվել նրանց հիշատակի առջեւ:

Երախտավորների շարքում առաջինը, անշուշտ, Ստեփանոս նախաշինողն է՝ քահանայական աստիճանի կոչված, ով հիմնադիրն է Բղենո Նորավանքի:

Ստեփանոսը Սիսական տոհմից էր:

Բղենո Նորավանքի առաջին եկեղեցին կառուցվել է Հրահատ իշխանի օժանդակությամբ: Ստեփանոսի եւ Հրահատի հիմնադրած եկեղեցու նավակատիքին, որ տեղի ունեցավ 936 թ., մասնակցել է Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբը, ով էլ օծել է Աստծո այդ տաճարը:

Արդարացի կլիներ Ստեփանոս նախաշինողի հետ մեկտեղ հիշել նաեւ Գրիգորի (Գեորգիի) եւ Հովհաննեսի անունները, թեեւ նրանք գործեցին Նախաշինողից մոտ 100 տարի հետո:

Հենց նրանք 1062-ին կառուցեցին վանքի երկրորդ եկեղեցին (կամ վերաշինեցին արդեն կառուցվածը):

Եվ կառուցեցին, ինչպես պատմիչն է վկայում, շատ գեղեցիկ հորինվածքով:

Վանքի երախտավորների ցանկում ոսկե տառերով են գրված Հովհաննես գրիչի՝ «Էջմիածնի ավետարանի» հեղինակի եւ պատվիրատու Ստեփանոս քահանայի անունները:

Պարտավոր ենք հիշել նաեւ Սյունիքի թագավոր Գրիգոր Ա-ին, ով թագավորել է 1051-72թթ. եւ հովանավորել Նորավանքում կատարվող աշխատանքները (Գրիգոր Ա թագավորը թաղված է Վահանավանքում, նրա դեմքը վերականգնել է պրոֆեսոր Ճաղարյանը):

* * *

Բղենո Նորավանքը հայ ճարտարապետության մեջ արտակարգ տեղ է գրավում նաեւ իր բարձրարվեստ քանդակներով: Շատերն են անդրադարձել այդ պատկերաքանդակներին, բայց մեջ բերենք միայն փոքրիկ հատված Ստեփանոս Մնացականյանի «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակները IX-XIV դարերում» գրքից:

Ահա՝ *«Աղթամարից հետո Բղենո Նորավանքն այն միակ հուշարձանն է, որ այնքան հարուստ է պատկերաքանդակներով: Ուսումնասիրությունը կասկած չի թողնում, որ այստեղ ի սկզբանե պատկերված են եղել Քրիստոսի կյանքի հիմնական դրվագները (մեզ հասած ութ պատկերաքանդակից վեցում առկա է Քրիստոսը)»:*

Վերջաբան

Ուխտագնացության այդ օրը մեզ պարգեւեց անջնջելի տպավորություններ (բայց ոչ միայն հաճելի): Կարելի է ասել՝ քարերի տակ ու քերծերի մեջ քնած դարերն էին արթնացել այդ օրը:

Սրբավայրերի մասին արդեն ասացինք...

Յուրահատուկ էր նաեւ Բարձրավանի ձորից (Որոտանի կիրճի մի մասն է) ստացած տպավորությունը: Ձորը սկսում է գյուղի հարթության պռնկից եւ 40-50 աստիճան թեքությամբ ձգվում մինչեւ Որոտան գետը: Ձորը լայնությամբ ձգվում է դեպի Օվենի անտառը:

Ճշմարիտ է ասված՝ եթե ուզում ես ամբողջովին հասկանալ Որոտանի կիրճի վեհությունը, ահեղությունը, անառիկությունը, հեքիաթայնությունը, նաեւ գրավչությունն ու անզուգական հմայքը, պետք է այնտեղ իջնել Բարձրավանից:

Առանց չափազանցության՝ այնտեղ ամեն ինչ՝ քարերը, ծառերը, կածաններին չոքած դարավոր ընկուզենիները մարդայնացած են, այնտեղ կարելի է զրուցել դարերի հետ, այնտեղ կարելի է զրուցել Բարձրյալի հետ:

Լեռան շուրթից սկսած քարերի մի անսովոր հեղեղ է՝ սառած հեղեղ, Համո Սահյանի խոսքերով՝ *«Քարե՛ մրրիկ է ու քարե բուք է, Քարե՛ բողոք է ու քարե բերդ...»:*

Էդիկ Հովհաննիսյանը նախնիներից լսածն է փոխանցում՝ քարերի այդ հեղեղը 1658-ի, ինչպես եւ 1931-ի ահեղ երկրաշարժի հետեւանք են (վերջին երկրաշարժից գյուղում 47 մարդ է զոհվել): Այդ երկրաշարժերն ավերել ու տակնուվրա են արել ամեն ինչ, անգամ լեռան անմիջական ստորոտում գտնվող Քարոտան կամ Քարատնիք գյուղը թողել են քարերի տակ (դա՝ 1658-ի երկրաշարժի ժամանակ): Ու, այդուհանդերձ, ահեղ երկրաշարժերը չեն վնասել ո՛չ Սուրբ Մինաս եկեղեցուն, ո՛չ քիչ հեռվում գտնվող Սյունյաց մեծ անապատի եկեղեցուն, որ բարձունքից «իջել» եւ անվնաս հանգրվանել է նոր տեղում ու կանգուն է մինչեւ հիմա:

Ժայռերի զառիթափով՝ մեքենայով, մոտ 1 կմ իջնելուց հետո, ճանապարհը շարունակեցինք ոտքով՝ կածաններով:

Ծառերի տակ, նաեւ կածաններին տերեւների գորգեր էին: Բայց դրանք երփներանգությամբ «վառվող» տերեւներ չեն այլեւս: Դրանք հիմա քամու հետ նույնիսկ չեն վիճում, աստղերի ու արեւի հետ զրույցի չեն բռնվում (մանավանդ որ ձորի այդ մասը ձմռանը գրեթե արեւ չի տեսնում):

Չորացած, խորշոմած այդ տերեւները ձյուն են աղերսում, մի բուռ ձմեռ, որի նշանները չեն երեւում, թեեւ դեկտեմբեր ամիսն ավարտին է մոտենում: Միայն հեռվում երեւացող Արամազդն է, որ սպիտակ շապիկ է հագել եւ գլուխն աստղերին հենել:

Ի վերջո ձորից սկսեցինք բարձրանալ Բարձրավան գյուղ...

Վերստին եւ ակամայից հիշում ենք Սյունյաց տան մեծ բանաստեղծի խոսքերը, որ ճշգրիտ արտացոլանքն են այն պատկերների, որին ականատես եղանք.

Ինչ է ասում ճամփորդներին
Հալված-մաշված այս կածանը,
Ժամանակին հազար ու մի
Քայլեր հաշված այս կածանը,
Անցող-դարձող քարավանի
Ծանր ու դանդաղ ոտքերի տակ
Մեջքը կոտրած, կուրծքը պատռած,
Հոգնած-տանջված այս կածանը,
Մեծ աշխարհի մեծաժխոր
Ճանապարհից հեռու քաշված,
Հիսուսի պես, ապառաժի
Կողին խաչված այս կածանը...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գյուղ Հալիձոր: Գտնվում է Որոտան գետի ձախ-ափնյակում:

ԵՐԹՈՒՂԻ 5

Այցելություն Սյունյաց մեծ անապատ, որ հայոց անապատական շարժման մայրաքաղաքն էր

Հարանց կամ Սյունյաց մեծ անապատ (երկրորդ անգամ) ուխտագնացություն կատարեցինք 2019 թ. սեպտեմբերի 29-ին: Մեզ ուղեկցում էին Հալիձոր գյուղի բնակիչ Փայլակ Խաչյանը եւ գորիսաբնակ հալիձորեցի Արմեն Գեւորգյանը:

Առաջին կանգառը՝ Հին Հալիձոր

Հին հիշատակարաններում գյուղը գրվում է Հալե ձեւով, հետագայում՝ Հալի-ձոր եւ, ի վերջո, Հալիձոր: Ըստ հին հարկացուցակի՝ 8 չափ հարկ էր վճարում Տաթեւի վանքին:

Դեռեւս 10-րդ դարում Սյունյաց Բաբգեն իշխանի դուստր Համասպրուհին Հալիձոր գյուղը նվիրել է Տաթեւի վանքին, որը 1274 թ. կրկին հաստատել է Տարսայիձ Օրբելյանը:

Գյուղը Տաթեւի սեփականությունն էր մինչեւ 19-րդ դար:

Հին գյուղի կենտրոնում է միակ եկեղեցին: Ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ *«Թեեւ նրա հարավային մուտքի բարավորի վրա գրված է Թվ.: ՈԿ:, բայց ինչպես գրչության ոճը, նույնիսկ եւ շենքի ճարտարապետական առանձնահատկությունները այդ չեն հաստատում, պետք է լինի :ՌԿ: Գրիչը Ո-ի վրա մոռացել է հորիզոնական ստեղը փոխադրել»:* Եկեղեցին կոչվում է Սուրբ Մինաս:

Այնուհետեւ՝ գյուղից 3-4 կմ հյուսիս-արեւելք, Որոտան գետի ձախ ափին, այգիների մեջ, ժայռաբեկորի վրա կանգնած է մի խաչքար՝ 1265 թ. կալվածագիր-արձանագրությամբ:

Գյուղից մոտ 1 կմ դեպի արեւելք՝ Շնհեր տանող ճամփից աջ, գտնվում է մի ժայռոտ բլուր, որի վրա մնում են ավերակ

եկեղեցու հիմնապատեր, մի քանի խաչքարեր, նաեւ գերեզմանաքարեր ու տների հիմնապատեր: Այդ վայրը կոչվում է Խաչի խութ: Բայց այդ վայրը կոչվում է նաեւ Վնսար (Վանասար, Վանքասար):

Նույն անվամբ, ինչպես նշվել է մեր՝ Շինուհայրի պաշտամունքային վայրերին նվիրված հրապարակման մեջ, եկեղեցու հետքեր կան Շինուհայր գյուղում:

Արդյո՞ք զուգադիպություն է, թե՞ շփոթմունք (անվանման առումով)՝ չենք կարող ստույգ ասել: Միայն կարող ենք փաստել, որ Հալիձորի պարագայում Վնսար անունն անվիճելի է, քանզի այնտեղ գտնվող խաչքարի պատվանդանի արեւմտյան երեսին գրված արձանագրությունը հենց դա է վկայում:

Ասվածին ավելացնենք Երվանդ Լալայանի գրառումը Հալիձորի մասին. *«Գտնվում է Բարկուշատի ձախ ափին, ձորի լանջին: Արեւմտահյուսիսային կողմում բարձրանում է Գեալին-ղայան, որի առաջ ձգվում է Շահանդուխտի ձորը, իսկ հարավային կողմում՝ գետի աջ ափին, երեւում է Հարանց անապատը, որ երկրաշարժի ժամանակ բարձունքից իջել է ներքեւ:*

Տները քարաշեն են, միմյանց վրա կիտված, որոնց մեկի կտուրը ծառայում է մյուսին որպես բակ եւ ճանապարհ:

Գյուղի կենտրոնում գտնվում է եկեղեցին, որ պարսպապատ է, գեղեցիկ եւ գմբեթավոր:

Ձորը լի է խաղողի այգիներով, որի գինին շատ գովված է»:

Հարանց մեծ անապատ կամ Սյունյաց մեծ անապատ, կառուցվել է 1608-1613 թթ.: Գտնվում է Սյունիքի մարզի Հալիձոր գյուղից 5 կմ հարավ՝ Որոտանի աջ բարձրադիր ափին:

Հին Հալիձորում հիշեցինք վաղամեռիկ բանաստեղծ Ալբերտ Իսաջանյանին

Հնարավոր չէ անցնել Հին Հալիձորով եւ չհիշել բանաստեղծ, արձակագիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1973-ից) Ալբերտ Իսաջանյանին: Ծնվել է 1937-ի նոյեմբերի 2-ին: 16 տարեկանում բարձրացել է էլեկտրասյունը, որպեսզի վառի հարեւանի տան լույսը, ընկել է սյունից, ողնաշարը ջարդվել է, եւ դարձել է հաշմանդամ ու մինչեւ կյանքի վերջը՝ 1983-ի ապրիլի 29-ը, գամված

Հին գյուղի կենտրոնում գտնվող Սուրբ Մինաս եկեղեցին

մնացել անկողնուն:

«Ծաղկե կամուրջ», «Ծաղիկ իմ հեռավոր» բանաստեղծությունների ժողովածուները, «Ոչ, հայրիկ, ես մեծ բան եմ կորցրել» վիպակը վկայություն են այն բանի, թե ինչպիսի տեղ կարող էր զբաղեցնել նա մեր նորագույն շրջանի գրական անդաստանում:

Մեծն Պարույր Սեւակը ժամանակին նկատել էր Ալբերտին եւ նամակագրական կապ էր պահպանում:

Ալբերտը Պարույրի եղերական մահվան կապակցությամբ իր վիշտն արտահայտեց:

Ասացիր՝ երբ ես գալու իմ տունը,
Ասացիր՝ կգաս պատեհ–անպատեհ,
Քնած կլինեմ, թե հարբած՝ կգաս,
Ցավիդ դեմ ինչ են փառքս, անունս:
Ասում եմ՝ եկա, եմ տար դռներդ,
Ճաք տված հողիդ վրայով արի
Եվ պարզիր, զուլալ
Եվ պարզիր, անդիրտ
Ճաք տված ճամփիս արդար կոներդ:
Եկ, անծանոթ եմ... ու սիրտս էրած
Չի հաշտվում ախր քո լռության հետ,

Հալիձորից Հարանց մեծ անապատ գնալիս, Որոտան գետի աջ ափին կա ոչ փոքր մի մատուռ, որը Պողոս–Պետրոս անունն է կրում

Այս բազմության մեջ
Դու իմ միակը,
Մեն–մտերիմը, ու դու էլ՝ մեռած:
Ու որբությունս ծորում է հողիդ,–
Ես ուրիշ հողում ասելիք չունեմ,
Հիմա ճիշտ–ճշգրիտ, հիմա արդարեւ
Նման է, Պարո՛ւյր, իմ ցավը քոնին:

Երկրորդ կանգառը՝ Պողոս–Պետրոս մատուռ

Հալիձորից Հարանց մեծ անապատ գնալիս, Որոտան գետի աջ ափին կա ոչ փոքր մի մատուռ: Ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ մատուռը Պողոս–Պետրոս անունն է կրում:

Այունյաց մեծ անապատը, որ համարվում է Մխիթարյան միաբանության նախատիպ

Այդ համեմատությունն արել եւ նման գնահատական են տվել Մանուկ Աբեղյանն ու Լեոն:

Հարանց անապատի հիմնադիրներն են Սաղմոսավանքի եպիսկոպոս Սարգիսը եւ քահանա Կիրակոսը՝ Տրապիզոնից: Նրանց միացել են Պողոս վարդապետ Մոկացին եւ Մովսես վարդապետ Սյունեցին:

Անապատի կառուցումն իրականություն չէր դառնա, եթե չլիներ Քաշաթաղի Մելիք Հայկազն երկրորդի աջակցությունն ու հովանավորությունը:

Հարանց անապատը, ըստ Մաղաքիա Օրմանյանի, կառուցվել է 1608–ին: Միքայել Չամչյանն ընդունում է 1610 թվականը:

Անապատի ճարտարապետական տեսքը քննության է առել Մուրադ Հասրաթյանը (Մորուս Հասրաթյանի որդին):

Ըստ Մուրադ Հասրաթյանի՝ *«Համալիրն այժմ բաղկացած է եկեղեցուց՝ գավիթ–սրահով եւ հարավից կից կառուցված երկու սենյակով, պարիսպների մնացորդներից (որոնցից արեւմտյանում գտնվում է դարպասը), սեղանատնից:*

Բացի եկեղեցուց, մյուս նշված շինությունները համալիրի սկզբնական հորինվածքին չեն պատկանում, այլ կառուցված են 1658 թ. երկրաշարժից հետո: Այս աղետի ժամանակ գետնի ճեղքվածքի եւ սողանքի հետեւանքով եկեղեցին սահել–իջել է այժմյան տեղը...

...17–րդ դարի վերջին եւ 18–րդ դարի սկզբին Հարանց անապատը նորից կենդանանում է: Այդ ժամանակաշրջանին են պատկանում պարիսպները, գավիթը, սեղանատունը...»:

Անապատի եկեղեցին երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ է: Եկեղեցին կոչվում է Սուրբ Աստվածածին:

Հին գյուղի կենտրոնում գտնվող Սուրբ Մինաս եկեղեցին

Համառոտ՝ անապատականների կարգի մասին

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ *«...սահմանեցին, թե անապատականները պարտավոր են միայն մնալ եւ համբերել խցում եւ միտքն ու խորհուրդը հոգեկան ու մարմնական ամեն անմաքուր մտածումներից սուրբ պահել. թողնել իր կամքը եւ հնազանդ ու կատարող լինել առաջնորդի կամքին. ոչ ոքի սեփական ունեցվածք չպետք է լինի, ամեն ինչ ընդհանուր պետք է լինի, իսկ առաջնորդը պետք է հոգա բոլոր եղբայրների կարիքները եւ բաշխի, ում որ պետք լինի. խցում ոչինչ չպետք է ունենալ եւ կամ ուտել, տարին միշտ պասով պետք է անցկացնել, բացի շաբաթ եւ կիրակի օրերից եւ տերունական տոն օրերից: Իսպառ պետք է հրաժարվել գինուց ու մսից եւ ամեն օր առավոտ եւ երեկո անխափան խոստովանել օրվա անցածներն ու մտածումները:*

Ամեն շաբաթ ու կիրակի եւ տերունական օրերը գիշերը մինչեւ առավոտ պաշտամունքով անցկացնել, իսկ սույն օրերը անխափան պատարագ մատու-

ցել: Նաեւ գրքերից գտան զգեստների որպիսությունն ու ձեւը...

Նաեւ ժամատեղերի (որ ժամին ինչ ասմունք կատարել) կարգ սահմանեցին...»:

1658-ի երկրաշարժը, որի հետեւանքով խամրեց անապատի փառքը

Ահա, թե ինչպես է նկարագրում այդ աղետն Առաքել Դավրիժեցի պատմագիրը, ով ականատես է եղել արհավիրքին (Պատմություն, Երեւան, «Սովետական գրող»-1988):

- Երբ հասավ մեր 1107 (1658) թվականի ապրիլ ամիսը, այս գարունը անձրեւային եղավ, իսկ պատռվածքները օրավուր սկսեցին լայնանալ, եւ հավաստի ամենքի սրտում հաստատեց, թե այսօր-էգուց սահելով հոսելու է այս անապատի տակի գետինը: Այնպես եղավ, որ ավագ եկեղեցու կիրակի օրը, որ ապրիլ ամսի 25-ին էր, երեկոյան եկեղեցի գնալու ժամանակ, արեւմուտի մոտ գետինը սկսեց պատռվել անապատի հարավային կողմից՝ բարձր լեռնից այն կողմ եւ իբրեւ մրրկաբեր ամպ շարժված գալիս էր լեռան բարձունքից ահավոր դղրդումով, թնդյունով, որոտումով ու ճայթումով, ինչպես կայծակնացայտ ամպերի որոտում:

Որոտումն ու թնդյունը այնքան ահավոր էին, մինչեւ որ Շինուհայր եւ Հալիձոր գյուղերի բնակիչները ձայնը լսել են եւ ելել իրենց գյուղերի հանդիպակաց տեղը եւ տեսել այդ արհավիրքը:

...Մեծամեծ քարերը, լեռնից պոկվելով, միմյանց հետեւից գլորվելով, ցած էին գալիս, որոնք միմյանց բախվելով, փշրված, խորտակված հեռու էին ցրվում...

...Անապատի արեւմտյան կողմը՝ պարիսպն ու հյուրատունը, անասունների ախոռը, ամբարները, միաբանների սենյակից մի մաս եւ արեւմտյան մեծ եկեղեցու արեւմտյան սյուների հետեւի կողմից բոլորը ավերվեցին:

...Այս ամբողջ սոսկալի գործերը լինելով՝ այնուամենայնիվ ամենակալ Աստծո խնամքով ոչ մեկին վնաս չեղավ, ոչ մարդու, ոչ անասունի, միայն մի միաբան մնաց իր խուղում, այնտեղ հողի տակ մեռավ...

Հին Հալիձորի կենտրոնում՝ աղբյուրի մոտ:

Մեկը՝ Հարանց մեծ անապատի ուսուցիչներից. Ներսես Մոկացի

Սյունյաց մեծ անապատի ուսուցիչներից յուրաքանչյուրի մասին կարելի է առանձին խոսք ասել:

Այս դեպքում բավարարվենք միայն Ներսես Մոկացուն հիշելով, ով 16-17-րդ դարերի եկեղեցական նշանավոր գործիչ էր, փիլիսոփա, բանաստեղծ:

Ներսես Մոկացու բանաստեղծություններից ուշագրավ է Հարանց մեծ անապատի հիմնադիրներին նվիրված պոեմը՝ «Ներբողեան գովեստի չորեցունց արանցն, որք եղեն սկիզբն անապատի կարգիլ յազգս մեր» վերտառությամբ:

Պոեմում փառաբանական խոսք է ասվում անապատի հիմնադիրներ Սարգիս Ամբերդցու, Կիրակոս Տրապիզոնցու, Պողոս Մոկացի վարդապետի, ինչպես եւ Մելիք Հայկազնի մասին՝ վերջինիս համեմատելով առասպելական Տիգրանի հետ, ով տապալել է Աժդահակին:

Ներսես Մոկացու կյանքն ու գործունեությունը հիանալիորեն քննության է առել Սյունյաց աշխարհի նշանավոր դուստր, ակադեմիկոս Աելիտա Դոլուխանյանը («Ներսես Մոկացի», Սուրբ Էջմիածին, 2009):

1621-ին Ներսես Մոկացին Սյունյաց մեծ անապատից տեղափոխվել է Լիմ անապատ (Լիմ կղզին ամենամեծն է Վանա ծովակի կղզիների մեջ), որը

Սյունյաց մեծ անապատ (Հարանց մեծ անապատ)

նույնպես գրչության կենտրոն էր՝ հիմնադրված Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից:

Սյունյաց մեծ անապատը՝ Հայ առաքելական եկեղեցու երկու կաթողիկոսի բնօրրան

Հարանց մեծ անապատն իր հռչակը ձեռք բերեց նաեւ Մովսես Տաթեւացու (Խոտանանցի, Սյունեցի) եւ Փիլիպոս Աղբակեցու գործունեության շնորհիվ, որ հետագայում դարձան Ամենայն հայոց կաթողիկոս:

Ի դեպ, Մովսես Գ Տաթեւացին, որ Հայոց կաթողիկոս էր 1629-32 թթ., արժանացել է ազգային-եկեղեցական սրբի լուսապսակի (մեր վերջին սուրբն էր):

Իր լուսավորական, եկեղեցաշինական, ազգային գործունեության համար ժամանակակիցների կողմից անվանվել է «Երկրորդ Լուսավորիչ Հայոց»:

Իսկ Առաքել Դավրիժեցին նրան այսպիսի գնահատական է տվել. «Մովսէս Կաթողիկոսն ի Սիւնեաց աշխարհէն, որ եղեւ նորոգող Ս. Էջմիածնի»:

Մովսես Տաթեւացու «սրբազնամաքուր եւ բազմահանճար ձեռնասուն աշակերտը», վերջինիս գործակիցն ու ծրագրերի շարունակողը եղավ Փիլիպոս Ա Աղբակեցին, ով կաթողիկոսական գահի վրա էր 1632-1655 թթ.: Եղել է Հայոց եկեղեցու ամենաարդյունաշատ եւ նշանավոր հայրապետներից:

Մատենագիտության մեջ առկա որոշ անճշտությունների մասին

Հալիձոր գյուղի հետ կապված որոշ անճշտություններ կան մատենագիտության մեջ:

Ղեւոնդ Ալիշանն այս գյուղը սխալմամբ համարում է Դավիթ-Բեկի աթոռանիստը եւ 1727 թ. Հալիձորի հայտնի ճակատամարտի վայրը՝ շփոթելով Դավիթ-Բեկի նստոցի՝ Կապանի համանուն բերդի եւ գյուղի հետ:

Այդ սխալը կրկնում է նաեւ հանճարեղ Նիկողայոս Ադոնցը:

Շփոթմունք կա Սյունյաց (Հարանց) մեծ անապատի եւ Տաթեւի հարանց անապատի միջեւ:

Սյունյաց մեծ անապատը գտնվում է Հին Հալիձորից մոտ 5 կմ հեռու՝ Որոտան գետի աջ ափին, լեռնալանջի հարթության վրա, կառուցվել է (արդեն նշեցինք) մոտ 1610-ին:

Իսկ Տաթեւի հարանց անապատը գտնվում է Սատանայի կամրջից քիչ հարավ, կառուցումը սկսվել է 1660-ին:

Շփոթմունք կա նաեւ Սյունյաց-Հարանց մեծ անապատի (որ երբեմն Հալիձորի անապատ է անվանվում) եւ Կապանի տարածաշրջանի Հալիձորի կուսանաց անապատի միջեւ:

Այդ ամենը, անշուշտ պետք է նկատի ունենալ:

Վերջաբանի փոխարեն

Սյունյաց մեծ անապատն ունեցավ համահայկական նշանակություն:

Անապատի սկսած գործը շարունակվեց նրա ուսուցիչների եւ աշակերտների ջանքով հիմնված նոր միաբանություններում. Ներսես վարդապետ Մոկացին՝ Լիմ կղզում, Կարապետ եպիսկոպոս Էջմիածնեցին՝ Սեւանա կղզում, Արիստակես վարդապետ Շամբեցին՝ Տանձափարախում, Դավիթ եպիսկոպոսը՝ Չարեքագետում, Կիրակոս քահանան՝ Հոչանցում եւ այլն:

Անապատներ հիմնվեցին Սյունյաց աշխարհի տարբեր վայրերում նույնպես...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



ԵՐԹՈՒՂԻ 6

Քաշաթաղի երբեմնի կենտրոն Խանածախը, որտեղ գտնվում է Հայաստանի հրաշալիքներից մեկը՝ Անապատի ձորը

Խանածախի պաշտամունքային վայրերին ծանոթանալու համար ստիպված էինք մի քանի այցելություն կատարել, թեեւ նախկինում նույնպես բազմիցս եղել էինք այնտեղ:

Վերջին անգամ Խանածախ այցելեցինք 2020 թ. հունվարի 5-ին՝ ճանաչված մտավորական Ռեդիկ Հայրապետյանի ընկերակցությամբ:

Դրանից առաջ՝ 2019 թ. նոյեմբերի 1-ին, ուխտագնացություն էինք կատարել Բահավորի եկեղեցի՝ ուղեկցությամբ Խանածախի վարչական ղեկավար Անուշավան Հովակիմյանի եւ Վահագն Հայրապետյանի:

Գյուղ էինք այցելել նաեւ 2019 թ. հոկտեմբերի 29-ին:

Իսկ Խանածախի սրբավայրերի հանդեպ մեր հետաքրքրությունն առաջացել էր ավելի վաղ: Եվ 2011-ին մեկնել էինք Անապատի ձոր:

Համառոտ՝ գյուղի մասին

Գտնվում է Գորիս քաղաքից հյուսիս-արեւելք՝ լեռնային, կտրտված ռելիեֆով վայրում: Այդտեղ էլ կան երբեմնի բնակելի եղած քարատակներ:

Գյուղացիները զբաղվում են անասնապահությամբ, երկրագործությամբ (դաշտավարություն, այգեգործություն), մեղվաբուծությամբ:

Գյուղում հնուց մնացել են չորս ջրա-

Խանածախ, գտնվում է Գորիս քաղաքից հյուսիս-արեւելք՝ լեռնային, կտրտված ռելիեֆով վայրում:

ղացի եւ մեկ ձիթհանքի ավերակներ:

Գրավոր աղբյուրներում գյուղը հիշատակվում է 13-րդ դարից (Ստեփանոս Օրբելյան, «Սյունիքի պատմություն»:

Տաթեւի վանքին (ըստ հին հարկացուցակի) վճարում էր 20 չափ հարկ:

Խանածախ գյուղանվանը հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանին վերագրվող «Ժամանակագրության» մեջ:

Գյուղանունը նշված է նաեւ 1781-ի հարկացուցակում:

19-րդ դարավերջին Խանածախ այցելած Երվանդ Լալայանն այսպես է նկարագրում բնակավայրը՝ *«Գյուղն ընկած է բլրակների լանջերին, որոնք միմյանց ընդհարվելով՝ մի փոքրիկ ձորակ են կազմում: Այստեղ բխում է մի վարար աղբյուր, որի ջուրը հոսելով ձորի միջով, հնարավորություն է տվել պարտեզներ տնկելու, որոնց մեջ մշակվում են առավելապես կեռասենիներ:*

Տները ղարադամներ են, սակայն կան նաեւ քարատակներ, որոնցից մի քանիսը հին են, իսկ մյուսները նոր են փորված:

Հին քարատակները գլխավորապես ծառայում են որպես խոտանոց եւ գոմ:

Բնակիչներն առավելապես Սուլթան-քենդից գաղթած հայ լուսավորչականներ են...»:

Սյունիքի տարածքով շատ վաղ ժամանակներից անցնող մի քանի բանուկ ճանապարհից մեկն անցել է Խանածախով՝ Նախճավանից-Անգեղակոթ-Սիսիանի վրայով՝ Հարժիսի քարավանատուն, ապա Գորայք (Գորիս), որից հետո Խանածախ եւ Տեղ (երկու ճյուղով)՝ Շուշի:

- Խանածախ ավանի պատմական նշանակությունը բարձրանում է 13-րդ դարից սկսած եւ Հայաստանի ընդհանուր քայքայման-ավերման դարերում՝ 15-16-րդ դարերում, - նշում է Մորուս Հասրաթյանը եւ ավելացնում՝ *«Այս ժամանակներում Խոնածախը դառնում է Սյունիքի առաջնակարգ ավան-կենտրոնը (վարչական առումով)՝ գերազանցելով Տաթեւին, Տեղին, նույնիսկ Գորես-Վերին շենին եւ Անգեղակոթին»:*

Խանածախի վերելքը մեծամասամբ պայմանավորված էր Քաշաթաղ-Մաղավուզի՝ ամենուրեք ճանաչված Մելիք-Հայկազն երկրորդի գործունեությամբ. որը խոսակցության առանձին նյութ է, ում կյանքին ու գործունեությանը նվիրված հատուկ համար է թողարկել «Սյունյաց երկիր» թերթը (30 մարտի 2013 թ.):

Այդ նույն Մելիք-Հայկազն երկրորդն էր, որ կառուցեց Սյունյաց (Հարանց) մեծ անապատը Հալիձոր գյուղի դիմաց:

Մելիք-Հայկազն երկրորդն էր, որ համոզեց Շահ Աբասին՝ զերծ մնալու Սյունիքի ու Արցախի հայ բնակչությանը Պարսկաստանի խորքեր գաղթեցնելու գաղափարից:

Խանածախի եւ առհասարակ տարածաշրջանի մի շարք գյուղերի այսպիսի բնութագիր է տվել Ստեփան Լիսիցյանը. *«Այս գյուղերում տների մի խոշոր մասը ծիծեռնակի բների պես ծեփված է ձորի կողին առանց որեւէ կանոնավո-*

ության՝ քմահաճ ելեւէջ շավիղներով իրար հետ միացած: Նրանցից շատերն իրենց ետեւի կեսերով խրվում են մայր ժայռի մեջ, որպես քարայրներ: Կան եւ ամբողջովին քարայր ներկայացնող բնակարաններ՝ քըրատակնէր»:

– Խանածախ հնավայրը հետաքրքրել է հնագետներին, – նշում է Սերգեյ Հախվերդյանը «Խանածախ» հոդվածում: – Այնտեղ գտնվել են ուշ բրոնզեդարյա քարարկղային դամբարաններ, որոնք բնութագրվում են Ք. ա. 10–9-րդ դարերում: 1980–81 թթ. հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Օնիկ Խնկիկյանի կողմից Խանածախում պեղվել է չորս դամբարան:

Գյուղանվան խնդիրը՝ բանավեճի թեմա

Մատենագիտության մեջ գյուղն անվանվում է տարբեր կերպ՝ Խնածախ, Խանածախ, Խոնածախ, Քեշիշքենդ: Անվան ծագման մասին կան տարբեր ավանդազրույցներ: Ըստ դրանցից մեկի՝ Խանածախը եղել է խանի կալվածք, եւ խանն այն վաճառել է (ծախել է), որից՝ Խանածախ անունը:

Մի այլ ավանդությամբ՝ իբր հարձակվել են գյուղի տեր խանի վրա, ով կռվի ժամանակ ասել է՝ ձեզ մի զաղ (բույս) նույնիսկ չեմ տա, որից էլ՝ Խանազաղ:

Գյուղանվան խնդրին անդրադարձել է նաեւ նշանավոր սյունեցի Մորուս Հասրաթյանը. *«...Խնածախ գյուղի անունը գրավոր հիշվում է առաջին անգամ Ստեփանոս Օրբելյանի Սյունիքի պատմության մեջ 13-րդ դարի վերջին: Այդտեղ Խնածախը գրված է Խոնածախ ձեւով: Ուստի ոչ մի կապ չունի խան բառի հետ, կամ խանի (ն) ծախած սխալ, պարզունակ բացատրության հետ: Իսկ թե ի՞նչ է նշանակում Խոնածախ, դժվար է ասել: Գուցե արմատը եղել է խոն-ցածր, փոս, քաղցր կամ օրհնված, բայց հաստատ բան ասել դրանց հիման վրա՝ գիտական չի լինի, գուցե թարգմանվի հին հայերենով՝ փոսավերջ: Մի բան պարզ է, որ թեեւ Խոնածախ անունը յոթ դար է, ինչ հիշվում է, բայց գյուղը նվազագույնը երկու հազար տարեկան, ավելի ճիշտ երկուս եւ կես հազար տարեկան է...»:*

1991 թվականին «Զանգեզուր» թերթի էջերում երկու մեծ սյունեցու միջեւ բանավեճ ծավալվեց գյուղանվան շուրջ:

Թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին Սերո Խանզադյանը գրեց.

«Սիրելի Սամվել

Հիշո՞ւմ եք մեր զրույցը՝ Խնածա՞խ, թե՞ Խանածախ:

Ինքը՝ Ստեփանոս Օրբելյանը Խո-

նածախ է գրում: Դա՝ ձեռագրում: Ապա նրա գրքի երկու հրատարակություններում... նույնպես Խնածախ է:

Նշանավոր Էփրիկյանը գրում է Խոնածախ, Խնածախ: Ալիշանը Խնածախ է գրում:

1986-ին Օրբելյանի պատմությունն աշխարհաբարի վերածած ու տպագրած մի երկու հոգի, աղավաղելով Օրբելյանին, Ալիշանին, Էփրիկայինին, գրել են Խանածախ»:

Սերո Խանզադյանի այդ նամակին արձագանքել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Մարգարյանը՝ «Անհերքելի փաստերը նամակագիրն է անտեսում» վերտառությամբ:

Ալեքսանդր Մարգարյանն ընդունում էր Խանածախ ձեւը:

Սերո Խանզադյանի եւ Ալեքսանդր Մարգարյանի վերոնշյալ հրապարակումներին կարելի է ծանոթանալ «Զանգեզուր» թերթի 1991 թ. օգոստոսի 17-ի եւ հոկտեմբերի 19-ի համարներում:

Դրանք վերահրատարակվել են «Սյունյաց երկրի» 2013 թ. մարտի 30-ի համարում:

Ցավոք, երկու մեծերի բանավեճը դուրս եկավ գիտական վեճի սահմաններից եւ փոխակերպվեց վիրավորանքների, ինչի համար համարձակվեցինք «Զանգեզուր» թերթով կոչ ուղղել նրանց՝ դադարեցնելու Խնածախ-Խանածախ անվան շուրջ բանավեճը:

Գորիսի Խնածախի եւ Արցախի Խանածախի արյունակցությունը

Արցախի Ասկերանի շրջանում՝ Ստեփանակերտից մոտ 5 կմ հյուսիս գտնվող Խանածախի բնակիչների նախնիները գաղթել են Սյունիքի (Գորիսի) Խանածախից:

Նրանք նախ՝ 1686-ին բնակություն են հաստատել Ջրաբերդում, ապա ներկայիս գյուղատեղիում, որին տվել են իրենց նախկին բնակավայրի անվանումը՝ Խանածախ:

Այդ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում են պահվել գրչագիր Ճաշոցը եւ մի Ավետարան:

Արդյո՞ք այդ մատյանները բերվել են Սյունիքի Խանածախից, թե՞...

Խանածախը՝ գրչավայր

«Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» շարքի ԺԷ դարի հատոր Գ-ում հանդիպում ենք մի ձեռագրի՝ գրված

Սուրբ Հռիփսիմե եկեղեցի, կառուցվել է 1610-ին՝ մանր սեւ քարերից, կրաշաղախ, թաղակապ տանիքով, զանգակատնով (շինված է 1905-ին):

Մելիք-Հայկազն 2-րդի մատուռ -դամբարանը

Քաշաթաղ երկրի Խանածախ գյուղում Հայոց ՌՂԶ (1647) թվականին:

Ձեռագրի հեղինակը Մարիամն է, պատվիրատուն՝ Մարկոս եպիսկոպոսը:

Ձեռագիրը գրվել է Ամենափրկիչ եկեղեցու հովանու ներքո:

Կարելի է ենթադրել, որ դա Անապատի եկեղեցու անունն է:

Ահա ձեռագիրը. *«Փառք...: Արդ՝ ես Մարկոս եպիսկոպոս ըստացի զՅիսուս որդիս, գրել տուի ձեռամբ եղբօր դստերն իմոյ՝ Մարիամին եւ փծուն գրչի, որ ապաշխարող կոչի: Յիշատակ ինձ եւ փրկութեան հոգւոյ եւ ծնօղացն իմոց, հօրն իմոյ՝ Դաւութին եւ մօր [ն] իմոյ՝ Թանկօողին, եւ եղբօրն իմոյ՝ Ղուկասին, Մելքոնին եւ Պաղին. // եւ Եղիսաբեթ քոյրն իմ, եւ եղբօր որդոցն իմոյ՝ Ենկիպարին, Գրիգորին, Դօլվաթիեարին, եւ հարսներն՝ Վառին եւ Թումանին, Զիլփին. եւ եղբօր թոռներացն՝ Մարտին, Եղմութին, Թառանին, Ասլին, Մարգարտին, Թիլին. եւ եղբօրն հարսներուն՝ Գարիանին, Գոլումին, Փարիզատն եւ Դալին, որ <որ> փոխեցաւ առ Քրիստոս, եւ նորապողպոջ որդոյն նորա՝ Սենիքարիմին եւ ամենայն արեան մերձա//-ւորացն:*

Գրեցավ զսայ ի երկիրս Քաշթաղու, ի գուղս Խանածախ, ընդ հովանեաւ Ամէնափրկչիս, թըւականիս Հայոց ՌՂԶ (1647)-ին. որում եւ մեք թողաք զսա յիշատակ: Ով ոք զսա կարդայ եւ ապրինակէ, մի բերան զմեզ յիշէ եւ ողորմի ասէ՝ Աստուած իւրն ողորմեսցի, իւր միւս ան [գամ] գալստեանն. ամէն»:

Խանածախի գետի աջ ափին գյուղի այգիների տարածքում՝ գյուղից մոտ 3 կմ հեռավորության վրա է գտնվում Հին եկեղեցին

Հին եկեղեցին (եղցին)

Գյուղի միջով հոսում է Խնածախի գետը (արեւմուտքից դեպի հյուսիս-արեւելք): Դա Հագարիի օժանդակ Աղօղլանի (Զաբուխի) վտակն է:

Վտակը Զաբուխ գետին է միանում Մալիբեյ գյուղի մոտ (Զաբուխը Ղեւոնդ Ալիշանը ենթադրությամբ նույնացվում է Շապոկի հետ):

Խանածախի գետի աջ ափին գյուղի այգիների տարածքում, գյուղից մոտ 3 կմ հեռավորության վրա է գտնվում Հին եկեղեցին:

Ալեքսանդր կրտսեր Մուսայելյանի առաջնորդությամբ մենք գնացինք այդ սրբավայր: Շարվածքից երեւում է, որ շատ հին կառույց է: Գտնվում է գրեթե քանդված վիճակում: Պահպանվել են երբեմնի պարսպի հետքերը:

Եկեղեցուց մոտ հարյուր մետր հեռավորության վրա կանգուն մի խաչքար կա՝ եղծված արձանագրությամբ:

Խաչի հող կամ Ցից քար

Դա գյուղատեղի է, որ գտնվում է Խանածախից 5-6 կմ արեւմուտք:

Գերեզմանները մնում են:

Հնում, ըստ տեղացիների, պաշտամունքային վայրեր ունեցող բնակավայր է եղել:

Երկու մատուռ, որ հիմա չկան

Դրանք գտնվում էին Սուրբ Հռիփսիմե եկեղեցու մերձակայքում:

Այդ մասին մեզ հիշեցնում է Երվանդ Լալայանը:

Ջումանց կալի խաչքարը

Խանածախում այցելեցինք Ազատ Գյումշուդյանի բնակարան: Այդ տան բակում է գտնվում չքնաղ մի խաչքար:

Ահա խաչքարի արձանագրությունը. *«Կաման Այ ես Աւքան կանգնեցի զխաչիս ի փրկութեան հոգոյ իմո յիշեք ի Քս թվ ՉԾ»:*

Մորուս Հասրաթյանի կարծիքով՝ Հայոց ՉԾ (750 թ.), այսինքն՝ 1301 թ. կանգնեցված այս խաչքարի տերը ոմն Ուքանն է, թեեւ գրված է Օքան (Աւքան):

- Ահա այս անունն է, որի հիշատակը կամ կրկնությունը պետք է համարել Հերհեր գյուղի Վահրամ Շահուռնեցու եւ Գոնցայի կրտսեր զավակի՝ Ուքանի անվան մեջ, - նշում է Մորուս Հասրաթյանը:

Գիտնականը դրանով եւս մեկ ապացույց է բերում, որ Շահուռնեցոց հայրենիքը Քաշաթաղն է (դա կարեւոր հանգամանք է Պարոն Հայկազ Առաջինի ծագումնաբանությունը եւ Քաշաթաղում հայտնվելը ճշտելու համար):

Տիկին Օլգան՝ լուսահոգի Ազատ Գյումշուդյանի կինը եւ որդին՝ Նորայրը, մեզ տեղեկացրին, որ ժամանակ առ ժամանակ տարբեր գիտնականներ են այցելում իրենց տան բակ եւ ծանոթանում խաչքարին, իսկ համագյուղացիներից շատերը մոմավառության են գալիս այդ խաչքարի մոտ:

Օլգա Հովսեփյանը, ով երկար տարիներ գյուղի դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհին է եղել, հավելյալ տեղեկություններ հաղորդեց ոչ միայն խաչքարի, այլեւ գյուղի մյուս սրբավայրերի մասին:

Ի դեպ, այդ վայրը կոչվում է նաեւ Մոթալ-ղայա բլուր (բարձունք):

Անապատի ձորը

Անապատի ձորը հետաքրքիր է ներկայացնում Երվանդ Լալայանը, ով 19-րդ դարավերջին եղել է Խնածախում:

Ահա՝ գյուղից *«հազիվ 2 կիլոմետր հեռու ձգվում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ առվակ: Այս ձորի երկու կողմում կան կարմիր եւ սպիտակ ավազախառն հողից կազմված քերծեր, որոնք ջրի ազդեցությամբ զանազան ձեւեր են ստացել, մանավանդ նշանավոր են մի քանիսը՝ կոնուսի ձեւով: Այս քերծերի մեջ եւս կան բազմաթիվ մեծ եւ փոքր քարատակներ, նախկին բնակարաններ:*

Ձորի բերանում, ուր երեք կողմից բոլորվում են լեռներ՝ քարե պարիսպ է քաշված եւ մի մեծ դարպաս թողնված:

Նույնպիսի մի պարիսպ էլ ձգվում է փոքր-ինչ բարձր, լեռների ընդհարման կետում, շրջափակելով մի փոքրիկ տարածություն, որը ձորից բավական բարձր է:

Այստեղ գտնվում է մի մեծ՝ 35 մ (15 ս) երկարության, 21,3 մ (10 ս) լայնության եւ մոտ 27,7 մ (13 ս) բարձրության քարայր, որի ձորահայաց կողմը բոլորովին բաց է:

Սա կարծես մի բնական սրահ լինի, որից դեպի բոլոր երեք կողմը բացվում են մեծ եւ փոքր արհեստական քարատակներ:

Սրան կից է նաեւ մի ուրիշ մեծ այր, որ ծառայելիս է եղել որպես եկեղեցի:

Սրա երկարությունն է 14,2 մ (6 ս. 2 արշ.), լայնությունը 9,2 մ (4 ս. 1 արշ.) եւ բարձրությունը՝ մոտ 12,8 մ. (6 սաժեն):

Սա ամբողջովին քերծի մեջ է եւ միայն ձորահայաց կողմից քարե պատ է շինված:

Եկեղեցին ունի մի սեղան, երկու փոքրիկ սրբատնով եւ երկու ավանդատուն, որոնցից հարավայինի մեջ փորված է ավազան: Իսկ մյուսը ծառայում է որպես գավիթ:

Եկեղեցուց բարձր կան ուրիշ քարատակներ եւս, որոնք հավանորեն միմյանց հետ հաղորդակցվում են, որովհետեւ դրսից շատ բարձր եւ բոլորովին անմատչելի են:

Եկեղեցու հանդեպ եւ վերին՝ հարթության վրա, կան գերեզմանաքարեր, որոնց վրա միայն խաչեր կան քանդակված»:

Անապատի ձորում երբեմն եղած պարիսպների մասին վկայում է նաեւ Ստեփան Լիսիցյանը (Զանգեզուրի հայերը, Երեւան-1969, էջ 87). *«...Հին Խնածախ գյուղի ձորում կառուցված են ուղին կապող պաշտպանական երկշար պարիսպներ: Ձորի մեկ ափից մյուսը փոխադրվողը ոչ պակաս դժվարությունների է հանդիպում»:*

Առաջին անգամ Անապատի ձորում եղանք 2011 թվակա-

Խաչի խութի խաչը՝ երկլեզվյա արձանագրությամբ

Գյուղի շրջապատի չորս բլրի վրա կանգնեցված՝ Ջումանց կալի (Մոթալ-ղայա բլրի) խաչքարը

Գործող գերեզմանատան խաչքարերից երկուսը

Բահավորի եկեղեցին, գտնվում է մայրուղի-Խանածախ ավտոճանապարհից մոտ 3 կմ արեւելք՝ մի բարձունքի վրա, մենավոր ծառի հարեւանությամբ: Վայրը խանածախցիները կոչում են Անապատի հանդ:

նին:

2012-ին՝ հավանաբար օգոստոսի 11-ին, տեղի ունեցած երկրաշարժից մեծ քարանձավի մուտքի մոտ քանդվածքներ առաջացան:

Հետագայում երախտապարտ խանածախցիներ Յուրիկ եւ Անդրանիկ Առաքելյան եղբայրների կողմից երկրաշարժի հետեւանքները վերացվեցին, եւ քարանձավն ու եկեղեցին բերվեցին նախկին տեսքին:

Բահավորի եկեղեցին

«Սյունյաց երկիրը» Բահավորի եկեղեցի այցելեց 2019 թ. նոյեմբերի 1-ին: Գնացինք Խանածախի Անապատի կիրճի հարավ-արեւմտյան կողմը շրջանցելով:

Մայրուղի-Խանածախ ավտոճանապարհից մոտ 3 կմ արեւելք է գտնվում այդ սրբավայրը՝ մի բարձունքի վրա, մենավոր ծառի հարեւանությամբ:

Վայրը խանածախցիները կոչում են Անապատի հանդ:

Մայրուղուց դեպի արեւելք շրջվելուց առաջ կանգ առանք Չալուկի խութ անվանյալ սրբավայրում, որտեղ եղած տասներեք խաչքարն այդ տեղանքին յուրօրինակ խորհրդավորություն ու նշանակություն են տալիս:

Մինչեւ օրս խանածախցի երիտասարդները բանակ են ճանապարհվում Չալուկի խութ սրբավայրից:

Բահավորի եկեղեցու հետ կապված մի ավանդազրույց կա, որ վերստին հիշեցինք այնտեղ: Հնարավոր չէ հիշել այդ ավանդազրույցը եւ չհուզվել, չխոնարհվել սրբատաշ քարերով կառուցված փոքրիկ եկեղեցու առջեւ, չհպվել Աստծո այդ տաճարի մուտքին հենված խաչքարերին...

Իսկ ի՞նչ է պատմում ավանդազրույցը:

Այդ հողակտորն իբր պատկանելիս է եղել մի գյուղացու: Նա բահը ձեռքին գնացել է հողը մշակելու եւ ցանքս անելու: Արեւի տակ ընկած սերմացուի պարկը ծածկել է շորով եւ սկսել աշխատել...

Հորից աննկատ դաշտ է գալիս գյուղացու մանկահասակ որդին եւ ծածուկ մտնում պարկը ծածկած շորի տակ:

Երբ մշակը գալիս է պարկը տանելու, նկատում է, որ շորի տակ ինչ-որ բան է շարժվում: Նրան թվում է, թե շարժվողն օձ է, եւ բահով ուժեղ հարվածում է՝ սպանելով որդուն:

Տարաբախտ գյուղացին այդ նույն վայրում եկեղեցի է կառուցում, որին ժողովուրդը կոչում է Բահավորի եկեղեցի:

17-րդ դարում կառուցված այդ եկեղեցին հարյուրամյակներ շարունակ հավատավոր խանածախցիների պաշտամունքային վայրերից է եղել:

Անուշավան Հովակիմյանի եւ Վահագն Հայրապետյանի վկայությամբ՝ մեր օրերում նույնպես հավատավոր խանածախցիներն ուխտագնացության են գալիս Բահավորի եկեղեցի, գալիս են նաեւ մատաղ անելու:

Վառված մոմի թանձր եւ թարմ հետքերը, որ

տեսանք եկեղեցու ներսում, վկայում են, որ Բահավորի եկեղեցին շարունակում է իրեն ձգել հավատավորներին...

Մի քանի տարի առաջ Բահավորի եկեղեցին վերականգնել է սիսիանաբնակ խանածախցի Մուրադ Միքայելյանը:

Մելիք-Հայկազն 2-րդի մատուռ -դամբարանը

2019 թ. հոկտեմբերի 25-ին «Սյունյաց երկիրը» հերթական անգամ այցելեց Մելիք Հայկազն 2-րդի գերեզման, որ գտնվում է Խանածախ գյուղում:

Արշավախմբի կազմում էին Ալվարդ Մեսրոպյանը, Սուրեն Վարդանյանը, Ռեդիկ Հայրապետյանը:

Դեռեւս 2013-ի մարտի 30-ին էր թողարկվել «Սյունյաց երկրի» հատուկ համար՝ նվիրված Մելիք Հայկազն 2-րդին:

Բախտ եմ ունեցել խոսք ասել այդ համարում՝ «Մելիք Հայկազն 2-րդ. այր հզոր եւ դյուցազնական, իշխան երկրիս ու պանծալի անուն» վերտառությամբ:

Այդ ժամանակ էր, որ երջանկահիշատակ Ռոբերտ Կամոյանը, մեր խնդրանքով, առաջին անգամ հայտնապատկերեց Մելիք Հայկազն Բ-ին:

Մելիքի պատկերը վերապատկերելու համար Ռոբերտ Կամոյանն առաջնորդվեց Ներսես Մոկացու հայտնի պոեմով՝ «Ներբողական գովեստի...»:

Հատկապես Արեւելյան Հայաստանի եւ մասնավորապես Սյունիքի ու Արցախի ուշ միջնադարյան երեք-չորս դարերի (15-18-րդ դարեր) պատմությունը հնարավոր չէ պատկերացնել առանց մելիքությունների:

Իսկ նշանավոր մելիքներից մեկը, եթե ոչ ամենանշանավորը, Մելիք Հայկազն 2-րդն էր, ով 17-րդ դարի առաջին կեսում եղավ հայոց ինքնիշխանության արժանապատիվ կրողը Սյունիքի մեծ մասում (Քաշաթաղ-Փոքր Սյունիք, Աղահեջք-Քաշաթաղ, Քաշաթաղ-Խանածախ, Քաշաթաղ-Ձագեձոր անվանումներով):

Մելիք Հայկազն 2-րդի իշխանությունը ճանաչել էր ժամանակի գերտերություններից մեկը՝ Սեֆյան Պարսկաստանը:

Ահա եւ Սեֆյան Շահ Աբբաս Ա-ի 1609 թ. հրովարտակը.

«Արքայական հրաման եղավ հետեւյալի մասին.

Լավագույն քրիստոնյա Քուշթասիֆի Մելիք Հայկազը նորին սրբությանը զեկուցեց, որ նախքան Գանջայի վիլայեթի՝ հաղթական պետության տիրապետության տակ անցնելը, մի խումբ հակառակորդի կողմն անցած մարդկանց եւ օսմանցիների, որոնք անցնում էին օսմանցիների երկիրը, ինքը բռնել եւ ուղարկել է բարձրագույն դուռը: Այժմ որոշ մարդիկ ցանկանալով վրեժխնդիր լինել այն գործերի համար, որոնք տեղի են ունեցել նախքան այս վիլայեթի՝ հաղթական պետության տիրապետության տակ անցնելը, հիշյալ մելիքին հետապնդում եւ անհանգստություն են պատճառում: Ուստի որոշեցինք, որ ոչ մի արարած չհամարձակվի օսմանցիների չարաբաստիկ ժամանակներում կատարած գործերի պատճառով հիշյալ մելիքին նեղություն տալ եւ անհանգստություն պատճառել, եւ թող զգուշանան անհնազանդությունից. այդպիսիք ենթակա են պատժի:

Ամեն դեպքում այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն եւ իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1017 թվականի զիկաադա ամսին (1609 թ. փետրվար 6-մարտի 7)»:

Ներսես Մոկացու պոեմի մասին արդեն իսկ ակնարկ եղավ:

Այդ պոեմում, որ հիանալիորեն վերլուծել եւ ընթերցողին է ներկայացրել անվանի գրականագետ, Սյունյաց աշխարհի նշանավոր դուստր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Աելիտա Դոլուխանյանը, Մելիք Հայկազն 2-րդը համեմատվում է առասպելական Տիգրանի հետ:

Խոսքը Տիգրան Երվանդյանի (Հայոց թագավոր մ.թ.ա. մոտ 560-535) մասին է, որ վարել է Հայաստանը Մարաստանի գերիշխանությունից ազատագրելու քաղաքականություն եւ վճռորոշ ճակատամարտում սպանել այդ երկրի թագավորին՝ Աստիագեսին (հայկական աղբյուրներում՝ Աժդահակ):

Հաղթական այդ մարտի շնորհիվ է ծնվել «Տիգրան եւ Աժդահակ» հին հայկական առասպելավիպական շարքին պատկանող առանձին վեպը՝ «Մեծն Տիգրանի վեպը»՝ ավանդված Մովսես Խորենացու «Հայոց պատմությամբ»:

Աժդահակին տապալած, Մարաստան հզոր պետությանը պարտության մատնելու գործում մեծ ավանդ ունեցած Տիգրանի հետ է համեմատվում Մելիք Հայկազն 2-րդը:

Ահա մի քանի տող Ներսես Մոկացու պոեմից.

«Նմանիլ Հայկազնին Տիգրան,
Որ յունաց յաղթող գտաւ
Եւ սկիւթացոց հիւսիսական,
Որոյ ի դիմի հարաւ
Քուրդըն մեծ՝ վիշապ Աժդահան»:

Ինչպես նշեցինք, Մելիք Հայկազն 2-րդին ժամանակին նվիրել ենք «Սյունյաց երկրի» մի ամբողջ համար:

Բայց ավելորդ չենք համարում վերստին հիշեցնել, որ 17-րդ դարի առաջին կեսում նա կարողացել է ոչ միայն ապահովել Սյունիքի անվտանգությունը, այլեւ...

Նրա հովանու ներքո է կառուցվել եւ գործել Հարանց (Սյունյաց) մեծ ու հռչակավոր անապատը, բնակեցվել Սյունյաց աշխարհի մի շարք գյուղեր, որ անմարդաբնակ էին դարձել, իսկ Սյունիքի մի քանի տասնյակ գյուղերում վերաշինվել եկեղեցիներ, որոնք կանգուն են մինչեւ այսօր:

Նրա նախաձեռնությամբ էին Սյունիքում եւ Արցախում կառուցվել բազմաթիվ անապատներ, որոնք այդ օրերում հոգեւոր-մշակութային բացառիկ դեր խաղացին հայոց մեջ: Եվ ոչ միայն Սյունիքի, այլեւ հայ ժողովրդի պատմության մեջ մեծ դեր խաղացած այդ անձնավորության, ռազմական ու պետական գործչի գերեզմանն այսօր գտնվում է ամոթալի վիճակում:

Դեռեւս խորհրդային տարիներին պղծել են այդ մատուռ-դամբարանը. մուտքի քարերն են հանել-տարել...

Գոնե ուշացումով կգտնվի՞ մեկը, որ մեր ազգային մեծերից մեկի՝ Մելիք Հայկազն 2-րդի մատուռ-դամբարանը կվերականգնի կամ դրա վերականգնումը կմտցնի պետական ծրագրերի մեջ:

Սյունյաց աշխարհի բոլոր ժամանակների ամենահզոր ռազմական ու պետական գործիչներից մեկն իրավունք ունի ունենալ գոնե սովորական մի տապանաքար, ինչպիսին ունենում են բոլոր մահկանացուները:

Syunjacyerkir.am կայքում 2019 թ. հոկտեմբերի 25-ին հրապարակվել է այդ մատուռ-դամբարան կատարած այցի արդյունքները:

Մատուռ-դամբարանի մասին հավելյալ տեղեկություններ է հաղորդում Ստեփան Լիսիցյանը (Զանգեզուրի հայերը, Երեւան 1969, էջ 216):

Ահա՝ *«Հետաքրքրական են մի բարդ քանդակազարդության վրա ներկայացրած հին կենցաղի մանրամասնությունները Խանածախ գյուղում թաղված Մելիք Հայկազի գերեզմանաքարի*

վրա: Այստեղ մի երեսին քանդակված է հանգուցյալը ձի հեծած, մի ձեռքին բազե, մյուսին՝ նիզակ. կողքին երեք մարդ, որոնցից երկուսը՝ մուրճեր, մեկը՝ նիզակ եւ տապար ձեռքները:

Տապանաքարի մյուս երեսին պատկերված է հուղարկավորություն երեք շարք քանդակներով ներկայացված: Վերին շարքում առջեւից գնում են հոգեւորականներ, երկրորդ շարքում՝ չորս մարդ տանում են դիակը նաժի վրա դրած, իսկ ստորին շարքում ինը կին հետեւում են՝ փետելով իրենց մազերը:

Այսպիսի պատկերավորումները հարուստ նյութ են տալիս նախորդ դարերի կենցաղի, մասնավորապես գործիքների ձեւերի, տնտեսական պարագաների, զգեստի մասին գաղափար կազմելու համար՝ նրանք նպատակ են ունեցել ներկայացնել հանգուցյալին նրան բնորոշ պարապմունքի եւ նիստուկացի մեջ: Այդպիսի նկարների ծագումը Գ. Ն. Չուրսինը ճիշտ է բացատրում որպես մնացորդ այն դարերից, երբ հանգուցյալի հետ թաղում էին նրա սիրած եւ գործածած առարկաները, այն հավատով, որ մյուս կյանքում նա շարունակելու է իր պարապմունքը եւ պետք կունենա այդ իրերի»:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Զանգեզուրի մի մասն անցավ Ռուսաստանի հովանու ներքո (այդ թվում՝ Խանածախը):

Գյուղը հանձնվեց ոմն թուրք Ռուստամ բեկին եւ նրա որդի Ասատ բեկին:

Սրանք էլ քանդում են (բայց ոչ լրիվ) Մելիք-Հայկազն երկրորդի դամբարանը՝ կառուցված 1662-ին:

Մելիք-Հայկազն երկրորդի մատուռ-դամբարանը կրկին պղծվեց 1930-ականներին:

Ըստ Ալեքսանդր Մուսայելյանի՝ դամբարանի մնացորդները եւ աստիճանները գյուղի օրվա իշխանությունների կողմից օգտագործվեցին գյուղամիջյան կամուրջը կառուցելիս:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Կառուցվել է 1610-ին՝ մանր սեւ քարերից, կրաշաղախ, թաղակապ տանիքով, զանգակատնով (շինված է 1905-ին):

Եկեղեցին կառուցվել է Մելիք-Հայկազն երկրորդի նախաձեռնությամբ:

Եկեղեցու նավակատիքին մասնակցել են եւ Մելիք-Հայկազն երկրորդը, եւ Մովսես Խոտանանցին, ով հետագայում դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս եւ

Չալուկի խութ անվանյալ սրբավայրը: Խանածախ-Գորիս ավտոմայրուղու արեւելահայաց բարձունքի վրա (Անապատի հանդի մերձակայքում) կա տասներեք խաչքար:



դասվեց հայոց ազգային-եկեղեցական սրբերի շարքը:

Եկեղեցու երկարությունը 20 մետր է, լայնությունը՝ 10 մետր, բարձրությունը՝ 8 մետր: Ճանգակատունը կառուցող վարպետը խնձորեսկցի Ջավադ Սարգսյանն էր:

1930-ականներին եկեղեցին դարձել էր գյուղի ակումբ, այնուհետեւ՝ կոլտնտեսության պահեստ: 1970-ականներին եկեղեցին պղծվել է՝ գողացել են կտուրի քարերը, որ հետագայում վերականգնվել է գյուղխորհրդի նախագահ Ալեքսանդր Մուսայելյանի կողմից:

Վերջին անգամ վերանորոգվել է 1990-ականներին՝ Արմեն Սիմոնյան եւ Գառնիկ Հովսեփյան խանածախցիների կողմից:

Քմախաչ կոչվող սրբավայրը

Սուրբ Հռիփսիմե եկեղեցուց մոտ 800 մ դեպի հյուսիս-արեւմուտք Քմախաչ սրբավայրն է: Դարեր շարունակ այնտեղ գտնվող ծառը սուրբ ծառ է համարվել, եւ ոչ ոք ձեռք չէր տալիս:

1930-ականներին այդ սրբավայրը նույնպես պղծվել է. գյուղական իշխանությունները կտրել են ծառը: Եվ, այդուհանդերձ, սրբավայրը մինչեւ հիմա էլ իրեն է ձգում հավատավոր խանածախցիներին: Այդ սրբավայրը նաեւ կոչվում է Դառի ձորի խաչ:

Գյուղը երիզող բարձունքների խաչքարերը

Գյուղի շրջապատի չորս բլրի վրա կանգնեցված են խաչքարեր: Դրանցից մեկի՝ Ջումանց կալի (Մոթալ-ղայա բլրի) խաչքարի մասին վերեւում ասացինք:

Երկրորդը՝ Բահավորի եկեղեցու ուղղությամբ (Յուղնատու բլրի վրա) գտնվող խաչքարն է, որը հնագետների կողմից դեռեւս ուսումնասիրված չէ:

Երրորդը՝ գյուղի արեւելյան ծայրամասում՝ բլրի վրա է, որը կոչվում է Խաչի խութ՝ երկլեզվյա արձանագրությամբ:

Ահա՝ **«ԵՍ ՀԱԽՆԱԶԱՐ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱԻՐԵՂԲԱՒՐ ԻՄ ՂՈՒԼԻՆ, ԹՎ.ՌԼ (1581)»**:

Չորրորդը՝ գյուղից դեպի հյուսիս բլրի վրա գտնվող խաչքարն է (Խանածախից Վաղատուր եւ Խոզնավար ձգվող ճանապարհի հարակից տարածքում):

Ահա խաչքարի արձանագրությունը՝ **«Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՇԱՀ ԱԲԱՍԻՆ ԵՍ ԱՂԱՆ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ՀԱՅԿԱԶԻՆ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԱՆՈՒԱՆԸՆ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԲԱՐԵԽՕՍ« ԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ, Ի ԹՎԿՍ ՀԱՅՈՑ: ՌԿԹ ԵՐԿՐԻՍ ՄՈՅԼՔՆ ՊՐՆ ՀԱՅԿԱԶԻՆ ԷՐ»:**

Սա արձանագրության հայերեն մասն է:

Գործող գերեզմանատան խաչքարերը

Գերեզմանի մուտքից անմիջապես աջ՝ փոքրիկ հարթության վրա, չորս խաչքար կա: Բոլորն էլ՝ կիսով չափ հողի մեջ ընկղմված, ինչի համար չենք կարող խոսել դրանց ժամանակի եւ արձանագրությունների մասին: Հավանաբար շատ հին են:

Աչքի են զարնում խաչքարերի բարձրարվեստ քանդակները: Հատկապես աննախադեպ է սապատավոր խաչքարը:

Կարծում ենք՝ դրանք սոսկ տապանաքարեր չեն, այլ պաշտամունքային քարեր:

Չալուկի խութ անվանյալ սրբավայրը

Խանածախ-Գորիս ավտոմայրուղու արեւելահայաց բարձունքի վրա (Անապատի հանդի մերձակայքում) կա տասներեք խաչքար:

Յուրօրինակ խորհրդավորություն եւ նշանակություն ունեցող այդ վայրն այսօր էլ կարեւոր սրբավայր է:

Ըստ գյուղի վարչական ղեկավար Անուշավան Հովսեփյանի՝ մինչեւ օրս խանածախցի երիտասարդները բանակ են ճանապարհվում Չալուկի խութ սրբավայրից:

Չալուկի խութ սրբավայրից ժամանակին մի խաչքար է բերվել գյուղ, որ հետագայում դրվել է դպրոցի բակում:

Վերջաբան

Հունվարի 5-ի օրվա վերջին հրաժեշտ տվեցինք Խանածախին:

Ռեդիկ Հայրապետյանի հետ ամփոփեցինք օրվա արդյունքները եւ հետադարձ հայացք ձգեցինք գյուղի պատմության մի քանի դրվագի:

Մեծագույն հարգանքով հիշեցինք Սպիտակ ձիավոր Ներսեսին՝ Խանածախ գյուղի բնակիչ, հարյուրապետ Ներսես Մեժլումյանին, ով 1918-20 թվականների դժվար օրերին ահ ու սարսափ էր թուրքերի համար:

Սակայն խմբապետ Ներսեսը, խորհրդային իշխանության հաստատումից հետո, Որոտան գետն անցնելիս, գնդակահարվեց թիկունքից՝ համագյուղացիների կողմից:

Ըստ լուսահոգի Լյուդվիգ Միքայելյանի (Խանածախ գյուղից)՝ Սպիտակ ձիավոր Ներսեսին, զինվորական պատիվներով հողին են հանձնել հայրենի գյուղի գերեզմանատանը:

Հիշեցինք Զորավար Անդրանիկի այցը Խանածախ, նրա հրամանատարությամբ Զաբուխի ձորում տեղի ունեցած հաղթական մարտերը, որից հետո Աշուղ Աթան երգ էր հորինել՝ նվիրված Անդրանիկ Զորավարին:

Ահա՝

«Անդրանիկ փաշան հասավ Զաբուղ գետին,
Բոլորդ եկեք օսմանցու վային,
Քշեց փաշան նրանց, սահմանից փախցրեց,
Սուսից մինչեւ Մարքիզ քարուքանդ արեց:
Չդիմացան օսմանցիք, գցեցին զենքերը,
Տեսան, որ իզուր է կռիվ անելը,
Սուս ու Մարքիզի դիրքերը թողած,
Դես ու դեն փախան քաջից սարսափած:
Կյանքդ թող երկարի, ով հզոր փաշա,
Այս ծանր օրերին եղար մեզ պաշտպան,
Օսմանցու միայն թիկունքը տեսար,
Քարավաններին բացիր ճանապարհ»:

(«Զանգեզուր» թերթ, 18 հունվարի 1990 թ.)

Զանգեզուրյան հերոսամարտի մեկ ուրիշ լեգենդար գործչի մասին հիշողություններ է փոխանցել Խանածախի պատմագիր, լուսահոգի Ալեքսանդր Մուսայելյանը:

Իսկ Գուսան Աշոտը «Քաջանց Սիմոն» երգ-բանաստեղծությամբ էր փառաբանել Թոփչի Սիմոնի հիշատակը:

Ահա մի քառատող այդ ստեղծագործությունից՝

«Ձեր փառքն ասեմ, քաջանց քաջեր,
Երկնահեղեղ կրակ շանթեր,
Կրծքով ամուր պատնեշ արիք,
Որ չխամրեն հայոց աստղեր»:

Մենք տպավորված էինք Ալեքսանդր կրտսեր Մուսայելյանով, ում բնակարանում հյուրընկալվեցինք, ով ուղեկցում էր մեզ այդ օրը, ով գյուղի իսկական տիրոջ զգացում ուներ եւ իր տիկնոջ ու մոր հետ խնամքով պահում է Ալեքսանդր ավագ Մուսայելյանի գրառումները գյուղի պատմության մասին, աջակցում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են ծանոթանալ գյուղի անցյալին եւ պաշտամունքային վայրերին...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 7

Ուխտագնացություն Արամազդի երկնահաս լեռնագագաթ, որ նաեւ սրբավայր է

Արամազդը գիտական գրականության մեջ շրջանառվում է նաեւ այլ անուններով՝ Արմազ, Արմազդ, Գազբել, Գազբույլ, Գազբույլք, Գյազբել... Դա լեռնագագաթ է Փոքր Կովկասի լեռնահամակարգում, Բարգուշատի լեռնաշղթայում, վերջինիս ամենաբարձր գագաթն է, ունի 3392 մ բարձրություն:

Լանջերը զառիթափ են՝ ծածկված ալպյան բուսականությամբ, բարձրադիր մասերը լերկ են՝ բռնված քարացրոններով:

Ղեւոնդ Ալիշանը Արամազդը նույնացնում է Կամբիլ լեռան հետ, որը ճիշտ չէ: Լեռնագագաթի արեւմտյան հատվածում է Արամազդի լեռնանցքը՝ Ողջի գետի հովիտը Գորիսի տարածաշրջանի հետ կապող ամենակարճ ճանապարհը:

Արամազդ լեռան հարավային լանջերից է սկիզբ առնում Արամազդ գետակը եւ ձախ կողմից միանում Գեղի գետին (Արամազդ գետակի երկարությունը 12

Սվարանց

կմ է):

◈ ◈ ◈

Մեր արշավախումբն Արամազդ լեռնագագաթ բարձրացավ 2019 թ. օգոստոսի 4-ին: Մեզ ուղեկցում էր Սվարանց գյուղի վարչական ղեկավար Արթուր Մարգարյանի որդին՝ Արա Մարգարյանը, ով սովորում է Երեւանի պետական համալսարանի աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետի մագիստրատուրայում:

Սվարանցից մինչեւ Սալ քար գնացինք Արթուր Մարգարյանի ամենագնացով: Այնտեղից ճանապարհը շարունակեցինք Բույան եւ Ջեյրան ձիերով:

Գնացինք Սվարանցից Սիսիանի Շենաթաղ տանող դաշտային ճանապարհով, որն անցնում է Գյազբելի հյուսիսահայաց կողմով:

Սվարանց-Շենաթաղ ջրբաժանից թեքվեցինք դեպի ձախ (հարավ):

Մինչ այդ եղանք Սվարանցի ուրթերից մեկում՝ ծվարած Արամազդի հյուսիս-արեւմտյան լանջին:

Նախրապանները տեղում չէին, անասուններն արոտի էին հանել:

Ուրթի մերձակայքում մի սառնորակ աղբյուր կար՝ Գյազի աղբյուրը, որտեղ մի փոքր կանգ առանք եւ հանգստացանք, քանի որ պետք է հաղթահարեինք բարձունքը:

Աղբյուրի մոտ մեզ միացավ ուրթի շներից մեկը, որին թոռնիկներս, արտաքին տեսքը նկատի ունենալով, Չալո անունը տվեցին: Զարմանալի բարեկամություն ստեղծվեց մեր արշավախմբի եւ Չալոյի միջեւ. մինչեւ վերջ մեզ մենակ չթողեց:

Սվարանց-Շենաթաղ ջրբաժանից դեպի լեռնագագաթ՝ մոտ 500-600 մետր, համեմատաբար դյուրին էր բարձրանալ: Ասում են, թե մի քանի տարի առաջ Սյունիքի մարզպետ Վահե Մաքսիմի Հակոբյանը փորձել է մեքենահարմար ճանապարհ բացել մինչեւ Արամազդի լեռնագագաթ՝ կարեւորելով այդ վայրերի նշանակությունը զբոսաշրջության համար, ինչպես եւ անզուգական արոտավայրերն արդյունավետորեն օգտագործելու նպատակով:

Դրանից հետո մեզ վիճակված էր բարձրանալ հազիվ նշմարվող արահետներով: Վերընթացի ճանապարհին ստիպված էինք հաղթահարել մի քանի գագաթներ կամ բարձունքներ: Ամեն անգամ թվում էր, թե երեւացող բարձունքից հետո կհասնենք Արամազդի լեռնագագաթին, բայց...մեր առջեւ նորանոր բարձունքներ էին հառնում...

◈ ◈ ◈

Ինչպես ասացինք՝ Բարգուշատի լեռնաշղթայի այդ ճյուղավորումը նաեւ Գյազբել է կոչվում: Եվ մի ամբողջ օր մենք Գյազբելի փեշերին էինք: Միայն այդ վայրերում լինելուց հետո կարելի է հասկանալ մեծն Համո Սահյանի հետեւյալ տողերի իմաստը.

«Այս տարի Գյազբելս չտեսա
Եվ չառա հոտը Գյազբելիս,
Գյազբելիս ամպերը չտեսա
Եվ չառա կարոտը Գյազբելիս,
Կենսագիր, թե միտքս կռահես,
Այս տարին իմ կյանքից կհանես»:

Առհասարակ Գյազբելը Համո Սահյանի ներշնչանքի հիմնական աղբյուրներից է եւ նրա ստեղծագործություններում ամենաշատ երեւացող տեղանուններից մեկը: Գյազբելի բանաստեղծականացումը Համո Սահյանի մոտ սկսել է դեռ ռազմաճակատում՝ «Ինձ Գյազբել սարի հովերն են կանչում»,

«Մուգ մանուշակներ Գյազբելասարի», «Գնամ մանկական սրինգս փնտրեմ»: Հետագայում նրա բոլոր ժողովածուներում Գյազբելը հանդես է գալիս որպես մշտական «գործող անձ»:

Այնպես որ՝ որքան էլ դժվար էր ուխտագնացությունը (ֆիզիկական իմաստով), մենք քանիցս հիշեցինք Համո Սահյանին եւ փորձեցինք Արամազդի փեշերին սահյանական պոեզիայից «ասմունքի փառատոն» անցկացնել...

◈ ◈ ◈

Սվարանցի Սալ քարից ճանապարհ ընկնելուց չորս ժամ հետո հասանք լեռնագագաթ: Ճանապարհին քանիցս համոզվեցինք, որ ուխտագնացության ենք ելել առանց պատշաճ նախապատրաստության. ամենից շատ ջրի կարիք էինք զգում, ձիերն էին հոգնել, բայց...

Կանաչավետ այդ տարածքները, իսկապես, բնության անկրկնելի տեսարաններ էին՝ ծածկված-պարուրված ալպիական փարթամ բուսականությամբ:

Արամազդը մեզ դիմավորում էր ամենատարբեր գույներով զգեստավորված: Նույնիսկ ձյան մի մեծ զանգված էր պահել մեզ համար՝ լեռնագագաթի հարավահայաց կողմում:

Մեր հիացմունքն ու զարմանքն ավելի խտացավ լեռնագագաթին: 3392 մ բարձրությունից երեւում էին Կապանի, Գորիսի, Սիսիանի գրեթե ամբողջ տարածքները: Միանգամայն նոր տեսքով ու վեհությամբ մեր առջեւ բացվեց Այունյաց աշխարհի ամենաբարձր գագաթը՝ Կապուտջուղը, որ այդ պահին սպիտակահեր էր, որն Արագածից հետո երկրորդ լեռնագագաթն է Հայաստանի Հանրապետությունում:

Արամազդի լեռնագագաթը երկծյուղ է: Արեւմտյան ծյուղը, ըստ ավանդության, Քրիստոսի լույսը ճառագելուց հետո, շարունակել է մնալ սրբավայր-ուխտավայր՝ մեր նոր դավանանքին համապատասխան: Դարերի փորձություններից հետո այդ ուխտավայրի սրբություններից որեւէ մասունք, ցավոք, չի պահպանվել:

Գագաթի արեւելյան ծյուղին երկաթյա խաչ է կանգնեցված: Կանգնեցված է 2001-ին՝ Հայաստանի քաղավիացիայի «Արամազդ» լեռնային ակումբի կողմից՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի կապակցությամբ: Կարելի է ենթադրել նաեւ, որ երկաթյա խաչն

Սվարանցի Սուրբ Հազարան փրկիչ եկեղեցին

Արամազդի գագաթ է հասցվել ուղղաթիռի օգնությամբ:

◈ ◈ ◈

Մոտ մեկ ժամ Արամազդի գագաթին մնալուց հետո բռնեցինք վայրընթացի ճանապարհը, թեեւ չափազանց հոգնած էինք, մանավանդ որ լեռնագագաթ հասնելու վերջին հանգրվանում դժվար էր նաեւ ձիերի համար, ու ստիպված էինք բարձրանալ ոտքով՝ մեզ հետ տանելով նաեւ ձիերին:

Վայրընթացի ճանապարհին պարզ դարձավ, որ նոր խնդիր է ծագել՝ ձիերը չափազանց դժվարությամբ են իջնում. հարկավոր էր սանձը բռնած, քարացցունքները շրջանցելով (քարերի վրայով, բնականաբար, ձիերը չէին անցնում), կեռ ու մեռ ոլորաններ գտնելով իջնել: Ձիերը հեծնել՝ անհնար էր ու վտանգավոր, մանավանդ որ նրանց սայթաքելու պատճառով երկու անգամ արդեն ցած էինք գլորվել:

Մարիամ եւ Սոֆի թոռնիկներիս օգնությունն այդ իրավի-

ճակում անգնահատելի էր. ես եւ Արա Մարգարյանն անընդհատ ստանում էինք նրանց աջակցությունը:

Արեւի հզոր ճառագայթներն էլ ոչ պակաս էին մեզ ուժասպառ անում (ասում են, չէ՞, որ սարերում արեւը «կծող» եւ «խփող» է լինում): Եվ մի պահ, չթաքցնենք, հուսահատ վիճակում էինք...

Սակայն... մեր աչքի առաջ Աղանձ գետակի միջին հոսանքում երեւացող ամպի մոլորված, ուշաթափված մի ծվեն-ծվիկ աստիճանաբար մեծացավ-մեծացավ, ահագնացավ եւ առաջացավ դեպի լեռնագագաթ՝ նվաճելով այն, որից հետո արշավելով դեպի Տատնա հովիտ:

Այնուհետեւ կատարվեց իսկական հրաշք՝ Արամազդի լանջին (մեզանից դեպի արեւելք)՝ երկնակամարում հայտնվեց ծիածան՝ կանաչ-կարմիր գույներով: Եվ, որ հետաքրքիր էր, բազմագույն աղեղնային գոտու՝ ծիածանի մեջ, երեւաց մեր ստվերը:

Կատակեցինք՝ Արամազդի խաչն է մեզ ազդանշան ուղարկել, լավ է լինելու... Այդ պահին զանգահարում է Սվարանցի վարչական ղեկավարը՝ Արթուր Մարգարյանը. որդին էր տեղյակ պահել, օգնության է գալիս, պարզապես պետք է ուժ հավաքել եւ հասնել Սվարանց-Շենաթաղ դաշտային ճանապարհ:

Արթուր Մարգարյանի ամենագնացը մեզ սպասում էր Գյազի աղբյուրի մոտ (ավելին չէր կարող բարձրանալ մեքենան): Վայրընթացի ճանապարհն անցնելու համար եւս չորս ժամ պահանջվեց, ինչպես վերընթացին...

Գյազի աղբյուրում մենք բաժանվեցինք Չալոյից: Մայրամուտը մոտ էր, իսկ մենք պետք է վերադառնայինք Սվարանց, ապա՝ Գորիս, ինչի պատճառով չհասցրինք վայելել նախարապան Հովիկ Մղումյանի առաջարկած մածունը:

◈ ◈ ◈

Ճամփորդության ընթացքում Արա Մարգարյանը մեզ տեղեկություններ էր հաղորդում գյուղի, ինչպես եւ մերձակայքի նշանավոր վայրերի մասին:

Դա էլ պատահական չէր. նրա մագիստրոսական թեզն է՝ «Սվարանցի երկաթի հանքավայրը», ու նաեւ դրանով պայմանավորված, որ մանրամասն տեղյակ է գյուղի հանդամասերին, մերձակա լեռնագագաթներին:

Գյուղի կենտրոնում է գտնվում Սուրբ Հազարան փրկիչ եկեղեցին, որը, ըստ ներսում գտնվող մի խաչքարի, կառուցվել է ՌՃԺԴ թվականին (1655-ին): Եկեղեցին հիմնանորոգվել է 2009 թվականին՝ համագյուղացի Վրեժ Գալստյանի եւ Արթուր Առաքելյանի ջանքերով:

Սվարանցից արեւելք մի լեռ կա՝ Ցուրաբերդն է, որից ոչ մի հետք չի մնացել:

Այս բերդագյուղը 10-րդ դարում ապստամբեց Տաթեւի վանքի դեմ. քանդեցին վանքը եւ մեռոնը թափեցին:

Իսկ Տաթեւի հոգեւոր իշխանությունը Այունյաց Սմբատ իշխանի օժանդակությամբ ավերեց-հողին հավասարեցրեց բերդագյուղը: Ոմանք պնդում են, թե Ցուրաբերդը կամ Ցուրաքարը Սվարանց գյուղն է: Եվ իբր ապստամբությունը ճնշելուց հետո է վայրը ստացել ներկայիս անվանումը:

Գյուղի մերձակայքում կան հին գյուղատեղիների հետքեր՝ Տաշու, Աղանձ...

Արամազդի հյուսիսահայաց լանջերից են սկիզբ առնում արցունքի զուլալություն ունեցող Սվարանց եւ Աղանձ

Արամազդ, Արամազ, Արմազդ, Գազբել, Գազբույլ, Գազբույլք, Գյազբել, Կազբել, Կազպել, Կասբել, Կասպել, Կարակայա, Մուրաշին, Մուրուշ, Մուրուշին, Բարգուշատի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթը (3392 մ): Ղեւոնդ Ալիշանը Արամազդին ենթադրաբար նմանեցնում է Կամբիլ լեռան հետ, որը ճիշտ չէ: Անվանումը ծագել է հեթանոս հայերի Արամազդ (պահլավերեն թարգ.՝ գերագույն իմաստություն) աստծո անունից:

գետակները, որ միախառնվում են՝ կոչվելով Ճաղացի (Ջրաղացի) գետ, որն էլ միանում է Տաթեւից իջնող Գինեկանին, ու միասին՝ Տաթեւի հարանց անապատի հարավային թեւում միախառնվում Որոտանին:

Արամազդի արեւմտյան փեշերից է սկիզբ առնում Տատնա գետակը:

Շենաթաղ գյուղից մինչեւ լեռնագագաթ, որտեղից սկիզբ է առնում Տատնա գետը, Տատնա հովիտն է...

◈ ◈ ◈

Ամիսներ են անցել այդ օրվանից, բայց Արամազդ սուրբ լեռնագագաթ բարձրանալու, լեռնագագաթի խաչի պատվանդանին մոմ վառելու եւ առ Աստված աղոթք բարձրացնելու հեքիաթային պահերը չեն մոռացվում ու չեն մոռացվի:

Անմոռանալի է նաեւ Արա Մարգարյան՝ իսկապես քաջ երիտասարդի, հրաշալի մարդու պահվածքը. այնտեղ, որտեղ դժվար էր ձիերի համար, ինքն անցնում էր զարմանալի թեթեւությամբ:

Ուշագրավ էր նաեւ նրա երգեցիկ ձայնը, երգում էր Ամենայն հայոց գուսան Աշոտի «Հով սարեր, մով սարեր»-ը, «Այունյաց սարեր»-ը... Հիմա սպասում ենք նրա հարսանիքին, խոստացել եմ անպայման մասնակցել: Նաեւ ծրագրել ենք կրկին բարձրանալ Արամազդ սուրբ լեռան գագաթ...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արամազդի լեռնագագաթին

ԵՐԹՈՒՂԻ 8

Քարաշեն գյուղը, որ Օրբելյան պատմիչի հիշատակած Մրկաքարն է կամ Կարբինքը (վերին կամ ներքին)

Սերո Խանզադյանն է պնդում, թե Քարաշենը Ստեփանոս պատմիչի հիշատակած Մրկաքար գյուղն է: Բանաստեղծ Արթուր Առաքելյանն էլ, ով ծագումով Քարաշենից է, հակված է կարծելու, որ դա Կարբինք վերինն է կամ Կարբինք ներքինը:

Երկու տեսակետն էլ, անշուշտ, ապրելու իրավունք ունեն: Բայց գիտական շրջանառության մեջ (խոսքը, իհարկե, ուշ շրջանի մասին է) Քարաշենն անվանվում է նաեւ Դաշքենդ, Կարաշեն, Տաշքենդ:

Գյուղը, անտարակույս, 18-րդ դարավերջին շեն գյուղ էր: Ըստ նոր հարկացուցակի (1781 թ.)՝ Տաթեւի վանքին տալիս էր 3300 դահեկան պտղի հարկ: Որոշ մասնագետներ էլ կարծում են՝ գյուղը հիմնադրվել է 1825-ից հետո (օրինակ Հ. Բահաթրյանը), որը ճիշտ չէ: Կարելի է ենթադրել, որ գյուղը 18-րդ դարավերջին ավերվել կամ գաղթի է ենթարկվել, իսկ 19-րդ դարասկզբին վերականգնվել:

Սերո Խանզադյանի հավաստմամբ՝ 1823-ին, երբ շրջակա գյուղերը գրեթե անմարդաբնակ էին, Քարաշենում 74 բնակիչ կար: Միաժամանակ՝ անհերքե-

լի է, որ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրից հետո Քարաշեն են եկել նաեւ Պարսկաստանից: Ավելին, Երվանդ Լալայանը, ով 1897-ին եղել է Քարաշենում, պնդում է, որ Քարաշենի բնակիչները «Պարսկաստանից գաղթականներ են», ընդ որում՝ Խոյից 1829-ին եկածներ:

Այդ ամենը, սակայն, չի ժխտում, որ Քարաշենը Սյունիքի հնամենի գյուղերից է: Հին քարանձավ-տներ, հողակտուրներով խրճիթներ, ներժայռային կառույցներ, մերձակայքում՝ հին գյուղատեղիներ (Հատկաշեն, Խաչեն)... Բայց Քարաշեն կատարած մեր այցի նպատակը գյուղի սրբավայրերին ծանոթանալն էր:

Մեր ստեղծագործական խմբի մեջ էին Ալվարդ Մեսրոպյանը, Սուրեն Վարդանյանը եւ Ռեդիկ Հայրապետյանը: Մեզ ուղեկցում էր գյուղի վարչական ղեկավար Գառնիկ Շահնուբարյանի որդին՝ Կարո Շահնուբարյանը:

Գորիս քաղաքից մոտ 10 կմ հյուսիս-արեւելք՝ Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի ձախ կողմում գտնվող գյուղում առաջինը բարձրացանք Խաչին խութը, որը նաեւ Մեծ խաչ են կոչում տեղացիները:

Մեծ խաչի եկեղեցին, որ նորոգված է, Սուրբ Գեւորգ անունն է կրում, ինչը հասկանալի դարձավ դռան կամարի վրա կատարված գրառումից: Եկեղեցին ՌՃՁ թվականի (1731 թ.) կառույց է: Դատելով ներսում առկա վառված մոմերի հետքերից, ուխտավորներ այդտեղ շատ են այցելում:

Սրբավայրը մի հետաքրքիր առանձնահատկություն էլ ունի: Այդտեղ մատաղ անելու եկած հավատավորները մատաղացու կենդանու (թռչունի) միսը եփում են մոտ հարյուր մետր հեռավորության վրա գտնվող (դեպի հյուսիս-արեւելք) աղբյուրի ջրով: Այդ աղբյուրին քարաշենցիներն անվանում են Վազան ճուր կամ Վզանին ճուր: Քարանձավային այդ կառույցը (Վզանին ճուրը) առերեւույթ մատուռ է հիշեցնում, բայց խորքում կա փոքրիկ ջրավազան (մոտ 1x1 մ չափսով): Թե որտեղ է հոսում ջրավազանի ջուրը՝ նկատելի չէ, բայց որքան էլ ջուր վերցնես՝ ջրի մակարդակը փոփոխության չի ենթարկվում:

Ռեդիկ Հայրապետյանը, որ քիմիայի եւ ֆիզիկայի ոլորտում գիտակ անձնավորություն է, երեւույթը բացատրեց ֆիզիկայի հայտնի՝ հաղորդակից անոթների օրենքով: Դրանում, մինչդեռ, մարդիկ խորհուրդ կամ առեղծված են

Հին Քարաշենի եկեղեցի: Մանր քարերով եւ կրաշաղախով կառուցված եկեղեցին փոքր զանգակատուն ունի: Ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում: Եկեղեցու անունը հայտնի չէ: Եկեղեցու անունը չգտանք նաեւ «Քարաշեն» գրքում

Աղբյուրը, որին քարաշենցիներն անվանում են Վազան ճուր կամ Վզանին ճուր: Քարանձավային այդ կառույցը (Վզանին ճուրը) առերեւույթ մատուռ է հիշեցնում, բայց խորքում կա փոքրիկ ջրավազան (մոտ 1x1 մ չափսով):

Հին Քարաշենում է ծնվել հայոց աշուղական արվեստի երեւելի դեմքերից մեկը՝ Աշուղ Աթան՝ Աթա Սահլյանը, 1852–1942 թթ., ով հայերեն ու պարսկերեն լեզվով հորինել է խրատական ու երգիծական երգեր:

Մեծ խաչի եկեղեցին, որ նորոգված է, Սուրբ Գեւորգ անունն է կրում, ինչը հասկանալի դարձավ դռան կամարի վրա կատարված գրառումից: Եկեղեցին ՌՃՁ թվականի (1731 թ.) կառույց է: Դատելով ներսում առկա վառված մոմերի հետքերից՝ ուխտավորներ այդտեղ շատ են այցելում:

տեսել...

Կա գրություն, որ վկայում է ջրավազանի՝ 1916 թ. կառուցված լինելու մասին: Կա նաեւ նոր գրություն՝ *«Այս ջրավազանը կառուցել է Հայրապետ Վարդազարի Աբրահամյանը 1916 թ., վերանորոգեց իր որդի Սարգիս Աբրահամյանը»:*

Մեծ խաչից իջանք Հին Քարաշենի Փոքր խաչ, այնուհետեւ՝ գյուղամիջի եկեղեցի: Մանր քարերով եւ կրաշաղախով կառուցված եկեղեցին փոքր զանգակատուն ունի: Ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում: Եկեղեցու անունը հայտնի չէ: Եկեղեցու անունը չգտանք նաեւ «Քարաշեն» գրքում (գիրքը գյուղի պատմության եւ նրա մարդկանց մասին է, հեղինակներն են՝ Սամվել Գալստյանը, Ռազմիկ Սարգսյանը, Երեւան-1986 թ.):

Հին Քարաշենի բարձունքից ավելի հմայիչ է երեւում Քարաշենի կամարակապ կամուրջը, որ կառուցվել է 20-րդ դարի 30-ական թվականներին: Այդ կամրջով էր անցնում Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղին: Կամուրջը կառուցվել է Քարաշեն գետակի վրա, որն աշնանային այս օրերին գրեթե անջուր էր (Իշխանասարի արեւելյան լանջերից սկիզբ առնող գետակը Ճաղացի ձորի մոտ միախառնվում է Կուրաթին, ասում են՝ գարնանը ջրառատ է լինում):

Այցելել Հին Քարաշեն եւ չհիշել գյուղի նշանավոր զավակներին, անհնար է:

Այդտեղ է ծնվել (1889 թ.) Միքայել Պարոնյանը: Պետերբուրգի համալսարանի բժշկական ֆակուլտետը 1916-ին ավարտած երիտասարդին էր վիճակված Սյունիքի պատմության դժվարին ժամանակաշրջանում 1918-20 թթ., գլխավորելու Զանգեզուրի ազգային խորհուրդը, համակարգելու Սյունիք ներխուժող թուրքերի դեմ հերոսական պայքարը, աջակցելու Զորավար Անդրանիկին, ով հազարավոր գաղթականների գլուխ անցած 1918 թ. հուլիսին հասել էր Սյունիք:

Հին Քարաշենում է ծնվել հայոց աշուղական արվեստի երեւելի դեմքերից մեկը՝ Աշուղ Աթան (Աթա Սաիլյանը), 1852-1942 թթ., ով հայերեն ու պարսկերեն լեզվով հորինել է խրատական ու երգիծական երգեր:

Հին Քարաշենում է 1924 թ. ծնվել մեծ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Մարգարյանը, ում հեղինակած գործերն առայսօր դասագրքեր են բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Արթուր Առաքելյանի վկայությամբ՝ Մելիք Հյուսեինյանների շառավիղներից մեկը ժամանակին բնակություն է հաստատել Քարաշենում. դա Պարոնյանների գերդաստանն է, որի մյուս ճյուղն էլ բնավորվել է Գորիս քաղաքում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 9

Հին Խոտ. ճարտարապետական սքանչելիք եւ սրբավայր

2019թ. օգոստոսի 24-ին «Սյունյաց երկիրը» ուխտագնացություն կատարեց Հին Խոտ...

Ս եզ հետաքրքրում էին գյուղի սրբավայրերը, ուստի եւ անդրադարձ չենք կատարի պատմական անցյալին, թեեւ գրավոր աղբյուրներում գյուղի մասին բազում հիշատակություններ կան:

Դեռեւս 4-րդ դարում Խոտը եղել է Սյունիքի բարեկարգ եւ գեղեցիկ գյուղերից մեկը:

1045 թ. Դլեն Խաղբակյան իշխանը Խոտ գյուղը նվիրել է Տաթեւի վանքին, որը կրկին անգամ հաստատել է Տարսայիձ Օրբելյանը՝ 1274-ին: Եվ այդ կարգավիճակը պահպանվել է մինչեւ 19-րդ դար:

Խոտը, ըստ էության, Սյունյաց աշխարհի ամենանշանավոր հեթանոսական վայրերից է: Երկու հուշարձան, այդ առումով, առավել շատ շարժեց մեր հետաքրքրությունը:

Առաջինը Հին գյուղի Խութի լանջի այգիներն են. այս վայրին գյուղացիները Մեհյան են անվանում, ինչը բառացիորեն նշանակում է հեթանոսական տաճար: Դա շատ հետաքրքիր հնավայր է, որ հետագայում փոխակերպվել է քրիստոնեական սրբավայրի (այդ մասին՝ քիչ անց): Ժողովրդի հիշողության մեջ մինչեւ հիմա պահպանվում է զրույցն այն մասին, թե ինչպես է Մեհյանը հրդեհի ճարակ դարձել:

Այդ դեպքից երկու տարի անց Սյունիք վերադարձած Բաբիկը (մեծն Վասակ մարզպանի որդին)՝ Շապուհ արքայից իշխանական տիտղոս ստա-

Խոտ գյուղը

Խոտի վանքից մոտ հարյուր մետր հարավ՝ բարձր ձորափին ավելի մոտ, գտնվում է Քամու խաչը՝ երեք դարավոր փռշնու հովանու ներքո:

Խոտի վանքի մոտ մի հնամենի թեղի կա՝ խոշոր փչակով: Տեղացիների մեջ պահպանվել է հիշողություն, որ թշնամու հարձակման ժամանակ հենց այդ փչակում են թաքցրել վանքում գտնվող Ավետարանը

ցած, Մեհյանի տարածքը, Խոտագետի այգիները կտակել է Խոտ ավանի եկեղեցուն (վանքին):

Երկրորդ հեթանոսական հուշարձանը, որ բացառիկ է, Սպիտակ քերծ բնակատեղին է (Պիկատեղ-Բակատեղ), որտեղ պահպանվել են կիկլոպյան կառույցներ, պարսպի հետքեր: Դա ներկայիս գյուղատեղիից Որոտան գյուղ իջնող ճանապարհի վրա է՝ գյուղից մոտ մեկ կմ հեռավորության վրա:

Բայց Խոտը ոչ պակաս հարուստ է քրիստոնեական սրբավայրերով: Նոր գյուղից հարավ-արեւմուտք (Հին գյուղից հյուսիս-արեւմուտք)՝ բարձր ձորափի վրա է գտնվել Խոտի վանքը (եկեղեցին):

Պահպանվում են եկեղեցու հիմքերը: Ըստ երեւույթին կառուցվել է 4-5-րդ դարերում: Ղեւոնդ Ալիշանի կարծիքով՝ վանքը Սուրբ Աստվածածին անունն է կրել: Սերո Խանզադյանի կարծիքով՝ այդտեղ է գտնվել Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Արքոյն գյուղը:

Հին Խոտի գյուղամիջի եկեղեցին

Կիժ (գիժ կամ գույժ) կոչվող քարափը

Արամայիս Սարգսյանի կարծիքով՝ այդտեղ է գտնվել Խոտ ավանը, որն ընդգրկել է Մեծ հայրենականում զոհված խոտեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանից (ներկայիս գյուղատեղիում) մինչեւ Կիժ (գիժ կամ գույժ) կոչվող քարափ:

Խոտի վանքի շուրջ դարերի ընթացքում բազում լեգենդներ են հյուսվել: Ասում են՝ եկեղեցին ունեցել է մեծ եւ հզոր ձայնով պղնձե զանգ: Նրա ղողանջը հասել է հարեւան գյուղեր: Այդ զանգի հետ են կապում Զանգեզուր անվան ծագումը (վարկածներից մեկն է): Իբր՝ երբ թշնամին փորձել է ասպատակել մեր երկիրը, որպես ահազանգ հնչեցրել են եկեղեցու մեծ զանգը: Նրա ձայնը լսելով՝ մարդիկ զինվել են եւ դիմագրավել թշնամուն:

Ոսոխներն ի վերջո կաշառել են եկեղեցու ժամկոչին, գաղտագողի հարձակվել ու նվաճել երկիրը, ավերել եկեղեցին... Ասում են նաեւ՝ երբ թշնամու ներխուժումից հետո քնաթաթախ մի հոգեւորական փորձել է հնչեցնել եկեղեցու զանգը, ասել են՝ զանգը զուր է...

Մինչեւ հիմա Խոտի վանքի մոտ մի հնամենի թեղի կա՝ խոշոր փչակով: Տեղացիների մեջ պահպանվել է հիշողություն, որ թշնամու հարձակման ժամանակ հենց այդ փչակում են թաքցրել վանքում գտնվող Ավետարանը:

Խոտի վանքից մոտ հարյուր մետր հարավ՝ բարձր ձորափին ավելի մոտ, գտնվում է Քամու խաչը՝ երեք դարավոր փռշնու հովանու ներքո:

Հաջորդ սրբավայրը, որի հետքերն են միայն պահպանվել, Խորուձոր անապատն է, որ գտնվել է Հին գյուղից հարավ-արեւելք՝ Խոր ձոր կոչվող վայրում, Խոտագետի աջ ափին, որի մասին նույնպես ժողովրդական անգիր զրույցներ են պահպանվել:

Քիչ առաջ նշեցինք Մեհյանի (հեթանոսական տաճարի) մասին: Հետագայում՝ հավանաբար 12-րդ դարում, այնտեղ կառուցվել է Կարմիր եկեղեցին, որի հիմքերը չկան, իսկ շուրջը հին գերեզմանոց է՝ բազմաթիվ խաչքարերով: Այդ խաչքարերի գրությունները մասամբ ներկայացրել եւ վերծանել է հնագետ Սեդրակ Բարխուդարյանը՝ «Դիվան հայ վիմագրության» գրքի երկրորդ պրակում:

Հին գյուղից վերեւ՝ ահռելի ժայռի ստորոտում է գտնվում Մրքըծորի եղցին, որը նաեւ Մրքաձորի (Մրգաձորի) խաչ կամ եկեղեցի է կոչվում՝ կառուցված 1700-ին: Ենթադրվում է, թե այդ

Նոր գյուղից հարավ-արեւմուտք՝ (Հին գյուղից հյուսիս-արեւմուտք բարձր ձորափի վրա է գտնվել Խոտի վանքը (եկեղեցին):

Մրքըծորի եղցին, որ նաեւ Մրքաձորի (Մրգաձորի) խաչ կամ եկեղեցի է կոչվում

եկեղեցին է, որ կառուցել է տվել Շահ Աբասի հարեմից փախած մի կին:

Մրգաձորի եկեղեցու մասին միանգամայն այլ կարծիք են հայտնել Գորիսի պետական համալսարանի դասախոսներ Սերգեյ Հախվերդյանը եւ Գայանե Շաբունցը (Հայագիտական ուսումնասիրություններ, N7, 2016 թ.):

Ըստ նրանց՝ «Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությանը» կից հարկացուցակում Հաբանդ գավառում հիշատակվում է Մարգաձոր... բնակավայրը:

Ներկայումս Խոտ եւ Շինուհայր գյուղերի միջեւ՝ դեպի Որոտան իջնող մի տարածք կա, որ հայտնի է Մրգաձոր (բարբառով՝ Մրքաձոր) անունով եւ մտնում է Խոտ գյուղի հողատարածքի մեջ: Կարելի է եզրակացնել, որ դա Ստ. Օրբելյանի՝ Խոտ գյուղի հարեւանությամբ հիշատակած Մարգաձորն է...

Մրգաձորի եկեղեցին հսկա, մի քանի տասնյակ մետր բարձրություն ունեցող ուղղաձիգ ժայռի ստորոտին խխունջի պես կպած սագաշեն, ոչ մեծածավալ շինություն է, որը պատերի քարերի գույնով մերվել է տեղանքին:

Եկեղեցու երկարությունը 10 մ է, լայնությունը՝ 6 մ, մուտքի պատի հաստությունը՝ 90 սմ»:

Վարկածի հեղինակները հերքում են տարածված տեսակետը, թե այդ եկեղեցին կառուցել է Շահ Աբասի հարեմից փախած կինը:

Ավանդության հիշատակության մեջ, նրանց կարծիքով, իրական է միայն այն, որ եկեղեցին կառուցողների մեջ եղել է մի կին՝ հայ իշխանուհի կամ ավելի ճիշտ՝ մելիքուհի, ինչը երեւում է եկեղեցու դռան բարավորի հստակ ընթերցվող արձանագրությունից. **«ԵՍ**

Հին գյուղի Խութի լանջի այգիներն են. այս վայրին գյուղացիները Մեհյան են անվանում

ՊԱՐՈՆ ՊՀԱԹՈՒՐ ՊԱԿՍ, ՈՐԴԻ/ ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ, ՈՐ ԵՄՔ ՅԵՐԿՐԷՆ ՔԱՇԻԹԱՂՈՒՑ, ԳԵՂՋԷՆ ԽԱՆԱԾԱ ԽԱ ԵՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ՄԱՀՓԱՐԻՆ ՇԻՆԵԼ ՏՈՎԻՆՔ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ: Ի ԹՎԻՆ: ՌՃԽԹ»:

Այսպիսով՝ Մրգաձորի եկեղեցին շինել են տվել Խանածախ գյուղում ապրող Քաշաթաղի Մելիք Հախնազարի որդի Բահադուր բեկը եւ նրա մայրը՝ Մելիք Հախնազարի կին Մահփարին՝ 1700 թվականին:

Մրգաձորի եկեղեցու պատի շարվածքի մեջ հայտնաբերվել է երկար ու նեղ սալքարի վրա արված արձանագրություն, որը տակավին սպառիչ ընթերցված չէ...

Հին Խոտում կանգուն է գյուղամիջի եկեղեցին, որի անունը մեզ չհաջողվեց գտնել: Նեղ պատուհանի վրա (մուտքից վերեւ) երկու խաչքար կա (իբրեւ բարավոր) պատի մեջ (հավանաբար մինչ այդ տապանաքար են եղել եւ օգտագործվել են այդ եկեղեցու վերաշինման ժամանակ): Ներսից ընթեռնելի է խաչքարերից մեկի գրությունը՝ «...թվ ՊԾԸ...» (1409 թ.): Բայց դռան բարավուրին դժվար ընթեռնելի տառեր են՝ «թվ ՉԽԱ » (1292 թ.):

* * *

Հին Խոտի տների մի մասը պահպանվել է նախնական տեսքով, բայց առանց տանիքի: Քարակամար թաղերով տներ են: Ճիշտ է ասված՝ ճարտարապետական սքանչելիք է Հին Խոտը:

Հսկա ընկուզենիների, թթենիների ընդարձակ այգիները, սակայն, անտերության են մատնվել 1990-ականների սեփականաշնորհումից հետո, չնայած գյուղամիջով ամռանը հոսում է Խոտագետը, եւ ոռոգման ջրի կարիք չկա այնտեղ: Խոտագետ ասվածը, այդուհանդերձ, իր մեջ չափազանցություն է պարունակում:

Վաղնջական ժամանակներից գոյություն ունեցող այդ գետը, որի մասին քանիցս հիշատակում է Ստեփանոս պատմիչը, որի հետ է կապվում Խոտագետ ու Հին Խոտ բնակավայրերի գոյությունը, ինչպես եւ Խոտագետի այգիների երբեմնի փառքը, 1960-ականների վերջին ցամաքեց:

Տաթեւիէկի համար կառուցված թունելն անցնում է այդ տարածքով. Որոտան գետն այդ թունելով է հասնում Խազալկապի ջրամբար: Եվ այդ թունելի կառուցման ժամանակ էլ Խոտագետը ցամաքել է, քանի որ գոյանում էր Ծլտհանի ձորի զառիթափ ժայռից բխող աղբյուրներից, որոնք ցամաքել են թունելի կառուցման հետեւանքով:

Խոտագետի հունով հիմա հոսում է միայն թունելից բաց թողնված ջուրը (Հին Խոտի այգիները ոռոգելու նպատակով): Ասում են՝ չչորանար Խոտագետը՝ գուցե եւ Հին Խոտը 1967-ին կիրճից չբարձրանար...

Հին Խոտի նկատմամբ հետաքրքրությունը (եւ հնագետների, եւ զբոսաշրջիկների) ավելի մեծ կլիներ, եթե ճանապարհը տեղ-տեղ այդքան վտանգավոր չլիներ:

Միայն Վրույր Հակոբյանի նման համարձակ վարորդները կարող են մեքենայով, վստահությամբ, այդ ճանապարհով իջնել կիրճ եւ վերադառնալ: Իսկ մեզ ուղեկցող Կամո Վարդանյանը քաջատեղյակ է գյուղի պատմության ամեն մի դրվագի:

Զորն իջնելիս նախ ցույց է տալիս Կիժի թառը, ապա գյուղի մուտքի մոտ գտնվող Խանումի ձուղուպերին, որի կողքից էր Խոտ գյուղն իր զավակներին ճամփում Հայրենական մեծ պատերազմ, իսկ հետագայում՝ խորհրդային բանակ...

Հիմա Խանումի ձուղուպերուց միայն բունն է մնացել՝ մոտ 6-7 մ պարագծով:

* * *

Պարզվում է՝ Խոտում՝ ժողովրդի հիշողության մեջ պահպանվել են բազում զրույցներ՝ դարերի խորքից եկող: Ավանդազրույցներից մի քանիսն արդեն ներկայացրինք, բայց դրանք այնքան շատ են ու այնքան հետաքրքիր, որ խոսակցության առանձին նյութ կարող են դառնալ:

* * *

Հետդարձի ճանապարհին Կամոն ու Վրույրը պատմում էին նորօրյա Խոտ գյուղի մասին, որ հիմնադրվել է 1960-ականների վերջին:

Ուրախությամբ փաստեցին, որ գյուղն ապահովված է ոռոգման ջրով, խմելու ջրով՝ նորացված ներքին ցանցով, բնական գազով, ունեն մշակույթի նորոգված կենտրոն:

Գյուղի հիմնական մտահոգությունը ճանապարհն է՝ Շինուհայր-Խոտ խաչմերուկից մինչեւ գյուղ, որ 1,8 կմ է...

Վարչապետը խոստացել է հիմնանորոգել այդ ճանապարհը, իրենք էլ հավատով սպասում են...

Հ.Գ. «Այունյաց երկրի» խմբագրությունը շնորհակալություն է հայտնում Տաթեւ համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանին, Խոտ գյուղի վարչական ղեկավար Մարտիրոս Գրիգորյանին, ինչպես եւ Կամո Վարդանյանին ու Վրույր Հակոբյանին՝ մեր ուխտագնացությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Սամվել Ալեքսանյան
Լուսանկարները՝
Սոնա Արզումանյանի

ԵՐԹՈՒՂԻ 10

Անհիշելի հին, բայց եւ հավերժող Շինուհայրի պաշտամունքային վայրերը

«Ալխտագնացութուն Սյունիք» ծրագրի շրջանակում Շինուհայր այցելեցինք երկու անգամ՝ 2019-ի սեպտեմբերի 15-ին եւ հոկտեմբերի 5-ին:

Երկու դեպքում էլ մեզ ուղեկցում էր գյուղի մերօրյա տարեգիր, եռանդուն բանահավաք եւ հրաշալի մարդ Ժորա Մանուցյանը:

Առաջին անգամ Հին Շինուհայր գնացինք Կարո Բարսեղյանի, երկրորդ անգամ՝ Արշակ Պետրոսյանի մեքենայով:

Հին Շինուհայրը ժողովրդական ճարտարապետության իսկական թանգարան է. մոտ 500 ղաբ եւ ղարադամ դեռ պահպանվում են՝ կանգուն վիճակում:

Մենք նախ՝ գյուղի կենտրոնում՝ Սուրբ Ստեփանոսի բակում՝ Բալերի (Գրիգորի) 150-ամյա թթենու տակ, հանգիստ առանք եւ զրուցեցինք գյուղի անցած ճանապարհի շուրջ:

Մինչեւ 1960-ական թվականները, երբ գյուղը վերջնականապես տեղափոխվեց Կոթիկ կոչվող հարթավայր, այստեղ էր անհիշելի ժամանակներից եկող Շինուհայրը:

Ժամանակին գյուղ են այցելել Աբրահամ Կրետացի եւ Խրիմյան Հայրիկ կաթողիկոսները:

Մինչեւ Կապանի Հալիձոր մեկնելն այստեղ է եղել Դավիթ-Բեկի նստավայրը: 1918-ին գյուղ է այցելել Զորավար Անդրանիկը՝ հիացած շինուհայրցիների ռազմական խիզախությամբ:

Գյուղում ուսուցչություն են արել Ակսել Բակունցի կինը՝ տիկին Վարվառան, Սերո Խանզադյանը: Գյուղում են ծնվել Զանգեզուրի ազատագրական պայքարի (20-րդ դարասկիզբ) առաջնորդներից Արշակ Շիրինյանը, որը հողին է հանձնվել Գորիս քաղաքի ներկայիս զբոսայգու հարավ-արեւմտյան

Շինուհայր, Հայրաշեն, Շենուհայր, Շենհեր, Շենուհայր, Շընհեր, Շընհերք, Շինահայր, Շինհեր, Շնհեր, Շնոհերք. այսպիսի եւ մի շարք այլ անուններով գյուղը հիշատակվում է մատենագրության մեջ:

Կուսանաց անապատ՝ կենտրոնում Սուրբ Աստվածածին եկեղեցին

անկյունում (երբեմնի Ռուսաց ժամի բակում): Շինուհայրում է ծնվել Հայաստանի երկրորդ Հանրապետության առաջնորդներից Սուրեն Թովմասյանը (Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար):

Այստեղ են ծնվել ակադեմիկոսներ Լենդրոշ Խուրշուդյանը, Հրաչիկ Սիմոնյանը: Շինուհայրում հիշում են նաեւ Աղասի Խանջյանին եւ Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին, որ 1931 թ. ապրիլի 28-ի երկրաշարժից հետո այցելեցին նաեւ Շինուհայր եւ խորհուրդ տվեցին գյուղացիներին՝ տեղափոխվել Կոթի տափ (ներկայիս գյուղատեղի), որտեղ էլ իրականացվեց բնակելիների շինարարություն, ինչը, սակայն, կիսատ մնաց:

Պատմական համառոտ ակնարկ

Շինուհայր, Հայրաշեն, Շենուհայր, Շենհեր, Շենուհայր, Շընհեր, Շընհերք, Շինահայր, Շինհեր, Շնհեր, Շնոհերք. այսպիսի եւ մի շարք այլ անուններով գյուղը հիշատակվում է մատենագրության մեջ:

Մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Հաբանդ գավառի մեջ:

Դավիթ-Բեկի բերդը: Դավիթ-Բեկի ծննդավայրի հետ կապված բազմաթիվ վարկածներ կան: Շինուհայրի վարկածի մասին ամբողջական տեղեկություն է տալիս պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նշանավոր շինուհայրեցի Խիկար Բարսեղյանը (Այսպես ապրեցին, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան 1985 թ.):

Նախկին գյուղը տեղադրված էր Որոտանի ձախափնյա զառիվեր լանջերին, որոնք կտրտված են ձորակներով:

Գրավոր աղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարասկզբից:

Ըստ Ստեփանոս պատմիչի հիշատակած հարկացուցակի՝ 24 չափ հարկ

է վճարել Տաթեւի վանքին, ինչը վկայում է, որ այն ոչ միայն Սյունիքի, այլեւ Հայաստանի մեծագույն գյուղերից մեկն է եղել:

Գյուղը նախապես պատկանել է Սյունյաց իշխան Փիլիպեին, ապա նվիրել է Տաթեւի վանքին, որը կրկին հաստատել է Տարսայիձ Օրբելյանը՝ 1274-ին: Մինչեւ 19-րդ դարը համարվել է Տաթեւի վանքի սեփականություն:

Գյուղի մոտակայքում, հատկապես հին գյուղի տարածքում բխում են բազմաթիվ սառնորակ աղբյուրներ:

Գյուղից ներքեւ՝ Որոտան գետի հովտում տարածվում են մրգատու այգիներ:

1960-ականներին գյուղը տեղափոխվել է հին գյուղից հյուսիս գտնվող սարավանդ:

Շինուհայրն ունեցել է նաեւ պաշտպանական նշանակություն: Հատկապես 18-րդ դարում այն հուսալի բերդագյուղամրոց էր:

Հին գյուղից դեպի արեւելք տանող լեռնային կածանի վրա՝ բարձր ժայռի մեջ, կառուցված է մի ամրոց-տնակ, որի պատերի մեջ կան տարբեր ուղղության անցքեր, որոնցով հսկել են ճանապարհները:

Զառիթափի լեռնալանջով դեպի արեւելք՝ դեպի Խոտ գյուղ է ձգվում մի ժայռափոր թունել՝ մոտ 200 մ երկարության: Ըստ Ժորա Մանուցյանի՝ թունելը փորել են լեռնաշերտում եղած ջրերը հավաքելու եւ օգտագործելու համար:

Դավիթ-Բեկը՝ Շինուհայրի՞ց

Դավիթ-Բեկի ծննդավայրի հետ կապված բազմաթիվ վարկածներ կան:

Նրան ազգակից լինելու պատվի համար միմյանց հետ վիճում են Կապանի հին տոհմերից Մելիք-Փարսադանյաններն ու Օրբելյանների Տաթեւի ճյուղը:

Վարկածներից մեկն էլ առնչվում է Շինուհայրին, թեեւ «Ընտիր պատմությունը» քանիցս հիշեցնում է նրա «մծխեթացի» կամ «մծխիթացի» ի հայկազեան տոհմ է»:

Շինուհայրի վարկածի մասին ամբողջական տեղեկություն է տալիս պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նշանավոր շինուհայրեցի Խիկար Բարսեղյանը (Այսպես ապրեցին, «Հայաստան» հրատարակչություն, Երեւան 1985 թ.):

Ահա՝ «Մեր գյուղի նշանավոր մարդկանցից է Սյունիքի ազատագրական շարժումների ռահվիրա Դավիթ-Բեկը (ծնվել է 1674 թ., տես Մ. Չամչյան, Խրախճան պատմության հայոց, Վենետիկ, 1811, էջ 464):

Վրաստանից Սյունիք գալուց հետո 1722 թվականին Շինուհայրի Սուրբ Ստեփանոս եկեղեցու սյունազարդ դահլիճում է գումարել առաջին ժողովը՝ ապստամբության դրոշ պարզելու վճռով:

Դավիթ-Բեկը Շինուհայրի տանուտեր Ալիխանի տղան էր:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, պահվում է «Հիշատակարան Միքայել բեկ Լալաբեկյանի» գործը: Այնտեղ ասված է՝ «Մեր այս զանգեզուրցիք սեւերես լինելով, դիմել են վրաց իշխանին, վրաց իշխանը նշանակել է Շինհերցի Տավիթ-Բեկին, չորս հարյուր հայ զորքի հետ» (տես Մատենադարանի ձեռագրերի ֆոնդ, ձեռագիր 7429, թ. 3031)»:

Ըստ Ղուկաս Սեբաստացու «Դավիթ-Բեկ կամ պատմություն Ղափանցոց» գրքի (թարգմանությունը՝ Արշակ Մադոյանի)՝ «...Նախ Դավիթը Եռաբլուրում հարվածեց ղարաչոռլու կոչված թուրքերին, ապա գնաց բանակեց Շնհեր կոչվող

«Խաչեր» գերեզմանատան եզակի խաչքարը

ամրոցում: Եվ իր մոտ կանչելով Տաթեւի առաջնորդին, պատմեց նրան, թե ինչ գործով, ինչ նպատակով է եկել, եւ ասում է՝ «Այս երկրից իսպառ ջնջելու եք բոլոր օտարերկրացիներին»: Եվ խմբեց շուրջը Շնհերի տղամարդկանց, զարկեց-ասպատակեց թուրքերի գյուղերը եւ գրավեց նրանց ունեցվածքը»:

Շինուհայրի հետ Դավիթ-Բեկի առնչություններն այնքան շատ են, որ կարելի է դարձնել առանձին ուսումնասիրության առարկա:

Այստեղ է նա բանտարկել Տաթեւի Դավիթ ուրացող մելիքին: Այստեղ է նա բանտարկել Մելիք Փարսադանին եւ Տեր Ավետիսին:

Շինուհայրը՝ գրչավայրը

Գյուղը, կարելի է ստույգ արձանագրել, Սյունիքի այն բնակավայրերից է, որտեղ միջնադարում գրվել են բազմաթիվ ձեռագրեր:

Դրանք, անշուշտ, ուսումնասիրության առանձին թեմա կարող են դառնալ, մանավանդ որ պարունակում են տեղեկություններ ոչ միայն Շինուհայրի, այլեւ ամբողջ Սյունիքի մասին: Ուշագրավ է նկատել, որ Շինուհայրում՝ գրչության արվեստում մեծ հետք են թողել նաեւ կանայք՝ Մարգարիտը, Մարիամը, Երինեն, Հեղինեն, Հռիփսիմեն, ուրիշներ:

Առայժմ ներկայացնենք այն ձեռագրերի ցանկը, որ պահպանվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Ձեռագիր N 1455, բովանդակությունը՝ Գրիգոր Տաթեւացու «Ոսկեփորիկը», «Քարոզգիրքը», թվականը՝ 1673 թ., գրիչը՝ Մարիամ:

Ձեռագիր N 2608, բովանդակությունը՝ ժողովածու, թվականը՝ 1635 թ., գրիչը եւ ստացողը՝ Հովհաննես:

Ձեռագիր N 3720, բովանդակությունը՝ Ավետարան, թվականը՝ 1631 թ., գրիչը՝ Ղազար:

Ձեռագիր N 4088, բովանդակությունը՝ Ժամագիրք, Սաղմոսարան, Տոնացույց, թվականը՝ 1673 թ., գրիչը՝ Երինե:

Ձեռագիր N 4260, բովանդակությունը՝ Ավետարան, թվականը՝ 1666 թ., ստացողը՝ Ղասումձան:

Ձեռագիր N 5676, բովանդակությունը՝ Ներսես Շնորհալի, Բանք չափավ, թվականը՝ 1624 թ., գրիչը՝ Պողոս, ստացողը՝ Ռստակես վարդապետ:

Ձեռագիր N 5964, բովանդակությունը՝ Շարակնոց, թվականը՝ 1642 թ., գրիչ՝ Ղազար:

Ձեռագիր N 6814, բովանդակությունը՝ Ավետարան, թվականը՝ ԺԷ դար, գրիչը եւ ծաղկողը՝ Եփրեմ քահանա, ստացողը՝ Մարիամ Ագուլեցի:

Ձեռագիր N 6991, բովանդակությունը՝ Ավետարան, թվականը՝ 1634 թ., գրիչ՝ Ղազար քահանա, Հովհաննես, ծաղկող՝ Ղազար քահանա գրիչ, ստացող՝ պարոն Ջիլավ, Հովսեփ քահանա:

Ձեռագիր N 7112, բովանդակությունը՝ Շարակնոց, թվականը՝ 1654 թ., գրիչը եւ ստացողը՝ Աստվածատուր քահանա:

Ձեռագիր N 7300, բովանդակությունը՝ Ավետարան, թվականը՝ 1655 թ., գրիչը՝ Ղազար քահանա, ստացող՝ տանուտեր Աղաջան

Ձեռագիր N 8513, բովանդակությունը՝ Ավետարան, թվականը՝ 1694 թ., գրիչը ու ստացողը՝ Հռիփսիմե:

Ձեռագիր N 8597, բովանդակությունը՝ Ներսես Շնորհալի, Բանք չափավ եւ Հանելուկք, թվականը՝ 1650 թ., գրիչը՝ Մարինոս:

Հին գյուղի կենտրոնում գտնվող Սուրբ Ստեփանոս եկեղեցին

Սուրբ Ստեփանոս եկեղեցի

Գտնվում է հին գյուղի կենտրոնում:

Ըստ Ժորա Մանուցյանի՝ կառուցվել է 4-րդ դարում:

12-րդ դարում, երկրաշարժի հետեւանքով, ավերվել է, իսկ 17-րդ դարում վերաշինվել:

Եռանավ բազիլիկ այդ տաճարը մինչեւ հիմա կանգուն է:

Հին Շինուհայրի Վանք կոչվող սրբավայրը

Եկեղեցին, ինչպես նշվեց, ծառայել է նաեւ որպես Դավիթ-Բեկի նստավայր, գյուղի վարչական կենտրոն:

Գործել է մինչեւ 1920 թվականը, որից հետո ծառայել է գյուղի տնտեսության մթերային պահեստ (մինչեւ գյուղի տեղափոխումը):

Եկեղեցու մասին ուշագրավ գրառում է կատարել 19-րդ դարավերջին Շինուհայր այցելած Երվանդ Լալայանը:

Ահա՝ *«Գյուղի գրեթե կենտրոնում գտնվում է Սուրբ Ստեփանոս եկեղեցին, որ բավական մեծ եւ գեղեցիկ է, չորս սյուների վրա հաստատված, կամարակապ ձեղունով: Հարավային դռան առաջ չորս սյուների վրա բարձրանում է մի գեղեցիկ գմբեթ, որ ծառայում է որպես զանգակատուն: Եկեղեցու պատուհանները փոքր են եւ նեղ. ներքուստ զարդարված է խաչկալով եւ հինգ ջահերով: Եկեղեցու շուրջը կան հին եւ նոր գերեզմաններ»:*

Հին սրբատեղիներ

Ըստ Երվանդ Լալայանի՝ «Ձորի վերին մասը, գյուղի արեւմտյան կողմը, պատած է ահագին ժայռերով, որոնցից մինը մի փոքրիկ քարախորշ է կազմում, որը պաշտվում է եւ վառված մոմերից բոլորովին սեւացել է:

Ժայռի գագաթին էլ մի փոքրիկ, անմատչելի մատուռ կա:

Սրանից փոքր-ինչ արեւելք ժայռերը վերջանում են, եւ մի փոքրիկ ձորակի մեջ բացվում են բավական թվով մեծ եւ փոքր քարատակներ, որոնց մոտից հոսում է մի բարակ աղբյուր, որ նույնպես սուրբ է համարվում:

Այս աղբյուրի մոտ բխում է եւ մի ուրիշ աղբյուր, շատ վարար, որ անցնելով ձորը՝ թափվում է Բարկուշատի մեջ»:

Ըստ Ժորա Մանուցյանի՝ Սուրբ համարվող աղբյուրը, որ հետագայում կոչվել է «Քոսի աղբյուր»՝ բուժիչ հատկություններ ունենալու շնորհիվ, հետագայում միախառնվել է բացված թունելի ջրերին եւ անհետացել:

Իսկ ժայռի գագաթի փոքրիկ եւ անմատչելի մատուռը, ըստ Ժորա Մանուցյանի, Բաղուն խաչն է, որին կանդրադառնանք առանձին:

Այլ սրբատեղի է քարախորշը, որի մասին նշում է Երվանդ Լալայանը, որ հիմա էլ գոյություն ունի:

Կուսանաց անապատ

Մենք եղանք Կուսանաց անապատում: Հիշեցինք հնագետ Սեդրակ Բարխուդարյանի գրառումներն անապատի մասին:

Ի դեպ, տարիների ընթացքում գրեթե ոչինչ չի փոխվել նրա նկարագրումներից:

Ահա՝ *«Կուսանաց անապատ. գտնվում է գյուղի արեւմտյան ծայրին, անդնդախոր քարափի գլխին, 5-6 մ պարիսպները շրջափակում են մատչելի տեղերից ընդարձակ բակը, որի կենտրոնում կառուցված է Սուրբ Աստվածածնի անունով ընդարձակ եկեղեցին, որն այժմ էլ կանգուն է. հարավային մուտքի առաջ եղել է փոքր գավիթ, որի պատերն են մնացել. եկեղեցուց քիչ ներքեւ՝ ամբողջ մնում է սեղանատունը: Բոլոր շինություններն էլ կառուցվել են հիմնականում 17-րդ դարում:*

Ինչպես հուշարձանի պատերին եւ բակում, այնպես էլ պարիսպների մեջ օգտագործվել են ավելի հին խաչքարեր:

Կուսանաց անապատին վերաբերող արձանագրությունները գրված են մեծ սղումներով...»:

Այդ արձանագրություններն այնքան շատ են, որ կարող են դառնալ առանձին ուսումնասիրության առարկա:

Կուսանաց անապատին անդրադարձել է նաեւ Երվանդ Լալայանը. «Գյուղի արեւմտահարավային կողմում, ձորի մեջ ցցված մի քերծի գագաթին տեղավորված է Սուրբ Աստվածածնի անունով Կուսանաց անապատը, որ շինել են 1676 թվին, Ագուլիսից գաղթած կույսերը եւ վերանորոգել են մահտեսի Ազարիան եւ նրա որդի Բենիամինը:

Կուսանոցը պարսպապատ է եւ երեք աշտարակներով պաշտպանված: Վերին մասում գտնվում է մենաստանը, որ 17,4 մետր (8 սաժեն եւ 1/2 արշ.) երկարություն, 10,65 մ (5 ս.) լայնություն եւ 9,6 մ. (4 1/2 ս.) բարձրություն ունի եւ շինված է կոփածո անտաշ քարերով: Ձեղունը կամարակապ է եւ ունի մի փոքրի գմբեթ: Պատուհանները փոքր են եւ նեղ. միակ դուռը բացվում է հարավային կողմում մի գավթի մեջ, ուր կան մի քանի գերեզմաններ: Եկեղեցում արեւելյան կողմում, դրսից, մի խաչ կա, որի մասին ասում են, թե բժշկություն է տալիս օձից խայթվածներին, եթե միայն նրանք խայթող օձից առաջ կարողանում են գալ եւ խաչը համբուրել:

Սեղանատնից էլ փոքր-ինչ ներքեւ գտնվում է մի փոքրիկ եկեղեցու ավերակ:

Պարսպին կից կան մոտ 40 խուց եւ մի բաղնիք:

Նույն պարսպի մեջ, եկեղեցու մոտ 1891 թվին Պալիանց քահանայի ջանքով շինված է չորս սենյակից բաղկացած մի գեղեցիկ շենք՝ հայոց եկեղեցական-ծխական դպրոցի համար:

Մի աղբյուր եւս բերված է այդտեղ:

Այժմ անապատը բոլորովին անխնամ թողնված է, իսկ դպրոցական շենքում շուտով բացվելու է պետական դպրոց»:

Շինուհայրի վանք, թե՞ Հին եկեղեցի

2019 թ. հոկտեմբերի 5-ին Ժորա Մանուցյանի հետ այցելեցինք Հին Շինուհայրի վանք կոչվող սրբավայր:

Գտնվում է Հին գյուղից հարավ-արեւելք՝ Որոտանի ձախ ափին:

Ըստ Ժորա Մանուցյանի՝ կառուցվել է 10-րդ դարում:

Այդ այցի մասին մենք համառոտ հրապարակում ենք կատարել եւ նշել, որ Աստծո այդ տաճարի մասին մատենագիտության մեջ գրեթե հիշատակություններ չկան:

Սակայն Ղեւոնդ Ալիշանի «Սիսականում» կատարված է մի գրառում, որը, կարծում ենք, հենց այդ սրբավայրի մասին է:

Ահա՝ *«Եկեղեցին մեծ եւ հոյակապ քառակուսի ձեւով (34 կանգուն յերկայնն, 22 ի լայնն) յարեւելեան ծայր գեղջն կայ, եւ թուի չափաւոր հնութեամբ. բայց անունն կամ արձանագրութիւնք ոչ յիշին, բացի ի միոյ խաչի ագուցելոյ յորմն, եւ է այս. Ես Արզուս կանգնեցի զ խաչս Տեառն իմայ Եղեկի եւ որդւոյ իմոյ Պապկայ հոգւոյն. յիշեցէք ի Քրիստոս. Թվին... ԿԱ»* (էջ 258):

Արձանագրության առաջին տառը եղծված է, ինչի գրության ժամանակը հնարավոր չէ պարզել:

Ալիշանը հաստատում է, որ եկեղեցու եւ անունը, եւ ժամանակը հայտնի չեն:

Ալիշանը չի օգտագործում նաեւ վանք բառը:

Ըստ երեւույթին՝ շինուհայրցիներն այդ եկեղեցուն վանք են անվանել (նման օրինակներ շատ ունենք Սյունիքում), ու այդպես էլ փոխանցվել է սերնդեսերունդ:

Վնսար (Վանասար) եկեղեցու ավերակները

Հին Շինուհայրից Որոտան գետի ափ (դեպի Էվունց-Էլունց տներ կոչվող քարափ) իջնելիս, ճանապարհի աջ կողմում (Հին Շինուհայրից հարավ-արեւ-

մուտք) է գտնվում Ժորա Գրիգորյանի այգին: Հենց այդ այգու տարածքում է ժամանակին գտնվել Վնսարը (Վանասարը):

Ըստ Ժորա Մանուցյանի՝ Վնսար (Վանասար) եկեղեցին կառուցվել է 7-րդ դարում: Եկեղեցին թեեւ չկա, բայց պահպանվում է շինուհայրցիների հիշողության մեջ:

Պահպանվում են նաեւ հրաշալի խաչքարեր, ինչպես եւ մի հատված եկեղեցու պատերից:

Հավատավոր շինուհայրցիներից ոմանք մինչեւ հիմա այցելում են այդ եկեղեցու տարածք եւ մոմ վառում խաչքարերի պատվանդանին:

«Խաչեր» փոքրիկ գերեզմանատունը

Գտնվում է հին գյուղի կենտրոնում, ուր կան մի քանի խաչքարեր եւ տապանաքարեր:

Ուշագրավ է գերեզմանատան հարավային եզրին, մեծ ժայռաբեկորի վրա կանգնեցված, իր ձեւով եզակի խաչքար-կոթողը:

Խաչքարը նավակաձեւ է, մեջտեղը լայն եւ թիկունքից կիսաբոլոր մշակած:

Ներքեւում արձանագրություն է **«Ի ԹՎԱԿԱՆ: ՉԺ: ԵՍ Վ/ԱՐՍԻԼ ՈՐԴԻ/ ՊԱՔՈՐՏԱՅ / ԿԱՆԳՆԵՑԻ/ Զ ԽԱՉՍ ՀԱԻՐ ԵԻ ՄԱՀՐ ԻՄՈ/ ԵԻ ԱՅԼՈՑ ՀԱՐԱ / ՁԱՏԱՑ/ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԻ»:**

Ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ թվականի տասնավորը կարող է Ժ եւ Ձ կարդացվել, այս ոճի Ձ հանդիպում է Սյունիքում:

ՊԱՔՈՐՏ անունը հնարավոր է նաեւ ՊԱՔՈՒՐՏ կարդացվել, Ո-ի գլխին ջարդվածքի տեղ կա:

Այդուհանդերձ՝ ընդունված է խաչքարի տարեթիվ համարել 1261-ը կամ 1229-ը:

Բադուն խաչը

Հին Շինուհայրի հյուսիս-արեւմտյան մասում է գտնվում այդ սրբավայրը: Հին Շինուհայրի նախկին ճանապարհի վրա է:

Այնտեղ կարելի է գնալ Մեծ նովերի կողքով, որտեղից քաղցրահամ եւ սառնորակ ջուր է բխում:

Կարելի է գնալ նաեւ երբեմնի Շինուհայր բանավանի հիվանդանոցի մերձակայքից՝ լեռն արահետով իջնելով:

Ըստ Ժորա Մանուցյանի ենթադրության՝ հավանաբար 17-րդ դարում է կառուցվել այդ սրբավայր-մատուռը՝ սալահատակված, բեմով:

2017-ին Բադու շառավիղներից Սերգեյ Բարսեղյանը կարգի է բերել մատուռը: Նաեւ մի նոր խաչքար է կանգնեցրել, որի վրա գրել է Բադու տոհմի ներկայացուցիչներից երեքի անունը՝ Իշխան, Խիկար, Վոլոդյա Բարսեղյաններ (Խիկար Բարսեղյանը հայտնի պատմաբանն է):

Խաչքարն օրհնել է Տաթեւի վանքի վանահայր Տեր Միքայել վարդապետ Գեւորգյանը:

Մատաղաբլուրը

Ներկայիս գյուղի հարավ-արեւմտյան հատվածում բարձրացող բլուրն է, որ հիմա նաեւ ավազահանք է ծառայում:

Այդ բլուրը Շինուհայրի հնագույն սրբավայրերից է:

Երբեմնի սրբավայրից մի հրաշալի խաչքար է պահպանվել՝ խոնարհված վիճակում:

Ժորա Մանուցյանը պատմում է գյուղի տարեցներից լսած զրույցը. երաշտի ժամանակ կանայք ջուր են տարել եւ լցրել այդ խաչքարի վրա՝ ակնկալելով անձրեւ...

1931-ի երկրաշարժից հետո, երբ Զանգեզուր էին այցելել Հայաստանի ղեկավարներ Աղասի Խանջյանն ու Սահակ Տեր-Գաբրիելյանը, որոշվեց գյուղի ներկայիս դպրոցի մերձակայքում՝ մոտ հարյուր ընտանիքի համար, քարե տնակներ կառուցել՝ երկրաշարժից տուժածներին բնակարանով ապահովելու համար:

Շինարարական այդ ծրագրերի իրականացման ժամանակ էլ առաջին անգամ բլուրն օգտագործվեց որպես ավազահանք:

Այդուհանդերձ, բլուրը, խորհրդային ժամանակներին բնորոշ սահմանափակումների առկայության պարագայում անգամ, որոշակիորեն պահպանեց իր նախնական նշանակությունը:

Ժողովրդական չխամրող հիշողությունն էր պատճառը, որ 2016 թվականին գյուղի երիտասարդներն այնտեղ կանգնեցրին երկաթյա խաչ (14 մ բարձրություն, 8 մ լայնություն), որն էլ օրհնեց Տաթեւի վանքի վանահայր Տեր Միքայել վարդապետ Գեւորգյանը:

Երկաթյա խաչը հնամենի խաչից մոտ 100 մ հեռավորության վրա է:

Եվ երեք տարի է, ինչ Մատաղաբլրի վրա, ամեն օր՝ մութն ընկնելուց հետո, երեւելի շինուհայրցի Վալերիկ Ասրյանի ջանքով, լուսավորվում է նորաշեն խաչը...

Շինուհայրում կառուցվում է Աստծո նոր տաճար, որ կկրի Սուրբ Գրիգոր Տաթեւացի անունը

Տաճարը կառուցվում է ներկայիս գյուղում: Կառուցվում է օրինակը չունեցող նախագծով՝ եկեղեցաշինության ազգային եւ սյունիքյան ավանդույթների համադրմամբ:

Նախաձեռնողը Տաթեւի վանքի վանահայր Տեր Միքայել վարդապետ Գեւորգյանն է:

Եկեղեցու հիմնօրհնեքը տեղի է ունեցել 2018 թ. մայիս 17-ին՝ Մայր տաճարի լուսարարապետ Հովնան եպիսկոպոս Հակոբյանի գլխավորությամբ:

Շինարարությունն իրականացվում է հանգանակությամբ եւ նվիրատվությամբ հավաքված դրամական միջոցներով:

Եկեղեցին կառուցվում է մշակույթի ավերակված կենտրոնի եւ մանկապարտեզի մերձակա հրապարակում:

Տեղը պատահական չէ ընտրված:

Այդտեղ, ըստ Տեր Միքայել վարդապետ Գեւորգյանի, սրբավայր է եղել, որը վկայող խաչքարը պահպանվում է:

Ըստ վարդապետի՝ նորաշեն եկեղեցու նավակատիքը տեղի կունենա 2020-ին:

Եկեղեցին կկրի Սուրբ Գրիգոր Տաթեւացու նվիրական ու պաշտելի անունը:

Ի դեպ, հայոց մեջ դեռեւս չկա Գրիգոր Տաթեւացու անունը կրող եկեղեցի, դա կլինի առաջինը:

Կառուցումն իրականացնում է Վահե Պարոնյանի գլխավորած շինարարական կազմակերպությունը:

Հ.Գ. Սերո Խանզադյանը, ով ուսուցչություն է արել Հին Շինուհայրում, հիշում է գյուղի երիտասարդներից մեկի ստեղծագործություններից մի քառատող.

«Իխպիրին տակին տապ եմ կենում,
Յարիս ընդեղ եմ տեսնում.
Ախ, մերը կլխու ա ինգալ,
Մեկ ինքնա ճիրի քինում... »:

Ասել է թե՝ մայրն այլեւս աղջկան չի ուղարկում աղբյուր՝ ջրի, որ չհանդիպի սիրած տղային, իսկ տղան մորմոքվել, բանաստեղծ է դարձել...

Առհասարակ, Շինուհայրում մինչեւ հիմա պահպանվող ժողովրդական բանահյուսության նշխարները, ավանդազրույցները հավաքելու դեպքում գանձերի մի յուրօրինակ հավաքածու կունենանք:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 11

Տանձատափի Տրբավայրերը՝

Ցուրա վանքից կամ Զորո վանքից մինչեւ Սարիվանց ու Սուրբ Մինաս, մինչեւ գերահրաշ տեղանք, որի երկնահաս լեռնագագաթից արքայազնուհի Շահանդուխտը ցած թռչեց նժույգով

«Ուխտագնացություն Սյունիք» ծրագրի շրջանակում առաջին անգամ Տանձատափ այցելեցինք 2019 թ. օգոստոսի 11-ին, երկրորդ անգամ՝ 2020 թ. հունվարի 12-ին: Երկու դեպքում էլ մեզ ուղեկցում էր մի քաջ տանձատափցի՝ Վազգեն Սաղաթելյան, ով հրաշալիորեն տիրապետում էր այդ վայրերի ամեն մի արահետի:
Մեր ուխտագնացության համար անհրաժեշտ պայմաններ էին ստեղծել Տաթեւ համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանը, Տանձատափի վարչական ղեկավար Ռոբերտ Մուշեղյանը:

Հիասքանչ Տանձատափը

Տաթեւից մոտ 4 կմ հարավ-արեւելք գտնվող այդ գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Տանատափ, Տանզատան, Տանձադար, Տանձաթաղ, Տանձատապ...

Հնում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի, հետագայում Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի, խորհրդային տարիներին՝ Գորիսի շրջանի մեջ: Ներկայումս Սյունիքի մարզի Տաթեւ համայնքի գյուղերից մեկն է:

Որոտան գետի աջ կողմում, գեղատեսիլ վայրում գտնվող Տանձատափը 906 թ. Սյունիքի գահերեց իշխան Աշոտը նվիրել է Տաթեւի վանքին:

Գյուղից վերեւ Գազբոյլ եւ Կամբոյլ գագաթներն են, իսկ ամենավերեւում՝ Արամազդ լեռնագագաթը:

Տանձատափից մի առանձին հմայքով է աչքի զարնվում Տաթեւի վանքը:

Խաչքար՝ գյուղից դեպի Սպիտակ աղբյուր գնացող ճանապարհին

Սարիվանցի եկեղեցուց մոտ 50 մ հեռավորությամբ թմբի վրա չքնաղ այս խաչքարն է տեղադրված

Սարիվանցի Սուրբ Աստվածածին եկեղեցու գավիթի արեւմտյան պատի երկու խաչքարը

Թեք լանջի վրա գտնվող գյուղի մի կողմին Ջղրվանա (Ջղարվան) գետն է (Արամազդից իջնող Աղանձու գետը գյուղի ջրվեժի մերձակայքում միանում է Ջղրվան գետին, որից կազմավորվում է Ջրաղացի գետը, որն էլ Ընկոյզուտի մոտ խառնվում է Գինեկան (Տաթեւ) գետակին ու Տաթեւի անապատի մոտ միախառնվում Որոտանին):

Ի դեպ, այն կարծիքն է հայտնվել, որ Ջղարվանը Ցուրա գետն է, որ արեւմտյան կողմից թափվում է Տաթեւ (Գինեկան) գետի մեջ (տես Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը», էջ 142):

Տաթեւի վանքից անդնդախոր ձորով բաժանված գյուղի անվան ծագման մասին Սերո Խանզադյանին 1934-ին մի ավանդազրույց է պատմել Անանիա Կարապետյանը:

Ահա՝ *«Երբ Տաթեւի վանքը կառուցել, վերջացրել են, փորձել են խարաչուն՝ փայտամածը քանդել: Կացնով խփել են փայտամածի հյուսվածքն իր վրա պահող մայր սեպին, որ դուրս գա ու փայտամածը թաղի տակից քանդվի: Խփել են մի քանի անգամ ու փայտյա սեպը դուրս է եկել, գերանների ուժգին ճնշումից սլացել-թռել ընկել Տանձատափ գյուղի վրա: Եվ որովհետեւ սեպը տանձի փայտից է եղել, գյուղի անունը դրել են Տանձատափ՝ Տանձի փայտը թափ տվեց, ընկավ այստեղ»:*

Գյուղի պատմությունը վաղուց հետազոտող, Գորիսի տարածաշրջանի մերօրյա երեւելի մտավորական Սուրեն Վարդանյանը շինծու է համարում այդ ավանդազրույցը եւ այլ վարկած առաջադրում. *«...Բնակավայրերին տրվել են անվանումներ՝ ելնելով տվյալ տարածքի կամ տեղանքի յուրահատկությունից, բնաշխարհի թողած տպավորությունից... մի խոսքով՝ բնական առանձնահատկություններից: Իմ կարծիքով՝ հենց այս վերջին տարբերակի հիման վրա էլ Տանձատափը ստացել է իր անվանումը: Գյուղի ոչ միայն այգիներում, այլեւ շրջապատի անտառներում կան բազմապիսի պտղատու ծառատեսակներ..., սակայն ամենահաճախակի հանդիպողը տանձենին է»:*

1920-ականներին Տանձատափից են անջատվել մերձակա Քաշունի (Մալդաշ) եւ Կապանի տարածաշրջանի Աղվանի գյուղերը:

Մի քանի ընտանիք էլ այս գյուղից գնացել եւ բնակություն է հաստատել Կապանի տարածաշրջանի Տորթնի (Անտառաշատ) գյուղում:

Շահանդուխտ արքայազնուհու մատուռը, որ նաեւ Կարմիր եկեղեցի է կոչվում

Գյուղից մինչեւ Սիպտակ աղբյուր (Սղնախով, ապա Հաչա քարի կողքով) գնացինք Տանձատափի վարչական ղեկավար Ռոբերտ Մուշեղյանի ամենագնացով:

Այնուհետեւ ճանապարհը շարունակեցինք ոտքով՝ երկնահաս Կարմիր քերծի ստորոտով. վերեւում՝ Մեծ քերծի ուղղությամբ՝ Ըրջամարգից մինչեւ Բարձրավան, Օվենի անտառն է:

Մենք նախ՝ իջանք Մեծ ձոր, ապա՝ վեր բարձրացանք:

Արահետը մի պահ կորցրինք. ըստ երեւույթին տարիներ շարունակ այդ կածաններով մարդ չի անցնել, ինչի հետեւանքով էլ արահետները ծածկվել են խոտերով, ծառի ճյուղերով, մոշի քոլերով: Բայց Վազգեն Սաղաթելյանն այնքան քաջատեղյակ էր տեղանքին, որ կարողացավ իր նախընտրած ուղիով (տեղ-տեղ ցաքատով ոտնատեղ բացելով) մեզ տանել բարձր լեռան այն լեզվակը, որի վրա 9-րդ դարում Շահանդուխտ արքայազնուհին մատուռ է կառուցել:

Տանձատափցիներն այդ վայրին Լաստ են անվանում:

Ըստ Վազգեն Սաղաթելյանի՝ դարեր շարունակ Շահանդուխտի մատուռն ամենաընդունելի պաշտամունքային վայրն է եղել տանձատափցիների համար: Սակայն հետաքրքրությունը ժամանակի ընթացքում նվազել է:

Վերջին անգամ՝ 4-5 տարի առաջ, այդ սրբավայր է այցելել նշանավոր գորիսեցի, Տանձատափ գյուղի զավակ Սուրեն Վարդանյանը: Իսկ համագյուղացի Մարիամ աքերը կամ Մարիամ բաջին (ինչպես վկայում է Վազգենը) ամեն տարի այցելել է Շահանդուխտի մատուռ՝ զրուցել Աստծո հետ, մոմ վառել, մատաղ արել: Արդեն տասը տարի է՝ Մարիամ աքերը չկա...

Եվ միայն Մարիամ բաջին չէր, այլ այդ սերնդի գրեթե բոլոր տանձատափցիները, որ ամեն տարի ուխտագնացություն էին կատարում Շահանդուխտի մատուռ:

Մոտ հինգ կմ ճանապարհ անցնելուց հետո հասանք Շահանդուխտի մատուռ: Որոտան գետի աջ կողմին՝ Լաստ լեզվակի վրա գտնվող այդ սրբավայրը մոտ 4 X 5մ չափսեր ունի :

Երեւում է, որ կամարակապ է եղել: Մոտ 1200 տարեկան խաչքարերից մի քանիսը դեռեւս պահպանվում են:

Մատուռի հատակը մի քանի տեղից փորել են հայ վանդալները...

Վերադարձին կանգ առանք Սիպտակ ջուր հրաշալի աղբյուրի մոտ, որտեղ երբեմնի պոմպակայանի հետքերն են միայն մնացել:

Գյուղի կենտրոնում գտնվող Սուրբ Մինաս եկեղեցին: Ըստ Սուրեն Վարդանյանի՝ Սյունիքի մարզի հնագույն սրբավայրերից է:

Ըստ երեւույթին Կարմիր քերծի ծոցից սկիզբ առնող այդ սառնորակ ջրից է ժամանակին օգտվել նաեւ Շահանդուխտ արքայազնուհու մենաստանը, որովհետեւ Սիպտակ ջրից մինչեւ Լաստ ոչ մի աղբյուր չկա:

Շահանդուխտի ժայռից մեր առջեւ բացվել էին Որոտանի անդնդախոր կիրճի անկրկնելի տեսարանները:

Մեր ոտքերի տակից երբեմն-երբեմն դուրս պրծնող քարաբեկորները մեծ դղրդյունով գլորվում էին դեպի անդունդի խորքերը:

Մոտ 10 կմ դժվարանցանելի ճանապարհը հաղթահարելուց հետո ֆիզիկապես այլեւս անկարող էինք ծանոթանալ Սղնախի միջնադարյան գերեզմանատեղիին կամ իջնել Տանձատափից 2 կմ հյուսիս գտնվող եկեղեցի:

Տանձատափից ուրիշ հմայք ուներ նաեւ Տաթեւի վանքը:

Տխուր էր միայն Արամազդի փեշերից սկիզբ առնող եւ Տանձատափով հոսող Ճաղացի գետը, որ մի քանի տարի առաջ ամփոփվել է խողովակի մեջ՝ ինչ-որ հէկ աշխատեցնելու նպատակով՝ գյուղը զրկելով լինելիության աստվածատուր այդ բարիքից (Ճաղացի գետը Աղանձու եւ Ճուղվանի գետակների խառնուրդն է):

Բայց որպեսզի ընթերցողին հասկանալի լինի Շահանդուխտի մատուռ-սրբավայրի ամբողջ էությունը, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» կոթողային գործի՝ Շահանդուխտ արքայազնուհու հետ կապված մեծ ու ահազդու հրաշքի մասին:

Խաչի կողք կոչ-վող տեղանքի եկեղեցին, որ Սարիվանց անունն է կրում կամ Սուրբ Աստվածածին

Շահանդուխտի մատուռ: Որոտան գետի աջ կողմին՝ Լաստ լեզվակի վրա գտնվող այդ սրբավայրը մոտ 4 X 5մ չափսեր ունի

Ահա՝ «Ո՛վ եղբայրներ, ցանկանում եմ ձեզ պատմել այն զարմանալի հրաշքի մասին, որ այն ժամանակ եղավ աստվածային տնօրինությամբ: Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա կերպարանքն արտասովոր էր ու հրաշալի. չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է. այլ կարծես թե կերպարանավորված էր լուսատարր օդից ու նրբանուրբ շողերից: Նրան հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Եվ նա դուրս ելավ իր աշխարհից, հայրենի տնից գնաց կին դառնալու հայ իշխանին: Մտնելով Բաղաց աշխարհը՝ անցնում էր ապահով տեղանքի ճանապարհով, մի ապառաժոտ վայրով, որտեղ մի քարաժայռի փլվածք էր՝ ահռելի խորությամբ, որն անդունդի նման ուղղված էր դեպի Տաթեւի մեծ հայրապետանոցի կողմը: Հենց այնտեղ թաքնված, ծվարած էին սուսերամերկ զորքի լեգեոնախումբ ջոկատներ, որոնք Շահանդուխտի սքանչելի գեղեցկության պատճառով եկել էին Պարսկաստանից, հսկում էին ճանապարհների անցքերն ու կիրճերը, որ հափշտակեն այդ աղջկան:

Ուղեւորներն այդ բանին իրազեկ չէին: Զինված խմբերը հանկարծակի հարձակվեցին նրանց վրա եւ սրերը քաշած սկսեցին անխնա կոտորել (այս) քրիստոնյաներին: Ապա խորահավատ օրիորդն այս տեսնելով հասկացավ պատճառը եւ, տերունական խաչով երեսին խաչ հանելով, ձին մտրակեց ու թռավ քարաժայռի փլվածքը: Այս (տեղեկությունը) գտանք մի հնացած նամակում, որը իր իսկ՝ Շահանդուխտի ձեռքով էր գրված այսպես. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Վարազ Տրդատի դուստրս, Թորգոմյան տունը հարս էի գնում. հասա Բաղքի սահմանները, այս քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա (այստեղ) ինձ հանկարծակի հանդիպեցին իսմայելացիները, որոնք իմ հռչակված գեղեցկության պատճառով կամենում էին ինձ հափշտակել: Նրանք սրերը քաշած կոտորեցին ինձ հետ եղած հեծելագունդը: Եվ ես լավ համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն գահավիժումով մեռնել իմ Քրիստոսի համար: Եվ հիշելով սուրբ Աստվածածնին ու սուրբ Հռիփսիմեին՝ ինձ հանձնեցի սուրբ երրորդությանը. ողորմելի անձս խաչակնքեցի սուրբ խաչով եւ ձիու սանձը ետ դարձնելով՝ թռա քարաժայռից:

Քամու ուժգին հոսանքով, աներեւույթ զորությամբ, կարծես թե կառքով իջա այս ձորի խորխորատը, ձիս էլ հետս՝ անվնաս: Այնտեղ դադար առնելով՝ մեծ հիացումով խիստ գոհունակություն վերառաքեցի ինձ այդպես փրկողին եւ այս անդորր տեղում իմ անձը նվիրեցի Քրիստոսին. ուխտեցի այլեւս այստեղից դուրս չգալ մինչեւ կյանքիս վերջը: Իսկ իսմայելացիներն այս տեսնելով մեծ զարմանքով անվնաս թողեցին իմ զորախմբի (մնացած մասը) եւ գնացին: Ես էլ այստեղ շինեցի մի մատուռ ու մի խցիկ, որտեղ ճգնեցի կյանքիս (մնացած) ամբողջ ժամանակամիջոցում: Թեեւ ծնողներս ու հարսնածու իշխանները շատ թախանձեցին, բայց ես տեղիցս չշարժվեցի: Հրավիրելով Սյունյաց երանելի եպիսկոպոսին՝ ենթարկվեցի նրան եւ իմ ամբողջ ունեցվածքը տվեցի նրա ձեռքը՝ կես մասը բաժանելու կարիքավորներին, կեսն էլ տալու Տաթեւի սուրբ եկեղեցուն: Նաեւ սուրբ եկեղեցուն ավանդեցի այս տեղերը՝ ամբողջ ձորով հանդերձ, որ ընկած են Շնհերի սահմանից վեր, մինչեւ Գինակա գետը»: Եվ սա Շահանդուխտը հենց իր ձեռքով էր գրել: Նա մնալով այնտեղ իր մոտ է հավաքում ուրիշ կույսերի եւ տառապալից ճգնությամբ ապրելով երեսուն տարի՝ մեռնում է: Եպիսկոպոսը գնալով թաղում է նույն տեղում սրբի երանելի մարմինը, որի բարեխոսությամբ Քրիստոսը թող խնայի այս տունը եւ սրան բաժին ընկած հարազատ հոտին»:

* * *

Գյուղից մոտ 5 կմ հեռավորության վրա գտնվող մատուռի հյուսիս-արեւելյան պատն ավելի քան կես բարձրությամբ հիմքից ժայռափոր է, իսկ մյուս երեք պատին միանալու կետից՝ բազալտակառույց:

Կառույցը փոքր չափսերի է, ներսը՝ 2.8 մ x 4.9 մ, ունի խորան, ծածկը թաղակապ է եղել (չափումները՝ ըստ Սուրեն Վարդանյանի):

Ուշադրություն են գրավում առանձին քարերի վրա արված քանդակները, զարդանախշերը, խաչերը:

Սուրբ Մինաս եկեղեցին

Գյուղի կենտրոնում գտնվող եկեղեցին է:

Ըստ Սուրեն Վարդանյանի՝ Սյունիքի մարզի հնագույն սրբավայրերից է, սկզբնապես կառուցվել է հեթանոսական տաճարի վրա, վերակառուցվել 17-18-րդ դարերում:

Կարմիր քերծը

Շահանդուխտի մատուռը (դրվագ)

Սերո Խանզադյանն այսպես է նկարագրել Սուրբ Մինասը. *«Գյուղամիջի եկեղեցին... անտաշ քարերից է շինած՝ ոչ կամար ունի, ոչ սյուն, ոչ գիր: Միայն մեծ դռան մոտ շիրմաքարերից մեկի վրա գիր կա՝ «Այս է տապան Առաքելի որդի Պետրոսին - 1831»»:*

Խաչի կողք կոչվող տեղանքի եկեղեցին, որ Սարիվանց անունն է կրում կամ Սուրբ Աստվածածին

Տանձատափից մոտ 2 կմ հյուսիս-արեւելք՝ ձորամիջի խութերի վրա է գտնվում այդ սրբավայրը: Մենք այդտեղ այցելեցինք 2020 թ. հունվարի 12-ին:

Ըստ ՀՀ հուշարձանների պահպանության պետական մարմիններում եղած տեղեկությունների՝ մատուռ-եկեղեցին 10-րդ դարի շինություն է՝ կառուցված հայր Թադեւոսի կողմից:

Եկեղեցին միանավ կառույց է, ներսի չափսերն են՝ 5.9x 3.2 մ, ունի 2 մ խորությամբ խորան, որի երկու պատին կան խորշեր:

Եկեղեցին աչքի է ընկնում կառուցման բարձր արվեստով, դրսի պատերի շարվածքը մաքուր է, ծածկը բազալտից է: Եկեղեցին արեւմտահայաց մուտքի մոտ նախասրահ (գավիթ) է ունեցել:

Նախասրահի արեւմտյան պատին կա երկու խաչքար, յուրաքանչյուրը 0.4x 0.6 չափսերով:

Կառույցի շրջակայքում կան այլ շինությունների հետքեր, գերեզմանաքարեր:

Եկեղեցուց մոտ 50 մ հեռավորությամբ թմբի վրա կա չքնաղ մի խաչքար՝ տեղադրված պատվանդանի վրա:

Ըստ Սուրեն Վարդանյանի չափումների՝ պատվանդանի բարձրությունը 0.62 մ է, լայնությունը՝ 1.15 մ, խաչքարի բարձրությունը՝ 1.88 մ, լայնությունը 0.87 մ: Խաչքարը 1264 թվականի է:

Առանձնակի կանգնած այդ խաչքարի վրա կարդում ենք՝ «ԵՍ ՏԷՐ ՅՈՒՍՄ, ՔՎԵՐՈՐԴԻ ՍԷԹ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՆՈՐՈԳԵՑԻ ՀՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ՀԽԱՉՍ ՅԱՆՈՒՆ ՍԲ ԱԾԱԾՆԻՆ,

ԲԱՐԷԽԱԻՍ ՄԵՋ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՌ ՔՍ, ՈՐՔ ՀԱՆԴՊԻՔ ՅԻՇԵՑԷՔ ԱՌ ՔՍ. ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ՋԵՂԲԱՅՐՆ ԻՄ ՋՅԱԿՈԲ»:

Ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի՝ «ՅՈՒՍՄ անսովոր անվան գործածության մեկ դեպք ունի Աճառյանը (Անձնանունների բառարան, Գ. էջ 736) ՅՈՒՍՄԻՆ ձեւով, իգական: Նորոգեցիի փոխարեն ՆՈՐՈԳԵԱՑ է գրված: Վերջին ՋՅԱԿՈԲ անվան վերջին երկու տառերը բաց են թողնված տեղ չլինելու պատճառով: Բնագրի ՀԱՆԴՊԻՔ ձեւը թողնում ենք նույնությամբ՝ համարելով խոսակցական լեզվի ազդեցություն»:

Սարիվանցի հետ կապված մի թյուրիմացություն կա մատենագիտության մեջ, որին կուզենայինք անպայման անդրադառնանք:

Ճանաչված հնագետ Սեդրակ Բարխուդարյանը (Դիվան հայ վիմագրության, 2-րդ հատոր, էջ 40) այդ սրբավայրին տալիս է արհեստածին անուն՝ Սվարանցի խաչ, իսկ վայրը՝ Սվարանց, ինչը սխալ է: Հավանաբար շփոթել է Սարիվանց անվանումի հետ:

Ըստ Սուրեն Վարդանյանի՝ այդ վայրը կոչվում է Սարիվանց խաչ կամ Սարիվանցի վեղ (հող): Եկեղեցին Սուրբ Աստվածածին է կոչվում:

Իսկ եկեղեցում այսպիսի արձանագրություններ կան:

Եկեղեցու բեմի բարձրության քիվին՝ ԵՍ ՀԱՅՐ ԹԱԴԷՈՍ ՇԻՆՈՂ ՍԲ ԵԿԵՂԵՑԻ Ս ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:

Եկեղեցու բեմի ներքեւի ճակատին՝ Ի ԹՎ: ՊԽԶ: ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, ԳՆԵՑԻ ԶՀՈՒՆԵՐՈ ՋԱՂԱՑ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՆՑ ԵՒ ԵՏՈՒ ԸՆԾԱ ՍԲ ԱԾԱԾՆԻՍ. ԵՒ ԶՅՈՒՐԱ ՀՈՂՆ, ԱՐԴ ՈՐՔ ԽԼԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ ՋԱՆԱՆ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՆԻՆ ԵՒ ԴԱՏԻՆ ՅԱՅ:

Եկեղեցու տարածքից միանգամայն նոր տեսքով է երեւում Տաթեւի վանքը:

Այդտեղից երեւում են նաեւ Տաթեւի Հարանց անապատի արեւմտահայաց պատերը:

Ցուրա վանք կամ Ցրվանց կամ Ձորո վանք

Ցուրա վանք կամ Ցրվանց կամ Ձորո վանք

Հնագետ Սեդրակ Բարխուդարյանի կարծիքով՝ Տանձատափի մերձակայքում է գտնվել այդ սրբավայրը:

Ահա նրա տեսակետը. «Ինչպես այդ վայրի անունը, այնպես էլ մեջբերված արձանագրությունների մեջ հիշատակվող «Ցուրահող» տեղանունն ապացույց են, որ գյուղի մոտակայքում պիտի լիներ նշանավոր Ցուրա բերդը, որի բնակիչները 915 թ. ապստամբեցին Տաթեւի վանքի դեմ, իսկ այժմյան ավերակ եկեղեցին՝ Ցուրա վանքը, որ հետագա հեղինակների մոտ հիշատակված է Ցրվանք եւ Ձորո վանք անուններով (Առաքել Դավրիժեցու մոտ):

Հնագետի կարծիքը, որ Ցուրա վանքն այդ գյուղի մերձակայքում է, անվիճելի է:

Բայց տեսակետը, որ Ցուրա վանքը կարող էր լինել Սարիվանց եկեղեցին (ըստ հնագետի՝ Սվարանցի խաչի եկեղեցին), որեւէ քննադատության չի դիմանում:

Մեր խորին համոզմամբ՝ Ցուրա վանքը Տաթեւ-Տանձատափ-Սվարանց գյուղերի գրեթե միջնամասում գտնվող

Գյունեի հանդի՝ մինչեւ այսօր կանգուն (բայց փլուզման վտանգի առաջ կանգնած) եկեղեցին է:

Հնագետներից եւ ոչ մեկը, ինչպես երեւում է, չի այցելել այդ սրբավայր:

Մեզ ստեղծագործական խումբն այդտեղ եղավ 2020 թ. հունվարի 12-ին:

Եկեղեցու մերձակայքում եւ հատկապես երբեմնի գավիթում գտնվող խաչքարի բացառիկությունը ցույց են տալիս, որ դա սովորական սրբավայր չի եղել:

Գյունեի հանդի եկեղեցին, ամենայն հավանականությամբ, տարածքի ամենահին սրբավայրն է:

Ճարտարապետական լուծումներով շատ նման է Վաղատուրի հին եկեղեցուն, որոշ դեպքերում՝ Երիցվանքին:

4-6-րդ դարերի ճարտարապետությանը բնորոշ լուծումներ ունեցող եկեղեցին ամենայն հավանականությամբ հենց Ցուրավանքն է կամ Ղեւոնդ Ալիշանի հիշատակած Ցրվանցը, Ձորո վանքը:

Մեր այդ վարկածի օգտին են խոսում փաստը, որ հենց մերձակա ձորով է հոսում պատմաբանների մի մասի կարծիքով Ցուրագետ անվանվող գետակը:

Նաեւ փաստը, որ Գյունեի հանդի եկեղեցին գտնվում է այն բլրի արեւելյան ստորոտում, որը ըստ ժողովրդական հիշողության՝ հայտնի Ցուրաբերդն է:

Եզան սուրբը (Օքյուզ- զյարաթ)

Եզան սուրբը (Օքյուզ-զյարաթ) գտնվում է Տաթեւի վանքին հակադիր լեռնաշղթային՝ Տաթեւից Կապան տանող ճանապարհին՝ զառիթափից ոչ հեռու: Օքյուզ-զյարաթը բաղկացած է անմշակ քարերի կույտից, որն օրեցօր ավելանում է, քանզի ամեն մի անցորդ իր պարտականությունն է համարում ճանապարհից մի քար վերցնել եւ նետել ընդհանուր կույտի վրա: Մի ավանդազրույցի համաձայն՝ քարերի կույտի տակ մի եզ է թաղված, որն առանց մարդու օգնության, միայնակ, շրջակայքից իր մեջքի վրա առարկաներ է տեղափոխել, որոնք անհրաժեշտ էին Տաթեւի վանքի կառուցման համար: Այդ սրբավայրերը հայերից ավելի պաշտում էին թուրքերը, ինչով բացատրվում է նրա անվանման թուրքական ծագումը՝ «Օքյուզ-զյարաթ»: Թաթարները հաստատում էին, թե այնտեղից, որտեղ քարերից գոյացել է այդ գերեզմանաթումբը, անհայտացել է այդ եզը. հայտնի չէ, թե որտեղ: Երբ մերձակայքում ընտանի կենդանիների շրջանում ինչ-որ համաճարակային հիվանդություն է առաջանում, տեղի բնակչությունն այստեղ են քշում իրենց հոտերը՝ սրբավայրի շուրջը մի անգամ անգամ պտտելով: Հովիվներն այստեղ անցկացնում են երկու-երեք գիշեր եւ զոհաբերում պարարտ ոչխարներ: Եթե անասունների անկումն ավելի ուժեղ է, եւ հնարավոր չէ հիվանդ անասուններին այստեղ բերել, անասնատերը գերեզմանաթմբից մի բուռ հող է վերցնում եւ բերելով տուն, խառնում է աղի հետ, խառնուրդը քսում ողորկ քարերին եւ դրանց մոտ քշում կենդանիների հոտերը, որոնք լիզում են քարերը եւ թաթարների խորին համոզմամբ՝ իրենց հիվանդ անասունները դրանից ապաքինվում, եւ համաճարակն անցնում էր:

Բոզու քարը

«Օքյուզ-զյարաթից» (Եզան սուրբից) քիչ ներքեւ՝ անտառի թավուտում հպարտորեն վեր է բարձրանում ժայռը, որ անվանվում է Բոզու քար: Ժողովրդական ավանդազրույցների եւ լեգենդների հերոսը՝ Բոզին, պարսկական տիրապետության օրոք, ասում են՝ փակվում էր այդ ժայռի անհասանելի ճեղքի մեջ, այդտեղից սարսափի մեջ էր պահում մոտակա արահետներով անցնող պարսիկներին: Բոզին հայ էր, ծննդով՝ Տաթեւից:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հետգրություն կամ Կարմիր քարի ու Սպիտակ ջրի լեգենդն ըստ Սուրեն Վարդանյանի

Իրականի եւ առասպելականի համաձուլվածք են քարափները: Դրա համար նրանք լեգենդային են: Մեր քարափի սկիզբը Սղնախի բարձունքում է: Նա շրջանցում է Մեծ ձորը, Հարսնաձորը, ապա գրկում-շրջափակում Օվենի կաղնու անտառը եւ միանում Որոտանի ափամերձ քարափների մեծ գերդաստանին: Միլիոնավոր տարիներ նա հետեւում է ընթացող իրադարձություններին: Ի՞նչ գաղտնիքներ ունի, ո՞վ կարող է վերծանել անհնարինը: Բայց ավանդականն այսպես է պատմում:

Կոփելուց անմիջապես հետո մի ներքին ցավ է շրջել քարափի ներսում, իջել-բարձրացել է, աջուձախ արել, ելքեր փնտրել, բայց ուղի չի գտել: Գնալով ցավը սաստկացել է: Կնճռոտվել է քարափի դեմքը, տեղ-տեղ խորշոմներ են գոյացել, ու անտանելի ցավից շառագունել, կարմիր է կտրել նրա երեսը: Այդ երկունքն ավարտվել է մի շքեղ լուսաբացի, երբ քարափի կրծքից բխել է հորդառատ, հրաշք մի աղբյուր: Անմիջապես հանգիստ նինջ է իջել քարափին: Նրա դեմքի կարմիրն անցել է, շիկնանքը՝ մնացել: Դրանից է ծնվել Կարմիր քարի քարափ անվանումը:

Քանի որ կրծքից բխած աղբյուրի սպիտակ փրփուրները գարնանը կուսական վարսերի պես զարդարում են նրա հպարտ լանջը, աղբյուրն էլ կոչել են Սպիտակ ջուր:

Սա է իրականը: ■

ԵՐԹՈՒՂԻ 12

Չարենցը եւ Խրիմյան Հայրիկը եղել են Հարանց անապատում

«Այունյաց Երկիրն» այցելեց այդ սրբավայր, որ նաեւ Տաթեւի անապատ է կոչվում

2019 թ. Օգոստոսի 19-ին ուխտագնացություն կատարեցինք Տաթեւի անապատ (Հարանց անապատ): Սատանայի կամրջից իջանք Որոտանի կիրճ եւ գետի հունին զուգահեռ արահետով (սկզբից՝ գետի ձախ ափով, ապա նորաշեն փայտյա կամրջով անցանք գետի աջ ափը) քայլեցինք դեպի հարավ-արեւելք: Մոտ կես ժամ անց այնտեղ էինք:

Գտնվում է Տաթեւ գյուղից ներքեւ (հարավ-արեւելք)՝ Որոտանի եւ Տաթեւ գետակի միախառնման եռանկյունու վրա:

Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության արժեքավոր եւ հետաքրքիր համալիրներից է: 17-րդ դարի կրոնական եւ ուսումնական կենտրոն է:

Ստեղծման առիթը նույն ձորում՝ դեպի արեւելք, գտնվող Հարանց մեծ անապատի կործանումն էր (1658-ի երկրաշարժի հետեւանքով), որից երկու տարի անց միաբանությունը տեղափոխվեց նոր վայր եւ կառուցեց այս անապատը:

Համալիրը կառուցվել է կանոնավոր հատակագծով: Շրջապատված է բարձր ուղղանկյուն պարիսպներով:

Անապատի հարավ-արեւմտյան մասում սրբատաշ բազալտից շինված Սուրբ Աստվածածին եռանավ

բազիլիկ եկեղեցին է (1663 թ.), որին արեւմուտքից կից է գավիթ-սրահը (կառուցել է Մելիք Եգանը 1743-ին):

Յուսիսից՝ գմբեթավոր փոքր մատուռ-դամբարանն է, որտեղ թաղված է 1669-ին մահկանացուն կնքած անապատի հիմնադիր Արիստակես վարդապետը:

Եկեղեցուց արեւելք գտնվում են կիսաքանդ շենքեր, դեպի հարավ՝ սեղանատունը, իսկ մերձակայքի աղբյուրը ցամաքել է:

Բակում կանգուն է բնակելի սենյակների մի այլ խումբ՝ Г-աձեւ ընդհանուր հատակագծով: Հարավային կողմում օժանդակ մասն է:

◈ ◈ ◈

Գիտական գրականության մեջ առայսօր շփոթում են Տաթեւի անապատը (Հարանց անապատը) Սյունյաց մեծ անապատի (Հարանց մեծ անապատի) հետ, որ գտնվում է հին Հալիձոր գյուղի դիմաց՝ Որոտան գետի աջ ափին:

Հարանց մեծ անապատի կործանման պատճառ դարձած երկրաշարժին ականատես է եղել Առաքել Դավրիժեցի պատմագիրը, ինչի մասին շարադրել է իր հայտնի «Պատմության» մեջ:

◈ ◈ ◈

Հարանց անապատին այս անգամ նայեցինք ուրիշ աչքերով:

Հիշեցինք մեր հայրենակից Յուրի Սահակյանի զրույցը Չարենցի՝ Հարանց անապատ այցելելու մասին, որ ներկայացրել է Մորուս Հասրաթյան հայագետին:

Տաթեւացի մեղվապահ Անդրանիկ



Տաթեւի Մեծ Անապատն ուշ միջնադարի արժեքավոր համալիրներից է: 17-րդ դարի կրոնական եւ ուսումնական կենտրոնը գտնվում էր Որոտանի ձորում, Տաթեւ գյուղի մոտակայքում: Ստեղծման առիթը նույն ձորում դեպի հարավ գտնվող Հարանց մեծ անապատի կործանումն էր, որից հետո միաբանությունը 1660 թվականին տեղափոխվել է նոր վայր եւ կառուցել այս անապատը:



Գեւորգյանը հետեւյալն է պատմել Յուրի Սահակյանին:

«... Նա մի օր հայտնվեց մեր կորածմոլորված աշխարհում ու ինչպես եկել էր, այնպես էլ գնաց:

Էն ժամանակ կլինեի 18 տարեկան:

Աշխատում էինք... ծառի հետեւից դուրս եկավ մի երիտասարդ՝ ուսապարկը մեջքին, բատինկաներով: Բարեւեց մեզ, սեղմեց ձեռքներս, հարցրեց հալներս ու մտավ Անապատ:

Նայեց, շոշափեց ամեն մի քարը:

«Լավ պահպանեցեք մեր հնությունները, մեր ժողովրդի, ազգի հարստությունները»,-ասաց:

Իսկ երբ եղավ այս հյուրասենյակում, դարձավ ինձ.

– Կարելի է մի քիչ չոր փայտ:

– Իսկ եթե չոր խոմ լինի...

– Կարելի է, բերեք:

Երբ փոքրիկ խարույկը լուսավորեց ողջ սրահը, անծանոթը գործի դրեց լուսանկարչական ապարատը:

«Դու էլ կանգնիր», – դարձավ նա ինձ:

Կանգնեցի: Լուսանկարեց ու բարեկամաբար ասաց. «Երբ մեծանաս, կասես, որ ինձ լուսանկարեց Եղիշե Չարենցը»:

Դե ով էր լսել Չարենցի անունը մեր մթին ձորերում...

Այդ տարի խաղողի լավ բերք կար:

Կանանցից մեկն ընտրել էր խաղողի ամենալավ ողկույզներն ու քամում էր հյութը: Իսկ Աքուլ մայրիկը մի լավ ողկույզ ձեռքին մոտեցավ անծանոթ հյուրին:

Չարենցը լուսանկարեց նրան ու վերցնելով խաղողը՝ հաճույքով կերավ:

«Այսքանն ինձ բավական է», – ասաց նա, ծոցատետրի մեջ վերջին նշումները կատարեց ու բռնեց վերադարձի կածանը»:

Սկզբում Մորուս Հասրաթյանը չէր ուզում լսել մեղվապահ Անդրանիկի զրույցը, որ ներկայացնում էր Յուրի Սահակյանը, բայց հետո... Նա էլ համոզվեց, որ Չարենցը եղել է Այունյաց աշխարհի այս անկյունում ՝ Տաթեւի (Հարանց) անապատում:

* * *

Անապատի կամրջից մեզ ուղեկցում էր մի հրաշալի անձնավորություն՝ Խաչատուր Հակոբյանը՝ Տաթեւ գյուղից:

Նա հետաքրքիր պատմություններ ներկայացրեց Անապատի ձորի մասին:

Խաչատուրից իմացանք, որ Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա Վանեցի Ամենայն հայոց կաթողիկոս, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային գործիչ) 20-րդ դարասկզբին Տաթեւի վանք կատարած ուխտագնացության ժամանակ այցելել է նաեւ Հարանց անապատ:

Եվ Անապատի կենտրոնում նրա տնկած թթենին մինչեւ հիմա պահպանվում է:

Խաչատուր Հակոբյանը մեզ ցույց տվեց Անապատի մերձակայքի այգիները, որոնք 1991-ին սեփականաշնորհվել են ու դարձել անմշակ:

Տաթեւ գետակից դեպի այգիներ ձգվող ոռոգման առուները եւ խողովակները հիմա քանդված եւ անօգտագործելի վիճակում են:

Սատանայի կամրջից մինչեւ Հարանց անապատ՝ մոտ 1,5 կմ, ձգվում է բանուկ արահետ. սա Հարանց անապատ տանող ամենակարճ եւ հարմար ճանապարհն է:

Արահետի վրա հանդիպում ենք վահանակների, որոնց վրա լուսանկարներով ցույց է տրվում, թե ինչ կենդանիներ եւ թռչուններ են բնակվում հրաշալի այդ ձորում:

Եվ Անապատում, եւ կածանով երթեւեկելիս հանդիպեցինք ուխտավորների՝ Իտալիայից, Չեխիայից...

Ըստ Խաչատուր Հակոբյանի՝ գրեթե ամեն օր ուխտավորներ են այցելում Հարանց անապատ:

Անապատում մեզ մի այլ անակնկալ էր սպասվում:

Պարզվում է՝ հինգ տարի շարունակ այդտեղ է բնակվում Հակոբ վանականը՝ միայնակ:

Գյումրիից է, 2014-ին այցելել է Երուսաղեմ՝ Տիրոջ գերեզմանին:Եվ այդքանից հետո գերադասել է բնակվել հենց Տաթեւի անապատում:

Հակոբ վանականը քաջատեղյակ էր Անապատի պատմությանը:

Հաճելի էր տեսնել, թե ինչպիսի մաքրություն է տիրում համալիրի ամբողջ տարածքում, խցերում, եկեղեցում:

Անապատի կենտրոնում՝ Խրիմյան Հայրիկի տնկած թթենու մոտ, նորաշեն մի խաչքար կա, որ նաեւ աղբյուր է:

Պարզվում է՝ ջուրն Անապատ է բերվել մոտ մեկ կմ հեռավորությունից:

Եվ բարի այդ գործը, ինչպես եւ խաչքար կանգնեցնելը, երկու տարի առաջ իրականացրել է Վարուժան Միքայելյան անունով գորիսեցի երիտասարդը, ում

մասին եւ Հակոբ վանականը, եւ Խաչատուր Հակոբյանը երախտագիտությամբ էին խոսում:

Հ. Գ. Անպայման այցելեք Հարանց (Տաթեւի) անապատ: Եվ միայն դրանից հետո կհամոզվեք, որ հոգեւոր-մշակութային այդ համալիրն անկրկնելի սրբավայր է ոչ միայն Սյունիքում, այլեւ Հայոց մեջ ընդհանրապես: Եվ միայն այցելելուց հետո հասկանալի կդառնա, թե ինչու Հայոց հանճարը՝ Եղիշե Չարենցն ուխտագնացության է եկել հենց այդ սրբավայր:

Սամվել Ալեքսանյան

Լուսանկարները՝ Սոնա Արզումանյանի

ԵՐԹՈՒՂԻ 13

Ուխտագնացություն Քերթողահայր Մովսես Խորենացու ծննդավայր Խորեա գյուղ, որ հիմա Կորնիձոր է կոչվում



Կորնիձոր

Կորնիձոր գյուղում եւ մերձակայքում եղել ենք բազում անգամ, բայց 2019 թ. դեկտեմբերի 28-ին այլ առաքելություն ունեինք՝ այցելել այդ տարածքի սրբավայրեր:

Մեզ ուղեկցում էին Տեղ համայնքի ղեկավարի տեղակալ, Կորնիձորի վարչական ղեկավար Արկադիա Խաչատրյանը, երիտասարդ հովիվ Սաքո (Սարգիս) Խուրշուդյանը, ով քաջածանոթ է Հին Կորնիձորի ամեն մի քար ու քարափի եւ իր նժույգով մեզ օգնելու պատրաստակամություն էր հայտնել:

Օրվա երկրորդ կեսին, երբ մեկ այլ երթուղով պետք է իջնեինք Կորնիձորի ու Խնձորեսկի մերձակայքում գտնվող Վանոցա գյուղի ավերակների (Վերին Ջիջիմլի կամ Ջիջիմլի առաջին) տարածքում գտնվող սրբավայրեր, մեզ առաջնորդ եղավ Սյունիքի մերօրյա մտավորականության երեւելի ներկայացուցիչ, երկրամասի պատմության խորագիտակ մասնագետ Գրիշա Հարությունյանը:

Կորնիձորի Սուրբ Հռիփսիմե եկեղեցի: Ըստ դռան ճակատին պահպանված գրության՝ կառուցվել է 1905-ին

Սուրբ Մովսես Խորենացու ծննդավայրը

Հին Կորնիձորում, որ մխրճված է ձորերի մեջ, հայ մարդը բնակվել է վաղնջական ժամանակներից: Այդ գյուղը նվիրական վայր է ամեն մի հայի համար: Պատճառն էլ հանրահայտ է. բազմաթիվ հեղինակավոր գիտնականների կարծիքով՝ հենց այդտեղ է ծնվել Պատմահայր, Տիեզերահռչակ վարդապետ եւ եռամեծար փիլիսոփա Մովսես Խորենացին:

Այո, նրանց կարծիքով հենց այս վայրում՝ Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառի Խորեա գյուղում է ծնվել Քերթողահայրը: Սույն տեսակետն առաջին անգամ քննարկվել է 1912 թվականին՝ «Տաճար» շաբաթաթերթում՝ Գնել վարդապետ Գալեմքեարյանի հոդվածներից մեկում:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցի, կառուցված է սրբատաշ քարերով, քառանկյունի, երկարուկ: Գտնվում է հին եւ նոր գյուղերն իրար կապող ճանապարհի վրա՝ հին գյուղի հյուսիս-արեւմտյան կողմում գտնվող մի բարձունքում

Հեղինակն այդ վարկածի օգտին մի շարք համոզիչ փաստարկներ է բերում: Այդ վարկածի օգտին է արտահայտվել նաեւ բազմավաստակ հայագետ Ստեփան Մալխասյանցը:

Մալխասյանցը գրում է. «Ավելի հավանական է կարծել, թե նա ծնված է Սյունիքում, Հաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Ստեփանոս Օրբելյանը 13-րդ դարի վերջում: Օրբելյանի հիշած Խորեա ձեւը 5-րդ դարում հնչում էր ավելի լիակատար ձեւով՝ Խորեան: Այս ենթադրությանն ուժ են տալիս մի քանի կողմնակի փաստեր, ինչպես Խորենացու լավ ծանոթ լինելը Սյունիքին, Երասխի հոսանքին, Երասխի ափերին մոտ եղած շենեերին, Սյունյաց նահապետ Սիսակին մեծ գովեստներով հիշելը, հակակրությունները դեպի Մամիկոնյանները, որոնք Սյունյաց հակառակորդներն էին Ե դարի երկրորդ կեսում եւ այլն»:

Այդ տեսակետը հաստատում եւ մի քանի փաստարկներով հարստացնում է մեր մեծ հայրենակից Մորուս Հասրաթյանը՝ «Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը» հոդվածում: Ըստ Մորուս Հասրաթյանի՝ «Խոր ձորակի ձեղքի մեջ քարայրային հին Խորեան այժմ գավառի բնակչության շուրթերով հնչում է որպես Կոռնձյոր»:

Խաչեր կոչվող վայրից հրաշալի խաչքարեր են բերվել նոր գյուղ եւ տեղադրվել Մեծ հայրենականում զոհված կորնիձորցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ:

Մորուս Հասրաթյանը նշում է նաեւ՝ «Ղազար Փարպեցին մեկ-երկու շաբաթվա ճանապարհ է կտրել՝ հանդիպելու, հյուրընկալվելու, այն էլ գրեթե երկու տարի, անշուշտ, մի ոչ պատահական Մովսեսի հետ, ում ինքը ծանոթացնում է որպես գավառի բնակիչների եւ հոգեւորականության դասի մեջ հռչակված մի հոգեւորական»:

Անշուշտ, հարցը, բանավիճային է: Սակայն պետք է նկատել, որ դեռեւս ոչ ոք փաստարկված խոսք չի ասել ընդդեմ Գալեմքեարյանի, Մալխասյանցի, Հասրաթյանի տեսակետի: Այնպես որ՝ մենք նույնպես միանում ենք այդ տեսակետին եւ հպարտությամբ արձանագրում՝ Սուրբ Մովսես Խորենացու ծննդավայրը Խորեա գյուղն է, որ հիմա Կորնիձոր է կոչվում:

Քարանձավներ, որտեղ հավանաբար ծնվել է Քերթողահայր Մովսես Խորենացին

Եվս մի քանի տեղեկություն Կորնիձորի մասին

Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվել է նաեւ Կոռնիձոր, Կոռնաձոր, Գենիձոր, Գերինզուր, Գերինձոր եւ այլն: Գտնվում է Գորիս-Ստեփանակերտ խճուղու աջ կողմում, Հագարի գետի ավազանի Կոռնիձոր գետակի ձախ զառիթափի լանջին եւ դրանից վեր՝ սարավանդի վրա:

Կորնիձոր անվանումը հին աղբյուրներում չի հիշատակվում: Գյուղանվանը հանդիպում ենք Տաթեւի վանքի նոր հարկացուցակում (1781 թ.), որի համաձայն վանքին տալիս էր չորս հազար շահի հարկ:

Ըստ գյուղի պատմագիր Սիմոն Սիմոնյանի՝ *«Գյուղը չորս անգամ տեղափոխվել է: Ամենահին գյուղը կոչվել է Խորեա... դա իրենից ներկայացնում է մի կիրճ, որտեղ ձորից 80-100 մետր բարձրության վրա, ուղիղ լեռների ճակատին փռված են ժայռակերտ քարանձավներ, մոտ քառասուն հատ: Դրանցից յուրաքանչյուրում կարող է տեղավորվել 20-25 մարդ»:*

19-րդ դարավերջին գյուղ է այցելել Երվանդ Լալայանը: Ահա նրա գրառումը. *«Խնձորեսկից դեպի արեւելահարավ, հազիվ 5 կմ հեռավորությամբ մի խոր ձորի լանջին գտնվում է Կոռնձոր գյուղը: Այստեղ կան բավական թվով հին քարատակներ եւ մի քարատակ եկեղեցի: Նշանավոր է նաեւ այն կոնաձեւ ժայռերը, որ ցցվում են ձորակի մեջ:*

Այժմյան բնակիչները տեղավորված են մասամբ այդ հին, մասամբ էլ նոր կտրված քարատակների եւ մանավանդ հասարակ ղարադամների մեջ:

Միակ քարաշեն եկեղեցին բավական հին եւ քայքայվելու վրա է:

Գյուղի միջով անցնում է համանուն վտակը»:

Գյուղի անվանումի հետ կապված մի քանի ավանդազրույցներ կան, դրանցից մեկը հիշեցնում է Սիմոն Սիմոնյանի «Կոռնիձոր» գիրքը (Երեւան-2006). *«Կոռնիձոր անվանումը հավանական է՝ ստացվել է Կոր ձոր իմաստով, քանի որ սկզբում անվանվել է Կեռ-նի-ձոր: Չնայած գրում են, որ կեռ բառը բարբառային է, իսկ գրականով կլինի կոր, եւ հետեւապես գյուղի անունն էլ տեղացիները գրում են Կոռնիձոր: Ավելի ճիշտ Կեռ ձոր արտահայտությունն է, քանի որ... տեղացիները այն անվանել են Կեռնի ձոր, իսկ հետո՝ Կոռնի ձոր»:*

Հին գյուղը հիմնականում պահպանվել է մինչեւ 1956 թվականը:

Գյուղի հին եկեղեցին, որ կոչվում էր Սուրբ Հովհաննես

Հիմա այդ եկեղեցու ավերակներն անգամ չկան: Գյուղացիները վկայում են, որ այն գտնվել է Կամո Սահակյանի ներկայիս այգու տարածքում:

Ըստ գրավոր աղբյուրների՝ Սուրբ Հովհաննեսը կառուցվել է 18-19-րդ դարերում, սակայն Երվանդ Լալայանն այլ կարծիք ունի՝ «Միակ քարաշեն եկեղեցին բավական հին է...»:

Քարատակի եկեղեցին

Այդ սրբավայրի մասին նույնպես տեղեկություն է հաղորդում Երվանդ Լալայանը: Բայց այդ եկեղեցու մասին պահպանվում է նաեւ ժողովրդական հիշողություն: Սաքո Խուրշուդյանը մեզ տարավ այդ վայր. քարանձավը քանդվել է, բայց մերձակայքում կա մի խաչքար (ոչ այնքան հին), որտեղ կորնիձորցիները մինչեւ հիմա էլ գալիս են մոմ վառելու եւ մատաղ անելու:

Քարատակի եկեղեցին գտնվել է Սուրբ Հովհաննեսի մերձակայքում:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցի

Աստծո այդ տաճարը կանգուն է: Ըստ դռան ճակատին պահպանված գրության՝ կառուցվել է 1905-ին: Կառուցված է սրբատաշ քարերով, քառանկյունի, երկարուկ: Գտնվում է հին եւ նոր գյուղերն իրար կապող ճանապարհի վրա՝ հին գյուղի հյուսիս-արեւմտյան կողմում գտնվող մի բարձունքում: Մերձակայքում՝ չորացած երկու ծառի տակ

Խաչքար Քարատակի երբեմնի եկեղեցու մոտ, որտեղ կորնիձորցիները մինչեւ հիմա էլ գալիս են մոմ վառելու եւ մատաղ անելու: Քարատակի եկեղեցին գտնվել է Սուրբ Հովհաննեսի մերձակայքում:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

նորօրյա մի փոքրիկ խաչքար է տեղադրված, որի մոտ նույնպես վառված մոմի հետքեր տեսանք: Ըստ կորնիձորցիների՝ Սուրբ Հռիփսիմեի մերձակայքում գերեզմանաքարեր են եղել, որոնք չեն պահպանվել:

Լուսահոգի Սիմոն Սիմոնյանն ուշագրավ բացահայտումներ է արել՝ Սուրբ Հռիփսիմեին (եւ ոչ միայն) առնչվող: Ըստ նրա՝ Սուրբ Հռիփսիմեն կառուցվել է իտալահայ ճարտարապետ Տիգրան Պողոսյանի նախագծով, ով կառուցել է նաեւ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

Ահա Սիմոն Սիմոնյանի գրառումը. «...Միրզիշենի եւ Խորեայի քանդված եկեղեցիների քարերով, Տիգրան Պողոսյանի նախագծով, Գրիգոր Տեր-Սողոմոնյանի ակտիվ միջնորդությամբ 1901 թ. սկսում է կառուցվել այժմյա Կոռնիձորի Սուրբ Հռիփսիմե եկեղեցին եւ շահագործման հանձնվում 1905 թ.:

Կառուցող վարպետն էր Խնձորեսկ գյուղացի Մինասը...»:

Խաչեր

Այս վայրը, որ նաեւ Թոփալ խութ է կոչվում, գտնվում է Կորնիձորի ներկայիս գյուղատեղիից 2-3 կմ արեւմուտք: Հայկական մեծ բնակավայր է եղել՝ պաշտամունքային իր վայրերով, որոնց մասին գրավոր հիշատակություններ դեռեւս չհայտնաբերեցինք:

Ներկայիս գյուղի տների մի մասը կառուցվել է Խաչեր գյուղատեղիի քարերով:

Արկադիա Խաչատրյանի փոխանցմամբ՝ այդ վայրը պաշտամունքային է եղել հնագույն ժամանակներից, ինչի մասին վկայում է դեռեւս կանգուն մարդակերպ մի հուշարձան:

Խաչեր կոչվող վայրից մի հրաշալի խաչքար է բերվել նոր գյուղ եւ տեղադրվել Մեծ հայրենականում զոհված կորնիձորցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի մոտ:

Սիմոն Սիմոնյանը Խաչեր գյուղին այլ անվանում է տալիս՝ Շուռնուխ:

Անշուշտ, վիճելի է այդ վարկածը, ստույգ է մի բան՝ Խաչերից հարավ է գտնվում Շուռնուխ կոչվող վայրը՝ այգիներով, դարավոր հնձաններով:

Արդյո՞ք դա է Հաբանդ գավառի Շուռնուխ գյուղը, որ հիշատակում է Ստեփանոս պատմիչը (չշփոթել Բղեն գավառի կամ Բաղք-Քաշունիքի Շուռնուխ գյուղանվան հետ):

Ռուսաց սրբատեղին

Կորնիձորից հարավ-արեւմուտք գտնվող Գյոդակլար գյուղի տարածքը (որի հայկական անվանումը ճշտված չէ), ինչպես եւ Խաչերի տարածքը մելիորացվել են 1960-70-ականներին, որի հետեւանքով ոչնչացվել են այդ վայրերի պատմամշակութային հուշարձանները:

Երբեմնի Գյոդակլար գյուղի տարածքում պահպանվել է մի սրբավայր, որին կորնիձորցիները Ռուսաց սրբավայր են անվանում, թեեւ դժվար թե այն հայկական ծագում չունենա:

Նման անվանումը պատահական չէ: 19-րդ դարավերջին այդ գյուղը բնակեցվել է մոլոկաններով: Մոլոկանները կրոնական աղանդի ներկայացուցիչներ էին Ռուսաստանում. աղանդը սկիզբ է առել 18-րդ դարի երկրորդ կեսին: Ռուսական իշխանությունն ու եկեղեցին հալածել են մոլոկաններին, որը հանգեցրել է նաեւ նրանց զանգվածային վերաբնակեցմանը, այդ թվում՝ Անդրկովկասում:

Մոլոկանների առաջին բնակավայրերը Հայաստանում հիմնվել են 19-րդ դարի 30-ական թթ.: Մոլոկանները մերժում էին խաչի պաշտամունքը, բայց եւ ունեին իրենց պաշտամունքային խորհրդանիշերը: Թե երբ են մոլոկանները ստույգ վերաբնակեցվել Կորնիձորի մերձակայքում եւ երբ են հեռացել այնտեղից, չկարողացանք ճշտել:

Միրզիշենի եկեղեցու ավերակները

Հագարու գետի աջ կողմի բարձունքի վրա է գտնվել հինավուրց Միրզիշեն գյուղի եկեղեցին: Ըստ Սիմոն Սիմոնյանի՝ լենկթեմուրյանները քանդել են եկեղեցին եւ տեղում երկու քյումբազ (քյուլբազ) կառուցել:

Կորնիձորցի Արշակ Գրիգորյանը 1943 թ. Սիմոն Սիմոնյանին պատմել է, որ ժամանակին երկրաշարժից փլվել է այդ քյումբազներից մեկը: Եվ իբր այդ քյումբազի (երբեմնի հայկական եկեղեցու) անկյունաքարերը (ռոքերը) 1898-1900 թվականներին՝ վերոնշյալ Տիգրան Պողոսյան անուն-ազգանունով ճարտարապետը, եզան սայլերով, տեղափոխել են Գորիս՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցելու համար: Մյուս քյումբազը ավերվեց Արցախյան պատերազմի ժամանակ:

Եղեգի ձորի (Ղամիշ դարա) քարանձավային եկեղեցին

Գյուղից մոտ 3,5 կմ հարավ-արեւելք է գտնվում այդ սրբավայրը: Պահպանվել է քարանձավային եկեղեցու ներսի խաչքարը:

Կիրաձորը

Մովսես Խորենացու ենթադրյալ գերեզմանատեղիից՝ Սռի եղցուց դեպի

հարավ-արեւմուտք (երբեմնի Կենտ շենից կամ Կենդ շենից) ձգվում է Կիրաձորը, ասել է թե՝ Գրաձորը: Անվանումը, կարծեք, ամեն ինչ ասում է այդ վայրի հոգեւոր-մշակութային անցյալի մասին:

Սռի եղցին

Այդ սրբավայրի մասին հանգամանալից խոսք ենք ասում Տեղ գյուղ կատարած մեր ուխտագնացության վերաբերյալ հրապարակումներում: Մատենագիտության մեջ իշխող վարկածներից մեկի համաձայն՝ այդտեղ է հողին հանձնվել Պատմահայր Մովսես Խորենացին: Սռի եղցին գտնվում է Կենտ շեն բնակավայրի ծայրին:

Ըստ Սիմոն Սիմոնյանի՝ «Կետաշենը եւ մինչեւ Կիրաձորի վերին ծայրն ընկած հողատարածքները 1926 թ. գյուղի սահմանները ճշտելու ժամանակ, գծել են աջակողմյա ձորով, եւ դրանք մտել են Տեղ գյուղի տարածքների մեջ»:

Ըստ Մորուս Հասրաթյանի՝ Կետաշենը առաջին անգամ ավերվելուց հետո պահպանվել են եկեղեցին ու պարիսպները, երկրորդ անգամ նորից բնակություն են հաստատել եւ գյուղը կոչել Կետաշեն-Կենտաշեն-Կենտ շեն-Գետաշեն:

Ըստ Արկադի Խաչատրյանի՝ նոր Կորնիձորը կառուցելիս գյուղացիներն օգտագործել են ինչպես Խաչերի, այնպես էլ Կենտ շենի քարերը:

Պաշտամունքային վայր Վանոցա երկրորդում, որ ազերիները Ներքին Ջիջիմլի են անվանել

Արկադիա Խաչատրյանի առաջնորդությամբ այցելեցինք Կորնիձորից մոտ 5 կմ հարավ-արեւելք գտնվող մի հնավայր, որ գտնվում է Կուրաթ գետակի (Հագարի գետի վտակ) ձախ ափին:

Հին հայկական այդ բնակատեղին 19-րդ դարում բնակեցվել է թուրք-ազերիներով, ովքեր էլ գյուղն անվանել են Ներքին Ջիջիմլի:

Ղեւոնդ Ալիշանը հայկական այդ բնակավայրն անվանում է Կարբինք Ներքին, իսկ Վերին Ջիջիմլին՝ Կարբինք Վերին: Ալիշանը տեղանվան ադրբեջանական ձեւն անվանում է Ճեճիմլու (այս մեկը՝ Ճեճիմլու Բ):

Մորուս Հասրաթյանը Ներքին եւ Վերին Ջիջիմլի գյուղերին այլ անուն է տալիս՝ Վանոցա, որն էլ այսօր մտել է պաշտոնական շրջանառության մեջ:

Հնավայրը դեռեւս պատշաճ ուսումնասիրված չէ, բայց...

Վանոցա գյուղի եկեղեցու տեղում եւ եկեղեցու քարերով կառուցված մզկիթը (ըստ Մորուս Հասրաթյանի)

Առերեւույթ կիկլոպյան կառույցների մի ամբողջություն է. մեծածավալ քարերով, առանց շաղախի, զանգվածեղ շինություններ: Էնեոլիթից բրոնզի դարին անցնելու ժամանակաշրջանին (մ.թ.ա. III հազարամյակ) բնորոշ կառույցներ են: Կան նաեւ մենաքարեր (միգուցե եւ դոլմեններ, կրոմլեխներ), որոնք շատ նման են Սիսիանի տարածաշրջանի Զորաց քարեր հնավայրի մենաքարերին (ավելի փոքր, բայց ավելի մաշված): Պահպանվել են պարսպի հետքերը, որոնք, անշուշտ, վկայում են համալիրի պաշտպանական նշանակության մասին: Կիկլոպյան այդ հնավայրը, անտարակույս, նաեւ պաշտամունքային նշանակություն է ունեցել:

Պահպանվում է խուց-բնակարաններից մեկը: Հնավայրի արեւելյան մասով է անցնում Կորնիձորից դեպի ազատագրված տարածքներ ձգվող ավտոճանապարհներից մեկը: Այդ հնավայրն ազերի-թուրքերն անվանում էին Գյավուր դամի (անհավատների տներ. մեզ էին անհավատ կոչում):

Վանոցա գյուղը, որտեղ ազերիները պղծել են հայոց եկեղեցին եւ տեղը մզկիթ կառուցել

Կորնիձորի եւ Խնձորեսկի գրեթե միջնամասում գտնվող հին հայկական այդ բնակավայր այցելեցինք 2019 թ. դեկտեմբերի 28-ի օրվա երկրորդ կեսին:

Այցելեցինք Գրիշա Հարությունյանի ուղեկցությամբ, ով քաջածանոթ է այդ վայրերին: Այցելեցինք Խնձորեսկ գյուղով. դա ավելի հարմար ուղի է:

Խնձորեսկից մոտ 8 կմ հարավ-արեւելք գտնվող այդ գյուղի բարձունքում են գտնվում երկու խոշոր դամբարանները, որ երեւում են Կորնիձորից, նաեւ Վանոցա երկրորդից:

Տեղացիներն այդ վայրը կոչում են քյումբազներ (քյուլբազներ), որ նշանա-

կում է դամբարաններ: Քյումբազներ կոչվող այդ վայրը մինչեւ հիմա գիտական վեճի առարկա է:

Քյումբազներից մենք իջանք Վանոցա: Գյուղը գտնվում է Հագարի գետի աջակողմյան Կուրաթ վտակի ստորին հոսանքի աջափնյակում: Գյուղում պահպանվում են քանդված հայկական եկեղեցու ավերակները:

Սակայն գյուղում եղել է մեկ այլ եկեղեցի, որը, ըստ Մորուս Հասրաթյանի, 1905-ին ազերիները քանդել են եւ նրա քարերով տեղում մզկիթ կառուցել:

Գրիշա Հարությունյանի կարծիքով, այդուհանդերձ, մզկիթի ճարտարապետությունն իր վրա ակնհայտորեն կրում է հայկական ճարտարապետության ազդեցությունը: Նկատի ուներ հատկապես ներքին լուծումները, ինչպես եւ հյուսիսային պատի մեջ եւ արեւելյան դռան բարավորի տեղում արհեստականորեն խցկված՝ արաբատառ գրությամբ քարերը:

Հագարի գետը, որ գյուղի արեւելյան սահմանն է

Հագարի գետի ձորահովտի կորնիձորյան հատվածում կան գյուղատեղիներ՝ սրբավայրերով, որոնցից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության առարկա է: Հագարին նաեւ ջրբաժան է Սյունյաց աշխարհի Հաբանդ եւ Աղահեճ գավառների:

Հագարի գետը մատենագիտության մեջ հիշատակվում է այլ անուններով եւս՝ Ագար, Ագարա, Ագարա գետ, Ագարակի գետ, Ակերա, Աղավնո, Աղավնո գետ, Աղվան, Աղվանի, Առան, Հագարու, Հաքարլու, Հաքյառու գետ եւ այլն: Հագարին Արաքսի ձախակողմյան վտակն է: Արաքսին է միանում Հաջալլի գյուղից մի փոքր արեւելք:

Հագարին կազմվում է երեք ձյուղերի միախառնվելուց՝ Հագարի, Հոչանց, Աղօղլան (Զաբուղ). վերջին երկուսը Հագարու գետին են միանում ձորահովտի կորնիձորյան հատվածում:

Հագարի գետի ամենախոշոր վտակը Որոտանն է, որը նրա մեջ թափվում է ծայր ստորին հոսանքի շրջանում՝ աջ կողմից:

Վերջաբան

Ինչպես նշեցինք խոսքի սկզբում, մեր նպատակը Կորնիձորի եւ մերձակայքի սրբավայրերին ծանոթանալն էր: Բայց այդ օրը քանիցս հիշեցինք գյուղի պատմության բազում հերոսական եւ ուշագրավ դրվագներ:

Պաշտամունքային վայր Վանոցա երկրորդում, որ ազերիները Ներքին Ջիջիմլի են անվանել

Անհնար էր չհիշել Կորնիձորի Գրիգոր քահանային՝ Գրիգոր Տեր-Սողոմոնյանին, ում սխրանքը փայլատակեց հատկապես 1919 թ. նոյեմբերին՝ Զանգեզուրի հերոսամարտի օրերին:

Գրիգոր քահանայի մասին շատ է գրվել, բայց բավարարվենք Սերո Խանզադյանի մի գրառմամբ. «1919 թ. ձմեռնամուտին, Բաքվի կոմունան կործանած թուրքական զորքը, փորձված դահիճ Նուրի փաշայի գլխավորությամբ, հարձակվում է Զանգեզուրի վրա:

Այդ բանակի 20 հազարանոց մի ձյուղ գրոհում է Կորնիձորի վրա:

Տեր Գրիգորը՝ իր չորս որդիների հետ, դիրքեր է բռնում թուրքերի դեմ, մինչեւ լեռների մյուս գյուղերից գալիս են ինքնապաշտպանության ջոկատները եւ թշնամուն ջախջախելով հետ շպրտում»:

1925 թ. Գրիգոր Տեր-Սողոմոնյանը ձերբակալվեց եւ աքսորվեց: Աքսորի ժամկետը լրանալուց հետո տեղափոխվել է Տաշքենդ եւ ծառայության անցել տեղի հայկական եկեղեցում:

Մահացել է 1934-ին, թաղված է Տաշքենդի հայկական եկեղեցու առջեւի գերեզմանատանը:

Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ Քաջազնունին Գրիգոր քահանային անվանել է «Ազգային հերոս»:

Գարեգին Նժդեհն էլ այսպես է ներկայացրել նրան՝ «Ահա՝ հոգեւորական, զինվոր, հերոս կորնիձորցի Գրիգորը»:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 14

Շահանդուխտ թագուհու ջանքով վերածնված Տեղ գյուղը, որի մերձակայքի Սռի եղցում է գտնվում Մովսես Խորենացու ենթադրյալ գերեզմանը

Այս ուխտագնացությունը Տեղ գյուղի սրբավայրեր տեղի ունեցավ 2019 թ. հուլիսի 14-ին: Մեզ ուղեկցում էր Ալեքսան Շեգունցը, ով գյուղի պատմության ուսուցիչն է եւ քաջածանոթ է Տեղի պատմությանը, գիտելիքների հարուստ պաշար ունի բնակավայրի պաշտամունքային վայրերի մասին: Թեեւ ամիսներ են անցել, սակայն անմոռանալի են այդ օրվա տպավորությունները:

Ժողովրդական ավանդազրույցը Մովսես Խորենացու գերեզմանի մասին

Կա ժողովրդական ավանդություն առ այն, որ Մովսես Խորենացին հողին է հանձնվել Տարոնում՝ Մշո Առաքելոց վանքի արեւելյան պարսպի տակ:

Մորուս Հասրաթյանը ոչ միայն չի վիճարկում այդ վարկածը, այլեւ հավանական է համարում դրա իսկությունը («Ո՞րն է Մովսես Խորենացու ծննդավայրը» հոդվածը):

Շրջանառվում է մեկ այլ վարկած նույնպես՝ հիմնված Ղազար Փարպեցու պատմության վրա: Իբր Խորենացու մահից հետո նրա գերեզմանը պղծվել է, իսկ ոսկորները նետվել են գետը:

Մինչդեռ Ստեփան Մալխասյանցն ապացուցել է, որ Փարպեցու գրքից էջ է պակասում, եւ խոսքը ոչ թե Պատմահոր, այլ մեկ ուրիշի պղծված գերեզմանի մասին է:

Սակայն կա ժողովրդական մեկ այլ

Տեղ գյուղը, որ երբեմն կոչում ենք Շահանդուխտ Ա թագուհու անվամբ: Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվում է նաեւ Դեղ, Դեղի, Դըգ, Դըղ, Տեխ,Տեղեր, Տեղի, Տիղ, Տող անվանումներով: Գտնվում է Գորիս քաղաքից 18 կմ հյուսիս-արեւելք՝ Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի վրա:

Սուրբ Գեւորգ եկեղեցին, որ 4–5 րդ դարերից է

ավանդություն, որի համաձայն Տեղ գյուղի մերձակայքում գտնվող Սռի եղցին է Մովսես Խորենացու գերեզմանավայրը:

Ըստ Սերո Խանզադյանի «Հայրենապատումի»՝ Տեղ գյուղի բնակիչների պատմելով՝ Պատմահայրը թաղված է Սռի եղցի մատուռ-եկեղեցում, որը ոչ հեռու է նրա ծննդավայր Խորեա-Խրով գյուղատեղիից, ինչպես եւ Կիրաձոր-Գրաձորից:

Տեղ գյուղի բնակիչ Ադորանց Աղալոն, ով 1930-ականներին 80 տարեկանն անց ծերունի էր, Սերո Խանզադյանին Խորենացու հետ կապված մեկ այլ զրույց էլ է պատմել:

Ահա՝ «Մովսես Խորենացին Սռի եղցում ունենում է երկու աշակերտ: Երբ սրանց կրթում-հասունացնում է, մեկին ուղարկում է Արեւմտյան Հայաստան, մյուսին՝ Արցախ՝ լուսավորության գործերով զբաղվելու: Շատ տարիներ հետո, երբ ինքն աքսորված էր այստեղ եւ ապրում էր ջրաղացում, նկատում է, որ երկու ձիավոր են մոտենում ջրաղացին:

Ճանաչում է, տեսնում է, որ իր աշակերտներն են:

Երբ ձիավորները մոտենում են, ահեղ գոչում է. *«Անիծվածներ, ես ձեր միտքը գիտեմ, դուք եկել եք ինձ սպանելու»:*

Ձիավորները, սարսափելով նրա գուշակությունից, որ իրոք այդպես էր, իջնում են ձիերից եւ ծունկի գալով նրա առաջ՝ մեղա գալիս...»:

Այս կողմերում ուրիշ զրույցներ էլ կան Մովսես Խորենացու հետ կապված:

Այնպես որ՝ ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնելու ժողովրդական հիշողությամբ հյուսված ավանդազրույցը՝ նրա ենթադրյալ գերեզմանի մասին, մանավանդ որ Սռի եղցին գտնվում է Մովսես Խորենացու ծննդավայր գյուղի մերձակայքում:

Այդ վարկածն ընդունել է նաեւ Վանաձորի պետական համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Վանո Եղիազարյանը (Սյունեցիները եւ հայ հին գրականությունը, «Այունյաց երկիր», N 19, 2019 թ.):

Ըստ գրականագետի՝ «Ավանդության համաձայն՝ Խորենացին թաղված է Մշո Առաքելոց վանքում, սակայն կա կարծիք, թե թաղված է Սյունիքում՝ այժմյան Տեղ գյուղից 3 կմ հարավ-արեւելք՝ Խրովի ձոր դարավանդի կանգուն մատուռ-եկեղեցում, որը Տեղի բնա-

Սուրբ Վարդան նորաշեն մատուռը

...Կա կարծիք, թե թաղված է Սյունիքում՝ այժմյան Տեղ գյուղից 3 կմ հարավ-արեւելք՝ Խրովի ձոր դարավանդի կանգուն մատուռ-եկեղեցում, որը Տեղի բնակիչները կոչում են Սռի եղցի

Տեղ գյուղից մոտ 3 կմ դեպի հարավ-արեւելք, Խրովի ձորի քարափի վրա կանգուն է Սռնեղցի (Սեռի եկեղեցի) կոչվող մատուռ-եկեղեցին

Գյուղի հին գերեզմանատունը, որ սքանչելի պանթեոն է՝ արվեստի աննման գործերով

Սուրբ Վարդան նորաշեն մատուռը: Կողքը քարատակ է:

կիչները կոչում են Սռի եղցի»:

Տեղ գյուղը, որ երբեմն կոչում ենք Շահանդուխտ Ա թագուհու անվամբ

Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվում է նաեւ Դեղ, Դեղի, Դըգ, Դըղ, Տեխ,Տեղեր, Տեղի, Տիղ, Տող անվանումներով:

Գտնվում է Գորիս քաղաքից 18 կմ հյուսիս-արեւելք՝ Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի վրա:

Հնում մտնում էր Սյունիք աշխարհի Հաբանդ գավառի մեջ եւ, ըստ հին հարկացուցակի, Տաթեւի վանքին տալիս էր 12 միավոր հարկ:

Տեղ գյուղը երբեմն կոչում ենք Սյունիքի թագավորության (970-1170 թթ.) առաջին թագուհի՝ Սմբատ Ա արքայի կողակից Շահանդուխտ Ա թագուհու անվամբ, ով Աղվանից տնից էր, Խաչենի եւ Ուտիքի իշխան Սահակ Սեւադայի դուստրը:

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» գրքում պահպանվել է այն վճռագիրը, որով Շահանդուխտ թագուհին Տաթեւի վանքին է նվիրաբերել Տեղ գյուղը 998 թվականին:

Ահա՝ *«Հանուն Աստծո ես՝ Սեւադայի դուստր Շահանդուխտս, կամեցա եկեղեցուն Հաբանդ գավառի Տեղ կոչված գյուղը՝ իր բոլոր շրջակա սահմաններով, լեռնով, դաշտով, մյուս եկամուտներով, որ ինձ էր նվիրել իմ թագավոր Սմբատը, եւ ես խոպան տեղից գյուղ էի դարձրել, իմ երանելի թագավորի վախճանից հետո նրա հոգու համար Տաթեւի սուրբ կենտրոնական վանքին եւ սուրբ նշանին տվեցի Սյունյաց եպիսկոպոս Հակոբի միջոցով:*

Այսուհետ ես ու իմ որդիներ Վասակն ու Սեւադան տիրող չենք»:

19-րդ դարավերջին, ըստ Երվանդ Լալայանի, գյուղը պատկանում էր Դոլուխանյանին, Աթաբեկյանին եւ թուրք Ռուստամբեկովին:

Տեղցիներն ասում են, թե Սռնեղցի (Սեռի եկեղեցի) կոչվող մատուռ-եկեղեցին կառուցել է ինքը՝ Մովսես Խորենացին՝ իր ձեռքով, իբրեւ ճգնարան

ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում ենք գրիչ Մելիքսեթ երեցի ընդօրինակած ավետարանը, որում գրված է՝ *«...ձեռն արկեալ գիրեցի զսահի քաղաքս Տեղ»*:

1645-ին գրված այս հիշատակարանում Տեղն իբրեւ քաղաք անվանելն առնվազն նշանակում է, որ այն իշխանանիստ է եղել:

Տեղում չորս հազար քարատակտան մասին է վկայում Սերո Խանզադյանը:

Տեղը Նախիջեւան-Պարտավ ճանապարհի վրա աչքի ընկնող բնակավայրերից էր:

1889 թ. հոկտեմբերին Լեոն, Շուշուց Գորիս ճամփորդելիս, անցել է Տեղ գյուղով եւ «Սյունիքից մի անկյուն» նոթագրության մեջ (Լեո, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, Երեւան 1985 թ.. էջ 46) նկարագրել գյուղը:

Մի պատառիկ այդ նոթագրությունից. «Ահա եւ ինքը, Տեղ գյուղը: Նա տարածված է մի ձորի լանջիվայրով եւ շատ մեծն է. տներ, տներ, որքա՜ն շատ են, հավաքվել են մի տեղ, բռնել են մեծ լանջիվայրը, իջել են մինչեւ ձորը: Գյուղի տեսքը խիստ տխրալի է: Ողորմելի, ցածրիկ տնակներ կպած են գետնի երեսին. ամենքը մոխրի կույտերի են նման. գորշ մոխրահողն այնպես անախորժ, սիրտ ճմլող գույն է տալիս արեգակի տխուր ճառագայթների տակ, այնպիսի օտարոտի, ծանր տպավորություն է գործում, որ նայողը հենց առաջին անգամից խղճում է, կարծելով, թե մի ինչ-որ թշվառություն

Սուրբ Գեւորգ եկեղեցին, որ 4-5 րդ դարերից է

Սեւ քերծի ուխտատեղին

ճմլել է նրան, գետնից կպցրել, եւ մի ինչ-որ թշվառության համար նա մոխիր է ածել իր գլխին, բոլորվել է արեգակի առաջ եւ իր բազմաթիվ մռայլ աչքերը, իր փոքրիկ, ցածրիկ սեւ-սեւ սրահները երկնքի լուսատուին ուղղած՝ ուզում է տաքացնել իր սառած մարմինը եւ միեւնույն ժամանակ ուզում է սգալ... եւ սգում է: Գոնե մի հատ ծառ, մի փոքրիկ թուփ, մի հատ լայն բակ կամ մի կանաչ բույս երեւար գյուղի մեջ. այդպիսի բաներ չորոնեք, մոխիր եւ մոխիր է ամեն տեղ, տներն անկարգ ու անկանոն թափված են միմյանց վրա, մեկի կտուրը մյուսի բակն է. մարդ զարմանում է, թե ինչպես են մարդիկ անցուդարձ անում գյուղի մեջ, ո՞ւր են նրանց ճանապարհները, փողոցները:

Տեղը շատ հին գյուղ է: Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ (գլ. ԾԳ) գտնում ենք, որ այս գյուղը փրկչական 998 թվականին նվիրել է Տաթեւի վանքին Սյունյաց առաջին թագավոր Սմբատի կինը, Շահանդուխտ թագուհին: Այդտեղ էլ հիշատակվում է, որ ինքը, Շահանդուխտ թագուհին է այս տեղը շեն արել: Գյուղի հնության մասին վկայում է նաեւ հին գեղեցիկ եկեղեցին, որ մինչեւ օրս էլ կա: Հայտնի չէ, թե ինչպես է եղել առաջ, բայց այժմ Տեղը Սյունյաց երկրի ամենամեծ հայ գյուղերից մեկն է. նա ունի մինչեւ 600 տուն ժողովուրդ»:

Խորհրդային տարիներին եւ հատկապես հիմա Տեղ գյուղը Սյունյաց աշխարհի բարգավաճ գյուղերից մեկն է:

Սուրբ Գեւորգ եկեղեցին, որ 4–5 րդ դարերից է

Այս եկեղեցու մասին շատերն են արտահայտվել, բայց նպատակահարմար գտանք սույն առիթով ներկայացնել ճանաչված պատմաբան եւ հնագետ Մորուս Հասրաթյանի խոսքը:

Ահա՝ «Սակայն ամենաարժեքավորը գյուղամիջի Սուրբ Գեւորգ եկեղեցին է՝ իր ճարտարապետական կարեւոր առանձնահատկությունների շնորհիվ: Այն գտնվում է Մելիք Բարխուդարի ապարանքի մոտ, մի քանի մետր հարավ-արեւմուտք: Եկեղեցին ունի թաղածածկ դահլիճի հորինվածք, կառուցված է սրբատաշ խոշոր քարերով եւ համեմատաբար լավ է պահպանվել: Այն միջնադարում ունեցել է երկու նորոգում, որոնցից մեկը՝ բավական հիմնովին:

Եկեղեցու ներկայիս ծավալը բաղկացած է երկու մասից. հնագույն՝ արեւելյան եւ նրան արեւմուտքից XVIII դ. կցված հատվածից: Այս վերակառուցման ժամանակ քանդել են հին եկեղեցու արեւմտյան ճակատը, որը վերածվել է կամարակապ բացվածքի: Նման երեւույթը՝ հին եկեղեցիների ընդարձակումը հաճախ է հանդիպում XVII – XVIII դդ. Հայաստանի ճարտարապետության մեջ:

Տեղի հին եկեղեցու աղոթասրահը (3,30 x 7,05 մ) արեւմուտքից ավարտվում է խիստ շեշտված պայտաձեւ հատակագծով աբսիդով, որը ներգծված է արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ: Պայտաձեւ է նաեւ բեմի հաղթակամարը: Խորանն ունի գմբեթարդի տակով անցնող հորիզոնական զարդագոտի, որը բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարի հուշարձաններին: Բեմի կամարի իմպոստները նույնպես ունեն V-VII դդ. տարածված ձեւը՝ հորիզոնական սալ՝ մոյթին կորագիծ ձուլվող: Սալը մշակված է միմյանց զուգահեռ երկու ակոսով: Ներսում, երկայնական պատերին կից են մեկական որմնամոյթ, որոնց միջեւ սլաքաձեւ, երկշերտ կամարներ են գծված: Թե որմնամոյթերը, թե որմնակամարները վերակառուցման ժամանակ են շինվել: Դահլիճը թաղակիր կամար չունի: Եկեղեցին լուսավորվում է բեմի եւ հարավային պատի երկու լուսամուտներով: Շենքի հին մասի միակ մուտքը հարավային պատում է (հավանաբար արեւմուտքից նույնպես դուռ է եղել): Դռան ուղղանկյուն բացվածքը երկու կողմում ունի կալունակներ (կրոնշտեյններ), իսկ բարավորի քարի վրա 16 եւ 6 թերթիկանի երկու խոշոր վարդյակ են քանդակված:

Տեղի Սուրբ Գեւորգ եկեղեցու հարդարանքից մնացել են նաեւ վեց թերթիկանի վարդյակներ հարավային պատի վրա եւ արեւելյան ճակատի ստորին մասում գտնվող շրջանագծի մեջ ներառված ութ թեւանի աստղ պատկերող հյուսածո մի զարդաքանդակ, որը վաղ միջնադարյան հայկական որեւէ այլ հուշարձանում ինձ ծանոթ չէ: Վերանորոգման ընթացքում զարդաքանդակի ստորին մասը տաշել են՝ շարվածքում հարմարեցնելու համար: Եկեղեցու ներկայիս քիվը, ինչպես եւ լուսամուտները վերանորոգման արդյունք են: Հարավային ճակատի զույգ լուսամուտները բարձր, ուղղանկյուն բացվածքներ են: Արեւմտյան կողմի լուսամուտը բացելիս տաշել- ոչնչացրել են դռան բարավորի վարդյակներից մեկի քառորդ մասը: Ներսից եկեղեցին սվաղված է:

XVIII դ. արեւմտյան կողմից կցված մասն ունի նույն բարձրությունը ու լայնությունը, ինչ եւ հին եկեղեցին, որի հետեւանքով այս երկուսը ծավալատարածական ամբողջություն են կազմում: Սակայն նոր մասը կառուցված է կոպտատաշ բազալտից եւ երկհարկանի է: Առաջին հարկը եկեղեցու դահլիճի օրգանական շարունակությունն է: Այն թաղածածկ, երկու թաղակիր կամարով եւ որմնամոյթերով սրահ է, որի միակ մուտքը եւ ուղղանկյուն լուսամուտը հարավային պատում են: Իսկ վերնահարկը (նույնպես թաղածածկ) ունի մուտք հյուսիսային պատից եւ լուսամուտ՝ դեպի աղոթասրահ բացվող: Եկեղեցու այսպի-

սի կից կառույցը եզակի է ուշ միջնադարի հայ ճարտարապետության մեջ:

Եկեղեցու վերանորոգման մասին (անկասկած, նաեւ կից կառույցի շինարարության) արձանագրությունը փորագրված է կամարակապ շքամուտքով նոր դռան ճակատակալ քարին՝

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ՏԱՋԱՐԻՍ ՎԷՄՍ ՆՈՐ
ԷՔԵՑԱՆ ԲԱՐԽՈՒՏԱՐՆ ԻՐ ԿՈՂԱ-
ԿԻՑ ԹԱՃ
ՈՒՄՆ ՈՐ ԳԵՂԻՍ ՆՈՐՕՔԻԼՆ ԹՎ
ՌՃՁԶ (1737)

Նոր մուտքի արեւելյան կողմում կա արձանագրություն 1742 թ. եկեղեցու մկրտության ավազանը շինելու մասին՝

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ
ՏԱՋԱՐԻՍ ԱԻԱԶԱՆՆ
ՇԱՀՆԱԶԱՐԻ ԿՈՂԱԻՑ
ՎԱՊՈՒՆ ԹՎ ՌՃ
ՂԱ

Թվագրված արձանագրություններից ամենահինն է՝

ՔՍ ԲՐԻՆ ԽՉՍ ՈՎՆԷՍ ԱԲԵՂԻՆ Է
ԹՎ Ջ (1451)

Տեղի Սուրբ Գեւորգ եկեղեցին, չնայած հիմնովին վերանորոգմանը, պահպանել է վաղ միջնադարյան հորինվածքից այնպիսի կարեւոր մանրամասներ (խորանի հատակագծի եւ կամարի շեշտված պայտաձեւություն, իմպոստների արխայիկ ձեւ, մուտքի բարավորի վարդյակներ), որոնց շնորհիվ հուշարձանը կարելի է թվագրել ամենաուշը V-VI դդ., եթե ոչ ավելի վաղ: Ինչեւիցե, եկեղեցու շենքի հնագույն մասի վաղ միջնադարին պատկանելն անվիճելի է»:

Եկեղեցին ներկայումս վերանորոգման ընթացքի մեջ է, աշխատանքները մեկնարկել են 2017-ին:

Հրաշք-շքեղ Սռի եղցին

Տեղ գյուղից մոտ 3 կմ դեպի հարավ-արեւելք, Խրովի ձորի քարափի վրա կանգուն է Սռնեղցի (Սեռի եկեղեցի) կոչվող մատուռ-եկեղեցին. տեղցիներն ասում են, թե դա կառուցել է ինքը՝ Մովսես Խորենացին՝ իր ձեռքով, իբրեւ ճգնարան:

Ըստ Մորուս Հասրաթյանի՝ «Սռնեղցին միանավ, թաղածածկ փոքր եկեղեցի է (7,77 x 4,51 մ արտաքին չափերով), շեշտված պայտաձեւ հատակագծերով խորանով, ներառված արտաքին պատերի ուղղանկյուն եզրագծի մեջ (չափագրությունը՝ Լ. Սադոյանի): Պայտաձեւ է նաեւ խորանի կամարը: Բեմը աղոթասրահից բարձր է 0,5 մ:

Մելիք Բարխուդարի «ամարաթը»

Սրբավայր Տեղ-Արավուս ճանապարհին

«Քարե օթաղը»: Ըստ Սեդրակ Բարխուդարյանի (Դիվան հայ վիմագրության, երկրորդ հատոր, էջ 66)՝ «...այսպես են անվանում գյուղացիները գյուղամիջի եկեղեցու մոտ, հարավ-արեւելքից կանգուն մնացած, սրբատաշ քարերով շինված մի փոքր տուն»

Արավուս

խորանն ունի գմբեթարդի տակով ընթացող գոտի, որը շարունակվում է հյուսիսային եւ հարավային պատերի ողջ երկարությամբ: Աղոթասրահը (3,36 x 2,80 մ) թաղակիր կամարներ չունի: Եկեղեցին լուսավորվում է խորանի եւ արեւմտյան ճակատի նեղ լուսամուտներով: Երկաստիճան որմնախարսխի վրա բարձրացող պատերը շարված են սրբատաշ բազալտի քարերից: Եկեղեցին լավ է պահպանվել՝ միայն երկթեք տանիքի քարե սալերն են թափվել: Միակ՝ արեւմտյան դուռն ունի ուղղանկյուն բացվածք, առանց շքամուտքի եւ հարդարանքի: Դռան վերեւում, ներսից պահպանվել են վաղ միջնադարյան հայ ճարտարապետությանը բնորոշ մի այնպիսի տարր, ինչպիսին պայտաձեւ լյունետն է»:

Ըստ Օնիկ Խնկիկյանի՝ «Սռի եղցի» անվամբ այս վայրում առկա է բնակատեղի, որի արեւմտյան կողմով ձգվում էր 2,4 մ հաստությամբ կիկլոպյան շարվածք ունեցող պարիսպ: Այն պահպանում էր սեղանաձեւ հրվանդանի վերջավորությունը... Հրվանդանի անմիջապես եզրին կանգուն է միջնադարյան փոքր եկեղեցի, որից եւ առաջացել է տեղանքի անվանումը»:

Մելիք Բարխուդարի «ամարաթը»

Տեղ գյուղի կենտրոնում է գտնվում ուշ միջնադարի հայկական ճարտարապետության հետաքրքրական հուշարձաններից մեկը՝ Մելիք Բարխուդարի «ամարաթը»՝ բաղկացած մի քանի թաղածածկ սենյակներից:

Մելիքական ամարաթի գմբեթավոր դահլիճի դռան բարավորին արձանագրված է. «Թվ: ՌՄԼԲ: (1783 թ.) ի վաելումն Մէլիք Բարխուդարի որթի Դավիթ Պէկս Շինեցի այս ամարաթս Իբրայիմ խանի ժամանակօվն»:

Ամարաթի ճարտարապետական տարրերին անդրադարձել են նաեւ Նուբար Պապուխյանը:

Ահա նրա նկարագրումը (Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երեւան 1972, էջ 70). «Մելիքական ամարաթները, պատկանելով ուշ միջնադարին, իրենց մեջ պարունակում են ավելի վաղ ժամանակների պալատական ճարտարապետության շատ տարրեր:

Տեղ գյուղի Մելիք Բարխուդարի ժառանգների տունը կառուցված է բավականաչափ թեք տեղանքում, երկու լայն ճանապարհների միջեւ, որոնցից վերինն ընկած է կտուրների մակարդակի վրա: Համակառույցն այդ ճամփի երկարությամբ ձգված շինության տեսք ունի: Ճակատային ծավալի կողմը, ինչպես առհասարակ գլխատների համակառույցներին է հատուկ, ուղղված է դեպի բակը, որի առջեւով անցնում է ստորին ճանապարհը:

Այս համակառույցի կառուցվածքների մի մասը քանդվել է, մի մասն էլ հիմնական շենքերի հետ օրգանապես չկապվող, ուշ շրջանի անճաշակ հավելումներ են: Ինքը՝ բուն համակառույցը եւս միաժամանակ կառուցված տարրերից չէ կազմված: Հնագույն մասը երկու քարակերտ գլխատուն, մի թաղակապ սենյակ եւ մի թաղակապ նախամուտք է: Գլխատները կառուցվել են իրար կողքի, մուտքերը բացվել են նախասրահի մեջ, որը հետագայում պատով մեջտեղից երկու մասի է բաժանվել: Նախամուտքից աջ եւ ձախ շենքի ճակատն են բռնել այժմ ձեւափոխված, ըստ երեւույթին օժանդակ, նույնպես թաղակապ բաժանմունքներ, որոնց դռները բացվել են նախամուտքի մեջ:

Ձախակողմյան բարավորի վրա գտնվում է շինարարական արձանագրությունը»:

Շինությունը վերջին անգամ նորոգվել է 20-րդ դարավերջին:

«Քարե օթաղը»

Ըստ Սեդրակ Բարխուդարյանի (Դիվան հայ վիմագրության, երկրորդ հատոր, էջ 66)՝ «...այսպես են անվանում գյուղացիները գյուղամիջի եկեղեցու մոտ, հարավ-արեւելքից կանգուն մնացած, սրբատաշ քարերով շինված մի փոքր տուն: Այս տունը բաղկացած է երկու իրար մեջ հաղորդվող սենյակներից. սենյակներից յուրաքանչյուրն ունի ոչ շատ մեծ լուսամուտներ եւ մի քանի

Արավուս գյուղ երբեմնի երեք եկեղեցուց մնացել է այս մեկը

հատ խորշեր-ակնատներ գեղեցիկ կերպով ձեւավորված, նաեւ երկարավուն քարե դարակներ՝ տնային իրեր դնելու համար: Շենքը դրսից եւ ներսից սրբատաշ քարով է շինված, ունի երկու մուտք, մեկն՝ արեւելքից, մյուսն՝ արեւմուտքից: Արեւելյան մուտքը ձեւավորված է գեղեցիկ կամարով եւ երկու կողքերին ունի սրբատաշ քարից «նստարաններ»:

Այս տունը նյութով եւ տեխնիկայով հար եւ նման է եկեղեցուն, հետեւաբար 14-15 դարի շենք է: Սա միջնադարյան բնակելի շենքի լավագույն մի նմուշ է...».

Գրաձորի քարայր-ուխտատեղին

Սռի եղցուց մի փոքր հարավ-արեւելք գտնվող Կիրաձոր-Գրաձորում կա մի քարայր, որ ուխտավայր է, որ դարեր շարունակ մեր նախնիները մոմ են վառել, աղոթք արել, մատաղ արել, հիվանդ երեխաներին այնտեղ բերել բուժելու հույսով:

Սուրբ Վարդան նորաշեն մատուռը

Նախկին սրբավայրի տեղում (գյուղամիջում) այդ մատուռը կառուցել է Սուրեն Պապունցը (Սուրեն Էլյազյանը), 1999 թ.:

Կողքը քարատակ է:

Սրբավայր Տեղ-Արավուս ճանապարհին

Կառուցել է Բենիկ Չափուղանցը 1991-92 թթ.:

Առաջին հայացքից արհեստական քարակույտ է հիշեցնում, բայց շատերն են այցելում այդտեղ եւ մոմ վառում:

Գյուղի հին գերեզմանատունը, որ սքանչելի պանթեոն է՝ արվեստի աննման գործերով

Ահա, թե ինչպես է նկարագրել հին գերեզմանատունը Երվանդ Լալայանը. «Մելիք Բարխուդարի ապարանքից փոքր-ինչ հեռու գտնւում է հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիւ հին եւ գեղեցիկ տապանաքարեր: Հետաքրքիր են մեծատունների գերեզմանաքարերը. սրանք երկու մետրից աւելի երկարութեան, 71 սանտ.

Գրաձորի քարայր-ուխտատեղին

բարձրութեան եւ մօտ 36 ս. լայնութեան քառանկիւնի քարեր են, որոնց երկու երեսների վրայ, գեղեցիկ նախշերի մէջ զանազան տեսարաններ են քանդակուած, օրինակ. մի առիւծ խեղդում է մի գառ, կամ մի իշխան գինի է ընդունում մի ծառայից, մի աշուղ էլ ածում է: Այս տապանաքարերի ներքին մասում դէպի ոտների կողմը, կանգնեցրած են 2 1/4 արշ. բարձրութեան միակտուր քարեր, որոնց արեւմտեան երեսին խաչ է քանդուակած, իսկ արեւելեան կողմի ներքին մասում բարձրաքանդակ «օջախ» դուրս բերուած: Այս վերջինը նշանակում է, որ ննջեցեալը մեծ օջախից է եղել»:

«Քմախաչ» անվամբ սրբավայրը

«Պեղումներ Գորիսի շրջանի Տեղ գյուղում» հոդվածում (Հնագիտական աշխատանքներ Հայաստանի նորակառույցներում, Երեւան 1993) հնագետ Օնիկ Խնկիկյանը նշում է գյուղից 2-2,5 կմ արեւմուտք (գոմերի մոտ) գտնվող այդ սրբավայրի մասին:

Ըստ հնագետի՝ «Տեղանքն իրենից ներկայացնում է նախ-

կինում մշակված տարածություն, որի առանձին հատվածներում դիտվում են թմբիկներ ու խոշոր սալաքարեր: Դրանք դամբարանների ծածկասալեր են»:

Պեղումների ընթացքում դամբարանադաշտում մի հուշադամբարան է գտնվել՝ երկշար պատի մնացորդներով:

Քարայրի սրբավայրը

Դրա տերը մի այրի է եղել՝ Քոլունց Եղի անունով:

Ավանդազրույցի համաձայն՝ հենց նա է առաջինն անհնազանդություն ցույց տվել թուրք Ասատ բեկի հարկահավաքներին:

Կամի փայտով նա դուրս է եկել հարկահավաքների դեմ, ում էլ հետեւել են համագյուղացիները:

Երկու աղբյուր, որ սուրբ է համարվում եւ պաշտվում

Երվանդ Լալայանն է հիշեցնում. «Գյուղի հարավային եւ հյուսիսային կողմից ձգվում են մի-մի ձոր, որոնք գյուղի արեւելյան կողմում միանալով՝ տարածվում են մինչեւ Հաքարի գետը, Քոչուղի ձոր անունով:

Հյուսիսային ձորից հոսում է մի առվակ, որ Տեղի ջուր է կոչվում, իսկ հարավային ձորում կա երկու աղբյուր, որ սուրբ է համարվում եւ պաշտվում»:

Սեւ քերծի ուխտատեղին

Սռի եղցուց դեպի հյուսիս է գտնվում այդ քերծ-ուխտատեղին:

Քարանձավը տեսանելի է Սռի եղցուց:

Արավուս գյուղի երբեմնի երեք եկեղեցուց մեկն է մնացել

Ուխտագնացության օրն այցելեցինք նաեւ Արավուս գյուղ, հյուրընկալվեցինք Նուրուշ Ջհանգիրյանի օջախում, այնուհետեւ եղանք գյուղի եկեղեցում:

Ըստ Նուրուշ Ջհանգիրյանի՝ ժամանակին գյուղում երեք եկեղեցի է եղել, որոնցից միայն մեկն է մնացել (մեկը մնացել է հողի տակ, մյուսի հետքերը դեռեւս թեթեւակի պահպանվում են):

Գյուղացիներից շատերը Արավուսի եկեղեցուն տալիս են Թանահատ անվանումը: Սակայն դա սխալ է. Երեւանից եկած ինչ-որ մի գրագետ է այդ անվանումը հուշել:

Ամենայն որոշակիությամբ կարող ենք ասել, որ վարկածի հեղինակն Արավուս գյուղը շփոթել է Սիսիանի տարածաշրջանի Արեւիս գյուղի հետ, որը մինչեւ 1968 թ. Արավուս է կոչվել: Այդ գյուղից մոտ 3-4 կմ հեռավորության վրա են գտնվում 5-րդ դարում կառուցված Թանահատի վանքի ավերակները:

Ստեփանոս Օրբելյանի գնահատմամբ՝ Թանահատի վանքը կամ կրոնական կենտրոնը Սյունյաց աշխարհում երկրորդն էր Տաթեւից հետո:

Ի դեպ, Տեղ գյուղի մերձակայքում (Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում՝ լանջի վրա) գտնվող Արավուս գյուղի նախնիների մի մասը 18-րդ դարում այդտեղ են եկել Ղարաբաղի Խաչեն գավառի Արավուս (Քարագլուխ) գյուղից:

Վերջաբան

Տեղ գյուղի պատմությունը հերոսական շատ էջեր ունի, որոնցից երեքը պատշաճ ենք համարում հիշել:

1748-ին Նախիջեւանի խանի մարդիկ հասել էին Տեղ գյուղ՝ պահանջելով գինի եւ այլ տուրք:

Մելիք Բարխուդարը, հրաժարվելով այդ պահանջը կատարել, հարկադրված է եղել զենքով դուրս գալ խանի հրոսակների դեմ:

Ընդհարման ժամանակ Մելիք Բարխուդարն ու իր եղբայրը սպանվել են, երկուսի գլուխն էլ ներկայացրել են խանին:

Հետագայում Մելիք Բարխուդարի գլուխը հողին է հանձնվել Սուրբ Էջմիածնում, իսկ մարմինը՝ Խնձորեսկի անապատի եկեղեցու բակում, որտեղ պահպանվում է տապանաքարը, որտեղ տարիներ առաջ հողին էր հանձնվել (դարձյալ առանց գլխի) Մխիթար Սպարապետը:

Մեկ այլ իրադարձություն նկարագրված է Լեոյի «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի» երկում:

Խոսքը 1849-ին Տեղ գյուղում բռնկված բողոքի մասին է:

Գյուղացիները չեն հնազանդվել թուրք Ասատ բեկին, ով Տեղն իր սեփական կալվածքն էր համարում:

Շուշու գավառապետը դա գնահատել է ապստամբություն՝ իրենց աղայի դեմ:

Ներսես կաթողիկոսի միջնորդությամբ Թիֆլիսից հատուկ քննիչ է եկել Տեղ գյուղ՝ ապստամբության հանգամանքները պարզելու համար...

Սերո Խանզադյանն էլ պատմական մեկ ուրիշ դրվագ է ներկայացնում:

Ահա՝ «Տասնութ թվականին, Բաքվի կոմունան տապալվելուց հետո, օսմանյան բանակը Բարկուշատի ձորով բարձրանում է այս լեռնաշխարհը նվաճելու: Բնավ չչփոթվելով անգլիական խոշոր տրամաչափի թնդանոթային կրակից, քաջ տեղցիները փակում են թուրքերի ճանապարհը, մինչեւ հասնում է այս ռազմաճակատի հրամանատար, պորուչիկ Խաչատուր Մալինցյանի աշխարհազորայինների գունդը:

Անգլիացիների հզոր թնդանոթների դեմ հայերի հրետանավոր Թոփչի Սիմոնն ունենում է ընդամենը ռուսական երեք փոքր հրանոթ: Սակայն դրանով նա կործանում է թշնամու հրետանին:

Այստեղ ասում են, թե մուսավաթների հրետանու հրամանատարը եղել է ռուս սպա Կուզնեցովը: Սա իր անվտանգ կրակով գյուղի վրա խաչի նշան է դրել՝ հասկացնելով տեղցիներին, որ չվախենան, ինքը քրիստոնյա է:

Երկու օրվա ճակատամարտում ջախջախվում են թուրքական տասնվեց հազարանոց զորքն ու մուսավաթական խաժամուժը»:

◈ ◈ ◈

Տեղն այն բնակավայրերից է, որտեղ մի քանի անգամ կատարվել են պեղումներ, հնագիտական եւ ազգագրական բնույթի ուսումնասիրություններ:

Վերջին անգամ Տեղի տարածքում պեղումներ է կատարվել 1980-ականներին՝ Օնիկ Խնկիկյանի կողմից:

Պեղումների արդյունքները հրապարակվել են «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում» գրքում:

Տեղի եւ նրա շրջակայքի հուշարձանները 1947-ի օգոստոսին ուսումնասիրել է Մորուս Հասրաթյանը՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտարշավի ընթացքում:

1927-ին Տեղում պեղումներ է կատարել հնագետ Ս. Տեր-Ավետիսյանը:

Տեղում հնագիտական աշխատանքներ է կատարել ճանաչված գիտնական Սեդրակ Բարխուդարյանը:

Տեղում ազգագրական եւ հնագիտական ուսումնասիրություններ են կատարել Երվանդ Լալայանը, Ստեփան Լիսիցյանը:

1898 թ. Տեղ եւ Զաբուխ գյուղերի միջեւ գտնվող դամբարանադաշտում դիպվածային աշխատանքներ է կատարել գերմանացի հնագետ Է. Ռյոսլերը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին Ազատաշեն գյուղում, որ նաեւ Ալիղուլիշեն է կոչվում

ԵՐԹՈՒՂԻ 15

Հարթաշենի տարածքի Ալիղուլիշեն (Ազատաշեն), Կյորու (Ձորաշեն) եւ Մաղանջուղ (Այգեձոր) լքյալ գյուղերի սրբավայրերը

Գորիս քաղաքից 13 կմ արեւելք գտնվող գյուղ է Հարթաշենը: Հիմնադրվել է նախկին Ազատաշեն (Ալիղուլիշեն), Ձորաշեն (Կյորու) եւ Այգեձոր (Մաղանջուղ) գյուղերի բնակիչների՝ այդտեղ վերաբնակեցմամբ: Դա 1965-70-ական թվականներին էր:

Մեր ստեղծագործական խումբը Հարթաշենի սրբավայրեր այցելեց 2019 թ. հուլիսի 5-ին: Խմբի մեջ էր նաեւ Գորիսի պետական համալսարանի ներկայացուցիչ Նոնա Միրզոյանը: Մեզ ուղեկցում էին Հարթաշեն գյուղի բնակիչներ Ռուդիկ Մարտիրոսյանը, Վահե Դավթյանը եւ Շահնազար Սահակյանը:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին Ազատաշեն գյուղում, որ նաեւ Ալիղուլիշեն է կոչվում ու Լաստ

Առաջինն այցելեցինք Ազատաշեն գյուղ: Մատենագիտության մեջ գյուղը հիշատակվում է նաեւ Աթղունի, Ալեկուլի, Ալիկուլիքյանդ, Ալիղուլաշեն, Ալիղուլի, Ալիղուլի աշաղը, Ալիղուլիքենդ, Ալիղուլիշեն 1-ին, Ալիղուլիշեն 2-րդ...

Ազատաշեն է վերանվանվել 1940-ին: Գտնվում է Գորիս-Ստեփանակերտ խճուղու աջ կողմում՝ Գորիսից մոտ 7 կմ արեւելք: Բազմաթիվ ձորերով կտրտված վայր է, ունի փարթամ այգիներ: Շրջակայքում կան երկու բնակավայրի հետքեր:

Գյուղի հյուսիսից է սկիզբ առնում մի փոքրիկ գե-

տակ, որ հոսում է գյուղամիջով: Մոտ 14 կմ երկարությամբ գետակը կոչվում է Ձորաշեն: Մեզ ուղեկցող Ռուդիկ Մարտիրոսյանը ծագումով այդ գյուղից է եւ գիտի բոլոր սրբավայրերի, նշանավոր վայրերի մասին:

Ազատաշեն գյուղի կենտրոնում՝ բարձունքի վրա է գտնվում Սուրբ Հռիփսիմե անունով եկեղեցին, որ կանգուն է: Եկեղեցու մուտքին կարդում ենք՝ ՌՃՂԳ, որ նշանակում է 1744 թվական:

Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետի տեղակալ Անահիտ Գրիգորյանը, վկայակոչելով հուշարձանների՝ կառավարության կողմից հաստատված ցուցակը, հիշեցնում է մեզ, թե գյուղի եկեղեցին Սուրբ Նուբար է կոչվում:

Սակայն, մենք անհամաձայնություն ենք հայտնում այդ վարկածին, քանզի մատենագիտության մեջ ոչ մի տեղ Սուրբ Նուբար անունը (Ազատաշեն գյուղում) չենք հանդիպում:

Ալիղուլիշեն (Ուրղունիշեն) գյուղում են նաեւ «Խաչի ծառ» անվանումով երկու սրբավայր՝ միմյանցից հեռու, որ մինչեւ այսօր իրենց են ձգում հավատավորների, ովքեր կամենում են աղոթք անել, մոմ վառել, մատաղ անել...

Վերջում կանգ առանք գյուղի գլխավոր աղբյուրի մոտ, որ Սահակի աղբյուր է կոչվում:

Լաստի մատուռը, որ Սրբի դուռ էր հատկապես ամլության խնդիր ունեցող կանանց համար

Բացի Սուրբ Հռիփսիմեից, «Խաչի ծառերից», Ուրղունիշենի տարածքում է

Գորիս քաղաքից 13 կմ արեւելք գտնվող Հարթաշենը հիմնադրվել է նախկին Ազատաշեն (Ալիղուլիշեն), Ձորաշեն (Կյորու) եւ Այգեձոր (Մաղանջուղ) գյուղերի բնակիչների այդտեղ վերաբնակեցմամբ

Սուրբ Լաստը, որտեղ մինչեւ հիմա պահպանվում են փոքրիկ մատուռի հետքերը:

Գյուղը, ինչպես արդեն նշեցինք, մատենագիտության մեջ նաեւ Լաստ է անվանվել (չշփոթել Գորիս քաղաքի Լաստ լեռնագագաթի հետ): Լաստ սրբավայրի մասին կարդում ենք նաեւ մեր հայրենակից Արտեմ Խանզադյանի (մականունը՝ Զանգեզուրցի) հուշերում:

Հուշագրությունն այն մասին է, թե ինչպես դաշնակցականների ջոկատը (1905 թ. Մինքենդի կոտորածից հետո) Ուրղունիշենից «արշավեց ինչակյանների հայրենիք ու հենարան» դարձած Խնձորեսկի վրա:

Արտեմ Խանզադյանը մի քանի տողով նկարագրում է նաեւ Ուրղունի շենը, անդրադառնում Լաստ անունով սրբավայրին. «Ուրղունի շենն ընկած էր խոր ձորի արեւելյան փեշին: Տներն իրար վրա շինած էին դեպի սարի դոշերը:

Սարի գլխին հին դարերում կառուցած մնացած է Լաստ անունով սրբատեղին: Ամեն տարի՝ ամառվա սեզոնին, շրջակա գյուղերից մեծ բազմություն, ժողովուրդ էր գնում ուխտի՝ սրբատեղի: Ոչխարներ էին մորթում, զուռնա-դհոլով քեֆեր էին

Լաստի մատուռը, որ Սրբի դուռ էր հատկապես ամլության խնդիր ունեցող կանանց համար

անում, մեկ օր մնում ու վերադառնում էին իրենց տները»:

Լաստի սրբավայրի մեկ այլ նշանակության մասին ավանդազրույց է պատմում Ստեփան Լիսիցյանը: Իբր այդտեղ էին գալիս կանայք, ովքեր ամլության խնդիր ունեին, ինչը համարում էին մեծագույն արատ եւ դժբախտություն ամուսնացած կնոջ համար: Եվ «աստծու պատժից» ազատվելու համար այդ կանայք գնում էին Սրբի դուռը:

Սրբավայրում կինը քար էր շալակում, երեք անգամ պտտվում տաճարի շուրջ՝ այդ ծանրությունը մեջքին, ու այդ քարը տանում էր տուն՝ լի հավատով, որ այդպիսով ինքն էլ պիտի ծանրանա, հղիանա...

Ստեփան Լիսիցյանը նման մի սրբավայր էլ նշում է Մաղանջուղի մերձակայքում, որի հավաստիությունը չկարողացանք ճշտել եւ սրբավայրը տեղորոշել:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին Ազատաշեն գյուղում, որ նաեւ Ալիղուլիշեն է կոչվում

Գորու կամ Կյորու չքնաղ գյուղի եկեղեցին

Գյուղանվանը՝ Գորու տեսքով, հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկի մեջ: Ըստ Հին հարկացուցակի՝ Տաթեւի վանքին տալիս էր 20 չափ հարկ, ինչը վկայում է գյուղի մեծության եւ տնտեսական հզորության մասին:

Գյուղի երբեմնի մեծության մասին է վկայում փաստը, որ բնակավայրն ունեցել է հինգ գերեզմանատուն, իսկ գյուղի նշանավոր զավակ, բանաստեղծ Գրիշա Մանուչարյանի կարծիքով՝ յոթ գերեզմանատուն: Կա նաեւ ավանդազրույց, թե իբր Հին Խնձորեսկի բնակիչների մի մասը Կյորու գյուղից է գնացել:

Գորուի՝ մեծ բնակավայր լինելու վարկածի հետ համաձայն չէ Մորուս Հասրաթյանը. այդ մասին՝ քիչ անց: Մատենագիրների մի մասի կարծիքը, թե Գորուն Գորիս անվանումի նախաձեւն է, չի համապատասխանում իրականությանը (այլ հարց է երկու անվանման արմատի նույնությունը):

1950-ին գյուղը վերանվանվել է Ձորաշեն: Գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ այլ անուններով՝ Գերու, Գորը, Կերու, Կյորու, Կորու...

Անառիկ բերդ հիշեցնող բնակավայր է Կյորուն: Գորիսի տարածաշրջանի ամենախուլ գյուղերից էր, տների մեծ մասը՝ տափակ կտուրներով, կային նաեւ բազմաթիվ քարանձավային բնակարաններ:

Հարթաշեն նոր գյուղին նվիրված «Մեր նոր գյուղը» բանաստեղծության մեջ Գրիշա Մանուչարյանն այսպես է նկարագրել Հին Կյորուն (բանաստեղծությունը տպագրվել է «Ավանգարդ» թերթում.

Անդնդախոր ձորերի մեջ,
Շվաքի տակ մերկ ժայռերի,
Մեր հին գյուղն էր թախծում անվերջ՝
Դարակուտակ վշտին գերի:

Ապրում էր նա խեղճ ու թշվառ՝

Մենք Կյորու իջանք անդունդի լանջերով ձգվող ճանապարհով: Շահնազար Սահակյանը ցույց տվեց այն բարձունքը, որտեղ 1951-ին վթարի էր ենթարկվել բեռնատար մեքենան, որի մեջ էր նաեւ Գուսան Աշոտը:

Շահնազար Սահակյանի այգին Կյորու գյուղի արեւմտյան ծորալանջին

Մեծ աշխարհի կյանքից հեռու,
Նրա անունն անգամ չկար
Զանգեզուրի քարտեզներում...

Մենք Կյորու իջանք անդունդի լանջերով ձգվող ճանապարհով: Շահնազար Սահակյանը ցույց տվեց այն բարձունքը, որտեղ 1951-ին վթարի էր ենթարկվել բեռնատար մեքենան, որի մեջ էր նաեւ Գուսան Աշոտը:

Մենք կանգ առանք այդ բարձունքում, հիշեցինք Ամենայն հայոց գուսանին:

«Այունյաց երկրի» 2017 թ. հունիսի 10-ի համարում Գուսանի որդին՝ Համլետ Դադալյանն այսպես էր հիշում այդ պատահարը. *«Կյորու գնացող մեքենան քարաղ էր բարձած: Համերգի մեկնող խումբը մեքենայի թափքում էր՝ քարաղի վրա նստած: Աշխեն մայրիկը (Գուսանի երկրորդ կինը) անսամբլի քանոնահարն էր (հետագայում էր սովորել այդ մասնագիտությունը), բայց ավելի շատ խանդից դրդված էր երեւի միանում անսամբլին եւ հորս հետ հյուրախաղերի մեկնում: Մեքենան շրջվեց, Աշխենը մահացավ, հայրս թեթեւ վնասվածք ստացավ: Որքան գիտեմ՝ ուրիշ մահացողներ եւ վիրավորներ էլ եղան»:*

Այնուհետեւ շարունակեցինք ուղեւորությունը:

Գյուղի սկզբնամասում՝ մոշի ստվար քոլերով պաշարված մի բարձր շիրմաքար կա. Թելիկ մորաքրոջս գերեզմանն է, ով գյուղի ղեկավարն էր Մեծ հայրենականի դժվարին տարիներին, ով կյանքին հրաժեշտ տվեց երիտասարդ տարիքում:

Մեր հաջորդ կանգառը գյուղի կենտրոնում՝ թմբի վրա՝ բազմած եկեղեցին էր: Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետի տեղակալ Անահիտ Գրիգորյանի վկայությամբ՝ պետական փաստաթղթերում եկեղեցու անվանումը նշված չէ:

Բայց Կյորու գյուղի զավակ Հրանտ Քոչարյանը, վկայաբերելով եկեղեցու Չափաբերական մատյանը՝ պետական

Գորու կամ Կյորու չքնաղ գյուղի եկեղեցին

արխիվում պահպանվող, նշում է, որ եկեղեցին Սուրբ Հռիփսիմե է կոչվում, որտեղ էլ առաջին գրառումը կատարվել է 1852-ին:

Սերո Խանզադյանն այսպես է նկարագրում գյուղի գլխավոր սրբավայրը՝ *«Եկեղեցին նոր է, սակայն հիմքերը հին, շատ հին են: Քարերը խոշոր են ու անմշակ: Եկեղեցին կանգուն է, ունի երկու հզոր կամար, որ պահում են քարե թաղը: Եկեղեցու մեջ ու վրան արձանագրություն չգտա»:*

Ամենայն հավանականությամբ եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում՝ հին սրբավայրի հիմքի վրա:

Ըստ Հրանտ Քոչարյանի՝ գյուղի գերեզմաններից մեկում մի սուրբ ծառ է եղել՝ կողքը՝ խաչքարեր, եւ այդ վայրը կոչվել է «Խաչեր»:

* * *

Ճանաչված հայագետ Մորուս Հասրաթյանը Կյորու գյուղում եղել է 1926-ին: 1972-ին նա հեղինակել է մի հոդված՝ «Զորաշեն-Գորու» վերտառությամբ:

Տեսարաններ Հին Կյորու գյուղից

Մաղանջուղի եկեղեցին, որ իսկական ճարտարապետական մարգարիտ է

Այդ հոդվածից մի քանի քաղվածք՝ ստորեւ. «Հայաստանի, մասնավորապես լեռնոտ վայրերի (որպիսին էր եւ Սյունիքը) գյուղական բնակավայրերի մեծագույն մասն ունի 2-3 հազար տարիների անցյալ: Այդ անվիճելի է հատկապես բնական ամուր դիրք ունեցող այն վայրերի համար, որոնք ունեցել են աղբյուրներ կամ գտնվել են հոսող ջրերի ափին: Այդ ապացուցվում է նաեւ հնագիտական տվյալներով: Խոր հնադարից եկող նման գյուղերից մեկն էլ Գորու-Ձորաշեն գյուղն է: Այդ բանում համոզված եմ նաեւ նախկին անվան պատճառով:

Անկասկած, այդ վայրում երկար դարեր ապրել է մի տոհմ, որն աճելով, դարձել է մի ցեղ: Այդ տոհմի-ցեղի անունը եղել է Գորա կամ Գոր:

Գոր-Գորա տոհմը մեծացել, ցեղ է դարձել եւ տրոհվել առանձին գեղջկական համայնքների: Դրա ապացույցը ոչ միայն գորաների մշտական կենտրոնական վայրն ու դիրքն է, այլեւ Գորու անվան գոյությունը՝ շատ մոտիկ վայրում: Ըստ երեւույթին գորա ցեղի բեկորներից մեկը, բաժանվելով, ոչ հեռու ձորակում նոր բնակություն է հաստատել՝ պահպանելով իրենց տոհմանունը Գորու ձեւով:

Անտարակույս, Գորուն... խոշոր չի եղել եւ երեւի միշտ էլ մնացել է փոքրիկ, որը թելադրվել է նաեւ նրա բնական անձուկ միջավայրից: Միայն ունեցել է այն առավելությունը, որ դժվարամատչելի է եղել:

Մինչեւ հեղափոխությունը գյուղը եղել է Բեգական, թեեւ գյուղի գրեթե բոլոր բնակիչները գաղթել էին Խոյից (մի քանի տուն՝ Սալմաստից) 1828թ.:

Թե ինչպես է 18-րդ դարի կեսերին ավերված Գորու գյուղը դարձել շուշեցի Ումբրումյան բեկերի սեփականությունը, առայժմ չեմ կարող ասել: Սրանց վերջին աղջիկներից մեկն ամուսնացել է ինչ-որ Անանյաններից մեկի հետ եւ գյուղը դարձել է այս նոր, ավելի ագահ շահագործողների սեփականությունը: Ամեն եկամուտի տասանորդը գյուղացիները տարել են Շուշի, մինչեւ որ դարի սկզբին դարձել է դրամական հարկ՝ 400-600 ռուբլի:

1914-18 թթ. առաջին պատերազմին գյուղից մասնակցել է 80 հոգի, որից ինը հոգի զոհվել է:

1918 թ. Բաքվի քաղաքացիական կռիվների եւ քաղաքը Թուրքիայի կողմից գրավելու ընթացքում Գորուից զոհվել եւ սպանվել է 14 տղամարդ:

1918-20 թթ. ազգամիջյան թշնամության ժամանակ զոհվել է երկու հոգի:

1919-21 թթ. սաստիկ սով է ապրել գյուղը, ոչ միայն հացի պակասն է քայքայել, տանջել գյուղի բնակիչներին, այ-

լեւ աղի պակասը...»

* * *

Կյորու գյուղի նշանավոր զավակներից է ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ, գնդապետ Եղիշե Թովմասի Օհանյանը (1915-1989թթ.): Զորացրվելուց հետո Արզնիի առողջարանի գլխավոր բժիշկն էր, Երեւանի ուսանողական պոլիկլինիկայի գլխավոր բժշկի տեղակալը, պարգեւատրվել է 17 շքանշանով ու մեդալով:

Մաղանջուղի եկեղեցին, որ իսկական ճարտարապետական մարգարիտ է

Գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Մահանձու, Մահանջու, Մահանջուխ, Մաղանջուկ, Մաղարագյուղ անվանումներով:

Հին ցուցակներում չի հիշատակվում:

Վկայակոչված է Տաթեւի վանքի հետագա հարկացուցակներում, որից երեւում է, որ բավականին մեծ բնակավայր է եղել, որի համար էլ շրջակայքը նրա անունով կոչվել է Մաղանջուղի վիճակ, որի մեջ մտնում էր Գորիսի տարածաշրջանի մի մասը:

Վիճակի կենտրոնը համանուն գյուղն էր:

1929 թ. Սերո Խանզադյանին գյուղի տարեցներից մեկը պատմել է, թե բնակավայրի անունը ոչ թե Մաղանջուղ է, այլ Մուղանձյուղ, Մուղանի ձյուղ:

Մորուս Հասրաթյանի կարծիքով՝ Մաղանջուղը Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Աղոջրիկն է (Պատմահնագիտական ուսումնասիրություններ, էջ 128):

1950-ին գյուղի անունը փոխել եւ դրել են Այգեձոր:

Ըստ ավանդազրույցի՝ գյուղի բնակիչների մի մասը բնիկ էր, մյուս մասը եկել էր Մուղան մեծ դաշտից, մի փոքր մասն էլ՝ Խոյից, որտեղ նույնպես Մաղանջուղ հայոց գյուղ կար:

17-րդ դարում Մաղանջուղն արդեն մեծ գյուղ էր, պատահական չէ, որ տարածաշրջանը կոչվում էր «Երկիրս Մաղանջուղու»:

Մի ուրիշ ավանդազրույց էլ կա՝ իբր այս գյուղից ծիավորների մի ջոկատ է եղել Դավիթ Բեկի բանակում: Սրանք հետագայում գնացել-բնակվել են Որոտան եւ Վարարակն գետնախառնուրդում՝ գյուղը կոչելով Դավիթ Բեկ, որը հետագայում՝ թուրքերենի ազդեցությամբ, դարձել է Դավութլու:

Հիմա այդ գյուղը մտնում է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի մեջ՝ Դողար անվամբ:

Մաղանջուղ. Մորուս Հասրաթյանի կարծիքով՝ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Աղոջրիկն է

Մաղանջուղ գյուղ իջանք Խնձաղու (Ձնձաղիկի) խութից, որ գյուղի գլխին է:

Տներից շատերը պահպանվում են:

Գյուղի կենտրոնում է գտնվում Սուրբ Հռիփսիմե եկեղեցին, որի մասին հանգամանալից խոսք է ասում Սերո Խանզադյանը:

Ահա՝ «Թթենիների խտության մեջ կանգնած է գյուղի եկեղեցին: Փոքր է, ճարտարապետական մարգարիտ: Սակայն նրա հրաշքը երեք խաչքարերն են: Դրանք դրսից են բերված, մեկը դրված է եկեղեցու դռան գլխին՝ իբրեւ բարավոր, մյուս երկուսը՝ կողքերը: Ափսոս, այս եկեղեցին կառուցող վարպետները խաչքարերը մի քիչ կտրտել են՝ պատի մեջ հարմարեցնելու համար: Բարավոր խաչքարն ուզում եմ համբուրել՝ շատ է աննման, քանդակները՝ նուրբ, ասես կենդանի: Քարի երկարությամբ զույգ խաչ է քանդակված, արանքներում՝ ՉԾԱ:

Մաղանջուղի ճանապարհին գտնվող մատուռ

Հազարան փրկիչը փոքրիկ բլուր է, որի վրա՝ ավերակ մատուռ, մի սեւացած պատ՝ կրակարանով

Սա թվականն է՝ 1302: Կարո Օհանյանն ասում է, թե այդ խաչքարը, ինչպես լսել է ինքը, բերել են մոտիկ Երիցձորից, որ կնշանակի երեք ձոր: Այնտեղ գյուղատեղ է եղել: Երկու խաչի մեջ մարդու հրաշալի քանդակ կա՝ զորական, նետ ու աղեղով»:

Այդ եկեղեցին, ինչպես նշեցինք, Սուրբ Հռիփսիմե անունն է կրում, որ հին սրբավայրում վերաշինվել է 16-րդ դարում:

* * *

Մաղանջուղն ունի այլ սրբավայրեր եւս:

Խնձաղու խութի տարածքում է գտնվում Կանա խաչերի թումբը, Քամու խաչը, Պառավի խաչը:

Գյուղի մերձակայքում հին ժամանակներում գտնվող Աղավնաձոր, Երիցձոր գյուղերի տարածքում հիմա էլ կան խաչքարեր, եկեղեցու հետքեր:

Ի դեպ, գյուղի մերձակայքում միայն Աղավնաձորն ու Երիցձորը չեն եղել:

* * *

Մաղանջուղից Քարահունջ ձգվող դաշտային ճանապարհ-արահետի վրա կա մի մատուռ:

Այդտեղ մենք չհասցրինք լինել:

Այդ մասին ավելի ուշ մեզ հիշեցրեց Անահիտ Գրիգորյանը՝ Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետի տեղակալը. մատուռի լուսանկարները, որ ուղարկել է նա, սույն հրապարակմանը կից նույնպես ներկայացնում ենք ընթերցողին:

* * *

Մաղանջուղի պատմության եւ տեղագրության հետ կապված մի վերապահում ունենք, որն այս դեպքում կարեւոր է:

1619-ին Գրիչ Խաչատուրը գրում է՝ «Կատարեցավ սա (ձեռագրի ընդօրինակումը) ի յերկիրն Մախանջուխու, ի գյողս, որ Տանձավեր կոչի»:

Շատերը, այդ թվում եւ Սերո Խանզադյանը, նույնիսկ Ղեւոնդ Ալիշանը, այս Մաղանջուղը նույնացնում են Գորիսի տարածաշրջանի Մաղանջուղի հետ, իսկ Տանձավերը՝ Մաղանջուղի մոտակայքում գտնվող գյուղ համարում:

Ինչո՞վ է պայմանավորված մեր վերապահումը:

«Ժամանակագրություն Ստեփանոս Օրբելյանի» գործին (Երեւան, 1942, հրատարակության է պատրաստել պատմական գիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանը) կցված է մի հարկացուցակ, որտեղ առանձին ներկայացված է Մաղանջուղի գավառը: Այդ գավառի գյուղերն էին՝ Տանձավեր, Մաձ, Իրիցաթումբ, Պաշարաջուր, Հուռի տափ, Մազրա, Սեթանց, Շուռնուխ, Գյուդրվան, Քոսաքարեր, Նոր գյուղ, Նակահդար:

Այդ փաստաթղթին ծանոթանալուց հետո դժվար է հավատալ, որ Մաղանջուղ գավառը (ներկայիս Բարձրավանի մերձակայքն ընդգրկող) վարչական առումով կապ է ունեցել Գորիսի տարածաշրջանի Մաղանջուղի հետ:

Հարցը, բոլոր դեպքերում, հավելյալ ուսումնասիրության կարիք ունի:

Հազարան փրկիչ

Այդ սրբավայրի մասին գրել ենք Քարահունջ գյուղ կատարած ուխտագնացությունը լուսաբանող հոդվածում՝ նկատի ունենալով, որ Քարահունջ գյուղի վարչական տարածքում է:

Բայց Հազարան փրկիչ սրբավայր գնալն ավելի հարմար է Հարթաշենով:

Հազարան փրկիչը փոքրիկ բլուր է, որի վրա՝ ավերակ մատուռ, մի սեւացած պատ՝ կրակարանով:

Կա սեւացած, կարճ ու լայն մի խաչքար, որ անզարդ է, վրան՝ արծվի սիրտ:

Եվ քանի որ Քարահունջին նվիրված մեր հրապարակման մեջ ներկայացրել ենք Հազարան փրկիչի լեգենդը, ուստի հարկ չենք համարում կրկնել այն:

1970-ականներից Հազարան փրկիչն ասոցացվում է այլ իրողության հետ եւս. Որոտանի ջրանցքն այնտեղ է՝ ձորից խողովակներով բարձրացող ջուրը հարթավայր հասցնում:

Վերջաբան

Ուխտագնացության օրվա վերջին հյուրընկալվեցինք Շահնազար Սահակյանի այգում:

Կյորու գյուղի արեւմտյան ձորալանջին 1,5 հա-ի վրա հիմնված այգին իսկապես հեքիաթային է:

Հերթական անգամ թութ թափելու օր էր. բարեկամ-հարազատներից հավաքվել էին 10-15 հոգի՝ օգնելու Շահնազարին կամ, ինչպես գյուղում են նրան անվանում, Սեւուկին:

Թեեւ հոգնած էինք, բայց փորձեցինք մեր համեստ նպաստը բերել բերքահավաքին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 16

Մի քանի օր Խնձորեսկի սրբավայրերում

Խնձորեսկ

Ներքին Խնձորեսկ

2019 թվականին «Այունյաց երկրի» խմբագրակազմն աշխատանք էր տանում Խնձորեսկին նվիրված հատուկ համար նախապատրաստելու նպատակով:

Բացառիկ այդ համարի պատվիրատուն բարեհամբավ Սենիկ Ջուլհակյանն է, ով հայտնի է մեր երկրամասում եւ հատկապես Խնձորեսկում իրականացրած եւ իրականացվող ներդրումային ծրագրերով: «Այունյաց երկրի» այդ համարը 2019-ի սեպտեմբերից պատրաստ է հրատարակման, հույս ունենք, որ առաջիկայում այն կուղարկվի տպագրության:

Խնձորեսկին նվիրված համարը բաղկացած է 364 A4 չափսի էջից, կտպագրվի կավճապատ թղթի վրա, սկիզբն ու ավարտը (36 էջ)՝ գունավոր տպագրությամբ: Համարի նախապատրաստության ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձրինք հին եւ նոր Խնձորեսկի, ինչպես եւ մերձակայքի պաշտամունքային վայրերին: Դրանք տեղ են գտել թերթի հատուկ համարում, բայց եւ...

Գորիսի տարածաշրջան ուխտագնացություն կատարող յուրաքանչյուր ոք, համոզված ենք, չի կարող չայցելել Խնձորեսկի սրբավայրեր: Ուստի եւ համառոտ՝ Խնձորեսկի սրբավայրերի մասին...

Նախ՝ պատառիկ Շողիկ Սաֆյանի խոսքից

Շողիկ Սաֆյանի «Հին Խնձորեսկ, իմ Խնձորեսկ» բանաստեղծությունների անզուգական շարքում կա նաեւ անդրադարձ գյուղի սրբավայրերին: Դա՝ «Աստված հաշտ էր մեզ հետ» բանաստեղծության մեջ:

Ջահլուկի ձորի ձախ ափալեռան
մի շուրթը քաշված,
բայց երկրաշարժից ավեր, հոշոտված,
տարիների հետ փուշ ու մոշոտված,
«Անապատի» հին մենաստանից ու
տաճարից բացի,
Խնձորեսկն ուներ դեռ լավ պահպանված
երկու հոյակերտ մեծ եկեղեցի,
որոնցից մեկը Ներքին թաղումն էր,
իսկ մյուսը՝ Վերին:
Գյուղից դուրս կային
ոմ գիտե, թե որ դարում հիմնված,
ոմ դարում եւ ոմ կողմից կործանված
էլի փլատակ եկեղեցիներ,
որոնց թեկուզ մի պահպանված պատի
դարերով ծխված պատուհանների
փոքրիկ թասերում
խնկի բույր ու մոմ չէին պակասում...

Բայց հային տրված դժվարին բախտից
Ամտծուց խռոված հին խնձորեսկցիք,
կորցրած հավատի ամեն մի հակում,
քսանականներին...
Ներքին թաղինը՝ «Սուրբ Հռիփսիմեն»,
դարձրել էին գյուղական ակումբ...
Խնկաբույր ակումբ զանգով–զանգակով,
շիրմաքարերով զարդարուն բակով,
ջերմեռանդորեն, գլ՛ել–գլ՛ել աղոթող
իր աղբյուր–ակով,
կուռ կամարների խորքերում կորած
խորան–օթյակով,
սեւ–սաթ քարերի անմաշ հատակով,
սրբատաշ սեմով,
բարձրադիր բեմով...

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Կառուցվել է 1663 թ., պահպանվել է եկեղեցին եւ գերեզմանոցը շրջապատող ավերված պարսպապատի մի հատվածը: Եկեղեցու դռան կամարակապ քարի վրա գրված է՝

ԹՎ.: ՌՃԺ:: ԵԻ: Բ: ԷՐ ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ ՀՌԻՓՍԻՄԱ ԵԿԵՂԵՑԻՍ. ԵՍ ԳԻՉՈՒ ՈՐԴԻ ԹՈՒԹԱԿՍ ՇԻՆԵԼ ՏՈՒԻ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ. ՅԻՇԵՑԷՔ ԶԻՍ Ի ՔՍ:

Հին Խնձորեսկ

Սուրբ Թադեոս եկեղեցին

Գտնվում է գյուղի հյուսիսային մասում՝ Փրթոսի թաղամասում: Ըստ Երվանդ Լալայանի՝ համեմատաբար նոր է: Շրջանառվում է կարծիք, թե Սուրբ Թադեոսի ճարտարապետությունն ունի Ռուս ուղղափառ եկեղեցուն բնորոշ լուծումներ:



Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Սուրբ Թադեոս եկեղեցին

Անապատի եկեղեցին

Ըստ Երվանդ Լալայանի՝ «Մինչեւ 1896 թ. այս եկեղեցին բոլորովին կանգուն էր, միայն այդ թուին գյուղացիները քանդեցին եւ նրա սրբատաշ քարերով նրա գաւթում երկու մեծ սենեակներից բաղկացած Հայոց եկեղեցական ծխական դպրոցի շէնքեր կառուցին..»:

«Դիվան հայ վիմագրության» գրքի հեղինակ Սեդրակ Բարխուդարյանի տեսակետը, որ դա Սուրբ Հռիփսիմե եկեղեցին է, իրականությանը չի համապատասխանում:

Եկեղեցու անունը գրավոր աղբյուրներում չհաջողվեց գտնել: Միաժամանակ, Անապատ անվանումը թույլ է տալիս ենթադրել, որ այդ վայրում ժամանակին անապատ է եղել (հարանց կամ կուսանաց): Եվ անապատը հիմնվել է 1663 թ., երբ Հարանց մեծ անապատի (Սյունյաց մեծ անապատի) հովանու ներքո անապատներ էին հիմնվում հայոց մեջ: Հինադիրը տեր Բարսեղն է, ով նույնպես հանգչում է Անապատի բակի գերեզմանատանը: Ահա նրա տապանաքարի արձանագրությունը.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏՐ ԲԱՐՍԵՂԻՆ, ՍԱՅ Է ՈՐԴԻ ՍՐԱԲԻՈՆԻՆ. ՕՎ ՀԱՆԴԻՊՈՂ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԻՆ ԲԵՐԱՆ ՀԱՐՄԵՂ ԱՍԻ ԹՎ.: ՌՃԿ:

18-րդ դարասկզբի ազատագրական պատերազմի նահատակների պանթեոնը

Այդ պանթեոնում են թաղված 18-րդ դարասկզբի ազատագրական պատերազմի մի խումբ նահատակներ: Այդտեղ է հողին հանձնվել Մխիթար Սպարապետը: «Պատմական փշրանքներ» գործում Վաղեմի Էհզարը (Ուսուբ օղլի, Սարգիս Հովսեփի Պետրոսյան) նշում է. *«1880 թին ես Խնձորէսկ գյիւղում հողի տակից հանեցի Մխիթար սպարապետի գերեզմանաքարը:*

Սպարապետի գերեզմանաքարը գտնելուց յետոյ իմ սիրտը ինքնստիքեան մի ներքին ստիպողական տաք հետաքրքրութեան ենթարկւեց, այնպէս որ այդ հետաքրքրութիւն, կարծես ուժով ինձ դրդեց ասելով-գնայ ձեր գիւղի ծեր մարդիկներիցը հարցրու եւ իմացիր այդ վաղամեռ հերոսի անմահ գործերը...»

Մխիթար Սպարապետի տապանաքարին, գրված է՝ ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ի ՀԱՆԳԻՍՏԵԱՆ, ԻՋԵԱԼ ՄԱՐՄՆՈՎ Ի ԳԵՐԵԶՄԱՆ, ՍԱՅ ՄԽԻԹԱՐ ՄԵԾ ԱՆՈՒՎԱՆ, ՍՈՐԱ ՕՆԷՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ, ՍԱՅ ԲԷՄՈՒՐԱՏ ԳՆԱՅ ՋԻՎԱՆ, ՈՐ ԷՐ ԵՐԿՐԷՆ ՍԱՅ ԿԱՆՁՈՒՎ ԷՐ. ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ԹՎ.: ՌՃՀՋ:

Տապանաքարի երկարությունն է 1,53 սմ, բարձրությունը՝ 60 սմ եւ լայնությունը՝ 40 սմ:

Հնագետ Սեդրակ Բարխուդարյանը ներկայացրել է տապանաքարի պատկերաքանդակները. *«Յուսիսային կողին քանդակված են երեք հեծյալներ, առաջինն ունի ձեռքին կեռ սուր, երկրորդը հրացան՝ դեպի հետ դարձրած, երրորդը, որ գնում է դրանց առաջից, Սպարապետն է, ձեռքին ունի նիզակ, որով սպանում է գալարվող վիշապին: Սպարապետին դիմավորում են երկու հետիոտն մարդիկ, առաջինի մի ձեռքին հրացան է, մյուսին՝ ծաղիկ. երկրորդը հոգեւորականի զգեստով է, ձեռքին դրոշակ, որը պսակվում է խաչով»:*

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին

Այդտեղ է թաղված նաեւ Զանգեզուրի վերջին մելիքներից Բարխուդարը, ում գերեզմանը եկեղեցու հյուսիսային պատի տակ է: Մելիքի գերեզմանաքարը թեեւ ավելի մեծ է, բայց իր ձեւով ու քանդակներով, նաեւ գրչությամբ խիստ նմանեցված է սպարապետի գերեզմանաքարին:

Տապանաքարի վրա գրված է՝ ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Ի ՀԱՆԳՍՏԵԱՆ, ԻՋԵՂ ՄԱՐՄՆՕՎ Ի ԳԵՐԵԶՄԱՆ, ՍԱ ԲԱՐԽՈՒԴԱՐ ԵՒ ՄԵԾ ԻՆԽԱՆ, ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑ ՕՐ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ, ՈՐ Է Ի ԳԵՂՋԷՆ Ի ՏԵՂՈՒ ԱՅՆ, ՕՎ ՈՔ ԱՌՆԷ ՋՍԱՅ ՅԻՇՄԱՆ, ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԼԻՆԻ ԱՐԺԱՆ, Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ: ՌՃՂԷ:

Պանթեոնում կան նաեւ այլ տապանաքարեր, որոնց վրա նույնպես կան քանդակներ եւ արձանագրություններ:

Խաչքարեր Կուրաթում՝ Զրնգանի ձորի սկզբնամասում

Այդ վայրում հանդիպեցինք մեծ քանակությամբ խաչքարերի՝ միմյանց չկրկնող եւ չքնաղ քանդակներով: Գրեթե բոլոր խաչքարերը, սակայն, կիսով չափ հողի մեջ էին, ուստի եւ չկարողացանք ծանոթանալ խաչքարերի վրա առկա գրություններին:

Ամենայն որոշակիությամբ կարող ենք ասել՝ այդտեղ վաղ ժամանակներում հայկական խոշոր բնակավայր է եղել, որի հետքերը վերացվել են 1960-70-ականների չարաբաստիկ մելիորացիոն աշխատանքների հետեւանքով:

Անապատի եկեղեցու մուտքը

Յոթ խաչքար՝ ի հիշատակ Արցախյան ազատամարտում նահատակված խնձորեսկցիների

Սուրբ քարի միջից լսված ձայնը. «Նա, ով կհամարձակվի ձեռք բարձրացնել ինձ վրա...»

Խնձորեսկի երկդասյա դպրոցի տեսուչ Ն. Շիրակունու «Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը» մենագրության մեջ հեղինակը մի ավանդազրույց է հիշեցնում: Պատմում են, թե իբր Խնձորեսկ գյուղից մի երիտասարդ, տնային իր կարիքների համար, ցանկացել է ապառաժը քանդել եւ հող վերց-



Խաչքարեր Կուրաթում՝ Զրնգանի ձորի սկզբնամասում

Սուրբ քարը

նել: Վայրը գտնվում է Հին գյուղից մոտ 2 վերստ հեռավորությամբ դեպի հյուսիս:

Երբ նա սկսել է ապառաժը քանդել, ներսից ձայն է լսվել. *«Կկուրանա նա, ով կհամարձակվի ձեռք բարձրացնել ինձ վրա»:* Ու հենց այդ պահին երիտասարդը զրկվել է տեսողությունից: Այդ դեպքից հետո խնձորեսկցիները տոնական օրերին նույն ապառաժի շուրջ մոմ են վառում: Վայրը կոչել են Սուրբ քար: Սրբավայրը գտնվում է նոր գյուղի դպրոցից մի փոքր հարավ-արեւելք ընկած տափարակում:

«Քառ-դաշի» լեգենդը

Այդ ավանդազրույցը եւս մեզ է փոխանցել Խնձորեսկի երկդասյա դպրոցի տեսուչ Ն. Շիրակունին: Ըստ ավանդազրույցի՝ կա Խնձորեսկից հեռու մի ժայռ՝ Գորիս տանող ճանապարհին, որ թաթարերեն կոչվում է «Քառ-դաշ»: Այդ մասին պահպանվել է այսպիսի ավանդություն:

Երկու թաթարական ընտանիք ուշ գիշերին ճանապարհվում են Գորիսից Խնձորեսկ: Թանձր մառախուղ էր, ուստի՝ կանգ են առնում գիշերելու «Քառ-դաշ»-ում: Յուրաքանչյուր ընտանիք տեղ է գտնում այդ ժայռի հակադիր կողմերում, եւ զրույց է սկսվում նրանց միջեւ, որ կարծ լինի գիշերը: Եվ որքան էլ ճգնում են բարձր գոռալ, միեւնույն է՝ իրար չեն լսում, չնայած որ ժայռի տրամագիծը չէր գերազանցում յոթ արշինը:

Վերջապես այդ ընտանիքները, հավաքվելով մի տեղում, սկսում են մեղադրել միմյանց՝ պատասխանել չցանկանալու համար: Բայց հետո, երբ ամեն ինչ պարզ է դառնում, նրանք կռահում են, որ այդ երեւույթի պատճառը պիտի փնտրել ժայռի մեջ, որի ստորոտում նրանք հանգրվանել էին: Դա այն է, որ ժայռի մեջ թաքնված է ինչ-որ գերբնական ուժ, որ խլացնում էր նրանց ձայնը: Այդ ժամանակվանից ժողովուրդը սկսեց այդ ժայռն անվանել «Քառ-դաշ»:

Ուղլեցի ձմեռանոցի ժայռափոր եկեղեցին, որ կկոչվի Սուրբ Մարիամ

2019 թ. հունիսի 23-ի օրը «Այունյաց երկրի» ստեղծագործական խումբը (Սամվել Ալեքսանյան, Սոնա Արզումանյան), հայրենանվեր խնձորեսկցիներ Ժորա Ալեքսանյանի եւ Գրիշա Հարությունյանի ուղեկցությամբ, այցելեց Հին Խնձորեսկից մոտ 10 կմ հարավ (դեպի Որոտան գետ) գտնվող ժայռափոր

Ուղլեցի ձմեռանոցի ժայռափոր եկեղեցին, որ կկոչվի Սուրբ Մարիամ

«Քառ-դաշի» տարածքը

եկեղեցի:

Վաղնջական ժամանակներից այդ տարածքը եղել է Խնձորեսկի ձմեռանոցը. վայրը գյուղացիները կոչել եւ կոչում են Ուղլեցի: Բայց ուշ միջնադարում այդտեղ բնակվեցին ազերի թուրքեր՝ վայրը կոչելով Ալիղուլիշաղ, ինչի մասին վկայում է նաեւ Ղեւոնդ Ալիշանը:

Ուղլեցիում ականատես եղանք անձեռակերտ երկու հսկա հուշարձանախմբի:

Առաջինն Ուղլեցու անկրկնելի ամրոցն էր:

Իսկ մի փոքր հարավ-արեւմուտք մեկ ուրիշ ամրոց է՝ անթիվ-անհամար քարանձավներով, որի ներքեւի մասում ժայռափոր եկեղեցին է՝ հողաշեն բեմով: Ազերիները ժամանակին ջարդուփշուր են արել եկեղեցու եւ մերձակայքի խաչքարերը, որոնց բեկորները պահպանվում են: Հենց եկեղեցում խորհուրդ արեցինք ու որոշեցինք անուն առաջարկել Աստծո մոռացված այդ տաճարին:

Եվ առաջարկություն ներկայացրինք Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանին՝ ժայռափոր եկեղեցին կոչել Սուրբ Մարիամ, ով էլ բարեհաճությամբ հավանություն տվեց հավատավորներիս մտահղացումին՝ խոստանալով այցելել մարդու ոտքի կարոտ, աղոթքի ու պատարագի կարոտ այդ եկեղեցի ու այնտեղ (դարերի լռությունից հետո) պատարագ կազմակերպել ու կատարել օծման եւ անվանակոչության արարողություն:

Ուղլեցու ժայռափոր եկեղեցի այցելեցինք Խնձորեսկ-Կուբաթլի ճանապարհով, Հարամի հարթավայրի վերջնամասից թեքվեցինք աջ ու ոչ անհայտ Թալակի ձորով իջանք նախ՝ Աղջկա բերդ, ապա՝ Ուղլեցի:

Թալակի ձորից դեպի Ուղլեցի ձգվող ճանապարհը, ինչպես պատմեց Ժորա Ալեքսանյանը, Արցախյան գոյակռվի, օրերին մարտական գործողությունների վայր է եղել: Այդ ճանապարհին է Սանասար Բեգլարյան դյուցազնի ջոկատը վրեժ լուծել ազերիներից՝ այն բանի համար, որ նրանք Թալակի ձորում դաժանաբար սպանել էին մեր չորս հովվին:

...Իսկ ձորում այդ օրն անսովոր շոգ էր, մասրենին տեղ-տեղ կարմիր էր հագել արդեն, չնայած ոչ ոք այդ տարածքում վաղուց մասրենու կարմրելուն չի սպասում, ավելի ճիշտ՝ այդ տարածքները, թեեւ վերադարձել են Մայր հայրենիքի գիրկը, կարոտ են մարդու ոտքերի:

Ու, որքան էլ զարմանալի է, հասունացող մասրենու, վաղուց բանաստեղծականացված եւ մարդկային զգացողություններով իմաստ ու բովանդակություն ստացած մասրենու հետ զրույցի բռնվեցինք սահյանաբար:

Եվ, այդուհանդերձ, մասրենին մեր կողմերում չի փորձում «քաղաքակրթվել», չի աղավաղվում աշխարհի անհասկանալի անցուդարձի մեջ ու մնում է իր նախնական տեսքով՝ որպես Սյունյաց անզուգական քարափների հավերժական ուղեկից:

Ինը մանուկ աղբյուր-սրբատեղին

Հին Խնձորեսկի յուրաքանչյուր թաղամաս ունեցել է իր նշանավոր կենտրոնական աղբյուրը: Այդ աղբյուրներից շատերը, մարդկանց խմելու ջրի պահանջը բավարարելուց բացի, եղել են նաեւ յուրատեսակ հավաքատեղիներ, ինչպես եւ սրբատեղիներ:

Այդպիսի հավաքատեղ-կենտրոնատեղ-սրբատեղ է եղել նաեւ Ներքին թաղի նշանավոր աղբյուրներից մեկը՝ Ինը մանուկը: Ժողովուրդն այսպիսի մի լեգենդանման պատմություն է հորինել այս նշանավոր աղբյուրի մասին:

Հին եկեղեցին կամ Քարանձավի եկեղեցին

Ահա՝ թշնամիները հերթական հարձակումն են գործում Խնձորեսկի վրա: Կանայք ու աղջիկներն էլ տղամարդկանց հետ հավասար կռվում են գյուղի ազատագրման համար:

Կռվի ընթացքում զոհվում է ինը երեխաների մայր, այրի Սոնան: Նրա հայրը՝ որմնադիր-վարպետ Օհանը, գյուղի նշանավոր թաղամասում՝ Պիծի ծորում, ուր հսկա ընկուզենու ժայռաշաղախ արմատների արանքներից ջուր է ցայտում, զարդանախշ կամարով ու կլոր թասով մի աղբյուր է կառուցում՝ իր աղջկա՝ Սոնայի հիշատակին:

Աղբյուրի թասը (գուռը) կնոջ կուրծք է հիշեցնում, որից ջուր խմել հնարավոր է միայն երկու ձեռքով հենվելով գետնին: Ուստա Օհանն ավարտում է աղբյուրի կառուցումը, առաջինն ինքն է խմում աղբյուրից, նայում դեպի երկինք ու դիմում սրբին. *«Այ սուրբ աղբյուր, աղաչանք եմ անում, թող աղբյուրի ջուրը դառնա մեր Սոնայի կրծքի կաթը եւ պահպանի որբացած թոռներիս»:*

Մեծ խաչքարը Լալազարի կամրջի մոտ

2019 թ. հունիսի 15-ին «Այունյաց երկրի» ստեղծագործական խումբն այցելեց Այունյաց աշխարհի արեւելյան սահմանագիծ, որտեղ գտնվում է 19-րդ դարի բացառիկ մի հուշարձան՝ Լալազարի կամուրջը:

Երկու կամարով այդ կամուրջն այսօր էլ չի կորցրել իր հմայքը եւ ամուր վիճակում է, սակայն 1980-ականների վերջին ազերի վանդալների կողմից զրկվել է արեւելահայաց պատի վրա քանդակված հայատառ վիմական արձանագրությունից, որը յուրօրինակ անձնագիրն էր հրաշալի այդ կոթողի:

Լալազարի կամուրջը հայոց ճարտարապետական մտքի փայլատակումներից է: Կամուրջը եւս մեկ վկայություն է առ այն, թե մեր նախնիներն ինչպիսի հոգածությամբ եւ արժանապատվությամբ են տեր կանգնել Այունյաց տանը եւ շենացրել այն: Կամուրջը կառուցել է խնձորեսկցի Լալազար Փանդունցը (Հովակիմ Լալազարյանը) 1860-ական թվականներին՝ Խնձորեսկից 12-13 կմ հարավ, Որոտան գետի վրա: Լալազարի կամուրջ գնալու ճանապարհին մեզ ուղեկցում էր Որոտան գետը՝ անպատկերացնելի խորը կիրճերով ու կեռմաններով:

Իսկ կամրջի մատույցներում մեզ «ընդառաջ եկավ» մի համեստ հուշաքար՝ առավել համեստ հիշատակագրումով՝ *Մկրտչյան Արայիկ Անդրանիկի (1960-1992), Միրզոյան Մուշեղ Յուրիկի (1972-1992), Բաղդասարյան Կարեն Վազգենի (1971-1992), Մինասյան Կարեն Արծրունի (1968-1992):*

Գորիսեցի այդ երիտասարդները հենց այդտեղ էին անհավասար մարտի բռնվել ազերի հրոսակների հետ, որտեղ էլ նահատակվեցին հերոսաբար... Այո, այդ տարածքում ամեն մի հողաթումբ քաջերի շիրիմ է, ամեն մի պտղունց հող՝ հայոց նվիրյալների արյամբ շաղախված, որը մոռանալ անկարելի է... Այդ ամենի մղումով երախտապարտ քարահունջցիներն նույն վայրում 2016-ին խաչքար են կանգնեցրել:

Հին եկեղեցին կամ քարանձավի եկեղեցին

Գտնվում է Հին Խնձորեսկի արեւելյան կողմում՝ Փրթոսի թաղամա-

Լալազարի կամուրջը

Մեծ խաչքար Լալազարի կամրջի մոտ

Արցախյան պատերազմում զոհված խնձորեսկցիների հիշատակը՝ հավերժացված

սից հարավ-արեւելք: Անունը հայտնի չէ: Մերձակայքում կան մի քանի խաչքարեր, որոնց վրա որեւէ գրառում չկա: Դատելով այդ խաչքարերի կերպից՝ կարելի է ենթադրել, որ 7-8-րդ դարերի խաչքարեր են:

Եկեղեցու մեջ մի խաչքար է, որի վրա երկու բառից կազմված գրություն է՝ առաջին մասն անհասկանալի է՝ վերջին երկու-երեք տառի անընթեռնելիության պատճառով (սկիզբը՝ ԵԱՃԱ...), իսկ վերջին բառը՝ ԱՆԿԱՆ: Խաչքարը թվագրված է՝ ԼԳ, ասել է թե՝ 1284 թ.:

Հին եկեղեցուց մի քանի մետր դեպի արեւելք, բարձունքի վրա կա հին գերեզմանատուն: 19-րդ դարավերջին այդ եկեղեցում եղել է ազգագրագետ Երվանդ Լալայանը, ով հետագայում գրել է՝ *«...Մի գետնափոր եկեղեցի դեռեւս կանգուն մնացել է գյուղից դուրս, դեպի արեւելք, մի քերծի մեջ, ուր կան նաեւ գերեզմաններ առանց տապանագրերի»:*

18-րդ դարասկզբի ազատագրական պատերազմի նահատակների պանթեոնը Անապատի եկեղեցու բակում

Սուրբ Նահատակ եւ Սուրբ Մինաս մատուռները, որոնց տեղորոշումը չկարողացանք կատարել

Ըստ Երվանդ Լալայանի՝ Հին Խնձորեսկում եղել են նաեւ Սուրբ Մինաս եւ Սուրբ Նահատակ մատուռները (վերջինս՝ Կզկահատ թաղամասում), որ ուխտատեղիներ են համարվել դարեր շարունակ, սակայն մեզ չհաջողվեց գտնել դրանք:

Մեծ հայրենականում եւ Արցա-

Քերծի մեջ փորված եկեղեցին Թելունց Սըռի վերին հատվածում

խյան հերոսամարտում նահատակված խնձորեսկցիների հիշատակը՝ հավերժացված

Մեծ հայրենականում զոհված խնձորեսկցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը կառուցվել է 1966 թվականին: 2011 թվականին հուշարձանի մոտ համագյուղացի Արմեն Գիլավյանի նախաձեռնությամբ ու միջոցներով, յոթ խաչքար է կանգնեցվել ի հիշատակ Արցախյան ազատամարտում նահատակված յոթ խնձորեսկցիների:

Արցախյան պատերազմում զոհված խնձորեսկցիների հիշատակը՝ հավերժացված

Հին գյուղի դիմաց՝ Կայծակնահարի լանջին, կանգնեցվել է խաչքար՝ ի հիշատակ Արցախյան ազատամարտում զոհված խնձորեսկցիների: Այնուհետեւ խաչքարի շուրջ ստեղծվել է հանգստի գոտի: Նախաձեռնության հեղինակը համագյուղացի Ռազմիկ Ղալդունցն է: Համալիրի բացումը տեղի է ունեցել 2004-ին:

Հուշահամալիրում տեղադրված նահատակ խնձորեսկցիների հիշատակը հավերժացնող խաչքարն օրհնել է Գորիսի հոգեւոր հովիվ Տեր Մարտիրոս քահանա Ավետիսյանը:

Հուշահամալիրը կառուցվել է ճարտարապետ Սեւադա Զաքարյանի նախագծով, համայնքի ղեկավար Սերյոժա Հայրապետյանի, երախտապարտ խնձորեսկցիների գործուն օժանդակությամբ:

Հին Խնձորեսկի կենտրոնում՝ քերծի մեջ փորված եկեղեցին

Այդ սրբավայրի մասին տեղեկություն է հաղորդում 19-րդ դարավերջին Հին Խնձորեսկ այցելած Երվանդ Լալայանը: Ըստ բանահավաքի՝ «*Գյուղի գրեթե կենտրոնում, նոյնպես քիրծի մէջ, փորուած է եղել մի փոքրիկ եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդուած է»:*

Քերծի մեջ փորված եկեղեցու տեղն ամիսներ շարունակ չէինք գտնում: Միայն 2020 թ. մարտի 31-ին, Գրիշա Հարությունյանի եւ Ժորա Ալեքսանյանի օգնությամբ, հաջողվեց գտնել գյուղի այդ սրբավայրը:

Քարանձավը կիսափլված վիճակում է: Ներսում պահպանվել է մի խաչքար՝ եղծված գրությամբ: Փլված է նաեւ քարանձավի երբեմնի գավիթը, որի արեւմտյան եւ հարավային պատի հետքերն ավելի ընդգծված են երեւում:

Գավիթի հյուսիսային կողմից երեւում է դռան տեղը: Պահպանվել է դռան բարավորը՝ արձանագրությամբ:

Քերծի եկեղեցին գտնվում է Սպիտակ գոմից դեպի արեւելք՝ բարձունքի վրա՝ Թելուցն սըռի վերին հատվածում, Ներքին եւ Վերին թաղերի միջնամասում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ինը մանուկ աղբյուր-սրբատեղին

ԵՐԹՈՒՂԻ 17

Սյունյաց աշխարհի գրչության կենտրոն Խոզնավարի սրբավայրերը

Խոզնավարը Գորիսի տարածաշրջանի հյուսիս-արեւելյան կողմի ամենահեռու գյուղն է: Մատենագիտության մեջ նշվում է նաեւ Խազնավար, Խանձաբերդ, Խզնավար, Խոզանավար, Խոզանվար, Խոզնավոր, Խոնզավար... Անունն ունի ժողովրդական ստուգաբանություն, հավանաբար ծագել է խոզան եւ վար բառերից:

1490 թ. մի հիշատակարանում նշվում է որպես Սյունիքի Աղահեջքի մաս կազմող Քաշաթաղ գավառի գյուղերից մեկը: Ըստ նոր հարկացուցակի՝ Տաթեւի վանքին տալիս էր 4400 դահեկան պտղի հարկ:

Գյուղի միջով է հոսում Խոզնավար գետակը՝ Հագարի գետի աջակողմյան վտակ Զաբուխ գետի աջ օժանդակը, որ սկիզբ է առնում Սեւ լճի մերձակայքից: 14 կմ երկարությամբ վտակը մայր գետին է միանում Խոզնավար գյուղից 6-7 կմ հարավ-արեւելք:

Քաշաթաղ «հայաբուն գավառում» ժամանակին 43 հայկական գյուղ կար: Հետագայում՝ մոտ 200-250 տարի առաջ, այդ գյուղերի մի մասը դատարկվեց կամ բնակեցվեց Դիարբեքիրի կողմերից բերված քրդական ցեղերով: 1813 թ. ընդամենը 6 տուն էր մնացել Խոզնավար գյուղում՝ 78 բնակչով: Այս գյուղ եւս, Ռուսաստանին միանալուց հետո, բազմաթիվ հայ ընտանիքներ եկան՝ ապահովություն գտնելու: Դրանցից էին Միրզաբեկյան, Հարությունյան,

Գյուղի եկեղեցին, որի ավերակները պահպանվում են: Մատենագիտության մեջ այն անվանվում է Սուրբ Ստեփանոս Նախավկա

Մելիք Եգանյան եւ Բահատրյան ընտանիքները:

Գյուղը փորձության է ենթարկվել 1905, 1913 եւ 1918 թվականներին: 1905-ին թուրքական ավազակախմբին հետ է մղել Ստեփան Ստեփանյան անունով հռչակավոր խմբապետը: Նա գյուղը փրկել է կործանումից, բայց սպանվել է իրեն սիրող կնոջ ձեռքով: Այս կողմերում ավանդազրույց կա Գալուստ Մանուչարյան կտրիճի մասին, ով 1918-19 թթ. գլխավորել է ինքնապաշտպանական կռիվները թուրքերի դեմ:

Խոզնավարը՝ գրչության կենտրոն

Խոզնավար գետակի ափին, բոլոր կողմերից լեռներով պատած գեղատեսիլ վայրում գտնվող գյուղը, որի մերձակայքում կան բազմաթիվ ձորեր, հողմնահարված ժայռասյուներ, գրչության կենտրոն է եղել:

«Ցուցակ ձեռագրացում» Խոզնավարը հիշատակվում է որպես գրչության կենտրոն: 1490-ին այդտեղ ընդօրինակվել է մի Ավետարան, որով Եղիա անունով գրիչը խնդրում է հիշել իր վաղամեռիկ կնոջը՝ Կյուլփաշին:

Նրա դուստրը եւս՝ Շահզադեն, սովորել է գրչության արվեստը: Եղիայի հայրը՝ Շապան, նույնպես գրիչ է եղել: Գյուղի եկեղեցում դարեր շարունակ պահպանվել են հնագույն ձեռագրեր:

1913-ին, երբ թուրքերը ժամանակավորապես գրավեցին գյուղը, վառեցին եկեղեցում պահվող 200-ից ավելի ձեռագիր (այս փաստը վկայակոչում է Սերո Խանզադյանը):

◈ ◈ ◈

Ստորեւ՝ 1652-ին Խոզնավարում գրված մի Ավետարան, որի հեղինակն է գրիչ՝ Միքայել սարկավագը:

Փառք...:

Զոր եւ տեսեալ զսոսայսն անձառ փրկագործութեան խորհուրդ սրբասէր եւ մաքուր եւ բարեգործ այրն Զաքարայ եւ բարեհոգի եւ առատամիտ ամուսինն իւր՝ Նանէրն, ոչ ունելով իւրեանց զաւակ մարմնաւոր եւ կամ յիշատակ ի վերայ երկրի, այլ ի միտ առան զբանն Աւետարանին որ ասէ. «Գանձեցէք ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենայ...»:

Եւ արդ՝ ես յետինս ի կրաւնաւորաց եւ անարժանս ի կրաւնաւորաց մանկանց եկեղեցւոյ՝ Միքայէլ սարկաւագս, տեսի զսէր եւ զփափագ առատամիտ Զաքարին եւ ամուսնոյն՝ Նաներին, եւ Նաների եղբայր Սարքսին, Աստուած իւր վարձն հատուցանէ աստ եւ անդ, որ կամակից եղեւ գրելոյ սբ. Աւետարանիս, զոր ունէին առ II iii իմ անընդունակ գոլով յարուեստս գրչութեան, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց Հոգին Սուրբ առ մեզ մա [ր] դասէր Հոգին, յանձն առի եւ բազում աշխատութեամբ եւ տառապանօք գծագրեցի զսա մեղսամած մատամբ իմով, ի յաստուածաբնակ եւ յանառիկ դղեակս Քաշթաղ, ի գ [ե] օղն խզնավար, ընդ Հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի Հայոց վերադիտողի, ի թվաբերութեանս Հայոց ՌՃԱ (1652):

Եւ արդ՝ յերես անկեալ աղաչեմք զսրբութիւնդ ձեր սբ. ընթերցողք, հարք եւ եղբարք, յիշեցէք զմեղաւոր գրող սորա եւ զծնօղսն եւ եղբարքն:

Դարձեալ [յիշեցէք] Զաքարէն, կողակիցն՝ Նաներն, եղբայրն՝ Թամուրն, ամուսինն՝ Շարբաթն, միւս եղբայրն՝ Խաչատուրն, ամուսին Գուլխաթունն յիշեցէք ի Քրիստոս...:

Ստացող՝ Զաքարէ

Եւ արդ՝ ես Զաքարէս ստացայ սբ. Աւետարանս ի հալալ եւ յարդար վաստակոց իմոց, յիշատակ II ծնաւղաց իմոց, որք ընթեռնուն ի ժամ սբ. եւ սոսկալի պատարագին, եւ թողութիւն հայ-

ցեն մեղացն հաւրն իմոյ՝ Իփակին, մաւրն իմոյ՝ Հոռումին, ամուսինն իմ՝ Նաներին, եղբօրն՝ տանուտէր Սարքսին, եւ իմ եղբօրն՝ Թամուրին, Խանումին, կողակցին իւրոյ՝ Շարբաթին, հարազատ որդին՝ Վարդանանին, ամո[ւ]-սինն՝ Խանումին, միւս որդին՝ Գրիգորին, ամուսինն՝ մարիամին, Թամուրի դստերն՝ Շնաւորին, Սանդուխտին, Խանումին, Ղումաշ [ին] III [հանգուցե] լոցն ամենայնի, ամէն:

ԴԱրձեալ յիշեցէք զբ [ա] ռեմիտ Զաքարէն եւ հիւրընկալ կին [ն] իւր՝ Նաներ III եղբայրն Խաչատուրն, հայրն՝ Ուլուխանն եւ մայրն իւր՝ Հուրիխանն, յիշեցէք ի Քրիստոս:

Գյուղի եկեղեցին, որի ավերակները պահպանվում են

Տարակարծություն կա գյուղի կենտրոնում գտնվող եկեղեցու անվան շուրջ: Մատենագիտության մեջ այն անվանվում է Սուրբ Ստեփանոս Նախավկա: Պատմական հուշարձանների ցանկում եկեղեցին նշված է Սուրբ Մինաս անվամբ: Գյուղացիների համար էլ, կարծեք, գործածական է վերջին տարբերակը:

Ղեւոնդ Ալիշանի վկայությամբ (Սիսական)՝ գյուղի եկեղեցին Սուրբ Ստեփանոս Նախավկա է կոչվել, իսկ հետագայում անվանել են Սուրբ Մինաս: Եկեղեցու կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ, բայց հիմքեր կան ենթադրելու, որ 1212-ին Աստծո այդ տաճարն արդեն կար: Եկեղեցին վերջին անգամ վերաշինվել-վերակառուցվել է 1675-ին:

Պատմում են, թե եկեղեցին վնասվել է 1931 թվականի, ապա 1968-ի հայտնի երկրաշարժների հետեւանքով: Եկեղեցու քարերի մի մասը, գերեզմանաքարերը (այդ երկրաշարժների հետեւանքով) թափվել են ցած: Պատի մեջ մնացել է ավազանը՝ *«Մելիք Էքիզ յիշեցեք ի ՔՍ»:* Սա, անշուշտ, Մելիք Հայկազն 2-րդն է:

Արձանագրության մեջ նշմարելի է նաեւ Ցողունի անունը... Հավանաբար մոտակայքում նույնանուն գյուղն է եղել, որի մասին հիշատակում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը:

Գյուղի մյուս սրբավայրը՝ քանդված եկեղեցին, որ Սուրբ Հռիփսիմե է կոչվել

Գյուղի տարածքում եղել է նաեւ Սուրբ Հռիփսիմե անունով եկեղեցի: Գյուղամիջի այդ եկեղեցին 1935-ին հիմնովին

Հաջիլար գյուղ գնացող ճանապարհին գտնվող Սուրբ ծառ ուխտավայրը

քանդել են, որի տեղում էլ կառուցվել է դպրոցը: Դպրոցն այդ շենքում գործել է 1953-ից մինչեւ 2009 թ.: Այն հիմա ծառայում է որպես բնակելի շենք:

Գյուղի դպրոցի ուսմասվար Հարություն Անդրյանի վկայությամբ՝ շենքի պատերի մեջ (որտեղ պատի ծեփը քանդվել է), խաչքարեր են երեւում: Ամենայն հավանականությամբ դպրոցական այդ շենքը կառուցվել է հենց եկեղեցու քարերով: Հարություն Անդրյանի վկայությամբ՝ հին դպրոցի մերձակայքում հողային աշխատանքներ կատարելիս մինչեւ հիմա էլ նկատվում են գերեզմանների հետքեր, ինչը հաստատում է գյուղի տարեցների պատմածը, թե եկեղեցու բակում գերեզմանատուն է եղել:

Խաչեր կոչվող գյուղատեղի-սրբավայրը, որ զարթոնք է ապրում Արամ Բաղդասարյանի ջանքով

Գյուղից մոտ 2 կմ արեւմուտք՝ սարավանդի վրա, կա մի գյուղատեղի, որ կոչվում է Խաչեր: Ինչպես գյուղի տարեցներն են պատմել, բազմաթիվ շինությունների մնացորդներ եւ հնություններ ժամանակին անցել են գետնի տակ:

Պահպանվում են գերեզմանների հետքեր, նաեւ խաչքարեր:

2017 թվականից Արամ Բաղդասարյանի ջանքերով բարեկարգվում է այդ տարածքը: Արամ Բաղդասարյանի վկայությամբ՝ տասնամյակներ շարունակ այդ վայրից են խոզնավարցիները մեկնել բանակային ծառայության: Այ-

Շռնաղի խաչքարերը

սօր էլ երկու չքնաղ խաչքարի եւ հին մոմակալի մոտ (շաբաթ եւ կիրակի օրերին) կարելի է տեսնել հավատավոր խոզնավարցիների:

Ի դեպ, 5 մ երկարությամբ երկաթյա մի խաչ էլ Արամ Բաղդասարյանն է տեղադրել այնտեղ:

Շռնաղի խաչքարերը

Գյուղից մոտ 3-4 կմ հեռավորության վրա է գտնվում Ծիծեռնավանքը: Ծիծեռնավանք տանող ճանապարհներից մեկը (բոլոր ճանապարհները ոչ մեքենահարմար են) ձգվում է ձորամիջոցով՝ խոզնավար գետի հունին զուգահեռ:

Խաչեր կոչվող գյուղատեղի-սրբավայրը, որ զարթոնք է ապրում Արամ Բաղդասարյանի ջանքով

Գյուղից մոտ 2 կմ հեռավորության վրա (Ծիծեռնավանք տանող ճանապարհին) է գտնվում հանքային ջրերի Շռնաղ աղբյուրը: Այդտեղ պահպանվում են հին ժամանակներում կառուցված խաչքարեր:

Գյուղի միջնակարգ դպրոցի ուսմասվար Հարություն Անդրյանի փոխանցմամբ, ինչպես գյուղի տարեցներն են ժամանակին պատմել, Շռնաղի մերձակայքում նաեւ գյուղատեղի է եղել, որն առավել ակնհայտ է դարձել 1960-70-ականներին այնտեղ հողային աշխատանքներ կատարելիս:

Սուրբ ծառը

Գյուղի գերեզմանատնից դեպի հյուսիս-արեւելք՝ Հաջիլար գյուղ գնացող ճանապարհին գտնվող մի բլրի վրա է (գերեզմանատնից մոտ 1 կմ հեռու) գտնվում Սուրբ ծառ ուխտավայրը: Դարավոր, հաստաբուն կաղնու տակ խաչքար եւ կրակարան կա: Մինչեւ հիմա էլ խոզնավարցիներն ակնածանքով են վերաբերվում այդ սրբավայրին:

◈ ◈ ◈

«Այունյաց երկրի» արշավախումբը Խոզնավարի սրբավայրեր այցելեց 2019 թ. հոկտեմբերի 25-ին:

Խորհրդային իշխանության վերջին տարիներին մի նոր եւ ավելի կարճ ճանապարհ է կառուցվել դեպի այդ ենթաշրջան՝ Վերիշեն գյուղով, 1918 մ բարձրությամբ Չալբուռուն լեռնագագաթով, խիստ ծանծաղ եւ եղեգնուտով ծածկված Ղազիգյոլի մերձակայքով:

Ցավոք, այդ ճանապարհի վիճակը խիստ անմխիթարական է հիմա, ինչի համար էլ գերադասեցինք Գորիս վերադառնալ ավանդական ճանապարհով՝ Խոզնավար-Վաղատուր-Խանածախ եւ, իհարկե, Ստեփանակերտ-Գորիս մայրուղով:

Խոզնավարի սրբավայրերին ծանոթանալու պատվաբեր առաքելությունը հաջողությամբ չէինք իրականացնի, եթե չլիներ Հարություն Անդրյանի, Արամ Բաղդասարյանի, Հրայր Ալավերդյանի, գյուղի միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն Սլավիկ Շափաղաթյանի աջակցությունը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 18

Վաղատուր գյուղի երկու եկեղեցին

Վաղատուրը մատենագիտության մեջ հիշատակվում է նաեւ Բայանդուր, Բայանդուր առաջին, Բայանդուր երկրորդ, Բայենդուր, Բայընդուր, Բայնդուր, Գալախ, Հալախ, Պայանդուր...

Գյուղը բաժանվում է երկու թաղի՝ Ներքին Բայանդուր, Վերին Բայանդուր: Վաղատուր է անվանվել 1969-ի մայիսի 7-ին: Նախաքրիստոնեական շրջանի նյութական ժառանգությամբ հայտնի հայկական այդ գյուղը գրավոր աղբյուրներում հիշատակվում է 13-րդ դարից: 20-րդ դարասկզբին թուրքաբնակ էր:

1918 թ. այդ կողմերում մարտական թեժ գործողություններ են տեղի ունեցել: Վաղատուր – Խոզնավար – Խանածախ – Տեղ – Կորնիձոր ճակատում էր վճռվում ոչ միայն Գորիսի, այլեւ ամբողջ Սյունի-

Վերին թաղի կամ Վերին Բայանդուրի եկեղեցին, որ նաեւ Հալաքի վանք է կոչվում

Վերին թաղի կամ Վերին Բայանդուրի եկեղեցին, որ նաեւ Հալաքի վանք է կոչվում

Սուրբ քարը, որ գտնվում է Արամայիս Բաբաջանյանի տնամերձում

քի ճակատագիրը:

Գյուղը հայերով բնակեցնելու խնդիրը վաղուց էր դրված: Ըստ «Մշակ» թերթի 1906 թ. N 61-ի մի հրապարակման՝ Զեյվա հայաբնակ գյուղի բնակիչները պատրաստվում էին իրենց գյուղը փոխանակել Բայանդուր թուրքաբնակ գյուղի հետ: Սակայն պատմությունն այլ ընթացք ունեցավ:

1918-ին Բայանդուրը մի պահ դատարկ էր: Եվ այդտեղ բնակության տեղափոխվեցին Մինքենդ, Հին Զեյվա, Հալաք, Հոչաս գյուղերի հայերը: Հալաքից եկածները համեմատաբար շատ էին եւ բնակվեցին գյուղի մի ամբողջ թաղամասում՝ կոչելով այն Հալաք (այդ գյուղը համապատասխանում է Աղահեճք գավառի՝ Հագարի գետի վերին հոսանքի աջ կողմում գտնվող Հայելյակ գյուղին):

Վաղատուր գյուղի միջով է հոսում Բայանդուր գետակը (Հագարիի աջակողմյան վտակ Զաբուխի (վերին հոսանքում՝ Աղօղլան կամ Ահմեդլու) աջ օժանդակը): Մայր գետին է միանում Վաղատուր գյուղից 5 կմ հյուսիս-արեւելք, երկարությունը՝ 14 կմ:

Վաղատուրում հայտնի է ձորի թթու ջուրը, որն օգտագործելու քանի-քանի նախաձեռնություններ մնացել են անկատար:

Թթու ջուր (հանքային ջուր) տեղանքի խաչքարը

1935-ին գյուղում կաթ մշակելու գործարան է հիմնվել, որ գործում է մինչեւ հիմա:

Գյուղի հյուսիս-արեւմտյան մասում բրգաձեւ լեռն է՝ Դադմելիքը՝ առանց խորխորատների, 2062 մ բարձրությամբ: Ըստ ավանդազրույցի՝ հնում մի մելիք իր բատրակին միշտ ծեծել է: Չտանելով տիրոջ բռնությունները՝ բատրակն իրեն այդ սարից նետել է ցած՝ բացականչելով «դադ-մելիք», որտեղից էլ իբր սարը կոչել են Դադմելիք: Նույն ավանդազրույցի մի այլ տարբերակի համաձայն՝ այդ զարգանդ մելիքն ինքն է անհնազանդ գյուղացիներին գլորել սարից, եւ վերջիններս էլ բացականչել են «դադ-մելիք» (վայ մելիք):

Վերին թաղի կամ Վերին Բայանդուրի եկեղեցին, որ նաեւ Հալաքի վանք է կոչվում

Հավանաբար վերաշինվել է 17-րդ դարում: Կառուցվել է անմշակ քարերով ու կրաշաղախով: Անունը հայտնի չէ:

Պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկում հիշատակվում է Հալաքի վանք անվամբ: Այդպես է կոչվում այն պատճառով, որ գտնվում է գյուղի Հալաք անունը կրող թաղամասում:

Հալաքի բնակիչները, ինչպես նշեցինք, Բայանդուր են տեղափոխվել 1918-ին, իսկ եկեղեցու մասին հիշատակություն կա դեռեւս 1211-ին (վերակառուցվել է 17-րդ դարում):

Եկեղեցու մերձակայքում կան խաչանախշ ու խոնարհ գերեզմանաքարերի բեկորներ:

Ներքին թաղի կամ Ներքին Բայանդուրի եկեղեցին: Կոչվում է նաեւ Բայանդուրի հին եկեղեցի:

Ներքին թաղի կամ Ներքին Բայանդուրի եկեղեցին

Կոչվում է նաեւ Բայանդուրի հին եկեղեցի: Փլուզման ստույգ վտանգի առջեւ հայտնված այդ սրբավայրը, դատելով ներքին ճարտարապետական լուծումներից, շատ հին է: Կարելի է նույնիսկ փաստել՝ Սյունիքի հնագույն եկեղեցիներից է:

Ներսի լուծումներով շատ նման է Տաթեւի Գյունեի հանդի եկեղեցուն, որը, ինչպես նշել ենք մեկ այլ առիթով, Ցուրավանքն է: Նման է նաեւ Երիցվանքում կիրառված ճարտարապետական հնարքներին:

Մինչդեռ հին եկեղեցու մոտ պահպանված խաչքարերի վրա գրված են ՌԲ եւ ՌԱ (1552 եւ 1553 թվականներ): Դրանք, անշուշտ, չեն կարող վկայել եկեղեցու կառուցման ժամանակաշրջանի մասին:

Թթու ջուր (հանքային ջուր) տեղանքի խաչքարը

2004 թվականից այդ վայրը, շնորհիվ մի չքնաղ խաչքարի, յուրօրինակ սրբավայր է դարձել: Խաչքարն այդ վայր է տեղափոխվել գյուղի հարավ-արեւելյան հատվածում գտնվող այգիներից, որ ի հայտ էր եկել հողային աշխատանքների ժամանակ:

Խաչքարը գտնվում էր Կոլյա Աղաջանյանի այգում: Այդ տարածքը, կարելի է ասել, նոր կերպարանք էր առել 1961-ի հայտնի սողանքից հետո, երբ Փառանձեմ Սահակյան կինը մնացել էր հողի տակ:

Այգիների այդ տարածքը գյուղում հայտնի դամբարանադաշտի (դեպի արեւելք ձգվող) շարունակությունն է: Այդ վայրում է գտնվել նաեւ հնամենի մի աղորիք, որ նույնպես տեղափոխել են Թթու ջրի տարածք: Եվ խաչքարը, եւ աղորիքը Թթու ջրի մերձակա տարածք է տեղափոխվել Քաջիկ Բաբաջանյանի նախաձեռնությամբ:

Սուրբ քարը, որ գտնվում է Արամայիս Բաբաջանյանի տնամերձում

Արծվաքիթ հիշեցնող հսկա քարը, գյուղի տարեցների վկայությամբ, տարիներ շարունակ մատաղատեղի եւ աղոթատեղի է եղել բայանդուրցիների համար:

***

«Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը Վաղատուր այցելեց 2019 թ. հոկտեմբերի 25-ին եւ 31-ին: Առաջին այցի ժամանակ արշավային մեր խմբի մեջ էին Սուրեն Վարդանյանը, լրագրող Ալվարդ Մեսրոպյանը: Մեզ աջակցեցին Սենիկ Օհանյանը եւ Սերյոժա Սամվելյանը:

Հատկապես Սերյոժա Սամվելյանը լավագույնս է տիրապետում գյուղի պատմությանը: Նրանց՝ շնորհակալություն՝ մեր արշավային այցին աջակցելու համար:

Առանձնահատուկ գնահատանքի է արժանի պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետի տեղակալ Անահիտ Գրիգորյանը, ով ծագումով լինելով վաղատուրցի, մեզ օգնության ձեռք մեկնեց ոչ միայն Վաղատուր-Բայանդուրում, այլեւ «Ուխտագնացություն Սյունիք» ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 19

Հարժիսը, որ երկնամերձ ամպերի մոտ է, քրիստոնեական բազում սրբավայրեր ունի

Գյուղը ներկայումս գտնվում է Եռաբլրի սարահարթում, ժայռի պռնկին, Գորիս-Երեւան ավտոմայրուղու 12 կիլոմետրից հարավ՝ 6 կմ հեռավորության վրա: Հարավային կողմից Որոտանի կիրճն է, որն այդ հատվածում կոչվում է Հարժիսի կիրճ (խորությունը՝ 650 մ, այդտեղով է հոսում Որոտան գետը): Կիրճը գյուղից բաժանվում է ուղղաձիգ, բարձր ժայռերով:

Գյուղատեղը, կարելի է ասել, օղակված է բլրաշղթայով: Գյուղը գտնվում է Տաթեւի, Հալիձորի, Շինուհայրի, Լծենի, Դարպասի, Վաղուդիի, Ուրուտի հողատարածությունների արանքում եւ զբաղեցնում է մոտավորապես 50 քառակուսի կմ տարածք: Ներկայիս տեղանքում գյուղը գտնվում է 1931 թ. ապրիլ-մայիսից, թեեւ այդտեղ հնում էլ բնակավայր է եղել:

Մինչեւ 1931 թվականի ապրիլի 27-ի ավերիչ երկրաշարժը Հարժիսը գտնվում էր 1,5 կմ հարավ գտնվող Ներքի շենում (այդտեղ, ինչպես նաեւ հետագայում՝ մինչեւ 1968 թ. հուլիսի 3-ը, գյուղը կոչվել է Յայջի):

Ներքի շենը Հարժիսի համար գյուղատեղի է ծառայել շուրջ երեք դար: Դրանից առաջ, անտարակույս, Ներքի շենը նույնպես բնակատեղի է եղել, ինչը վկայում են այնտեղ առայսօր պահպանվող ճարտարապետական, պատ-

Գյուղի տարածքում կա տասը գյուղատեղի, որոնցից յուրաքանչյուրը խոսակցության առանձին նյութ է: Գյուղի տարածքում է 1722 թ. Դավիթ Բեկը տվել առաջին ճակատամարտը՝ ջարդելով կարաչոռլու թուրքերին:

Ներքի շենի Սուրբ Մինաս եկեղեցին

մամշակութային արժեքները, վիմական արձանագրությունները:

Հարժիսի կիրճում է գտնվում Հարժիսի լիճը, որն առաջացել է 1974 թ. ապրիլ ամսին՝ սողանքի հետեւանքով: Այդ լիճը, առանց չափազանցության. ներկայիս Սյունիքի հրաշալիքներից մեկն է:

Գյուղի տարածքում է գտնվում (Քարվանսարայից հյուսիս) մեկ ուրիշ լճակ, որը մատենագիտության մեջ անվանվում է Ուչթափա գյոլ կամ Ուչթափալարի լճակ:

Գյուղի տարածքում կա տասը գյուղատեղի, որոնցից յուրաքանչյուրը խոսակցության առանձին նյութ է: Գյուղի տարածքում է 1722 թ. Դավիթ Բեկը տվել առաջին ճակատամարտը՝ ջարդելով կարաչոռլու թուրքերին:

Գյուղի հյուսիսային տարածքում է գտնվել Ուրարտական Արգիշտի 2-րդ թագավորի (714-685 թթ. մ.թ.ա.) սեպագիր արձանագրությունը: Այդ կողմերում է գտնվել Արտաշես 1-ին արքայի (189-160 թթ. մ.թ.ա.) արամերեն գրությամբ սահմանաքարը:

Հարժիսի տարածքում է 1987 թ. գտնվել (հնագետ՝ Օնիկ Խնկիկյան) «սկյութական» տիպի երկու նետասլաք, որ եզակի վկայություն են սկյութների՝ այդ տարածքում գտնվելու մասին:

Ներքի շենի արեւմտյան կողմում (Որոտանի աջ ափին) բարձրանում է մի ահագին ժայռ, որի գագաթին հնում եղել է մի ամրոց, որի հետքերը պահպանվում են մինչեւ հիմա: Այդ մասին գրում է նաեւ Երվանդ Լալայանը (Զանգեզուրի գավառ, նյութեր ապագա ուսումնասիրության համար, Ա հատոր, էջ 68):

Մոտ չորս հարյուր տարի, եթե ոչ ավելի, Հարժիսը (ընդհատումներով) եղել է Տաթեւի վանքի անխախտ սեփականություն՝ սկսած 906 թվականից:

Հարժիսի նախնական տեղագրության հարցը

Հարժիսի նախնական տեղի առնչությամբ մատենագիտության մեջ երկու տեսակետ է շրջանառվում:

I տեսակետ

Հարժիքի սկզբնական տեղը Ալան (Ալն) թագավոր կոչվող վայրն է, որ համապատասխանում է Քուրդլար գյուղատեղիին: Այդ տեսակետի կողմնակից է նաեւ հնագետ Սեդրակ Բարխուդարյանը:

Վերջին տարիներին Սուրբ Մինաս եկեղեցու բեմը վերականգնվել է գյուղի դպրոցի տնօրեն Նորայր Եսայանի նախաձեռնությամբ ու ջանքով: Եկեղեցու ներսում բացառիկ մաքրություն է տիրում, եւ դա շնորհիվ Գրիգոր Օհանջանյանի:

Հարժիքցիներն այդ վայրից բռնագաղթվել են 1586-1607 թվականներին, երբ Արաքսի ձախ ավազանին տիրեցին թուրքերը:

Այդ ժամանակ Քաշաթաղ-Մաղավուզից, ինչպես եւ Ծակեձոր-Հաբանդից ու Ծղուկ-Սիսիանից բռնությամբ գաղթել են բնիկները՝ դեպի Գանձակի կողմերը: 1590-ականներից բռնագաղթի ենթարկված հայկական գյուղերը բնակեցվեցին քրդական մի քանի ցեղերով: Հենց այդ ընթացքում էլ Հարժիսը ժամանակավորապես դուրս եկավ պատմական ասպարեզից:

II տեսակետ

Հարժիքի սկզբնական տեղը Ներքի շենն է: Նման տեսակետ նախ հայտնում է Ղեւոնդ Ալիշանը (Սիսական, Վենետիկ 1893 թ.)՝ *«Ի Լծենոյ մինչեւ ի սահմանս Տաթեւոյ կամ ի Կամուրջն Սատանայի մի միայն գիւղ կայ ի ձորեզրն Որոտան՝ յահեկէն, գրեաթէ միջասահման երկոցուն, այն է Եայձի, որ ի դրիցն՝ ըստ պատմութեանց եւ թուրքացի աղաւաղութեան*

Խաչի գլուխը, գտնվում է ներկայիս գյուղից Ներքի շեն իջնող ճանապարհի սկզբնամասում՝ ձորի պռնկին

անուանն՝ գուշակի լինել Հարժիք հին գիւղ Ցուցակին եւ պարգեւագրաց տերանց Սիւնեաց...»:

Երվանդ Լալայանը նույնպես կողմնակից է այդ վարկածին. *«Լորաձորի եւ Տաթեւի սահմանների մէջ ընկնում է Եայձի գիւղը, որ ըստ Հայր Ալիշանի՝ նախկին Հարժիք գիւղը պիտի լինի: Սա գտնւում է Բազար-չայի ձախ ափին, հովտի լանջին, հիւսիսային կողմից պատած է բարձր ժայռերով...»:*

Մեզ համար, սակայն, ընդունելի է առաջին տեսակետը, որը հիմնավորել ենք *«Զանգեզուր» թերթում հրապարակած մեր հոդվածում՝ «Հարժիս գյուղը գրավոր աղբյուրներում հիշատակվելու 1150-ամյակի առթիվ»* (11 դեկտեմբերի 1990 թ.):

Հարժիս անվանման ստուգաբանման փորձ

Գրեթե մեկ վարկած կա այդ հարցում: Հարժիք տեղանունը (Հարժիսի նախաձեւը) էթնիկ ծագում ունի, ասել է թե՝ գյուղը կրել է այդտեղ բնակվող տոհմի անունը: Ք-ն հոգնակիակերտ վերջածանց է: Այդպես են կարծում եւ Մորուս Հասրաթյանը, եւ ճանաչված լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանը:

Հարժիք բառի ձեւափոխությամբ է, որ առաջ է եկել Ցայջի անվանումը:

Ղեւոնդ Ալիշանն անվանումի նման փոփոխությունը համարում է «թուրքացի աղաւաղութեան» հետեւանք: Ալիշանի կարծիքն անվերապահորեն ընդունում է Երվանդ Լալայանը:

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկի թարգմանության, ներածության եւ ծանոթագրությունների հեղինակ Ա. Աբրահամյանի կարծիքով եւս՝ Հարժիք հին անունը հետո գործածվել է Հարժիս ձեւով (ք-ս), սա էլ ուշ ժամանակներում ժողովրդական ստուգաբանությամբ աղավաղվել ու ստացել է Ցայջի ձեւը:

Տողերիս հեղինակը 1990 թ. դեկտեմբերի 11-ին «Զանգեզուր» թերթում, ինչպես արդեն նշեցինք, քննարկել է այդ հարցը՝ «Հարժիս գյուղը գրավոր աղբյուրներում հիշատակվելու 1150-ամյակի առթիվ»: Մեր այդ հոդվածը բարձր գնահատականի է արժանացրել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ճանաչված լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանը:

Այդ հոդվածում մի քանի հարցի պատասխան է տրվում: Մասնավորապես, ցույց է տրվում, թե ինչպես է կատարվել Հարժիք-Ցայջի ձեւափոխությունը: Այն կարող էր տեղի ունենալ բառասկզբի Հ-Ց, բառամիջի ր-յ, ժ-ճ-ջ հնչյունափոխությամբ:

Իսկ հարժի բառարմատը... Ենթադրում ենք, որ այդ բառարմատն էթնիկական հասկացություն է, այն էթնոսի, այն ցեղախմբի, գերդաստանի անունը, որ սկզբնապես բնակվել է այդ տարածքում: Օրինաչափ է եղել նաեւ Հարժիքի վերածումը Հարժիսի: Ինչպես նշում է Ալեքսանդր Մարգարյանը, հայերենում քիչ չեն դեպքերը, երբ ոչ միայն հասարակ, այլեւ հատուկ անունների հոգնակի հայցականն ինքնուրույն բառային-բառույթային արժեք է ստանում եւ գործածվում որպես բառի ուղիղ ձեւ:

Հարժիսի տարածքի գյուղատեղերի առնչությամբ ուսումնասիրությունները հանգեցրել են Ցայջի անվանումի ստուգաբանման միանգամայն նոր վարկածի, որը խոսակցության առանձին նյութ է:

Ներքի շենի Սուրբ Մինաս եկեղեցին

Գեղեցկաշեն այդ եկեղեցու կառուցման տարեթիվը մատենագիտության մեջ չգտանք: Սակայն պարզորոշ երեւում է, որ կառուցվել է հին եկեղեցու հիման վրա:

Երբ 1970-ականների սկզբին Ներքի շենի այգիներում, դպրոցական արձա-

Հարժիսի լիճը, որն առաջացել է 1974թ. ապրիլին, ներկայիս Սյունիքի հրաշալիքներից մեկն է

կուրդին, օգնական էի մեր գյուղի իմաստուն բաղվանչիներին, օրերից մի օր հետաքրքիր դեպք տեղի ունեցավ:

Խաչատուր Սարգսյանը, ով 1912 թ. ծնված էր, ինձ առաջարկեց միասին մտնել եկեղեցի՝ ասելով. *«Տեսնում եմ՝ հետաքրքրություն ունես մեր սրբավայրերի, հնությունների հանդեպ: Եւ ուրեմն քեզ ցույց կտամ մի գրություն, որ վկայում է եկեղեցու կառուցման տարեթվի մասին»:* Ու ցույց տվեց եկեղեցու հյուսիսային կողմի աջ սյունի արեւելահայաց պատին դաջված մի արձանագրություն՝ թվ ՌՃԸ, որ նշանակում է 1659 թվական: Հորդորեց նաեւ՝ ուրիշներին ցույց տալ ու հանրայնացնել այդ թվականը:

Վերջին տարիներին եկեղեցու բեմը վերականգնվել է գյուղի դպրոցի տնօրեն Նորայր Եսայանի նախաձեռնությամբ ու ջանքով: Եկեղեցու ներսում բացառիկ մաքրություն է տիրում, եւ դա շնորհիվ Գրիգոր Օհանջանյանի:

1988 թ. մարտի 20-ին, հորս՝ Լազր Ալեքսանյանի մասնակցությամբ, զրույց ունեցանք համագյուղացի Համո Խաչյանի հետ (1905 թ. ծնված): Նա պատմեց, որ Սուրբ Մինասի զանգը բերվել է Շուշիից: Այն բերել էր Մաքի ապերը՝ Մինասենց ազգից:

Ի՞նչ ճակատագիր ունեցավ եկեղեցու զանգը... Մամիկոն դայիի (Մամիկոն Ադամյան, ծնված 1898 թ.) 1988 թ. սեպտեմբերի 14-ին եւ նույն տարվա հոկտեմբերի 3-ին Գորիսում զրույց ունեցավ մեզ հետ:

Ըստ Մամիկոն դայու՝ եկեղեցու զանգակատունը քանդողների ղեկավարն էր Ղառի Սիմին: Ասացին, որ նա է առաջինը բարձրացել եկեղեցու կտուր՝ զանգակատունը քանդելու: Իջեցված զանգը դրել են եկեղեցու ներսում, հետո տարել դպրոց...

Եկեղեցու վրա կատարված գրոհի մասին մեզ պատմել է նաեւ Խաչատուր Հայրապետյանը, 1988 թ. փետրվարի 6-ին (ծնված 1911 թ.): Ըստ Խաչատուր Հայրապետյանի՝ *«Մինչեւ 1927 թ. եկեղեցին կանգուն էր եւ գործում էր: Տեր Ղեւոնդը եւ Տեր Գեւորգն էին վերջին հոգեւոր տերերը:*

Գյուղում ժողովի տեղ չկար, հասարակական շենքեր չկային: Կոմերիտական ժողով հրավիրվեց ծմռանը, քարտուղարն Ապետնակ Մարտիրոսյանն էր: Հարց բարձրացվեց եկեղեցին վերցնելու եւ հասարակական շենք դարձնելու մասին: Նույն գիշերը կարմիր դրոշ բարձրացվեց եկեղեցու գմբեթ-զանգակատան վրա, իսկ առավոտյան գմբեթ-զանգակատունն արդեն քանդված էր: Այդ գործն արեցին կոմսոմոլի բյուրոյի անդամները... Գյուղսովետի ներկայացուցիչ Սիմոն Կիրակոսյանի միջոցով գույքի ցուցակը տերտերից վերցրինք, գույքը տեղավորեցինք խորանում:

1930 թ. տեր Գեւորգը Երեւանից եկած մի պաշտոնյայի հարկադրմամբ հրաժարվեց իր հոգեւոր կոչումից: Իսկ 1931 թ. ապրիլի 25-ին Տեր Գեւորգին ստիպեցին, որ հասարակության համար զեկուցում կարդա՝ կրոնի խաբեության մասին: Դրանից երկու օր անց տեղի ունեցավ սարսափելի երկրաշարժ եւ գյուղն ավերվեց...»:

Անշուշտ, վերոնշյալ զրուցակիցներս մեզ տեղեկացրին, թե ովքեր են իրականացրել զանգակատան քանդումը, ովքեր են ստորացրել գյուղի հոգեւորականներին: Բայց պատշաճ չենք համարում նրանց անունները հրապարակել...

Զորավոր տապանաքարը, որտեղ Բարձրյալի հետ հաղորդակցության են բերում վախեցած կամ վերջույթներից թույլ մանկահասակ երեխաներին

Ներկայիս Հարժիսից Ներքի շեն ձգվող ճանապարհին՝ Խաչի գլուխ անվանյալ վայրում, առաջին հայացքից սովորական մի տապանաքար կա: Տարածքի հին գերեզմանատներից է այդ վայրը: Այն գերեզմանատուն է ծառայել նաեւ 1931-ի երկրաշարժից հետո, երբ գյուղը դուրս է եկել սարավանդ: Ու այդ գերեզմանը գործել է մինչեւ 1950-ական թվականներ:

Ներքի շեն մեքենահարմար ճանապարհ բացելու պատճառով (1950-ականներին), որոշ գերեզմաններ այնտեղից հանվել եւ բերվել են գյուղի ներկայիս գերեզմանատուն: Սակայն վերոնշյալ տապանաքարը մնացել է ձորի պռնկին: Անսովոր մի պատկերաքանդակ կա այդ տապանաքարի վրա՝ կրծքերը կտրած աղջիկ... Ըստ ավանդազրույցի՝ թուրք հրոսակներն են աղջնակին պատժել, ով փորձել էր իր պատիվը փրկել... Դա եղել է շատ դարեր առաջ: Եվ այդ ընթացքում աղջնակի գերեզմանը ոչ միայն սրբատեղի է դարձել, այլեւ... Զորավոր մի ուժ է իր մեջ ամփոփել այդ տապանաքարը, որի զորավորությունը կենսունակ է մինչեւ օրս:

Այդ զորավոր տապանաքարի աստվածային ուժով բուժում են ստանում վախեցած կամ վերջույթներից (ոտքերից, ձեռքերից) թույլ մանկահասակ երեխաները: Տապանաքարի մոտ (իրենց հետ բերած ջրով) լվանում են երեխայի ոտքերը, ձեռքերը եւ երեսը, որից հետո շշերը, որով ջուր է բերվել, փշրում են տվյալ տապանաքարի վրա... Մինչեւ հիմա էլ, ինչպես հարյուրամյակներ շարունակ, մանկահասակ երեխաներ են բերվում այդ սրբավայր:

Համագյուղացիներս պատմում են,

թե մի քանի տարի առաջ Ամերիկայի Միացյալ Նահանգներից են երեխա բերել զորավոր այդ ուխտատեղի, եւ երեխան բուժվել է...

Պառավ խաչը

Ներքի շենում՝ Սուրբ Մինաս եկեղեցուց մոտ 20 մ հարավ-արեւելք գտնվող այդ խաչը, հավանաբար, տարածքի ամենահին սրբավայրն է: Գրեթե գետնափոր այդ սրբավայրի արեւելյան պատին մի մեծ քար է՝ ուշագրավ պատկերաքանդակով: Քանդակված է մի մարդ, ով շղթայակապ է արել, սանձել ու իրեն ենթարկեցրել սարսափելի գազանին...

Մեր գյուղի տարեցներն իրենց պապերից լսածն են պատմել՝ *«Պառավ խաչը շատ զորավոր է, եւ նրան հավատով այցելողները կարողանում են վերահաս չարը խափանել...»:* Պառավ խաչը շատ անգամ է չարը խափանել եւ դեռ խափանելու է...

Խաչի գլուխը

Ներկայիս գյուղից Ներքի շեն իջնող ճանապարհի սկզբնամասում է՝ ձորի պռնկին: Այդ վայրից ներքեւ Խաչին տակն է, իսկ խաչի գտնվելու վայրը՝ Խաչի գլուխը: Դարերի պատմություն ունի այդ սրբավայրը, ինչը վկայում են

Հին Հարժիքի կամ Ալան (Ալն) թագավորի Սուրբ Աստվածածինը

այնտեղ գտնվող՝ հիրավի բացառիկ խաչքարերը:

1980-ականներին սրբավայրի տարածքը կարգի է բերել եւ փոքրիկ ու սովորական մատուռ կառուցել երեւանաբնակ հարժիսեցի, լուսահոգի Բաբկեն Սամսոնյանը: Գյուղացիք հիմա երբեմն նաեւ Բաբկենի (Բաբոյի) խաչ են անվանում այդ սրբավայրը: 2019 թ. սրբավայրի մերձակայքը նորովի է բարեկարգել մոսկվայաբնակ հարժիսեցի Ավետիք Քոլյանը: Հարժիսցիների մեծ մասը հենց այդ վայր է մոմավառության կամ մատաղ անելու գալիս հիմա:

Հին Հարժիքի կամ Ալան (Ալն) թագավորի Սուրբ Աստվածածինը

Մատենագիտության մեջ այդ սրբավայրի անունը չգտանք, միայն ժողովրդական հիշողությունն է վկայում՝ եկեղեցու անունը Սուրբ Աստվածածին է: Կառուցված է սրբատաշ քարերով, ունեցել է կամարներ: Պահպանվել է արեւի ժամացույցը:

Ալն (Ալան) թագավորի գերեզմանը

Գտնվում է Որոտան գետի ձախափնյա ձորալանջին, Հարժիս-Տաթեւ հետիոտն ճանապարհին, 14-րդ դարում Որոտան գետի վրա կառուցված կամրջի մերձակայքում: Դա, ինչպես արդեն նշել ենք, Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Հարժիք գյուղն է, որի բնակիչները 16-17-րդ դարի սահմանագծում ենթարկվել են բռնագաղթի, որտեղ այնուհետեւ բնակվել են թրքախոս քրդեր, ինչի համար էլ վայրը հետագայում կոչվել է նաեւ Քրդեր:

Համո Խաչյանն իր հորից՝ 1860 թ. ծնված Ասրի Խաչյանից, լսել է մի պատ-

մություն, որը փոխանցել է մեզ: Ասրի Խաչյանն էր Հարժիսում (Յայջիում) ընդունել Ռաֆֆուն:

Ահա՝ *«1881 թ. ամռանը կամ աշնան կողմերը, հայրս՝ Ասրի Խաչյանը, լսել էր, թե Ռաֆֆին եկել է մեր կողմերը եւ գտնվում է Ալան թագավորում: Մի քանի հոգու հետ իջնում են այնտեղ՝ տեսնելու եւ գյուղ հրավիրելու նպատակով:*

Ռաֆֆուն հանդիպում են Քուրդլարի եկեղեցու մոտ գտնվող հայկական գերեզմանատանը՝ շատ հուզված վիճակում: Նա պատահաբար ականատես էր եղել, թե ինչպես են թուրքերը վարուցանք կատարում այդ գերեզմանատանը, գերեզմանաքարեր ջարդում, որոնց մի մասը խաչքարեր էին: Այդ պահին գերեզմանոց են գալիս մի քանի թուրքեր: Նրանցից մեկը լկտիությամբ առավել աչքի է ընկնում, ըստ երեւույթին, գյուղի իշխանավորներից էր: Ռաֆֆին զայրացած հարցնում է՝ «Ո՞վ ես դու»:

– Ես Մաշադին եմ, – պատասխանում է թուրք իշխանավորը:

– Անունդ դրել են Մաշադի, բայց առանց խղճի ու ամոթի գերեզմանատուն ես ավերում, խաչքարեր կոտրում, ամոթ է, – արձագանքում է Ռաֆֆին:

Շատ թեժ բանակռվից հետո թուրք Մաշադին երդվում է Ալլահով, որ այսուհետ թույլ չի տա քրիստոնեական գերեզմանատանը վարուցանք անել»:

Կիսավեր եկեղեցու գավթի մեջ մի մեծ տապանաքար կա՝ արձանագրությամբ, իսկ դուրսը՝ խաչքարեր: Այդ գերեզմանաքարի վրա գրված է. ԶԳԵՂԵՑԿԱՏԻՊ ԵՒ ԶԾԱՂԿԱՓԹԻԹ ՔԱՋ ԶԱՒՐԱԿԱՆ ԱԶԱՏԱԾԻՆ, ԴԵՌԱԲՈՅՍ ՄԱՆՈՒԿՆ ԱԼՆ ԿԻՍԱՒԻՐԵԱ ՓՈԽԵԱԼ ՅԱՇԽԱՐՀԷ, ԹՈՂԵԱԼ ՍՈՒԳ ԱՆՄԽԻԹԱՐ ԱՆԶԱՒԱԿ ԾՆՈՂԱՑՆ ՉԱՂԱՐԻՆ ԵՒ ԲԱԲԱԽԱԹՈՒՆԻՆ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԹՎԻՆ: ՉՀԵ:

Ըստ Սեդրակ Բարխուդարյանի՝ *«Անունը կարող է նաեւ ՄԱՆՈՒԿ ՆԱԼՆ կարդացվել: Գերեզմանաքարը եռաստիճան հիմքի վրա սրանկյուն օրորոցաձեւ է. վերին մասերը՝ զարդարված քանդակներով. աջ կողմի տողերը ճակատին են գրված, կենտրոնի բաց մասում՝ հեծյալ որսորդ, որի առաջից փախչում է այծ կամ եղջերու»:*

Եկեղեցու գավթի մուտքի մոտի խաչքարի վրա գրված է՝ *:ՆՂԲ: թվ. յանուն Այ ու արքաուն Սմպատայ ու Տարսայիձին իշխանութեամբ... վերապատրոնութեամբ ես կուլ միաբանեցավ: Հիշեա ՔՍ. ԱԾ. զՄամիկոյ թագոհի եւ ողորմեա:*

Պետրոսախաչ. սրբավայրը, որտեղ շատ ուխտավորներ են այցելում

Քուրդո իշխանի կառուցած տաճարը

Հնագետ Սեդրակ Բարխուդարյանն ավելացնում է. *«Անձամբ ստուգելու հնարավորություն չենք ունեցել, դնում ենք ըստ Լալայանի: Բացահայտ է թվականի սխալը. Սմբատ արքան եւ Տարսայիձը հայտնի Օրբելյան եղբայրներն են, 13-րդ դարի գործիչներ»:*

Քուրդո իշխանի կառուցած տաճարը

Այդ տաճարի մասին գրավոր աղբյուրներում հիշատակություն գտանք, այն էլ Սերո Խանզադյանի գրքում: Ահա՝ *«Զորակում մի հին ավերակ տաճար կա, դռան կամարին՝ գրեր. «Կանգնեց սրբ դաճարս Քրդիկ իշխան...»»* (Հայրենապատում, հատոր Ա): Սերո Խանզադյանը նաեւ նկարագրում է այդ վայրը:

Դատելով ասվածից՝ այդ վայրը ներկայիս Հարժիսից Հալիձոր եւ Շինուհայր ձգվող դաշտային ճանապարհի վրա է՝ Վերին Քուրդլար կոչվող բնակատեղիի (հյուսիսից հարավ ձգվող) ձորակի արեւելյան ափին: Կիսավեր այդ շինությունը հիմա էլ կա:

17-րդ դարում, երբ հայկական հնամենի այդ գյուղը բնակեցվեց թրքախոս քրդերով, Աստծո այդ տաճարը վերածվեց մզկիթի, իսկ ձորակը կոչվեց մեջիդի (մզկիթի) ձոր. այդպես էլ կոչվում է մինչեւ հիմա: Մեծն Սերո Խանզադյանը, սակայն, Քուրդո իշխանի հարցում ոչ փաստարկված մտքերի մեջ է ընկնում: Նրա ասելով՝ *«Զորում Որոտանի վրայի հին կամրջին այստեղ ասում են Քրդիկի կամուրջ: Սա եւս կառուցել է Սյունյաց Քուրդո իշխանը ութերորդ դարի սկզբին:*

Այս Քրդիկ իշխանի անունն է կրում կանգուն կամուրջը եւ մոտի ավերակ գյուղատեղին»:

Անշուշտ, դա այդպես չէ, քանզի կամուրջը կառուցվել է 14-րդ դարում, իսկ «մոտի ավերակ գյուղատեղին» Հարժիք գյուղի նախնական տեղն է (առաջին վարկած) կամ Նորիք գյուղը (երկրորդ վարկած, որի հեղինակը Մորուս Հասրաթյանն է): Իսկ Քուրդո իշխանի կառուցած տաճարը, ամենայն հավանականությամբ, Բերդ խոշոր գյուղի տաճարն է եղել, որը խոսակցության առանձին նյութ է: Քուրդոն, ի դեպ, Սյունիքի նշանավոր իշխաններից էր: Նրա անունը հիշատակում է Ստեփանոս պատմիչը, երբ նշում է Սյունիքի իշխանների հաջորդականությունը, ով իշխել է Հովհաննեսից հետո՝ 18 տարի:

Պետրոսախաչ. ահա եւ զորավոր ու փափագելի սրբավայրը, որտեղ շատ ուխտավորներ են այցելում

Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային ծյուղավորման գագաթում գտնվող այդ սրբավայր այցելեցինք 2019 թ. նոյեմբերի 17-ին: Լեռնաշղթայի այդ ծյուղն ընկած է Տաթեւ եւ Հարժիս գյուղերի միջեւ: Երկու կողմից էլ բարեհարմար է գագաթ բարձրանալը: Բայց մենք Պետրոսախաչ բարձրացանք Տաթեւի կողմից: Ընդ որում՝ լեռնագագաթի հարավային ստորոտում գտնվող աղբյուրից հետո ճանապարհը պետք է անցնեինք ձիով կամ ոտքով:

Մենք ճանապարհ ընկանք ոտքով, սակայն գագաթի մատույցներում մեզ միացավ Տաթեւի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Գեւորգ Գրիգորյանը՝ իր ձիով:

2031մ բարձրության Պետրոսախաչի իշխող բարձունքից երեւում են եւ Մեծ Իշխանասարն ու Աղոթարանը, եւ Արամազդն ու Գլուխ Զագեձորոն, եւ Հարժիսի կիրճն ու Հարսնաձորը, նաեւ Ուխտասարը: Պետրոսախաչի մենավոր ու կոտրած խաչի մոտ մենք մոմ վառեցինք եւ աղոթք բարձրացրինք առ Աստված՝ խաղաղության եւ Սյունյաց աշխարհի բարգավաճման համար:

Որոշ մասնագետներ Պետրոսախաչը նույնացնում են Հաբանդ գավառի Պետրոսկա վանք գյուղի սրբավայրի հետ, որը վիճելի է:

Պետրոսախաչից վերադարձանք Հարժիսի կիրճով: Լեռնալանջերով ու անտառներով ձգվող կածաններով նախ իջանք Հին Հարժիք բնակատեղի, որ նաեւ Ալն (Ալան) թագավոր է կոչվում, որտեղից էլ ճանապարհը շարունակեցինք Արմեն Թովմասյանի ամենագնացով...

Պետրոսախաչից Հին Հարժիք (Ալան թագավոր), ապա եւ Ներքի շեն ու ներկայիս Հարժիս ձգվող ուղին այն ճանապարհն է՝ հարավից եկող, որ Քարվանսարայում (Հարժիսի տարածք) միանում է Արարատյան դաշտից-Նախիջեւանից դեպի Պարտավ եւ Աղվանք տանող հին ճանապարհին: Իսկ Որոտան գետն անցանք 14-րդ դարում կառուցված չքնաղ մի կամրջով, որ գտնվում է Հին Հարժիքում (Ալան թագավոր կոչվող վայրում):

Հ.Գ. Պետրոսախաչի զորավորության հետ կապված մի ավանդազրույց է մեզ փոխանցում Ստեփան Լիսիցյանը «Զանգեզուրի հայերը» գրքում (էջ 129): Ահա՝ «Երաշտի ժամանակ մատաղ էին մորթում. խեղդվածի գերեզմանի վրա ջուր էին ածում, եւ այնտեղից բերած ջուրը արտում ցանում, կամ մի զօրավոր քար տեղից վերցնում, գետի կամ աղբյուրի մեջ լողացնում եւ բերում նորից տեղը դնում: Այդպիսի խաչքարեր կամ պարզ գերեզմանաքարեր գյուղերից շատերի մոտ կային:

Օրինակ՝ ...Պէտրոսախաչը: Տաթեւում «անձրեւ առաջացնելու համար դիմում են եւ այս միջոցին: Կիրակի առավոտ, երաշտի ժամանակ աղջիկները ման են գալիս տնետուն, հավաքում են զանազան ուտելեղեն եւ հետները տանում մի սարի գլուխ, որտեղ ընդհանուր ճաշ են սարքում, երգում, ուտում, խմում, զվարճանում: Այդ սարից ճաշից հետո վերցնում են մի քար եւ տանում են մոտակա վտակը: Այդ ծիսակատարության ժամանակ աղջիկները չպիտի ետ նայեն: Քարը ձգում են ջրի մեջ եւ նրա մեջ թողնում մի նկատելի տեղ, որ երբ արդեն հարկավոր չի լինի՝ տանեն ետ դնեն հին տեղը, թե չէ սաստիկ անձրեւը կարող է սրբել՝ տանել բոլոր ցանքսերը»:

Ենթադրվում է, որ Պետրոսախաչը Պետրոս ճգնավորի գերեզմանի խաչքարն է (Ստեփան Լիսիցյանը նույնանուն խաչքար է հիշատակում Տաթեւի մերձակայքում, որին վերագրվում էր անձրեւ բերելու կամ դադարեցնելու զորություն):

Պետրոսախաչի մասին հավելյալ տեղեկություններ կան սույն համարի՝ Տաթեւ գյուղին նվիրված հոդվածում:

Փեղի խաչը

Այդ սրբավայրը, ցավոք, 1970-ականներին ավերել են, ու հիմա հետքն անգամ չի երեւում: Փեղի խաչը գտնվել է Նվածորում: Դա Հարժիք նախատեղի (Ալան թագավորի) արեւմտյան մասով՝ հյուսիսից հարավ (մինչեւ Որոտան գետ) ձգվող ձորն է: Մինչեւ հիմա էլ ձորն այդպես էլ կոչվում է:

Նվածորի շարունակությունը հյուսիսում Ղալուջի ձորն է (Բերդի ձորը): Տարեցները պատմում էին, որ Նվածորի վերին մասը (չհասած Ղալուջի ձոր) նաեւ Խաչի ձոր է կոչվել:

Իսկ Նվածորից արեւմուտք ընկած փոքրիկ տախտը (Եզնատախտը) նաեւ Խաչի տախտ է կոչվել: Տարեցները պատմում էին, որ Փեղի խաչը ծառի հսկա քոթուկից (կոճղից) բխող ջուր էր, որն ընկալվում էր իբրեւ սուրբ ջուր:

Գեղակերտ խաչքարը, որ Հարժիք բնակատեղիից բերել են Գորիս եւ գտնվում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում

Խաչքարը Գորիս է տեղափոխվել 1980-ականներին՝ շրջանի ղեկավարության նախաձեռնությամբ, Գորիս քաղաքում մշակութային նշանակություն ունեցող քարերի թանգարան ստեղծելու նպատակով, որ հետագայում սխալ է համարվել:

Դղդղնածակ կոչվող քարանձավը, որ Տաթեւի վանքի գաղտնարաններից մեկն է համարվել

«Այունյաց երկրի» ստեղծագործական խումբն այդ քարանձավ այցելեց 2019 թ. հոկտեմբերի 6-ին: Երթուղին այսպիսին էր՝ Հարժիս - Ներքի շեն - Հարժիսի լիճ, որտեղից բարձրացանք կիրճի հարավային լեռնալանջը՝ մոտ 700-800 մ հեռավորության վրա գտնվող: Հատկապես վերջին հատվածը դժվարանցանելի է, եւ մեծ ջանք պահանջվեց բարձրանալու համար:

Մեզ ուղեկցում էին Հարժիս գյուղի մի խումբ երիտասարդներ՝ Հրայր Ղեւոնդյանի գլխավորությամբ (Արմեն Ավանեսյան-Ալեքսանյան, Սամվել Բաբայան, Մուշեղ Օհանջանյան): Վերջին երեքը ձիերով էին, թեեւ Հարժիսի լճից դեպի բարձունք ձգվող ճանապարհն անանցանելի էր ձիերի համար (ձիերը թողեցինք լճի մոտակայքում):

...Դղդղնածակ խորհրդավոր քա-

Դղդղնածակ կոչվող քարանձավը, որ համաշխարհային ճանաչում ունի

րանձավի մասին լսել էի դեռեւս մանկության տարիներին: Դղդղնածակ այցելած համագյուղացիներս պատմում էին, որ այնտեղ՝ քարանձավի խոռոչներում տեսել են մատյաններ, գորգերի եւ կարպետների կույտեր, որոնք փլվում-մոխրանում էին, երբ ձեռք էին տալիս:

Հետագայում, երբ արդեն սովորում էի պատմության ֆակուլտետում, իմ համագյուղացի Թանգի Հայրապետյանն այդ մատյաններից մի մասունք նվիրեց ինձ, իսկ ես՝ հնագիտության ճանաչված դասախոս Վարշամ Ավետյանին (դա A4 չափսի թղթի մեկ քառորդի չափ կտոր էր):

Գյուղի տարեցներն էլ պատմում էին, թե քարանձավը Տաթեւի վանքի ամենամեծ եւ ապահով ստորգետնյա գաղտնարանն է եղել կամ պատսպարանը: Բայց տարիների ընթացքում քարանձավի ներսում փլվածքներ են գոյացել, ու հիմա հատուկ եւ մասնագիտացված արշավախումբ է պետք, որպեսզի ստորգետնյա այդ տարածքում կողմնորոշվենք, գնանք մինչեւ վերջ, ճշտենք քարանձավի ներսի ճանապարհների ճյուղավորումները, անդունդները եւ խոռոչները:

Ասում են՝ Դղդղնածակը երկու մուտք ունի: Մենք քարանձավ մտանք հյուսիս-արեւելյան մուտքից, որ գլխավոր մուտք է համարվում: Երկրորդ մուտքը գտնելու համար անհրաժեշտ է, ներս մտնելուց հետո, ճամփա ընկնել աջ խոռոչով... Մեզ ուղեկցող տղաները գնացին այդ ուղղությամբ, բայց, ինչպես հետո պարզվեց, երկրորդ մուտքը չգտան: Գտան միայն մի փոքր անցք-լուսամուտ՝ հյուսիսահայաց ուղղությամբ, որտեղից լույսի ճառագայթներ էին թափանցում, իսկ ելք չկար:

Հետո դադարեցրինք առաջխաղացումը, քանի որ չէինք վերցրել համապատասխան պարագաներ՝ թթվածին, լուսավորության միջոցներ, պարաններ, չէինք ձեռնարկել անվտանգության միջոցառումներ...

...Դղդղնածակ կոչվող քարանձավի հանդեպ հետաքրքրություն է առաջացել նաեւ աշխարհի տարբեր երկրներում: Մի քանի ամիս առաջ էր, որ Մեծ Բրիտանիայից գիտական արշավախումբ եկավ Դղդղնածակ:

Ի՞նչ ծագում ունի Դղդղնածակը: Այդ առումով երկու կարծիք կա՝ ձեռակերտ եւ անձեռակերտ: Մեր կարծիքով (առերեւույթ ստացած տպավորությունից)՝ դա ձեռակերտ քարանձավ է. նման ենթադրության տեղիք են տալիս՝ նախ՝ մուտքից դեպի ձախ ձգվող պատի հետքերը, ապա քարանձավի ներսի ճյուղավորումները, որ իսկական լաբիրինթոս են հիշեցնում, այնուհետեւ քարանձավի ներսի պատերի վրա (20-30 մ բարձրությամբ) փորված փոքր քարանձավները:

Հայաստանի քարանձավագիտական կենտրոնի նախագահ, ճարտարապետության դոկտոր Սամվել Շահինյանի կարծիքով՝ դա կարստային քարանձավ է՝ առաջացած երկրաբանական, քիմիական երեւույթների ազդեցությամբ:

Կարստային ասելով՝ Սամվել Շահինյանը նկատի ունի նախկին Հարավսլավիայի հյուսիս-արեւմուտքում (Իստրիա թերակղզուց հյուսիս) գտնվող, աշխարհի ամենանշանավոր քարանձավներից մեկի՝ Պոստոյնսկա-Յամա քարայրի տեսակը: Կարստ կամ Կրաս սարավանդի անունից առաջացած երեւույթ-քարանձավները (կարստային) ջրի եւ քիմիական պրոցեսների արդյունք են, ինչպիսին կարող է լինել նաեւ Դղդղնածակը: Բոլոր դեպքերում այդ հարցի գիտական պատասխանը դեռեւս տրված չէ:

Իսկ ինչպե՞ս է ստուգաբանվում քարանձավի անունը՝ Դղդղնածակ:

Սամվել Շահինյանի կարծիքով՝ *«Անվանումի արմատը, ամենայն հավանականությամբ, դաղդղան բառն է: Դաղդղանը կախարդազարդ է, հմայիլ, թալիսման: Դաղդղաններն օգտագործվել են հին Հայաստանում: Հին հայերը համարում էին, որ դաղդղաններն իրենց մեջ գերբնական ուժ ունեն եւ պաշտպանում են մարդկանց չար աչքից, դժբախտություններից եւ սատանայից»:* Թե ինչով էր պայմանավորված քարանձավի՝ գերբնական ուժ ունենալը, կարելի է միայն ենթադրություններ անել:

Քարվանսարա

1343 թ. կառուցված այդ հուշարձանը ներկայացնում ենք ըստ հնագետ Սեդրակ Բարխուդարյանի: Ահա՝ «Կոտրած քարվանսարա. կիսավեր իջեւանատուն, գտնվում է գյուղից մոտ 3 կմ հյուսիս, բաղկացած է մի քանի բաժանմունքներից, շինված է սրբատաշ քարերով, արեւմտյան մուտքի ճակատին գտնվում է խիստ եղծված արձանագրություն, ուր պահպանվել է թվականը՝ 1319 եւ Օրբելյանների անունները՝ Ի ԹՎ. :ՉԿԸ: ԵԻ ԻՇԽԱՆ ՕՐՊԷԼ, ԲԷՇՔԵՆ:

Այս հուշարձանը կարեւոր է նրանով, որ իր տեղադրությամբ պարզում է Արարատյան դաշտից-Նախիջեւանից դեպի Պարտավ ու Աղվանք տանող հին ճանապարհի հատվածների ուղղությունը:

Հնի նման ներկայումս էլ ճանապարհը Նախիջեւան գետի ափերով հասնում է Բիչանագի լեռնանցքը, ապա իջնելով՝

Քարվանսարա. 1343 թ. կառուցված

Որոտանի ափերով մտնում է Անգեղակոթ գյուղը եւ այնտեղից, Սիսիանին չհասած, թեքվում է դեպի հյուսիս եւ բաց դաշտերով ընթանալով, Ուչ թափալարների հյուսիսից անցնում եւ մտնում է Գորիս:

Հին ճանապարհի վտանգավոր տեղամասերում՝ փոթորիկների եւ ձյունի ժամանակ չշեղվելու համար՝ ճանապարհի երկու կողքերին տնկել են ցից քարեր 1,5–2 մ բարձրությամբ. այդպիսի ճանապարհաքարեր մնացել են ընկած եւ կանգուն վիճակում են ինչպես «Կոտրած քարվանասարայի» մոտ, այնպես էլ այլ կետերում:

Քարերի մի մասը վերին ծայրում ունի անցք, որն ապացույց է, որ քարշ տալու միջոցով են տեղափոխվել եւ հեռու տեղից»: Այդ ճանապարհը նաեւ Աղի ճանապարհ է կոչվում (Նախիջեւանի աղի հանքերից եկող), որին Քարվանսարայում միանում է հարավից եկող ճանապարհը: Աղի ճանապարհի նշանակությունը նվազեց Թուրքմենչայի դաշնագրությունից հետո:

Միջնադարյան կամուրջ Որոտան գետի վրա

Ճանաչված ճարտարապետ Վարազդատ Հարությունյանի կարծիքով (Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, էջ 101)՝ «... Կառուցված է Որոտանի նեղ մասում. նրա խելերը հենվում են երկու բարձր ժայռերի վրա: Ձախ կողմի խելը փոքր ինչ ցածր է աջափնյա խելից, որի ժայռի հիմքերը կազմում են աջափնյա ժայռերի ուղղակի շարունակությունը: Պետք է ենթադրել, որ այն կառուցվել է... 14–րդ դարի կեսում:

Այդ երկու կառուցվածքը միասին (նկատի ունի նաեւ Քարվանսարան)... սպասարկում էին դեպի Տաթեւ տանող ճանապարհը: Կամուրջը, երկու ճակատի կամարներից բացի, որոնք շարված են սրբատաշ սեպաքարերից, ամբողջությամբ կառուցված է բազալտի անտաշ քարերից, կրաշաղախով: Կամրջի ընդհանուր երկարությունը կազմում է 31,0 մ, կամարային բացվածքը՝ 12,0 մ, իսկ ընդհանուր լայնությունը՝ 3,5 մ, որից երթեւեկելի մասը կազմում է 2,15 մ»:

Շիշթափա դիցական սարը

Շիշթափա դիցական սարը

Հարժիս գյուղի մերձակայքում է գտնվում Շիշթափա լեռը (Կովկասի 5 վերստանոց քարտեզում՝ Շիշտապա): Շիշթափան լեռնագագաթ է ՀՀ-ում, Սյունիքի բարձրավանդակում, Սիսիանի եւ Գորիսի շրջանների սահմանագլխին, Հարժիս գյուղից՝ հյուսիս-արեւմուտք, բարձրությունը՝ 2235 մ:

Սերգեյ Ումառյանը կարծում է (Սյունիքը դիցարան, Երեւան 1981), թե Շիշթափայի սկզբնական անունը եղել է Սիսթափա: Նրա կարծիքով (ի դեպ, դա միայն նրա տեսակետը չէ)՝ *«Սիս արմատով...տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսարան կամ զոհարան»* (նշված գրքի էջ 18):

Շիշթափա լեռան հարավ-արեւելյան լանջին՝ քարաժայռի հովանու ներքո է գտնվում մի մատուռ-սրբատեղի: Տարածքի վրա գտնվող խաչքարը հուշում է նրա ժամանակը՝ 1347 թ.:

Մարդու դիմապատկերով վիշապակոթողը

Մ.թ.ա. 2–րդ հազարամյակի վիշապակոթողն ուղղաձիգ, նեղ եւ բարձր սյուն է՝ իր ձեւով եւ չափով նման վիշապի, նիստերից մեկի վերջնամասում մարդու դիմապատկեր է՝ երկարավուն դեմքով, կիսաբաց բերանով, կանո-

Միջնադարյան կամուրջ Որոտան գետի վրա

նավոր դիմագծերով: Վիշապակոթողն առնչվում է պտղաբերության ֆալլիկ պաշտամունքին եւ սլացիկությամբ ուղղված է դեպի երկինք: Վիշապակոթողը ներկայումս գտնվում է գյուղի մշակույթի տան բակում:

Նորահայտ կուռքը լրացնում է Հարժիսի սրբազան լանդշաֆտից գտնված հուշարձանների շարքը: Մարդու դիմապատկերով վիշապակոթողը տարիներ շարունակ ցուցադրվում էր Երեւանում՝ Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպված «Քարերը ժողովելու ժամանակը» խորագրով ժամանակավոր ցուցահանդեսում:

Հինգ դիմաքանդակով քարե կուռքը

Գտնվել է ներկայիս գյուղատեղիում: Կերտված է սպիտակագորշ որձաքարից, ունի 76 սմ բարձրություն եւ զարդարված է հինգ դիմաքանդակով: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի այդ հուշարձանը պահվում է Գորիսի երկրագիտական թանգարանում:

Մենհիրներ

Գյուղի տարածքում գտնվում են բազմաթիվ մենհիրներ՝ նախնադարյան համայնական դարաշրջանի պաշտամունքային հուշակոթողներ՝ նվիրված նախնյաց հիշատակին: Դրանցից երկուսը գտնվում են գյուղի կենտրոնի խանութի պատի տակ:

Պաշտամունքային այլ հուշարձաններ

Ներկայիս գյուղատեղիում գտնվել են պաշտամունքային բազում հուշարձաններ:

1. Մարդակերպ քանդակ կամ կուռք, որ հայտնաբերվել է 2017-ին՝ գյուղի գերեզմանատանը հողային աշխատանքներ կատարելիս:

2. Կնոջ կիսամարմին՝ պոկված գլխով, բազալտ, բարձրությունը՝ 1,25 մ, լայնությունը՝ 50 սմ:

Գտնվում է Հարժիսում՝ Արամ Սարգսյանի տնամերձում (հայտնաբերվել է 1942-ին):

3. Դիմամասը վնասված գլուխ, տեղական սպիտակ քար, բարձրությունը մոտ 50 սմ, լայնությունը՝ 25 սմ:

Գտնվում է Արամ Սարգսյանի տնամերձում: Այդ, ինչպես եւ նախորդ հուշարձանը, գտել է նրա հայրը՝ Խաչատուր Սարգսյանը: Հուշարձանների հետ կապված ավանդազրույց կա գյուղում՝ դրանց զորավորության եւ խորհրդավորության մասին:

4. Եւս մի քանի մարդակերպ քանդակներ կամ կուռքեր, որ պահվում են գյուղի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում:

5. Եւս երկու հուշարձան, որ գյուղի տարածքից հանվել են ոչ օրինական ճանապարհով. պատկան մարմինները պարտավոր են դրանք Գորիսից վերադարձնել Հարժիս:

Բազում առասպելներից երկուսը, որ իրական հիմքեր ունեն

Հարժիսի մասին կամ գյուղի պատմության շուրջ դարերի ընթացքում հյուսվել են բազում առասպելներ, լեգենդներ: Դրանցից երկուսը՝ ստորեւ:

Առաջինը Հարժիս անունով աղջկա առասպելն է, որը մի քանի տարբերակ ունի: Առասպելը վկայում է, թե շատ հին ժամանակներում, Որոտան գետի մյուս երեսին ծվարած Լծեն գյուղից մի տղա գետն ի վար գնում է Հալիձոր գյուղ՝ աղ բերելու:

Մթին անտառի մեջ հանկարծ հանդիպում է մի աղջկա: Տղան ընկնում է նրա հետեւից եւ բռնում յոթ օր հետապնդելուց հետո: Աղջկա անունը Հարժիս է լինում: Տղան ամուսնանում է չքնաղ այդ աղջկա հետ: Եվ նրանց ամուսնությունից էլ առաջանում են գյուղն ու գյուղանունը:

Երկրորդը Հարժիսի վերածննդի մասին է, որ նոր կյանք առավ Ներքի շենում:

...Գյուղը բռնագաղթի է ենթարկվում: Բնակչությանը տանում են Նախիջեւանի ուղղությամբ: Ղուկաս անունով մի երեխա աննկատ հետ է ընկնում քարավանից, մնում մի քարի տակ:

Երեք օր հետո երեխային կիսամեռ վիճակում գտնում է մի նախիջեւանցի եւ տանում-պահում իր վեց տղա երեխաների հետ: Երեք տարի անց Տաթեւի վանքի վարդապետը լսում է այդ երեխայի մասին, գալիս է Նախիջեւան ու երեխան հետը բերում Տաթեւ:

Եպիսկոպոսը պահանջում է Ղուկասին կուսակրոն դարձնել, բայց վարդապետը չի համաձայնվում.

– Սրա հայրենական գյուղն ամայի է, ավեր, այս երեխայով կենդանացնենք գյուղը:

Այդպես էլ արվում է...

Տարիներ անց նրան ամուսնացնում են Տաթեւ գյուղից մի աղջկա հետ եւ բերում-բնակեցնում իր պապերի ավերակներում: Հարժիս գյուղը նորից է շենանում եւ բազմանում... Գյուղ են վերադարձել հիմնականում նրանք, որոնց նախնիները տարիներ առաջ բռնագաղթվել են այդտեղից: Այդտեղ են տեղափոխվել եւ մշտական բնակություն հաստատել նաեւ Լորաձորի Մրոց գյուղի բնակիչները:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 20

Տաթեւ գյուղը, որ հիշատակվում է դեռեւս Գահնամակում՝ «Տաթեւյանք՝ իբրեւ բնակարան ավագաշուք տոհմի»

Տաթեւը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Հիմնադրվել է վաղ միջնադարում (4-րդ դար): Դեռեւս Գահնամակում է հիշատակված «Տաթեւյանք» անձնանունը: Հնում մեծամասամբ մտել է Ծղուկ, երբեմն Բղեն գավառների մեջ:

Գտնվում է Որոտան գետի աջ կողմում՝ բարձրադիր սարահարթի վրա: Ութերորդ դարավերջից Սյունիքի եպիսկոպոսության աթոռանիստն էր եւ երկրամասի աչքի ընկնող բնակավայրերից մեկը, որը գրավոր աղբյուրներում երբեմն նույնիսկ քաղաք է անվանվել:



Մատենագիտության մեջ Տաթեւ գյուղն անվանվել է նաեւ Ստատեւ, Տատեւ, Տատիվ...

Տաթեւ գյուղի եւ վանքի մոտով է հոսում Տաթեւի գետը (Տաթեւ, Տաթեւի ջուր, Տաթեւջուր, Չղրվանի գետ, Գինեկան գետ...): Սկիզբ է առնում Բարգուշատի լեռնաշղթայի փեշերից, Տանձատափ գյուղից ներքեւ միանում Որոտանին: Հոսում է զառիվեր լանջերով ու խոր ձորերով, երկարությունը՝ 13 կմ, ավազանը տեղ-տեղ անտառապատ է:

«Село Татев» աշխատության հեղինակ Ն. Գրիգորովի կարծիքով (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 1892)՝ Տաթեւ գյուղն իր անվանումը ստացել է համանուն վանքի անվանումից (այդ մասին՝ Տաթեւի վանքին նվիրված մեր հրապարակման մեջ), որը վիճելի է:

Դավիթ-բեկի ծննդավայրի վերաբերյալ

Տաթեւի Սուրբ Մինաս եկեղեցին



Գյուղ Տաթեւ

վարկածներից մեկն էլ առնչվում է Տաթեւ գյուղին: Տաթեւացիները մինչեւ հիմա էլ համոզված են, որ Դավիթ-բեկն իրենց գյուղի զավակ է: Այդ նկատառումով է, որ ծագումով տաթեւացի քանդակագործ Արամայիս Առաքելյանը պատրաստել է Դավիթ-բեկի արձանը եւ տեղադրել գյուղի կենտրոնում:

Նույն վարպետի ձեռամբ պատրաստվել եւ Դավիթ-բեկի արձանի հարեւանությամբ տեղադրվել է Կոնստանտին Օրբելյան մեծ երգահանի կիսանդրին. ի դեպ, վերջինս նույնպես Տաթեւի զավակ է:

Տաթեւ գյուղից է Խորհրդային Միության հերոս Սուրեն Առաքելյանը, ում հուշակոթողը գյուղի միջնակարգ դպրոցի բակում է:

Տաթեւը՝ երեք դար շարունակ մահալի կենտրոն

Մահալը (գավառը) կազմավորվել է Պարսկաստանի տիրապետության շրջանում եւ պահպանվել 16-րդ դարից մինչեւ 19-րդ դարասկիզբ: Մահալի կենտրոնը Տաթեւ գյուղն էր:

Ըստ Ստեփան Լիսիցյանի՝ 1805 թ. մահալի մինբաշի մելիքը Պողոսն էր՝ Օրբելյանների տոհմից:

Մահալի սահմանների մեջ էր գրեթե ամբողջ Գորիսի (երբեմնի) վարչական շրջանը: Ամբողջապես հայաբնակ մահալ էր. այդտեղի 698 ծխից, որոնք տեղավորված էին 13 գյուղում, միայն 25-ն էին թուրք:

Մահալում էին գտնվում նաեւ թուրք բնակիչներ-քոչվորներ, ովքեր բնակվում էին ձմեռանոցներում:

1841 թ. (սենատոր Հանի մշակած օրենքի համաձայն) ստեղծվեց Զանգեզուրի մահալը՝ Գորիս կենտրոնով: Տաթեւի մահալի արեւելյան հատվածը մտավ Զանգեզուրի մահալի մեջ:

Դրանով, կարելի է ասել, ավարտվեց Տաթեւի մահալի երեք հարյուր տարվա գոյությունը:

Տաթեւը վերջին գյուղն էր, որտեղ Օրբելյան հռչակավոր տոհմը պահպանում էր իր իշխանությունը: Օրբելյան տան վերջին ներկայացուցիչը խուդաբախշի բեկն էր (ծնվել է 1819 թ.): 1931 թ. նա (ըստ Ստեփան Լիսիցյանի) 112 տարեկան էր եւ մերձիմահ վիճակի մեջ էր: Խուդաբախշին Մելիք Մանուչարի որդին էր: Մելիք Մանուչարն էլ հաջորդել

Տաթեւի Սուրբ Մինաս եկեղեցին

էր իր հայր Մելիք Օսեպին, ում իշխանությունն անցել էր իր հայր Մուսայից՝ անժառանգ մահացած Մելիք Պողոսի եղբորից: Խուդաբախշի բեկը պատմել է, թե Մելիք Մանուչարը գրելիս է եղել իր ժամանակի Տաթեւի անցուդարձը եւ պահում էր իր մոտ Դավիթ-բեկի մասին մի ձեռագիր պատմություն, որ Խուդաբախշի բեկի մոտից տարել են խուզարկության արդյունքում:

Թե ինչպես Դավիթ-բեկը գլխատեց Տաթեւի ուրացող մելիք Դավիթին, ով դավանափոխ լինելուց հետո վերցրել էր Մելիք-Բաղր անունը

Դավիթ-բեկի ծննդավայր լինելու պատիվը վիճարկում են Սյունիքի մի քանի բնակավայրեր՝ Շինուհայր, Բեխ եւ Տաթեւ:

Հատկապես Ռաֆֆին է գտնում, որ Դավիթ-բեկը եղել է տաթեւացի, որ նրա հորը սպանել է տվել Տաթեւի Դավիթ-ուրացող մելիքը: Ռաֆֆին գրում է. *«... Շուտով կտեսներ նա Տաթեւի ավանը: Գուցե դեռեւս շեն էր մնացել իր հայրենական խրճիթը, որի մեջ անցուցել էր իր մանկության անհոգ, պայծառ օրերը»:*

Ստեփան Լիսիցյանը եւս տեղեկություններ է հաղորդում առ այն, թե Զորավարն իր մանկությունը անց է կացրել Տաթեւում:

Ռաֆֆուն Դավիթ-բեկի մասին տեղեկություններ է հաղորդել Կէվերք բեկը, որին ժողովուրդն ասում էր Կէվ ամի: «Խալիֆա» մականունով Կէվ ամին սովորել է Տաթեւի վանքում: Ենթադրվում է, որ այդտեղ է սովորել նաեւ Դավիթ-բեկը:

Ինչեւէ, Սյունիք հասնելով՝ Դավիթ-բեկն առաջինը խորհրդակցում է Տաթեւի հոգեւոր առաջնորդի հետ՝ հակառակորդին համատեղ ուժերով դիմակայելու համար: Սակայն Տաթեւի հետ ուժերը համախմբելուն խանգարում է Տաթեւի Մելիք-Բաղրը, ով իր որդիների հետ ընդունել էր մահմեդականություն:

Դավիթ-բեկը շատ արագ ընկճեց այդ դիմադրությունը՝ գլխատելով ուրացող Մելիք-Բաղրին: Ի պատասխան Դավիթ-բեկի որոշման՝ գլխատելու ուրացող մելիքին, վանքում հավաքվածները բացականչեցին՝ *«Լույսը Լուսավորչի հավատին, / Վայ ուրացող հային...»:*

Ճանապարհ դեպի Տաթեւ. «Տաթեւի թեւեր» ճոպանուղու Հալիձորի կանգառ

Տաթեւ տանող ամենակարճ, նաեւ գեղատեսիլ ու տպավորիչ ճանապարհը Տաթեւի ճոպանուղին է: Ճոպանուղին կրում է «Տաթեւի թեւեր» անունը, այն 5,7 կմ ձգվում է Որոտան գետի խոր կիրճի վրայով՝ կապելով Տաթեւ եւ Հալիձոր գյուղերի մոտակայքում տեղադրված երկու կայանը: Յուրաքանչյուր խցիկ կարող է 25 ուղեւոր տեղափոխել: Ճոպանուղու ամենաբարձր արագությունը 37 կմ/ժ է, ուղեւորությունը տեւում է մոտ 11 րոպե, ամենաբարձր կետը՝ 320 մ:

Տաթեւ-Հալիձոր ճոպանուղին գործարկվեց 2010 թ. հոկտեմբերի 16-ին: Ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Ն. Ս. Օ. Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Ճոպանուղու կառուցումը տեւեց 11 ամիս, կառուցողը շվեյցարաավստրիական «Garaventa Doppelmayer» ընկերությունն է, շինարարության արժեքը՝ 13 մլն եվրո:

Երկրորդ կանգառ՝ Խրիմյան Հայրիկի հուշայունը

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ավանեցին (Խրիմյան Հայրիկ) Գորիսում առաջին անգամ եղել է 1898 թ. սեպտեմբերի 3-ին, երբ վերադառնում էր Արցախից: Հաջորդ անգամ

Խրիմյան Հայրիկի հուշայունը

Սատանի կամրջից Տաթեւ տանող ճանապարհը (հատված)

Գորիս այցելեց 1903-ին...

Մեր ստեղծագործական խումբը Գորիսից Տաթեւ գնալիս (Շինուհայրով, ապա Հալիձորով) կանգ առավ Խրիմյան Հայրիկի հուշասյան մոտ, որ գտնվում է Հալիձորի անտառում:

Ըստ «Գորիսի հանրագիտարանի»՝ *«Գորշ, բազալտի, ավելի քան 2 մ բարձրությամբ հուշաքար է: Գավազանի տեսքով է, վերին հատվածում արձանագրություն է եւ տարեթիվ՝ 1903: Կառուցվել է այդ նույն թվականի աշնանը՝ Խրիմյան Հայրիկի Տաթեւ ժամանելու կապակցությամբ, այն վայրում, որտեղ շրջակա գյուղերի բնակիչները Հայոց կաթողիկոսին դիմավորել են աղուհացով:*

Հուշաքարին գրված է. «Հալիձորցի: Խաչս յիշատակ Հայոց Հայրիկ SS կաթողիկոսի 1903 թ. Խրիմյան Հայրիկի, ՍԲ Տաթեւ: Աստուած ողորմած լինի»:

Խրիմյան Հայրիկին այդ վայրում դիմավորելը գլխավորել եւ ապա հուշաքար է կանգնեցրել Շինուհայրի Տեր Ստեփան քահանան:

Երրորդ կանգառ՝ Ցաքուտի եկեղեցին

Գտնվում է Հալիձոր-Տաթեւ ճանապարհի վրա: Այժմ՝ ավերակ: Շրջակայքում կան գերեզմանաքարեր, պարսպի հետքեր:

Ահա, թե ինչ է ասում Ստեփանոս պատմիչն այդ մասին, որի հեղինակը Տեր-Հովհաննես մեծ հայրապետին հաջորդած (ընդհանուր 918 թվականին) Հակոբ 1-ինն էր՝ Սյունիքի եպիսկոպոսը. «Սա, աներեւութաբար բանն աստծուց զորություն ստանալով, Սյունյաց իշխան Վասակի որդի իշխան Փիլիպեից գնում է Ձագեձորի Վարարակն կոչված ջուրը տասներկու հազար դրամով եւ մեկ փայլուն ջավահիրով, որի արժեքն ու որպիսությունը շատերը չգիտեին: Շատ չարչարանքով ու մեծամեծ ծախսերով ջուրը բերել են Ձագեձորի լեռներից եւ հասցրել մինչեւ ցաքուտ, որը գտնվում է գետի այն կողմում, վանքի դիմաց: Այնուհետեւ քարքարոտ ու փշալից այդ ամբողջ վայրը դարձրեց վարդաստան եւ ծառաստան: Տնկեց բազմաթիվ այգիներ, ազնիվ տեսակի խաղողի որթեր, զանազան պտղաբեր ծառեր՝ ձիթենիներ, թզենիներ, նռնենիներ, բոլոր մրգատու ծառերով զարմանալի դրախտ դարձրեց. խիստ ընդարձակ ամբողջ վայրը զարդարեց թանձրախիտ ծառերով ու գեղեցկաձյուղ որթատունկերով՝ միաբանության վայելքի եւ բոլոր կարոտյալների ու աղքատների կարիքների համար: Եվ ապա այդտեղ տեսնելով մի գեղեցիկ բլուր՝ նրա գլուխը հարթել տվեց, պարսպապատեց, ներսի կողմը ծառայեցրեց իբրեւ հաճելի դիտանոց [քանի որ] նա նայում էր ամբողջ այգեստանի վրա: Նույն տեղում շինեց գմբեթահարկ մի խորան՝ շատ հրաշալի կառուցվածքով. պատերն ու առաստաղը նկարիչներին զարդարել տվեց զանազան երանգներով, նկարել տվեց քրիստոնեական բոլոր պատկեր-

Ցաքուտի եկեղեցին

Կամուրջ Գինեկան գետի վրա (1672 թ.)

Սատանի կամրջի մերձակայքում կառուցված առողջարանը

Սատանի կամուրջ

ները, առաքյալներին ու հայրապետներին. ամբողջ եկեղեցու շուրջբոլորն ստեղծեց սրահակներ ու գավիթներ: Եվ ապա դրեց իր հիշատակի արձանագրությունը, որն այսպիսին է.

«Ես՝ Հակոբս, աստծու շնորհիվ Սյունյաց եպիսկոպոսս, գնեցի Վարարակն ջուրը Սյունյաց աստվածապահ տեր Փիլիպեից տասներկու հազար դրամով եւ մեկ պատվական գոհարով. բազում ծախսերով ու մեծամեծ չարչարանքներով, վերին օգնությամբ ջուրը բերեցի Ձագեձորի լեռնից եւ հասցրի վարդաստանս, տնկեցի ազնիվ տեսակի խաղողի որթեր, հիմնեցի վայելուչ այգիներ, բազմածաղիկ ու պտղալից պարտեզներ՝ ի վայելումն այս սուրբ աթոռում հաստատվող հայրապետների, սուրբ միաբանության եւ բոլոր քրիստոնյա հավատացյալների: Եվ այդ աստված բոլորին թող վայելում տա: Բոլորին աղերսում եմ, որ իրենց սրբամատույց աղոթքների մեջ անմոռաց հիշման արժանացնեն իմ տառապյալ հոգին: Այս ջրի հարցում հաշիվ չունեն ոչ՛ նորիքցիները, ո՛չ խոտանանցիները, ո՛չ շնհերցիները կամ հալիքցիները, ո՛չ էլ որեւէ այլ մարդ: Չի կարելի ջուրը կտրել արտի կամ մարգի համար, պարտեզի ջուր տալ: Բացառություն է կազմում [միայն] ջրավազանից մարդու կամ անասունի ջուրը խմելը: Իսկ եթե մեկը հանդգնի եւ այս ջուրը կտրի, նզովված լինի աստծուց, սուրբ նշանից, Նիկիայում հավաքված երեք հարյուր տասնութ հայրապետներից, բոլոր սրբերի ու մեր կողմից. նրա բաժինն էլ ուրացողների ու կախարդների հետ լինի Քրիստոսի ահեղ դատաստանի օրը, սատանայի ու նրա հրեշտակների հետ անշեջ կրակի տանջանքների ճարակ լինի, եւ նրանց համար [այդ կրակը] չհանգչի ու որդն էլ չվերջանա: Այս հիշատակությունը գրվեց երեք հարյուր ութսունմեկ թվականին, իմ ձեռքով ու կնքվեց իմ սեփական մա-

Սատանի կամուրջ

տանիով, աստծու կամքով»:

Սա գտանք գրված իր ձեռքով մագաղաթի վրա, սրա հետ էլ մյուս՝ վաճառման եւ գնի վավերագիրը, գրված հենց Փիլիպե իշխանի ձեռքով, որը մեծ Փիլիպեի որդի՝ Իշխանիկ կոչված Վասակի որդին էր: Փաստաթուղթը այսպիսին էր.

«Աստծու կամքով ես՝ Սյունյաց տեր իշխան Վասակի որդի Փիլիպես, իմ կամավորությամբ Վարարակն ջուրը վաճառեցի սուրբ Գրիգոր եկեղեցուն, որը շինել էր իմ պապ իշխան Փիլիպեն Տաթեւի սուրբ եպիսկոպոսարանում: Գնեց Սյունյաց եպիսկոպոս Հակոբը տասներկու հազար դրամով եւ մեկ մեծագին գոհարով, ամբողջ գինն էլ լրիվ վճարեց: Ես ստացել եմ դրամն ու մեկ գոհար Սյունյաց Հակոբ եպիսկոպոսից: Եվ այսուհետեւ ես, իմ զավակներն ու մյուս հարազատները հավիտենապես հրաժարվում ենք այդ ջրի սեփականության իրավունքից: Նորիքցիները կամ խոտանանցիները կամ շնհերցիներն ու հալիքցիները այդ ջրի մեջ որեւէ չափով հաշիվ չունեն, չեն կարող ո՛չ արտի, ո՛չ էլ մարգի համար կտրել. ջրավազանից [միայն] մարդ ու անասուն կարող են ջուր խմել: Եվ եթե ես կամ իմ զավակները այս պայմանը դրժենք, կա՛մ մտածենք այդ ջրից կտրել արտ թե մարգ [ջրելու] կամ էլ ուրիշ նպատակի համար, աստծուց ու այդ սուրբ նշանից նզովված լինենք եւ Տեր-Հակոբի վերոգրյալ անեծքը հավիտենաբար ժառանգենք: Աստված շնորհավոր անի սուրբ վանքին եւ սուրբ ու աստվածակիր հայրապետներին»»

Դիտակետ. գտնվում է Հալիձոր-Տաթեւ ճանապարհից դեպի ձախ՝ (դեպի հարավ)՝ մոտ 100 մետր հեռավորության վրա՝ լեռան պռնկին

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի Տաթեւ կատարած ուխտագնացությանը նվիրված հուշաքարը

(Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երեւան 1986, էջ 226-227):

Չորրորդ կանգառ՝ Սատանի կամուրջ

Տրավերտիններից կազմված բնական այդ կամուրջը Որոտան գետի վրա է՝ Տաթեւ գյուղից արեւելք, երկարությունը մոտ 30 մ է, լայնությունը՝ 50-60 մ:

Տաթեւի տակ Որոտան (Բազարչայ) գետը մտնում է ուղղաձիգ ժայռերով սեղմված կիրճ, որի աջ եւ ձախ կողմերից պոկ եկած քարաբեկորներն իրար գալով՝ կազմել են բնական կամուրջ՝ Սատանի կամուրջ: Աջ ափին բխող հանքային ջրերն իրենց աղերով միաձուլել են քարերի այդ կամարը եւ կամրջի տակ կախ տվել յուրահատուկ շթաքարեր՝ ստալակտիտներ:

Կամրջի մոտ եղած տաք ջուրը դարեր ի վեր օգտագործվել է ժողովրդական բժշկության մեջ:

1982-ին գործարկվեց Սատանի կամրջի մերձակայքում կառուցված առողջարանը (կառուցել է ՇՄՇ-21-ը, աշխղեկ՝ Շուրիկ Մարտիրոսյան): Մի քանի տարի արդյունավետ աշխատելուց հետո առողջարանը դադարել է գործել: 2009-10 թթ. մասնավորեցվել է, հիմա այնտեղ «Տաթեւ-1» հյուրանոցն է:

Ներկայումս Սատանի կամրջով է անցնում Գորիս-Տաթեւ ավտոճանապարհը:

Սատանի կամուրջը դարեր շարունակ մաս է կազմել հարավից եկող մեծ տարանցիկ ճանապարհի: Կամրջով ճանապարհը միանում էր Եռաբլրով անցնող Աղի ճանապարհի վրա կառուցված քարվանսարային (Հարժիսի քարվանսարա):

14-րդ դարում Որոտան գետի վրա կամուրջ կառուցելուց հետո (Հարժիս գյուղի Ալան թագավոր կոչված վայրում) հարավից եկող ճանապարհն անցել է նաեւ նորաշեն այդ կամրջով:

Հինգերորդ կանգառ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի Տաթեւ կատարած ուխտագնացությանը նվիրված հուշաքարը

1989 թ. ապրիլի 21-ից 29-ը Ամենայն հայոց կաթողիկոս

Վազգեն Ա-ն եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն ուխտագնացություն կատարեցին Տաթեւի վանք: Տաթեւ այցելեցին ապրիլի 27-ին:

Հալիձորի անտառում կանգ առան Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու (Խրիմյան Հայրիկ) 1903 թվականին Տաթեւի վանք այցելելու կապակցությամբ կանգնեցված հուշասյան մոտ եւ հարգանքի տուրք մատուցեցին նրա հիշատակին:

Վազգեն Ա-ն եւ Գարեգին Բ-ն ներկաներին պատմեցին 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին Խրիմյան Հայրիկի ծավալած պետական-քաղաքական, ինչպես եւ հոգեւոր-մանկավարժական, գիտական գործունեության մասին:

Ըստ Սուրեն Վարդանյանի, ով այդ ժամանակ կոմունիստական կուսակցության Գորիսի շրջկոմի 2-րդ քարտուղարն էր, շրջկոմի 1-ին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը հենց այդտեղ մտադրություն հայտնեց՝ կանգնեցնելու եւս մեկ հուշաքար՝ նվիրված հայոց երկու կաթողիկոսի տվյալ ուխտագնացությանը:

Ասում են՝ Վազգեն Ա կաթողիկոսը որեւէ կերպ չի արձագանքել այդ առաջարկությանը, ինչն ընկալվել է իբրեւ անհամաձայնություն Հայրիկի քարի մոտ նոր հուշասյուն կանգնեցնելուն: Բայց կաթողիկոսը, կարծեք, դեմ չի եղել իրենց այցը հուշաքարով հավերժացնելու գաղափարին: Ուստի եւ հետագայում՝ 1989 թ. սեպտեմբերի 26-ին, Ռոբերտ Ալեքսանյանի նախաձեռնությամբ, հուշաքար է կանգնեցվել այդ վայրից փոքր-ինչ հեռու՝ դիտակետի մոտակայքում, ճանապարհի վրա:

Հուշաքարի նախագծողը լուսահոգի Մեսրոպ Հարությունյանն էր, ով այդ ժամանակ Գորիսի շրջանի ճարտարապետն էր: Քանդակագործի անունը չկարողացանք ճշտել: Հուշաքարը, կարելի է ասել, նախեւառաջ վավերագիր է, քան խաչքար կամ գեղարվեստական գործ:

Հուշաքարի վրա գրված է՝ «Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԼԸ ՅԱՒՈՒՐՆ 27-Ի ԱՄՍԵԱՆՆ ԱՊՐԻԼԻ Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՂԵԻ Ի ՎԱՆՍ ՏԱԹԵՒԱՅ»:

Վեցերորդ կանգառ՝ դիտակետ

Գտնվում է Հալիձոր-Տաթեւ ճանապարհից դեպի ձախ՝ (դեպի հարավ)՝ մոտ 100 մետր հեռավորության վրա՝ լեռան պռնկին (Վազգեն 1-ին կաթողիկոսի եւ Գարեգին Բ կաթողիկոսի ուխտագնացությանը նվիրված հուշաքարից անմիջապես ձախ): Կառուցվել է 1982-ին կամ 1983-ին:

Նախագծի հեղինակը Վարուժան անունով ճարտարապետն է, ում ազգանունը չկարողացանք ճշտել: Շինարարը լուսահոգի Կոլյա Միրումյանն էր:

Կառույցը ռոտոնդա է (բոլորակ հատակագծով, գմբեթով պսակված, կենտրոնակազմ): Կառույցը հինգ սյունի վրա է, թեեւ սկզբնապես նախատեսված է եղել վեց սյուն: Ի սկզբանե զանգ է կախված եղել ռոտոնդայում: Դիտակետը Հարսնաձորի դիմաց է: Այդտեղից լավագույնս է երեւում Տաթեւի վանքը:

Տեղանքն ընտրվել է կոմունիստական կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղար Արամ Հարությունյանի եւ ճանաչված շինարար Խասան Հարությունյանի կողմից, ինչի մասին վկայում է վերջինս:

Չորրորդ կանգառ՝ Տաթեւի հարանց անապատ

Գտնվում է գյուղից ներքեւ՝ Որոտանի եւ Տաթեւի գետակի միախառնման եռանկյունու վրա: Տաթեւի հարանց անապատի մասին («Ուխտագնացություն Սյունիք» ծրագրի շրջանակում) առանձին հրապարակում ունենք, ուստի եւ ասվածը կրկնելու անհրաժեշտություն չենք տեսնում:

Կանգառ գյուղի շրջակայքում՝ Ցուրաբերդ

Գտնվում է Տաթեւի մոտակայքում՝ Տաթեւ-Սվարանց ճանապարհից հարավ: 900-ական թվականների սկզբին Սյունյաց գահերեց իշխան Աշոտը Տաթեւի եկեղեցուն է նվիրում Ցուրա գետն ու վանքը՝ Ցուր բերդով:

Սակայն, ինչպես Ստեփանոս պատմիչն է վկայում, «Թեեւ այս բոլոր նվիրատվությունները կատարեցին, սակայն Ցուրաբերդի բնակիչներին չկարողացան տեղահան անել, քանի որ նրանք հին տեղաբնիկ սեփականտերեր էին» (Սյունիքի պատմություն, Երեւան 1986,էջ 211):

Բայց պատմությունը հետագայում այնպիսի ընթացք ունեցավ, որ Ցուրաբերդն իր վերջո ավերվեց ու նրա վերաշինումն արգելող անեծք եղավ:

Ահա, թե ինչ է պատմում Ստեփանոս Օրբելյանը. «Սյունյաց գահերեց իշխան Աշոտի որդի Սմբատի իշխանության եւ սուրբ եկեղեցին կառուցող Տեր-Հովհաննեսի եպիսկոպոսության ժամանակ Տաթեւի սուրբ միաբանությանը մեծամեծ վշտեր պատճառեցին Ցուրաբերդի բնակիչները, լիրբ ու ավազակ մարդիկ էին: Մի օր էլ գիշերվա մի անսպասելի ժամի գալով՝ սկսեցին կողոպտել եկեղեցին, արհեստանոցներն ու կրոնավորների բնակարանները: Որոնեցին եպիսկոպոսին, որ սպանեն, բայց չգտան: Ապա ծերերից ոմանց սրի քաշեցին, իսկ ուրիշներին փախուստի մատնեցին: Ինչ էլ որ գտան, վերցրին, գնացին Ցուրաբերդ: Տարան նաեւ մեռոնն արծաթե սափորով ու քարափից թափեցին: Իսկ երբ լուսացավ, եպիսկոպոսն [ու մնացած մյուս կրոնավորները] եկան, տեսան այդ ամբողջ վնասը, վերցրին սուրբ խաչը եւ ուրիշ սրբություններ, ահավոր անեծքներով նզովեցին բերդն ու նրա բնակիչներին: Եվ անմիջապես երկրաշարժ եղավ, քարափը ճեղքվեց երկու մասի, ու բոլոր շինությունները փլվեցին, բնակիչներից շատերն էլ անհայտ կորան: Իսկ եպիսկոպոսը չհամաձայնվեց իր տեղում բնակվել, այլ վերցնելով խաչը, ամբողջ սպասավորներով ելավ-գնաց օտար աշխարհ:

Այս մասին տեղեկացնում է փառաբանված իշխան Սմբատը, որը վեր է ելնում, ուրիշ ազատներով գնում է եպիսկոպոսի ու սուրբ խաչի հետեւից. բազում թախանձանքներով նրանց ետ է բերում իրենց տեղը՝ Տաթեւի մեծ հայրապետարանը: Իսկ Ցուրաքարի անիծյալ բնակիչներին հալածում է, պատժի ու պատուհասի ենթարկում եւ առհասարակ ջնջում ու մաքրում է մեր աշխարհից: Նրանց բնակատեղին իր սահման [ներ] ով սեփական կալվածք է հատկացնում եկեղեցին՝ ավանդելով Տեր-Հովհաննեսի միջոցով: Հրամայում է գրել ահավոր նզովագիր, կնքել ու դնել սուրբ եկեղեցում, որ ոչ ոք չհանդգնի վերաշինել այն տեղը: Եվ գրվեց փաստաթուղթը, որն այսպիսին էր. «Ես՝ Հովհաննեսս, աստծու շնորհիվ Սյունյաց եպիսկոպոսս, գրեցի որ որոշումն իմ իսկ՝ ձեռքով, Սյունյաց Սմբատ աստվածազոր իշխանի հրամանով, որովհետեւ մեզ վտանգ հասավ Ցուրաբերդ կոչված քարափի վրա բնակված չար ու անաստված ավազակներից, որոնք գիշերով հանկարծակի հարձակվեցին բազմությամբ խմբված վանականների վրա, կողոպտեցին բոլոր շենքերը, ծերերից ոմանց էլ սպանեցին: Իսկ մենք,

Տամալեկքի Սուրբ Աստվածածին եկեղեցին

այդպիսի աղետը տեսնելով, սուրբ խաչն առած, հալածական փախանք ուրիշ աշխարհ. եւ մեր բոլոր կրոնավորները ցիրուցան եղան: Ապա աստվածապահ իշխան Սմբատը, այդ մասին տեղեկանալով, եկավ, մեզ վերադարձրեց այստեղ: Քաջասիրտ ու մեծահավատ լինելով՝ առյուծի նման մռնչաց այն չարերի վրա ու բոլորին ցրիվ տվեց: Մեծ իմաստնությամբ գիտեր, որ այն քարափն անօգուտ է, որեւէ մեկին շահավետ չէ, չի էլ նեղում ոչ ոքի՝ ո՛չ բաղացիներին եւ ո՛չ ուրիշ տեղացիներին, այլ միայն տագնապով վշտացնում է մեր եկեղեցուն ու նրա իշխանությանը, որոնք իր եւ իր նախնիների բազմառատ ու անչափելի միջոցներով ու հրաշագործ աշխատանքով ծաղկեցրել էր ու ցանկալիորեն կարգավորել՝ ազատեց եւ հանգիստ վիճակի մեջ դրեց սուրբ նշանն ու այս վանքը, մեզ էլ նեղությունից անդորրության բերեց, այն տեղն էլ հանձնեց մեր ձեռքը: Դրա համար տեր աստված նրան թող հատուցի մարմնական վայելում՝ երկար ժամանակով, խաղաղ իշխումով, զավակներով ու տոհմով, այլեւ արժանանում հավիտենական կյանքին ու արքայությանը՝ սուրբ թագավորների հետ:

Դարձյալ՝ Սյունյաց նույն Սմբատ իշխանի հրամանով իմ ձեռքով գրեցի հավիտենական կտակ, կնքեցի սեփական մատանիովս, դրեցի այս եկեղեցում, որ հետագայում ոչ ոք չհանդգնի նույն ոճիրը գործել: Արդ՝ եթե մեկը այս մեր հրամանին հակառակվի եւ Ցուրը այս սուրբ եկեղեցուց վերցնի կամ ցանկանա այդ սուտ քարափը բերդ համարել, մտածի [վերա] շինել եւ եկեղեցու հանդեպ կրկին հալածանք հարուցել, այնպիսին նզովվի ամենակալ աստծուց, բոլոր սրբերից ու մեզանից եւ չարժանանա ողորմության, այլեւ նրա վրա ցավագին անեծքներ գան, կոտորվեն նրա որդիները, նրա անունը ջնջվի ժողովրդից, դրանից հետո ինքն անհետանա պատմությունից, սատանայի հետ անշեջ կրակից բաժին ստանա: Իսկ ժամանակի [աշխարհական]իշխանը եթե հաստատ մնա այս պայմանին, ինչպես աստվածասեր այս Սմբատ իշխանը, նրա օրհնությունն ու վարձատրությունը կստանա: Բայց եթե մոռանա եւ անուշադրության մատնի, իրենն էլ չվայելի ու ենթարկվի այս գրության մեջ նշված բոլոր նզովքներին: Սա եղավ հայոց երեք հարյուր վաթսունչորս թվականին:

Սակայն երկար ժամանակներից հետո, երբ հայրապետանոցը խանգարվել էր, եկեղեցու սեփականությունները՝ ցրիվ եկել, այս տեղը ոմանք վերցրին, վերաշինեցին եւ եկեղեցու նկատմամբ մեծամեծ հալածանքներ սկսեցին թագավոր դարձած Վասակի, Սեւադայի եւ նրանց մայր Շահանդուխտի օրոք: Վանքը կրկին ավերեցին: Տեր-Հակոբ եպիսկոպոսը, որ գնացել էր Բաղք, այնտեղից վերադառնում էր, եւ շնաբարոնները, հսկելով Ցուրի փոսով անցնող նրա ճանապարհը, հարձակվեցին վրան ու սպանեցին, որը թաղված կա՝ հիշեցնելով այդ չարագործությունը: Եվ մինչ այսօր այնտեղ բորոտների, քոսոտների ու այլ հիվանդների բժշկություն է կատարվում: Նրան փոխարինում է Տեր-Գրիգորը, որը Վասակ թագավորից խնդրում է այն տեղը [Ցուրը]՝ նրանց ցույց տալով Տեր-Հովհաննեսի ձեռքով գրված առաջին նզովագիրը: Եվ Վասակը նրան տրամադրում է տեղը՝ պատվեր տալով քարուքանդ անել, հիմնահատակ կործանել ու իսպառ ջնջել բերդի հետքը: Նա հենց այդպես էլ անում է ու երկրորդ կտակ է գրում այսպես. «Աստծու շնորհիվ աստվածասեր եւ բարեպաշտ Վասակ թագավորը, իշխանաց իշխան Սեւադան ու նրանց մայր Շահանդուխտը, ըստ իրենց քաջահավատ հույսի ու երկյուղաց բարքի, կամեցան հաստատել այս սուրբ եկեղեցին կառուցող երանելի Տեր-Հովհաննեսի վերոգրյալ վճռագիրը եւ սաստիկ նզովքներով փակել ներկա ու հանդերձյալ կյանքը Ցուրաքարը [վերա] շինողի համար: Անհավատներն ու աներկյուղները այն անտեսանելով՝

Խաչքար Տամալեկքի Սուրբ Աստվածածին եկեղեցու արեւելյան պատի տակ

Խաչքար Գյունեի հանդի եկեղեցում, որ Ցուրավանքն է կամ Ցրվանցը կամ Ձորո վանքը

Եվստաթե առաքյալի մատուռը

ձեռնարկել ու վերաշինել էին բերդը՝ ժամանակավոր օգտի համար, բայց ոչինչ չշահելով, անօրինության պատճառով որդնալից կերպով սատկոտեցին, պակասեցին, կորան: Իսկ մեր ժամանակ հրամայվեց ավերել, հիմնահատակ անել: Ով այլեւս հանդգնի շինել, նզովվի Հորից, Որդուց եւ Սուրբ հոգուց. նրա որդիները մուրացիկ դառնան, թափառեն ու իրենց [կյանքի] օրերը չամբողջացնեն: Իսկ եթե մահմեդական ավագություն փոխարինի ու ջանա Ցուրը հափշտակել կամ բերդաքարափը շինել, աստծուց անիծվի եւ իր Մահմեդից դատապարտվի. նրա համար հալալը հարամ դառնա եւ իր կորանից ամոթահար ու սեւերես լինի: Այս կտակը գրվեց իմ՝ Տեր-Գրիգորիսի, ձեռքով, որը կնքեցի սեփական մատանիովս, աստծու կամքով» (Սյունիքի պատմություն, Երեւան 1986, էջ 222-223):

Եւս մեկ կանգառ Տաթեւի մերձակայքում՝ Տամալեկքի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Գյուղը հիշատակվում է 9-10-րդ դարերից:

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկի թարգմանության, ներածության եւ ծանոթագրությունների հեղինակ Ա. Աբրահամյանի կարծիքով՝ «Տամալեկք (Տամալեքս, Տամալեսկ) գյուղը գտնվել է Տաթեւի վանքի մոտ: Շրջակայքի բնակիչները նրա ավերակներն այժմ ցույց են տալիս վանքի հարավ-արեւելյան կողմից ոչ շատ հեռու, գետի մյուս կողմում՝ կոչելով Տեմբալասկ»:

Սերո Խանզադյանն է պատմում. «Քրիստոսից 1300 տարի առաջ Եփրատի ափին ունեինք Տամալեկ բերդաքաղաք: Այս քաղաքի անկումից հետո նրա բնակիչների մի մասը եկել է Սյունիք եւ բնակավայր դրել Տաթեւ գյուղի մոտ» (Հայրենապատում, գիրք Ա, էջ 252):

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ 900-ական թվականներին, երբ ճշտվում էին Տաթեւի վանքի սահմանները, «...վանքի մոտ, նրա դիմաց գտնվող Տամալեկքը չկարողացան սեփականել» (Սյունիքի պատմություն, Երեւան 1986, էջ 211):

Պատմիչը շարունակել է անդրադառնալ Տամալեկքի խնդրին:

Ահա՝ «Վանքի դիմաց մի ապստամբանոց տեղ կար, որ Տամալեկք էին կոչում: [Նրա բնակիչները] շատ ու մեծամեծ նեղություններ էին պատճառել վանքին: Տեր-Հովհաննեսը թեեւ բազում անգամ ջանացել էր, բայց չէր կարողացել հալածել նրանց ու տեղը սեփականել: Ապա աստվածապատիվ եւ հոգեւոր տեր Հակոբի ժամանակներում մեծ տիկին Սոփիան՝ Սմբատի կինը, եկավ սուրբ խաչին երկրպագելու: Նա, լսելով այդ բնակիչներից վանքի միաբանների ստացած դառնությունների ու վշտերի մասին, դրա համար ջանք գործադրեց ու հազիվհազ կարողացավ այն տեղը ձեռք գցել՝ գնելով հազար դահեկանով, որը եւ հանձնեց Տեր-Հակոբին: Նաեւ նրանցից վերցրեց խաչը: Դրանից հետո միաբանությունն ապահով դարձավ: Տիկինը եպիսկոպոսին առաջարկեց այնտեղ շինել եկեղեցի ու բնակեցնել ճգնակյաց կրոնավորների, անեծքի գրություն գրել, որ այնտեղ այլեւս ոչ մի աշխարհական մարդու չբնակեցնեն: Եվ դա փութաջանորեն կատարում է երջանիկ եպիսկոպոսը, որը եւ գրում է վճռի այսպիսի հիշատակագրություն. «Սա իմ՝ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբիս ձեռքով գրածն է: Բազում ջանքերով ու չարչարանքներով ազատեցի Տամալեկքը, որը շատ նեղություն էր պատճառել վանքիս, որի համար Տեր-Հովհաննեսը ջանացել, բայց չէր կարողացել ազատել: Արդ հնազանդվելով մեր հրամաններին՝ Սմբատ իշխանն ու տիկին Սոփիան գնեցին հազար դահեկանով ու տվեցին սուրբ նշանիս եւ հոգով ու մարմնով իրենք էլ մեզ հանձնվեցին: Մենք տեղը վերցրինք, եկեղեցի կառուցեցինք եւ մենարան հիմնեցիք: Արդ՝ այս տեղը, որ մեր մեծ ջանքերով ենք ազատել, նրա սեփականատերերին դուրս հանել ու մենաստան հիմնել, եթե մեկը մտածի սեփականատերերին վերադարձնել կամ ամուսնացած տղամարդու այստեղ բնակեցնել, կամ մի ծառի ու թփի տեր դարձնել, նզովվա՛ծ լինի միասնական սուրբ երրորդությունից, սուրբ հրեշտակներից, երեք հարյուր տասնութ հայրապետներից, սուրբ նշանիցս ու մեզանից՝ մեռած թե կենդանի ժամանակ: Նրա բաժինը Հուդայի հետ լինի, չարաչար ցավերով իր օրերը չամբողջացնի, գեհենի անշեջ հրի ճարակ լինի եւ մեր Քրիստոս Աստծուց ողորմություն չստանա» (նշված գրքի էջ 237):

Հիմա այդ գյուղի տեղում պահպանվել է վերոնշյալ եկեղեցու հյուսիսային պատը եւ արեւելյան պատի մի մասը: Այդտեղ պահպանվել է նաեւ հրաշագեղ մի խաչքար:

2020 թ. մարտի 6-ին եկեղեցու ավերակներից դեպի հարավ-արեւելք մեր ստեղծագործական խումբը տե-

սավ Տամալեկք գյուղի ավերակների՝ դեռեւս նշմարվող հետքերը (խաչքարեր, տապանաքարեր): Իսկ Տամալեկք գնացինք Գինեկան գետի վրա 1672 թ. կառուցված հին կամրջով (որ դեռ կանգուն է)՝ թեքվելով դեպի հարավ-արեւելք (մեզ ուղեկցում էր Տաթեւ գյուղից Գուժ Մինասյան երիտասարդը):

Ամենայն հավանականությամբ՝ Տամալեկքի եկեղեցին կոչվել է սուրբ Աստվածածին, որի արեւելյան պատի մոտ է կանգնեցված վերոնշյալ խաչքարը (երեսով՝ դեպի պատը).

Ահա՝ խաչքարի վրա եղած արձանագրությունը՝

ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ՀԱՅ.....ԵՍ ՆՎԱՍՏ ՔԱՀԱՆԱ ՀՈՎԱՆԷՍ Ի ՏՂԱՅՈՒԹԵՆԷ ՍՆԵԱԼ Ի ՍԲ ՈՒԽՏՍ Ի ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻ ՍՐԲՈՅՍ ԵՒ ՅԵՏՈ ԲՆԱԿԵՑԱ Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱԾԱԾԻՆՍ, ՈՐ ԵՒ ԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲ ԳՆԵՑԻ ԶԱԴՈՉԱՆՈՅՆ ԲԱԿԵՐՆ, ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՏԵՂԱՑՍ ՏՐ ՀԱՅՐԱՊԵՏԱ ԵՒ ՏՐ ՅՈՀԱՆԻՍԱ ԵՒ ԱՅԺՄ ՀՐԱՄԱՆԱՒ ՏՐ ՍՏԵՓԱՆՈՍԻ՝ ՆՈՒԻՐԵՑԻ ՀԻՒՐԵԱՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ԻՒՐ ԱՄԷՆ ՍԱՀՄԱՆՈՎ, ՎՍ ՏԱՌԱՊԵԱԼ ՀՈԳՈ ԻՄՈ, Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ՍՈՐԻՆ, ԱՋԱՏ ՅԱՄԷՆ ՀԱՐԿԷ. ԱՐԴ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՄ ԽԱՓԱՆՈՂ ԼԻՆԻ ՈՐՈՇԵԱԼ ԼԻՑԻ Ի ՍԲ ԱԾԱԾՆԷՍ ԵՒ ՅԻՒՐ ՄԻԱԾՆԷՆ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ:

Ըստ Սեդրակ Բարխուդարյանի՝ *«Խաչքարի ճակատի մասը ջարդված է՝ կենտրոնում եւ վերջում՝ առաջին տողի բռնած սահմանում: Թեեւ թվականը ջարդված է, բայց արձանագրության մեջ հիշատակված երեք անուններից պարզվում է, որ այն 13-րդ դարի վերջին տասնամյակում է գրված. տեր Հայրապետը Սյունյաց եպիսկոպոս էր մինչեւ 1292 թ. , սրան հաջորդեց Տեր Հովհաննեսը մինչեւ 1295 թ., իսկ վերջինիս՝ Տեր Ստեփանոս Օրբելյան պատմագիրը:*

Այս կիսավեր եկեղեցու եւ խաչքարի վայրն այժմ կոչվում է Տումբալանց:

Խաչքարը ագուցված է բնական ժայռի մեջ, 60 սմ հեռու եկեղեցու արեւելյան պատից եւ հնարավոր չեղավ լուսանկարել արձանագրությունը, որը նայում է եկեղեցու պատին»:

2020 թ. մարտի 6-ի այցելության ընթացքում մենք նկատեցինք, թեեւ հնարավոր չէր լավորակ լուսանկարում ապահովել՝ պատի եւ խաչքարի միջեւ ընկած տարածքի նեղության պատճառով»:

Աղբյուրի շենքը (1745թ.)

Գյունեի հանդի եկեղեցին, որ Ցուրավանքն է կամ Ցրվանցը կամ Ձորո վանքը

Տաթեւի տարածքում գտնվող այդ սրբավայրի մասին խոսք ենք ասել Տանձատափի պաշտամունքային վայրերին կատարած ծավալուն անդրադարձում, ուստի եւ հարկ չենք համարում ասվածը կրկնել;

Եվստաթե առաքյալի մատուռը

Տաթեւի վանքից մոտ 40-50 մ հյուսիս կա մի կիսավեր մատուռ, որի շրջակայքում գերեզմանաքարեր են:

Մատուռի մոտ՝ փոքրիկ վահանակի վրա, գրված է՝ «Եվստաթե Առաքյալի մատուռ, V դար»: Սակայն մատուռի անվանման հարցում վերապահում ունենք: Դեռեւս ապացուցված չէ՝ Եվստաթե առաքյալ եղե՞լ է, թե՞ ոչ: Ապացուցված չէ նաեւ՝ Եվստաթեն եղել է Հայաստանում, թե՞ ոչ:

Առաքել Դավրիժեցու «Պատմության» (Երեւան 1988) թարգմանության, առաջաբանի եւ ծանոթագրությունների հեղինակ Վարագ Առաքելյանը գրում է. «...Տաթեւի վանքը սկզբնապես կոչվել է Ստաթեի կամ Եվստաթեի վանք, որ հետո ժողովրդի բերանում հնչյունափոխվելով դարձել է Տաթեւի վանք:

Ալիշանը կտրականապես մերժում է այսպիսի վարկածը՝ նշելով, որ Ստաթե կամ Եվստաթե առաքյալ Հայաստանում չի եղել եւ նման բան պատմագիրներից ոչ ոք, նույնիսկ Ստեփանոս Օրբելյանը, որ այնքան մանրապատում է եւ սիրահարված իր երկրին ու սրա վանքերին եւ հատկապես Տաթեւի՝ իր առաջնորդած վանքին, նման բան չի հիշում եւ մանավանդ Տաթեւի անունն ավելի հին է , քան ավանադությունը եւ մանավանդ նախապես այդ անունը եղել է գյուղի վրա»:

Աղբյուրի շենքի մնացորդները

Շինված է 1745 թ., գտնվում է գյուղի հարավ-արեւելյան ծայրին՝ վանքի մարագի եւ ախոռի ավերակների կողքին: Այստեղ կա մի արձանագրություն՝ Եղեալ ի Վանս սուրբ Թադէի, մասունք սրբոյն Յակօբոսի, եղբոր ըստ մարմնոյ տեառն Ցի:

Հին խաչքարեր

Գյուղի տարածքում կան բազմաթիվ խաչքարեր եւ գերեզմանաքարեր, որոնցից յուրաքանչյուրին առանձին անդրադառնալը նպատակահարմար չենք գտնում:

Պետրոս անապատականի դամբարանը, որ նաեւ Պետրոսախաչ է կոչվում

Այդ մասին գրել ենք Հարժիս գյուղի եւ մերձակայքի սրբավայրերը ներկայացնելիս:

Ասվածին ավելացնենք հետեւյալը. ըստ ավանդազրույցի՝ Պետրոսը հեռացել է մարդկանցից եւ ապրել այդ լեռնակատարին: Այնտեղ էլ մահացել է: Բայց մինչ այդ նույն վայրում իր համար գերեզման է պատրաստել, որտեղ էլ հանձնվել է հողին:

Պետրոս Ճգնավորի (անապատականի) գերեզման-ուխտատեղին մեծ հեղինակություն է վայելում ոչ միայն Տաթեւում, այլեւ հարակից գյուղերում:

Սուրբ Մինաս եկեղեցին, որ կա-

ռուցել է Ներսես վարդապետը

Գյուղի կենտրոնում է գտնվում հանուն Սուրբ Մինասի կառուցված եկեղեցին: Այն շրջապատված է գերեզմաններով, որոնց մի մասն ունի տապանագրեր:

Եկեղեցին կառուցվել է Հայոց 1095 (1646) թվականին՝ Ներսես անունով վարդապետի կողմից, (հետագայում՝ Սյունյաց թեմի առաջնորդ), ինչը վկայում է եկեղեցու պատի վրա եղած արձանագրությունը (Ներսես վարդապետի մասին հիշատակումով արձանագրություն է եղել նաեւ եկեղեցու հին դռան վրա՝ դրսի կողմից, որ հիմա չկա):

Ահա պատի վրա եղած արձանագրությունը՝ *«Շնորհօք ամենակալի Աստծոյ շինեցաւ զայս եկեղեցիս Ներսես վարտապետ թվին հայոց ՌՂԵ»:*

Եկեղեցին վերակառուցվել է 1881-ին՝ Բաքվում բնակվող տաթեւացի Հովհաննես Օսիպովի կողմից: Եկեղեցին երկու դուռ ունի. հարավային դռնով ելումուտ էին անում տղամարդիկ, արեւմտյան դռնով՝ կանայք:

Եկեղեցու ներսում էլ տղամարդիկ ու կանայք կանգնում էին առանձին-առանձին:

Եկեղեցու խորաններից մեկում կար աղբյուր (կավե խողովակներով էին ջուրը հասցրել եկեղեցի), որը չի պահպանվել:

Սուրբ Մինաս եկեղեցին վերջին անգամ վերանորոգվել է 1996-97 թվականներին՝ «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության կողմից:

Ի դեպ, Ներսես վարդապետը հողին է հանձնվել Տաթեւի վանքի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու արեւմտյան գավթում. տապանաքարի վրա գրված է.

Ի յայս տապան քնարանի,
Կա հանգուցեալ նշխար մեծի
Ներսեսի Ռաբունեաց պետի
Եւ եպիսկոպոսի Սիւնեաց նահանգի.
Գոլով տեղեաւ Տաթեւացի
Եւ եկեղեցւոյ շինողի,
Եղեւ փոխեալ ի կենաց աստի
Ռ-ներրորդ թուի, յիշեցէք:

Ագռավախաչը, որին գյուղացիք Ըկռախաչ են անվանում

Տաթեւի վանքից հյուսիս-արեւմուտք, մինչեւ Տաթեւ բնակավայրի ծայրամասը տարածված վանական վարելահողերը, որ ազատ էին մնացել գյուղացիական վարելահողերից՝ տերունական վավերագրերը կազմելիս: Այդ վարելահողերի դաշտային բոլոր աշխատանքները տաթեւցիները կատարում էին անհատույց, ոչ թե որպես հաստատված պարհակ, այլ բարի գործի տեսքով՝ իբր վանքի հանդեպ կրոնական հավատարմությունից ելնելով, յուրաքանչյուր ծխից հավաքագրվում էր մեկ կամ երկու հոգի եւ համերաշխորեն լծվում էին, օրինակ, բերքահավաքի աշխատանքներին: Կրոնավորներն այդ ամենի համար հնձվորներին հյուրասիրում էին համեղ կերակուրներով, պատրաստում էին հենց դաշտում եւ որոնք հազվադեպ էին լինում գյուղացու սեղանին: Այնպես որ վանքում կատարվող այդ աշխատանքները գյուղացիների համար ինչ-որ տոնի էին վերածվում:

Տաթեւի սրանոցը

Ժողովրդի մեջ ավանդություն կար, ըստ որի՝ օրերից մի օր, երբ աշխատավորները տեղավորվեցին գետնին, մեծ կաթսայի շուրջը եւ պատրաստվում էին ճաշելու, հանկարծ բոլորի ուշադրությունը գրավեց կաթսաների վրայով սլացող ագռավը: Չնայած մարդկանց աղաղակներին եւ ագռավի ուղղությամբ նետված քարերին՝ այն համառորեն շարունակում էր պտտվել կաթսաների վրա եւ հարմար պահ գտնելով ու մարդկանց համընդհանուր զարմանքի ներքո վայրկենաբար նետվեց կաթսայի մեջ եւ եփվեց: Ոմանք մտածեցին, թե ագռավը ցանկանում էր կաթսայից մի կտոր միս հանել, մյուսներն ի հեճուկս դրա, այդ թռչունի արարքի մեջ տեսնում էին Աստծո մատը, ինչը եւ հաստատվեց իրականում: Երբ կաթսայի պարունակությունը դատարկեցին, բոլորը զարմացած էին. կաթսայի մեջ մսի հետ մեկտեղ մի հսկա օձ էր եփվում:

Այդժամ էլ որոշեցին այդ նշանավոր իրադարձության առիթով ագռավի հուշարձան կանգնեցնել, որ շատ մարդկանց փրկեց անխուսափելի մահվանից, որ շատերի կարծիքով տեղի կունենար օձի մսից: Այդ հուշարձանը մինչեւ այսօր կանգնած է Տաթեւ բնակավայրի մոտ, որ մի մարդաբոյ քարաբեկորից է սարքվել, որի վրա խաչ է քանդակված: Քարաբեկորի տակ, ըստ ավանդության, թաղված է ագռավը:

Տաթեւի սրանոցը

Այդ սրանոցը տիպիկ էր ոչ միայն Զանգեզուրի, այլեւ հարեւան հայաբնակ գավառների համար:

Ստեփան Լիսիցյանը մանրամասն նկարագրել է այդ սրանոցը (Զանգեզուրի հայերը, Երեւան -1969, էջ 150):

Ահա՝ «Տաթեւի սրանոցը. կառուցված էր վանքի պարիսպներից դուրս, անշուշտ այն նկատառումով, որ մասնավոր պատվիրատուները կարողանան ազատ ելեւմուտ ունենալ, առանց վանքի ներքին կյանքը խանգարելու: Դա տաշած քարերով խնամքով շարված շենք էր՝ երեք հիմնական բաժիններից բաղկացած: Առաջին բաժինը մի երկար ընդարձակ սրահ էր, որի մեջտեղ հենց դռան առջեւ ցածրիկ պատով օղակաձեւ շրջապատված կալն էր կամ բակը: Կալի կենտրոնում ցցված էր ամուր կի-

Տաթեւի սրանոցը

սայուն՝ 70-75 սմ բարձրությամբ, որի գլխին նստեցրած էր երկար հաստ ձող՝ նէտ, մի ծայրը երկար, մյուսը կարճ: Երկար ծայրը դուրս էր գալիս կալի օղակավորող պատի սահմաններից, կարճը՝ ոչ: Երկարը հարմարեցրած էր եզ կամ գոմեշ լծելու կամ մարդկանց ուժով առաջ մղելու համար: Կարճը ծառայում էր որպես առանցք ուղղահայաց կանգնեցրած ահագին եւ հաստ, 1,40 մ տրամագծով, 0,50 մ հաստությամբ երկանաքարի՝ քարաղի համար: Երկանաքարը գլորվելիս իր եզրի ամբողջ լայնությամբ ընդհուպ պառկում էր հատակին: Սրահի աջակողմյան նեղ պատի տակ սարքված էր բարձր քարաշեն բօվարան, ուր բարձրանում էին մի քանի աստիճաններով: Բուն բօվարանը մի քառակուսի ավազան է, որի հատակն ամբողջական բարակ սալ էր՝ սաջ: Սալը տաքացվում էր տակից հնոցի մեջ վառվող փայտով: Ծուխը հեռացվում էր պատի մեջ շինված ծխանավ: Կտավիատը նախ խանձվում էր այդ բօվարանի մեջ, սաջի վրա եւ ապա տեղափոխվում էր կալը՝ բակը եւ փռվում երկանաքարի տակ: Նէտի երկար ծայրը լծված եզան կամ գոմեշի ուժով կամ մի քանի մարդու բրդելով, առաջ էր շարժվում, իսկ կարճ ծայրին երկանաքարը սկսում էր հակառակ ուղղությամբ գլորվել՝ սրէլավ՝ ՝ տրորելով կտավիատը: Ստացված ալյուրը մաղում էին եւ նորից փռում երկանաքարի տակ, այս անգամ խառնելով տաք ջրի հետ: Նորից քարի տակ տրորելուց հետո ստացվում էր խմօր, որն անցնում էր երկրորդ սրահը, որտեղ քամվում էր ճնշող մամուլի օգնությամբ:

Երկրորդ սրահի հատակը զանազան բարձրություն ունեցող երեք հրապարակների էր բաժանվում: Դռնից ձախ կողմում ամենացածրադիր հրապարակն է, միջինը նրանից մի աստիճան բարձր է, իսկ աջակողմյանը՝ նեղ պատի տակինը, քարաշար թումբ է, ուր բարձրանում են մի քանի աստիճաններով: Այս թումբի միջին մասում պատի մեջ թողած պատրհանում հանգչում են հորիզոնական դիրքով դեպի առաջ ձգվող երկու զուգահեռ եւ երկար (8-10մ) ծանր գերանների գլուխներ: Նրանց հակառակ ծայրերը պառկած են արջի վրա: Արջը լայն եւ կարճ, ամբողջական կամ երկու միացված կտորներից կազմված հաստ տախտակ է, որի կենտրոնում եղած ծակն ունի պտտակային հակառակ կտրվածք: Այս ծակի միջով անցնում է պօղօսիկ՝ հաստ փայտե պտուտակը, որն իր երկաթապատ ոտքով ուղղաձիգ տնկված է հատակին նստեցրած քարե պատվանդանի մեջ եւ պտտվում է նրա փորվածքի մեջ: Պօղօսիկի վրա, գետնից մարդու գոտկատեղին հավասար բարձրությամբ, հորիզոնական դիրքով ամրացված է մեջտեղը անցք ունեցող կլոր քար, որով պօղօսիկը կարելի է պտտեցնել եւ այդպիսով բարձրացնել կամ իջեցնել նրա վրա հագցրած արջը եւ արջի հետ երկու գերանների ծայրերը:

Սարքավորումը գործում է այսպես՝ սրահի թամբի մեջ շինված է 1,6 մ երկարությամբ եւ 0,60 մ լայնությամբ եւ նույնչափ խորությամբ քարե արկղ: Այս օջախի՝ արկղի մեջ շար-շար դարսում են կտավիատի խմօրը՝ այծի մազից պատրաստված շալէրի՝ բօխչանէրի մեջ փաթաթված՝ տակից նախօրոք փռելով բարակ ճիպօտնէր: Խմօրը վերեւից ծածկում են ավելի հաստ ձողերով եւ տախտակներով, որոնք բռնում են օջախի ամբողջ ներսի տարածությունը՝ ափից ափ: Վրայից դնում են հաստ լաշ՝ կոճղ: Մինչ այդ բարձր պահած գերանները սկսում են իջեցնել՝ պօղօսիկն անիվի օգնությամբ պտտեցնելով եւ այդպիսով արջն իջեցնելով: Գերաններն իրենց ծանրությամբ ճնշում են լաշը, որի տակ խմօրը սեղմվում է եւ քամվում: Ձեթը նախ անցնում է փոքրիկ ավազան եւ ապա այնտեղից թափվում է ավելի խորը նստեցրած կարասի մեջ:

Վարճը վճարվում էր քամած ձեթի մի մասով, առանց բաժին հանելու քուսպից: Աշխատանքի միջոցին բոլոր բանվորները կերակրվում էին կտավիատի տիրոջ հաշվին»:

Տաթեւի վանքը, որտեղից դարեր շարունակ լույս է ճառագել

Տաթեւ գյուղի սահմաններում գտնվող հնագույն եւ նշանավոր սրբավայրը Տաթեւի վանքն է, որը տեղավորված է գյուղից մոտ 1 կմ հարավ-արեւելք՝ անդնդախոր ձորի պռնկին:

Տաթեւի վանքը, որպես համազգային-համաքրիստոնեական սրբավայր, սույն համարում ներկայացնում ենք առանձին հրապարակմամբ:

Հ. Գ. Գահնամակը, որ հիշատակեցինք վերնագրում, Հայոց արքունիքում իշխանների կամ նախարարների ունեցած տեղերի, գահերի կամ պատվաստիճանների հրովարտակ է, վավերական ցուցակ:
Մովսես Խորենացին այդ հրովարտակի հիմնադիրը համարում է Հայոց թագավոր Վաղարշակին:
Մատենագրական տեղեկությունների համաձայն՝ Գահնամակը գործել է Արշակունիների թագավորության ամբողջ ժամանակաշրջանում (I-V դարեր): Այն շարունակվել է նաեւ մարզպանական շրջանում (V-VII դարեր): Չորրորդ դարին վերագրվող Գահնամակը պահպանվել է «Ներսեսի վարքում»:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԵՐԹՈՒՂԻ 21

Մալդաշ, որ հիմա Քաշունի է կոչվում. գյուղի դեռեւս բաբախող սիրտը՝ Սուրբ Սարգիս մատուռը

Գրաշալի այդ մատուռը կառուցվել է 2002-ին:

Կառուցել են Քաջիկ Մնացականյանը (հանրապետության ավիացիայի ճանաչված կազմակերպիչներից մեկը, Տաթեւ գյուղից), ինչպես եւ նրա եղբայրներ Արարատ ու Արմեն Սարգսյանները:

5x4 մ չափսերով սրբավայրը չափազանց խնամված է, գրավիչ, պատերին աստվածաշնչյան թեմաներով նկարներ են:

Մեր ստեղծագործական խումբը մոմ վառեց այդ ուխտավայրում: Դա 2020 թ. մարտի 13-ին էր:

Տաթեւից մեզ ուղեկցում էր բնապահպան Հրաչ Ծատրյանը, ով Տաթեւ-Մալդաշ մոտ 14 կմ ճանապարհի ամեն մի տեղանքին քաջածանոթ անձնավորություն է:

Գյուղը գտնվում է Տաթեւ-Կապան ճանապարհի աջ կողմում. ճանապարհի 12 կմ-ից 2 կմ դեպի արեւմուտք:

Գյուղանունը հիշատակվում է Տաթեւի վանքի նոր հարկացուցակում:

Գյուղից հարավ՝ բարձր լեռան վրա կա գեղաշեն մի խաչքար: Մերձակա սարերի ձյունապատ լինելու պատճառով մենք չկարողացանք բարձրանալ այդ վայր: Տարածաշրջանին ծանոթ մարդիկ ասում են, թե այդ խաչքարը յուրօրինակ սահմանանշան է եղել Կապանի շրջանի Տորթնի (Անտառաշատ) գյուղի տարածքի հետ:

Արեւելքից արեւմուտք ձգվող այդ լեռնապարը, որքանով հասկացանք, Հասար է կոչվել:

Մալդաշի ներկայիս բնակչության նախնիները 1920-ականներին են տեղափոխվել Տանձատափ գյուղից:

Շրջանառվող վարկածներից մեկի համաձայն՝ Մալդաշն այդ ժամանակ եղել է Տանձատափի ամառանոցավայրը (յայլա), որից էլ առաջացել է Մալդաշ-անասնաքար անվանումը (մալ-անասուն, դաշ-քար):

Մալդաշի անվանման եւ նախնական տեղանքի մասին կան այլ վարկածներ եւս, որոնց կանդրադառնանք սույն հրապարակման մեջ:

Մինչ այդ, սակայն, շտապենք անհամաձայնություն հայտնել «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակների այն պնդման հետ, թե իբր «Գյուղից արեւմուտք եւ արեւելք կան գերեզմաններ, գյուղի մոտ՝ ձորամիջին, պահպանվել են հին գյուղի տների եւ եկեղեցու ավերակների մնացորդներ»:

Մալդաշի արեւմուտքում նույնանուն լեռնագագաթն է, որը նաեւ կոչվում է Չըռչուռ (Չըրչըրան, Չիրչուռ, Չուրչուր), որը Բարգուշատի լեռնագագաթներից մեկն է (Արամազդից արեւելք):

Տաթեւից Կապան ձգվող ճանապարհն անցնում է մի լեռնանցքով (Մալդաշ գնալու համար այդտեղից ենք թեքվում դեպի արեւմուտք): Լեռնանցքը կոչվում է Խողվանի (այդ լեռնանցքում է գտնվում Եզան սուրբը (Օքյուզ-գյարաթ), որին անդրադարձել ենք Տանձատափ գյուղին նվիրված մեր խոսքում):

Մալդաշն ու Խողվանին նույնը չեն

Ղեւոնդ Ալիշանը Մալդաշ գյուղը ենթադրաբար նույնացնում է Խողվանի գյուղի հետ:

Այդ վարկածը մինչդեռ որեւէ հիմնավորում չունի:

Տեղացիներից եւ մասնագետներից շատերը Խողվանին նույնացնում են Կապանի տարածաշրջանի Աղվանի գյուղի հետ:

Նույնը չեն նաեւ Մալդաշն ու Տաշուն

Տաշու գյուղի մասին առաջինը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը, երբ խոսում է Տաթեւի Սուրբ Պողոս-Պետրոս նորաշեն եկեղեցուն նվիրված գյուղերի մասին. *«Բաղացիները տալիս են Տաշուն»* (Սյունիքի պատմություն, էջ 210):

Տաշու գյուղի տեղորոշմամբ զբաղվել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Մ. Գրիգորյանը՝ նշելով, որ այն գտնվում է Աղանձի Գյունեի կոչված վայրից դեպի հյուսիս (Պատմաբանասիրական հանդես, 1966, N 4, էջ 237):

Այդ կարծիքի հետ համամիտ է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմու-

թյուն» երկի թարգմանության, ներածության, ծանոթագրությունների հեղինակ Ա. Աբրահամյանը:

Հարցին անդրադարձել է նաեւ Սերո Խանզադյանը. *«Մի քանի տարի առաջ Տանձատափից 15 ընտանիք անջատվել է, գնացել են մի քիչ վերեւում եղած հին ավերակների մեջ հիմնվել, անունը դրել Մալդաշ:*

Մալդաշը Ստեփանոս Օրբելյանի ցույց տված Տաշուն է՝ Ցուրի, Տանձատափի եւ Տաթեւի մոտ» (Հայրենապատում, Երեւան 1980, էջ 272):

«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակներն էլ նշում են, թե Տաշուն գտնվում է «Տաթեւի վանքից հարավ-արեւմուտք, Աղանձի Գյունեի հանդամասում»:

Մենք այցելեցինք Տաշու գյուղի ավերակներ, որտեղ պահպանվում են եկեղեցու եւ գերեզմանների հետքեր:

Վերը նշված վարկածներից ու տեսածից այսպես կարող ենք ընդհանրացնել. **Տաշուն գտնվել է Աղանձ գետի ձախ ափին, Գյունեի հանդից հարավ-արեւմուտք, Սվարանց գյուղի դիմաց** (հարավ-արեւելք):

Տաշուն, տեղագրության իմաստով, երբեք չէր կարող լինել Մալդաշ: Դրանք տարբեր վայրերում են գտնվում:

Այնպես որ՝ ճիշտ չէ Սերո Խանզադյանի տեսակետը, թե Մալդաշը Ստեփանոս Օրբելյանի ցույց տված Տաշուն է:

Սուրեն Վարդանյանի վարկածը

Սուրեն Վարդանյանը «Հինավուրց Տանձատափ» գրքի երկրորդ հրատարակության մեջ (Երեւան 2015) նոր վարկած է առաջ քաշում Մալդաշ-Տաշու առնչությունների վերաբերյալ:

Ըստ նրա՝ *«Մալդաշ-Քաշունին հնում եղել է Տանձատափի ամառանոցը, որտեղ բոլոր ընտանիքները տներ (խրճիթներ) են ունեցել: Գարունը բացվելու հետ նրանք իրենց անասունները տեղափոխել են այնտեղ եւ մինչեւ ուշ աշուն մնացել: Հարուստ արոտներ եւ խոտհարքներ ունի Մալդաշը, ինչի շնորհիվ գյուղացիներն արտադրում էին մեծ քանակությամբ եւ բարձր որակի յուղ, պանիր ու միս»:*

Այդ տեսակետը, անշուշտ, անվիճելի է:

Սակայն նշված գրքի էջ 75-ի ծանոթագրությամբ մի հավելում է կատարվում, որի սկզբնաղբյուրը նշվելու պարագայում՝ առաջադրված վարկածն ավելի զորավոր կլիներ:

Խաչեր դաշտամասի խաչքարը

Ահա՝ *«Ամենայն հավանականությամբ սարվոր տանձատափցիների հիմնադրած Մալդաշն իր անվանումը ստացել է Պարսկաստանի Շահ Թահմազ I-ի (1524-1576) 1562 թ. հրամանագրում հիշատակված Տաշու-Մալդաշի երկրորդ բաղադրիչի անվանումից»:*

Ըստ Սուրեն Վարդանյանի՝ Մալդաշ բառի երկրորդ բաղադրիչը՝ դաշ-ը, հենց Տաշու գյուղանունից է՝ տ-դ հնչյունափոխությամբ:

Ասել է թե՝ Մալդաշը նախապես եղել է Տաշուի ամառանոցային վայրը, ինչը (Տաշուի վերանալուց հետո) փոխանցվել է Տանձատափին:

Գյուղն այսօր

Գյուղն ուներ հետեւյալ քանակությամբ բնակչություն՝ 1897-ին՝ 12, 1926-ին՝ 104, 1939-ին՝ 206, 1959-ին՝ 166, 1970-ին՝ 78, 1979-ին՝ 38:

1992-ից գյուղն ունի նոր անուն՝ Քաշունի:

Այդ անունն է կրում գյուղի միջով հոսող գետը, որ սկիզբ է առնում Բարգուշատի լեռների Արամազդ լեռնապարից հյուսիս-արեւելք ընկած շրջանից, որ նաեւ Չըռչուռ է կոչվում:

Որոտան գետի աջ օժանդակն է:

Գետի երկարությունը 40 կմ է:

Ղեւոնդ Ալիշանն այդ գետն անվանում է Զիմու, Զեմի:

Օտարները վերին հոսանքի շրջանը կոչել են Չայզամի:

Կոչվել է նաեւ Կապանի շրջանի նախկին Զեյվա (այժմ՝ Դավիթբեկ) գյուղի անունով:

Գետը կոչվել է նաեւ Աղչայ, Կաշունի, Հաշունի, Չայիսմի, Քիշունի...

Գյուղում մեր այցելության օրը երկու բնակիչ կար՝ ամուսիններ Գամառնիկ Հովհաննիսյանը (1942 թ. ծնված) եւ Մարուսյա Սիմոնյանը (1946 թ. ծնված):

Տաթեւ համայնքի մեջ մտնող այդ գյուղը նաեւ վարչական ղեկավար ունի՝ Փնջիկ Միրզոյան:

Գյուղի կենտրոնում՝ բարձունքին, վեր է խոյանում Մեծ հայրենականում զոհված 24 մալդաշցիների հիշատակը հավերժացնող գեղեցիկ հուշարձանը:

Գյուղում հիմնականում փակված դռներ են, կիսավեր տներ...

Ըստ Գամառնիկ Հովհաննիսյանի՝ *«Ամռանը գյուղը համեմատաբար ակտիվանում է, 4-5 տանտերեր գալիս են իրենց տնամերձերը մշակելու, ոմանք էլ մեղվափեթակներն են բերում այստեղ...»:*

Մարուսյա Սիմոնյանն էլ գյուղում մնալու իր պատճառաբանությունն ունի՝ *«Երեխաներս ստիպում են մեզ՝ տեղափոխվել քաղաք, բայց ինչպես... Ո՞ւմ թողնենք մեր գերեզմանները, Մեծ հայրենականում զոհվածների հուշարձանը, ո՞ւմ թողնենք Սուրբ Սարգիսը, մեր խաչքարը...»:*

Ահա այսպիսին է Սյունիքի մարզի Մալդաշ-Քաշունի գյուղը:

Անկեղծ չենք լինի, եթե գյուղը փրկելու տեսակետ առաջ քաշենք (Տաթեւ-Աղվանի ճանապարհը հիմնանորոգելուց հետո անգամ, որ սպասվում է 2020-ին):

Սակայն անկեղծ կլինենք, եթե աղոթք բարձրացնենք առ Աստված, որ մարզի լեռնային գյուղերից եւ ոչ մեկին (գոնե այսուհետ) բաժին չընկնի Մալդաշ-Քաշունիի ճակատագիրը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ահա եւ Տաթեւի մայր վանքում ենք, որ Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրն է

ԵՐԹՈՒՂԻ 22

«Ուխտագնացություն Սյունիք» ծրագրի առաջին փուլը, որ ներառում է Գորիսի տարածաշրջանը, սկսեցինք 2019 թ. հուլիսի 14-ին՝ Սռի եղցում Քերթողահայր Մովսես Խորենացու ենթադրյալ գերեզման այցելելով եւ ավարտեցինք Տաթեւի երկնակառույց քավարանում՝ 2020 թ. մարտի 6-ին:

Տարբեր անուններով է վանքը հիշատակվում մատենագիտության մեջ՝ Եվստաթե, Սուրբ Եվտաթեոս Առաքյալ, Ըստաթե, Ստաթե, Ստաթեի Առաքելո վանք, Ստաթեի վանք, Ստաթեւ, Տաթեւ, Տաթեւու վանք, Տատեւ, Տատիվ...

Վանքը տեղադրված է Տաթեւ գյուղի հարավ-արեւելյան ծայրամասում, Տաթեւ գետի եւ ձախից նրան միացող

Տաթեւի վանք (ամենահին լուսանկարը)

անդնդախոր ձորի ուղղաձիգ ժայռի գագաթի թեք հարթակի վրա, որն արհեստականորեն հարդարվել ու հարմարեցվել է շինարարության համար:

Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական շրջանում վանքի տեղում գոյություն է ունեցել հեթանոսական մեհյան: 4-5-րդ դարերում այստեղ կառուցվել է մի անշուք քրիստոնեական եկեղեցի: 839 թ. Դավիթ եպիսկոպոսը Սյունիքի Փիլիպե իշխանից 10 հազար դրամով գնում է վանքի տարածքը: 895 թ. Հովհաննես եպիսկոպոսը Հայոց թագավոր Սմբատ Բագրատունու եւ Սյունիքի իշխանների օժանդակությամբ հիմնադրում է Պողոս-Պետրոս եկեղեցին, որի շինարարությունն ավարտվում է 906-ին:

Ստեփանոս Օրբելյանն այսպես է բնութագրում վանքի տեղանքը. *«...գտնելով այս տեղը՝ խիստ համապատասխան ու հարմար, գրեթե վերին թելադրանքով առաջնորդվելով՝ եկան, հաստատվեցին այս տեղ՝ այս գեղատեսիլ վայրում, որը բարձր դիտանոցի նման նայում է դեպի արեւելք՝ շատ գավառների... Տեղը շատ առողջարար է, հարթ, շրջապատված բարձր ու սրագագաթ լեռներով, կիսաշրջանաձեւ՝ կարծես կարկինով քաշած: Վանքի առջեւում շատ խոր, դժվարամատչելի ծառապատ ձոր է՝ շատ ընդարձակ ու գեղեցիկ, որտեղով ահեղաձայն գոչգոչումով անցնում է Որոտան գետը: Ձորը լի է այգիներով ու դրախտացած զանազան բուսատեսակներով: Այնտեղ՝ խիստ բարձր քարաժայռի վրա եկեղեցի կար՝ անշուք ու անտաշ քարերով կրաշաղախ շարված, շատ հին ժամանակներից, Սուրբ Ներսեսի ու Սահակի օրերից: Տեղը հեռու էր թշնամիների ամեն տեսակ ավազակային հարձակումներից, որովհետեւ նահանգի կենտրոնական մասում էր, ապահով եւ խաղաղ, ամրացած Սյունիքի ու Բաղքի երկու աթոռների միջեւ»:*

Հիշեցնենք՝ վանական համալիրի վերականգնման աշխատանքները մեկնարկել են 1979-ին: Այդ գործն առաջինը ձեռնարկել է հանրապետության պետշինի նախագահ Գրիգոր Աղաբաբյանը: 1980-2015 թթ. Տաթեւի վերականգնման ճարտարապետության խմբի ղեկա-

վարն էր Միհրան Բաղդիշյանը:

Վերջին տարիներին վերականգնվել է վանքի մուտքը, կառուցվել է աղբյուր: Վերականգնողական աշխատանքներն իրականացվում են պատմական ճարտարապետությանը եւ ոգուն համապատասխան: Վերջին տարիներին վերականգնողական աշխատանքներում հատկապես ուշագրավ է Սուրբ Աստվածածին եկեղեցու գմբեթի վերանորոգումը, որն ամենայն պատասխանատվությամբ եւ որակով իրականացրել է ճանաչված շինարար Մարատ Ասլանյանի գլխավորած շինարարական կազմակերպությունը (Սիսիանից): Այդ կազմակերպությունն է կատարել նաեւ հիմնական մուտքի վերականգնումը, աղբյուրի կառուցումը եւ թանգարանային մասի հիմանանորոգումը:

Վանքի անվանման խնդիրը

Վանքի հիմնադրման եւ անվանման մասին կան մի քանի ավանդություններ: Մի դեպքում այն կապում են Եվստաթե Առաքյալի (1-ին դար), մեկ այլ դեպքում՝ Գահնամակում հիշատակված «Տաթեւյանք» անձնանվան հետ:

Ասում են նաեւ, որ իբր վանքի կառուցումից հետո քարագործ վարպետը, դիմելով ներքեւում գտնվող բանվորներին, երկու տաշեղ է պահանջում, հետո համբուրում է դրանք ու ասում՝ «Հոգին Սուրբ տա թեւ», եւ վանքի անունը մնում է Տաթեւ:

Ղեւոնդ Ալիշանն անվան ծագումը կապում է Սուրբ Թադեի անվան հետ:

Տաթեւի վանքը՝ աստվածության գանձարան

Աստվածության բազում գանձեր կան այս սրբավայրում...Աստվածամուխ սուրբ նշանը, որ կենարար փայտից էր՝ բերված Հունաց աշխարհից Այունյաց եպիսկոպոսների միջոցով եւ ի պահպանություն տրված առաջին իշխաններին:

Աստվածընկալ Բաբկենյան խաչը, որ մի տղամարդու հասակի չափով պատրաստված էր արծաթից՝ Անդոկի որդի Բաբիկի որդու՝ Վասակի կողմից եւ իր մեջ մաս էր պարունակում փրկական փայտից:

Գլխավոր ու երեւելի մարդկանց առաքելական, հայրապետական, մարտիրոսական նշխարներ, որոնք մեծ քանակությամբ հավաքել էին Այունյաց իշխանները, որ Սուրբ Գրիգորի ու Սուրբ Ներսեսի հետ գնացին Կեսարիա եւ Մեծ Հռոմ, նույնպես եւ տարբեր ժամանակներում շատ փափագներով ժողովված-ները:

Մեծ Հովհաննեսի ու Ստեփանոս Նախավկայի, տասնմեկ առաքյալների նշխարները:

Սուրբ Հռիփսիմեի աջը:

Գերազանց սրբուհի Աստվածածնի մազերը:

Գլխավոր եկեղեցու սյուների տակ դրված են երկու գլխավոր առաքյալի՝ Պետրոսի եւ Պողոսի նշխարները:

Այդտեղ է Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարը՝ գանգի մի կողմը եւ աջ թեւի բազուկը՝ դրված մի փայտե փոքրիկ սնդուկի մեջ, փակված եւ կապարե կնիքով կնքված:

Տաթեւի վանքը՝ Այունիքի թագավորների եւ Այունիքի գահերեց իշխանների պանթեոն

Տաթեւի վանքում է թաղված Այունի մեծ նախարար եւ գահերեց իշխան Աշոտը, ում հրամանով Տեր-Հովհաննեսը Տաթեւ եպիսկոպոսարանում եկեղեցի կառուցեց: Այդտեղ է թաղված նրա կինը՝ Շուշան բարեպաշտուհին՝ կանանց մեջ անհամեմատելին:

Վանքում է թաղված Սիսական աշխարհի առաջին թագավորը՝ քաջարի, հզոր եւ բարեպաշտ արքա Սմբատը: Նրա որդին՝ Սմբատից հետո թագավորած Վասակը թաղված է իր հայր Սմբատի կողքին: Այդտեղ է թաղված Այունիքի գահերեց իշխան Փիլիպե 1-ինը (գերեզմանը Գրիգոր Սուրբ Լուսավորիչ եկեղեցու բակում է):

Այդտեղ է թաղված Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու հիմնադիր Հովհաննես եպիսկոպոսը, որի տապանաքարի մի մասը՝ կոտրված վիճակում, հայտնաբերվել է վերականգնողական աշխատանքների ընթացքում, սակայն հետագայում անհետացել է, ինչի մասին վկայում է Միհրան Բաղդիշյանը: Ցավոք, նրանցից եւ ոչ մեկի տապանաքարն ու գերեզմանի ստույգ տեղը հայտնաբերված չեն:

Արքայաշնորհ եւ աստվածապատիվ Տեր-Հովհաննեսը՝ հրեշտակների եւ մարդկանց սիրելին, ով կառուցեց Սուրբ Պողոս-Պետրոս կաթողիկե եկեղեցին

Այունյաց մետրոպոլիտության աթոռակալն էր մոտ 38 տարի: Նորիք գյուղից մի որբեւայրի աղքատ ու մուրացիկ մարդու որդի է եղել:

Տեր-Սողոմոն առաջնորդի օրոք

Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման վավերագիրը

Տաթեւի եկեղեցու փակակալն էր, ապա եկեղեցականների ավագը: Սողոմոնի վախճանից հետո սյունեցիներն իրենց առաջնորդ պահանջեցին Հովհաննես փակակալին: Նա ձեռնադրվեց Հայոց Տեր-Գեւորգ կաթողիկոսի կողմից:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ ապա «Երազի մեջ հրեշտակից հրաման ստացավ՝ հինը մի կողմ թողնել եւ նոր եկեղեցու շինարարություն սկսել եւ այն տեսիլը կրկնվեց ու երրորդվեց, մինչեւ որ հրեշտակը լրիվ հավաստի դարձրեց իրողությունը, որ խաբուսիկ երեւույթ չկարծվեր. իր գավազանով էլ սահմանագծեց տեղը ու հրամայեց կառուցել գլխավոր առաքյալներ Վեմ-Պետրոսի եւ Պողոսի անունով: Գործի համար քաջալերեց՝ ասելով. *«Դա մարդու կողմից չի կատարվում, այլ Տերն է ուզում իր փառքի համար տուն կանգնեցնել»:* Եպիսկոպոսը զարհուրեց եւ քնից արթնանալով երկար ժամանակ ապշած էր մնացել:

Վեր կացավ, եկավ այն տեղը եւ միաբաններին ցույց տվեց հրեշտակների սահմանագծածը: Այս մասին տեղեկացրեց նաեւ Այունյաց մեծ եւ գահերեց իշխան Աշոտին՝ Վասակի եղբորը, Փիլիպեի որդուն, Սմբատի, Սահակի եւ Բաբկենի հորը, եւ նրա կին երանելի խորահավատ Շուշանին, Գեղարքունիք գավառում բնակվող մյուս իշխանին՝ Գրիգոր Սուփանի որդի Գաբուռ Սահակին, եւ Բաղքի Ձագիկ կոչված մյուս իշխանին՝ Ջեվանշերի հորը: Նրանք ոգեւորվեցին եւ աստվածային տնօրինությամբ շտապ կերպով այնտեղ բերվեցին եւ հիացած այն սքանչելի երազով՝ համաձայնությամբ ու համամ-

Սուրբ Պողոս-Պետրոս կաթողիկե եկեղեցին, որը կառուցել է Արքայաշնորհ եւ աստվածապատիվ Տեր-Հովհաննեսը՝ հրեշտակների եւ մարդկանց սիրելին

տությամբ գործի անցան եւ ջանում էին արագ կերպով կատարել: Այնուհետեւ բացվեցին նրանց գանձարանները, եւ գանձերը առատապես ծախսվում էին շինարարության կատարման համար: Բայց գլխավորապես մեծ իշխան Աշոտը եւ Տեր-Հովհաննես եպիսկոպոսն էին մեծամեծ ծախսերով ու ջանքերով կանգնած այդ գործի վրա եւ աստվածային կամակցությամբ սկսեցին կառուցումը: Հիմքը գցեցին հայոց երեք հարյուր քառասունչորս թվականին, Աշոտ թագավորի որդի Սմբատ Բագրատունի նահատակի թագավորության, Փիլիպեի որդի Աշոտի Սյունյաց իշխանության, Տեր-Գեւորգ Գառնեցի հայոց կաթողիկոսի գահակալության ժամանակ, Աշոտի հրամանով ու կամքով, Տեր-Հովհաննեսի միջոցով, որը եւ եկեղեցու վրա արձանագրել էր այսպես. *«Այն տարում, երբ հայոց երեք հարյուր քառասունչորս թվականն էր, եւ զատիկը՝ նավասարդի 4-ին, ես՝ Տեր-Հովհաննեսս, որ Սողոմոնից հետո կարգվեցի Սյունյաց եպիսկոպոս, այս եկեղեցու կառուցման սկիզբը դրեցի»:*

Եվ այսպես կառուցվեց եկեղեցին՝ երկնակամարի նման գմբեթահարկ, որպես հրեշտակների զբոսարան եւ մարդկանց՝ քավարան, տաշած վեմերով ու քերած քարերով, որմնադրական արհեստով հարմարեցված, տեսնողների աչքերը շլացնող: Նրա բարձրությունը հարյուր կանգուն էր, երկարությունը՝ քառասունութ, լայնությունը՝ քսանչորս: Իր մեջ ընդգրկում էր չորս խորան, բացի ավագ խորանից: Եվ այդ շենքի մեջ Սողոմոնյան տաճարի կամ Զորաբաբելյանի նմանողությամբ կառուցել էր երկու հրաշակերտ սյուներ՝ բոյոսն ու հաքումը, որոնք ամուր կերպով միացված խարիսխներով եւ գեղեցկադիր ու բարձրաբերձ թակաղաղներով ամբողջապես վերցրած պահում են կամարակապ, քարակարկառ հարկի հսկայական ծանրությունը: Սա ծառայում է որպես խորհրդանիշ երկու գլխավոր առաքյալների՝ Պետրոսի եւ Պողոսի համար, որոնց նշխարներից դրվեցին այդ սյուների տակ. առաքյալների, հայրապետների, նահատակների՝ այնտեղ հավաքված բազմաթիվ սուրբ նշխարներ դրվեցին եկեղեցու հիմքերի մեջ ու անկյուններում: Տասմեկ տարում ահա այսպես ավարտելուց հետո եկեղեցու մոտ, հարավային դռան դիմաց կանգնեցնում է մի զարմանալի սյուն՝ սուրբ երրորդության անունով, երեսապատված մանր քարերով երեսուն կանգուն բարձրությամբ: Պարսպում է եկեղեցին սրբատաշ քարերով, ապա եւ վանքը՝ կոփածո քարերով: Եվ քանի որ տեղանքն անհարմար էր, ուստի գետնի հաստ թմբերը հարթում է, խոր տեղերը բարձրացնում կրաշաղախ պատերով: Շինում է եւ գետնափոր գաղտնարաններ եկեղեցուց ներքեւ, հողի տակ ծածկված՝ բազմաթիվ կացարաններ ու դարաններ՝ եկեղեցու կարիքների համար: Հարթելով ու հավասարեցնելով տեղանքը՝ շինում է նաեւ սրբաշեն սեղանատներ, արհեստանոցներ, մթերանոց-պահեստներ, սրբատներ ու գրատներ: Եկեղեցու բակում կառուցում է աղոթատուն եւ Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների համար՝ դամբարանատեղ:

Մեծ տան հայրապետանոցի համար ահա այս բոլոր կառուցումները հոգատարությամբ կատարելով եւ հարմարություններ ստեղծելով ու ավարտելով՝ այն մեր Հայաստան աշխարհում դարձրեց ցանկալի բոլոր մերձավորների ու հեռավորների համար: [Վանքը] լուսապայծառ լինելով, ինչպես արեգակն աստղերի մեջ՝ բոլոր վանքերից նշանավոր էր ոչ միայն շինություններով, այլեւ փայլում էր շուրջ հինգ հարյուր միաբանների կրոնավորական դասերով: Լի էր խորաքնին փիլիսոփաներով, երաժիշտ-երգիչներով: Ճոխ էր վարժարանը՝ վարդապետական կրթումով: Կային նաեւ անհամեմատելի արհեստավոր նկարիչներ ու գրիչներ: Դրա համար այսպիսի համբավից հիացած՝ թագավորները, իշխանները, եպիսկոպոսները

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

գալիս էին տեսության եւ ընծաներ էին բերում սուրբ ու փառահեղ աթոռին: Եվ երբ Տեր-Հովհաննես եպիսկոպոսն ավարտեց եկեղեցու մյուս կառույցների շինարարությունը, հետամուտ եղավ աշխարհախումբ հանդեսին՝ կատարելու մեծ եւ աստվածահրաշ տաճարի նավակատիքը: Կանչեցին հայոց Սմբատ թագավորին՝ ուրիշ իշխանների հետ, եւ Տեր-Հովհաննես կաթողիկոսին, որը հաջորդեց Մաշտոց Սեւանցուն, հայոց մյուս եպիսկոպոսներով հանդերձ: Իր եպիսկոպոսներով, իշխաններով ու ազատներով հանդերձ եկավ եւ Վասպուրականի Գագիկը, որն էլ [հետո] թագավոր դարձավ: Եկավ նաեւ Աղվանքի կաթողիկոս Տեր-Սիմոնը՝ իր աշխարհի եպիսկոպոսներով եւ մեծամեծ իշխաններով: Ինչպես եւ հավաքվեցին Այունյաց հայկազուն իշխանները, որոնց վերը հիշատակեցինք, այլեւ՝ մեր Սիսական աշխարհի ուրիշ վանականներ ու աշխարհականներ: Նրանց մեջ իսկությամբ կարելի էր տեսնել, ըստ իր անսուտ հրամանի, Քրիստոսին՝ հորով ու ամենասուրբ հոգով՝ երկնային բոլոր զորքերով հանդերձ, այլեւ առաքյալների ու մարգարեների գնդերով, հայրապետախումբ, մարգարեական եւ նահատակախումբ բազմություններով: Եվ գիշերային արարողության ժամանակ եպիսկոպոս Հովհաննեսը նրանցից տեսիլքով տեսավ Պետրոսին՝ ձեռքին երկաթե բանալի, եւ Պողոսին՝ գրկում առաքելական գիրքը, որոնք մտնելով եկեղեցի՝ պատրաստում էին աթոռը երկնային թագավորի համար եւ բանալին ու գիրքը տվեցին եպիսկոպոսին եւ ասացին. *«Տերը հաճեցավ բնակվել սրա մեջ, եւ մենք նրա համար հանգստյան տեղ ենք պատրաստում. հենց մեզ էլ հրամայվեց այստեղ մնալ մինչեւ մեր թագավորի հաջորդ գալուստը. դա արքայության բանալին է, թող մնա այս եկեղեցու մեջ, որովհետեւ այստեղ է բացվելու դրախտի դուռը բոլոր այն մեղավորների համար, որոնք հավատով դիմելու են սրան. այս գիրքը եւս թող մնա սրա մեջ, որովհետեւ այստեղից է բխելու վարդապետական շնորհը եւ սուրբ հեղինակների ողջամիտ քարոզները, այստեղ կմնա մաքուր ու անխառն»:*

Այս տեսնելով ու սթափվելով՝ մեծ գոհունակությամբ դեպի երկինք փառաբանություն առաքեց, բայց ոչ ոքի ոչինչ չհայտնեց: Ապա առավոտը բացվելիս հայրապետները եւ բոլոր եպիսկոպոսները զգեստավորվելով բեմ բարձրացան ու կատարելով հոգեւոր օրհնությունը՝ օծեցին աստվածաստեղծ յուղով: Եվ «Թող օրհնվի, թող օծվի» ասելիս ամբողջ բազմությունն այնքան բարձր էր արտասանում, որ լսողներին թվում էր, թե հրեղեն ամպերից ահարկու որոտ ու ձայթյուններ էին գալիս. երկիրը դղրդում էր, շրջակայքը՝ ցնցվում: Եվ ես այնպես եմ կարծում, թե լոկ մարդկային ձայները չէին, այլեւ դրանց խառնվում էին ոչ մարմնական ձայներ, որ այդպես ահարկու էին թվում: Եվ այսպես կատարելով օրհնությունը՝ ութ օր նավակատիք արեցին ի փառս Աստծու: Այնուհետեւ յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը: Բայց թագավորը եւ Այունյաց իշխանները, տեսնելով այդպիսի հանդեսը եւ այնքան չքնաղագույն շինվածքը, առավելապես սիրեցին ու պատվի արժանացրին տեղը. մեծ նվիրատվություններով փարթամացրին եւ շատ ընդարձակեցին նրա սահմանները...» (Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, Երեւան 1986, էջ 206-210):

Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցի

Ստեփանոս պատմիչը խոսելով 848 թվականին Լուսավորչի շինության մասին՝ նշում է, որ այն կառուցվել է հին եկեղեցու հարավային կողմում: Այստեղից հետեւում է, որ Պողոս-Պետրոս եկեղեցու տեղում մինչեւ հիշյալ թվականը գոյություն է ունեցել մի հին եկեղեցի: Այս երեւույթը կարեւոր է հատկապես այն պատճառով, որ Պողոս-Պետրոս եկեղեցին հին եւ նոր ճարտարապետական ձեւերի ինքնատիպ հյուսվածք է: Հորինվածքի հիմքում ընկած է եռանավ բազիլիկի հատակագիծը: Սակայն արեւմտյան անկյունամասերը վեր են ածվել ավանդատների, որով էլ պայմանավորվել է եկեղեցու նոր կերպարը: Միաժամանակ, ինչպես եւ վաղ միջնադարյան սրահներում, այստեղ պահպանվել են ենթագմբեթային կենտրոնի եւ խորանի միջեւ եղած տարածությունը, այն էլ գմբեթակիր մույթերի առկայությամբ: Մույթերը հին շինության հիմնապատերից թելադրվող երեւույթ չեն: Ստ. Օրբելյանն ընդգծում է, որ դրանք կառուցվել են հիմքից: Այսպիսով, նորաստեղծ եկեղեցու մեջ նախատեսվել է նաեւ խորանի եւ մույթերի միջեւ եղած տարածության պահպանումը: Ճարտարապետական տարրերի նմանօրինակ համատեղությունից հետեւում է, որ ճարտարապետը չի կամեցել հետեւել հորինվածքային այն կերպարին, որի հիմքում ընկած է գմբեթի առանցքով ներքին տարածության կենտրոնացման սկզբունքը:

Այս տեղեկություններից, որ ներկայացրինք վերեւում, պարզվում է, որ 895 թվականին հին եկեղեցու տեղում հիմքից շինվել է Պողոս-Պետրոս եկեղեցին, մուտքի մոտի սրահը, սեղանատունը,

Սուրբ Աստվածածին եկեղեցին

գրատունը, միաբանության պարիսպները, արհեստանոցները եւ կոմունալ այլ շինություններ:

Եկեղեցու եւ միաբանության այլ շինությունների նորոգման ու վերաշինման աշխատանքները սկսվել են 895 թվականին եւ ավարտվել 906 թվականին: Կարելի է ենթադրել, որ աշխատանքները սկսվել են նորոգումներից: 895 թվականին ավարտվել է Լուսավորիչ եկեղեցու նորոգումը եւ արձանագրությունն էլ փորագրվել է այդ թվականին:

Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման վերաբերյալ մի վիմագիր հիշատակարան է փորագրվել, հավանաբար, շինարարական աշխատանքներն ավարտվելուց հետո՝ հատուկ պատրաստված խաչքարի վրա, որտեղ նշվում է, որ կառուցողը Հովհաննես եպիսկոպոսն է:

Խաչքարն ագուցված է մուտքի վերին մասում: 885-906 թվականներին եկեղեցու հարավային մուտքի մոտ կառուցված խորանավոր փոքրիկ սենյակը պատմիչն անվանում է տուն աղօթից: Այս սենյակի արեւելյան պատը համընկնում է Լուսավորիչ եկեղեցու արեւմտյան պատի հյուսիսային կեսի հետ, որի մեջ շրջափակված է նաեւ մի Տ-աձեւ որմնամույթ: Այս ամենից երեւում է, որ հիշյալ պատը եւս հետագա վերաշինությունների արդյունք է:

Պողոս-Պետրոս եկեղեցին մի քանի անգամ կործանվել եւ վերաշինվել է: Առաջին անգամ այն ավերել են սելջուկները XI դարի կեսերին: Երկրորդ ավերման պատճառը 1138 թվականի երկրաշարժն էր: Եկեղեցին եւ գավիթը նորոգվել են 1187, 1253, 1605, 1646, 1862 եւ 1865 թվականներին:

Գավազան զորության եւ արդարության

* * *

Ժամանակին մեծ արժեք են ներկայացրել Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները:

Դրանք Աղթամարի որմնանկարների հետ միասին 10-րդ դարի հայկական որմնանկարչության արվեստի ամենաերեւելի հուշարձաններից են:

Ցավոք, երբ 1931-ին եկեղեցին զրկվեց գմբեթից, անձրեւները, ձնհալի ջրերը սկսեցին թափանցել ներս, ինչի հետեւանքով գունաթափվել եւ շարքից հանվել են որմնանկարները:

Ըստ Միհրան Բադիշյանի՝ որմնանկարների խնդիրն ամենացավոտն են Տաթեւի վանքի վերականգնողական աշխատանքներում:

Ըստ Արա Վարդանյանի, ով Մայր աթոռ Էջմիածնի գլխավոր ճարտարապետն է, 1960-ականներին Էրմիտաժից՝ Լենինգրադի գեղարվեստական եւ պատմամշակութային թանգարանից, Լիդիա Դուրնովայի գլխավորությամբ մասնագիտական խումբ է ժամանել Տաթեւ եւ հանել որմնանկարների պատճենները, որոնք պահվում են Ազգային պատկերասրահի արխիվում: 2014-ին կար ծրագիր՝ Ռուբեն Վարդանյանի միջոցներով կատարել որմնանկարների պատճենների էլեկտրոնային վերականգնում եւ Պողոս-Պետրոս եկեղեցու պատերի վրա դրանց ցուցադրում: Սակայն այդ ծրագիրը չիրականացվեց:

Ըստ Արա Վարդանյանի՝ որմնանկարների ամբողջական վերականգնում հնարավոր չէ, բայց այն, ինչ-որ պատճենահանվել է 1960-ականներին, կարելի է վերականգնել:

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Տաթեւի սրբավայրի մյուս եկեղեցին Գրիգոր Լուսավորիչն է: Եկեղեցին թաղածածկ է, հարավային եւ հյուսիսային պատերին կան մեկական որմնամույթ: Ավերվել է 1931 թվականի երկրաշարժի ժամանակ: Ըստ էության եկեղեցին չի ունեցել հյուսիսային պատ: Որպես այդպիսին օգտագործվել է Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատը: Թե ինչպես է ավելի ուշ կառուցված Պողոս-Պետրոս եկեղեցու պատն օգտագործվել

Սյունյաց տան մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի պատրաստած զանգը

այս եկեղեցում, իմանում ենք Ստ. Օրբելյանի թողած տեղեկություններից:

848 թվականից հետո եկեղեցին վերաշինվել է երկու անգամ, ընդ որում՝ վերջին վերաշինությունը՝ հիմքից:

Երկրորդ վերաշինության վերաբերյալ կան Ստ. Օրբելյանի վկայությունը եւ շինարարական արձանագրությունը:

Երրորդ վերաշինությունը կատարել է ինքը՝ պատմիչը 1295 թվականին եւ եկեղեցու ճակատակալ քարին թողել է արձանագրություն:

Ահա թե ինչ է ասում Սյունյաց տան պատմիչը Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաշինության մասին. *«Այնուհետեւ ձեռնամուխ եղանք Տաթեւի եկեղեցու շինարարությանը, որ Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով էր: Այն փլվել էր ու մինչեւ հատակը քանդվել: Եկեղեցու այս շինարարությունը երրորդ անգամն էր: Առաջին անգամ կառուցվեց Փիլիպե իշխանի կողմից Սյունյաց Տեր-Դավիթ եպիսկոպոսի օրոք: Երկրորդ անգամ կառուցվեց Տեր-Յովհաննեսի կողմից՝ Սմբատ թագավորի հրամանով: Երրորդ անգամ էլ սա է, որ մենք սկսեցինք ու Աստծո շնորհիվ հաստահեղույս քարերով եւ գեղեցիկ տեսքով կերտեցինք շենքը»* (Սյունիքի պատմություն, էջ 376):

Իր ներկա վիճակում եկեղեցին XIII դարի վերջին վերաշինության կերպարն ունի եւ հյուսիսային պատի տեղում այլեւս հին պատը չէ, այլ Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատը, որին կցել են եկեղեցու խորանը եւ մի որմնամույթ:

Սուրբ Աստվածածին եկեղեցի

Տաթեւի վանական համալիրի երրորդ նշանավոր շինությունը Սուրբ Աստվածածին երկհարկ դամբարան-եկեղեցին է: Իր ճարտարապետական տիպով միանավ գմբեթասրահ է: Նկատի ունենալով նրա տարածվածությունը՝ գմբեթասրահի այս տիպը եւս կարելի է առանձնացնել որպես մի տարբերակ: Գմբեթասրահներում որմնամույթերի միջոցով դահլիճը բաժանվում է երկու հիմնական մասերի՝ ենթագմբեթային եւ արեւմտյան: Սակայն շինության փոքր չափերի եւ որմնամույթերի նկատելի զուսպ դրվածքի հետեւանքով ներքին տարածությունն առանձնապես չի մասնատվում: Քանի որ շինությունը դամբարանական բնույթ ունի, այդտեղ ավանդատներ չեն կառուցվել:

Հյուսիսային, արեւելյան եւ հարավային պատերին արտաքուստ կան խորը որմնախորշեր:

Ստորին հարկում գտնվում են երկու թաղածածկ սենյակներ:

Շինության կառուցման մասին պահպանվել են Ստ. Օրբելյանի եւ վիմագիր տեղեկություններ: Պատմիչը

վկայում է, որ կառուցողը Հովհաննես եպիսկոպոսին փոխարինած Գրիգոր եպիսկոպոսն է: *«Սա արարեալ զարմանալի շինուածս յեպիսկոպոսարանին Տաթեւ, զի կանգնեաց կամարս ի վերայ դրան վանացն որ հայէր ընդ յարեւելս. եւ մերձ նմին տուն սրբաշէն. եւ ի վերայ սոցա եկեղեցի մի գմբէթաւոր գեղեցկայարմար յանուն սրբուհւոյ Աստուածածնին: Եւ էր նա իբր դիտանոց բարձր որ հայէր ի վերայ վանացն. եւ ի չորեսին կողմանցն յօրինեաց գաւիթս. բայց յառաջի կողմն բարձրաբերձ սեամբք շինէր սրահս վայելուչս իբր քաղցր հովանոց. եւ գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն»:*

Արձանագրությունը գտնվում է հարավային պատին:

Թվականը, որ հաշված է հոբելյաններով, ճիշտ վերծանել է Ս. Բարխուդարյանը/ Ժ-10 հոբելյան-500+30+6+551=1087 թվական/:

Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ նախքան եկեղեցու շինությունը Գրիգոր եպիսկոպոսն այդտեղ կառուցել է մի կամար: Ելնելով եկեղեցուն անմիջապես մոտ շինությունների մնացորդներից՝ թվում է, խոսքը բերդապարսպի հյուսիսային մուտքին կից կամարածածկ միջանցքի մասին է: Այնուհետեւ Ստ. Օրբելյանը նշում է, որ եկեղեցու չորս կողմը կառուցվել են գավիթներ եւ մի սրահ՝ «բարձրաբերձ» սյուներով: Եկեղեցուց հարավ ներկայումս կան երկու թաղածածկ շինությունների մնացորդներ, որոնցից մեկի միայն խիստ ընդգծված որմնամույթերն են մնացել եւ վկայում են նրա երբեմնի մոնումենտալ կերտվածքի մասին, իսկ սյունազարդ գավթի հետքն անգամ չկա: Արեւմտյան կողմում՝ եկեղեցու եւ մուտքի կամարակապ միջանցքի միջեւ, գտնվում է մի թաղածածկ սենյակ՝ ուղղանկյուն հատակագծով:

Գավազան զորության եւ արդարության

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման տարում Հովհաննես եպիսկոպոսը կանգնեցրել է Տաթեւի հռչակավոր Սյուն գավազանը: Այդ մասին ՅԽԴ (895) թվականի արձանագրության կողքին փորագրվել է եւս մի վիմագիր հիշատակարան՝ հետեւյալ բովանդակությամբ.

1. ՀՐԱՄԱՆԻ ԱԾԱՊԱՀ
2. ՏԵՐԱՆՑ ԵՒ ՅԱՒԺԱՐՈՒ_
3. ԹԵԱՆԲ ԻՄՈՅ ԿՐԱՒՆ_
4. ԱՒՈՐԱՆՑ ԵՒ Ի ՆՈՅՆ ՏԱ_
5. ՐԻՈՋ Ի ՅԵՒԹՆԵՐՈՐԴ
6. ԱՄՍՈՅՍ ՅԱՐԱՑ ԿԱ-
7. ՆԿՆԵՑԱՒ ԱՐՁԱՆՍ

«Ի նոյն տարիոջ» Ս. Բարխուդարյանը իրավամբ համարում է 895 թվականը, նկատի առնելով արձանագրության տեղադրությունը հիշյալ թվականը կրող արձանագրության կողքին: Կարելի է ավելացնել նաեւ ամսաթիվը: Արձանագրության մեջ նշված է արաց ամսի 7-ը՝ հունիսի 11:

* * *

Գավազան-սյունի մասին բազում ավանդազրույցներ կան, բազմաթիվ են նաեւ դրա խորհրդի ընկալումները:

Հայկական ճարտարապետության պատմության մեջ հայտնի են մի շարք նման հուշարձան-սյուներ:

Ըստ Վարդան Դեւրիկյանի՝ «դրանցից Տաթեւի սյունը, սակայն, տարբերվում է չորս հատկանիշներով:

ա) Տաթեւի սյունը նման սյուների մեջ ամենաբարձրն է՝ 7,89 մ:
բ) Այն միակն է, որ չի ավերվել եւ ավարտվում է սյունը պսակող ծակոտկեն խաչով: Շնորհիվ խաչի նման հորինվածքի, արեւի ճառագայթները թափանցում են խաչի միջով եւ լուսեղեն գծագրմամբ գծվում խաչի պատկերը եւ թվում է, թե խաչը ճախրում է երկնային լույսի մեջ:
գ) Դա սյուների մեջ միակ ճոճվողն է:
դ) Միայն այս սյունն է, որ անվանվում է Գավազան-սյուն:

Տաթեւի սյունը, սակայն, ստորերկրյա ցնցման կամ անգամ մարդկային ձեռքի հպումից սկսել է շարժվել, այսինքն՝ ճոճվել ու երերալ, եւ նայած ճնշման ու ցնցման ուժի, միաժամանակ տատանվելուց-ճոճվելուց հետո իր ելակետային սկզբնական դիրքին եկել:

Շնորհիվ այս հատկության այն դիմացել է տարբեր երկրաշարժերի ավերիչ հարվածներին: Համաձայն ավանդության՝ սյան հիմքում սնդիկ է լցված եւ ճնշման ժամանակ այն «լողում է» սնդիկի գնդի մեջ եւ աստիճանական ճոճմամբ իր նախկին վիճակին գալիս:

Սյան ճարտարապետը նման զարմանալի արդյունքի կարողացել է հասնել սյան վեր ելնելուն զուգընթաց նրա մակերեսի միջին խտությունը գցելով, այսինքն՝ սյունը որքան վեր է բարձրանում իր խարսխից, այնքան շարվածքի քարերի խտությունը եւ ըստ այդմ ծանրությունն ընկնում են, որը թեթեւություն է հաղորդում սյան վերին մասին:

Ցավոք, սյան ճոճվելու առանցքը եւ ճնշման հանդեպ զգայունակությունը խախտվել են 1931 թ. երկրաշարժից հետո: Մինչ այդ, եթե, համաձայն ականատեսների վկայության, սյունը ճոճվում էր, երբ նրան կից շինության տանիքից անգամ ձեռքով հրում էին, ապա այդ երկրաշարժից հետո այն արդեն անհամեմատ փոքր շառավղով է ճոճվում եւ այն էլ՝ մեծ ուժ գործադրելուց հետո:

Տաթեւի սյան այսպես ճոճվելուն եւս մի հոգեւոր խորհուրդ է հաղորդվել եւ տարբեր ավանդություններ են հյուսվել սյան ճոճվելու մասին: Այս ավանդությունների միջոցով է նաեւ պարզ դառնում, թե ինչու է այս սյունն անվանվել Գավազան-սյուն:

Ըստ ժողովրդական ըմբռնման՝ այս սյունը եղել է մի յուրօրինակ վարդապետական գավազան եւ Սյուն-գավազանով է որոշվել Սյունյաց աշխարհի վարդապետների ստացած վարդապետական աստիճանը, որի խորհրդանիշն է վարդապետական գավազանը, որքանով է վավերական եղել: Ասվում է, որ անցյալում աբեղային վարդապետական գավազան տալիս եպիսկոպոսը Ս. Պատարագից հետո եկեղեցականների հանդիսավոր թափորով դուրս էր գալիս տաճարից եւ երեք անգամ խունկ ծխում այս Գավազան-սյան առաջ: Եթե աբեղան արժանի էր վարդապետական աստիճանի, ի նշան հավանության Գավազան-սյունը ճոճվում էր, իսկ եթե ոչ՝ մնում էր անշարժ:

Գավազան-սյան միջոցով հարատեւությունն է շեշտվում նաեւ այն ավանդությամբ, որում պատմվում է, թե երբ Լենկթեմուրը մահ ու ավեր տարածելով գալիս, հասնում է Տաթեւ, չարությամբ լցված՝ ցանկանում է այս սյունը տեղից վայր գցել: Հրամայում է տասը զույգ գոմեշ լծել եւ նրանց լծերից գութանի փոկով կապել սյուն-գավազանը: Երբ գոմեշները սկսում են քաշել, փոկը կտրվում է եւ բոլոր գոմեշները ձորն են թափվում, իսկ սյանը որեւէ վնաս չի հասնում (Ազգագրական հանդես, 1898 թ., հտ. Գ, էջ 124)»:

Ավանդություն Տաթեւի հռչակավոր զանգերի մասին

Համաձայն ավանդության՝ վանքի զանգերով է պայմանավորված անգամ ողջ երկրամասի Զանգեզուր կոչվելը:

Ինչպես հայտնի է, ըստ այս ավանդության, երբ թշնամիները ներխուժել են Սյունյաց աշխարհ, ի նշան վտանգի, սկսել են խփել Տաթեւի վանքի զանգերը կամ առանձին մի հսկայական զանգ, եւ յուրաքանչյուր գյուղից մի զորաջոկատ է ելել ընդդեմ թշնամու: Եվ այսպես գումարված զորքը Սյունյաց աշխարհից դուրս է քշել թշնամուն: Ահա այս պատճառով նրանք գտնում են մի անարգ դավաճան, ով վնասում է զանգը եւ վտանգի պահին այն չի հնչում, ի մի չի հավաքում Սյունյաց աշխարհի քաջորդիներին, եւ ժողովուրդը ողբաձայն ասում է՝ Զանգն էլ զուր է, զանգն էլ զուր է, որից եւ երկրամասի անունը մնում է Զանգեզուր:

Նման մեկ այլ ավանդությամբ էլ պատմվում է, որ Լենկթեմուրը Տաթեւի վանքի զանգակատան տակը հսկայական խարույկ է վառում, որ զանգը հալվի ու թափվի: Զանգը չի հալվում, սակայն այն կորցնում է իր հնչեղությունը:

Զանգի շուրջ այդ ավանդազրույցները պատմական հիմքեր ունեն, իրապես հռչակված է եղել Տաթեւի վանքի զանգը, որը պատրաստել է տվել Սյունյաց տան մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը:

Այս զանգի վրա եղել են երեք արձանագրություն, որոնցից առաջինը գրել է տվել Ստեփանոս Օրբելյանը, իսկ վերջին երկուսը գրվել են ի հիշատակ նրա:

Տաթեւի համալսարանը

Տաթեւի համալսարանի մասին խոսքը ներկայացնում ենք ըստ Հայկական Սովետական Հանրագիտարանի 11-րդ հատորի (էջ 542):

Սյունյաց բարձր տիպի դպրոց, Սյունյաց վարդապետարան, միջնադարյան Հայաստանի խոշորագույն ուսումնագիտական հաստատություն Տաթեւում: Որպես համալսարան հիշատակվում է 1390-ից: Գոյատեւել է մինչեւ 1435-ը: Գլաձորի համալսարանի փակվելու պատճառով Հովհան Որոտնեցին տեղափոխվել է Որոտնավանք, հիմնել դպրոց, ապա հաստատվել Տաթեւում եւ, վերակառուցելով Տաթեւի կրթարան-վարդապետարանը, հիմք է դրել նոր, բարձր տիպի դպրոցի՝ համալսարանի: Այնտեղ էին հավաքվել ժամանակի գիտուն եւ բանիմաց շատ վարդապետներ, 500-ի չափ կրոնավորներ, փիլիսոփաներ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ, ինչպես նաեւ արվեստագետներ ու արհեստավորներ: Ավելի ուշ միաբանների թիվը հասել է 1000-ի (այդ թվում՝ ուսանողներ, աբեղաներ, քահանաներ, սարկավագներ...):

Տաթեւի համալսարանը հովանավորել է Օրբելյան իշխանական տունը եւ Սյունիքի եկեղեցական իշխանությունը: Ունեցել է երեք լսարան (ուսումնարան)՝ ուսումնարան ներքին եւ արտաքին գրոց, գրչության արվեստի, երաժշտության: Առաջինում ուսումնասիրվել են գլխավորապես հումանիտար եւ հասարակական գիտություններ. փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, պոետիկա, մանկավարժություն, ինչպես նաեւ մայրենի լեզու, գրականություն, պատմություն եւն, երկրորդում՝ գրչության արվեստ, գեղագրություն, գրքերի գեղարվեստական ձեւավորում, մանրանկարչություն, որմնանկարչություն, իսկ երաժշտության լսարանում՝ հին երգ եւ երաժշտություն, երաժշտության տեսություն: Որոտնեցին մահից առաջ իրեն փոխարինող եւ հայոց ռաբունապետ է կարգել (1386) իր աշակերտ Գրիգոր Տաթեւացուն: Նա շարունակել է Որոտնեցու դպրոցի ավանդույթները: Իր ռաբունապետության շրջանում Տաթեւացին կատարելագործել է համալսարանի ծրագրերը, կազմել դասագրքեր («Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան...», «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ»), գրել գրչության արվեստի տեսությանը վերաբերող քննական մեկնություններ: Տաթեւացու գործունեությունը նպաստել է մանավանդ գրչության արվեստի զարգացմանը: Նա վարել է գրչության տեսական դասընթաց եւ անցկացրել գործնական պարապմունքներ: Պատրաստել է մոտ 60 գրիչ: Համալսարանում օգտագործվել են Հին եւ Նոր կտակարանները, Արիստոտելի, Փիլոնի, Պորփյուրի եւ ուրիշների աշխատությունների մեկնություններն ու թարգմանությունները:

Առանձնակի ուշադրություն է դարձվել փիլիսոփայությանը, ուսումնասիրվել են ոչ միայն սկզբնաղբյուրները, այլեւ դրանց վերաբերող մեկնողական գրականությունը: Լայնորեն օգտագործելով հայերեն եւ հունարեն գրականությունը՝ մշակել եւ զարգացվել են մի շարք գիտություններ ու արվեստներ:

Համալսարանն ունեցել է կանոնադրություն, ուսումնագիտական աստիճանավորում: Սովորելու են եկել ոչ միայն Սյունիքից, այլեւ Հայաստանի տարբեր վայրերից, Եկեղյաց գավառից, Արարատյան նահանգից, Կիլիկիայից, Վասպուրականից, Տարոնից, Աղվանքից, Պարսկահայքից, Ղրիմից եւն: Մշտապես ունեցել է մեծ թվով սովորողներ (150-300 եւ ավելի):

Սաներից են եղել Թովմա Մեծոփեցին, Առաքել Սյունեցին, Գրիգոր Արարատեցին, Սարգիս Սալնապատեցին, Բարսեղ Բաղիշեցին, Մատթեոս Ջուղայեցին, Հակոբ Անձղնապատեցին, Սիմեոն Եղվարդեցին, Մկրտիչ Նահապետենցը եւ ուրիշներ:

Ուսման տեւողությունը եղել է 7-8 տարի (չհաշված քահանայական կրթության տարիները): Պատրաստել է վարդապետներ, քարոզիչներ, մանկավարժներ, գրչության արվեստի մասնագետներ, երաժիշտներ:

Ունեցել է հարուստ մատենադարան:

Տաթեւացու մահից հետո (1410) դադարել է համալսարանի ակտիվ գործունեությունը: Մինչեւ 1425-ը դպրոցը ղեկավարել է Մխիթար ռաբունապետը, նրան հաջորդել է Եզեկիել վարդապետը:

1435-ի Շահռուխի արշավանքի ընթացքում փլատակների է վերածվել Տաթեւի վանքը, իսկ միաբաններն ապաստանել են Գուգարքում:

Տաթեւի մանրանկարչության դպրոցը

Ժամանակակիցների վկայությամբ 14-րդ դարի 70-ական թվականներից Տաթեւը դառնում է «Երկրորդ Աթենք», *«Կենտրոն ամենայն իմաստից, ուր սովորելու էին գալիս Հայաստանի տարբեր շրջաններից...»:*

Եվ այդ գործընթացը գլխավորում էին Հովհան Որոտնեցին ու նրան հաջորդած Գրիգոր Տաթեւացին:

Տաթեւի նկարչական դպրոցի ակունքները գալիս են հնուց. արդեն 10-րդ դարում գործել են գրչատունը եւ նկարչական արհեստանոցը, եւ, ըստ գրավոր աղբյուրների, Տաթեւացու օրոք դպրոցում կրթություն է ստացել 60-ից ավել նկարիչ:

Ստորեւ՝ քաղվածք Հայկական Սովետական Հանրագիտարանի 11-րդ հատորից (էջ 542):

...Գործել է Տաթեւի համալսարանում: Պահպանվել են մատենագիտական վկայություններ այն մասին, որ համալսարանում մյուս գիտություններին զուգընթաց սովորում էին «նկարագրութիւն պատկերահանութեան եւ զանազան նկարչութիւնս»:

Մեզ են հասել թվով քիչ, բայց արվեստի լիարժեք գործեր նեկայացնող XIV-

Գրիգոր Տաթեւացու դամբարանը

XV դդ. ձեռագրեր, որոնք վկայում են Տաթեւի մանրանկարչության դպրոցի գոյության եւ զարգացման մասին: Այդտեղ շարունակվել են Գլաձորի մանրանկարչության դպրոցի ավանդույթները: Տաթեւի մանրանկարչության դպրոցի ներկայացուցիչներից է Գրիգոր Տաթեւացին, որը 1378-ին պատկերազարդել է Եղեգիսից բերված անավարտ նկարազարդումով Ավետարանը (1297, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. No 7482): Գրիգոր Տաթեւացին իր աշխատություններում բազմիցս շոշափել է գեղագիտությանը վերաբերող հարցեր, որոնք կիրառել է իր ստեղծագործություններում: Շարունակելով Գլաձորի մանրանկարչության ավանդույթները՝ նա դրանք հարստացրել է իրականությունից վերցված մանրամասներով: Նկարչի վարպետությունն արտահայտվել է նկարների բացառիկ գունաշարով, որտեղ աչքի են ընկնում վառ կարմիրն ու կապույտը՝ համադրված շագանակագույնի եւ դեղինի երանգների հետ: Նրա ստեղծագործություններն առանձնանում են մոնումենտալությամբ, կերպարների համաչափությունների պահպանմամբ: Տերունական պատկերներում գեղանկարչական մանրամասներն ընդգծում են նկարչի ձգտումը՝ պատկերել մոնումենտալ բնույթի իրական երեւույթներ: Մարդկանց դեմքերը շատ նուրբ են, արտահայտիչ դիմագծերով, որոնց առավել կենդանություն է տրված այտերի բնական կարմրությամբ: Տաթեւի մանրանկարչության դպրոցի XV դ. սկզբի լավագույն նկարիչներից էր Հայրապետը: 1407-ին նրա նկարազարդած Ավետարանից պահպանվել է միայն հիշատակարանը (Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պատառիկ 923), որտեղ նրա անունը հիշատակվում է որպես «Նաղաշ Հայրապետ»: Լավագույն նկարազարդ ձեռագրերից է Հայրապետի ընդօրինակած Հայսմավուրքը (Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. No 7361): Նկարչի ստեղծած բազմերանգ զարդանկարները (կիսախորան, գլխազարդեր, լուսանցազարդեր) մանրանկարչական արվեստի հասուն գործեր են, որոնք դիտողին համակում են իրենց նրբությամբ, երանգների գունագեղությամբ. հատկապես գրավիչ են դիմապատկերներն իրենց գեղանկարչական վարպետությամբ:

XV դ. վերջերին Տաթեւում ձեռագիր է նկարազարդել Աբրահամ ծաղկողը, որը ճանաչված նկարիչ էր Բոլորբերդի վանքում (Վայոց ձոր, Սրկղունք): Աբրահամը Տաթեւում կատարելագործել է իր արվեստը, մեծապես օգտվել Գլաձորի եւ Տաթեւի մանրանկարչության դպրոցների ավանդույթներից եւ կրել հատկապես Թորոս Տարոնացու արվեստի ազդեցությունը (Ավետարան, 1496, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. No 5303): Տաթեւի մանրանկարչության դպրոցում նկարազարդվել են նաեւ բազմաթիվ այլ բնույթի մատյաններ, որոնցում թեմատիկ նկարներ չկան: Դրանք հարդարված են միայն կիսախորաններով, գլխազարդերով ու լուսանցազարդերով, որոնք կատարված են վարպետորեն եւ մեծ մասամբ ունեն գրաֆիկական ոճավորում: Տաթեւի մանրանկարչության դպրոցը գործել է շուրջ 50 տարի՝ իր ուրույն արվեստով հարստացնելով հայ մանրանկարչությունը:

Թե ինչու Անանիա Մոկացի Ամենայն Հայոց կաթողիկոսը Տաթեւի վանքն ավերելու հրաման տվեց

Այդ հարցին անդրադարձել ենք «Այունյաց երկիր» թերթի՝ Վահանավանքին նվիրված համարի (15 դեկտեմբերի 2012 թ.) խմբագրականում:

Խմբագրականի այդ հատվածն էլ ներկայացնում ենք ստորեւ:

...Այունյաց աթոռի եւ Հայոց կաթողիկոսարանի միջեւ աննախադեպ մի խռո-

վություն արձանագրվեց 10-րդ դարում: Խոսքը, անշուշտ, Սյունյաց եպիսկոպոս Հակոբ առաջինի ապստամբության մասին է: Հայոց կաթողիկոսության դեմ այդ խռովությունը մեր պատմագիտության մեջ բավականին հանգամանալից է քննարկվել, բայց առավել ուշագրավ է Ստեփանոս Օրբելյանի արձանագրումը (Սյունիքի պատմություն, ԾԲ գլուխ, էջ 240-248):

Մի քանի խոսքով անդրադառնանք այդ խռովությանը:

...Երբ 918թ. մահացավ «Երանելի, աստվածակիր» Տեր Հովհաննես մեծ հայրապետը (թաղված է Տաթեւի վանքում), Տեր Հովհաննես Դրասխանակերտցի Ամենայն հայոց կաթողիկոսը Սյունիքի եպիսկոպոս է ձեռնադրում իր եղբորորդուն՝ Հակոբին (Հակոբ I), «որը եկավ եւ բազմաթիվ ու երեւելի կայքերով պայծառացրեց սուրբ եկեղեցին, չափազանց հարստացրեց եւ խիստ վարդապետությամբ միշտ քարոզում էր հավատացյալներին ու հոգ տանում իր (հոգեւոր) հոտի նկատմամբ»(Ստ. Օրբելյան, նշված աշխ., էջ 226): Հակոբ I-ը մեծ գործեր կատարեց նաեւ եկեղեցաշինության ոլորտում: Սակայն... Տեր Հակոբը հոգեւոր սիրով կապված էր Աղվանքի կաթողիկոսների հետ, իսկ Աղվանքի կաթողիկոսարանի եւ Հայոց եկեղեցու հարաբերություններն այնքան էլ խաղաղ չէին նաեւ դրանից առաջ, ինչին նպաստել էր երկու-երեք այլ հանգամանք եւս: Նախ՝ Հայոց կաթողիկոսներն այդ ժամանակ, քաղաքական իրավիճակից դրդված, հեռացել էին իրենց մշտական նստավայրից ու շրջում էին այստեղ ու այնտեղ: Երկրորդ՝ այդ ժամանակ արդեն չկար Հովհաննես Դրասխանակերտցին, եւ Ամենայն հայոց կաթողիկոս էր դարձել Անանիա Մոկացին (941թ., որոշ աղբյուրների համաձայն՝ 946, եւ գահակալել է մինչեւ 968թ.): Եվ, հեռավորության պատճառով, Հակոբ եպիսկոպոսը չէր կարողանում ամեն տարի Սյունիքից գնալ Հայոց կաթողիկոսի մոտ՝ մեռոն վերցնելու: Եվ մեռոնը խնդրում էր Աղվանքի կաթողիկոսից, ինչը մեծ մոլորություն գնահատվեց: Անանիան իր մոտ հրավիրեց Հակոբին եւ Աղվանքի կաթողիկոս Սահակին, բայց նրանք չգնացին: Անանիա Մոկացին ինքը ստիպված եկավ Տաթեւի եպիսկոպոսարան: Հակոբը խոստովանեց իր մեղքը՝ «Մեղք գործեցինք երկնքի ու քո հանդեպ, բայց դու ների՛ր մեզ ու մեր հանցանքները» (Ստ. Օրբելյան, նշված աշխ. էջ 241): Կաթողիկոսը ներեց Հակոբին, բայց եւ չգնաց Աղվանք՝ հայոց թագուհին էր մահացել: Հետո, սակայն, Հակոբի դեմ նոր դավադրություն հրահրվեց, թե իբր նա քողարկումով ընդունում է քաղկեդոնությունը, թե իբր թույլ չի տալիս Աղվանքի կաթողիկոսին՝ ենթարկվելու Հայոց կաթողիկոսին, իբր Անձեւացյաց Խոսրով եպիսկոպոսին (թղթով) շեղել է Մայր աթոռից (Խոսրովն ապստամբել էր Անանիա Մոկացու դեմ եւ նզովվել նրա կողմից): Աղվանքի կաթողիկոսության հետ ծագած խնդիրները հարթելու համար Անանիան եկավ Խաչեն, այնտեղից՝ Սյունիք՝ Տաթեւի հայրապետանոց: Հակոբ 1-ինը, սակայն, ոչ թե ընդառաջ գնաց Ամենայն հայոց կաթողիկոսին, այլ գնաց Բաղաց ամրոց: Բազմաթիվ գրություններից հետո անգամ Հակոբ եպիսկոպոսը դուրս չեկավ Բաղքի Ջեւանշեր իշխանի հովանավորությունից: Անանիան վերադարձավ իր աթոռ, մինչ այդ, սակայն, գրեթե ավերեց Տաթեւի եպիսկոպոսարանը: Ահա թե ինչ է գրում Մաղաքիա Օրմանյանը. «...աւերեաց զտեղին եւ քանդեաց, որ է Տաթեւի եպիսկոպոսարանը, եւ չարաչար նզովիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց ի տոռունս կապանաց զիշխանն եւ զեպիսկոպոսն» (Մ.Օրմանյան, նշված աշխ. էջ 1275): 949թ. վախճանվեց Սյունյաց մետրոպոլիտ եւ հայոց բոլոր եպիսկոպոսների գլուխ Հակոբը: Անանիա Մոկացին երրորդ անգամ եկավ Սյունիք, որտեղ Տաթեւի եպիսկոպոսարանն արդեն անբնակ էր դարձել (այն վերականգնելու հրաման տվեց ինքը): Եվ գնաց Կապան: «Նրան տարան, իջեցրին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա»(Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 246): Բոլորն իրենց հանցանքների համար Անանիայից ներում ստացան: Նա Սյունյաց եպիսկոպոս ընտրեց Ջեւանշերի (ով մինչ այդ հովանավորում էր ապստամբ Հակոբին) որդի Վահանին (ապագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոս), ով Վահանավանքի մեծ միաբանության առաջնորդն էր: Մինչեւ ձեռնադրումը մեծապայման խոստումնագիր գրեցին ե՛ւ Վահանը, ե՛ւ Սյունյաց իշխանաց իշխան Վասակը, ե՛ւ Բաղքի Ջեւանշեր իշխանը: Այդ բոլորով հանդերձ Անանիա կաթողիկոսը պատժեց Սյունիքի աթոռին՝ նրանից վերցնելով պատիվը..., որը վերականգնվեց միայն Սյունյաց եպիսկոպոս Տեր Հովհաննեսի (Հովհաննես 7-րդ) եւ Սարգիս 1-ին Սեւանցի Ամենայն հայոց կաթողիկոսի (գահակալել է 992-1014թթ.) կողմից 1006թ.: Սարգիս կաթողիկոսն այդ քայլն արեց, ինչպես վկայում են աղբյուրները, Կատրամիդե թագուհու խնդրանքով: Դրանով, փաստորեն, Սյունիքի եպիսկոպոսական աթոռին վերադարձվեցին նախկին արտոնությունները, որից հետո նոր վերելք ապրեց Տաթեւի եպիսկոպոսարանը: Ահա թե ինչ է գրում այդ առիթով Սյունյաց տան պատմիչը. «...Գագիկ թագավորն ու Կատրամիդե թագուհին թախանձելով կաթողիկոսին՝ Տեր Հովհաննեսին մեծահանդես շքեղությամբ ձեռնադրել են տալիս Սյունյաց մետրոպոլիտ: Կաթողիկոսը նրան է հանձնում Սյունյաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժեք գավազանը եւ պատվական գահավորակը, որոնք պահվել էին հայրապետանոցի սրբարանի սենյակում»(Ստ.Օրբելյան, նշված աշխ. էջ 259):

Ստ.Օրբելյանը Հակոբին ներկայացված ոչ բոլոր մեղադրանքներին է համաձայն: Մինչդեռ պատմության մեջ այն կարծիքն է իշխում, որ Աղվանքի Սահակ եւ Գագիկ կաթողիկոսները Սյունիքի Հակոբ եպիսկոպոսի հետ փորձում էին դուրս գալ Հայոց եկեղեցու ենթակայությունից:

Հակոբի ապստամբությունը տեղի չէր ունենա, եթե չլինեին Բաղաց Ջեւանշերի պաշտպանությունն ու հովանավորությունը:

Սյունյաց Հակոբին՝ իր դիրքերից չհրաժարվելու գործում քաջալերեց Աղվանքի Գագիկ կաթողիկոսը, եւ երկու աթոռի դաշնակցությամբ ապստամբությունը տեւեց 8-9 տարի: Այդ ընթացքում Հակոբը մնաց Բաղաց ամրոցում, որտեղից էլ նա ծածանում էր ապստամբության դրոշը, բայց շարունակում էր մնալ Սյունյաց թեմի առաջնորդ, Հայոց եպիսկոպոսների գլուխ: Հակոբն ու Գագիկը մահացան 958-ին:

Ավելացնենք միայն, որ Անանիա Մոկացին առաջին անգամ Սյունիք այցելեց 949թ., երկրորդ անգամ՝ 952թ. ձմռանը, երրորդ անգամ՝ 958թ.:

Ովքեր ու ինչպես կառուցեցին Գրիգոր Տաթեւացու դամբարանը

Շինված է Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու սրահի մեջ՝ եկեղեցու հարավային մուտքի առջեւ:

Ներկայացնում ենք Նիկողայոս Ադոնց մեծ հայագետի համառոտ գրվածքը, որ տեղ է գտել «Սյունյաց

Զանգակատունը: Կառուցվել է 1896–1906 թվականներին՝ Խրիմյան Հայրիկ Ամենայն հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ ու հոգածությամբ:

երկիր» թերթի՝ Գրիգոր Տաթեւացուն նվիրված համարում (25 սեպտեմբեր 2010 թ.):

...Տաթեւի եպիսկոպոս Հովակիմի օրով Բռնակոթ գյուղի մի քանի անձեր շինել են իրենց ծախքով մի դամբարան Գրիգոր Տաթեւացու գերեզմանի վրա: Հովակիմ ծագումով Անգեղակոթցի էր եւ եպիսկոպոս գահակալ Տաթեւում 1775 թվականից մինչեւ 1796 թվականը, երբ Աղա Մահմեդ խանի արշավանքի հետեւանքով թողեց վանքը եւ գնաց Էջմիածին, ուր եւ մեռավ: Հավանորեն նրա խորհրդով են բռնակոթցիք հանձն առել հիշյալ շինությունը 1787 թվին: Դամբարանի վրա կա երկար արձանագրություն, որ բերում ենք ամբողջապես.

«Շնորհիւն Այ. շինեցաւ Սբ. մատուռս եւաթնալոյս ռաբունապետին եւ երկրորդ Ոսկեբերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին Սբ. Գրիգորի Տաթեւացւոյն ձեռամբ բազմաշխատ եւ աւգտաջան Սիւնեաց պետի Տն. Յովակիմայ Սիւնեցւոյ արդեամբ եւ ծախիւք բռնակոթեցւոց, այսինքն՝ Տր. Գէորգ, Տր. Յակոբ եւ Տր. Յարութիւն քահանայիցն. նաեւ Կարապետին եւ Մկրտչին, Յակոբջանին, Սիմիոնին, Ադդէին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին, Քարամղուլոյն (Քարամօղլոյն, Մարամօղլոյն, հավանորեն), Ստեփանին եւ Յաւնանին, Մօսեսին, Մկրտչին, Շահնազարին եւ Աթատուրին. այլ եւ բարեպաշտուհի կանանցն Նազլուին, Հուրիզատին, Մարիամին, Գուլփարիին, որոնց յիշատակն ապրնութեամբ եղիցի եւ աղաւթք Սրբոյս Գրիգորի ի վերա նոցա լիցի, ամէն: Կառուցաւ Սբ. մատուռս ի հայրապետութեան Սբյ. գահին Էջմիածնի Տն. Ղուկասու ի ռմլչ թուոջս մերում յաւուրս Փանահեան իբրահիմ խանին»:

Այստեղ թված անձերի ժառանգները կան մինչեւ այժմ: Տեր Գեւորգի թոռան թոռն է ուսուցիչ Խորենի, որ սպանվեց Գորիսում՝ որդի Տեր Խորեն քահանայի Տեր Գեւորգյան: Տեր Հարությունի տունն էլ քահանայական մնացել է մինչեւ այժմ: Այս տանն է պատկանում Տաթեւի հոգեւոր կառավարության երկարամյա քարտուղար Պետրոս Տեր-Հարությունյան: Հակոբջանանց, Կարապետանց, Ավակիմանց (Աղակիմոնց), Քերամանց եւ այլն տները, որ ցայժմ հայտնի են Բռնակոթում, հիշված անձերի անուններն են կրում:

Ադդեն՝ նախահայր է այն տոհմի, որ կոչվում է Ադոնց: Արդյո՞ք Ադի՝ կրճատ ձեւն է Ադդեի-ի, թե այլ ծագում ունի, թողնենք: Ամեն դեպքում արձանագրության

գրողն այդպես է հասկացել եւ, հավանորեն, որեւէ հիմք է ունեցել: Այս Ադդեհի որդին քահանա էր եւ անունը՝ Տեր Ավետիք: Սա երեք որդի ուներ՝ Առաքել, Գրիգոր եւ Միհրաբ: Վերջինիս որդին եւս կոչվում է Ավետիք (Ավետիս):

Տեր Ավետիք սպանված է թուրքերից եւ որպես նահատակ թաղված է հին Գորիսի եկեղեցու դռան:

* * *

Գրիգոր Տաթեւացու ներկայիս տապանաքարի մասին ուշագրավ պատմություն է ներկայացրել Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը («Սյունյաց երկիր», N16, 25 սեպտեմբերի 2010 թ.):

Ահա՝ «Երբ 1993 թ. նշանակվեցի թեմի առաջնորդ, բնականաբար, առաջին գործս եղավ այցելել Գրիգոր Տաթեւացու գերեզմանին, բայց ցավով տեսա, որ չկա գերեզմանաքար. շրջակայքն անշուք ու անմաքուր էր: Իրապես ցավալի էր, որ այդպիսի մեծության գերեզմանը մնացել էր անշուք վիճակում: Սկսեցի մտմտալ, թե ինչ կարելի է անել:

Տակավին ուսանող էի՝ գիտեի, որ Վազգեն կաթողիկոսն իր համար Իտալիայից մի գեղեցիկ մարմարյա շիրմաքար է բերել տվել:

1980-ականներից նրա առողջական վիճակը պարբերաբար վատթարանում էր:

Նա այդ քարի հետ, փաստորեն, 15 տարի «ապրեց», ձանձրացավ եւ նորը բերեց, որ այժմ դրված է նրա շիրմին, իսկ հինը մնաց պահեստում. առժամանակ մոռացան դրա գոյության մասին:

Նրան հաջորդած Գարեգին 1-ին կաթողիկոսը բուժվում էր Ամերիկայում, ես էլ Տաթեւում էի, հանկարծ հիշեցի Վազգեն 1-ինի տապանաքարի մասին: Անմիջապես գնացի Էջմիածին, գտա այն, համապատասխան ձեւակերպումներ արեցի, թե իբր Վեհափառը տվել է իր համաձայնությունը, եւ ներկայացրի եկեղեցական խորհրդին:

Հընթացս զանգեցի Գորիսի ճարտարապետ Սեւադա Զաքարյանին եւ խնդրեցի շիրմաքարն այնպես տեղադրել, որ ոչ մեկն այլեւս չկարողանա տեղաշարժել:

Երբ Վեհափառը վերադարձավ Ամերիկայից, գնացի մոտն ու ասացի, թե մեղք եմ գործել եւ պատմեցի եղելությունը:

Սկզբից մի քիչ նեղսրտեց. «Բա ինչո՞ւ, քեզ ո՞վ իրավունք տվեց, քարն ինձ համար էի նախատեսել»: Բայց հետո տեղի տվեց՝ ասելով՝ «Եթե Գրիգոր Տաթեւացու համար ես տարել շիրմաքարը, ընդունելի լինի...»:

Տաթեւի մատենադարանը

Ստեղծվել է 10-րդ դարում՝ Տաթեւի վանքին կից:

Սելջուկների արշավանքի ժամանակ՝ 1169-ին, ինչպես Տաթեւի, այնպես էլ շրջակա վանքերի ձեռագրերի ապահովության համար դրանք փոխադրվել են Բաղաբերդ (ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ 10 հազար մատյան): Սակայն այդ մատյանները հրո ճարակ են դարձել կամ անհետացել:

Այդ ողբերգության առիթով ուշագրավ է Մորուս Հասրաթյանի գրառումը՝ *«1170 թվականին... 10 հազար ձեռագիր մատյանները կողոպտվեցին եւ ի սպառ այրվեցին, ոչնչացան: Սա բովանդակ Հայաստանի եւ Առաջավոր Ասիայի պատմության եւ մշակույթի ստացած մեծագույն հարվածներից մեկն էր, ի մասնավորի Սյունիքին հասած մեծագույն աղետներից մեկը, որովհետեւ միաժամանակ նրա հին պատմության մի զգալի մասը եւս ջնջվեց վաչկատուն ցեղերի այդ բարբարոս արարքով»:*

Հետագայում մնացած ձեռագրերի

հիման վրա մատենադարանը շարունակել է գործել, նաեւ հարստացել, իսկ Տաթեւի համալսարանի շրջանում՝ առավել ծոխացել: 1435-ին մատենադարանը կողոպտվել է օտար նվաճողների կողմից: Տաթեւի մատենադարանը գոյատեւել է մինչեւ 1911-12 թվականները:

Այնուհետեւ 140 ձեռագիր մատյան փոխադրվել է Էջմիածին, որոնք էլ հետագայում տեղափոխվել են Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:

Տաթեւի վանքը՝ ձեռագրային մշակույթի համազգային կենտրոն

Սույն հրապարակմանը կից առաջին անգամ ընթերցողին կներկայացվի «Տաթեւի գրատան ձեռագրերը» (1910 թ.) մատենագիտական ցանկ, որում ընդգրկված է 147 ձեռագրի անվանում:

Բայց նպատակահարմար ենք գտնում առանձնացնել մի քանի ձեռագրի անվանում, որը եւս մեկ ապացույց կլինի այն իրողության, որ Տաթեւի վանքը դարեր շարունակ մշակութային հզոր կենտրոն է եղել: Այդ շարքում, անշուշտ, առանձնանում է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկը (1297 թ.): Դրա ինքնագիր օրինակը մեզ չի հասել: Մեզ հասել են ընդօրինակված տարբերակները (առաջին ընդօրինակումը 1513 թ.):

Տաթեւի վանքում է գրվել Ստեփանոս Օրբելյանի «Հակաճառութիւն ընդդէմ երկաբանակաց» աշխատությունը (1303): Դա Հայոց Գրիգոր Անավազեցի կաթողիկոսի ունիթորական գործունեության մերժման աշխատություն է, որի հնագույն օրինակը մեզ է հասել Գլաձորի համալսարանի գրիչների ընդօրինակությամբ:

Տաթեւում՝ Խաչատուր Կեչառեցի վարդապետի խնդրանքով է գրվել եւ ընդօրինակվել Ստեփանոս Օրբելյանի Սուրբ Կաթողիկեին նվիրված ողբը:

Տաթեւում է ընդօրինակվել Հովհաննես Օրբել եպիսկոպոսի Ավետարանը, որը գրիչը նվիրել է մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանին:

Տաթեւի հարուստ մատենադարանի գրապահոցում է պահվել Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք Պարապմանցի» ընտիր եւ ստույգ օրինակը, որից մի մատյան է արտագրել Գրիգոր Տաթեւացին՝ իր ուսուցիչ Հովհան Որոտնեցու համար:

Տաթեւի վանքում է Գրիգոր Տաթեւացին գրել իր մի քանի գործեր՝ «Մեկնութիւն Քերականին», «Գիրք հարցմանց», Քարոզների ժողովածուն, մեկնել է Մատթեոսի Ավետարանը եւ այլն:

Ձեռագրերի ընդօրինակության մեջ հմտացել են մի քանի տասնյակ գրիչներ:

Տաթեւի վանքի վիմագրերը

Դա խոսակցության մի առանձին եւ հարուստ նյութ է: Վիմագրերի մի զգալի մասն ամփոփված է «Դիվան հայ վիմագրության» ժողովածուի 2-րդ պրակում (Երեւան 1960):

Ժողովածուում ներառված արձանագրությունները ժամանակին հավաքել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը: Այդ ժողովածուում ներառված են վանքին առնչվող մոտ հարյուր արձանագրություն:

Տաթեւի վանքի վիմական արձանագրությունների մի ամբողջության էլ հանդիպում ենք Երվանդ Լալայանի խմբագրությամբ հրատարակված նյութերում, որոնք զետեղված են «Ազգագրական հանդեսի» Սիսիանի տարածաշրջանին նվիրված թողարկումի մեջ:

Վիմական արձանագրություններից մի քանիսը կցում ենք սույն հրապարակման թերթային տարբերակին:

Տաթեւի վանքը՝ մետրոպոլիտության գահանիստ

Հայ եկեղեցու պաշտոնական համակարգում մետրոպոլիտական աստիճանի հաստատման եւ նրա իրավասության սահմանների որոշման համար հիմք ծառայեցին Նիկիայի 1-ին (325 թ.) եւ Անտիոքի (341 թ.) տիեզերական ժողովների որոշումները:

Ներսես Մեծն առաջինը մետրոպոլիտություն շնորհեց Մարդպետական եպիսկոպոսին, ապա նաեւ Սյունյաց թեմի առաջնորդին:

Առաջնայնության այս փաստը պայմանավորված էր հիշյալ ավատական տների եւ հոգեւոր դասի կատարած ակնառու դերով ինչպես քաղաքական ասպարեզում, այնպես էլ երկրի հոգեւոր-մշակութային կյանքում:

Սկզբնական շրջանում մետրոպոլիտության գահանիստը Շաղատ գյուղաքաղաքն էր, ապա՝ Տաթեւի վանքը:

Սյունիքի մեծահամբավ մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը նաեւ հռչակվեց Մեծ Հայքի պրոտոֆրոնտես, ասել է թե՝ նախաթոռ արքեպիսկոպոս:

Սյունիքի մետրոպոլիտությունը վերացվեց 1837 թ.:

Հանիրավի, տասնյակ տարիներ թափուր մնալուց հետո, Վազգեն Ա-ի օրհնությամբ եւ կարգադրությամբ 1989 թ. ապրիլի 10-ին վերահաստատվեց Սյունյաց եպիսկոպոսական աթոռը՝ հոգեւոր կենտրոն ունենալով Սուրբ Տաթեւի վանքը: Ավելի ուշ, սակայն, առաջնորդանիստ եկեղեցի հայտարարվեց Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին::

Տաթեւի վանքը՝ ներշնչման ակունք հայոց լեգենդ-զորավարների համար

1918 թ. օգոստոսի 2-ին Զորավար Անդրանիկն իր հեծյալներով ու գաղթականներով մոտեցավ Տաթեւի վանքին:

Վանքի հոգեւորականները վանահոր գլխավորությամբ Անդրանիկին դիմավորեցին տաճարի մուտքի մոտ, ապա ճաշկերույթ կազմակերպեցին նրա պատվին:

Զորավարը եւ սպայակազմը գիշերեցին վանքում, զինվորներն ու գաղթականությունը՝ տաճարին հարող տարածքներում:

Օգոստոսի 3-ին՝ կեսօրից առաջ, Անդրանիկը հեծելազորի հետ Տաթեւից ճանապարհվեց դեպի Զանգեզուր գավառի վարչական կենտրոն Գորիս քաղաք: Իսկ ահա 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթեւի վանքում տեղի ունեցավ համազանգեզուրյան 1-ին համագումարը:

Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ներկա էին ըստ բնակչության թվի ընտրված պատգամավորներ, գավառի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչ Զանգեզուր-Գողթանի սպարապետ Գարեգին Նժդեհը, ընդամենը 118 մարդ:

Համագումարը, ըստ էության, ստանձնեց Սահմանադիր ժողովի դեր: Համագումարը Զանգեզուրը հայտարարեց ինքնավար:

1921 թ. ապրիլի 26-ին Տաթեւի վանքում կայացավ Ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության 2-րդ (արտակարգ) համագումարը: Համագումարը Լեռնահայաստանի վարչապետ ընտրեց Գարեգին Նժդեհին:

Այդ ամենից մոտ 200 տարի առաջ... 1722-ին՝ առաջին հաղթական ճակատամարտերից հետո, Տաթեւի վանք այցելեց Դավիթ-բեկը:

Զանգակատունը

Դա, ժամանակագրությամբ, Տաթեւի վանական համալիրի ամենանոր կառույցն է: Ըստ Միհրան Բադիշյանի՝ Զանգակատունը կառուցվել է 1896-1906 թվականներին՝ Խրիմյան Հայրիկ Ամենայն հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ ու հոգածությամբ:

Զանգակատունը տուժել է 1931-ի ապրիլյան երկրաշարժի հետեւանքով:

Զանգակատան վերակառուցման նպատակահարամարությունը դեռեւս քննարկվում է:

Ինչպես իմանում ենք Միհրան Բադիշյանից, Զանգակատան վերականգնման նախագիծը պատրաստվել է դեռեւս 1987-ին, իսկ 1988-ին Մոսկվայում մրցանակ է շահել, սակայն Խորհրդային Միության փլուզմանը զուգահեռ այդ հարցն օրակարգից հանվել է:

Տաթեւի վանքը՝ հոգեւոր երաժշտության բնօրրան եւ կերպարվեստի հավերժական թեմա

Տաթեւի վանքը դարեր շարունակ եղել է հոգեւոր երաժշտության բնօրրան: Ունենք մի փաստ, որ այս առումով առանցքային նշանակություն ունի: Գրիգոր Տաթեւացուն է պատկանում «Շարակնոցի» վերջին խմբագրությունը:

«Շարակնոցը» Հայ առաքելական եկեղեցու ամենախոշոր երաժշտաբանաստեղծական ժողովածուն է, որում այսօրվա տեսքով կամ 19-րդ դարում ձայնագրված երաժշտության տեսքով ամփոփված է 1800-ից ավելի շարական:

Ահա դրա վերջին խմբագրումը պատկանում է Սուրբ Գրիգոր Տաթեւացուն, որը, բոլոր հիմքերն ունենք ասելու, կատարվել է Տաթեւի վանքում: Թերեւս նրանից հետո այս խմբագրմանը մասնակի միջամտություն է արել իր աշակերտը՝ Թովմա Մեծոփեցին:

Ուշագրավ են Տաթեւի վերաբերյալ հետեւյալ գեղանկարները՝

- Ռիչարդ Յարալյան, Տաթեւի վանքը, 1967,
- Փանոս Թերլեմեզյան, Տաթեւի վանքը, 1929,
- Փանոս Թերլեմեզյան, Լեռներ. Տաթեւ, 1929,
- Փանոս Թերլեմեզյան, Տաթեւի վանքը,
- Փարավոն Միրզոյան, «Սյունիք» պաննո,
- Գրիգոր Շարբաբչյան, Տաթեւ, 1924,
- Գրիգոր Շարբաբչյան, Տաթեւ. խաչքար
- Գրիգոր Շարբաբչյան, Տաթեւ գյուղի եկեղեցու քարերը,
- Գրիգոր Շարբաբչյան, Տաթեւ. խաչքար,
- Գրիգոր Շարբաբչյան, Տաթեւի վանքի արեւելյան կողմը,
- Գրիգոր Շարբաբչյան, Ընդօրինակություն Տաթեւի վանքի ձեռագրերից,
- Գրիգոր Շարբաբչյան, Տաթեւի վանքի կալը,
- Պարոնյան-Հովսեփյան, Տաթեւ, 1946,
- Էդուարդ Իսաբեկյան, Տաթեւ, 1953,
- Էդուարդ Իսաբեկյան, Տաթեւ, 1959,
- Հովհաննես Զարդարյան, Տաթեւի լեռները, 1957
- Հովհաննես Զարդարյան, Աշունը Տաթեւում, 1957,
- Հովհաննես Զարդարյան, Ուշ աշուն Տաթեւի լեռներում, 1957,
- Շավարշ Վաղարշակյան, Տաթեւ, 1966,
- Դեղձանիկ Մխիթարյան, Տաթեւի վանքի շրջակայքում, 1968,
- Սուրեն Պիպոյան, Տաթեւի կոմունիստների գնդակահարումը, 1972,
- Հակոբ Կոջոյան, Կոմունիստների գնդակահարումը Տաթեւում (էսքիզ),
- Եվգենի Լանսեր, Մատուռը վանքի դարպասի վրա. Տաթեւ, 1926,
- Եվգենի Լանսեր, Լուսամուտի արտաքին բացվածքը, 1926,
- Եվգենի Լանսեր, Լուսամուտ՝ խոյակների մեջ բացված (Տաթեւ, XIII դարի վերջ):

Հանրահայտ է Ամենայն հայոց գուսան Աշոտի «Սերս վանքում Տաթեւի» անզուգական երգը:

Սերս վանքում Տաթեւի՝
մոմեր վառած կաղոթեր,
Մոտեցա, որ համբուրեմ, ասաց՝
տղա ամոթ է,
Ասի՝ երդվիր, քո սերն եմ,
սրբի դուռը անարատ,
Առնեմ նազուկ ծոցիկիդ
խնկաբույրը անարատ:

Սարեր, ձորեր վկա են, հանդ ու
չոլեր վկա են,
Ախս մինչ երկինք հասավ,
երկնի աստղեր վկա են:

Վանքի վառվող մոմերը շլացրին
ինձ մի պահ,
Սրտիս խոսքը չավարտած, նայեմ,
տեսնեմ նա չկա:
Ասի՝ Աստված, փառքդ շատ,
էս ինչ հրաշք երազ էր,
Չլինի՞ թե բախտն է իմ,
գեղեցկության աստվածն էր:

Նորեն տեսա հանդեսում սրբուհուն
իմ երազի,
Ասի՝ բախտս գտել եմ, կհասնեմ
իմ մուրազին,
Ասես սիրտն ինձ նվիրեց, երբ աչքով
սեր խոստացավ,
Միրոն թախիծն ինձ պատեց, երբ որ
թողեց, հեռացավ:

Նա իր զմրուխտ թեւերով
բարձրունքները ինձ տարավ,
Ասաց՝ դու լավ կերգես, թե մնաս
սիրուս ծարավ,
Գուսան Աշոտ քո յարի սուրբ
մաղթանքը կատարվեց,
Այնքան պիտի երգ հյուսես, երգ
հյուսելով ցամաքես:

Սարեր, ձորեր վկա են...

Որպես վերջաբան

Տաթեւի վանք կատարած ուխտագնացությունն ավարտեցինք վանահայր Միքայել վարդապետ Գեւորգյանի հետ զրույցով:

2007-ի օգոստոսից նա Տաթեւի վանքում է: Ի դեպ, առաջին անգամ Տաթեւի վանք է այցելել ոտքով, այն էլ՝ Սուրբ Էջմիածնից:

Նրա վանահայրության տարիներին շատ բան է մտել դրական հունի մեջ: Ամենակարեւորը՝ ուխտավորները նրան հավատում են, նրան վստահում են...

Հանդիպման վերջում գրեթե նույնն ասաց, ինչ ասել էր 2017-ին՝ «Սյունյաց երկրին» տված հարցազրույցում:

Ահա՝ *«Մեր դժվար ժամանակներում չպետք է թույլ տանք, որ սյունեցու լավագույն հատկանիշները կորչեն, թույլ չտանք՝ օտար բարքերը ներխուժեն, ավելացնենք բարին, որպեսզի չարը պակասի: Լույս ծագեցնենք հոգիներում, Սյունիքի երկնքում, որ պատուհասված խավարն ինքն իրեն փարատվի, հեռանա:*

Սյունեցին պիտի հիշի, որ ինքը սյունեցի, հայ քրիստոնյա է, ինչը ես համարում եմ առանձնաշնորհ պարգեւ եւ տիտղոս»:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Տաթեւի վանքի տարածքի վիմական արձանագրություններից մի քանիսը

ըստ Սեդրակ Բարխուդարյանի, Դիվան հայ վիմագրության, 2-րդ պրակ, Երեւան 1960թ.

1. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևմտյան պատի հարավային մասի ներքևում.

. . . . . ՈՅԹՈՒԱԿԱՆՍ
. . . . . ՍԱՐԴԻ:Դ:
. . . . ՈՎԱՆԷՍԻՍՈՒՆԵԱՑԵՊԻՍ
. . . . . ԱՈՂՈՄՈՆԻԿ
. . . ՍԿԻՋԲՆԱՐԱՐԱՔՇԻՆԱԾ
ՈՅՍ

ՑԱՄԻՆ ՑՈՐՈՒՄ ԹՈՒԱԿԱՆՆ ՀԱՑՈՑ : ՑԽԴ : ԷՐ, ԵՒ ԶԱՏԻԿՆ Ի ՆԱԻԱՍԱՐԴԻ Ի : Դ :. ԵՍ ՏԷՐ ՑՈՎՀԱՆՆԷՍ ՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԴԵՑԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՆԵԱՑ ԶԿՆԻ ՏԵԱՌՆ ՍԱ-ՂԱԻՄԱԻՆԻ, ԱՐԱՐԻ ՍԿԻՋԲՆ ՇԻՆՈՒԱԾՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑՍ[1]:

Այժմ կիսեղծ այս արձանագրությունը իր ժամանակ օգտագործել է Մտ. Օրբելյանը, որից արտագրել են Ալիշանն ու Կոստանյանցը։ Տալիս ենք տեղում պահպանված մասերը և Օրբելյանի վերծանությունը։ Գատմագիրը պահպանելով բովանդակությունը, շարադրել է յուրովի։

Մտ. Օրբելյան, 224, Ալիշան, 227.
Կոստանյանց, 4.
Հուսանկ. տախտ. I, 1.

2. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևմտյան պատի հարավային մասի ներքևում. նախորդին կից հարավից։

ՀՐԱՄԱՆԱՒ ԱԾԱՊԱՀ
ՄԵՐԱՆՑԵԻՅԱԻԱՐՈՒ
ԹԵԱՆԲԻՄՈՑԿՐԱՒՆ
ԱՒՈՐԱՑԵԻԻՆՈՅՆՄԱ
ՐԻՈՔԻՅԵԻԹՆԵՐՈՐԴ-
ԱՄՍՈՅՍՅԱՐԱՑԿԱ
ՆԿՆԵՑԱԻԱՐՁԱՆՍ

ՀՐԱՄԱՆԱՒ ԱԾԱՊԱՀ ՄԵՐԱՆՑ ԵԻ ՑԱԻ-ԺԱՐՈՒԹԵԱՆԲ ԻՄՈՑ ԿՐԱՒՆԱՒՈՐԱՑ ԵԻ ԻՆՈՑՆ ՄԱՐԻՈՔ Ի ՑԵԻԹՆԵՐՈՐԴ ԱՄՍՈՅՍ ՅԱՐԱՑ ԿԱՆԿՆԵՑԱՒ ԱՐՁԱՆՍ:

Արձանագրությունը վերաբերում է Սլուն-գավազանի շինությանը. «Ի ՆՈՅՆ ՄԱՐԻՈՔ» խոսքերը վերաբերում են 1 արձանագրության : ՑԽԴ : թվականին։ Երկու արձանագրությունները իրար կից են և միաժամանակ գրված։

Հուսանկ. տախտ. I, 2.

12. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ. հարավային մուտքի արևմտյան կողին. հինգ շարք երեսպատման քարերի վրա կիսեղծ արձանագրություն.

. . . . ԷՄՈՒՐԲԵԿԵՂԵՑՈՅ
. . ԱՌԱՔՆՈՐԴԻՄԵՂՈՅՍ . . .
. . . ՊԵՏՐՈՍՐՏՐՍՈՂՄՈ . . .
. . . ԱՅԼՄԻԱԲԱՆՔՍԿԱՐ . . .
. ՑԻՆԻՆՁԵԱՒՐՅԱՄԻՄԱ
ՈՔՈՐԱՆԽԱՓԱՆԿԱՄԱ
ՐԵՆՈՆՓՈՅԹԱՌՆԷՔ . . .
. . . Ս ՅՁԸՅԱՅՐԱՅ . . .
. . . ՆՔՈՒԵԱԼ . . . ՅՐ
. . . ԿԱՄՍՈՒՉՔՆԱՔՅՆԵԱԼ
ԵՆԻՑԻՆ

ԵՏՈՒ Ի ՍՐԲ ԵԿԵՂԵՑՈՑՍ | ԵՒ ԱՌԱՔՆՈՐԴԻՔ ՄԵՂՈՑՍ ՏՐ | ՀԱՅՐԱՊԵՏ ՈՒ ՏՐ ՍՈՂՈՄՈՆ ԵՒ | ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ԿԱՐԳԵՑԻՆ ԻՆՁ | Ե: ԱԻՐԺԱՄ Ի ՏԱՐՈՂ. ՈՐ ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵՆ, ՈՐ ԱՆՓՈՅԹ ԱՌՆԷ ՁԻԿԱՐԳԵԱԼ ԺԱՄՍՆ: ԵԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ | ՌՍԿԿ ԱՏԱՐԻՁՔՆ ԱՒՐՀՆԵԱԼ | ԵՂԻՑԻՆ:

Սկզբի մասի քարերը լրիվ հողմեսահարված են, միայն երկրորդ շարքի վրա երևում է ԵՊԻՍԿՈՊՈՍ բառը։

Ներքևի մասից, հավանաբար այլ արձանագրության սկիզբ՝ ժածկված է ինչ որ նոր կառուցումով։

Տէր Հայրապետ և Տէր Սողոմոն անուններին միասին հիշատակումն ապացույց է, որ վերաբերում է 13-րդ դարի վերջին տասնամյակին։

4. ՏԱԹԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ հյուսիսային՝ անկյունում ընկած պատի վերին մասի մեջ միացած մի բեկորի վրա.

. . . . ԷԱՋՍԻԻՆ

ՈՂՈՎԱՆՆԷՍ ՁՍԻՆԻԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՑԻՇԵՑԷՔ.

Հուսանկ. տախտ. I, 4.

41. ՏԱԹԵՎ ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան մուտքի ճակատակալ կամարը քարի վրա. 8 տող.

Ի ԹՎ: ՉԽԴ: | ՁՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵ | ՏՐԱՊԱՒԻՏ ՍԻՆԵԱՑ ՈՐ Է ՊՈԱԻ | ՏԱԻՖՐԱԻՆՏԷՍ՝ ՀԱՈՑ ՄԵԾԱՑ ՈՐ | ԻՒ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱԻՃԻՆ ՇԻՆՈՂ ՍՐ ԵԿԵՂԵՑՈՑՍ ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՌ.

Ջայլյան Բ. 302. Փափազյանց Ե. Ալիշան 234, Լալայան Գ. 141. Հուսանկ. տախտակ V,19. (յուսանկարի մեջ ժամ կողմի ներքին անկյունը ծածկված է փյած մեծ բեկորով)։



3. ՏԱՔԵՎ. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևմտյան պատի կենտրոնում. մուտքից վեր ադուցված հիշատակարան—խաչքարի շրջանակներին.

Զ ՄՐՅՈԿԱՆԷՍՇԻՆՈՂ ՍՐԲՈԵԿԵՂԵՑԵԱՑՍ ՄՐՅԻՇԵԱ

ԶՏՐ ՅՈՎԱՆԷՍ, ՇԻՆՈՂՍՐԲՈ ԵԿԵՂԵՑԵԱՑՍ, ՏՐ ՑԻՇԵԱ:

Վերջին տողը գրված է խաչքարից վեր երևապատման քարի վրա. լուսանկարում չի երևում։

Փոփոխյանց, Ե.
Լուսանկ. տախտ. I, 3.



36. ՏԱՔԵՎ. ՍՐԱՀ. ներքուստ. փլատակների մեջ ընկած խաչքարի ճակատին և շրջանակներին.

ԿԱՄԱՒՆԱՅԵՍ ԱՌԱՔԵ
ԼՍՆԵԱՑԷՊՍԿՊՍԿԱՆԳՆԵՑԻ
ԶԽԱ ՓՐԿ ԹԻ ՀՈԳ ՄԵԾ ՄՈՐ ԶՐԱ ՆԱՊ ԳՐԻ ԻՅԻ ՑԷ Տ-
ԶՍԻ ՈՒ Ի՞ ՈՅ ՀՈ- Ի՞- ԲՈՒ ԵՏ ԳՈՐ ՇԵ - - - -
ՊԾ
ԹԿ

ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵԱՑ ԷՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ ՄԵԾ ՀՈՐ ԻՄ ՈՐ Ի ՔՍ ԶՐԱԲՈՒՆԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻ ՑԻՇԵՑԷՎՔ Ի՝ ՏՐ՝...:ՊԾ: ԹՎ.

Առաջին տողի բաց տեղը գրութեան ժամանակ թողած է եղել։

Արձանագրութեան տառերը մաշված ու թեթևված են։ Խաչքարը շինված է եղել հատկապես պատի մեջ ադուցվելու համար։

Հիշատակված Գրիգոր Բաբունապետն անշուշտ Գրիգոր Տաթևացին է, իսկ Առաքել եպիսկոպոսը Տաթևացու քրոջ որդի և աշակերտ Առաքելն է, նշանավոր մատենագիր և տաղասաց։ Առաքելը նորոգել է այս սրահը «Ծ. խաչ իմն օժեալ ի լիշատակ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, և կառուցեալ լիւրմէ շինեալ գաւթին ի մէջ սեանն։ Ըստ Ե. Լալայանի «Գաւթի Բ. սեանն վրա։

Օրբելյան, 525։ Լալայան Գ. 143. 36
Լուսանկ. տախտակ IV. 16

38. ՏԱԹԵՎ. ՍՐԱՀ. արևելյան մասում. Գրիգոր Տաթևացու դամբարանի վրա արտաքուստ.



ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅՇԻՆԵՑԱՒ ՍԲ ՄԱՏՈՒՌՍ ԵՕԹՆԱԼՈՑՍ ԲԱԲՈՒԽՆԱ-
ՊԵՏԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՈՍԿԵԲԵՐԱՆԻՆ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԼԱՅԼ ՎԱՅՐՃԱՅ-
ՊԵՏԻՆ ՄԵԼՐՈՑ ԵՒ ԶՈՐԼՐՅՈՒՐՅԴ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՍԲՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵԼԻՅԱՑԻՈՑՆ
|ՁԵՌԱՄԲ ԲԱՋՄԱՇԽԱՏ ԵԼԻՅ ՕԳՏԱՋԱՆ ՍԻՆԵԱՑ ՊԵՏԻ ՏՆ ՅՈՎԱԿԻՄԱ|
ՍԻՆԵՑԻՈՑ. ԱՐԴԵԱՄԲ ԵԼԻՅ ԾԱԽԻՒՔ ԲՈՆԱԿՈԹԵՑԻՈՑ ԱՑՍԻՆՔՆ|

Տր Դէորգ Տր Յակոբ և Տր Յարութիւն քահանայիցն նաև Կարապետին և Մկրտչին, Յակոբջանին, Սիմիոնին, Ագդէին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին և Մարտիրոսին, Գաբրամղուլոն, Մտեփանին և Յոնանին, Յարութիւնին, Մովսէսին, Մկրտչին, Շահնազարին և Ածատուրին, այլև բարեպաշտուհի կանանցն Նազլուին, Հուրիղատին, Մարեամին, Դուլփարիին, որոց լիշատակն օրհնութիւն եղիցի և աղօթք որբոյս Գրիգորի ի վերա նոցա լինի, ամէն։ Կատուցաւ սր ի հայրապետութեան սրլ գահին էջմիածնի Տն Ղուկասու ի ՌՄԼԶ թուոջս մերում, յաւուրս Փանահեան Իբրահիմ խանին։

Վերջին երկրաշարժի ժամանակ սրահի և ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու փլած բեկորներն ամբողջովին ժածկել են Տաթևացու դամբարանը. արձանագրութիւնն գծագրված մասը տալիս ենք ըստ Փափազյանի լուսանկարի (ըստ լուսանկարի այդ մասը եղել է արևմտյան պատին արտաքուստ). մնացածը լրացնում ենք ըստ Լալայանի հրատարակութիւնն, մանրատառով։

Փափազյանց Ն.։ Լալայան, Գ. 135.

Տաթեւի գրատան ձեռագրերը

ՕՆՆԻԿ ԵԶԱՆԵԱՆ

* Տաթեւի վանական հաստատութիւնը ո՛չ միայն պատմական Սիւնեաց աշխարհի հոգեւոր վարչութեան կենտրոնն է եղել, այլեւ՝ այնտեղ ծաւալուած կրթական ու մշակութային գործունէութեան սիրտը, որը մերթ ուժգին եւ մերթ թոյլ, բայց միշտ բաբախել է, սկսած իր հիմնադրման օրից (Ժ. դար) ընդհուպ մինչեւ ԺԹ. դարի կէսերը:

Մշակութային այդ կենտրոնը, որը վանական պարզ դպրոցից աճելով՝ ԺԴ. եւ ԺԵ. դարերում բարձրանում է համալսարանի աստիճանի, տուել է այնպիսի ականաւոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Յովհ. Որոտնեցին, Գր. Տաթեւացին, Մատթէոս Ջուղայեցին եւ Առ. Սիւնեցին, որոնց իմաստասիրական, աստուածաբանական եւ գեղարուեստական գործերը միջնադարեան հայ մատենագրութեան մէջ ամենապատուաւոր տեղերից մէկն են գրաւում:

Տաթեւի վանական դպրոցն ունեցել է նաեւ իր գրատունը, ուր դեռեւս ԺԲ. դարի երրորդ քառորդում կենտրոնացուած էին հազարաւոր մատեաններ: Պատմիչ Ստ. Օրբէլեանը, խօսելով սելջուկների կողմից Բաղարերդ ամրոցում 1171 թուականին աւարի ենթարկուած վանքապատկան արժէքների մասին, յիշատակում է նաեւ Տաթեւի գրատան ձեռագրերը՝ «թուով աւելի զան զտասն հազար»[57]:

Այնուհետեւ այդ գրատան ձեռագրերի քանակի մասին մինչեւ անցեալ դարի 60ական թուականները հաւաստի տեղեկութիւններ չեն պահպանուել: ԺԴ–ԺԵ. դարերում, երբ Տաթեւի դպրոցն իր ծաղկումն էր ապրում, ոչ միայն որպէս կրթական կենտրոն, այլեւ որպէս գրչութեան արուեստի բազմաբեղուն օջախ, անշուշտ, պէտք է ունեցած լինի նաեւ իր հարուստ մատենադարանը:

Եթէ այսօր, փաստական տուեալների բացակայութեան պատճառով, չենք կարող այդ գրատան մատեանների թուական քանակի մասին դատողութիւններ անել, ապա այդտեղ եղած եւ հետագայ ընդօրինակութիւնների համար նախագաղափար հանդիսացած ձեռագրերի բովանդակութեան մասին մեզ որոշակի գաղափար կարող են տալ ԺԴ–ԺԸ. դարերում Տաթեւի վանքում ընդօրինակուած եւ մեզ հասած այն 109 ձեռագրերը[58], որոնք յատկապէս աչքի են ընկնում իրենց բովանդակած իմաստասիրական, կրօնա-դաւանաբանական եւ կանոնական նիւթերի բազմազանութեամբ:

Դժբախտաբար, մեր համարեա բոլոր վանական գրատները, քաղաքական ու տնտեսական պայմանների բերումով, երբեմն էլ վանահայրերի ու վանական միաբանների անհոգութեան պատճառով, անուշադրութեան են մատնուել, իսկ ձեռագրերը, որոնց մէջ քիչ չեն եղել հազուագիւտ օրինակներ, կամ օտարացել են՝ առ ու ծախի առարկայ դառնալով, եւ կամ, անխնամ մնալով՝ փտել ու ոչնչացել են: Այս տեսակէտից Տաթեւի գրատունն ու նրա ձեռագրերը բացառութիւն չեն կազմում:

Ձեռագրերի կորստեանը նպաստել է նաեւ համապատասխան գոյքամատեաններ պահելու սովորութեան բացակայութիւնը: Միայն անցեալ դարի 60ական թուականներից սկսած, երբ առանձին հետաքրքրութեան առարկայ դարձան Էջմիածնի գրատան ձեռագրերը, եւ Թիֆլիսում Կարենեանցի հրատարակութեամբ 1863 թուականին լոյս տեսաւ նոյն գրատան՝ Դանիէլ Շահնազարեանի կազմած «Մայր ցուցակ»ը[59], առանձին բանասէրներ սկսեցին ուշադրութիւն դարձնել նաեւ միւս վանքերի ձեռագրական հաւաքածուներին:

Վերջին հարիւրամեակում, սկսած 1863 թուականից, տարբեր անձանց կողմից 8 ան-

---

* Տպուած՝ «Բանբեր Մատենադարանի», հտ. 9, Երեւան, 1969, էջ 417-32:

57 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 336:

58 Արտաշէս Մատթէոսեան, Գրչութեան վայրերի քարտէզը (անտիպ): Տե՛ս Մատենադարան, Քարտէզարան չ՚գր 3:

59 Մայր ցուցակ ձեռագիր մատեանից գրագրարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. Տպագրեալ հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց. Մախուք ի Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարենեանց յոգուտ գպրոցի ժառանգաւորաց Սրբոյ Էջմիածնի, Թիֆլիս, 1863. Ը., 230 էջ. Նկարագրուած է 2340 ձեռագիր (այսուհետեւ՝ Դանիէլ վ. Շահնազարեան, Ցուցակ):

գամ (1863, 1864-1865, 1866, 1868, 1893, 1899, 1904, 1910) ցուցակագրուել են Տաթեւի գրատան ձեռագրերը, սակայն դրանցից եւ ոչ մէկը, դժբախտաբար, չի հրատարակուել: Այդ ցուցակներն են.

Ա. Գալուստ Շերմազանեանց, Ցուցակ գրչեալ մատենից մեծանուն վանիցն Ստաթէի առաքելոյ, [Տաթեւ, 1863]: Սոյն ցուցակն այժմ գտնուում է Փարիզի ազգային Թանգարանում 296 թուահամարի տակ[60]: Դրանից Մ. Մագիստրոսի ձեռքով կատարուած մի ընդօրինակութիւն կայ նաեւ Մաշտոցեան Մատենադարանում[61]: Այդ ցուցակում 1-234 թուահամարների տակ, արձանագրուած են 1863 թուականին Տաթեւի գրատանն առկայ բոլոր 187 ձեռագրերը, նրանց խիստ համառօտ բովանդակութեամբ, առանց օժանդակ որեւէ տուեալի: Թուահամարների (1-234) եւ նկարագրուած ձեռագրերի փաստական քանակի (187) տարբերութիւնն արդիւնք է այն բանի, որ նախ՝ Հ՝ 140ի տակ նշուած է 30 Աւետարան (+ 29), ապա՝ մի շարք թուահամարների (Հ՝ 142-195, 203, 204, 209, 213-231) վրայով թռիչք է կատարուած (- 76):

Բ. [Ցուցակ ձեռագրաց Տաթեւու, Տաթեւ, 1864-1865]: Սոյն ցուցակը չի պահպանուած: Նրա գոյութեան մասին ենթադրում ենք 1868 եւ 1893 թուականներին կազմուած ցուցակներից[62], որտեղ հերթական թուահամարներին զուգահեռ, բերուած են նաեւ 61 ձեռագրերի հին թուահամարները: Եղե՞լ է այդ հին թուահամարներին համապատասխանող ցուցակ. հաւանաբար եղել է, որովհետեւ առանց նման ցուցակի այդպիսի թուահամարներ չէին լինի: Արձանագրուած թուահամարներից ամենափոքրը 17ն է, իսկ ամենամեծը՝ 123ը: Եթէ ենթադրելու լինենք, որ 123ը վերջին սահմանն է (մի բան, որ սակաւ հաւանական է) եւ դրան աւելացնենք 16 կրկնուած թուահամարներ (48ը՝ 3 անգամ, 53ը՝ 2, 54ը՝ 2, 58ը՝ 2, 83ը՝ 2, 91ը՝ 2, 96ը՝ 2, 98ը՝ 3, 104ը՝ 2, 109ը՝ 3 եւ 118ը՝ 4) ապա ձեռագրերի ընդհանուր քանակը հաւասար կլինի 139ի:

Գ. Մեսրոպ Սմբատեանց, Ցուցակ [ձեռագրաց] գրատան Տաթեւու վանից. [Տաթեւ], 1866: Այս ցուցակի ուր գտնուելը մեզ յայտնի չէ: Այդ մասին տեղեկանում ենք Մ. Սմբատեանցի «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ» աշխատութիւնից, ուր տալով Նախիջեւան գաւառի վանքերում ու եկեղեցիներում ընդօրինակուած եւ Տաթեւի գրատանը պահուող 13 ձեռագրերի նկարագրութիւնները, շեշտում է՝ «Ըստ ցուցակի գրատան Տաթեւու վանից, կազմելոյ յինէն ի 1866 ամի»[63]: Թէ քանի՞ ձեռագրի նկարագրութիւն է ամփոփում այդ ցուցակը, յայտնի չէ: Սակայն եթէ նկատի ունենանք, որ Մ. Սմբատեանցի ձեռքով 2 տարի յետոյ կազմուած ցուցակը բովանդակում է 91 ձեռագրի նկարագրութիւն, ապա հազիւ թէ տարբերութիւնը մեծ լինի: Վերապահութեամբ կարելի է ընդունել, որ 1866 թ. ցուցակը նոյնպէս ընդգրկել է 91 ձեռագիր:

Դ. Մեսրոպ Սմբատեանց, Ցուցակ [ձեռագրաց գրատան Տաթեւու վանից, Տաթեւ], 1868[64]: Մ. Սմբատեանցի սոյն ցուցակն անխորագիր է: Ցուցակի 2րդ էջի աջ անկիւնում նշուած է՝ «Մեսրովբ, 1868 թիւ, ցուցակ»: Սոյն ցուցակն անուանական մի ցանկ է, ուր առանց մատենագիտական տուեալների եւ առանց հերթական համարների նշման՝ թուարկուում են 91 ձեռագրեր: Ցուցակի 3րդ էջում Յովսէփ վրդ. Փինաչեանը 1875 թուականին հետեւեալ նշումն է կատարել. «Տպագրուած եւ գրչագիր՝ 128, ձեռագիր՝ 75, 12 օրինակ պակաս, Յովսէփ վրդ. Փինաչեան: Ստեփան Մխիթարեանի ժամանակ՝ 1875, 75 համար, մի քանիսը կրկնակի օրինակով»: Այս նշումից կարելի է հետեւցնել, որ 1875ին Մ. Սմբատեանի ցուցակի 91 ձեռագրերից մնացել էր 79ը (75+4 կրկնակի օրինակներ):

Ե. Ցուցակ Տաթեւի վանքի ձեռագիրների, [Տաթեւ], 1893[65]: Սոյն ցուցակի հեղինակն անյայտ է: Ցուցակում ձեռագրերը թէեւ համարակա-

---

[60] *Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Par* Frédéric Macler, *Paris*, 1908, *p.* 153 [*XXX*+ 204 էջ. նկարագրել է 323 ձեռագիր]. վերջում:

[61] *Մատենադարան, Անտիպ ցուցակ* Հ՝ 133. գործ Մ. *Մագիստրոսի*, Հ՝ 7:

[62] *Անդ, Անտիպ ցուցակ* Հ՝ 24:

[63] Սմբատեանց, *երնջակ*, էջ 126-8:

[64] *Մատենադարան, Անտիպ ցուցակ* Հ՝ 133. գործ Մ. *Մագիստրոսի*, Հ՝ 24:

[65] *Անդ, Անտիպ ցուցակ* Հ՝ 23:

լուած են 1-88, սակայն նկարագրուած ձեռագրերի իրական քանակը հաւասար է 73ի, որովհետեւ 65-79 թուահամարների վրայով թռիչք է կատարուած (-15): Այս ցուցակում եւս առանց մատենագիտական տուեալների, բերուած են միայն ձեռագրերի խորագրերը՝ առաւել կամ պակաս ընդարձակութեամբ:

Զ. Նիկողայոս Տէր-Աւետիքեան, Ցուցակ Տաթեւի վանքի ձեռագիրների [Տաթեւ], 1899[66]: Սոյն ցուցակում 1-107 թուահամարների տակ, առանց մատենագիտական անհրաժեշտ տուեալների, համառօտակի նկարագրուած են 107 ձեռագրեր: Ցուցակի վերջում Ն. Տէր-Աւետիքեանը կատարել է հետեւեալ յաւելումը. «Այլ եւս կայ 9 հատ թղթեայ ձեռագիր Ցայսմաւուրք, երեքը կաշեկազմ, վեցն անկազմ եւ քիչ թերատ, եւ այլ խոնաւութիւնից, ցեցից, մկներից վնասուած ձեռագիրներ, ոմանք սակաւ, բայց ընդհանրապէս գրեթէ անպէտքացած՝ թուով 64 հատ, որով գումարն լինի թանապու շկաֆի մէջ Տաթեւի վանքի ձեռագիրների 180 հատ, բացի տաճարում եղած ձեռագիր Աւետարանները»: Եթէ ենթադրելու լիներք, որ տաճարում եղած Աւետարանները 7ից աւելի չէին, ապա կստացուի, որ 1863 (187) եւ 1899 (նկարագրուած՝ 107 + Ցայսմաւուրք՝ 9ը + փչացած՝ 64 + տաճարում՝ 7 = 187) թուականների ընթացքում ձեռագրերի քանակը մնացել է անփոփոխ: Սա կարող է ճիշտ լինել միայն թուային տեսակէտից, որովհետեւ բացառուած չէ, որ այդ տարիների ընթացքում դուրս եկած եւ աւելացած ձեռագրերի քանակը զուգադիպէր:

Է. [Մեսրոպ Տէր-Մովսիսեան (Մագիստրոս), Ցուցակ Տաթեւի վանքի ձեռագիրների, Տաթեւ, 1904]: Այս ցուցակի ուր գտնուելն այժմ պարզ չէ: Ցուցակի գոյութեան եւ նկարագրուած ձեռագրերի քանակի մասին իմանում ենք Մաշտոցեան Մատենադարանում պահուող՝ Մ. Մագիստրոսի ձեռքով կատարուած մի նշումից, ուր ասուած է. «Տաթեւի 99ի մանրամասն ցուցակը կազմեցի 1904 թ. Յուլիսի 22 - Օգոստոս 11ը»[67]: Բայց ամենայն հաւանականութեամբ, ինչպէս հէնց հեղինակն է շեշտում, կազմուած բոլոր ցուցակների մէջ այն ամենամանրամասն է եղել, քանի որ Մ. Մագիստրոսը տուեալներ էր հաւաքում իր հայերէն ձեռագրերի լիակատար ցուցակի համար:

Ը. Խորէն Մուրադբէկեան, Ցուցակ Տաթեւի վանքի ձեռագրերի, Տաթեւ, 1910[68]: Սոյն ցուցակը կազմուած է 1910 թուականի Օգոստոսի 5-6ը՝ Երեւանի թեմի փոխթեմակալ Խորէն վրդ. Մուրադբէկեանի եւ Երեւանի կոնսիստորիայի անդամ Անդրանիկ քահանայի ձեռքով: Ցուցակում ձեռագրերը թէեւ համարակալուած են 1-92, իրականում, սակայն, նկարագրուած միաւորների թիւը հաւասար է 143ի, որովհետեւ մի շարք թուահամարների ներքոյ «ա», «բ», «գ» ենթահամարներով նշուած են նոյն բովանդակութեամբ մէկից աւելի ձեռագրեր, այսպէս. Հ՚ր 28ի տակ նշուած է 4 Հարցմանց գիրք (+3) Հ՚ր 43ի տակ՝ 2 Ճառընտիր (+1), Հ՚ր 44ի տակ՝ 11 Ցայսմաւուրք (+10), Հ՚ր 47ի տակ՝ 22 Աւետարան (+21) եւ Հ՚ր 48ի տակ՝ 2 Նարեկ (+1): Ցուցակում արձանագրուած 143 միաւորներից մէկը (Հ՚ր 82) եղել է ինչ-որ տպագիր քերականական ձեռնարկ, իսկ մնացած 142ը՝ ձեռագիր մատեաններ: Այս ցուցակն էլ, նախորդների նման, մատենագիտական որեւէ տուեալ չի հաղորդում եւ սահմանափակւում է միայն ձեռագրերի խորագրերը նշելով:

Այսպիսով, տարբեր ժամանակներում եւ տարբեր անձանց կողմից կազմուած վերոյիշեալ ցուցակներում Տաթեւի ձեռագրերի քանակը ցոյց է տրուած.

1863 թ.	187
1864-1865 թթ.	(61+78) 139
1866 թ.	(13+78) 91
1868 թ.	91
1893 թ.	73
1899 թ.	(107+9+64+7) 187
1904 թ.	99
1910 թ.	142

Արդ, ի՞նչ եղան այդ ձեռագրերը.

Տաթեւի գրատան ձեռագրերը դեռեւս 1910 թուականին Երեւանի փոխթեմակալ Խորէն վրդ. Մուրադբէկեանի եւ Երեւանի կոնսիստորիայի անդամ Անդրանիկ քահանայի ձեռքով

[66] Անդ, Անտիպ ցուցակ Հ՚ր 22:
[67] Անդ, Անտիպ ցուցակ Հ՚ր 133. գործ Մ. Մագիստրոսի, Հ՚ր 7:
[68] Անդ, Անտիպ ցուցակ Հ՚ր 21:

ցուցակագրուելուց անմիջապէս յետոյ տեղափոխուել են Էջմիածին եւ մուծուել Էջմիածնի նախկին գրատան հաւաքածուի մէջ, իսկ այսօր այդ ձեռագրերը գտնուում են Մաշտոցեան Մատենադարանում: Հակառակ այս իրողութեան, մինչեւ այսօր էլ կան բանասէրներ, որոնք յաճախ վկայակոչումներ են կատարում ընթերցողին յղելով ոչ թէ այդ ձեռագրերի ներկայ թուահամարներին, այլ՝ Տաթեւի գրատան, որը վաղուց ի վեր գոյութիւն չունի:

Տաթեւի նախկին գրատան ձեռագրերից այսօր Մաշտոցեան Մատենադարանում են գտնւում 147ը, որոնք պահւում են հետեւեալ թուահամարների տակ. Հ՝ թթ 2490, 2821, 3319, 3462-3467, 3645-3648, 3650-3658, 3718, 3719, 3770-3776, 3815-3820, 3913-3942, 4004-4009, 4066-4086, 4119, 4134-4150, 4152-4170, 4181, 4261, 4275, 4423, 4509, 6271, 7243, 7363, 7364, 7386, 7418, 7724, 7759, 8302, 8593, 9244, 10199:

Այս ձեռագրերից 2ը (Հ՝ թթ 2821, 3319) Մատենադարան են մուտք գործել դեռեւս 1885-1890 թուականների ընթացքում Մ. Սմբատեանցի ձեռքով, 1ը (Հ՝ թ 6271)՝ 1930ական թուականներին Տիրայր եպս. Մելիք-Մուշկամբարեանի ձեռագրերի հետ միասին, 8ը (Հմրք 7363, 7364, 7386, 7418, 7724, 7759, 8302, 8593)՝ 1936 թուականին՝ Ստ. Լիսիցեանի գլխաւորած ազգագրական արշաւախմբի միջոցով, իսկ վերջին 2ը (Հ՝ թթ 9244, 10199), որոնք դեռեւս 1930 թուականին հանուած են եղել աւերուած վանքի փլատակների միջից, Մատենադարանին է յանձնել Սամուէլ Սաղաթելեանը, առաջինը 1944, երկրորդը՝ 1963 թուականներին: Մնացած 134 ձեռագրերը, ինչպէս գիտենք, Էջմիածին է տեղափոխել Խ. Մուրադբէկեանը 1910 թուականին:

Նշուած 147 ձեռագրերից 142ը իրենց արտացոլումն են գտել յիշատակուած 8 ձեռագրացուցակներից մի քանիսում, իսկ մնացած 5 ձեռագրերը (Հ՝ թթ 7759, 8302, 8593, 9244, 10199)՝ ոչ: Հաւանաբար եղել են նաեւ նկարագրութիւնից դուրս մնացած այլ ձեռագրեր, որոնք մեզ չեն հասել:

Արդ, ի՞նչ եղան Տաթեւի գրատան միւս ձեռագրերը, նկարագրուած կամ չնկարագրուած, որոնք մեզ չեն հասել:

Այս հարցին սպառիչ պատասխան է տուել Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեանը: Իր «Հայկական երեք մեծ վանքերը» աշխատութեան մէջ, անդրադառնալով Տաթեւի գրատան ձեռագրերին, Մ. Մագիստրոսը գրում է. «Երբ 1904ին ցուցակագրում էինք Տաթեւի չափազանց փոքրացած ժողովածուն, սոսկումով լսեցինք, որ վերջի վանահայրը, գրադարանը կարգի բերելու անմտութեամբ, ժողովածուի այն օրինակները, որ անխնամ պահելու հետեւանքով շատ էին քայքայուած եւ կամ խոնաւութիւնից թերթերն ամուր միմեանց սեղմուած եւ մի տեսակ միաձոյլ էին դարձած, այդպիսի օրինակները վառել է իբրեւ արդէն անպէտք դարձած»[69]:

Ինչ-ինչ նկատառումներով Մ. Մագիստրոսն այստեղ չի յիշատակել ո՛չ այրուած ձեռագրերի քանակը եւ ո՛չ էլ այրող վանահօր անունը: Վերջերս, երբ Գ. Շերմազանեանի կազմած ցուցակի հիման վրայ ստուգում էինք Տաթեւի գրատան ձեռագրերը, մեր ուշադրութիւնը գրաւեց ցուցակի վերջին էջի վրայ Մ. Մագիստրոսի ձեռքով 1904 թուականին կատարուած հետեւեալ նշումը. «Վանքում ինձ տեղեկութիւն տուին, որ վանահայր եւ փոխանորդ Ներսէս վ. Մելիք-Թանգեանը այն օրինակները, որ խոնաւութիւնից իրար միացել եւ նորա մակացողութեամբ այլեւս անպէտք էին դարձել, թուով 64 հատ, վառել է» (Մատենադարան, Անտիպ ցուցակ Հ՝ թ 133, գործ Մ. Մագիստրոսի, Հ՝ թ 7):

Ստորեւ, յիշատակուած 8 ձեռագրացուցակներից իւրաքանչիւրի համար առանձին-առանձին, բացառութեամբ Մ. Մագիստրոսի կողմից 1904 թուականին կազմուած ցուցակի, որ դժբախտաբար չի պահպանուել, տալիս ենք Տաթեւի գրատան ձեռագրերի եւ Մաշտոցեան Մատենադարանում այդ ձեռագրերի զբաղեցրած թուահամարների համեմատական աղիւսակները:

---

[69] Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան, *Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթեւի, Հաղարծնի եւ Դազի եկեղեցիները*, Երուսաղէմ, 1938, էջ 20:

Որպէս ամփոփում ներկայացուում է նաեւ հին ու նոր թուահամարների հակադարձ համեմատական մի աղիւսակ, ուր առաջին սիւնակում նշուում են Մաշտոցեան Մատենադարանում գտնուող Տաթեւի գրատան բոլոր 147 ձեռագրերի արդի թուահամարները, իսկ յաջորդական սիւնակներում՝ այդ նոյն ձեռագրերի հին թուահամարները՝ ըստ տարբեր ձեռագրացուցակների:

ԻԳ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱԹԵՒԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Գ. Շերմազանեանի 1863 թ. ցուցակի)

1863ի ցուցակ	Մատենադարան	1863ի ցուցակ	Մատենադարան	1863ի ցուցակ	Մատենադարան	1863ի ցուցակ	Մատենադարան	1863ի ցուցակ	Մատենադարան	1863ի ցուցակ	Մատենադարան
1	2821	33	-	65	3932	97	3923	129	3818	140իբ	3646
2	3918	34	3656	66	-	98	-	130	7364	140իգ	-
3	-	35	-	67	3931	99	3935	131	3820	140իդ	-
4	4140	36	-	68	-	100	-	132	3819	140իե	-
5	4081	37	4119	69	3928	101	4085	133	-	140իզ	-
6	4149	38	3934	70	4135	102	-	134	3657	140իէ	-
7	4083	39	4163	71	3936	103	3770	135	4005	140իը	-
8	3917	40	-	72	3776	104	4143	136	3463	140իթ	-
9	4072	41	4004	73	3920	105	4168	137	3648	140լ	-
10	4144	42	-	74	3915	106	4167	138	-	141	6271
11	-	43	4141	75	-	107	3941	139	4068	196	7724
12	-	44	3933	76	-	108	4148	140ա	4152	197	-
13	-	45	3997	77	3913	109	-	140բ	4154	198	-
14	3938	46	3719	78	4067	110	4139	140գ	4075	199	4073
15	4423	47	-	79	4261	111	4134	140դ	4153	200	-
16	4136	48	3926	80	3939	112	-	140ե	3774	201	3940
17	4137	49	4170	81	-	113	-	140զ	3921	202	4164
18	-	50	4070	82	-	114	-	140է	4155	205	4008
19	4169	51	3651	83	4007	115	-	140ը	4156	206	-
20	-	52	-	84	3942	116	4166	140թ	4157	207	4138
21	-	53	4162	85	3775	117	-	140ժ	4076	208	3816
22	-	54	4161	86	3642	118	3466	140ժա	4158	210	4082
23	3464	55	4150	87	-	119	7243	140ժբ	4159	211	4142
24	-	56	3653	88	3654	120	3924	140ժգ	3773	212	4145
25	-	57	4147	89	3937	121	3650	140ժդ	3647	232	4069
26	4074	58	4066	90	2490	122	4165	140ժե	4077	233	-
27	-	59	-	91	-	123	3945	140ժզ	4078	234	-
28	3465	60	-	92	-	124	-	140ժէ	4079		
29	4275	61	3718	93	3462	125	3817	140ժը	4080		
30	-	62	3467	94	3929	126	3658	140ժթ	4160		
31	3930	63	-	95	4084	127	7386	140ի	3922		
32	3919	64	-	96	3916	128	7363	140իա	4509		

Սոյն ցուցակում 1-234 թուահամարների ներքոյ նկարագրուած 187 ձեռագրերից (234 +29-76) այսօր առկայ են միայն 129ը: Բացակայող 58 ձեռագրերը հաւանաբար գտնուել են այրուած 64 ձեռագրերի շարքում: Քանի որ այդ ձեռագրերը մէկընդմիշտ ոչնչացուած են, ուստի բերում ենք նրանց նկարագրութիւնները՝ անանուն յապաւումներով ու շտկումներով: Ահա այդ ձեռագրերը[70].

1/3. [ժողովածու] - Յովհաննու Իմաստասիրի Սակս ժամու գիշերայնոյ: Ստ. Սիւնեցւոյ Վասն Աղօթից: Խոսրովայ Անձեւացւոյ Մեկնութիւն ժամագրոց: Յովհաննու Իմաստասիրի Վասն առաւօտեան երգոյ: Յովհ. Արճիշեցւոյ Մեկնութիւն պատարագի:

2/11. Եփրեմի Ասորւոյ Ներբողք ի տնօրինութիւնս Քրիստոսի:

3/12. Բժշկարան հարուստ:

4/13. Վարդապետութիւնք եւ քարոզք յանյայտ հեղինակէ:

5/18. [ժողովածու] - Դաւթի փիլիսոփայի Վասն Սահմանաց: Քանի՞ են հերձուածք: Յովհ. Որոտնեցւոյ «Հայեցարուք ընդ առաքեալն...», «Մարդով եղեւ մահ...»: Ոսկեփորիկ: Վահրամայ Բաբունւոյ Յաղագս Սրբոյ Երրորդութեան: Գր. Տաթեւացւոյ Դաւանութիւն ԺԴ. աստիճանաւ:

6/20. Առ. Սիւնեցւոյ Ադամգիրք:

7/21. Գր. Տաթեւացւոյ Քաղուածք Աւետարանի Մատթէոսի եւ Քարոզք:

8/22. Յիսուն եւ ինն խնդիրք ի մարդեղութիւն Քրիստոսի:

9/24. Ներսէսի Մեկնութիւն Առակացն Սողոմոնի:

10/24. [ժողովածու] - Առ. Սիւնեցւոյ դատաբարակութիւն վասն նորընծայից: Մաշտոց:

11/27. Յովհաննէսի Մեկնութիւն Սողոմոնի:

12/30. [ժողովածու] - Վարդապետական գրուածք ի վերայ ինչ-ինչ տեղեաց Աստուածաշունչ գրոց: Թուղթք եւ կանոնք սրբոցն Կիւրղի, Աթանասի եւ այլոց:

13/33. [ժողովածու] - Աղօթք: Գր. Վանեցւոյ, մականուանեալ Զարազութիւն, Մաղթանք: Բարսղի Կեսարացւոյ Քարոզ՝ «Լուարո՛ւք, որդեակք իմ...», Կանոն Ոտնալուային: Ժամամուտք: Յովհ. Մանդակունւոյ Աղօթք ի մի պահան:

14/34. Հայելի վարուց, յորում 71 պատմութիւնք:

15/36. Գանձարան հարուստ:

16/40. Վարք եւ քարոզութիւն Եւագրեայ:

17/42. Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու հրամանաւ Զաքարիայ արքեպս-ի Թարգէոսի առաքելոյն թարգմանեալ աշխատութեամբ [Պետրոսի] Արագոնացւոյ:

18/47. Գլխակարգութիւն եւ քաղուածք Թղթոցն Պօղոսի:

19/42. Քաղուածք Աւետարանի:

20/49. [ժողովածու] - Պատմութիւնք Կիւրղի: Յակոբայ վրդ-ի Տոմարագրութիւն: Հակաճառութիւն ուղղափառաց առ ժողովն երկաբնակաց:

21/60. Ներսէսի Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց:

22/63. [ժողովածու] - Համառօտ հաւաքում հոգւոյ եւ զօրութեանց նորա: Յաղագս բնութեան հրեշտակաց: Ի Սահմանաց Դաւթի եւ այլոց իմաստասիրութիւնք: Բարդ. Մարաղացւոյ Տրամաբանութիւն: Յովհ. Որոտնեցւոյ Քարոզք: Իշաւխ քահանայի Ի վերայ բնութեան:

23/64. Քարոզ ի վերայ խոստովանութեան, պոռնկութեան, յիշոցատուութեան եւ կանոնք անծանօթ հեղինակաց:

24/66. Ընդդիմաբանութիւն ընդդէմ Արիանոսի:

25/68. [ժողովածու] - Արիստոտէլի Իմաստասիրութիւն, Տրամաբանութիւն, Վերլուծական:

26/74. Խրատ վարուց՝ 13 գլխով:

27/76. Քարոզգիրք յանյայտ հեղինակէ:

28/81. Տօնացոյց, հին:

29/83. [ժողովածու] - Առակք Սողոմոնի: Յեսուայ որդւոյ Սիրաքայ: Հարցումն Պղատոնի եւ Արիստոտէլի: Ի գրոցն Յոբայ:

30/87. [ժողովածու] - Վահրամայ Բաբունւոյ Լուծմունք Ստորոգութեանց: Դաւթի Իմաստասիրի Պատճառ Սահմանաց: Պատճառ

[70] Հետագայ գործածման եւ գրքիս ցանկերի մէջ արտայայտելու դիւրութեան համար ցուցակային համարներից առաջ դնում ենք կանոնաւոր կարգային համարներ՝ 1-48 - Հրատ.:

գրոցն Դիոնէսիոսի: Պատճառք Քրիստոս ծնեալ ճառին: Մեկնութիւն ճառից Գր. Աստուածաբանի: Լուծմունք Բնութեան գրոցն: Լուծմունք կազմութեան գրոցն: Գր. Նիւսացւոյ Մեկնութիւն Հայր մերին: Նորին Յորդորականաց ի Կուսութիւն: Նորին ի Մեկնութիւն եւ Բանք ժողովողին: Նորին Մեկնութիւն Երգոց երգոյն: Եւագրեայ Նշանակ յեզեկիէլէ: Ներսիսի Լամբրոնացւոյ Պատմութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: Պատճառ Այլաբանութեան գրոցն Փիլոնի: Պատճառ Մենդոցն Փիլոնի: Այլ բանք պիտանիք:

31/91. [Ժողովածու] - Իմաստութիւն Սողոմոնի: Յաղագս հայեցողական կանոնաց: Յաղագս արուեստից մարդկան եւ խրատու: Նախադրութիւն Յոբայ եւ Գիրք նորին:

32/92. Գրիգորի վրդ.ի Մեկնութիւն գրոցն Եւագրեայ:

33/98. Քարոզ վարդապատաց Հայոց:

34/100. Վարք սրբոց:

35/102. Կանոնգիրք:

36/109. [Ժողովածու] - Հարց ու պատասխանիք ճգնաւորաց: Յոհաննիսի Կարնեցւոյ Խրատ ոգեշահ: Հարցումն Արձանայ եւ պատասխանիք Եղնկայ: Յոհաննու Մերուանւոյ Բան կրօնաւորաց: Եփրեմի Ասորւոյ Բան կրօնաւորաց եւ ճառք:

37/112. Շարական:

38/113. Նեղոսի Յաղագս աղօթից՝ գլուխ 140: Նորին Խրատք:

39/114. Ներս. Շնորհալւոյ Յիսուս Որդի:

40/114. Քարոզք եւ Աղօթք:

41/117. [Ժողովածու] - Գր. Աստուածաբանի Թուղթ առ ի Նոմիանոսացն եւ ճառք նորին: Բառարան Աստուածաշունչ անուանց եւ բառք: Մեկնութիւն երբայեցւոց տառից: Նշանագիրք այբուբենից: Բառք բժշկականք: Առածք իմաստասիրաց: Մեկնութիւն քերականութեան ի Վասըլէ: Խոսրովու Վերծանութիւն գլխոց:

42/124. [Ժողովածու] - Յովհ. Ոսկեբերանի Վասն հանդերձի: Պատմութիւն հանդերձից եւ դաստառակին Քրիստոսի Ուրհայ քաղաքի: Յովհ. Ոսկեբերանի Վասն խոստովանութեան եւ այլ գրուածք:

43/133. Վարդանայ Մկնութիւն հինգ գրոցն Մովսիսի:

44/138. [Ժողովածու] - Գր. Տաթեւացւոյ Մեկնութիւն խրթին բանից, Նորին Քարոզք: Քաղուածք Սաղմոսի:

45-42/140իգ-140լ. Աւետարանք (8 հատ):

43/197. Աւետարան:

44/198. Քարոզք ժողովեալ ի վարդապետաց:

45/200. Քարոզգիրք ժողովեալ:

46/206. Թուղթ Յակոբա առաքելոյ, Մեկնութիւն:

47/233. Կանոնք եւ խրատք հայրապետաց: Թարգմանութիւն պատմութեան Փոնցիանոսի յիտալականէ:

48/124. Տոմար: Օրհնութիւն եւ վերջաւորութիւն քարոզից:

ԻԴ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱԹԵԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ 1864-1865 ԹԹ. կազմուած անյայտ ցուցակի)

1864-5ի ցցկ	Մանրն	1864-5ի ցցկ	Մանրն	1864-5ի ցցկ	Մանրն	1864-5ի ցցկ	Մանրն	18645ի ցցկ	Մանրն	1864-5ի ցցկ	Մանրն
1*	-	25*	-	48բ	4153	68*	-	91ա	4140	109բ	-
2*	-	26*	-	48գ	4076	69*	-	91բ	3465	109գ	4161
3*	-	27*	-	49	4136	70	3940	92	4074	110	3931
4*	-	28*	-	50*	-	71*	-	93	3815	111	3655
5*	-	29*	-	51*	-	72*	-	94	4071	112	4170
6*	-	30*	-	52	4146	73*	-	95	3942	113	4006
7*	-	31*	-	53ա	3463	74*	-	96ա	3946	114*	-
8*	-	32*	-	53բ	-	75*	-	96բ	4141	115*	-
9*	-	33	3462	54ա	4142	76*	-	97*	-	116	3933
10*	-	34*	-	54բ	4148	77	3654	98ա	4163	117*	-

11*	-	35*	-	55*	-	78*	-	98բ	4083	118ա	4143
12*	-	36*	-	56	4068	79*	-	98գ	3775	118բ	4081
13*	-	37*	-	57*	-	80*	-	99*	-	118գ	3719
14*	-	38*	-	58ա	4144	81*	-	100	4082	118գ	3925
15*	-	39*	-	58բ	4150	82	4139	101*	-	119	3924
16*	-	40*	-	59*	-	83ա	3816	102*	-	120*	-
17	4155	41*	-	60	3651	83բ	4134	103*	-	121	3934
18*	-	42*	-	61*	-	84*	-	104ա	4084	122	4166
19*	-	43*	-	62*	-	85	4085	104բ	3929	123	3718
20*	-	44*	-	63	3920	86	4135	105	4008		
21*	-	45*	-	64	3776	87	-	106*	-		
22*	-	46*	-	65*	-	88	-	107	-		
23*	-	47*	-	66*	-	89	4138	108*	-		
24*	-	48ա	4152	67	-	90	3919	109ա	3941		

Սոյն ցուցակը պահպանուած չէ. տուեալները վերցուել են 1866 եւ 1893 թթ. ցուցակներից, ուր զուգահեռ բերուած են նաեւ 61 ձեռագրերի հին թուահամարները (աստղանիշով ցոյց տրուած թուահամարները բացակայում են այդ ցուցակներում):Ցիշատակուած 61 ձեռագրերից 55ը այսօր առկայ են, բացակայում են հետեւեալ 6 ձեռագրերը.

1/53բ. Ճշմարտութիւն աւետարանական բանի:

2/67. Թուղթ Արիստոտէլի:

3/87. Ճշմարտութիւն աւետարանական բանի:

4/88. Մեկնութիւն չորից աւետարանչաց:

5/107. Ադամգիրք:

6/109բ. Տօնացոյց:

ԻԵ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱԹԵՒԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Սմբատեանցի 1866 թ. ցուցակի)

1866թ. ցցկ	Մանդրն	1866թ. ցցկ	Մանդրն	1866թ. ցցկ	Մանդրն	1866թ. ցցկ	Մանդրան	1866թ. ցցկ	Մանդրն
13	3913	37	4138	45	4146	62	6271	67	3319
18	4009	40	4168	51	3466	65	3655		
24	3940	44	3915	57	3817	66	4170		

Այս ցուցակը եւս պահպանուած չէ. տուեալները քաղուած են «Երնջակ»ից (էջ 126-8), ուր բերուած են վերոյիշեալ 13 ձեռագրերի նկարագրութիւնները: Պահպանուած բուն ցուցակում ամենայն հաւանականութեամբ նկարագրուած է եղել 91 ձեռագիր:

ԻԶ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱԹԵՒԻ ԳՐԱՏԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Սմբատեանցի 1868 թ. ցուցակի)

1868թ. ցցկ	Մանդրն	1868թ. ցցկ	Մանդրն	1868թ. ցցկ	Մանդրն	1868թ. ցցկ	Մանդրն	1868թ. ցցկ	Մանդրն	1868թ. ցցկ	Մանդրն
1	3654	17	4066	33	-	49	-	65	3919	81	7363
2	4068	18	-	34	3937	50	4067	66	4144	82	7386
3	4166	19	4152	35	4143	51	-	67	3772	83	3917
4	3915	20	-	36	4170	52	-	68	3818	84	4156
4	4082	21	-	37	3931	53	3925	69	-	85	4086
6	3653	22	3657	38	-	54	3820	70	4083	86	7364
7	4071	23	3466	39	4169	54	4004	71	3462	87	4119
8	3940	24	3935	40	3920	56	4005	72	3921	88	-
9	3464	25	3816	41	-	57	3929	73	7243	89	4073
10	3932	26	-	42	4139	58	-	74	4155	90	3658
11	-	27	4134	43	4080	59	-	75	3916	91	4157
12	-	28	3651	44	4142	60	3941	76	-		
13	3918	29	4135	45	4154	61	4138	77	-		
14	4072	30	3924	46	4075	62	3771	78	3819		
15	4500	31	4136	47	4423	63	3774	79	4069		
16	-	32	-	48	4153	64	3817	80	4137		

Սոյն ցուցակում առանց համարակալման (համարակալումը կատարուած է մեր կողմից) արձանագրուած 91 ձեռագրերից առկայ են միայն 72ը: Բացակայող 19 ձեռագրերը, բացառութեամբ Հ^դր 52 Ճաշոցի, հաւանաբար մտնում են այրուած 64 ձեռագրերի թուաքանակի մէջ: Այդ ձեռագրերն են.

1/11. Տոմար, բոլորգիր:

2/12. [Բովանդակութիւնն] անյայտ, խիստ վնասուած, բոլորգիր:

3/16. Մեկնութիւն, քարանալու աստիճանում:

4/18. [Բովանդակութիւնն] անյայտ, բոլորգիր, ընտիր:

5/20. [Բովանդակութիւնն] անյայտ, բոլորգիր:

6/21. Քարոզ կամ մեկնութիւն, բոլորգիր, փչացած:

7/32. [Բովանդակութիւնն] անյայտ, փչացած, միացած ի մի, բոլորգիր:

8/33. [Բովանդակութիւնն] անյայտ ի մի ձուլուած:

9/38. [Բովանդակութիւնն] անյայտ, փչացած, բոլորգիր:

10/41. [Բովանդակութիւնն] անյայտ, ի մի ձուլուած:

11/49. [Բովանդակութիւնն] անյայտ, ի մի ձուլուած, բոլորգիր:

12/41. [Բովանդակութիւնն] անյայտ, բոլորգիր:

13/42. Ճաշոց:

14/48. Նեղոսի ճառք:

14/49. Մեկնութիւն չորից աւետարանչաց:

16/69. [Բովանդակութիւնն] անյայտ:

17/76. [Բովանդակութիւնն] անյայտ, հին գրութիւն:

18/77. [Բովանդակութիւնն] անյայտ:

19/88. Շարական:

ԻԷ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱԹԵԻՒ ԳՐԱՏԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ 1893 թ. ցուցակի)

1893թ. ցտկ	Մանդրե	1893թ. ցտկ	Մանդրե	1893թ. ցտկ	Մանդրե	1893թ. ցտկ	Մանդրե	1893թ. ցտկ	Մանդրե	1893թ. ցտկ	Մանդրե
1	3815	14	-	27	4008	40	3921	53	3925	81	3462
2	4140	15	4154	28	4136	41	3653	54	4068	82	4157
3	3655	16	-	29	4075	42	3928	55	3929	83	3913
4	3942	17	4082	30	3718	43	4155	56	3651	84	4071
5	3776	18	3650	31	3463	44	-	57	4074	85	3775
6	4081	19	4146	32	4153	45	3923	58	4149	86	4141
7	3816	20	4135	33	3774	46	-	59	4156	87	4076
8	3924	21	4134	34	4144	47	4006	60	-	88	4150
9	4084	22	3465	35	3467	48	4161	61	4143		
10	3941	23	-	36	3940	49	4148	62	4164		
11	4152	24	4163	37	4142	50	3934	63	3656		
12	-	25	3926	38	3719	51	3920	64	3927		
13	4085	26	4083	39	4139	52	3933	80	-		

Սոյն ցուցակում 1-88 թուահամարների տակ նշուած 73 ձեռագրերից (65-79 թուահամարների վրայով թռիչք է կատարուած) այսօր առկայ են 65ը, բացակայում են հետեւեալ 8 ձեռագրերը, որոնք հաւանաբար մաս են կազմում 64 այրուած ձեռագրերի:

1/12. Ճշմարտութիւն աւետարանական բանի:

2/14. Ադամգիրք:

3/16. Քարոզգիրք, նոտր, ընտիր:

4/23. Վարք Անդրոնիկոսի:

5/44. Տօնացոյց:

6/46. Թուղթ Արիստոտէլի:

7/60. Ճշմարտութիւն աւետարանական բանի:

8/80. Յօհան Հռետոր:

ԻԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱԹԵԻՒ ԳՐԱՏԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Ն. Տէր-Աւետիքեանի 1899 թ. ցուցակի)

1899թ. ցտկ	Մանդրե	1899թ. ցտկ	Մանդրե	1899թ. ցտկ	Մանդրե	1899թ. ցտկ	Մանդրե	1899թ. ցտկ	Մանդրե	1899թ. ցտկ	Մանդրե
1	4136	21	4149	41	3651	61	4074	81	4163	101	3922
2	4143	22	4150	42	3654	62	3917	82	3775	102	3919
3	3770	23	4068	43	3915	63	3657	83	4509	103	4165
4	4135	24	4069	44	3464	64	3918	84	4157	104	3647
5	4145	25	4146	45	2490	65	4004	85	4153	105	3818
6	4170	26	4070	46	3463	66	4082	86	4156	106	7243
7	4137	27	4066	47	3920	67	4005	87	4158	107	6271
8	4138	28	4423	48	3937	68	4072	88	4152	ա.	3817
9	4139	29	3914	49	3924	69	3930	89	4154	բ.	3819
10	4140	30	4071	50	4167	70	3923	90	4155	գ.	3820
11	4141	31	4134	51	3934	71	4081	91	4079	դ.	7363
12	4142	32	4067	52	3931	72	3719	92	4159	ե.	7364
13	4143	33	4144	53	3465	73	3925	93	4078	զ.	7386
14	3913	34	4147	54	3936	74	3462	94	4077	է.	7418
15	4008	35	3815	55	3655	75	4166	95	3921	ը.	-
16	4009	36	3816	56	3645	76	4086	96	4080	թ.	-
17	3929	37	4007	57	3940	77	3771	97	3774		
18	4073	38	3933	58	3652	78	4164	98	4075		
19	4006	39	3932	59	3939	79	4083	99	3773		
20	4148	40	3653	60	3916	80	3926	100	3646		

Սոյն ցուցակում 1-107 թուահամարների տակ արձանագրուած բոլոր 107 ձեռագրերն էլ առկայ են: Ցուցակից դուրս յիշատակուած 9 Յայսմաւուրքներից (պայմանականօրէն

համարակալուած ա-Թ.) առկայ են միայն 7ը: Միւս 2ը (Հ՚՞ը., Թ.) ժամանակին (1910 Թ.) էջմիածին չեն տեղափոխուել: Ինչ վերաբերում է 64 փչացած ձեռագրերին, ապա դրանք նոյն այրուած ձեռագրերն են:

Ի Թ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱՊԵՒԻ ԳՐԱՏԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Խ. Մուրադբէկեանի 1910 Թ. ցուցակի)

1910ի ցցկ	Մանդրն	1910ի ցցկ	Մանդրն	1910ի ցցկ	Մանդրն	1910ի ցցկ	Մանդրն	1910ի ցցկ	Մանդրն	1910ի ցցկ	Մանդրն
1	3815	25	4069	44բ	3818	47ժզ	3773	49զ	3928	70	3655
2	3816	26	4070	44գ	3819	47ժդ	3647	49է	3927	71	3938
3	3770	27	4071	44դ	7363	47ժե	4077	49ը	3775	72	3939
4	4134	28ա	4072	44ե	7386	47ժզ	4078	50ա	3929	73	3940
5	4135	28բ	4004	44զ	7364	47ժէ	4079	50բ	4084	74	3656
6	4136	28գ	4005	44է	3820	47ժը	4080	51	4164	75	3465
7	4137	28դ	4073	44ը	7418	47ժթ	4160	52	4165	76	3657
8	4138	29	4006	44թ	-	47ի	3922	53	-	77	3463
9	4139	30	4007	44ժ	-	47իա	4509	54	3930	78	2490
10	4140	31	4008	44ժա	-	47իբ	3646	55	4166	79	3464
11	4141	32	4009	45	-	48ա	4161	56	4167	80	7243
12	4142	33	3913	46	6271	48բ	4081	57	3776	81	3941
13	4143	34	3914	47ա	4152	48գ	3718	58	3931	82	-
14	4144	35	3915	47բ	4154	48դ	3923	59	3932	83	3466
15	4145	36	3916	47գ	4075	48ե	4082	60	3933	84	4085
16	4146	37	4074	47դ	4153	48զ	3925	61	3934	85	3658
17	4066	38	3917	47ե	3774	48է	3719	62	3650	86	4275
18	4067	39	3918	47զ	3921	48ը	3924	63	3651	87	3942
19	4147	40	3919	47է	4155	48թ	3462	64	3935	88	3467
20	4148	41	3920	47ը	4156	49ա	4162	65	3936	89	4168
21	4149	42	3645	47թ	4157	49բ	3648	66	3937	90	4169
22	4150	43ա	3771	47ժ	4076	49գ	4163	67	3652	91	4086
23	4068	43բ	3772	47ժա	4158	49դ	3926	68	3653	92	4170
24	4423	44ա	3817	47ժբ	4159	49ե	4083	69	3654		

Սոյն ցուցակում 1-92 թուահամարների տակ արձանագրուած 142 ձեռագրերից (Հ՚՞ 82ը եղել է տպագիր ինչ որ քերականութիւն) այսօր առկայ են 137ը: Մնացած 5 ձեռագրերից 2ի (Հ՚՞ 45՝ Ճաշոց, Հ՚՞ 53 Մեկնութիւն ժամակարգութեան) արդի թուահամարները մնում են անորոշ, իսկ միւս 3ը (Հ՚՞ 44Թ., 44ժ., 44ժա՝ Յայտաւուրք) ժամանակին (1910 Թ.), ինչպէս նշուած է ցուցակում, էջմիածին չեն տեղափոխուել:

Լ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ՏԱՊԵՒԻ ԳՐԱՏԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԹՈՒԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մաշտոցեան Մատենադարանի թուահամարների)

Մանդրն	1863ի ցցկ	1864ի ցցկ	1866ի ցցկ	1868ի	1893ի ցցկ	1899ի ցցկ	1910ի ցցկ
2490	90	-	-	-	-	45	78
2821	1	-	-	-	-	-	-
3319	-	-	67	-	-	-	-
3462	93	33	-	71	81	74	48թ
3463	136	53ա	-	-	31	46	77
3464	23	-	-	9	-	44	79

3465	28	91բ	51	-	22	53	75
3466	118	-	-	23	-	-	83
3467	62	-	-	-	35	-	88
3645	-	-	-	-	-	56	42
3646	140իբ	-	-	-	-	100	47իբ
3647	140ժգ	-	-	-	-	104	47ժգ
3648	137	-	-	-	-	-	49բ
3650	121	-	-	-	18	-	62
3651	51	60	-	28	56	41	63
3652	86	-	-	-	-	58	67
3653	56	-	-	6	41	40	68
3654	88	77	-	1	-	42	69
3655	-	111	65	-	3	55	70
3656	34	-	-	-	63	-	74
3657	134	-	-	22	-	63	76
3658	126	-	-	90	-	-	85
3718	61	123	-	-	30	-	48գ
3719	46	118գ	-	-	38	72	48ξ
3770	103	-	-	-	-	3	3
3771	-	-	-	62	-	77	43ա
3772	-	-	-	67	-	-	43բ
3773	140ժգ	-	-	-	-	99	47ժգ
3774	140ժ	-	-	63	33	97	47ժժ
3775	85	98գ	-	-	85	82	49բ
3776	72	64	-	-	5	-	57
3815	-	93	-	-	1	35	1
3816	208	83ա	-	25	7	36	2
3817	125	-	57	64	-	36ա	44ա
3818	129	-	-	68	-	105	44բ
3819	132	-	-	78	-	105բ	44գ
3820	131	-	-	54	-	105գ	44ξ
3913	77	-	13	-	83	14	33
3914	-	-	-	-	-	29	34
3915	74	-	44	4	-	43	35
3916	96	-	-	75	-	60	36
3917	8	-	-	83	-	62	38
3918	2	-	-	13	3	64	39
3919	32	90	-	65	-	102	40
3920	73	63	-	40	51	47	41
3921	140գ	-	-	72	40	95	47գ
3922	140ի	-	-	-	-	101	47ի
3923	97	-	-	-	45	70	48գ
3924	120	119	-	30	8	49	48ը
3925	123	118գ	-	53	53	73	48գ
3926	48	96ա	-	-	25	80	49գ
3927	45	-	-	-	64	-	49ξ
3928	69	-	-	-	42	-	49գ
3929	94	104բ	-	57	55	17	50ա
3930	31	-	-	-	-	69	54
3931	67	110	-	37	-	52	58

3932	65	-	-	10	-	39	59
3933	44	116	-	-	52	38	60
3934	38	121	-	-	50	51	61
3935	99	-	-	24	-	-	64
3936	71	-	-	-	-	54	65
3937	89	-	-	34	-	48	66
3938	14	-	-	-	-	-	71
3939	80	-	-	-	-	59	72
3940	201	70	24	8	36	57	73
3941	107	109ա	-	60	10	-	81
3942	84	95	-	-	4	-	87
4004	41	-	-	55	-	65	28բ
4005	235	-	-	56	-	67	28գ
4006	-	113	-	17	47	19	29
4007	83	-	-	-	-	37	30
4008	205	105	-	-	27	15	31
4009	-	-	18	-	-	16	32
4066	58	-	-	-	-	27	17
4067	78	-	-	50	-	32	18
4068	139	56	-	2	54	23	23
4069	232	-	-	79	-	24	25
4070	50	-	-	-	-	26	26
4071	-	94	-	7	84	30	27
4072	9	-	-	14	-	68	28ա
4073	199	-	-	89	-	18	28գ
4074	26	92	-	-	57	61	37
4075	140գ	-	-	46	29	98	47գ
4076	140ժ	48գ	-	-	87	-	47ժ
4077	140ժժ	-	-	-	-	94	47ժժ
4078	140ժգ	-	-	-	-	93	47ժգ
4079	140ժξ	-	-	-	-	91	47ժξ
4080	140ժը	-	-	43	-	96	47ժը
4081	5	118բ	-	-	6	71	48բ
4082	210	100	-	5	17	66	48ժ
4083	7	98բ	-	70	26	79	49ժ
4084	95	104ա	-	-	9	-	50բ
4085	101	85	-	-	13	-	84
4086	-	-	-	85	-	76	91
4119	37	-	-	87	-	-	-
4134	111	83բ	-	27	21	31	4
4135	70	86	-	29	20	4	5
4136	16	49	-	31	28	1	6
4137	17	-	-	80	-	7	7
4138	207	89	37	61	-	8	8
4139	110	82	-	42	39	9	9
4140	4	91ա	-	-	2	10	10
4141	43	96բ	-	-	86	11	11
4142	211	54ա	-	44	37	12	12
4143	104	118ա	-	35	61	2	13
4144	10	58ա	-	66	34	33	14

4145	212	-	-	-	-	5	15
4146	-	52	45	-	19	25	16
4147	57	-	-	-	-	34	19
4148	108	54բ	-	-	49	20	20
4149	6	-	-	-	58	21	21
4150	55	58բ	-	-	88	22	22
4152	140ա	48ա	-	19	11	88	47ա
4153	140գ	48բ	-	48	32	85	47գ
4154	140բ	-	-	45	15	89	47բ
4155	140է	17	-	74	43	90	47է
4156	140ը	-	-	84	59	86	47ը
4157	140թ	-	-	91	82	84	47թ
4158	140ժա	-	-	-	-	87	47ժա
4159	140ժբ	-	-	-	-	92	47ժբ
4160	140ժթ	-	-	-	-	-	47ժթ
4161	54	109գ	-	-	48	-	48ա
4162	53	-	-	-	-	-	49ա
4163	39	98ա	-	-	24	81	49գ
4164	202	-	-	-	62	78	51
4165	122	-	-	-	-	103	52
4166	116	122	-	3	-	75	55
4167	106	-	-	-	-	50	56
4168	105	-	40	-	-	-	89
4169	19	-	-	39	-	-	90
4170	49	112	66	36	-	6	92
4261	79	-	-	-	-	-	-
4275	29	-	-	-	-	-	86
4423	15	-	-	47	-	28	24
4509	140իա	-	-	15	-	83	47իա
6271	141	-	62	-	-	107	46
7243	119	-	-	73	-	106	80
7363	128	-	-	81	-	106գ	44գ
7364	130	-	-	86	-	106ե	44գ
7386	127	-	-	82	-	106գ	44ե
7418	-	-	-	-	-	-	-
7724	196	-	-	-	-	-	-
7759	-	-	-	-	-	-	-
8302	-	-	-	-	-	-	-
8594	-	-	-	-	-	-	-
9243	-	-	-	-	-	-	-
10199	-	-	-	-	-	-	-

Վերոյիշեալ 147 ձեռագրերից 135ը նկարագրուած են Մաշտոցեան Մատենադարանի վերջերս լոյս տեսած Ձեռագրացուցակի առաջին հատորում, իսկ վերջին 12ը տեղ կգտնեն նոյն ցուցակի երկրորդ հատորում:

О. С. ЕГАНЯН
РУКОПИСИ ТАТЕВСКОГО КНИГОХРАНИЛИЩА

Книгохранилище Татевского монастыря являлось одним из старейших и богатейших в средневековой Армении. Из многих тысяч рукописей в Татевском книгохранилище к 1863 году оставалось всего 187 рукописей, а к 1910-му всего 147.

В 1863-1910 годах разными лицами было составлено восемь списков этих рукописей, и они были известны филологам по какому-либо одному из этих неопубликованных списков.

В 1910 году рукописибыли перенесены из Татева в Эчмиадзин, а в настоящее время хранятся в Матенадаране имени Маштоца.

В статье дается краткая характеристика упомянутых выше восьми неопубликованных списков и приводятся сравнительные таблицы старых и новых номеров татевских рукописей.

O. S. EGANIAN
LES MANUSCRITS DE LA BIBLIOTHÈQUE DE TATHÈVE

La Bibliothèque du monastère de Tathève, qui fut l'une des plus riches et des plus anciennes de l'Arménie médiévale, comptait plusieurs milliers de manuscrits, collection qui n'en rassemblait plus que 187 *en* 1863 *et* 147 *en* 1910.

Huit catalogues inédits dressés de 1863 *à* 1910 *par des personnes différentes permirent aux philologues de prendre connaissance des derniers vestiges de la bibliothèque qui furent d'ailleurs transférés à Etchmiadzine en* 1910 *et plus tard au Matenadaran d'Erévan où ils sont toujours conservés.*

L'auteur de l'articledonne un aperçu des catalogues que complète un tableau comparatif des numéros anciens et nouveaux des manuscrits de la Bibliothèque de Tathève.

Լանսերե Եվգենի Եվգենեւիչ (1875 - 1946) ■ *Մատուռը վանք տանող դարպասի վրա. Տաթեւ (1926)* ■ *թուղթ, տեմպերա 53,5x36 սմ*

Իսաբեկյան Էդուարդ Հմայակի (1914 - 2007) ■ *Տաթեւ (1953)* ■ *կտավ, յուղաներկ 90x110,5 սմ*

Թերլեմեզյան Փանոս Պողոսի (1865 - 1941) ■ *Տաթեւի վանքը* ■ *կտավ, յուղաներկ 48x28 սմ*

Տաթեւը գեղանկարներում

Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի շտեմարանից

Թերլեմեզյան Փանոս Պողոսի (1865 - 1941) ■ *Լեռներ. Տաթեւ (1929)* ■ *կտավ, յուղաներկ 30,5x48,5 սմ*

Թերլեմեզյան Փանոս Պողոսի (1865 - 1941) ■ *Տաթեւի վանքը (1929)* ■ *կտավ, յուղաներկ 61x80 սմ*

Շարբաբչյան Գրիգոր Միքայելի (1884 - 1942) ■ *Տաթեւ (1924)* ■ *կտավ, յուղաներկ 73x61 սմ*

Մխիթարյան Դեղձանիկ Գեւորգի (1908 - 1985) ■ *Տաթեւի վանքի շրջակայքում (1968)* ■ *կտավ, յուղաներկ 62,5x123 սմ*

Սյունիքի մարզ

Մարզկենտրոն՝..... Կապան
Մարզի կազմավորման թիվը՝..... 1995
Տարածքը՝ ..... 4,506 կմ²
Բնակչությունը (01.01.2013)՝ ... 141 700

Բարդուղիմեոս
Սուրբ առաքյալը, ով եկավ Սյունիք

Բարդուղիմեոս (Նաթանայել) առաքյալ, (արամերեն՝ Bartolomeos՝ «Թոլոմեի որդի»: Ազգությունը-հրեա: Քրիստոսի 12 առաքյալներից, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադիրներից մեկը: Հայաստանում քարոզչությունը սկսել է Սյունյաց Գողթան գավառից, ուր կառուցել է Տյառնընդառաջ եկեղեցին: Այնուհետեւ քարոզել է Սյունյաց, Այրարատյան, Վասպուրականի նահանգներում: Բարդուղիմեոս առաքյալն է Հայաստան բերել Տիրամոր պատկերը եւ Անձեւացյաց գավառի Դարբնաց քար կոչված վայրում (ուր Անահիտի մեհյանն էր) կառուցել է Սուրբ Աստվածածնի եկեղեցին, հիմնադրել կուսանոց: Բարդուղիմեոսն Աղբակում քրիստոնյա է մկրտել Սանատրուկ թագավորի քրոջը՝ Ոգուհուն եւ Տերենտիանոս հազարապետին: Զայրացած Սանատրուկը երեքին էլ նահատակել է Աղբակում, 66 թվականին: Բարդուղիմեոս առաքյալի գերեզմանը գտնվում է Աղբակի Սուրբ Բարդուղիմեոս վանքում: Հայ եկեղեցին Բարդուղիմեոս առաքյալի հիշատակը տոնում է դեկտեմբերի 8-ին եւ փետրվարի 25-ին: Բարդուղիմեոսի մասին հայ մատենագրության մեջ ստեղծվել են վարքեր եւ ճառեր:

ԹԱԴԵՎՈՍԻ ՈՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ.
ԴՈՒԲԱՅ, ՇԱՐԺԱ. կտավ, յուղաներկ, ակրիլ., 200x160սմ, 1998թ.

Ամենայն հայոց կաթողիկոսներ Սյունիքից

ՄԱՇՏՈՑ Ա. ԵՂԻՎԱՐԴԵՑԻ ■ (897–898)
Հայոց կաթողիկոս 897-ից: Հաջորդել է Գեւորգ Բ Գառնեցուն: Ծնվել է 833-ին Սոթք գավառի Սոթք գյուղում: Մահացել է 898-ի հունվարին Գառնիում, աճյունն ամփոփվել է Գառնի տաճարից ոչ հեռու գտնվող մատուռում, որտեղ հետագայում կառուցվել է «վայելուչ եկեղեցի»:



ՎԱՀԱՆ Ա ՍՅՈՒՆԻ (Բաղացի) ■ (968–969)
Հայոց կաթողիկոս 968-ից: Հաջորդել է Անանիա Ա Մոկացուն: 969-ին գահընկեց է արվել եւ հեռացվել կաթողիկոսական գահից: Ծն. թ. անհտ., մահացել է 972-ին Վասպուրականի նահանգի Տոսպ գավառի Զորովանքում, որտեղ էլ ամփոփվել է:

ՀՈՎՍԵՓ Ա ՎԱՅՈՑՁՈՐԵՑԻ (Հողոցիմցի) ■ (Ծննդյան թիվն անհայտ է, մահացել է 454թ. հուլիսի 25-ին:)
Հայոց կաթողիկոս 440-ից: Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից է: Եղել է Այրարատի եպիսկոպոս, ապա Մեսրոպ Մաշտոցի պատվիրանով դարձել կաթողիկոս: Հովսեփ Ա Վայոցձորեցու օրոք՝ 449-ին, գումարվել է Արտաշատի ժողովը:
Մասնակցել է Սասանյանների դեմ 450-451-ին հայերի մղած ազատագրական պատերազմին. Ավարայրի ճակատամարտից հետո ձերբակալվել եւ աքսորվել է Վրկան երկրամաս, ապա տեղափոխվել Ապար աշխարհ, ուր եւ նահատակվել է Ղեւոնդյան խմբի հետ:

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՑԻ (Մովսես Սյունեցի, Աճանանցի, Խոտանանցի) ■ (1629–1632)
Ամենայն Հայոց կաթողիկոս 1629-ից: Հաջորդել է Դավիթ Դ Վաղարշապատցուն:
Ծնվել է 1578-ին Սյունիքի Խոտանան գյուղում, մահացել 1632-ին Երեւանում: Ամփոփվել է Երեւանի Կոզեռնի գերեզմանոցում:

Հայոց ազգային-եկեղեցական սրբերը Սյունիքից

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
■ մոտ 410–V դարի վերջ
Ոսկեդարի գրող-պատմիչ, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան, պատմահայր:

ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ
■ 1315–1386
կամ Հովհաննես Որոտնեցի, աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ■ 1346–1409
Աշխարհական անունը՝ Խութլուշահ, Հայ առաքելական եկեղեցու վարդապետ: Հայ առաքելական եկեղեցին Գրիգոր Տաթեւացուն դասել է սրբերի շարքը:

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՑԻ
■ 1577/78 – 1632
Աղբյուրներում հիշատակվում է նաեւ որպես՝ Մովսես Գ Սյունեցի, Աճանանցի, Խոտանանցի: Ամենայն հայոց կաթողիկոս 1629 թվականից:

ԳԵՂԱՆԿԱՐԸ՝ ՌՈՒԲԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ, պատվիրատու՝ «Այունյաց երկիր», յուղաներկ, 110x80, 2015թ.

Մեսրոպ Մաշտոց. ինքն է Սյունիքում ստեղծել առաջին դպրոցները՝ աջակցությամբ Վասակ Սյունու, ով որդին էր Անդոկի որդի Բաբիկի եւ մարզպանն էր Վրաց ու Հայոց աշխարհի

Վասակ Սյունի (387 – 452), հայ իշխան եւ քաղաքական գործիչ, Վրաց (440–451) եւ Հայոց (441–451) մարզպան: Բաբիկ Ա Սյունիի որդին, Սյունիների նախարարական տոհմից:

Անդովկ (Անդոկ) Սյունի, Սյունյաց նախարարության մեծ նահապետ, Արշակ 2-րդի կնոջ՝ Փառանձեմի հայրը

Բաբիկ իշխան

Սուրբ Մեսրոպ Մաշտոց

Սիսակ նահապետը՝ Հայկից սերված

(ծնվել է մ.թ.ա. 2100թ.)

4108 տարի հետո Սիսակ նահապետի նկարը առաջին անգամ ստեղծագործել է կապանցի գեղանկարիչ Ռուբեն (Ուբակ) Կոստանդյանը «Սյունյաց երկիր» թերթի պատվերով (թուղթ, ակրիլ, տեմպերա, պաստել, բրոնզ, 45x57, գրաֆիկական աշխատանք):

Արարատյան բնաշխարհից բացի ոչ մի տեղ Հայկյան ոգու բնատիպած դրոշմը Հայոց երկրում այնպիսի ճշգրտությամբ չի երեւում, ինչպես Սիսական աշխարհում. որովհետեւ թեպետ Տարոնը կենտրոնական տեղ է զբաղեցնում մյուսներից ավելի եւ հարուստ է ազգային հիշատակներով, բայց Սյունիքը լավագույնն է թվում որպես ազգային ոգու եւ ավանդների պահեստարան՝ ունենալով նախնյաց գրավոր եւ անգիր նշխարներ ու հուշարձաններ: Եվ այդ իսկ է զարմանալի, որ թեպետ վաղ ժամանակներից այնքան սերտ հարաբերություն չուներ ազգային անցուդարձի հետ, բայց հարազատորեն է պահել ազգային ոգին, եւ սա, անշուշտ, այսպես է բնակիչների ազատասեր բնավորության պատճառով, հավասարապես՝ նրանց կորովի քաջության, որով նրանք տեւապես դիմակայել են օտարների բռնության՝ օգնական ունենալով իրենց երկրի թե՛ ամրոցները, թե՛ բնական դիրքը, ինչպես ցույց են տալիս հետագա (հիշատակարանները), բնական եւ պատմական տվյալները, որոնցից գլխավորն այն է, որ, անվան հետ միասին, վաղ Հայկյան թագավորության անկումից հետո, երբ Արշակունիները գրավեցին այն, նրանց հարստությունից հետո նմանապես, միայն Սյունյաց իշխաններն էին, որ Բագրատունյաց հարստության ժամանակ ու նրանից հետո եւս կոչվում էին հայկազուններ...

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

«Սիսական»

Կապուտջուղ լեռնագագաթը Զանգեզուրի լեռնաշղթայում. բարձրությունը՝ 3904 մ. Հայաստանի Հանրապետության երկրորդ բարձր լեռնագագաթը Արագածից հետո